2250
L. II. 4.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ 10 ԿՈՊ.

ՏԱՐԱԶ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ր. (արտասահմանի 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահմանի 10 ր.) Աղբիւր-Տարազ, պրէմիաներով 10 ր. (արտասահմանի 18 ր.) Տարազ ամիսը 50 կ. առանձին №-ը երկու թերթից 30 կ., մի թերթից 20 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ վերջին երես 25 կ. մանրատառ (պըտիտ) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չտպուելիքը (երեք թերթից պակաս) չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10¼ ժ. մինչև 2¼-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ
Rédaction du Journal
TARAZ
Caucase Tiflis

Գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 1 Կիրակի, յունուար 1 — Տասնեւեօթերորդ տարի 1906

Բացուած է ներկայ 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների որտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

XXIV մանկական պատկերազարդ ամսագրի XXIV

և

ՏԱՐԱԶ

Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել:

XVII պատկերազարդ շաբաթաթերթի XVII

Աղբիւր և Տարազ միևնոյն հասցէով բաժանորդներին ձրի ուղարկելու են՝ Առողջապահ, Գեղափնջիկ, Դաստիարակ և Իլլիւստրասիօն, որոնց համար առանձին բաժանորդագրութիւն առայժմ բացելու չենք համարում մեզ բանալ, քանի որ մեր երկիրը քաօսի մէջ է: Աղբիւր-Տարազ միևնոյն հասցէով բաժանորդ գրուողը կըստանայ հետևեալ №-ի հետ 1906 թ. մեծադիր, հատուածական, պատի օրացոյց, բաղկացած 370 թերթից:

Զրահաւորուած նոր տարին

ԲԱՑԱՐՁԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Ժամանակ խօսելոյ եւ ժամանակ լռելոյ: XXIV

ՈՍԿԵԲԵՐԱՆ

—

Բանի որ խօսելը մեզ արգելուած էր, ամեն ինչ թաքնում էինք, որ խօսենք, այժմս երբ խօսքն ազատ է, պահանջում են մեզանից լռել: Եւ մենք լուռ ու մունջ դադարեցինք խօսելուց: Ո՞վ էր սովորեցնում մեզ խօսել արգելողը եւ ո՞վ էր հարկադրում մեզ այժմս, երբ իրաւունք ունենք խօսելու, լռել:

—Ժամանակը եւ միմիայն ժամանակը:

Համակրանք ունենք Ոսկեբերանի իմաստալից ասիքին:

Ամեն ինչ բնութեան մէջ ժամանակի ենթարկուած է հասունանում, եւ այն ամենը ինչ ծնունդ է առնում ժամանակից առաջ, նա անպայման տկար է, թերի եւ խակ:

Մենք ձգտում էինք քաղաքացիական ազատութեան, առանց արիւն եւ մարմին դարձնելու մեզ ազատութեան գաղափարը, իմաստը: Ազատ լինելը մենք պայմանաւորեցինք մեր դիմացինի ազատութիւնը խախտելու մէջ: Մեր քաղաքացիական իրաւունքների պաշտպանութիւնը պայմանաւորեցինք ուրիշի իրաւունքները ոտնատակ անելով: Ստեղծեցինք մի քաօս, որի պտուած զանգուածից խուսափում ենք, որ ստացուի նոյնիսկ չափաւոր պիտանի ծնունդ:

Խաւարից լոյս ստանալ չի կարելի, ինչպէս տգիտութիւնից—գիտութիւն, տգեղից—գեղեցկութիւն: Աստուած ամենից առաջ ստեղծեց լոյսը եւ ապա բաժանեց ցամաքը ջրից: Իսկ մենք ձգտում ենք խաւարի մէջ ստեղծագործել մեր նոր, ազատ, քաղաքացիական կեանքը: Այդ անկարելի է: Նախ անհրաժեշտ է լոյս. մենք խեղդւում ենք մառախուղի մէջ: Երկրորդ անհրաժեշտ է ըմբռնել եւ հասկանալ իսկական ազատութեան եւ իրաւունքի օրէնքները, եւ այդ կարելի է միմիայն գիտութեան եւ ինքնակրթութեան միջոցով ու որոշ ժամանակամիջոցի ընթացքում: Մի վայրկենում դարերով ստրուկն անկարող է ազատ եւ ինքնիշխան լինել... Բա՛ւ է որքան տանջեցինք. սպասենք: Զրահաւորուենք լոյսով եւ գիտութեամբ ու մտնենք խաւարի դէմ: Բարոյական, տնտեսական եւ հոգեկան անդորրութիւն բերողը խաղաղութիւնն է: Իսկ խաղաղութիւնը հանգիստ է առնում խաւար, խոնաւ գերեզմանատներում, աւե-

ռակներում եւ կամ թէ կենսակից՝ սուրբ աշխատաւորի ճիգ եւ չափաւոր գերդաստանում: Զափաւորենք ուրեմն մեր արդար պահանջները, մինչեւ ժամանակի հասունանալը, երբ չենք կամենում, որ խաղաղութիւնը հանգիստ առնէ մեր դրախտ հայրենիքում միայն այն ժամանակ, երբ արդէն մեր հայրենիքը գերեզմանատուն եւ աւերակ լինի դարձած...



—

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Նոր գիտութեան նախօրեակին)

—

Մինչեւ այժմ ընտանեկան կրթութիւնը, թէ դպրոցը և թէ բոլոր միւս կրթական հիմնարկութիւնները գլխաւորապէս ի նկատի են ունեցել մարդու *անհատական-անձնաւորութեան* դաստիարակութիւնը: Ամենայն դաստիարակներն ու մանկավարժները իրանց առաջ տեսել են մի որոշ անհատ, որոշ անձնաւորութիւն, մի Մարկոս կամ Կիրակոս, որին և աշխատել են ներշնչել կամ ուսուցանել իրանց բարոյական սկզբունքները:

Հէնց այդ բարոյական սկզբունքները իրանք էլ անհատական բնաւորութիւն ունէին: Օրինակ, եկեղեցական դաստիարակչութեան հիմքը կազմող տասն պատգամը իր պատուիրանքներով *անհատի* հետ է խօսում: *Մի՛ շնար, մի՛ գողանար, մի՛ ցանկանար, պատուի՛ր քո հօրն* և այլն... բոլորն էլ *եզակի են*. յոգնակի ոչ մի պատգամ չկայ:

Մարդկութեան նախանձախնդիր դաստիարակները հաւատացած էին, որ անհատը մտաւորապէս զարգանալով, բարգաւաճ կեանք կունենայ, կամ թէ առանձին մարդիկ բարոյապէս կրթւելով, կեանքն էլ կբարւոքւի և կդառնայ երկնային մի դրախտ:

Բայց գիտական նորագոյն հետազօտութիւնները բաւականաչափ կասկածաւոր դարձրին վերոյիշեալ սկզբունքները...

Նախ, բազմաթիւ փաստեր ցոյց տւին, որ մտաւոր բարոյական զարգացումը ո՛չ միայն չէ ծառայում անհատի բարգաւաճութեան, այլ, ընդհակառակը, շատ ու շատ անգամ ուղղակի նրա կորստեան ու թշւառութեան պատճառ է դառնում: Ո՞վ չգիտէ, որ մարդկութեան ամենընտիր որդիները միշտ հալածւել են իրանց շրջապատողներից... ամենամօտ բարեկամներն ու հարազատները ծուռ աչքով են նայել նրանց վրայ, գժի ու մոլորածի տեղ են դրել նրանց, և որքան աւելի է եղել անհատի մտաւոր-բարոյական բարձրութիւնը, որքան աւելի զօրեղ է եղել նրա հանճարը, այնքան աւելի են հալածել նրան: Եւ մարդկային պատմութեան այդ սոսկալի ողբը մեր *լուսաւոր* տարեշրջանումն էլ անընդհատ կրկնւում է: Մի տասն տարի առաջ յանկարծակի յայտնի եկաւ, թէ իտալական պրոֆեսոր Մարկոնի հնարել է մի միջոց, որը հեռագրի *թելը* աւելորդ է դարձնում: Հասարակութեան ամենալաւ ներկայացուցիչները, նոյնիսկ լուսամիտ գիտնականները կասկածներ յայտնեցին, *անհնարական* համարեցին, ու գրեթէ չարախօս ու աֆերիստ հռչակեցին խղճուկ պրոֆեսորին: Ոչ ոք չէր ուզում ըմբռնել, որ հեռագիրը կարող է առանց թելի ներգործել: Մենք հայերս մեր նեղլիկ ու չնչին հասարակական կեանքում որքա՜ն նմանօրինակ զոհեր ենք ունենում... Երբ Արտավանը իր անհագին տաղանդով ու համալսարանական հմտութեամբ հանդերձ, մի կտոր հացի կարօտ մնալով, դիմում է Էջմիածին և ուսուցչութեան տեղ է խնդրում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանում է նրան՝ դուք աւելի շուտ սպառնացնել ու այլասեռել կարող էք հայ մանկան, քան կրթել նրան: Եւ այդ սոսկալի նախատինքը դրոշմում է Վերի Հայաստանի հեղինակի ճակատին ազգի ամենամեծ ընտրեալը. էլ սրանից աւելի յուսահատական և ահաւոր ինչ կարող է լինել: *«Մարգարէն գաւառում պատիւ չունի»*, ասում է աւետարանի մարգարէն: Մենք կարծում ենք, որ այս միտքը կարելի է աւելի եւս ընդարձակել և ասել, թէ մարգարէն *իր դարում* պատիւ չունի, որովհետև խաւարը չէ կարող լոյսին հասկանալ և մարգարէի էութիւնը հէնց նրա մենակութիւնն է:

Ուրեմն հաստատապէս կարելի է ասել, որ եթէ մի ազէտ ու անբարոյական հասարակութեան մէջ դուք ձեր երեխաներին դաստիարակում ու ուսուցանում էք, այդպիսով դուք ձեր ձեռքով կորուստ ու թշւառութիւն էք պատրաստում ձեր ժառանգների համար: *«Ես ուղարկում եմ ձեզ որպէս գառներ գայլերի մէջ...»*: Եւ այդ ազէտալի *գառնակերութիւնը* մարդկային ցեղի ամենամեծ արատն է... Երբ անհատը փոփոխւում է, իսկ հասարակութիւնը կանգ է առնում, ողբալը անխուսափելի է:

Բանն այն է, որ հասարակութիւնը իբր մի ամբողջութիւն, ինքն ըստ ինքեան մի օրգանական էակ է կազմում, որը սեփական բնութագիր ու ոգի ունի, ուստի ու ինքն ըստ ինքեան մի դաստիարակութեան առարկայ է: Հասարակութեան մէջ կարող են լինել լաւ ու վատ անհատներ, ազնիւ ու անազնիւ, հանճարեղ ու ապուշ արարածներ, բայց և այնպէս հասարակութիւնը, իբր ամբողջական օրգանիզմ կարող է իր սեփական որոշ յատկանիշները ունենալ որովհետև հասարակութիւնը մի սոսկ անհատների հաւաքածու չէ, մի մեխանիկական համագումար չէ, այլ նա ինքն ըստ ինքեան մի *կենդանի օրգանիզմ* է: Մեր խօսքը պարզելու համար մի օրինակ կբերենք բոյսերի կեանքից:

—

Ենթադրենք, որ դուք գտնում էք ծովի մէջ մի նոր կղզի, ուր ոչ մի հատիկ թուփ չկայ: Դուք մի անսերմն թուփ էք տնկում այնտեղ, այսինքն այնպիսի մի թուփ, որն իր արմատները հողի մէջ տարածելով, նորանոր միատեսակ թուփեր է ծնում, որոնցով վերջապէս ծածկւում է ամբողջ կղզին: Այս դէպքում կարելի է ասել, որ ամբողջ կղզում կայ ու ապրում է մի հատիկ ամբողջական թուփ: Այսպէս է և մարդկային հասարակութիւնը: Ամբողջ մարդկութիւնը մի ամբողջական թուփ է, տնկւած *աշխարհ* կոչւած կղզու վրայ: Անհատները, համայնքները, ազգերը, ցեղերը ընդհանրական թուփի ճիւղաւորութիւններն են միայն, թէկուզ տեղ-տեղ ընդհանուր արմատները կտրւած ու խորտակւած լինեն: Իւրաքանչիւր ճիւղ ապրում է իր համար, բայց ամբողջ թուփը նոյնպէս իր կեանքն ունի: Մարդկութիւնն էլ սկզբում մի ամբողջական ցեղ է եղել, ու միայն պատմական արհաւիրքների ու աշխարհագրական տարբեր պայմանների շնորհիւ ընդհանուր մարդկութիւնը ցեղերի ու ազգերի է բաժանւել: Իւրաքանչիւր ցեղ կամ ազգ որոշ պայմանների համեմատ զարգացրել է իր ընդունակութիւնները... Ինչու համար. որպէսզի ապագայում սրանք կարողանան իրանց *բազմատեսակ* ընդունակութիւններով աւելի եւս ուժեղացնել մարդկային ընդհանուր օրգանիզմը: Մէկ ցեղ կարողացել է սկիզբ դնել տրամաբանական գի-

---

ՃՕՃԿԱՆԵՑԻ ԽՈՒԴԻՆ

Դիւցազներգական պօէմ ժողովրդական պատմածքներից

—

(«Վերի-Հայաստանի»-ի ժամանակից մի մնացած հերոսի խոկական կեանքից)

—

Երկրորդ նւագ

(Շար. և վերջ Տարազ 1905 թ. № 35)

Անհա՛ գարուն, գարուն կենսալից
Հիւր եկաւ Գուգարք, աշխարհ ծաղկալից,
Փարթամ գեղութեան
Ոգին բնութեան
Իր կենդանարար շունչը տարածեց
Եւ անուշ հոտեր սար, փոլ ման ածեց:
Կանաչ փառթամով դաշտերը են զուգւած,
Ալվան ծաղկներով լեռներն են ձգւած.
Ժպտում է Գուգարք հազար պճրանքով,
Հրճւած անսահման նոր գարնան կեանքով
Ձիւներ հալ ընկած ձորերն են փախչում,
Ջրերին խառնւած՝ *զարուն* են հնչում:
Ծոցը լեռների
Ու անտառների
Փռւած բուրում են *Բալասան, ամբիւլ,* 73)
Ամեն ձորակից երգում է *բլբուլ*.
Ամեն տեղ կեանք է, կեանք եդեմական
Գարնան օրհներգներ թափի՛չ դուրեկան
Ամեն տեղ ծաղկած պարզ կեանքն է հսւում.
Դեռ ճաճացող սպլախմբերի
Տուտը չի հատել անվերջ շարքերի,
Սարերն քշում հայ, թուրք անխտիր,
Եայլաղն են քշում ապրանք ու նախիր:
Ամեն տեղ կեանքը կատարում շրջան.
Ամենքը շարժւում, գործում ժրաջան.
Բայց ո՞ւր է Խուդին, որ միշտ այդ ժամին
Ամենից առաջ՝ սարերի ճամբին
Նանօթ սիրահար՝ գուրս եկ՚լ տանով,
Ոչխարի հոտով ու ազգականով:
Հիւանդ պառկած է իր տան յարկի տակ.
Ախ ու վիշեր է անում շարունակ.
Որդիքն անկողնու չորս կողմը շարւած,
Կինը ձեռը ծոց տրտում, շւարւած:
«Խուդի ջան, Խուդի՛,—հարցնում է, լալիս,
Եւ պինդ ձեռքերով ծնկանն է տալիս,—
Ի՞նչ պատահեց քեզ, քո *չարը* տանեմ.
Ո՞ր ջուրն ընկնեմ, խեղդւեմ, ինչ անեմ.
Քանի՜ պառ—ծռւմով,
Քանի՜ խունկ—մոմով
Ուխտաւոր գնացել էս՝ էն խաչերին.
Օգնութի՜ւն կանչել էն սուրբ քաջերին,
Բայց չեղաւ հնար—ցաւիդ մի դարման.
Կուզեմ ես առաջ մեռնել դերեզման:
Թող ցաւըդ գայ ինձ, իմ թագ, իմ պարծանք,
Երնէ՜կ չլտեսնեմ քո մահն ու տանջանք.
Ինչպէ՞ս եմ սիրել և ի՞նչ մուրազով,
Ինչե՞ր են անցել մեր երազով.
Գուցէ վերևից ծաղրեցիր Աստւած,
Երես շրջեցիր: Ինչ բաղդ ես տւած
Քեզ մենակ յայտնի, թէ ինչե՞ր արի,
Տունս, որդիքս ես քանի տարի
Պահեցի մի կերպ նամուս—գէյրաթով
Մի կտոր յոյսով, մածուն ու կաթով
Երբ զընացել է սա պատերազմի,
Ա՜խ, այս անգամ էլ թող լեզուս լալի,
Ի՞նչքան սրտայել գլուխս բարձին,
Ի՞նչքան սպասել իմ Խուդու դարձին...
Գոհանում քեզնից,
Որ կխնդրից
Բերիր անվնաս.
Խնդրեմ ունենաս
Աժմէլ սէր ու կամք,
Օգնելու խնամք„:

—Աստւա՜ծ իմ Աստւա՜ծ, ահա նա կրկին
Երեսծ աչքիս, մղրախը ձեռքին,
Ի՞նչէք սուս կացել, չէ՞ք տեսնում, հրէ՜ն,
Նստած, վրփրած ձիուն հրեղէն»...
—Ո՞վ, Խուդի, ինչ ես քեզ ու քեզ խօսում,
Ինչու է արցունք աչքիցդ հոսում.
Քեզ պէս իղիթին սկի չի սազում,
Որ տեղն ես տալի, այդ ինչ երազում....
«Ա՜խ, դուք անխրատ,
Տեսէք ինչ արատ.
Մզրախը կոխեց աչքերիս լիսը,
Սատտւով պատեց իմ ջանն ու միսը,
Հիմի էլ նայում հեռթկից տաղ կացած,
Մարը թափ տալիս վրէս բարկացած»...
—«Դու *զառանցում* ես, հոգիս, մարդ չըկայ,
Քո երկիւղիցը այստեղ ով կըգայ.
Մի պատմիր, տեսնեմ ինչ է պատճառը
Այդպէս ես անում, ես կանեմ ճարը
Վերկաց, տես խալխը սարերն է քշում,
Իսկ դու մաղիդ հետ կռւում ու դոշում.
Եկ, մենք էլ երթանք մեր սիրած սարը,
Տանենք երեխէք, *աղի* ոչխարը...74)
Խուդին յետ եկաւ, տեղի մէջ նստեց.
Կինն էլ նախաճաշ հաց, ձու պատրաստեց.

73) Հոտաւէտ ծաղիկներ.

74) Խուդին սեփական ոչխար չի ունեցել, չքաւոր է եղել, սար երթալու ժամանակ, վար ու ցանքը պրծնելուց յետոյ վերցնում էր պահու վարձով մի հարուստի ոչխարի հոտը և սար գնում:

ութիւններին (օրինակ մաթեմատիկական—արարները) միւսը գեղարւեստ է մշակել (յոյները), երրորդը բարոյական սկզբունքներ (իսրայէլացիք) և այլն: Այդ բոլորը վերջ ի վերջոյ ծառայում է ընդհանուր մարդկային ցեղին: Բայց հեռու չըգնանք, դառնանք դէպի մեր խնդիրը...

Ուրեմն, որպէս գոյութիւն չունի անհատի *միկրոսմական* կեանքը, այնպէս էլ ոչ մի ազգ կամ ցեղ չէ կարող մշտատու կերպով առանձնակի-միկրոսական կեանք ունենալ: Այդ պահանջում է *ընդհանրական Թափի* գոյութիւնը: Մէկ առարկայ բռնելու համար դուք ձեր ձեռքի հինգ մատները իրարից հե*ռացնում էք, չռում էք* ձեր ձեռքը և ապա առարկան ճնշում ձեր մատների արանքում: Մարդկային ազգի ցեղաւորութեամբ, պատմութեան ճիւղաւորութեամբ նախախնամութիւնը միայն իր ձեռքն է *չռում*...

Վերջապէս մեր նորագոյն կեանքի կազմակերպութիւնը հետզհետէ բոլորովին *կենդանի* էակի կազմութիւն են տալիս մարդկային ամբողջ ցեղին: Հեռագրաթելերը այդ օրգանիզմի նիարդներն են, երկաթուղիները արեան խողովակները... Բորսայում թղթերի իջնելու ու բարձրանալու արագութիւնից բորսային մակլերները գուշակում են ընդհանուր երկրի դրութիւնը ճիշտ այնպէս, որպէս բժիշկները որոշում են հիւանդի դրութիւնը նրա սրտի զարկերը հաշւելով: Բայց այդ հանգամանքները մի նոր տարերի արդիւնքն են: Հէնց բանն էլ այդ է, որ հասարակական օրգանիզմը դեռ վերջնականապէս պատրաստ չէ, նա սաղմնազարգացման մէջն է գտնւում: Մարդու անհատական օրգանիզմը պատրաստ է, իսկ *մարդկութեան* օրգանիզմը դեռ կիսատ է: Սա այդ ամբողջական օրգանիզմի նպատակայարմար զարգացումը նոյնպէս մի դաստիարակչական-գործնական գիտութեան առարկան պիտի կազմէ: Մանկավարժութիւնը գործ ունի անհատի հետ, իսկ *նոր* գիտութիւնը պիտի գործ ունենայ հասարակական ամբողջութեան հետ: Այդ գիտութիւնը կարող է կոչւել հասարակավարժութիւն կամ *հասարակական դաստիարակութիւն*: Մանկավարժութեան հիմքը կազմում է անհատական հոգեբանութիւնը, իսկ հասարակավարժութեան հիմքը կը կազմէ հասարակական հոգեբանութիւնը: Այդ գիտութիւնը, ինչպէս և հասարակական դաստիարակութիւնը գտնւում է առայժմ սկզբնական, կատարելապէս անմշակ դրութեան մէջ ու հէնց այստեղից է ծագում մեր դարեշրջանի անորոշ ու սոսկալի վիճակը: Ֆիզիկական հրաբուղխների սուր տարեշրջանը վաղուց է անցել. երկրի մակերեոյթը ամուր ու որոշ կերպարանք է ստացել: Իսկ պատմական-հասարակական հրաբուղխներն ու երկրաշարժները դեռ շարունակւում են: Հասարակական օրգանիզմի *ինքը-ամփոփ* դեռ չէ լրացել...

Ս. Թառայեանց

ՎԵՐՋԻՆ ԻՂՁԸ

Մեր թերթերի բարեկամ, հոլլանդացի բանաստեղծուհի տ. Lucy Audretsch գաղափար տալու համար հայերիս հոլանդական բանաստեղծութեան վրայ, իր ներկայ բանաստեղծութիւնը թարգմանել է ֆրանսերէն և ուղարկել մեզ, որից և մենք, մեր բանաստեղծ աշխատակիցների աջակցութեամբ հնարաւորութիւն ունենք այսօր հայերէն լոյս ընծայելու: Կարելին չափ ջանացել ենք չը շեղւել բնագրից:

Շուտով կգայ օր, երբ այս աշխարհում կեանքս կմարի.
Բարեկամուհի՛ք, ու բարեկամնե՛ր, եղէ՛ք դուք բարի
Թաղէ՛ք ինձ անշուք, թաղէ՛ք ինձ առանց մեծ աղմուկների:

Եւ տախտակաշէն դագաղիս մէջ տեղ փոքր ճեղք թողէք.
Բարեկամուհի՛ք ու բարեկամնե՛ր, ա՜խ բարի՛ եղէք,
Կանաչ ու ծաղկած սրափուշ մի ճիւղ նրա մէջ թաղէք:

Թո՛ղ վերջին անգամ լոյսը համբուրի իմ աչուկները.
Եթերում թռչող սիրուն հաւքերի թո՛ղ երամները
Երգեն ինձ վերջին իրենց հրաժեշտի ջերմ ողջոյնները:

Եւ որ հողի տակ միայնութիւնը տաղտուկ չլինի
Մ'եծ ցանկապատից բռնէք մի ծղրիդ—սեւագոյն լինի,
Դրէ՛ք դագաղիս, որ նա բարձրակոչ սաղմոսներ ձայնի:

Բարեկամուհի՛ք ու բարեկամնե՛ր, դուք լաց մի՛ լինէք
Ս իրել եմ անչափ, շա՜տ էլ տառապել—կեանքս վշտաբեկ
Եւ սակայն մահը ինձ համար դառն չի եղել երբէք:

Շիրիմիս վրայ թո՛ղ մի՛ ծառ տնկեն, ուր թռչունները
Շատ բոյներ շինեն, ուր գարնան օրին մեր ճագուկները
Մնելուց առաջ լսեն իրենց մօր գեղգեղանքները:

Թո՛ղ սաղարթախիտ այդ ծառի տակին հասարակ փայտից
Շինեն նստարան, ուր լաւ օրերին (թէ Աստուած ուզեց)
Զոյգերը երգեն միակ սուրբ սէրը բախտաւոր սրտից:

Թո՛ղ նորա այնտեղ փոխադարձ պաշտեն, իրար համբուրեն,
Վիճելուց սակայն թո՛ղ նորա միայն ի՛նձ վկայ բերեն.
Թո՛ղ գրկախառնւեն, ես չեմ նախանձի, թէ անվերջ սիրեն:

Եւ թէ կենսատու նրանց ջերմ շունչը ցուրտ հողի միջով
Սիրտս թափանցի, այն ժամ իմացի՛ր, անգութ սիրահար,
Որ էլի նորից պիտի ես տանջւեմ քո սիրոյ համար:

LUGY AUDRETSCH

Հայ կերտու Խուդին ախորժակը փակ.
Երկար ժամանակ ընկած տեղի տակ:
«Մի օր եկայ ես,—
Խօսեց վերջապէս,—
Գնացի քօլը՝ բատ սովրականին
Իմ որսն անելու: Մի ծառի տակին
Մի սիրուն եղնիկ խոտ էր արածում,
Եւ—զգոյշ զգոյշ աչքը ման ածում,
Մոլշած ու պլշած դիտում շրջակայն,
Թէ դարան մտած չըկա՞յ մի հորսկան...
Իջայ մի ձորակ, մօտեցայ աղբրին.
Հէնց ուզեց մի կո՜չտ վրայ ընկնել ջրին.
Գցեցի թուանք, տրը՜ք, տրը՜ք, գնդակը
Գնաց ու ծակեց, խե՜ղճ, փորի տակը.
Իսկոյն բառաչեց և պառաւած փորից
Դուրս վիժեց դուակ գլուխը զօրից,
Ու կիսակենդան արնում մէր, մանուկ
Թրպրտացին, ընկան գետնին բաշքշուկ.—
Ա՜խ, էն բառաչը, էն շարժումները
Դեռ կարատումն սրտիս թելերը...
Ինձ թւաց այնպէս, թէ ամբողջ անտառ
Տնքաց ծանրապէս, սրգաց թփի ու ծառ
Կարծես բնութեան տեսքը գեղեցիկ
Փոխուեց ու դարձաւ սեւազդեցիկ:
Կարծես իմ շուրջը ամեն առարկայ
Գերբնական լեզու առած ու վկայ
Ծաղրեց քրքիջով իմ վատ արարքը,
Արտասուեց տխուր ամբողջ Գուգարքը,
Յանկարծ անտառը աչքիս սեւակնեց
Ու վայրագ ձայնով ինձ աղաղակեց.
«Այդ ի՞նչ արեցիր, նզովք յաւիտեան,
Ամօթ, նախատի՜նք քո այդ ծերութեան»...
Երկինքըն յանկարծ պատեց թուխպ, դուման.
Աչքերըս կորան բոլորն անդուման.
Փոտացին ամպեր, լեռ ու քարափներ,
Տեղած կայծակի, կարկտի սարափներ.
Եւ փշշալըրեց սև օձի նման
Ծեխով անտառը— դարձաւ գերեզման,
Տնքաց, մռնչաց կաղնին հաստարմատ,
Ջրկուելով խոյաւ հողից հորազատ,
Գետնին թեքթեքուած ծառեր բիւրաւոր
Եւ արմատահան և ճղնակատար...
Քամին մռնչում, թռչուն հառաչում.
Գազանը վախից հեռու՜ է փախչում.
Մէկ էլ երկինքը յանկարծ տրաք տրաքեց.
Մի զարզանդ ձենով մէկն աղաղակեց.
«Անզգո՜ւթ դաւաճան, ինչո՞ւ կատաղի
Գուլլին պահ տուիր եղնիկին յղի.
Դու իմ ձեռքիցը ինչպէս կազատուես
Եղնիկի պահողն—մի՛թէ չըգիտես—
Աստուած է վերին քեզ Ստեղծող.
Ինչո՞ւ այդ բանում չեղար մտածող.
Չէ՞ որ դու նհախ արիւն չես թափել
Եւ ոչ մի բանից դու չես սարսափել.—»:
Ես շշմածի պէս ընկայ անտառը,
Որ թողնեմ ականջ մի մեծ պատառը
Իմ դէմ խօսողի: Շատ պատեցի,
Ձեղաւ: Կարծելով տեսածս երազ՝
Ճօճկան վաղեցի անտառից վռազ.
Յետեւիցս էլ կարծես քար ու սար
Ձէն տուին. «փախմա՜ւ ծերուկը, տխմա՜ր»:
Երա՞զ էր արդեօք, թէ՞ այն իրական,
Չըգիտեմ. միայն մի սև ուրուական
Ինձ հետեւում է գիշեր ու ցերեկ
Քնել ու հանգիստ չէ տալիս երբէք.
Տանջում է խիղճըս, կրծում է խիղճս
Եւ սրտիս խորքում խեղդւում է ճիչըս...
Սիրելի որդիք, ինձնից ձեզ խրատ,
Ապրեցէք մէկ տեղ սիրով անարատ
Լաւ պաշտպանեցէք ձեր հողն ու հանդը
Եւ չը մոռանաք իմ սուրբ աւանդը.
Ի՞նչ գեղեցիկ բան, թէ այնպէս անէք՝
Աստուծոյ պահած եղնիկ չըսպանէք,
Սիրեցէք զէնքը,
Բաջի օրէնքը.
Ազատ պահէք ձեր ծննդարան.
Ազատ լեռները ձեզ պատսպարան.
Ձեր դաշտը առէք լեռներից դժար.
Զօլերն ու գիւղը ձեզ բաց վարժարան.
Տուէք խալխին սէր,
Եղէք մարդասէր»:

—

Որդիքն տեսցին,
Հօրն համբուրեցին.
Երջանի՛կ մարդ ես, հարի՛ւր հի՛նգ տարի
Հայրենի սիրով ապրեցիր արի.
Ո՛վ կը մոռանայ, սիրելի՛ մեր հէր,
Արած գործքերդ, արարքդ անվեհեր,
Քեզ հետեւելով գիշեր ու ցերեկ՝
Կը յիշենք հնոց անցքերը մէկ մէկ,
Կը մանենք անվախ զէնքերի տակը,
Խալխին կըբերենք մեր յաղթանակը,
Կը կատարենք ճիշտ քո վեհ կտակը.
Թո՛ղ օրհնեա՜լ լինի քո յիշատակը»...

Գրիգոր Բալասանեանց

75) «Եղնիկի պահողը Աստուածն է» իմ գրած մի առանձին պօէմում (անտիպ) հանդէս է բերւած այդ լեգենդայի իդէյը, որ շատ տարածւած է և գոյութիւն ունի հայ ժողովրդի խաւերում...

ՄԻ ՏԱՍՆԱՄԵԱԿ



Ներկայ արիւնոտ օրերում անյարմար չենք գտնում, Սասունի կոտորածի առիթով, Լոնդոնի մի քաղաքական լրագրում տպագրուած **Մի օրիորդի զղջանքը** վերնագրով *** ստորագրութեամբ յօդուածը այսօր հրատարակել։

Այս յօդուածը արտասահմանում ապրող մեր մի աշխատակցուհու գրչին է պատկանում, որի նշանաւոր՝ ֆրանսերէն լեզւով գրած **Կոնֆի-դէնսիօն (Տեսութիւն)** գիրքը **Արմէ-նա** ստորագրութեամբ ժամանակին մեծ ուշադրութեան արժանացաւ Եւրոպայի մամուլի կողմից, իսկ **Ժուրնալը** այդ գիրքն իր սեղանից անբաժան և անհրաժեշտ զարդ համարեց։

Յօդուածը տպագրուած է եղել խմբագրական հետևեալ յառաջաբանով՝

Հայկական ամենասաստիկ զարդա-տանի պատկանող մի երիտասարդ օրիորդ հետևեալ տողերն է մեզ ու-ղարկել որոնց մէջ երեւում է կան-խաս հանճարի եւ վսեմ հայրենասի-րութեան թրթիռներ․

ՄԻ ՕՐԻՈՐԴԻ ԶՂՋԱՆՔԸ

—

Ո՜վ իմ սիրելի քաղցր Հայաստան, դու ով իմ մայրենի աշխարհ, խոխոշում են քո որդիքը, պղծում են քո սուրբ սեղանները, բռնաբարւում են քո բողբոջուն կոյսերը. սրտակաւր վշտի բովն ես դարձել։ Եւ ես, հոգիդ զաւակը ինչպէս մնամ ցաւերիդ խուլ և անտարբեր։

Ո՜հ, հոգիս մրմռքում է, ցաւի ճիչերը թող պատռեն օդը, գրգռացնեն սգաւոր վայուններով. ամբողջ չուրջս տեսնում եմ, թշուառական դրացի, յօշոտուած դիակների բլուրներ, արեան գետեր։ Սրանք երանելիներն են, չարչարանքը վերջացաւ, հոգին սլացաւ և հանգչում են նրանք Բարձրեալի խաղաղութեան մէջ։ Սակայն նայեցէք այն գողդոջ և Եւրոպայի խիղճը պիտի հանգստանայ այդ խուզարկութեամբ։ Որոշումներ պիտի դրուեն, իմ խեղճ եղբայրներ, ձեր մասկոյտերի վրայ։ Եթէ բարեհաճեն ձեր մեռելները պիտի համրեն, աւերուածների խելութիւնը պիտի հաստատեն։ Եւրոպան եթէ հաճի, գուցէ ձեզ ողորմի,— մի քանի գրոշներով, և այդ այն ժամանակ երբ դուք հեծում էք բարբարոսների լծի տակ ու ձեր բոլոր ուժերով ձգտում էք չնչել ազատութեան սուրբ մառ և անզրդուելի իր մարդասպան մոլեռանդութեան մէջ։

Թողէք ինձ խնդալ… Բայց ինչ եմ ասում, հեկեկանք, ողբանք, գուցէ հեռաւոր բարկութիւնն անցնի (ջղայնակզմութիւն) և իր թշուառ ճակատագրին չըթողնեն հային ու համակրութեան պետութիւններ չ'ուղարկեն օգնել, օրինակէք Համիդին։

Սակայն մի կողմ թողնենք երկիրները, կառավարիչները, քաղաքագէտները, էջնենք դէպի խոնարհներն ու փոքրերը,— մի խօսքով դիմենք ամբոխին որև կազմում է մի ժողովուրդ։ Սրանք են, որ սիրտ և հոգի ունեն, սրանք են, որ իմանալով այսչափ անիրաւ անարդարութիւններ և մահկանացու տառապանք սառուում են։ Մարդկային գարշելի և խեղդող անտարբերութեան ամենուրեք թշուառութիւնն կարեկցութիւն սրանք են, որ միայն կը-

Բեթղէհէմի դուռը

սարսափահար ձիգ չոքերը, զարհուրանքն ու մահը դրօշմուած նրանց ջղաձըգուած դէմքերին։ Նայեցէք և սրանց մայրերը, սրանք տառապում են հոգեւարքի երկունքով մինչև իրանց արգանդի խորքերը։ Տեսէք նաև այն ահար ցաւատանջ խեղճ աղջիկները, սրանց հայրերն ու մայրերը, սրանց խանդակաթ փեսաները այնչափ ահար, մաշուած և ցաւագար։ Նրանք խուսափում են, ճիշտ անասունների նման, զգալով իրանց մօտալուտ մահը։ Բայց դուր փախուստ, երկրի վրայ նրանց ոչ մի փրկութիւն. օրհասականը հնչել է։ Տաճիկը յարձակւում է, սեղմում է քեզ, վրայ է ընկել, զործդ աւարտուած է։

Դարեր առելութիւնը քրիստոնէի դէմ, Հայաստանի խեղճ զաւակներս, ձեզ վրայ է յագեցնում։ Այրարատեան, հին աստուածաշնչեան վայրի բնակիչ, իմ խեղճ եղբայրներ և քոյրեր, մեռէք, այսպէս է ցանկանում Եւրոպա։

Խորախորհուրդ խաչի չուրջը մի ամբողջ ժողովուրդ հաւաքում, սեղմւում է, խոլամը ծածանեցնում է իր կանաչ դրօշակը, սրում, սրբում իր զէնքերը, յարուցանում է իր բարբարոս լէգէոնները նման կատաղի հրոսակների այս թշուառ և անպաշտպան, աստուածային խաչի չուրջը շարուած, անմեղների դէմ։ Եւ հին քաղաքակիրթ աշխարհը, ամենաքրիստոնեայ, ամենակաթուղիկէ, ամենահաւատարիմ և ամենաառաքելական երկիրները, եկեղեցւոյն նեցուկ մեծ և կրտսեր ամենայն պարարինութեամբ նայում են այս արիւնալից, հրէշային դրամի ներկայացման։

Ժողովուրդը հոգեւարքի մէջ է։ Եւրոպան մի յանձնախումբ պիտի ուղարկէ. ինչ վեհանձնութիւն, մարդասիրական ինչ ողեորութիւն… Յանձնախումբը պիտի ուղարկուի և և վերակենդանացնող շունչով։

Ձեզ հալածում են, ձեզ սպանում-կոտորում են, բայց ախր դուք էլ չափազանց էք բառանչում, պատասխանում են ձեզ նուրբ և իմաստուն քաղաքագէտները։ Ամենայն ինչ լաւ է, ասում են նրանք։ Ապուշ կանաչ փաթաթանների դէմ նախ քան մեր ղղւանք արտայայտելը, թողէք տեսնենք վանքի մէջ են արդեօք և մեր շահերը, այլապէս մեզ աւելի շահաւէտ է սեւերի (գաղթական աշխարհակալութեան անտէր մնացած հողերի տիրապետութեան) հարցը։ Ուրեմն վա՜յ ձեզ, եթէ ձեր կոտորածքը մեզ չեն սարսափեցնում։ Մեզ առհելի տանջանքներ, անչուշտ ոճրագործութիւններ են պէտք։ Պէտք է որ Ներոն, Դալի Կուլա, Տիբէտ և Հելիոգաբալ գերազանցողներ լինեն, այդ պէտք է մենք տեսնենք և միայն այն ժամանակ մերկացնենք կայենից մեր սուրը, որ այժմ սուրբ գործի համար ժանգոտուած է։ Մեր ինչ հոգը եթէ ձեզ բոլորիդ էլ կոտորեն, քանի որ սուրբ քաղաքականութիւնը և մեր շահերը այդ են պահանջում։ Թիւրքական զրոյցներին մենք ուշադրութեամբ ենք ականջ դնելու։ Մեզ խարելու են, ձեզ օրօր են ասելու պաշտօնր փաշաները (սատանաները) միանգամայն մեզ յիմարի տեղ են դնելու։ Մեզ պէտք է պատմեն, որ այդ անգթութիւնները տեղի են ունեցել միայն քամխով ուռցրած և տաքացած հայ գլուխների մէջ և ոչ մի այլ տեղ։ Իսկ մենք քաղաքակրթուած Եւրոպա, վերջին ծայր մշակուած դարեվերջիկ Եւրոպա, մենք միշտ պիտի կարծենք, որ Թուրքը թանձրամիտ յետադէմ է։ Ցա-

հասկանան։ Ուրեմն դուք, ով քրիստոնեայ ժողովուրդ, Հայաստանը վրէժառութիւններ է հայցում։ Բայց ինչ եմ ասում։ Մի կողմը վրէժառութիւնը։ Եթէ ձեզ օգնութեան ենք մենք կանչում, վասն զի եղբայրներ ենք. քրիստոնէական օրէնսգիրքը հրամայում է՝ *Սիրեցէք զմիմեանս, խնայեցէք զի տացցի ձեզ։*

Ո՜վ մեծ արձագանք, արքայութեան երազ, արձագանք եղիր քրիստոնեայ հոգիների մէջ, բարախիր նրանց սրտի խոր ծալքերում։ Թո՛ղ քրիստոնէութեան մի մեծ շունչ վերցնէ նրանց և խանդավա-



Ճայլէրի վանքը

Նուխւայ շրջակայքում թէ այս սրբազան վայրը և թէ հայ գիւղերը ազատ մնացին Թրքական արշաւանքից և աւերումներից․

ռէ իրանց թշուառ եղբայրների սիրով։ Խաւարակուռ միջին դարերում խաչակրութիւններ ձեռք ձեռքի էին տալիս։ Տասնեւիններորդ դարու վերջը,— լուսաւորութեան դարը, քրիստոնեայ կրօնի հաւատարիմ ազգի անհուն տառապանաց հոգեւարքն է փայլեցնում։ Հայ ժողովրդի վրայ պարբերաբար գործադրւող ճըն-շումներին, աւաս ալըսելեայն համակրում է Եւրոպա։

Ի՞նչ, մինթէ Աւետարանը չըպէտք է երբէք քարոզուէր․․

***



Կ. Պոլիս

իսկ ստեղծագործութիւն հնարում է մարդը:

Դէ, այո, ես գիտեմ, որ դուք կը հակաճառէք... Մի անգամ աշխարհիս վրայ պատահեց մի մեծ անսպասելի բան. բնութիւնը. վերջապէս, խորամանկութիւն բանեցրեց որպէս թէ հնարել մի հատիկ էակ,—իսկապէս, իր տեսակի մէջ մի հատիկ արարած,—և ահա աշխարհ եկաւ Քրիստոսը: Ես գիտեմ, շատ լաւ գիտեմ... Սակայն, լսեցէք:

Երբ Յովսէփ Արիմաթեցին երեկոյեան իջնում էր Գողգոթայի սարից, որտեղ իր հոգին էր աւանդել Նրա Յիսուսը, նա տեսաւ մի պատանի, որը նստած էր ճանապարհի մօտ մի սպիտակ քարի վրայ: Պատանին նստել և դառն լալիս էր: Յովսէփը մօտեցաւ և ասաց պատանուն.

—Հասկանում եմ քո խորին վիշտը, Այո, պէտք է լալ, որովհետև, ի հարկէ, այս Մարդը մի Սուրբ էր:

Սակայն պատանին նրան պատասխանեց.

—Ախ, ես ամենեին դրա համար չեմ լալիս: Ես լալիս եմ Նրա համար, որ չէ որ ես էլ հրաշքներ գործեցի: Ես էլ բաց արի կոյրերի աչքը, առողջացրի Թոյլերին և յարութիւն տւի մեռածներին: Ես էլ չորացրի անպտուղ թզենին և ջուրը գինի դարձրի... Եւ այս մարդիկ ինձ չը խաչեցին:

—

Նազարեթ վերադարձը

—

Երբ Յիսուսը երկրորդ անգամ եկաւ աշխարհ, նա ուզեց այցելել Նազարէթ: Այնպէս էր փոխուել Նազարէթը, որ Յիսուսը չըկարողացաւ ճանաչել իր քաղաքը. այն Նազարէթը, ուր Նա բնակուել էր, լացի ու հեծութեան վայր էր. իսկ այս քաղաքն ամբողջապէս թնդում էր երգերով ու ծիծաղով:



Վիլհելմ Զինգէր

Հիմնադիր և նախագահ Միջազգային մամուլի դաշնակցութեան, խմբագրապետ «Neues Wiener Tageblatt»

Գնում է Քրիստոսը քաղաքի միջով, տեսնում է սպիտակ մարմարեա պալատը, որի մարմարէ սանդուղքների վրայով գնում գալիս էին ստրուկները, զարդարուած ծաղիկներով: Քրիստոսը մտաւ պալատը և ահա դահլիճի խորքում, ծիրանեգոյն անկողնում պառկած է մի մարդ, յասմիկով զարդարուած, նրա ճաղատ գլխին կային ալ վարդեր, դէմքն այրւում էր գինուց: Քրիստոսը մօտեցաւ, ձեռք տւեց մարդու ուսին և ասաց:

—Ինչո՞ւ ես դու այդպիսի կեանք վարում:

Մարդը յետ նայեց, ճանաչեց Նրան և պատասխանեց.

—Ես բորոտ էի: Դու ինձ առողջացրիր: Ինչո՞ւ համար ես ուրիշ կեանք վարեմ:

Քրիստոսը դուրս եկաւ պալատից: Իսկ փողոցում Նա ուղղակի պատահեց մի կնոջ, որի երեսը ներկւած էր, շորերը գոյնզգոյն, ոտնամանները մարգարտաշար. այդ կնոջ ետեւից շտապում էր մի մարդ երկգոյն հանդերձով, նրա աչքերը վառւում էին վավաշոտութեամբ.. Եւ մօտեցաւ Քրիստոսն այդ մարդուն, դիպաւ նրա ուսին և ասաց.

—Ինչո՞ւ ես դու հետևում այդ կնոջը և նայում նրա վրայ այդպէս վատ աչքով:

Մարդը շուռ եկաւ, ճանաչեց



Գլադստոն

ճնշւածների բարեկամ

Յիսուսին և պատասխանեց.

—Ես կոյր էի: Դու ինձ առողջացրիր: Էլ ուրիշ ինչ կերպ օգտւեմ իմ տեսողութիւնից:

Այն ժամանակ Քրիստոսը դարձաւ դէպի կինը.

—Այդ ճանապարհը, որով դու գնում ես, մեղքի ճանապարհ է: Ինչո՞ւ ես դու գնում նրանով:

Կինը ճանաչեց նրան, ծիծաղեց և ասաց.



Սասունցի կտրիճներ

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ

Չոյցի մասին

—

Արուեստի արտադրութիւնը միշտ միակ է իր տեսակի մէջ: Բնութիւնը ոչինչ չէ ստեղծում երկար ժամանակի համար. և ահա—նա անվերջ կրկնում է

Բեթղեհէմ քաղաքը

Տաճարի մէջ այստեղ ծնւած Մարդ—Աստուածը հեզ էր և խոնարհ: Իբրև իսկական անիշխանական իր վարդապետութիւնը չը տարածեց բռնի ոյժով:

ինքն իր միենոյն նպատակը, որ՝ նրա ստեղծածներից ոչ մէկը չանհետանայ: Նարգիզի ծաղիկները բացւում են մեծ քանակութեամբ. ահա թէ ինչու նրանցից ամեն մէկն ապրում է մէկ օրից ոչ աւելի: Եւ ամեն անգամ, երբ բնութիւնը հնարում է մի նոր ձև, նա իսկոյն էլ կըրկնում է նրա տիպարը: Մի ծովում գտնուած ծովային հրէշը խմանում է, որ միւս ծովում կայ իր նման մի ուրիշ հրէշ: Երբ Աստուած ուղարկում է պատմութեանը մի որ և է Ներոն, Բորջիօ կամ Նապոլէոն, նա միւս կողմում նրանց հետ մի շարքում դնում է այդպիսի մի ուրիշը: Նա, այդ միւսը, մնում է անյայտ,—այդ չէ կարևորը: Կարևոր է այն, որ մէկը յաջողութիւն գտնէր: Որովհետև Աստուած հնարել է մարդուն,

Անգլիական պարլամենտը

Գլադստոնի քաղաքականութեան աշակերտ—Ռօզբէրէրի նորից հանդէս է գալիս, սակայն Ռոշիլդների փեսան (Ռօզբէրէրի) անկարող պիտի լինի այս անգամ էլ հաշտեցնել ոսկու տոպրակները արիւն-քրտինք ճնշւածների հետ ...

—Այն ճանապարհը, որով ես գնում եմ, հաճելի է. իսկ իմ մեղքերը Դու ինձ ներեցիր:

Եւ Քրիստոսն իր խորտում մի մեծ վիշտ զգաց և չուզեց այլ ևս մնալ այդ քաղաքում: Սակայն հէնց դուրս գալիս, նա տեսնում է վերջապէս, որ քաղաքային խրամատի հողաբլրի վրայ նստած է մի պատանի և լալիս է: Քրիստոսը մօտեցաւ պատանուն, ձեռքը դրեց նրա խոպոպ մազերի վրայ և հարցրեց.

—Ընկեր, ինչո՞ւ ես դու լալիս:

Պատանին բարձրացրեց աչքերը, ճանաչեց Քրիստոսին և պատասխանեց.

—Ես մեռած էի, իսկ դու ինձ յարութիւն տուիր: Էլ ինչ է մնում ինձ անել իմ կեանքում, եթէ ոչ լալ:

Ուայլդ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամենաթանկագին բանը, ինչ որ ունի կամ կարող է ունենալ մի անհատ, մի ժողովուրդ այսօրւայ տխուր իրականութիւնը կեղտոտել կարող է: Մութ անկիւնութիւններով միմեանց հետ կապակցուած՝ ծուռ մարդկանց մի սեւար խմբակցութիւն, բռնութեան դրօշակ բարձրացնելով՝ անիրաւութեան պայքար է սկսել իրաւունքի և օրէնքի դէմ: Այնպէս որ դէմ առ դէմ կանգնել են անիրաւութիւնը և իրաւունքը: Առաջին իւրաքանչիւր քայլը ծնում է նորանոր աղէտներ, որոնք անտելի դժոխք են դարձրել մեր հիասքանչ երկիրը, մեր խաղաղ ու անդորրաւէտ կեանքի վաղեմի, որքան և է, գեղեցկատեսիլ պատկերը:

Բայց յատկապէս ինչ է անում անիրաւութիւնը:

Իւրաքանչիւր մի շունչ, ամեն մի հոգի ծնուել է ամենից առաջ ապրելու համար: Ապրել առելով՝ միայն նիւթական գոյութիւն չենք հասկանում: Բոյսի պէս աճելու մէջ մարդկային շատ քիչ բան կայ, եթէ չասենք ոչինչ: Լայն իմաստով իւրաքանչիւր մարդու բարոյական աստառը գլխաւորապէս զանազանւում է աշխատանքով: Վերջինիս ծագում է սեփականութիւնը: Սեփականութիւնը իրաւունքի մի տարրն է, իսկ իրաւունքը քաղաքակրթութեան գործօններից է:

Թուրքական ճիւաղութիւնը զոհ է ընտրել իրեն հայ իրաւունքը ամենաընդարձակ առումով և սեփականութեան իրաւունքը՝ մասնաւորապէս: Հայ ժողովուրդը իր բնատուր ընդունակութիւնների շնորհիւ միշտ եղել է աշխատասէր, թէ հողի, թէ վաճառականութեան և թէ խոշոր արդիւնագործութեան հետ կապուած միջոցին: Աշխատասիրութեան բնական հետեւանքն է սեփականութեան սէրը: Շատ բնական է, թէ ինչու: Ամեն մի կաթիլ քրտինք ամրացնում է սեփականատիրոջ համակրանքի տենչը դէպի իր աշխատանքի ծնունդը: Սեփականասիրութեան նիւթական զրդիչն է դա:

Սեփականատիրոջ սէրը մի այլ կերպ էլ կարելի է բացատրել: Եւ դա աւելի կարեւոր և նշանակալից է, քան առաջինը: Սեփականութեան մէջ բացի այն, որ գործադրւում են ոյժ, եռանդ, աշխատանք, միևնոյն ժամանակ նրա մէջ ամփոփւում է և սեփականատիրոջ անձնաւորութիւնը, անհատական բնոյթի դրօշմը: Սա մի փոքր գաղափարական, բայց ստոյգ մեկնութիւն է, որ յօժարակամ ընդունուած է յայանի մտածողների կողմից: Իւրաքանչիւր գործ իր որոշ տէրն ունի. աշխատանքի արդիւնքը մատնացոյց է անում աշխատողի վրայ: Սեփականութիւնը մարմնացնում է իր մէջ անձնական պատիւ, որի շնորհիւ միայն հնարաւոր է դառնում նիւթական առարկայի կամ սեփականութեան համար բարոյական ճիգ ու ջանք, մինչև անգամ անձնազոհ խիզախութիւն: Սեփականասիրութեան գերազոյն-բարոյական զրդիչն է դա:

Բացի նիւթական և բարոյական դրդիչներից հայի սեփականասիրութիւնը ունի նաև, եթէ կարելի է այսպէս ասել; պատմական դրդիչ: Ի՞նչ է հայի պատմական անցեալը:—Կովկասահայի այսօրւան իրականութիւնը բազմապատկած նման և աւելի սարսափելի բազմաթիւ իրականութիւնների հետ: Եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն հայի իրաւունքը միշտ ենթակայ է եղել հարւածների և մանաւանդ նրա սեփականատիրութիւնը, որ մի չարաչար ծակող փուշ է եղել հայութեան երդւեալ և ժառանգական թշնամիների պղտոր աչքերի մէջ: Մի խօսքով՝ հայ ժողովուրդը սեփականասէր է այնպէս, ինչպէս վարկասէր է վաճառականների դասակարգը և պատւասէր՝ զինուորականներինը: Հայի վիճակն էլ միշտ նպաստաւոր է եղել նրա հոգու յիշեալ յատկութեան. աշխարհի զօրաւորների շնորհիւ կաշկանդուած լինելով՝ նա միշտ զուրկ է եղել աւելի բարձր կարգի հոգեկան բաւականութիւններից և վայելչութիւն է փնտրել իր սեփականը ունենալու որոնումների և գիւտի մէջ:

Այս բոլորից յետոյ մեզ համար աւելի քան պարզ պիտի լինի, որ հայի իրաւական զգացողութիւնը պատմականօրէն աւելի սրւած, նրբացած պիտի լինի, քան սովորաբար ենթադրւում է: Իրաւունքը կամ իրաւական զգացողութիւնը, ինչպէս իրաւագիտութեան մէջ արդէն ապացուցուած է, աւելի նրբազգաց է դառնում միայն այն ժամանակ, երբ միշտ հարւածւում է. նա քնած է մնում և ուժգնապէս սթափւում է անիրաւութեան զաղիր հարւածից. նա ոյժ, զօրութիւն է ստանում, երբ օրհասական մարտի մէջ է մտնում կամայականութեան հետ. և թուլանում է, երբ որ ակամայ լռութիւնը դարձնում է առաքինութեան տուրք:

Այսօր վէրք ստացողը հայ ժողովրդի հոգին է, որովհետև սեփականատիրութիւնը իրաւունքի տարր լինելով՝ ուրեմն և քաղաքակրթական միջոց, ազգի էութեան ծնունդն է:

Եթէ մի հոգի տակաւին չի ըմբռնել՝ իրաւական զգացողութեան տէր է և ընդունակ ընդդիմադրելու անիրաւութեան, —եթէ նա իր պատմական կեանքում ունեցել է պայքարների մի ամբողջ շարան յանուն իր սրբազան իրաւունքի,—եթէ նա յաճախ մահը գերադասել է անասնական անգիտակցական կեանքի մերժելի միջոցներից,—վերջապէս, եթէ նա իրեն որդեգրել է արդարութեան և օրէնքի, ու կամենում է վարել մարդավայել կեանք՝ խորշելով միջնադարեան գժնդակ բնազդներով օժտուած ճիւաղներից,—կարո՞ղ է այդպիսի մէկը լռել, հանդուրժել անիրաւութեան հարւածներին և՝ անսալով զօրի—հրապարակախօսների քարոզներին՝ մոռացութեան մատնել իր իրաւական պարտականութիւնը դէպի այնպիսի մի երևոյթ, որ պատահական չլինելով հանդերձ՝ անվերջօրէն կրկնելու բոլոր հաւանականութիւնն ունի: Այստեղ մենք ակամայ յիշում ենք մի մեծանուն գործիչի խօսքը՝ նոյն Թուրք տարրի ուրիշ հողի վրայ գործած ոճրագործութեան առթիւ ասած. «Այդ չարիքը պատահական երեւոյթ չէ, այլ ցոյց է տալիս մի յայտնի սիստեմ եւ որոշ բարոյական կողերս. ուստի եւ կարող է միշտ կրկնուել, եթէ մնայ եւ այս անգամ անպատիժ»:

Ա. Տ.

Մեր թղթակիցները

Շուշի 26 դեկտեմբ.

ՍԳԱՒՈՐ ԱՐՑԱԽ

Շուշւայ քաղաքի վերին մասում, ուր կառուցւում է ըէալական դպրոցի խիստ հոյակապ, հսկայ շէնքը, մի փոքրիկ, բարձրադիր, կանաչագեղ տափարակի վրայ՝ վերացել է մի փոքրիկ գերեզմանատուն՝ երեք կանոնաւոր շարք, հարիւրէն աւելի թարմ հողադամբարաններ, այդ է «մեռած վաշտը» օգոստոսեան արհաւիրքի մարտիկները և զոհերը այդ տեղ են ամփոփուած: Մանաւանդ կիւրակէ օրերը շատ են լինում սգաւորներ. և խաչի մեռելոցին անհամար անգամ օրհնեցան այդ շիրիմները: Ահա հինգ ամիս է, գրեթէ ամեն օր, նկատելի է մի ազդուորիչ տեսարան, երիտասարդ սգազգեստ կին իր տղաիկի հետ գալիս է հողաթմբերից մէկի վրայ ողբում մի ժամէն աւելի, ցեխ օրերը բերում են իրենց հետ մի փոքրիկ զորգ. զորիկը միշտ կանգնած է լաց լինում, իսկ կինը նախ ընկնում է փարամ գերեզմանը, ապա նստում, յետոյ կանգնում և լալիս: Այդպէս շարունակ հինգ ամիս... Այստեղ թաղուած են այդ կնոջ հայրը, մայրը, եղբօրորդին. Նրանց տունը առաջինն էր Թուրքաց թաղին կից, կողոպտելուց կրակել են, և այն երեք անձինք այրել են, կենսաթոշակ ստացող գանձարանի պաշտօնեայ Ալէքսան բէկ և գանձապետ Ագուլեաց եկեղեցւոյ. Նրա հայրը տէր Ղևոնդ եղել է Բեհբութեան կռւում:

Այդ գերեզմանատուն կից է Ժամհարեան հիւանդանոցին, ուր ցուրտ կան աղէտի վիրաւոր զոհերից: Շուշւայ փողոցներում առաջ յաճախ նկատւում էին կապած ձեռներով երիտասարդներ, դժբախտաբար բոլորը աջ ձեռքից:

Նկատելու է, որ այրել է բուն, հին, կարելի է ասել, պարսկական զարդ Շուշին, հին օջախներից և միջնադարեան ձևի, ամուր և փառաւոր շէնքերից ոչ մինը չի ազատել, դրանց մէջ փչացած են շատ և շատ հնութիւններ և պարսկական ճաշակի շէնքի ներսի զարդարանքներ, դրանցից ոչ մին արտադրել անհնար է, անդառնալի կորուստ:

Հինգ ամիս է Շուշւայ ներքևի հայոց մեծ և փառաւոր գերեզմանատունը ոչ ոք չի գնում և ննջեցեալ այնտեղ չի թաղւում:

Ագուլեաց Տիրամօր եկեղեցին իւր չուրջը մի քառակուսի վերստ տարածութիւն վիթխարի աւերակների,—գերեզմանատակար՝—թօ՞ն ու բուի մէջ է գտնւում. իւր շուրջ մի ամբողջ փոքրիկ թաղ, չոր փողոցի վրայ. իւր այրուած կալւածներն են, ինքն միայն է ազատել, թէպէտ վիրաւոր և անարգուած, այժմ իւր մէջ «ողջնայ տաճարի» կարգն է կատարւել և նորոգւել է ժամասացութիւն՝ ամայի աւերակների մէջ, ժողովուրդից զուրկ:

Սև Արցախում հայոց հազարաւոր աւերակ վանքերի թւին երկուսն ևս աւելացան՝ Գանձասար և Ամարաս. առաջինը թափուր է, մէջը կենող չըկայ, այսինքն գրաւոր խօսելով՝ քեալ է անօրէնների երեսից, երկրորդը գլխովին թալանւած և աւեր ու գազանների պահականոց եղած. ոչ մի յոյս չըկայ դրանց վերանորոգման. նախ որ մատծող անձնւէր. յորդառատ մարդ չըկայ և որպէս դրա հետևանք ի հարկ է և փող չըկայ: Երկրորդ՝ Գանձասարի վերանորոգութիւն կըպահանջէ հինգ հազար րուբլի, Ամարասը առաջին նուագ կարելի է և հազարով շէնցնել: Ամարասի այգիները կտրել են, տափերը ամայի, չեն ցանւում, ժողովուրդ փախած, էլ ո՞վ պիտի կալւածքի տասանորդ տայ, որ վանքը պահէլ:

Աղէտից մի քանի ամիս առաջ Շուշի լուսաւորւեց ելեքտրականութեամբ. Պարսկաստանի Մազանդարանի գաւառից բերւած բարձրուղէշ, բարակ գերանները ցցւած էին ամբողջ քաղաքում, նոյն իսկ Թուրքերի թաղում. Ելեքտրական ճրագները մտել էին շատ հաստատութիւններ և մագազիններ. այժմ այդ ամենը փչացած է, ձեռնարկողը ահագին նիւթական վնաս է կրել: Մազանդարանի ձողերը յիշում են իրենց խաւար հայրենիքը, չըկան այլես փողոցների նոյն իսկ նաւթի լապտերները, հարիւր տարի յետ գնացինք: Թուրքերը, երևի, շատ գոհ են այս դրութիւնից, որովհետև «զուլու զարնելու խաւար», գայլը մառախուղ կըսիրէ:

Դարձեալ աղէտից քիչ առաջ Շուշու փողոցներում Թափւեյան ահագին երկաթէ ռելսներ և փողոցներն սկսեցին յարդարել տրամւայի համար, աւա՜ղ, սարսափելի աւերումը փարթամ քաղաքի միայն յուսահատութեան և անձկութեան մէջ ձգեց ձեռնարկողներին և ակ՜ կալողներին, ասում են՝ «աւերով տաղ» է եղել մեր քաղաքին... Շատերը կարծում են, որ եթէ Եւլախից Խանքենտի երկաթուղին շինուած լինէր, աղէտը այսքան սոսկալի չէր լինի: Քսան տարի է, որ լրագրներում կարդացինք Հիւսիսային գործակալութեան հեռագիրը Պետերբուրգից, թէ վճռւած է դէպի Շուշի երկաթուղի կառուցանել... Շատ անհոգ վարւեցան մեր ղեկավար և կապիտալիստ հայերը, նրանք անդադար պիտի բախէին մինիստրների դուները և անշուշտ յաջողած էին մինչև ցարդ, այժմ արդէն կարծէք ուշ է, վասնզի մի այնպիսի քայքայիչ միկրօբ է մտած հայ օրգանիզմի մէջ, որից շուտով պրծում չըկայ, այն է թրքական անտագոնիզմ:

Թուրքը չափազանց երկար ոխ պահող է և շատ աւելի արթուն, անյողդողդ և հաստատ, միջակ խելքի հետեւող և կատարող, հայը շուտ մոռացող, անհոգ, փոփոխւող է հեշտութեամբ և թեթեւամտութեամբ, Թուրքը չրջանկատ է և դիպլոմատ, խորամանդ, հայը բոլորովին թոյլ է դիպլոմատիայի մէջ և պարզամիտ:

Ինչ և իցէ, Եւլախից մինչև Շուշւայ խոլոտ վիմապատաժ՝ ստորոտը տարած երկաթուղին բուժիչ և խիստ բարեբեր ներգործութիւն կանէր ամբողջ Արցախի վրայ, նոր, կենդանարար ոգի կըտար երկրին. հարկադրելով բնակիչներին աւելի շինարար և խելացի զբաղմունքով պարապել, քան թէ կոտորածներով և թալաններով: Կովկասեան խառնակութիւններն վնաս են կեանքի բոլոր մասերին՝ առևտրին, գիւղացիներին, գրականութեան և այլն, նրանց ընդհանուր գինն է հաւասար ըէակցիա բոլորի համար և մասնաւորապէս մեծ, եթէ ոչ մահա-

ցու հարուստ հայերի համար: Կեանքի ամեն մասերի վերանորոգման՝ անհրաժեշտ է ներկայումս մի լուրջ քայլ՝ դրանից մինն է և ուշադրութիւն դարձնել մեր երկիրը սկսելու յարմարաւոր ուղիներով՝ հասարակ, խճեայ և երկաթեայ, կապել: Մի երկրի և ժողովրդի լուսաւորութեան, յառաջադիմութեան և հարստութեան ամենաառաջին փակտորներից մինն է յարմաւոր և հեշտ ճանապարհների բաց անելը, առանց որոնց, անհնարին է երկրի ամբողջ թանձր խաւարը փարատել և հողը, հանքերն ու ձեռարուեստը չահագործել:

Յ.

—

Մամուլի տեսութիւն

Ռուսական յեղափոխութիւնը անհանգստութիւն է պատճառում ամբողջ Եւրոպային: Ահա թէ այդ մասին ինչ է ասում *Տոմոսոն*:

Ռուսաստանից ստացուած վերջին տեղեկութիւնները չէին կարող չվախեցնել Եւրոպայի բոլոր բուրժուաներին, որոնք սոցիալական յեղափոխութեան առաջին թշնամիներն են: Ռուսաստանը կարող է յոյս ունենալ արեւմտեան Եւրոպայի բարոյական ու նիւթական պաշտպանութեան վրայ միայն այն դէպքում, եթէ նրա կառավարութեան կը յաջողւի վերացնել անիշխանական դրութիւնը, վերականգնել կարգը և ամուր բազուկներով իրականացնել կեանքի մէջ՝ խոստացուած բարեկարգութիւնները: Իսկ եթէ ռուսական քաղաքականութիւնը կըհակւէ կամ յետադիմութեան (րէակցիայի), կամ սոցիալական յեղափոխութեան կողմը, անպայման բարդութիւններ յառաջ կըգան, և եւրոպական պետութիւնները կարող են պէնքով խառնուել ռուսական գործերին:

Այս տեսակէտից շատ հիմնական խորհուրդներ է տալիս անգլիական *Թայմզ* լրագիրը:

Փոխանակ սպասելու, որ երկիրը *նախ* խաղաղւի, *Թող կոմս Վիտտէն* եւրոպէն ցոյց տայ ժողովրդին իր *եղբայրութիւնը*, փոխանակ եղբայր *անուանելու*: Թող նա մաքրէ ոստիկանութիւնը մատնիչներից ու խառնակիչներից և ոստիկանութիւնը գործ դնէ միայն հպատակների կեանքն ու սեփականութիւնը պաշտպանելու համար, առանց ազգի ու քաղաքական համոզմունքի խտրութեան... Անյապաղ գիջումները հնարաւոր են ու հեշտ, սակայն նրանք չեն անում: Վերցնենք օրինակ, խօսքի ու մամուլի ազատութիւնը: Այդ ազատութիւնը շնորհուած է Թագաւորի կողմից: Այնուամենայնիւ երբ ժողովուրդը հաւաքւում է իր կարծիքը արտայայտելու համար, նրան ցրւում են զագախների ձեռքով: Լրագիրները հրատարակւում են առանց գրաքննութեան, բայց խմբագիրներին դատի են ենթարկում... Թղթի վրայ արած գիջումները, որոնց ջնջում են իրական ճնշումները, կարող են միայն ընդհանուր անվստահութիւնը զօրեղացնել:

—

Ժամանակագրութիւն

—

Պօստ-հեռագրական գործադուլին դեկտեմ. 12-ին միացան Թիֆլիսում բոլոր բանւորները, փակւեցին գործարանները, արհեստանոցները, տպարանները, խանութները: Բաց էին մնացել ուտեստի խանութները: Յեղափոխ. կոմիտէները փաստօրէն տիրապետեցին ամբողջ քաղաքին: Նշանակուած էին մթերքների սակագները և հէնց իրանք յեղափոխակ. կոմիտէները վաճառում էին մասնակի գներով մթերք և գոյացած գումար յանձնում մթերքատէրերին: Թիֆլիսը մի մեծ գերեզմանատան էր նմանում, կանգ էր առել կեանքը, գիշերները փողոցները չէին լուսավառւում և մի քանի օր շարունակ եկող ձիւնը քաղաքի փողոցները հասցրել էր վերջին ծայր անկարգութեան: Ցերեկները անանցնելի ախմ ու ճեր էին կազմում, գիշերները սառչում: Իդիլլական այս աննախանձելի և շարադուշակ անդորրութիւնը քաղաքումս խախտւում էր եզակի յարձակումներով և սպանութիւններով. ընդակահար էին անում ժանդարմների, ոստիկանների:

Կովկասեան երկաթուղին և հեռագիրը անցել էր սոցիալ-դեմոկրատներին: Երկաթուղու կայարաններն ու գնացքները նրանց իրաւասութեան տակն էր փաստօրէն և սրա՛ք իրանց պատգամաւորներին, մարդկերանց տանում-բերում էին այս ուղիով, մթերք մատակարարում քաղաքին և: Հրատարակւում էին յեղափոխական մարմինների օրգան ռուսերէն, հայերէն և վրացերէն մի-մի թերթ, լոյս էր տեսնում և պաշտօնական «Կավկազը»:

Սակայն պետական կառավարութիւնը իրան երկար սպասցնել չըտւաւ: Զինուորական դրութիւնը նորից հրատարակուեց, գեներալ Մալաման նշանակւեց Թիֆլ. նահանգի ընդհ. գեն. նահանգ., Ենեարսկուն յանձնւեց Անդրկովկ. երկաթուղու բոլոր գիծը: Սա պաշարեց Թիֆլիսի երկաթուղու կայարանը զօրքով, վերցրեց կայարանը, բռնեց յեղափոխ. պատգամաւորների գնացքը: Ապա պաշարեց բանւորների թաղը *Դիդուբէ* և *Նախալովկա*, հրապարակ եկան թնդանօթներ, կազակներ:

Սրան պատասխան սոցիալիստները գործադուլի սահմանների աւելի ընդարձակեցին, կանգնեցնել տւին էլեքտրական կայանը և փակել տւին բոլոր մթերքների խանութները: Մնացին կիսաբաց հացթուխների թոնիրները, սառը ջուրը: Գործադուլ արին և քաղաք. վարչութեան մէջ բոլոր ծառայողները, կիսափակ էին բանկերը: Ահա այս ծանր օրերում, դեկտեմբերի 22-ին ցերեկ, ժամը մէկին Ներսիսեան դպրոցին պատկանեալ մի մեծ շէնք, մէջը վրաց տպարան, երկու հիւրանոց, մի քանի ճաշարան, չորս կողմը խանութներ և ամբողջ հսկայ շէնքը չորս փողոցի վրայ, թնդանօթի հարուածներից ճարակ եղաւ կրակին, փուլ եկաւ, չուրջը առատ հոսեցնելով մարդկային արեան հեղեղները, մարդկային դիակներ թաղելով իր տակը: Այդ շէնքից մի ռումբ է նետւում կազակների վրայ, որից վիրաւորւում են են մի երկու կազակ, սպանւում մի քանի կողմնակի անցորդներ: Սրան պատասխան կազակները և զինւորները անխնայ գնդակահարում են բազարը լի անմեղ ժողովրդին և իրանց այդ արինոտ սխրագործութիւնը տարածում շրջակայ փողոցներում: Ռուսաց ծննդեան առիթով բացուած մթերքախանութները իսկոյն փակւում են, նկուղները լցւում լեղապատառ եղած հարիւրաւոր ժողովրդով: Կատաղած կազակները մտնում են և այս նկուղները և յօշոտում սրանց: Սպանւածների և վիրաւորների թիւը շատ-շատ է և դեռ չըստուգուած վերջնականապէս: Ասում են ռումբը ձգել է խուլիգանների կուսակցութիւնը, որպէսզի անմեղ ժողովուրդը նահատակւի: Ցամենայն դէպս յեղափոխական մարմինները շրջաբերականներով յայտարարում են, որ իրանք *այսու* անմաս են:

Դեկտ. 22-ի այս արհաւիրքը աւելի ես խստացրեց զինւորական միջոցները և կարծէք քաղաքը պաշարուած վիճակի մէջ լինէր: Անթիւ կազակներ, զինւորներ լցրին փողոցները, խուզարկելով քայլափոխում խուզարկւում էին անցորդ անցորդները: Այժմս աւելի մեղմ էին դէպի հայերը. հարցնում էին, *հա՛յ ես, թէ վրացի*, և հային շատ անգամ արձակում էին առանց խուզարկելու, իսկ վրացուն խուզարկում: Ամեն օր պատերին էին կպցնում երկու տեսակ շրջաբերականներ, մէկը ընդհ.-նահանգապետից—արգելում էր *նաֆթինքու* մէջ փաթթւել, զէնք կրել, կառքով արնթաց անցնել, միւսը յեղափոխ. կոմիտէներից—ապստամբել, զինւել և առաջին իսկ սուլոցին ասպարէզ գալ:

Երեկոները տանից դուրս գալ անկարելի էր. դեկտ. 20-ից մի քանի օրով կանգ առաւ և պաշտօնական Կաւկազ լրագիրը, որովհետև գատաստ. պալատի վճռով և ընդհ.-նահանգապետի հրամանով կանգ առան ռուսերէն և վրացերէն լեզուով հրատարակւող սոցիալ-դէմօկրատների օրգանները: Իսկ հայերէն Ցառաջ լրագրի տեղեկատուն պահանջւեց նրանցից չըհրատարակել և սրը կանգ առաւ:

Ռմբահարւեց *Նախալովկա* և *Դիդուբէ*, այստեղ էլ եղել են շատ աւերումներ, անթիւ վիրաւորներ և սպանւածներ: Քաղաքի մի քանի տներ, որոնց առաջ յարձակւել են ժանդարմի, ոստիկանի վրայ և սարճանակ արձակել, այդ տները թնդանօթով կործանել են և հրդեհել

Խմբագրատներ ու տպարաններ էլ փորձ են արել կործանելու և այրելու, սակայն անաջող: *Վօզրօժդ.* լրագրի խմբագրատունը են կրակ դցել, բայց ժամանակին հասել են և կրակը հանգցրել *Թիֆլ. Լիստոկ-ի* տպարանի դռները են փշրել և կամեցել նոյնպէս հրդեհել, բայց դարձեալ անաջող: Վերջապէս դեկտ. 22-ի աղէտի օրը կազակները թափւում են մեր խմբագրատան բակը և պնդում, իբրև թէ մեր կտուրից հրացան է արձակւած զինւորների վրայ, բարեբաղդաբար մեր հարեւանուհիները (ընդհ. նահանգապետ Մալամայի օգնական գեներալի բնակիչք) հաւատացնում է կազակներին, որ այստեղից չէ արձակւած հրացան ու հեռացնում են կազակները և պահպանւում է մեր խմբագրատունը զինւորների ձեռքից:

Գիշերները կազակները, թէ զինւորները մի շարք խանութներ են փշրել և թալանել մէջը եղած թանկագին ապրանքները:

Այժմս գեներալ Մալաման, փոխարքայի հիւանդութեան պատճառով, աւելի զբաղւած լինելով, Թիֆ. ընդհ.-նահանգապետութիւնը թողել է, որը ստանձնել է Հին-Նախիջեանի նախկին ընդհ.-նահանգապետ գեներալ Ալիխանովը:

Բացւել է այժմս պօստ-հեռագրատունը, սկսել է երկաթուղին երթեւեկել, բացւել են խանութները, գործադուլը վերջացել, բայց այդ բոլորը դեռ կիսատ, պռատ և խախուտ վիճակի մէջ է:

— —

Գաւառական սուրհանդակ

—

Կցկտուր տեղեկութիւնները, որ հասնում են գաւառից անմխիթար են. ամեն տեղ էլ ապահով չէ կեանքը: Թանգութիւն և շատ տեղ կատարեալ սով:

Գանձակում թաթարները կրկին փորձեր են արել արիւնհեղութիւն և կատարած տներ, բայց հայ կորիճները և զօրքը, մանաւանդ սապեօրները յետ են մղել խուժանին մեծ կորուստ պատճառելով նրան:

Բորչալուցիների հայերին հասցրած վնասները հաշւի են առնւում և իբրև թէ պէտք է տրւին հայերին բաւարարութիւն:

Բուլթայիսի նահանգը ոչ միայն ապստամբել է, այլ ասում են և հասարակապետութիւն էլ է յայտարարել: Այս պատճառով Թիֆլիսից զօրքը ընդ.-նահանգ. Ալիխանովի հետ ուղի է ընկնում այնտեղ:

Ռոստովում նորանոր արհաւիրքներ, կոտորածներ և ալան թալաններ են եղել: Գեներալ Շիրինկինն այդ կողմերն է եղել: Մինէրալնի ջրերը և երկաթուղին այժմս պահպանւում է կազակներով:

— —

Ռուսական սուրհանդակ

—

Դեկտեմբեր ամիսը նորից սրբազան ամիս դարձաւ ռուս յեղափոխականների համար: Այս ամսում Պետերբուրգից, Մոսկւայից սկսած մինչև Սիբիր, Անդրկասպեան, Անդրկովկասեան երկիրները, Լեհաստանը արեան տաւներով ողողեցին մարտիրոսները իրանց հայրենիքը: Մենք անկարող ենք նոյն իսկ թուցիկ արձանագրել այն բոլորը ինչ կատարւեց և կատարւում է այժմս Ռուսիայում. այսքանս միայն՝ ասենք, որ Թագաւոր Կայսրը իր նոր հրովարտակով վաւերացնում է իր փրկարար, Հոկտեմբերի, 17-ի հրովարտակը աւելի ընդարձակում Պետական խորհրդակցութեան սահմանները, տալով վերջին ռամկից մինչև իշխանը ազատ ընտրութեան քւէ:

Զըպէտք է մոռանալ, որ ընտրութեան այսքան ընդարձակ քւէ չի տալիս ոչ Անգլիան, ոչ Գերմանիան և ոչ իսկ հասարակապետական Ֆրանսիան: Շրջահայեաց լինենք, կանդ առնել տանք մարդկային արեան հեղեղները և իմաստութեամբ օգտւենք մեր ձեռք բերածից: Մեզ հայերիս համար հոկտ. 17-ի հրովարտակը եթէ գործադրւի, կբերէ խաղաղ առաջադիմութիւն և անդորրութիւն:

Դպրոցական

Մինիստրների խորհուրդը վճռել է ներկայ 906 թ. առաջին կիսամեակին չը բանալ բարձրագոյն ոչ մի դպրոց: Սակայն պրօֆեսօրների խորհուրդին թոյլատրւում է իրանց պատասխանատուութեամբ և անպատճառ մինիստրների խորհրդի հաճութիւնն առնելուց յետոյ, բանալ և որոշուած ժամանակից առաջ:

— Լուսաւորութեան մինիստրը մինչև օրէնսդրութեան մէջ մտցնելը, իբրև փորձ, որոշել է թոյլատրել բեալական դպրոցաւարտներին մտնել համալսարան:

— Համալսարանական նոր կանոնադրութիւն է մշակւում Պետերբուրգի համալսարանի պրօֆեսորներից կազմած յանձնաժողովը: Համալսարանի պրօֆեսոր ընտրւում է նոր համալսարանի խորհուրդը և ուղարկւում լուս. մինիստրին ՚ի հաստատութիւն, որը եթէ մի ամսւայ ընթացքում պատճառաբանած պատասխան չըտայ, համարւում է պրօֆեսորը հաստատւած:

Ոչնչացնւում է աստւածաբանութեան ամբիոնը և սրա փոխարէն ընդարձակւում է եկեղեցական պատմութեան ամբիոնը պատմ. փիլիսոփ. ֆակուլտետներում, մտցնելով փիլիսոփայութիւն և քրիստոնէական հաւատի պատմութիւն:

— —



ԲԱԼՖՈՒՐ

Գլադստոնին, Սալսբրուն այս յաջորդը, որ օրերս հրաժարեցրուեց անգ.-մինիստրութիւնից, անզոյն էր և Չէմբերլէնի գործիքը:

Խմբագրութիւնից

Ռուսիոյ վերածնութեան ծանր, երկարատև երկունքը շարունակւում է մեծ ցաւ, կսկիծ պատճառելով ամենքին: Սպասւում է երկրի անդրանիկը. իսկ անդրանիկը միշտ ծնունդ է առնում աւելի դժւարութեամբ:

Կարմիր 1905 թ. արեան հեղեղներով, մարդկային անհամար նահատակների և մարտիրոսների հետ իջաւ գերեզման. հնարաւորութիւն չը տալով մեզ մինչև անգամ յուղարկաւորութեանը երկու խօսք ասելու:

Այսօր թեւակոխելով Նոր՝ 1906 տարին, մենք աներկբայ ենք, որ չափաւորութեան սահմաններից դուրս չը գալով, հնարաւորութիւն կունենանք դիմաւորելու Ռուսիոյ առողջ և գւարթ ծնունդը, և կարողութիւն այդ նորածնին տալու այն ուղին ու ոգին, որ լայնատարած Ռուսիոյ բոլոր երկրներին և նրանց բազմացեղ, բազմալեզու ազգաբնակչութիւններին այդ նորածինը յաւերժ բերէ խաղաղութիւն և անդորրութիւն:

Կեցցէ սահմանադրական-ռամկավարական ազատ Ռուսիան իր ազատ ժողովրդներով:

—

Տարազի ներկայ №-ով սկսում ենք 1906 թւականը՝

Մեր նպատակը՝ օգտակար լինել մեր հայրենիքին եւ նրա զաւակներին:

Մեր ուղղութիւնը՝ սահմանադրական-ազգային-ռամկավարական:

Մեր միջոցները՝ Գիտութիւնը, Դաստիարակութիւնը, Գրականութիւնն ու Արւեստը:

Մեր ոյժը՝ Ճշմարտութիւնն ու արդարութիւնը:

Մեր բռնամիտ՝ Խաւարն ու բռնի ուժը, ինչ ձեւով եւ միջոցներով էլ արտայայտւելիս լինի:

Թիֆլիս. Միխայլեան փողոցը

—

Բանալով ներկայ 1906 թ. բաժանորդագրութիւնը, մենք հրաւիրում ենք մեր բոլոր ընթերցողներին բաժանորդագրւել Աղբիւրին և Տարազին: Այսօր մենք ժամանակ չունենք այս մասին երկար կանգ առնելու: Տպարանները բացւեցին ուրբաթ, դեկտեմբերի 30-ին առ. 11 ժ. իսկ մենք մի օրւայ մէջ պատրաստեցինք մի մեծադիր № հանդէս հանեցինք: Այս փաստը միայն ապացոյց է, թէ որքան ուժեղ է մեր գործի հիմքը: Աղբիւր-Տարազ 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.) Տարազ 6 ր. (արտասահման 10 ր.) Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.):

—

Աղբիւր-ը լոյս կը տեսնի օրերս: Իսկ անցեալ տարւայ պակաս №№-ի փոխարէն մեր բաժանորդները փոխանակ 10 ր. կարող են ուղարկել 8 ր. 50 կ., թէեւ մենք այնքան ենք յանցաւոր Աղբիւրի այդ №№-ը լոյս չըտեսնելու մէջ, որքան եւ մեր բաժանորդները:

— —

Այլ եւ այլք

Ներկայ տարին. Պարիզում ապրում է Թէբ ազգանունով մի կին, որն ամեն տարի հրատարակում է մի ժողովածու իր մարգարէութիւնների: Սա մարգարէացել էր 1904 թ. անգոյն: 1905 թ. արիւնաոտ: Իսկ ներկա 1906 թ. համար ասում է, որ լինելու է գիժ (խելագարկ): Քաղաքական կռիւը պիտի կենդրոնանայ Բելգիայում, որին որոշւած է մեծ դեր կատարել: Այնտեղ նշանաւոր փոփոխութիւններ կլինին: Սպիտակ ցեղը սոցիալական փոփոխութիւնների կենթարկւի: Մի իշխողի օրերը համրած են: Գերմանիային զարնան վտանգ է սպառնում: Իսկ Ֆրանսիայում ընդհակառակ իրերի դրութիւնը միայն արտաքուստ կերևան վատ: Ցեղաշրջման ժամանակ կոնանց ազդեցութիւնը մեծ է լինելու: Պատերազմ Դունայի վրայ աշնանը: Ընդհանրապէս այս տարին լինելու է զծբախտութիւնների տարի: Հիւսիսին սպառնում է նշանաւոր այլափոխումն: Ցանկատանում և Գերմանիայում վտանգ: Մեծ երկրաշարժ Հարաւային Ամերիկայում: Եւրոպային սպառնում է ֆինանսական անկումն, մանաւանդ Ֆրանսիային:

Գրաֆ Լամզդորֆ

Ռուսաց արտ. գործ. մինիստր, որը անգլ. դեսպան Բէկէնդորֆի միջոցաւ անգլօ-հնդկական հեռագրաթելով հաղորդեց երկրիս վրդովեցուցիչ տեղեկութիւններ Պետերբուրգից: Այդ հեռագիրը կպցրւած էր Թիֆլիսի փողոցներում պատերին և հերքում էր տարածւած լուրերը ու ասում թէ մայրաքաղաքում յեղափոխութիւնը հանգել է, խաղաղութիւնը սկսում է:

Թիֆլիս. Սալաքորնեա փողոցը

Սալաքոր զօրքը անվեհերութեան մի շարք ապացոյցներ տւաւ, մանաւանդ վերջին օրերս Գանձակում, պաշտպանելով հայերին կատաղի թաթարներից:

Մոսկւա. Նախարար Կրեմլի պալատները

Ցնցողբէրի ուշադրութիւնն այսօր Ռուսիայի վրայ է ուժած: Յեղափոխութիւնը Մոսկւայում մեծ հարւած հասցրաւ բիւրոկրատիային, տւաւ և անթիւ զոհեր ժողովրդից. Նահատակւեցին կենսունակ բիւր մարդիկ, կործանւեցին պետական և հասարակական շատ շէնքեր: Փակւեց Կրէմլի պալատները:

Արձանագրենք տ. Թէբի մարգարէութիւնները և պարզաբին սպասենք, որ տարին անցնէ ու ժամանակագիրն իր ասելիքն ասէ: Իսկ առայժմս խելքներս ժողովենք ու խելքով մաքառենք չարագուշակ նոր տարւայ հետ: Չէ՞ որ մարգարէուհին խելառեան տարի է գուշակում, իսկ նրանք, որոնք խելքները չեն կորցնիլ և հաստատ համոզմունքով իրանց չափած, կշռած շաւղով կընթանան, հաւատալով յաղթութեան, ի հարկէ չը պիտի և ոչ մի կասկած ունենան, թէ ազետալից տարին կարող պիտի լինի իրանց դժբաղդացնել: Հաւաքւենք ուրեմն ընտրելու մեր երկրի իմաստուններին, որպէսզի սրանք մեծ խորհուրդ կազմեն և խելքով հասցնեն մեզ աւետեաց երկիրը:

Խմբագիր-Հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

Նըրաշխարհեան կանանց «Զքնաղ» տպարան-գ. բոցլի: Արտադասիկ «Հերմէս» ընկ.

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ 10 ԿՈՊ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ր. (արտասահմանի 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահմանի 10 ր.) Աղբիւր-Տարազ, պրեմիաներով 10 ր. (արտասահմանի 18 ր.) Տարազ ամիսը 50 կ. առանձին №-ը երկու թերթից 30 կ., մի թերթից 20 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ վերջին երես 25 կ. մանրատառ (պըտիտ) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

Տարազ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չտպուելիքը (երեք թերթից պակաս) չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

Թիֆլիս, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10¼ ժ. մինչև 2¼-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ
Rédaction du Journal
TARAZ
Caucase Tiflis

Գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 2 Կիրակի, յունուար 15 Տասնեւեօթներորդ տարի 1906

Բացուած է ներկայ **1906** *թ. բաժանորդագրութիւնը*

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացմունքների թարգմանը:

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել:

ՏԱՐԱԶ

XXIV *մանկական պատկերազարդ ամսագիր* XXIV և XVII *պատկերազարդ շաբաթաթերթի* XVII

ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵՐԳ

Դաշնակեց Կոմիտաս վարդապետ **Խօսքեր Մ. Թաղիադեան**

Ծանր





Տէր Կեցո դու զ'Հայս,
Եւ արա զնոսա պայծառ
Կեցո զ'Հայս.
Զօրութիւնդ վերին
Հաճեսց ձօնել նոցին
Զի նովիմբ մարթասցին
Ապրել յաստիս:

Ի քո իջեալ տեղի
Ցաթոռն Հայրապետի
Մեր հաստատեա,
Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածզգեաց
Շնորհեա Պետին մեր հարց
Որ զմեզ հովուէ:

ՇԱՂԿԱՊ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ

Տիգրան Նազարեան՝ հիմնադիր Հրատարակչական Գրասենեակի (1880 թ. Շուշի), հիմնադիր և խմբագրապետ-հրատարակիչ Աղբիւր մանկական և մանկավարժական պատկերազարդ ամսագրիների, (1883 թ.) Տարազ (1890 թ.) Առողջապահական թերթ (1899 թ.) Իլլիւստրասիոն (1899 թ.) պատկերազարդ հանդէսների, Դասփարակ և Գեփեցիկ (1905 թ.) հրատարակ., միակ հայ անդամ Միջազգային Մամուլի դաշնակցութեան, անդրանիկ հիմնադիր՝ պատկերազարդ պարբերական մամուլի Կովկասում, (1883 թ.), գաւառական հայ պատրանական միայնուն թերթի (1868 թ. Շուշի), Կանանց Ձեռաց դպրոց գրաշարանոցի (1905 թ.) և երբեմն Կովկասեան ընդհանուր՝ հայ, ռուս, վրաց և թրքաց պաշտօնական մամուլի խմբագիր-հրատարակիչներից այժմս աւագագոյնը հրաւիրում է հայ պարբերական մամուլի բոլոր խմբագրապետներին, հրատարակիչներին, բոլոր աշխատակիցներով եւ թղթակիցներով մասնակցել հիմնելու Շաղկապ Կովկասահայ Մամուլի:

— —

Նպատակը՝ Հայ հրապարակախօսների, հայ մամուլի մէջ աշխատող գրականագէտներից և գեղագէտներից, առանց խտրութեան ուղղութիւնների եւ քաղաքական դաւանանքների, կազմել մի ընտանիք, ներշնչուած քաղաքակրթ ազգերին յատուկ եղբայրութ.:

Շաղկապը նպատակ չունի զբաղուելու քաղաքական հարցերով և չէ հետաքրքրւում ու հետաւօտ չէ լինում թէ իր անդամն ինչ կուսակցութեան է պատկանում, քաղաքական ինչ համոզմունք է դաւանում: Այլ խստիւ պահանջում է իր անդամից գրական վարք ու բարքի մաքրութիւն: Պահանջում է, որ իր անդամը ճշմարտութիւնը երբէք չարատաւորի իր գրչով, նոյն իսկ ամենասուրբ իղձեր ի կատար ածելու նպատակաւ:

Շաղկապը օգնութեան է հասնում իր անդամին և նեցուկ լինում նրան բարոյապէս և նիւթապէս: Առաջ է մղում մասսայ գրական ոյժերը:

Միջոցներ՝ Տարեկան և միանւագ անդամավճար: Խրախուսողների աջակցութիւն: Գրական-գեղարուեստական հանդէսներից, դասազան հրատարակութիւններից գոյացած գումարներ:

Շաղկապը մօտժամանակ հիմնում է և Գրական-Գեղարուեստական Ակումբ, զրադարան-ընթերցարանով իր անդամների և նրանց ընտանիքների համար:

Ակումբում արգիլւում է թղթախաղը և ալկոհոլային խմիչքներ բանեցնելը:

Կովկասահայ Մամուլի Շաղկապը կը կազմէ Միջազգային Մամուլի դաշնակցութեան մասնիկը:

— —

Կովկասահայ մամուլի ներկայացուցիչները, պարբերական հայ մամուլի յատուկ թղթակիցներն ու գրականագէտ աշխատակիցները, որոնք ընդունում են վերոյիշեալ սկզբունքները անփոփոխելի եւ իսկական նպատակ, հրաւիրւում են գրաւոր յայտնել իրանց մասնակցութիւնը և վճարել Երեւանեան բուլլի ներկայ 1906 թ. անդամավճարի հաշւից, մինչև կիրակի յունուարի 22-ը կէսօրւայ ժամը 12-ը և երկուշաբթի, յունուարի 23-ին կէսօրից յետոյ ժամը 5-ին շնորհ բերել Աղբիւր-Տարազի խմբագրատունը ընտրելու ժամանակաւոր վարչութիւն և խմբագրական մասնաժողով մանրամասն կանոնադրութիւն մշակելու համար:

— —

Յունուարի մինչև 22-ը Թիֆլիսում անդամ գրւողները միայն կը համարւին հիմնադիր Կովկասեան Մամուլի Շաղկապին և սրանց կուեալցնեն գաւառական այն հայ գրականագէտներն ու պարբերական հայ մամուլի յատուկ (գրագէտ) թղթակիցները, որոնք մինչև յունուարի 31-ը Կովկասի, մարտի 1-ը Ռուսաստանի և արտասահմանի համար, կը հաղորդեն գրաւոր իրանց ցանկութիւնը հիմնադիր անդամ լինելու Շաղկապ Կովկասահայ Մամուլի և կանխավճար 3 ր. ուղարկած կլինեն:

— —

Երկուշաբթի, յունուարի 23-ին, կէսօրից յետոյ ժամը 5-ին առաջին ընդհ. ժողովն օրինաւոր կը համարւի, ինչ թւով էլ ներկայ լինեն նրա անդամները:

— —

Ոչ ոքի առանձին հրաւէր եւ առաջարկ չի ուղարկւի:

ԲԱՑԱՐՁԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Մուրազ անուշեմ,
Աշխատել ոչ կարեմ, XXV

—

Աւելի երջանիկ են նրանք, որոնք գոնէ ոչ աշխատել են կարողանում և ոչ մուրալ: Եւ այն ինչ անեն նրանք, որոնք օրն 'ի բուն աշխատում են և աշխատում են տասնեակ տարիներով և այն ոչ անհատների համար, բայց դարձեալ միշտ կիսամերկ են, կիսակուշտ, ընտանիքները խոնաւ և սառը, ինչպէս գերեզման:

Այսօր երբ բանւորական հարցը հրապարակ է եկել իր բոլոր ոյժով, մենք անժամանակ չենք գտնում և հայ մտաւոր բանւորի ողբալի վիճակը հրապարակի վրայ դնելու:

Ժամանակն է որ հայը, հասարակութեան որ խաւին էլ նա պատկանելիս լինի, ամենայն ակնածութեամբ բացէ, հայ մտաւոր բանւորների խղճուկ օթեւանները, քննէ ու գնէ նրանց վիճակը:

Սով, համաճարակ, հրդեհ լինելուց հայն անտարբեր է իր անարգ գրչներով օգնութեան հասնելու իր նմաններին: Սա մասնաժողովներ է ստեղծում, յանձնաժողովներ կազմում, դրամ ժողովում ֆիզիկապէս թշուառութեան մէջ ընկածներին ամոքելու, իսկ մտաւոր բանւորների բրոնիկական թշուառութիւնը նա գեռ նկատի չէ առնում:

Շատակէլ պէտք է, որ փորձուըը չը տարածւի, այս թէ ոչ նրա մեզ պատածուած կսկիծներն ու կորուստները անհամեմատ խոր և ծանր կը լինեն, քան Բագւայ հրեղէն շտարւածների այրելը, անմռան Շուշու կործանւելը, Երեւանի, Նախիջեւանի, Գանձակի կոտորածը:

Անտանելի է հայ մտաւոր բանւորը. նա օրական ութ ժամի փոխարէն բանում է տասնութ ժամ, սակայն նա դարձեալ քաղցած է, միշտ կիսամերկ է...

Առայժմ հայեր, մտաւոր բանւորն օրական քանի ժամ և ինչպէս բանէ նա, որ իր նեղ և խոնաւ խուցը կարողանայ ձմեռը գէթ այնքան տաքացնել, որ ձեռները չը սառչին, որ գէթ օրումէջ կուշտ ճաշ ունենայ:

— —

Հայկազեան Սահմանադրական Ժողովրդական Կուսակցութիւն

—

Հոկտեմբերի 17-ին տրւած Կայսեր հրովարտակը նոր քաղաքական կեանքի վերակոչեց ամբողջ Ռուսաստանի բազմացեղ, բազմալեզու բնակչութիւնը: Հայերը թէեւ Ռուսիոյ բնակիչների հազիւ մի տոկոսն են կազմում, ունեն այնուամենայնիւ պատմական քաղաքակրթութիւն և այսօր էլ ընթանում են նոյն կուլտուրական շաւղով և մանաւանդ Կովկասի և Անդրկովկասի բնիկ ցեղերի կարգում՝ վրացիների հետ այսօրւայ միակ կուլտուրականներն են կազմում: 'Ի նկատի պէտք է ունենալ և այն, որ Ռուսիոյ բնակչութեան 125 միլիոնից ամբողջ 17 միլիոնը ոչ կուլտուրական ցեղեր են:

Հոկտ. 17-ից յետոյ բոլոր կուլտուրական ցեղերը համախմբուեցին, միացան և որոշեցին իրենց ազգային քաղաքական ուղին. Հայերս էլ անմասն չըպէտք է մնանք Ռուսիոյ քաղաքական կեանքից և նոյնպէս համախմբւենք մեր զուտ ազգային կարիքների շուրջը:

Սակայն հարց է ծագում, թէ Ռուսաստանում արդէն գոյութիւն ստացած և գեռ նորաբողբոջ ք. կուսակցութիւններից որն պէտք է ընտրենք: Հարկաւ այն, որը աւելի յարմարն է մեր շահերին և աւելի համապատասխան է մեր ազգային բնաւորութեանը և հոգեբանութեանը:

Հայ ազգը այժմեան իր կենցաղով, իր համամարդկային իդէալների տեսակէտից, չէ բաժանւում դասակարգերի. նա ոչ միայն չունի դասակարգային ազնւականութիւն, այլ և իր միւս դասակարգութեանց մէջ նա սահման չէ դնում, ընդունելով բոլորին իբրև ժողովուրդ—դեմօս:

Ազգային ժառանգութիւններից մենք պահել ենք մի քանիսը միայն, և գլխաւորապէս Եկեղեցին և Ուսումնարանը: Ո՞վ է եկեղեցին կառավարում.—ժողովուրդը ո՞վ է ուսումնարանը կառավարում.—դարձեալ ժողովուրդը: Ո՞վ է ընտրում ամենայն Հայոց Կաթողիկոսին.—ժողովուրդը:

Ընտրողական իրաւունքը պատկանում է անխտիր բոլոր Հայ ժողովրդին և այն առանց որ և է ցեղի, պայմանաւորւելով միայն սեռով և հասակով:

Եւ եթէ այս կարգի մտածողութեամբ հետախուզելու լինենք. նոյնպէս և եթէ 'ի նկատի առնենք մեր աշխարհագրական դրութիւնը իբրև Ռուսաստանի ծայրի ժողովուրդ, և խառն բնակչութեամբ Կովկասեան այլ ցեղերի հետ,—այն ժամանակ արմատականութիւնը մեզ կը բերի քաղաքականապէս արդէն որոշւած կուսակցութեանց ադամամիտների գուռը:

Զրկամենալով ծանրանալ այն հարցի վրայ և քննադատութեան ենթարկել ծայրագոյն ադամամիտների բանակը, մենք այսքանն ասենք, որ ազգի ներկայ դրութիւնը մեզ թոյլ չի տալ և ոչ տալ չահաւետ է մեզ համար—ընկել նոյն գիրկը: Ո՛չ, այլ մենք լինելով հանգիստ ադամամիտ, իրական կեանքի մէջ պէտք է չափաւորենք մեր քաղաքական ձգտումները, որոնք կարող են կործանել անգունդ բանալ մեր ազգի, այդ մեկուսացած, անզուգական՝ թէ բառ ծագման և թէ բառ եկեղեցւոյ, ցեղի համար:

Եւ ընդհակառակը, եթէ մենք վճռէինք հետևել Ռուսիոյ խաղաղասէր պահպանողական կուսակցութեանց, մենք դաւաճանած կլինէինք մեր ազգի ցեղական բնաւորութեանը և համայնական հոգեբանութեանը:

Ահա թէ ինչու մենք ընտրում ենք միջին ճանապարհ և Ռուսիոյ դասադան կուսակցութեանց շարքում, մենք յարում ենք կոն ստիտուցիոնօ-դեմոկրատական կուսակցութեանը, ընդունելով նրանց այն ծրագիրը, որ մշակւած է Մոսկւայում, 1905 թ. հոկտեմբերին զեմսկոյ—քաղաքային համաժողովում, յաւելումներով և յապաւումներով՝ համապատասխան մեր ազգային կարիքներին:

Բժիշկ Բ. Նաւասարդեան

—

Խաղաղութիւնը անհրաժեշտ է

—

Մի տարի է, որ մեր շէնաւ հայրենիքը դժոխք է դարձել. արիւնը հոսում է ջրի պէս, գիւղացու խաղաղ աշխատանքի ժամանակ հնչող երգերի փոխանակ հրդեհների ծուխը ու վիրաւորների և սոված ու անտուն հայի առաւօտից հառաչանքները են ամբողջ-

նում երկիրը: Մեր ջրերը ըթացել են, մեր օդը կարծրացել է և անզգայ ենք դառել մեր շուրջը կատարւող արհաւիրքը ըմբռնելու համար, բայց աւելի ծանր է և՝ վտանգաւոր մեր անմտութիւնը, որի շնորհիւ չենք կարողանում գուշակել և գալիք օրերի թշւառութիւնը: Որքան էլ խոցւած լինի մեր սիրտը և վրէժխնդրութեան զգացումով լցւած, որքան էլ արդար լինի մեր ցասումը, սակայն մենք պիտի առաջինը լինենք երկրի խաղաղութեան մասին հոգացողը, որովհետև մենք ենք մինչև այսօր տուժողը և աւելին պիտի տուժենք:

Մեզ համար պիտի ակներև լինի, որ կովկասեան ադմինիստրացիան յանցաւոր դեր է կատարում կովկասեան ողբերգութեան մէջ: Արա ապացոյցները հազարաւոր են: Առաջինը նա է՝ որ հարիւր տարի առաջ երբ, Կովկասի կէսը դեռ նւաճւած չէր, մեր երկրի նոյն թուրք տարրը այսպիսի յանցգնութեան երբէք չէր հասնում, երբէք ամբողջական կոտորածներ, հրդեհներ և աւերումներ չէր սարքում:

Երկրորդ ապացոյցը նա է՝ որ մինչև այսօր ոչ մի աւազակապետ և կոտորածների հեղինակ չի պատժւել, չի կախւել, իսկ ամէն մի յեղափոխականի ամենահեռաւոր և ամենաթոյլ փորձը սոսկալի խստութեամբ է հալածւում: Ուրեմն կառավարութիւնը ոյժ և հնարաւորութիւն ունի խստութիւն բանեցնելու: Խօսք չկայ ի հարկէ, որ կառավարութեան գործողութեան այս եղանակը կարճամիտ է, որովհետև ոչ միայն քայքայում է իր հպատակների տնտեսական կեանքը և դարձնում է հարկեր վճարելու անընդունակ, այլ և անիշխանութիւնը ամենից զօրեղ կերպով է նպաստում ժողովրդին յեղափոխական գաղափարներ ներշնչելու տրամադրութիւն:

Ներսի անկարգութիւններն էին, որ զօրացրին եղան քրիստոնէութեան տարածման և Պօղոս առաքեալի քարոզչութեան: Բայց այս հանգամանքը ոչ մի մխիթարութիւն չէ կարող լինել մեզ համար: Ինչ օգուտ մեզ, որ կառավարութիւնը չի կամենում հասկանալ, որ իր գործողութեան ներկայ եղանակով ամենից մեծ չարիքը ինքն իրեն է հասցնում: Մենք պիտի լուրջ մտածենք մեր անելիքի մասին: Մեր գլխաւոր անելիքը այն պիտի լինի, որ մենք ինքնապաշտպանութեան սահմանից չըպիտի դուրս գնանք, իսկ ինքնապաշտպանութեան գործը պիտի դնենք օրինաւոր հիմքերի և օրէնքի հիման վրայ, պիտի պահանջենք բացարձակ ինքնապաշտպանութեան կազմակերպութիւն: Երկրորդ՝ մենք ոչ մի անմեղ արիւն չըպիտի թափենք և միանգամայն անհասկանալի է, որ վրէժխնդրութեան և արդարացի պատժի չէ ենթարկել մինչև այսօր և ոչ մի խոշորական մեղաւոր և հեղինակ կովկասեան կոտորածների, իսկ առանձին առանձին սպանութիւններ անմեղ զոհերի տեղի են ունենում: Երրորդ՝ պէտք է մի առանձին ուսումնասիրող յանձնաժողով հիմնել և հայութեան հասցրած կոտորածների ու նիւթական վնասների մի հիմնաւոր տեղեկագիր կազմել և ներկայացնել ոչ միայն կառավարութեան այլ և հրապարակել Եւրոպական թերթերում, որ աշխարհը իմանայ, թէ կովկասեան վարչութիւնը մի ամբողջ տարի որպիսի յանցաւոր թոյլութեամբ սկանատես է իր հպատակների թշւառութեանը: Ոչոքի չի կարելի համոզել, որ ռուս կառավարութիւնը ոյժ չունի մի ամսւայ ընթացքում վերջ դնելու ներկայ դրութեան:

Հարիւր տարի առաջ վրացի և հայ զօրապետները և նահանգապետները սակայն կարողանում էին երկրի խաղաղ բնակչութեան կեանքն ու գոյքը պաշտպանել:

Բայց քանի որ կառավարութիւնը դեռ խելքի չի գալիս, մենք ամէն ջանք պիտի գործ դնենք, որ թուրքերի ոչ յանցաւոր տարրերը միանան երկրի խաղաղացման գործին: Ոչ բէգերն ու խաները, ոչ յանցաւոր թուրք ինտէլլիգէնտները և կեղծաւոր հոգևորականութիւնը՝ այլ խաղաղ թուրք վաճառականները և գիւղական աղքատ բնակչութեան ահագին մասը, որ անկասկած նոյնպէս տուժում է ներկայ դրութիւնից: Ահա սրանց պիտի մօտենալ և համերաշխ գործունէութեան կոչել: Գիտեմ, որ բազմաթիւ ապերախտութիւններ կլինեն իմ դէմ, բայց ես գրում եմ այն, ինչոր թելադրում է ինձ իմ խելքն ու խիղճը և խորին կերպով համոզւած եմ, որ մենք այլապէս չենք կարող վարւել և չըպիտի վարւենք, որովհետև մենք այլապէս վարւելու հնարաւորութիւն չունենք, մենք դարերի ընթացքում այլապէս չենք կարողացել ապրել և մենք շրջապատւած ենք մուսուլմանական ովկիանոսով միայն լողալով կարող ենք ապրել:

Գարեգին Ենգիբարեան

Ս. Ներսէս Շնորհալու պատկերը

Վայոց ձորի (Դարալագեազի) հարաւային բարձունքին կայ Գուռաղիս հայ գիւղը, մօտ հարիւր տուն, գաղթած Խոյից. լաւ օդ, մեծ հովիտն դէպի հարաւ, լեռնի արօտներ, բերրի հող, ժողովուրդն է հողագործ. սակաւ տաւար, ոչխար, մեղու: Բանջարանոցներ չըկան և ոչ ծառ կամ անտառ, տները կաւաշէն. բնակիչները համարեա աղքատ, դպրոց չըկայ, եկեղեցին, ս. Նիկողայոս, 250 տարւայ, ամուր, քառասիւն թաղակապ:

Այս գիւղի մի տան մէջ, առանձին պատիւ ստանալով պահւում է մի թղթեայ, գրչագիր և բոլորագիր Աւետարան, որ տարին մի անգամ գիւղում թափօր են հանում և ուխտաւորք միշտ լինում են: Սուրբ գիրքը փաթաթւած է բազմաթիւ թաշկինակներով:

Այդ Աւետարանի հետ փաթեթի մէջ կայ և մի բարակ թղթի գլանակ մօտ 20 արշին երկարութեամբ, երկու երեսն էլ գրւած շատ գեղեցիկ, մաքուր, պարզ, մեծ-մեծ նոտրագրով զանազան աղօթքներ և պատմութիւններ, մի փոքրիկ հատոր է այդ միապաղաղ թուղթը: Լայնութիւնը 2 վերշոկ: Աղօթքների շարքում կայ և Ս. Ներսէս Շնորհալու հռչակաւոր «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, որ թարգմանւած և տպւած է 37 լեզուներով: Այդ աղօթքի մէջ զետեղւած է և ս. Ներսէս Շնորհալու շատ տպաւորիչ, գեղեցիկ ճաշակով և մաքուր ու հմուտ նկարած պատկերը—կիսանդրին. դէմքն է հրաշալի, ազնւական, կրթւած, նման հանճարեղ մարդու տիպի: Կերպարանքը դուրս է բերած սանացի, արքունի հագուստ, գլխարկ, միայն խաչազարդ եմիփորոնով: Եթէ այդ պատկերը չէ ներկայացնում բնականը, բայց շատ համապատասխանում է մեր երևակայածին և դրան բնականութիւն է տալիս: Ուստի հրաւիրում ենք ձեռնհաս մարդկանց ուշադրութիւնը մի կերպ կորզել այդ պատկերը այն կորուստի խաւար անկիւնից և լոյս ընծայել, դուցէ դրանով մենք ունենանք և մի նշանաւոր հայ գրողի մեր երևակայածին յարմար պատկերի յաջող ստւերագիծը, ինչպէս է Վարդան զօրավարինը, որ նոյնպէս ձեռագիրներից է առնւած: Գուռաղիսի ս. Ներսէս Շնորհալու պատկերը դիտողը հիացմամբ անշուշտ պիտի բացականչէ, արդարև այս է Շնորհալու պատկերը կամ այսպէս միայն կարող է լինել, և առաջին ակնարկից զգում էք, որ նոր բան տեսաք խորին հնութիւնից և պատում է ձեզ մի ջերմին յուզմունք:

Ն. Վ. Տէր-Աւետիսեան

Երկաթուղի

Առաջին անգամ երկաթուղին Անդրկովկասում պատռեց Վրաստանի կուրծքը անցնելով նախորդ դարու 70-ական թւականին Թիֆլիսից-Փոթի. այդ անջրպետ գրեթէ բոլոր կայարանները վրացական անուններ ունեն:

Երկրորդ անգամ նոյն դարու 80-ական թւականներին, գրեթէ տասն տարուց յետոյ, երկաթուղին չաղէլով պայտա բացառապէս թրքաբնակ ընդարձակ վայրերով Թիֆլիսից մինչև Բաքու. առաջին քաղաքից անմիջապէս սկսւումն նոյնպէս գրեթէ բոլոր կայարանների անունները թուրքական—Աղ—Թակլա և այլն: Վերջապէս երրորդ շրջանում, համարեա քսան տարուց յետոյ, նոյն դարու վերջին, երկաթուղին փառաւորապէս մուտք գործեց Հայաստան—հայաբնակ վայրեր, մինչև սիրտը հայ աշխարհի՝ Արարատեան դաշտը. բնականաբար երկաթուղու այս երրորդ նշանաւոր գծի վրայ առաջին անգամ հանդիպում ենք կայարանների հայկական անուններ. Սանահին, Զամուռ, Անի, Արաքս .. Անդրկովկասում երկաթուղիներ չինելիս նախապատւութիւն դրւում էր նրա քաղաքական նշանակութեան. բուն արդիւնաբերական մտիկով չարժանացրել չինւած երկաթուղիներ քիչ են և կարճ ու կան միայն Վրաստանում, Բորժոմ—հանքային ջրի համար, Կօբուլեթի, Չիաթուրի՝ մարգանցի հանքի համար: Կայ և փոքրիկ երկաթուղի պղնձահանքի ընկերութեան պատկանող Գետաբէկում: Սակայն աղաղակող պահանջներ կան Անդրկովկասի արդիւնաբերական վերածնութեան համար երկաթուղու կարևոր ճիւղեր տանել դէպի բարեբեր Ուտեաց աշխարհը և դէպի Արցախ ուր բնակւում է մի ժիր, սուր, ձեռներեցող, խիստ ընդունակ ժողովուրդ, սակայն կտրւած լուսաւոր աշխարհից դարնանգայր, անանցանելի, անկանոն գետերով, ասպակաբարոյ խուժաններով..Վերջին տարւայ սարսափները պարզ ցոյց տւին թէ որչափ կարևոր է Եւլախից Շուշի երկաթուղու գիծը և թէ որչափ նա ուշացել է...

Անդրկովկասի բնոյթը այնպէս է, որ նրա բոլոր երկաթուղիները հաւասար կերպով և քաղաքական և արդիւնաբերական նշանակութիւն ունեն: Յուսանք, որ դառն փորձերը և նոր դարագլուխը կազմող յանդարձակ, ազատական հոսանքները կփութացնեն դէպի Շուշի, Շամախի և Նուխի— նախկին երեք թրքական խանութիւնները՝ ծրագրւած երկաթուղու գծերը, որոնց հետ կապւած են բազմակարօտ ժողովրդի այնքան փայլուն տենչանքներ և շողշողուն յոյսեր: Այդ ժողովրդի առաջաւորները սեպուհ պարտք ունեն ամէն ճիգ թափելու փութով փրկարար գծերը և վաղվաղուն իղձերը ի կատար ածելու:

—

Մեր թղթակիցները

ՇՈՒՇԻ 9 յունւարի

Սպասող Արցախ

Շուշւայ պատմական հրդեհին զոհ գնաց և Մահտեսի-Ցակոբեանի* յայտնի տպարանը, որ շատ երկար տարիներ գոյութիւն ունէր, արդապա մեքենայով, վիմագրով, կազմարանով և գրավաճառանոցով: Շուշւում առաջին անգամ տպարան հաստատել են Դիթրիխ և Զարեմբա բողոքական քարոզիչները անցեալ XIX դարու սկզբին. այդ տպարանն անցաւ հոգևոր իշխանութեան ձեռքը, որ բռնական փոխելուց յետոյ՝ այժմ փակ է: Ներկայումս նոր սկսել է բանել Բագրատ Վարժապետի տպարանը, որ լաւ կլինէր տեղական մի փոքրիկ թերթ հրատարակէր:

Թէ Մահտեսի-Ցակոբեանի և թէ թեմական տպարանից լոյս են տեսել բազմաթիւ գրքեր, շատերը հասարակ և անշահ: Այժմ Արցախում թագաւորող աղէտները թուլացնելու համար առաջին պայմանն է Եւլախից Շուշի վաղուց ծրագրւած երկաթուղու կառուցումը աճապարեցնել: Ներկայ չարքաշութիւնների մեծ մասը հաղորդակցութեան միջոցների դժւարութիւնն է և խիստ վտանգաւորութիւնը: Ուստի Արցախի բարեկամները ամէն ջանք և ազդեցութիւն պիտի գործ դնեն այդ ուղին գլուխ բերելու, որ այնքան բարիք կարող է հասցնել և ծաղկեցնել այս փարթամ նահանգը, բարբարոս խուժանի աւերչութեան ասպարէզ դարձած:

Արդէն յայտնի քրոնիկական ցաւի պէս մի բան է դառել Շուշւայ առաջնորդների անյաջող ընտրութիւնը, թէպէտ անիրաւացի կերպով այդ բանում մեղադրում են Շուշւայ ժողովրդին, երբ նա անպարտ է: Պարսկական առածն ասում է. «Գրիչը վատ է, թանաքը վատ է, թուղթը վատ է, բայց ինչ մեղաւոր են այդ երեք առարկաները, երբ ձեռքը (խասսը) վատ է» .. Երկիրը, ժողովուրդը մեղաւոր չեն, երբ առաջնորդը վատ է: Այդ բանին դարման կարելի էր անել, եթէ ցենզ հաստատւէր թեմական եպիսկոպոսների համար, այն է, որնրանք լինէին անպատճառ բարձրագոյն ուսման տէր, որով մեծ բարիք հասած կլինէր ժողովրդին, երբ նա ազատւէր ազէտների կործանիչ ղեկավարութիւնից:

Արցախի գեղատեսիլ Գէնդեան վանքի վանահայր քահանան փոխադրել է Մաշմէտա մօտակայ գիւղը թուրքերի երկիւղից, իսկ վանքի կայքը թողել է ծմակում, ինչպէս անում էին հին ժամանակներում: Այսպիսով այս թեմի երեք չէն վանքերն խաթառ ամայի են. Գանձասար, Ամարաս, Դադիվանք: Դրանցից շատ դժւար է Ամարասի վիճակը, որ բոլորովին թրքական շրջանումն է, քանդում են շէնքերը, պարիսպները, կտրում են անխնայ և անխիղճ ընդարձակածաւալ այգիները: Մեծ վտանգ և երկիւղ կայ, որ սուրբ նշխարները փչացնեն. աւաղ, այս մասին ոչ ոք հոգացող և մտածող չկայ:

Ց.

—

*Մահտեսի-Ցակոբեան հինգ եղբայրները կորցնելով իրանց բոլոր հարստութիւնը Շուշում, ընտանիքով եկել էին Թիֆլիս ժամանակաւորապէս ապաստարան գտնելու: Սակայն սև բաղդը այստեղ էլ սրանց հանգիստ չը տւաւ: Դեկտեմբ. 23-ին Սուլեքնաւա փողոցի վրայ Ցարբնայի տունը, որ թնդանոթով այրեց կառավարութիւնը (այստեղից էլ, իբրև հրացան էր ցցւած), բնակւած էին վարձել Մահտեսի-Ցակոբեան եղբայրները, ընտանիքով 12 հոգի և այստեղ էլ այրեց սրանց, մի կերպ ձեռք բերած, կահ կարասիքն ու տնային անհրաժեշտ պարագաները, անկողին, հագուստ և հացի կտորներ կարողացան միայն իրանց կեանքն ազատել:



«ԼՈՒՍՆԵԱՅ ՍՈՆԱՏ»

(Միջնադէպ Բեթհովէնի կեանքից)

—

Բեթհովէնը շատ էր սիրում ամառ ժամանակ մենակ զբօսնել բնութեան ծոցում: Այդ զբօսանքների ժամանակ նա ամբողջովին մոռացութեան է տալիս իրան շրջապատող արտաքին աշխարհը, որը, կարծես, նրա համար դադարում էր գոյութիւն ունենալուց: Ահա այդ ժամանակ նա ստեղծագործում էր իր երաժշտական սքանչելի երկերը:

Մի անգամ, երեկոյեան, Բոննի շրջակայքում, Հանոսի գիւղանկար ափերից ոչ հեռու, նա մենակ զբօսնում էր: Գըլխարկը ձեռքին բռնած՝ հանդարտ գնում էր նա՝ խորասուզւած մտածմունքի մէջ: Յանկարծ նա դաշնամուրի ձայներ լսեց մի տեղից: Նա շարունակեց գնալ ձայների ուղղութեամբ և հասաւ մի փոքրիկ տան առաջ: Դաշնամուրի նուագից յափշտակւած՝ նա կանգ առաւ և սկսեց լսել: Մէկի վարպետ ձեռքերը նուագում էին նրա ամենադժւար գործերից մէկը: Ինչպէս մի-մի ադամանդ, մաքուր, ներդաշնակ ձայները հոսում էին նուագողի վարպետ մատների տակից: Բեթհովէնը ինքն էլ չը գիտէր, ինչ է կատարւում իր հետ:

Իր երկերից և ոչ մէկը երբէք նա չէր լսել՝ այդպիսի ճշտութեամբ և զգացմունքով նուագած: Խոնարհւելով մի անդիմադրելի ոյժի առաջ՝ ներս մտաւ նա այդ փոքրիկ տունը և նուագի ձայներով առաջնորդւելով՝ բարձրացաւ սանդուխքով և դուռը բացաւ: Դաշնամուրի առաջ նստած էր մի մատաղահաս օրիորդ:

— Այդ դո՞ւ ես, Թանկագին հայրիկ, —հարցրեց աղջիկը՝ չընդհատելով նուագը. ապա վերջացնելով պիէսը՝ վերկացաւ տեղից և ասաց.—«Մ'օտ արի՛, որ քեզ գրկեմ»:

Բեթհովէնը մօտեցաւ գեղահաս աղջկանը և ապշած կանգ առաւ: Տեսքով նա կլինէր մօտ 16 տարեկան. նա զարմանալի գեղեցիկ էր և թւում էր, թէ այն պայծառ սեփրէներից մէկն է, որոնք այնքա՜ն նման են հրեշտակներին: Մետաքսեայ ոսկեշող խոպոպները եզերում էին նրա՝ ալէբաստրի նման սպիտակ ճակատը, իսկ նրա գեղանի գլուխը զարդարում էր ոսկեփայլ ծամերից բաղկացած՝ չքեղ թագը, որ նրա համար չափազանց ծանր էր: Սակայն Բեթհովէնին աւելի ապշեցրին այդ գեղեցիկ դէմքի վրայի նշանն, սև արտևանունքներով պատւած աչքերը, որոնք զուրկ էին փայլից և արտայայտութիւնից:

Նա այլ ևս չէր կարող կասկածել. աղջիկը կոյր էր: Կարեկցութեան զգացմունքը լցրեց մեծ նուագաստեղծի սիրտը, և նրա բերանից դուրս թռաւ զարմացքի բացականչութիւն:

— Դուք օտա՞ր էք, —հարցրեց աղջիկը երկիւղով: —Դուք հայրս չէք:

— Հանդարտւեցէք, իմ մանուկ, —ասաց Բեթհովէնը: —Իսկապէս ես իրաւունք չունէի մտնելու ձեր տունը, սակայն գրաււելով ձեր սքանչելի նուագով՝ ես եկայ այստեղ, ինչպէս բարեկամ, որ շնորհակալութիւն յայտնեմ ձեզ՝ իմ երկը այդպէս գեղեցիկ կերպով նուագելու համար:

— Ի՞նչպէս, —բացականչեց նորատի աղջիկը, —դուք Բեթհովէննն էք: Օ՜, ես միայն հիմայ եմ զգում իմ դժբաղդութեան ամբողջ ծանրութիւնը, որովհետև չեմ կարողանում տեսնել այն մարդուն, որին իմ սիրտը ամենքից և ամեն բանից շատ է սիրում աշխարհքում: Ահա երկու տարի է, որ ես զրկւել եմ տեսողութիւնից, և այդ ժամանակից իմ միակ մխիթարութիւնը երաժշտութիւնն է. մանաւանդ ձեր հեղինակութիւնները ինձ մոռացնել են տալիս իմ տխուր կեանքը և յափշտակում, տանում են ինձ երկրային վշտից դէպի երջանկութիւն: Առանց երաժշտութեան՝ ես վաղուց մեռած կը լինէի յուսահատութիւնից...

— Խե՛ղճ մանուկ, —ասաց Բեթհովէնը: —Դուք չէք կարողանում ինձ տեսնել, բայց դրա փոխարէն կը լսէք ինձ:

Ասաց ու նստեց նա դաշնամուրի առաջ. նա խորապէս յուզւել էր, և արցունքները մէկը միւսի ետևից գլորւում էին նրա այտերով: Վշտի բուռն զգացմունքը, որ համակել էր Բեթհովէնին՝ անբաղդ մատաղահաս աղջկան տեսնելուց յետոյ, արտայայտւեց ձայների միջոցով, և նրա մատները գործիքից դուրս քաշեցին այն զգացմունքով լի, սրտաշարժ տողերը, որը Բեթհովէնի հանճարեղ երկերի մէջ յայտնի է «Լուսնեայ սոնատ» վերնագրով:*)

Զապել Տ.-Գրիգորեանց

Դաշնամուրի առաջ նստած էր մի մատաղահաս օրիորդ

*) Բեթհովէնը յօրինել է 9 սիմֆօնի, 11 նախերգանք (Ուվերտիւր) բազմաթիւ սօնատներ, Ֆիդելիօ խաղագրով օպերը, բոլորը 150 հեղինակութիւն:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԼԵԳԷՆԴ

—

Հի՞ն է նա՛, է նոր այս աւանդութիւն...

Քանի դեռ չկար արեւն երկնքի,
Լուսաւոր ու լոյսը դեռ չեղած բնաւ,
Երբ դեռ աստղերը՝ աչքերն գիշերի
Չէին շողշողում երկնքում կապոյտ,

Երբ դեռ թափառող, մոլոր ամպերը
Չէին քողարկում երեսը լուսնի,
Երբ չկար անձրեւ, բուք ու հողմերը
Չէին սանձարձակ փչում հատաղի,

Երբ դեռ չէր շրջում մարդը հողածին.
Չէր եռում կեանքը, կեանքը երկրային.
Գոյութիւն չունէր նախանձն ու սէրը
Ու չկար դեռ եւ բարին եւ չարը,

Երկունքի մէջ էր ահա այդ պահուն
Ահա՛րկու մի կին, աժդահայ-տեսան
Ողջ տիեզերքի, աշխարհի անհուն
Կոչման արժանի մայրը բընութեան:

Տիտանի վայել հսկայ ցաւերով
Նա ծնեց երկու մանկիկներ սիրուն,
Մանկիկներ հուժկու, հսկայ հասակով,
Յաղթանդամ, ուժեղ երկու հաւածին:

Դէմքով խիստ նըման, շատ տարբեր հոգով
Նոքա աճեցին շուտով իրարու
Արին միշտ բարի, ազնիւ էր սրտով
Ահրին նենգաւոր, չար ու վրիժառու:

Երկուսն էլ անյաղթ, տիտան եղբայրներ
Ձեռքերը առած մահաբեր զէնքեր,
Կըռւում էին անվերջ, կըռւում բորբոքւած,
Յաղթութեան կամ մահ մըտքում որոշած:

Մայրը չուզելով կըռիւը որդւոց
Իր քողը առաւ, մըրրին անբաժանելի
Եւ նորան փչեց որդւոց այտերուն,
Որով կորցրին նոքա իրարու:

Ու այնուհետեւ խաւար մըթին մէջ
Խարխափում էին երկուսը անվերջ,
Արին ու Ահրին ոխը սըրտերում
Զէնքերը սեղմում էին ձեռքերում:

Արին իր ճամբին վառեց երկընքի
Ջահը լուսեղէն, արեւն խաւարած
Նա ծնունդ տուեց անթիւ աստղերի
Երկընքի հարսին—լուսնին ամօթխած:

Նա կեանք պարգեւեց անհուն աշխարհին,
Նա ազատ թողեց սըրբացող հողին.
Քամին անարգել փըչեց անընդհատ
Աշխարհից աշխարհ սուլելով ազատ:

Ոխակալ Ահրին—հայրը նախանձի
Գընաց խորտակել գործը Արիի,
Նա խաւար ստեղծեց լոյսը ծածկելու
Նա ամպեր ստեղծեց լուսինն քողելու:

Մարդկանց սրտերում նա նախանձ շարժեց
Նա ստեղծեց չարը, ոխը անմահանեց,
Մարդկանց կրծքերում անբիծ եւ մաքուր,
Բոյն դրին անզուսպ չարիքներ անշուր:

Եւ ահա մի օր Արին ու Անին
Դէմ ու դէմ յանկարծ իրար հանդիպան,
Արին անողոք, մռնչող հայացքով,
Իսկ Անին անպարտ, ծաղրող աչերով:

Ահա եւ զէները նոցա ահռելի
Բարձրացան օդում փայլելով յանկարծ,
Ահա մռնչոց կուրծքից սոսկալի
Լսւում է հեռու արձագանք զսած:

Դողում է երկինքն ահեղ ձայներից,
Դոփում են զէներն նոցա բաղխումից
Թռչում է փայլակ փայլուն սրերից
Տրնքում է երկիրն նոցա հարուածից:

Երկուսն էլ նոյնման ոյժերի տէրեր
Չեն յաղթի երբէք յաղթական իրար,
Յաղթութեան բաղդը անցնում է փոխփոխ
Մեկից դէպ միւսը միշտ եւ անփոփոխ:

Եւ յանի նոցա զէները կռուի
Չեն վճռի բաղդը հսկայ պայքարի,
Չարը կ՛յաջորդէ ընդմիշտ բարիին,
Ցուրտը ջերմութեան, օրը գիշերին:

Իսկ երբ գայ մի օր, մի օր ցանկալի
Յաղթութիւնը բերի կողմը Արիի:
Արեւը կըմնայ, խաւարը կ՛անցնի,
Բարին չարիքին իսպառ կարտաքսի:

Մ. Մաղաքեան

«Տրաւիատա»

4 գործող. Երաժշտ. Ջուզէպպօ Վէրդիի)
Թիֆլ. արտ. թատրոն

11 յունուարի

Լինում են բոլէներ երբ մարդ համաձայնում է զոհ բերել իր երջանկութիւնը ուրիշի բաղդաւորութեան համար: Դու տոգորւած ես ամենագեղեցիկ գաղափարներով: Քո դեռ մաքուր կրծքում, որպէս Աստուածային կենդանի ս. պատգամ, խիղճն է խօսում, քո արիւնը իդէալական աշխարհումն է խոխոջում, մրմունջ հանում, մարդկային սիրտդ վրդովւում, կեանք ներշնչում, որպէս տիեզերքի զօրաւոր նւագներ: Քո առաջ ահա կանգնած է մի զառամեալ ծերուկ, նա աղերսում է քեզ լինել պահապան հրեշտակ իր ընտանիքին: Մենակ ես դու երկրիս վրայ, որբ ես, չունիս ծնողներ և սրտացաւ բարեկամ, բայց ունիս մէկը, որին անչափ սիրում ես և որը երդւել է քեզ համար լինել ամեն ինչ: Իսկ այդ անկարեկից ծերուկը քեզ խնդրում է, վերջապէս իր աղերսներով ստիպում է հրաժարւել այդ բոլորից, որովհետեւ դրանից է կախւած իր դստրի բաղդաւորութիւնը: Արհամաձայնւես դու զոհել քո երջանկութիւնը մի օտարի համար: Գուցէ դատապարտութիւնդ այդ թելադրէ... և լեզուդ մերժողաբար արտասանէ այդ մահաբեր խօսքը... Բայց սիրտդ... Նա այդ վճռականութիւնից յետոյ, յաւիտեան կը դադարէ բաբախելուց... Ո՛չ, սրտի վրայ բռնանալ չէ կարող ոչ մի ոյժ, բացի մահից... Սէրը զօրաւոր է քան կամքի ոյժը:

Ահա դրա մարմնացած օրինակը: Ալֆրէդ Ժէրմոն սիրում է Վիօլէտին, այնպիսի անհուն սիրով, որ պարգեւում է նրա սրտին բերկրանք ու տանջանք: Մի գեղեցիկ օր նա յայտնում է իր սէրը նրան, բայց Վիօլէտը որ ընտելացել էր բոլէական յափշտակութիւններին, առաջարկում է լոկ իր բարեկամութիւնը և, առաջւայ նման, շարունակում է դարձեալ կեանքի վայելքներով զւարճանալ: Սակայն Ալֆրէդի սէրը նրան ընկնում է... Նա շուտով թողնում է այդ կեանքը և առանձնութեան մէջ ապրում իր սիրած մարդու հետ: Ալֆրէդի հայրը իր որդու չամուսնութեան պատճառը համարում է Վիօլէտին, թէեւ վերջինս բացատրում է ծերուկին, որ ինքը ապրում է իր ինչքան ու գոյքը ծախելով: Այնուամենայնիւ ծերուկը նրան ստիպում է բաժանւել Ալֆրէդից, ապա թէ ոչ իր աղջկայ ամուսնութիւնը իրան սիրելի մի ազնւականի հետ չէ կարող կայանալ: Վիօլէտի համար այդ մի մեծ զոհաբերութիւն էր: Զոհել նրան, ինչ կապում էր իր կեանքը, իր երջանկութիւնը, բաժանւել նրանից՝ ով երդւել է, ուխտել լինել մի որբի համար ամեն բան... Ո՛չ, այդ դժւար է... Բաժանւել նոյնիսկ այն ժամանակ՝ երբ նրա կեանքի օրերը համարւած էին... երբ նրա առողջութիւնը թունաւորւած էր սարսափելի հիւանդութեամբ... երբ անողորմ գերեզմանը ագահ բերանը բացած սպասում է կլանել... Բաժանւել Ալֆրէդից, ո՛չ, այդ անտանելի է... Նա մա՞հը կը գերադասէր դրանից: Նա անվճռականութեան մէջ էր, բայց նրան այդ վճռականութիւնից դուրս հանեց ծերուկի աղերսական խօսքերը. «Եղէք պահապան հրեշտակ իմ ընտանիքի: Աստուած է ինձ այդ բանը թելադրում... մտածեցէք, դուք դեռ ժամանակ ունիք...» Եւ պատասխանում նա պատասխանից այդ խօսքերին. «Ասացէք ձեր մատաղ, գեղեցիկ եւ անմեղ աղջկանը, որ կայ թշւառութեան մի զոհ, որ ունէր յուսոյ միայն մի նշոյլ, նա այդ նշոյլը զոհ է բերում քեզ եւ մեռնում է քեզ համար: Ես համաձայն եմ. միայն համբուրեցէք ինձ, որպէս ձեր աղջկան, այդ զոհաբերութեան համար: Ձեր այդ համբոյրը ոյժ կը տայ ինձ: Բայց եթէ, նա ընկնի դառն յուսահատութեան մէջ, դուք ինքներդ նրան մխիթարեցէք:

Բաժանման պայթիւնը սկսւում է նորանով, որ Վիօլէտը, իր խոստմանը հաւատարիմ մնալով, վճռում է պարահանդէս գնալ ընկերուհու տանը իր նախկին երկրպագու տնճոռնի բարոնի հետ: Պարահանդէսի ամենատաք ժամանակը ներս է մտնում Ալֆրէդը և սկսում է թուղթ խաղալ իր հակառակորդ բարոնի հետ: Նա անհաշտ ատելութիւն տածելով դէպի այդ բարոնը, խոստանում է նրան տանուլ տալ, ինչպիսի խաղում, որ նա ցանկանայ: Այդ բոլէին մտնում է Վիօլէտը և, ծեր Ժէրմոնի խորհրդի համաձայն, ասում է Ալֆրէտին,



Ջուսէպպօ Վէրդի



Թիֆլիսի Արտիստական թատրոն
Արիւնհեղութիւնների պատճառով ընդհատւած օպերային ներկայացումները վերսկսւեցին

Արեւմուտքից մինչեւ արեւելք չկայ մարդ առանց մեղքի

որ սիրում է բարօնին և աղերսում է նրան հեռանալ սպարտամենտից: Ալֆրէդը զայրանում է և նետում նրան ծախսած ոսկիները իրանց կենակցութեան ժամանակ: Հայրը զայրանում է որդու արած այդ քայլի վրայ, որ անարգի նա անպատուելի մի կնոջ, որի սկամայ զոհաբերութիւնը իրան լաւ յայտնի է: Ալֆրէդը զղջում է իր արարքը և յուսահատ գոչում է. «Մարգարիտ սիրում է ինձ... սաստիկ նախանձը, խաբուած սէրը տանջում է իմ սիրտը... Կատաղութիւնը ինձ այստեղ հասցրեց. իսկ այժմ՝ երբ այդ բոլորն անցաւ, ինձ կերցրում է խղճի խայթը. Ա՜խ, նա ինձ էլ չի ների...»:

Վիօլէտն այդպիսի դառն անարգանք կրելով նրանից, որ իր սէրն էր կազմում, իր ամբողջ գոյութեան լծակը, և անկարող լինելով գաղտնիքը պարզել Ալֆրէդին, ասում է վշտահար. «Ալֆրէդ, Ալֆրէդ՝ դու չես կարող ըմբռնել սիրոյ սաստկութիւնը իմ այս սրտում: Քեզ յայտնի չէ, որ ես ապացուցեցի սէրս, ինձ ենթարկելով քո ատելութեան: Բայց կը գայ օրը, երբ դու կիմանաս թէ, որքան ես քեզ սիրում էի... այն ժամանակ, թող Աստուած պահպանէ քեզ զղջալուց... Ես կը սիրեմ քեզ նոյնիսկ գերեզմանի մէջ..»

Այդ զոհաբերութիւնը նրան գերեզման գլորեց... Աքսորելով հեռու իր սիրածից, զրկուած նրա սիրուց, միայնակ նա իր վերջին օրերն էր ազում... Թոքախտը նրան մաշել էր, մահուան մահճի մէջ գլորել: Այդ միջոցին նա ծեր Ժէրմոնից իմանում է որ բարօնը մենամարտութեան մէջ վիրաւորուել է Ալֆրէդից, որ այդ դէպքից յետոյ վերջինին բացատրում են Վիօլէտի վարմունքը, և նա գալիս է ներումն խնդրելու:

Մօտ է Վիօլէտի վախճանը... Նա անհամբեր սպասում է Ալֆրէդին... Կը սպանան ժամերը... և նա սիրոյ կարօտը չ'առած գերեզման կ'իջնի... Այդ ծանր է նրա համար... Դեռ կեանք չը տեսած, մատաղ հասակում մեռնել... մեռնել այն ժամանակ երբ երջանկութիւնը մօտ է արդէն, երբ երկար տանջանքների արցունքները սիրոյ մէջ յոյս ունի ցամաքեցնելու... իսկ այժմ... մօտ է մահուան ժամը: Ներս է մտնում Ալֆրէդը: Այդ այցելութիւնը նրա մէջ նորից վառում է ապրելու փափագը... Սակայն նրա սպառուած ոյժերը անզօր են մահուան փոթորիկը վանելու, նա այդ զգում է, և վերջին հրաժեշտն է ուզում տալ իր սիրելի Ալֆրէդին, ասելով. Ես իզուր զինեցայ համբերութեամբ, Ո՜հ, անողորմ վերջ է տալիս մեր սիրոյ» և տալով նրան յիշատակ իր մէդալիօնը, աւելացնում է՝ «Վերցրու այս, սա իմ անցած օրերի պատկերն է, թող սա վերակենդանացնէ քո յիշողութեան մէջ նրան, ով քեզ այնքան սիրում էր: Եթէ անմեղ մի կոյս, ծաղիկ հասակում, նուիրէ քեզ իր սիրտը, թող նա քո կինը դառնայ... ես այդ ցանկանում եմ: Տուր նրան այդ պատկերը, ասա, որ սա նրա նկարն է, հրեշտակների մէջ երկնքում աղօթելիս է քեզ ու նրա համար...»: Իսկ Ալֆրէդը... լսելով այդ դառն մահաթոր խօսքերը այն շրթունքներից, որ մի ժամանակ անվերջ սիրոյ խօսքեր էր յորդորում, ցնցւում է, սակայն նա չէ հաւատում, որ մահը այդպէս վաղաժամ կը խլէ իր սէրը, իր կեանքը, նա յոյս ունի որ կապրէ, և ասում է. «Ո՛չ, իմ սիրելի, դու չես մեռնիլ: Աստուած ինձ այդպիսի խիստ պատժի համար չըբերաւ այստեղ..ո՛չ, մահը այսպէս վաղաժամ չէ կարող մեզ բաժանել: Ա՜խ, մնացի՛ր երկրիս վրայ, կամ թէ չէ մի գերեզման մեզ երկուսիս կ'ընդունէ...»:

Դեռ նա չէր վերջացրել այս խօսքերը, երբ մահը սլացաւ և այդ գեղազոյն էակը, այդ հրեշտակային, գեղեցիկ հոգին, այդ մարմնացեալ սէրը կորցրեց այս աշխարհից... Անշնչացած՝ ընկած էր նա... Նա, ով կենդանի սէր էր շնչում, որից սէր էր միայն բուրում... Այժմ... նա դիակ է... մահուան յաւիտենական դրօշմն է կնքուած նրա ճակատին... Անկարեկից ու անզգայ ծերը կանգնած էր կողի գլուխ... Նրան իր խիղճը մեղադրում էր... Նա էր այդ զոհի պատճառը: Մէկի կարծեցեալ բարգաւաճութեան համար՝ փշրեց երկուսի երջանկութիւնը, խորտակեց երկու կեանք... Այդ սիրոյ զոհը ինքը վկայում էր, թէ ծերուկի միջամտելը այդ սիրով զօդուած կեանքի մէջ, ինչպիսի սխալ հետեւանքներ ունեցաւ... Ո՞ւր մնաց ծերուկի փորձառութիւնը... այո. ծեր մարդիկ զգացմունքների խնդիրներում և կարճամիտ են և անզգայ... սիրոյ կայծը մարած է նրանց կրծքում՝ նրանց կրծքի տակ սիրտ չէ, այլ սառոյց...

Տ. Դանեզոյ, որ խմբի լաւ ոյժն է, զգացած Վիօլէտ էր:

Սակայն, կարծէք, անդարձ անցան մեր թատրոնական փառահեղ օրերը...

Մամուլի շուրջը

Նոր օրէնքը ամեն օր ծնում է նոր պարբերական թերթեր, համաձայնակը լսում է շատերի միտքը և ըստ գերմանական ձուլարանատէր Մոզերի, կովկասում շուտով մենք կունենանք աւելի շատ լրագիր և հանդէսներ, քան ընթերցողներ:

Բարի սհաթին: Ի՞նչ վնաս սրանից ձուլարանատէր Մոզերին, կամ հայ ընթերցողներին: Ցամենայն դէպս ով խերւի կամ վնասի, սրանք վնաս չեն ունենալ: Ուրեմն սրանց գոյութիւն ու քմածծողն աւելորդ են:

Վերածնութիւն են զգում ամենքը, իսկ նորանոր ծնունդներ չեն ուզում: Մենք բոլորովին հակառակ համոզմունքի ենք, որքան շատ, այնքան էլ լաւ: Կալեն, մալեն, թափը դէն կածեն և զուտ ալիւրը կը մնայ:

Վրացիների աւերէն լեզուով, բուրժուա կապիտալիստների դրամով և սօցիալ-դէմոկրատների ձեռքով խմբագրող, օրական 14,000 օրինակ սպառուող, փողոցին սիրելի թերթը փողոցումն էլ մնաց անհետ: Պատճառը, որովհետև հիմքը խախուտ էր, աւազի վրայ էին կամենում հսկայ շէնքեր կառուցանել: Անհամբեր էին. չը կամեցան սպասել ժամանակին:

Հայ ազգը շահագործող Մշակ լրագիրը մրցակից չունէր, թողել էր իր կոչումն ու բովանդակութիւնը, բայց ահա հանդէս եկաւ մեծադիր Նոր-Դար, կրյսա Արշալոյսը և սա ընկճելով իւրն էլ աւելից, փրկեց. բայց ի զուր և շատ ի զուր, այս մեր ամենասանկեղծ համոզմունքն է, որ ասում ենք: Ի՞նչ էլ լինէր, փոքրադիր Մշակը կապրէր, բայց այժմ միթէ սրա օրերն էլ չեն համրուած: Ներկայացուցի անդամ և ամենայն հայոց ինքնակոչ կանցլէր Համբարձումը ինչ պիտի անէ այժմ, երբ Աճարեանը, Խաժակը, Լէօն և այլն և այլն փիչերները ճար տան ու Մշակից գնան Ցառազին: Ճուտ թէ ուշ Ա. Բալանթարն էլ է փախչելու սրանից, երբ գրաշարները փողը սկսեն բանել, և այդ անպատճառ պատահելու է: Հետաքրքրական է, թէ այն ժամանակ Վանօն ու Համբարձումը ինչպէս պիտի Մշակին անուն տան, որ իրանց ծերութեան օրում խնամէ...

Ա՜յդ է ձեր դիպլոմատութիւնը.

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅՈՒՄ ԵՒ ԱՊԱԳԱՅՈՒՄ

(Ա. Բեբել)

«Ամուսնութիւնը պէտք է լինի մասնաւոր պայման: Յաճախ է լսւում այս պահանջը: Նա հնչում է շատ արմատական կերպով և, որոշեալ մտքով վերցրած, նա հէնց այդպէս էլ է. սակայն այժմեան սօցիալական պայմաններում, այդպիսի մասնաւոր պայմանը կնոջ համար նոյնչափ փոքր նշանակութիւն ունի, որչափ և շատերի ցոյց տուած, այն փաստը, որ կինը իր ոյժերին և ընդունակութիւններին համապատասխան ամեն մի աշխատութեան մէջ կարող է իր գոյութիւնը պահպանելու միջոցներ գտնել: Ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ դէպքում նա մնում է ճնշուած էակ. ոչ տնտեսական ազատութիւնը ոչ էլ ամուսնութիւն հաստատելու և լուծելու հեշտութիւնը չեն կարող պաշտպանել նրան տնտեսական ու հասարակական ճնշումից ու շահագործումից: Մինչև որ կինը իր սօցիալական (այսինքն տնտեսական) դրութեամբ չի լինիլ տղամարդի՝ բոլորովին անկախ և նրան հաւասար, մինչև որ նա չօգտուի նոյնպիսի քաղաքական իրաւունքներով, ինչպէս և տղամարդը, ամուսնութեան մասնաւոր եղանակը նրան նոյնչափ քիչ օգուտ կը տայ, որչափ և ամենագեղեցիկ սահմանադրութիւնն այն ժողովրդի, որի իրաւունքներն ու ազատութիւնը կարգադրում են կառավարութիւնը և այն տիրող դասակարգերը, որոնց ձեռքում է գտնւում ոչ միայն հարստութիւնը այլ և ֆիզիքական ու հոգեոր իշխանութիւնը: Այդպիսի սահմանադրութիւնը մնում է միայն թղթի վրայ: Իւրերի ներկայ դրութեան մէջ ամուսնական մասնաւոր պայմանը կնոջ համար աւելի շուտ վտանգաւոր է քան թէ օգտակար:

Երբէք բուրժուա հասարակութիւնը չի համաձայնիլ ընդունել ամուսնական պայմանը բացառապէս մասնաւոր պայման, քանի որ ամուսնութիւնն ամենասերտ կերպով կապւած է բուրժուական նիւթական յարաբերութիւնների հետ, նոյնիսկ անհրաժեշտ կերպով բղխում է նրանցից: Նա չի ընդունիլ այդպէս չինուած այն բանին, որ չնայելով ամուսնական պայմանի խանգարելու դէպքերը շատ յաճախ են պատահում, և պէտք է որ յաճախ էլ պատահէին, քանի որ ամուսնական պայմանը, ինչպէս ասած, առևտրական հիմնարկութիւն է. ամուսնանում են ոչ թէ ներքին հակումից, այլ հաշւի տեսակէտից: Իր տնտեսական ու սօցիալական դրութեան շնորհիւ, տղամարդը ներկայանում է ինչպէս տիրող կողմ և դրանով է բացատրւում այն ազատութիւնը, որը նա թոյլ է տալիս իրան կնոջ վերաբերմամբ. դրանով էլ բացատրւում է և այն, որ ամուսնական հաւատարմութեան խանգարումը, մեծ մասամբ, առաջ է գալիս տղամարդի կողմից. դա էլ բացատրւում է և կնոջ բոլորովին կրաւորական դերն ամուսնութեան մէջ: Եթէ տղամարդն է խանգարում ամուսնութեան սրբութիւնը, ապա այդպիսի վարմունքը նրա համար անցնում է առանց որևէ հետևանքի. կինը շատ դէպքերում սովորած է հաշտուել մարդի չնութեան հետ, քանի որ նա կախումն ունի նրանից. չէ որ մարդը նրա գոյութեան նեցուկն է և նրա իրաւունքների ներկայացուցիչը: Իսկ եթէ նա ձգում է մարդին, ապա շատ դէպքում նա ընկնում է անօգնական դրութեան մէջ, որը նրա համար լինում է նոյն իսկ օրհասական, եթէ նա ունենում է երեխաներ: Եւ եթէ նա նոյնիսկ այդպէս վարուէր զրկուած իր պատւի և սեռական արժանապատուութեան պահանջից, «հասարակութիւնը» չը նայած նրա բոլոր անմեղութեան, այնուամենայնիւ կը վերաբերուէր նրան ինչպէս մի կիսա-արտաքսուածի և բոլորովին անտես կանէր նրան. միայն ծայրայեղ դէպքում նա կարեկցութիւն է շարժում: Ի հարկէ ձեռական ապահարզանից յետոյ, նա կրկին կարող է ամուսնանալ. բայց ո՞վ է այն տղամարդը որը կը վերցնէ ուրիշից բաժանուած, իրեն էլ զաւակներով բազդաւորացած կնոջը:

Միայն կարողութիւնը կարող է նրան հրապուրիչ դարձնել, բայց չէ որ այն ժամանակ առնում են ոչ թէ նրան, այլ կայքը: Իսկ տղամարդն առանց որ և է դժուարութեան կը գտնէ իր համար մի ուրիշ կին, կամ առանց մի առանձին նախատինքի արժանանալու ազատ կապակցութիւն կը հաստատէ: Հէնց դրա մէջ էլ կայանում է տղամարդի և կնոջ դրութեան տարբերութիւնը:

Այդպիսի պայմաններում կինը պէտք է համբերութեամբ տանէ ամուսնութեան մէջ ամեն տեսակ առաջացում. նա կարող է ազատուել միայն այն ժամանակ, եթէ ունէ ծնողներ, ազգականներ կամ կարողութիւն, որոնք կարող են լինել նրան նեցուկ: Սակայն, նոյնիսկ այդ դէպքում, նա պէտք է պատրաստ լինի դիմանալ շատ նեղութիւնների, որովհետև, ծնողների և ազգականների կարծիքով, ամենամեծ դժբաղդութիւն է լինել ամուսնից բաժանուած կին: Իսկ եթէ կինը չէ կարող յոյս ունենալ օգնութիւն ստանալու, այն ժամանակ նա դիմում է ամեն տեսակ անարգանքի, մարդի բոլոր քմահաճոյքներին, նոյն իսկ տանում է կոպիտ և վատ վարմունքը, խիստ սարսափում է ինքն իր առաջ, մինչև որ վճռում է վերջնական քայլն անելու: Եթէ նա եռանդուն բնաւորութիւն է, ապա աշխատում է գործ դնել իր ունեցած միակ զէնքը — իր լեզուն: Կնոջ լեզուն, որն առակ է դարձել, ինչպէս և երգել ու գովաբանել բանաստեղծներից, նրա համբերութիւնն ու խոնարհութիւնը, միայն տղամարդի բռնակալութեան հետեւանք են, որ նա ստանում է դաստիարակութեան միջոցով և ժառանգաբար, դրանք արդիւնք են հազարամեայ ընական ընտրութեան ու ժառանգականութեան: Կնոջ համբերութիւնը, խոնարհութիւնն ու հնազանդութիւնը տղամարդի վերաբերմամբ, մեծ մասամբ, ոչ թէ առաքինութիւն է, այլ թուլութեան հետեւանք և արատ:

(Կը շարունակուի)

տնաշէններ, չէիք մեծացրել այժմ էլ ինչու մեծացրիք. մի՞թէ օրւայ համար է, որ չը կարողացաք ձեր մտքերը ծածկել: Տնաշէններ, կասէիք թէ Գրիգոր Արծրունու տանդն է, ինչ գիրքով եղել է, այն գիրքով էլ պէտք է մնայ Մշակը: Եւ մի՞ ձեր համախոհը կը տրտնջար: Այժմ մէկ խփելով երկու խրատ ունէք. առաջին, որ ամեն ՙհամախոհ՚ իրաւունք ունի այժմ ձեզանից երեսը շուռ տալու, որ դուք դաւաճանութիւն էք արել՝ անփոփոխ պահել Մշակի խմբագրութիւնը և փոխել գիրքը, ձեր, միայն այն ժամանակ, երբ ձեզ մրցակիցներ երեւցան: Երկրորդ՝ որ այսուհետեւ Մշակի ուէին էլ ինչով էք ցնելու երբ Յառաջը առաջ գնայ սկսէ... Յամենայն դէպս փոքրածում էր Ա. Քալանթարի Կավկազի խմբագրութեան կողմից ջնջելը.

Մտադիր է և պաշտօնական Կավկազի նոր խմբագրի օրէնները. սա փոխանակ իր խմբագրատանը բոյն դրած Իվան Խուչատուրովի անունը գնելու իր լրագրի ճակատին տպւող աշխատակիցների ցուցակում, նրանց անուննե՛րն է տպագրում, որոնք, մէկը միւսի եւեից այնպէս են այնտեղից փախչում, ինչպէս թիւրքը խողից: Կատակը մի կողմ, այս ինչ հանելուկ է...

Վօզրօժդենիէ-ի մահը կեանք տուաւ Տիֆ. Լիստոկին, որ վերջին ժամանակներս սոսկ փարն էր ընկել: Բայց չիք չարիք առանց բարեաց. առավ սրբից հրատարակչին աչքերը չուած խմբագրին ու աշխատակիցներին և պ. Զարարի խմբագրութեամբ կազմւած պ. պ. Ա. Արախանեանց, Յով. Սպենդէրեան, Դերժավին են խմբագրութիւնը խոստանում է Տիֆ. Լիստոկին տալ կեանք և լաւ օրեր:

Բալանթար Բալանթարեանի Նով. Օբոզ., որ պէտք յանձնէր Վերմիշեանին, չը յաջողեց և շատ էլ լաւ եղաւ. որովհետեւ այն ժամանակ Նով. Օբոզ.-ին կը վիճակւէր Վօզրօժ. կեանքը...

Լաւ օրում չեն Նոր-Դարն ու Արշալոյսը, զրաշարայի տագնապը սրանց խեղդում է և ընդհանուր բաժանորդագրութիւնը, որ ամենքի համար «ոչ անտանելի եղանակ» է այս տարի, հարկադրում է սրանց նորանոր խոստումներ անել իրանց սպառող բաժանորդներին: Արշալոյսը խոստանում է 24 պատկերազարդ յաւելուածներ, իսկ Նոր-Դարը յայտարարում է, որ թերթի խմբագիրը գնացել տարի է Պետերբուրգ եղած ժամանակ թոյլատւութիւն ստացել իր թերթը պատկերազարդ դարձնելու և իր այդ ցնորողութիւնը պէտք կատարէ երբ հնարաւոր լինի: Ուրեմն թէ Արշալոյսը և թէ Նոր-Դարը բաժանորդներին շոյում են իրանց թերթերը պատկերազարդ դարձնելու յոյսով, այն էլ երբ հնարաւոր լինի: Եթէ այդպէս է, մեր վիճակն այս տարի ապահով է, որովհետեւ մենք, ինչպէս միշտ, սովոր ենք մեր թերթերը հրատարակելու և սաստիկ վճարող բաժանորդների և երկրորդ մեր պահարաններն ու պահեստները լիքն են անթիւ կլիշեներով և նրանք կանոնաւոր, իւրաքանչիւր շաբաթը երկու անգամ ուղարկւում են նորանորերով:

Երջանիկ է մեզ նման և վիլլա. պր. Ս. Թումայեանցի նոր աշխարհ եկած Հիւսիսափայլի թոռ, Արծրունու Մշակի որդի Ընկեր, որ խոստանում է ՙշարունակել իր տոհմային պատիւ՚, և մէջն այսպէս սկսել՝

«Ժառանգածով չի կարող բաւականանալ. Ընկերը պէտք մի քայլ առաջ գնայ իր հօրից»:

Սակայն մենք մի փոքր կասկածում ենք. գոնէ հայերիս մէջ մենք չը գիտենք մի օրինակ, որ որդին ոչ թէ պապից, այլ հօրից ժառանգածն իսկ կարողանար պահել, պահպանել, ուր մնաց նրանից մի քայլ էլ առաջ գնալ: Ինչոր է, այնուամենայնիւ Ընկերը մեզ հաճելի սիւրպրիզ է, որին ցանկանում ենք շատ առողջ կեանք, զւարթ օրեր:

Սակայն սկի չը հասանեցինք Տէր-Եղնիկի Հովիւը, գուցէ հէնց այն պատճառով որ շատ էինք սպասում և ոչինչ չըստացանք: Եթէ Թումայեանի Ընկերը տարօրինակ, օրժինալ մի ժողովածու է, յամենայն դէպս մէջը միտք և իմաստ էլ կայ, թէև անկապ: Բայց Հովի՞ւը...

Գոնէ մէկին ցոյց տային: Համառօտ կենսագրութիւն-ը փոխան Հայրիկ, փոխանակ նախ խոշոր գնելու վերնագիրը Խրիմեան Հայրիկ, իսկ համառօտ կենսագրութիւնը մանրատառ և փակագծերի մէջ: Առաջնորդը մեր ընթերցողին: Տէր-Եղնիկը, այդ ո՞ր աշխարհում է տեսել, կամ լսել, որ յօդւածի ճակատին տպագրեն Առաջնորդ: Այդ ինչ Մամուլի տեսութիւն է Հովիւ հրատարակման առիթով նկատողութիւնը:

Շէքսպիրի օրերում, ասէք Անգլիայում թատրոնի դեկորացիաները լինէին, որոնց վրայ խոշոր տառերով տպագրւած կըպցնումէին՝ անտառ, պալատ, եկեղեցի, որպէսզի հանդիսատեսն անտառը եկեղեցու տեղ չընդունի, իսկ պալատը՝ ախոռ:

Հովիւը պարտաւոր է հայ լեզւով հրատարակել. այս ինչ բառեր են (Բրիտանէական եկեղեցի.) պաշտական տեսութեան մէջ՝ դրուագրանը, պասսիվ, սոցիալական, մասսաների, դէմիգ, իդէալների, կօմունիզմի, անարշիա, պարալել են: Եւ այս բոլորը մի երկու էջի մէջ:

Ի դէպս, նկատենք մի մեծ սխալ, որ շատերը սովորաբար, թէ անուշադրութիւնից (նոյն սխալը և անկերն էլ են շարունակ անում) գործ են ածում մեր լեզւի մէջ: Հարցնում ենք. ինչու մասսա, պասսիվ, կասսա պրօֆեսօր, ալիէսսա, կոմիսսիա են երկու ս. են գրում և ոչ մէկ ս: Անշուշտ շատ շատերի համար պարզ է, որ այդ մի խոշոր թիւրիմացութիւն է, որ մտել է նախ ռուս լեզւի ուղղագրութեան մէջ և մենք կապկաբար ընդօրինակել ենք նրանցից, ինչպէս և վերջաւորութեամբ բառերը, օրինակ գրումա եւայլն: Արեւմտեան լեզւի մէջ, օրինակ հէնց Լատինականում, Ֆրանսիականում, գերմանականում, երկու ձայնաւորների մէջ երբ մի ս է գրւում, կարդացւում է զ, իսկ երկու ս-ն կարդացւում է ս: Արդ հարցնում ենք, հարկ կա՞յ թէ հայերէն, թէ ռուսերէն պրօֆեսօր, կասսա, մասսա երկու ս գրելու: Ի հարկէ ոչ, ուրեմն այսուհետեւ մէկ ս էլ գործ ածենք. ա վերջաւորութեամբ իգական անունները են, որ ռուսերն էլ նոյնպէս իգական վերջաւորութիւն են անել կապին մասին, ֆրանսերէնում վերջանում են որոնք e տառով որ չի հնչւում, ռուսերը e-ն փոխել են a-ի և հնչում են, իսկ հայերս էլ ռուսերից կապկաբար ընդօրինակելով ա վերջաւորութիւնը գրում ենք և հնչում:

Շնորհակալ լինենք Հովւին, որ սակաւ եղաւ այսօր այս նկատողութիւնը անելու:

Սպասենք Մասեացեփին, Միութեան, Կեանքին, Կայծին, Կուլտուրային, Սամփրիչին...

Բժշկ. Վահան Արծրունու խանդն ու մոմը, որ ժամանակին ծխեց Մ'շակին և նրա տնտեսին վառեց, ինչպէս փաստը այսօր տառում է, ընդունելի ողջակէզ չեղան: Ահա թէ ինչպէս այժմ յարգելի դ-ր. Վ. Արծրունին դուժում է իր գեն թօթովող Առողջապահիկ թերթի խմբագիրական (թէ իսկական) մահը:

«Ի նկատի ունենալով, երկրի սրգի անհանգիստ դրութիւնը, խմբագրութիւնս որոշեց առ այժմ դադարեցնել «Առողջապահիկ թերթի» հրատարակութիւնը: Վերսկսելու մասին կը յայտարարուի»:

«Խնդրում ենք մեր բաժանորդներին անյապաղ հասցնել մեզ իրանց բաժանորդագինը թէ անցեալ 1904/5 բաժանորդագրութեան և թէ վերջին երեք ամսի (հոկտ. նոյեմբեր և դեկտեմբեր) համար: Խնդրում ենք նաև մեր յարգելի գործակալներին անյապաղ հասցնել մեզ իրանց մօտ գանձւած գումարները»:

—

Ամբողջասանութիւնը լաւ յատկութիւն չէ և ապերախտութիւնը պախարակելի: Ցանկանանք որ դր. Վ. Արծրունու համար այս պատիժը դաս լինի և համեստութիւնն ու արդարութիւնը իրան օժիտ արած, փութով սթափի և վերակենդանացնի իր թերթիկը:

— —

Բաց նամակ հայուհիներին

(Նամակ խմբագրութեան)

Տիկնայք, հասել է ժամը. երբ մեզանից ամեն մէկը պարտաւոր է գիտակցաբար վերաբերւել դէպի օրւան չարիքը: Չարիքը մեծ է և վճռողական: Ազգի գոյութեան հարցն է մեր առաջ դրւած. մարդկային ամենամեծ սրբազան պարտք կայ ամեն մի անհատի վրայ. Յուսահատւելու, ընկճւելու օրեր չեն, այդ թուլամորթներին է յատուկ այս սև օրերին. գրանից աւելի դաւաճանութիւն չկայ: Ուրեմն դէպի գործ, ով ինչով կարող է և ահա այդ համոզմունքն է, որ մեզ սարսպել է գտնել մի ամենահամեստ միջոցի. կարծում ենք, որ այս համեստ միջոցով ևս կարելի է սրբել թշուառների մի կաթիլ արցունքը: Մենք ձեռնարկել ենք մի գրական գեղարւեստական ժողովածուի հրատարակութեան «Արցունքներ» վերնագրի տակ: Ժողովածուին կըմասնակցեն միայն հայուհիները. մեր ձեռքի տակ եղած նիւթերը բաւական չըհամարելով, հրապարակով խնդրում ենք այն բոլոր հայուհիներին, որոնք ունեն զանազան հեղինակութիւններ (որ. բանաստ. վէպիկ. պատմւածք նամանաւանդ վերջին դէպքերի նկարագրութիւններ) բարեհաճեն ուղարկել մեզ, որպէսզի մեր ձեռքի տակ եղած նիւթերի վրայ աւելացնելով, կարող լինենք շուտով հրատարակել «Արցունքներ» ժողովածուն, որից գոյացած զուտ արդիւնքը յատկացնում ենք աղէտից վնասւած հայերի օգտին:

Որովհետեւ ժողովածուն զարդարւած պէտք լինի բազմաթիւ նկարներով, ուստի խնդրում ենք ուղարկել մեզ նաև վերջին դէպքերից լուսանկարներ և ագեւին զոհ գնացածների լուսանկարները: Վերջին անգամ խնդրում ենք որքան կարելի է շուտով ուղարկել մեզ մեր խնդրածները: Ժողովածուին վերաբերեալ բոլոր գրուածների համար, խնդրում ենք դիմել հետեւեալ հասցէով—Մայկօպ

օր. Զ. Ճէրբերեանին

Յարգանօք օ. Զարվ. Ճէրբերեան.

Եղիս. Բաղդասարեան

Մարդասիրութիւն

Թշւառին բաժին է կարեկից

Ճուշի քաղաքի աւերւածների և թշւառացածների օգտին ստացանք Վարշաւից պ. Աղէքսանդր Սաղաթէլեանից 69 ր.—20 կ., որ նա հանգանակել է հետեւեալ անձերից՝ Յովհաննէս Յարութեանից 5 ր. Աղէքսանդր Սաղաթելեանից 1 ր., Ե. Էհրամճեանից 5 ր., Հայ 2 ր., Նիկոլ Օհաննէսեան 1 ր., Էէօն Բագեան 1 ր., Մարիս Չիլինգիրեան 50 կ., Տէնիկեօզեան 1., Արշամ Կրօշեան 30 կ., Զ. Էյսէրման 1 ր., Իւ. Յուզբաշեան 1 ր. Պօլոնսկի 1 ր., Գ. Վ. 1 ր., Լ. Մօսկվին 50 կ., Ա. Գրոզով 1 ր., Սասանով 50 կ., Մին հայ 50 կ., Միքայէլ Ասլեանց 1 ր., Մաքօխին 1 ր., Փ. Մէյերսօն 1 ր., Օ. Լիսիցկի 1 ր., Գ. Գեհց 3 ր., Աննա Մուրադեան 3 ր., Ա. Լեոնով 1 ր., Վ. Թ. Զօտով. (կրտկապաշտ) 9 ր., 40 կ., Եղբ. Յարութիւն և Վահան Մուշէն 25 ր., Հելէն Էյսէրման 50 կ..

Թշւառացած հայերի ամբողջների մեծագոյն մասը հրեաներ են, լեհ և այլազգիներ: Սրանց ցանկութեամբ այդ գումարը բոլ մեր խմբագրութեան (այսպէս էին կարգադրել դրամ մեզ ուղարկողները) հասցրինք Ճուշում թշւառներից նրանց, որոնց մենք և պատշաճ համարեցինք:

—

Գեղարուեստական խրոնիկոն

Անցեալ շաբաթւանից նորից բացւեց Թիֆ. արքուն. թատրոնը: Այժմ մի սիրուն ընկերակցութիւն է կազմել օպերային խումբը իր բոլոր մեծ և փոքր անդամների և նւագախմբի հետ: Ոչնչք առձիկ չէ ստանում, այլ որոշ բաժին եկամուտից: Թատրոնը, տրւում է իւրաքանչիւր երեկոյի համար 50 րուբլ. և 75 ր., եթէ մուտքը 500 ր. աւելի է: Խմբի բոլոր անդամները հաւասարապէս շահագրգռւած լինելով իրանց գործի աջողութիւնով, ջանում են, որքան ներում են իրանց ուժերը, ներդաշնակ կացուցանել ներկայացումները: Յաճախ երգում են պ. և տ. Դոնսկոյները, որոնք վայելում են հասարակութեան գգւանքը: Խմբի մէջն է և հայ երգիչ պ. Ուլախով ու ինչպէս մեզ հաղորդում են օրերս երգելու է և պ. Բարխուդարեան (տենօր) Մ'իխոնեան օպերայի մէջ:

Թատրոնում ամեկերի գները էժանացրած են, երբեմն տրւում են և օպերէտներ, որ աւելի շատ հանդիսականներ է գրաւում: Բայց ցանկալի է, որ գեղեցիկ և սիրոյ տաճարում, մանաւանդ մեր այս վայրագ օրերում, ժողովրդին ներշնչւէր աստուածային անարատ սէր, նրանց ցոյց տրւէր, որ հրճւալից յաղթանակը անզօրութեան խաղաղութիւնն է բերում:

— Մեր նկարիչները Փառքի Տաճարում բացել են իրանց պատկերների հանդէսը: Բայց մեր օրերում զինւորական Տաճարը Փառքի սարսափեցնում է նրա մօտով անցնողին, որովհետեւ շրջապատւած է թնդանօթներով, որոնք մի ժամանակ պաշտպանել են կովկասեցուն, իսկ այսօր, նրա հասունանալուց յետոյ, նոյն թնդանօթներին մատաղ են բերում:

Ում աչքեր պատառերից ողջ է, թող մանէ այս Տաճարը մեր նկարիչների գործերը դիտելու:

— Օպերային երգչուհի օր. Պալայեան, որ այս ձմեռ իր ծննդավայրում, Աստրախանում, հօր տանը հանգստանում է, վիրաւորել է անյայտ չարագործներից, որոնք ծանր վէրքեր են հասցրել նրա գլխին:

— Փակ է Թիֆլիսում Արտիստիկ ընկ. թատրոնը և հայ ու ռուս դրամատիկ. խմբերը ներկայացումներ չեն տալիս:

— —

Երէկ, այսօր, վաղը

Սուրբ Վեհափառութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսը նոր տարւան այցելից հիւանդ փոխարքայ գրաֆ Դաշկով-Վարանցովին և մի քանի օրից յետոյ Մայրամայր: Նորին Օծութեան փոխայց աւա փոխարքայի ամուսին կոմսուհին Այցի

Ֆրանսիական հանրապետութեան նախագահ

ԷՄԻԼ ԼՈՒԲԷ

էին եկել Նորին Վեհափառութեան և փոխարքայի բոլոր օգնականները, Թիֆ. ընհ. գինուորական և քաղաքացիական մասի նահանգապետները, չտաբի պետը, չատ ուրիշ բարձր աստիճան անձինք և ըստ արմատական Մշակ լրագրի «հայ հասարակութիւնից պատուաւոր քաղաքացիներ»...

Հետաքրքրական է, արմատական Մշակը ամենայն հայոց Հայրիկին՝ Յիսուս Քրիստոսի ծննդեան առիթով ներկայացող և ս. աջն առնող ո՞ր հային է համարում պատուաւոր։

Հետաքրքրական է իմանալ, արմատական Մշակը ո՞րտեղ է վիզէ անում պատուաւոր հայի անցագիրն ու դիպլոմը...

Հին ռէժիմի ժամանակ ամենայն հայոց Կաթողիկոսի չնորհաբեր գալուստն իսկ Մշակի լրատուները չէին բարեհաճում հաղորդել և այդ լուրը հայոց միակ լրագրի ընթերցողները իմանում էին մի քանի օրից յետոյ Մշակում «Թիֆ. Լիստոկից» քաղած ներքին լուրերի ներքևներում անպակաս հաղորդուածից։ Բայց այսօր ըստ արմատական Մշակի հայոց Հայրիկի ս. աջն առնողներն իսկ պատուաւորներ են։

* * *

Ղարաբաղի թեմական նոր առաջնորդը իր բարձրութեան վրայ չէ։ Անափառ է, անարդար և մի չարք նման պակասութիւններով օժտուած։ Առայժմս հրապարակի վրայ ենք դնում գրականագէտ, ս. էջմիածնայ ճեմարանի անդրանիկ սան, այժմս լքեալ և հիւանդ, Ամարասայ աւերուած վանքի վանահայր տ. Ն. վարդապետ Տէր-Աւետիքեանի վիճակը։ Թիւրքերը թալանել են սրա վանքը, իրան կողոպտել, յօշոտել և հազիւ կիսակենդան, մերկ, օտարոքին փախել է սա մօտակայ հայ Սոս գիւղը և այս այնտեղից մի կերպ հասել Շուշի։ (*Փաստերը առնում ենք Նորին Վեհափառութեան դիւանից*)։ Հարցնում ենք Ղարաբաղի թեմական առաջնորդից, ինչպէս է նա ամօթել իր եղբայրակից, ս. էջմիածնայ միաբան յոգնավաստակ հայ գրականագէտի վիճակը։ Կոչ անել հայ ազգին, տասնեակ հազարներ հաւաքել և նոյն իսկ յատուկ ժողովուած գումարներից հագուստ ու սնունդ չը տալ վիրաւոր Ամարասու վանահօրն անգամ։ Ձենք հասկանում թէ էլ ո՞ւմ է արժան համարում սրբազան առաջնորդը բաշխելու այդ գումարները... Ահա այստեղ փաստերը են, որ իրաւունք էին տալիս մեզ ձեռնպահ մնալ և չը հրատարակել նրա հեռագրները, աղերսանքներն ու կոչերը։

Ֆրանսիացիների տօնախմբութիւնը ժողովրդական ընտրողական յաղթանակի առիթով։

* * *

Բժշկապետ պ. Բ. Նաւասարդեանի Առաջին Մասնաւոր Հիւանդանոցի քսանհինգամեակի առիթով քանի ամիս առաջ ցանկութիւն էինք յայտնել, որ այդ տօնը յաւերժացնէր մի այլ, նոր բարի գործով և այսօր ուրախ ենք, որ մեր այդ ցանկութիւնը իրագործուած ենք տեսնում։

Բժշկապետ պ. Բ. Նաւասարդեանի նախաձեռնութեամբ երկու ամսից աւելի է, որ կազմուած է Հայկազեան Քաղաքակրթական Միութիւնը։ Այս առիթով ընդհանուր ժողովներից յետոյ չաբաթական մի քանի անգամ կանոնաւոր չարունակւում էր Խմբագրական Մասնաժողովի նիստերը, որ ամենայն աջակցութեամբ բժշկապետ հիմնադրին ախագահութեամբ մշակում էր կանոնադրութեան յօդուածները։ Այժմս կանոնադրութիւնը բոլորովին կազմ և պատրաստ է անդամների մեծ քանակութեամբ, որոնց, Միութեան Նախաձեռնող բժշկապետ պ. Բ. Նաւասարդեանի առաջարկութեամբ, վճռեց հիմնադիր անդամների կոչում տալ, նոյնպէս և նրանց, որոնք կը գրուին Միութեան անդամ մինչև նրա կազմակերպութիւնը։ Օրէցօր աւելանում են և գործադիր անդամների թիւը։

Խուզարկութիւնը Լեհաստանում

Հայկազեան Քաղաքակրթական Միութիւնը ընդգրկում է բոլոր հայերի տենչանքը, սակ *խաղաղ ճանապարհով*, որոնք բազմաչարչար հայի և նրա արիւնչաղաղ հայրենիքի վերածնութեան բարօրութեան ջատագով են տողորուած։

Յուսով ենք որ Միութիւնը մօտ օրերս կը բանայ իր գործնէութիւնը, պատշաճաւոր օրինակատարութիւնը վերջանալուց։

Այստեղ, այնտեղ ամենտեղ

Արտասահմանեան լրագրները լիքը են Կովկասին վերաբերեալ յօդուածներով, տեղեկութիւններով և եզրակացութիւններով։ Բանից դուրս է գալիս, որ Կովկասի Փոխարքան Պետերբուրգ գանգատուել է իր անել դրութիւնից. սա շրջապատուած է լրտեսներով և իր առանձնասենեակում անգամ գաղտնի խօսածը մի երկու ժամ չանցած մանրամասն իմանում են յեղափոխականները։ Դժգոհ է իր շրջապատողներից և մի քանի նահ նգապետներից։ Փրկութիւնը երկու նոր զօրաբանակի մէջ է գտնում, որ նա կրկին պահանջում է Պետերբուրգից։

Յաճախ լուրեր են պտտում, որ Փոխարքայութիւնը ոչնչացնում է և Կովկասի համար նշանակւում են գ.ներալ նահանգապետներ Կուրապատկին և կազակ Միշչենկո։

Պաշտօն պէս արտասահմանեան այս լուրերը հերքւում են։ Ասում են որ գեներալ Մալաման Սուլթան "րիմ Գիրէյը, Շիրինկինը թողնում են իրանց պաշտօնները։ Վերջինս անձնէր ծառայութեան համար գեներալ-լէյտենանտի աստիճան է ստացել։

Հրատարակւած է ներկայ 1996 թ. պետական ելևմտի բիւջէն։ Ծախս հաշւած է մօտ երկու միլիարդ, դէֆիցիտ համարեա կէս միլիարդ (481 միլիոն)։ Ոսկու ազատ պահեստն զգալի չափով իջել է, երկիւղ կայ թղթադրամի գինն ընկնելու։ Յոյս ունին 48 մ լիոն րուբլի դէֆիցիտը փակել արտաքոյ մուտքերով և այդ այն ժամանակ, երբ իսկական հարկերն ու տուրքերը ժողովուրդը հնարաւորութիւն չունի վճարելու։ Եւ փոխանակ ներք. գործ. մինիստրութիւնը իր ծախսեր կրճատելու, ընդհակառակ քանիչորս միլիոն րուբլիով էլ աւելացրել է նախորդ տարւայ բիւջէին և այդ յատկապէս ոստիկանական պէտքերի համար։

Արդարադատութեան մինիստրութիւնը երկու միլիոն րուբլի աւելի է պահանջում այս տարի, որովհետև յեղափոխական, հողային շարժման, բանւորական քրէական դատավարութեան համար աւելանալու են դատավարութեան ծախսերը։

Ոստիկանութիւնը Քսանեւչորս միլիօն ր. է աւելացնում անցեալ տարւայ բիւջէին, իսկ ժողովուրդ լուս. մինիստրութիւնը ի՞նչ էք կարծում, որքան։

— Ընդամենը..... մի միլիոն րուբլի։

Մխիթարւ ենք գոնէ, որ ֆինանս է այս տարի կողոպուտներին ս պետական ժողովրդական խորհուրդն առաջիկայ տարւայ համար կէս միլիարդ կը յատկացնի ժողովրդ. լուս. համար, իսկ կէս միլիոն ոստիկանութեան։

Դժոխային օրերը շարունակւում են Անդրկովկասում։ Արարատի ստորոտից, Արաքսի ափերից մինչև Կասպից և Սև ծովերի ռուսկան սահմանները։ Այրւում է Քութայիսը, արեան հեղեղները հեղեղի նման յորդառատ ընթանում են Նախիջևանում, Սիւնեաց և Գուգարաց աշխարհներում, Արցախում։ Սով, քաղց, մերկութիւն ահա թէ ինչ է Անդրկովկասի վիճակն այսօր։

Բայց մի՞թէ միայն Անդրկովկասն է այս չառն վիճակի՞ մէջ։

Իսկ հին ռէժիմը շարունակւում է իր գործն աւելի մեծ եռանդով, ապացուցանելու համար՝ **արջի օրհասական կզօրագոյն կռիւը**։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Տարազի ներկայ №-ի հետ ուղարկում ենք պոստային փոխանակագիր. մեր բաժանորդներին, որոնք կը կամենային վերանորոգել իրանց բաժանորդագրութիւնը։ Մեր երկրում, ուր բանի ույժը աղաւաղել է մարդկային միտքը, ապականել սիրտը եւ խռովել հոգին, մեր դերը շատ է ծանր...

Հրաւիրում ենք նրանց, որոնք համամիտ են մեզ, *որ մարդու բարօրութիւն բերողը ինքնաճանաչութիւնն է*, որ ձեռք է բերւում ոչ բանի ույժով, այլ *խաղաղ կուլտուրական ճանապարհով*, աջակցեն մեր գործին, Աղբիւրը եւ Տարազը հայութեան բոլոր խաւերում տարածելով։

Փետրւարի 1-ից Տարազ բացառապէս կուղարկւի միմիայն նրանց, որոնք նորոգած կը լինեն իրանց բաժանորդագրութիւնը։

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

Գրաչարանոց կանանց «Զքնաղ» տպարան-դ բոցի։

Արագատիպ «Հերմէս» ընկ.

ԵՒՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ 5 ԿՈՊ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 r. (**արտասահմանի** 5 r.) **Տարազ**—6 r. (**արտասահմանի** 10 r.) **Աղբիւր-Տարազ**, *պրեմիաներով* 10 r. (**արտասահմանի** 18 r.) **Տարազ** *ամիսը* 50 *կ.* *առանձին* №-ը **երկու թերթից** 30 կ., **մի թերթից** 20 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով **Տարազի** *երեսի մի հինգերորդական տողը* **առաջին երես** 40 **կոպ վերջին երես** 25 **կ.** *մանրատառ* (**պըտիտ**) *Արտասահմանից* **կրկնակի**: *Զատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:*

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդւածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չտպւելիքը (երեք թերթից պակաս) չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի և ուրբաթ *առաւ. ժ.* 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. *տ.* № 5 *բաց է ամեն օր, (բացի կիրակի և տօն օրերից) առ.* 10¼ *ժ. մինչև* 2¼-*ը կէսօրից յետոյ: Հասցէն*
ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ
Rédaction du Journal
TARAZ
Caucase Tiflis

Գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, հճնաքստական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 3 *Կիրակի, յունւար* 22 *Տասնեւեօթներորդ տարի* 1906

Բացւած է ներկայ 1906 *թ. բաժանորդագրութիւնը*

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի *նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:*

Աղբիւրը *իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:*

ՏԱՐԱԶ

Տարազը **Աղբիւրի** *հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:*

Տարազը *ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտւած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքւած հայ անդամներ սնուցանել:*

XXIV *մանկական պատկերազարդ ամսագիր* XXIV *և* XVII *պատկերազարդ շաբաթաթերթի* XVII

Խնամիր նրանց, ինչպէս բարի գրուբեան ծոյր գեղանի

Արեան երգերից

—

Հայոց աղջի՛կ դուրս ե՛կ տնից—
Դնա՛ արեան դաշտերը,
Դեղուբեամբդ ոգևորի՛ր
Հայ քաջերի վաշտերը:

Արիւնաշաղ եղբայրներիդ
Վէրքերին դի՛ր սպեղանի,
Խնամի՛ր նրանց, ինչպէս բարի
Գրուբեան ծոյր գեղանի:

Երբ քո կռան վերայ մեռնի
Վիրաւորւած հայ քաջը,
Թո՛ղ զարդարի կուրծքդ նրա
Արեան կարմիր սուրբ խաչը…

Յարութիւն Թումանեան

— —

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ

—

Մեր ազգի ներկայ դրութիւնը ներկայացնում է մի սարսափելի ճգնաժամ՝ ամենուրեք ուր կայ հայ: Ռուսաստանի հայը չէ էլ կարողանում, իր ոյժերի համեմատ դիմադրութիւն ցոյց տալ թաթարների յարձակմունքներին, վայ է, թէ մի—երկուսով աւելին սպանեն՝ նրանց արշաւանքներին դիմադրելիս,—իսկոյն աղմուկ, նամակներ, հեռագրեր: Ո՞ւր: Պարսկաստան, Տաճկաստան, որոց հայերը մի տեսակ աւանդի դեր են կատարում Ռուսաստանի իրանց եղբայրակիցների համար: Այնպէս որ երեք կրակի մէջ են այրւում հայերը, երեք կրակով են նրանք շրջապատւած:

Դրութիւնը, ինչպէս տեսնում էք նախանձելի չէ և այս դրութեանը մենք պարտաւոր ենք իւրաքանչիւր

քաղաքական հոսքի առնել. քաղաքական տակտիկան, պէտք է գործողութիւնների առաջինը ընթանայ՝ գլուխը ձեռքերից և ոտքերից առաջ:

Դիպլոմատիական նախաձեռնութիւն այժմեան մթնոլորտում ոչ մի պետութիւնից չենք կարող մենք սպասել և կարծում ենք և աւելի, քան համոզուած ենք, որ և Միացեալ Նահանգների Նախագահ Ռուզւելտը, չընայելով այն պանծալի անուններին, որոնք գլխումն են արել Նրան միջամտել հայոց խնդրի մէջ չի վստահանայ այդ թեւակ մանել, որչափ և մեծ ընդունէր իր ոյժն այդ խնդրը:

Դիլաւոր խաչնդոտը այդ կէտում Ռուսիոյ ներկայ խառնակ դրութիւնն է, որի պատճառաւ Ռուզւելտը էակկայից ստիպուած չի դիմել Ռուսաստանին հայոց դատը միասին ներկայացնելու Հաագի խաղաղարարական Համաժողովին և ոչ էլ առանց Ռուսիոյ կատարւելի այդ:

Ռուսաստանի ներքին խաղաղութիւնը վերականգնելուց յետոյ, երբ հաւանական է տեղի ունենայ մի տարուց յետոյ, այո,—Ռուզւելտը կարող է միջամտել հայոց խնդրի լուծմանը, բայց մինչ այդ մենք պէտք է սպասենք.. տոկենք և դիմանանք:

Այդ հանգամանքն աւելի և լուրջ բարոյական պարտաւորութիւն է դնում մեր վրայ՝ չյուսահատ լինել և չափել ու կշռել իւրաքանչիւր մի քայլը: «Եօթը չափել—մէկ կտրել»—ահա մեր գործիչների նշանաբանը:

Հ.-Ն Դ-աս.

Մահգոյժ

—

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԳԷՕԶԵԱՆ

Յունուարի 15-ին յանկարծամահ եղաւ Թիֆլիսում ուսուցիչ և գրագէտ Յարութիւն Ղարագէօզեանը: Հանգուցեալն աւարտել է Պետերբուրգում ուսուցչական դպրոցը և 1890 թ.-ի վեր ուսուցչութիւն էր անում Թիֆլիսի գիմնազիաներում, աշխատակցում տեղական թերթերին: Նրա ուշագրաւ գրուածքը Սեւ քնեցիկ, որ տպւեց նախ Տարազում, ապա լոյս տեսաւ և առանձին գրքով, լաւ ընդունելութիւն գտաւ ընթերցողներից:

Հանգուցեալը գործնէութեան բաւական խանդ էր ցոյց տալիս: Ունէր գիշերօթիկ դպրոց մտածում էր վաղուց ԽՕՍՔ անունով մի օրագիր հրատարակելու: Սակայն Նրա Խօսքն օրհնս Միութեան անունով պիտի լոյս տեսնէր շատ համակրելի ուղղութեամբ և ծրագրով. բայց չը ծնւեց և երկունքի մէջ վախճանւեց Նրա ծնող Յարութիւն Ղարագէօզեանը:

Թիֆլիսում ուսուցչական կլուբի հիմնադիրը հանգուցեալն էր: Իբրև յուշարձան արձանագրենք հանգուցեալ ուսուցչի և գրագէտի օրագրի յայտարարութիւնը՝

ՄԻՈՒԹԻՒՆ

քաղաքական, հասարակական, տնտեսական եւ մանկավարժական

ԱՄԵՆՕՐԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԼՐԱԳԻՐ

«Միութիւն»-ը ծառայելու է հայ ազգի ժողովրդի և Նրա աղքատիկ իրաւազուրկ դասակների՝ այն է ուսուցիչների, գործակատարների, գիւղացիների, բանուորների և մշակների սրբազան շահերին, որոնց կցորդութիւնը պիտի լինի Նրանց մօտալուտ իրական ազատութեան գրաւականը: Ամենայն գաւառների, գիւղերի և հայ գաղութների հետ սերտ յարաբերութիւններ հաստատելը մեր մայր երկրի նկատմամբ «Միութեան» միակ խղձրն ու նպատակը պիտի լինի: Ուսուցիչները, գիւղական քահանաները ու գիտակ կարեւորութեամբ օժտուած անձինք «Միութեան» ցանկալի թղթակիցներն ու միակ կենդանի ոյժերն են լինելու իրենց ազատարար ուղղութեամբ և բարի աջակցութեամբ:

—

Վախճանւեց Յարութիւն Ղարագէօզեանը աղքատ դրութեան մէջ: Թաղումը կատարւում է այսօր. կիրակի, այսքան ուշ որովհետև միջոցներ էր որոնում Նրա մարմինը սև հողին յանձնելու համար:

—

Նահապետ – Թագաւոր
ՔՐԻՍՏԻԱՆ Թ.

—

Յունուարի 16 վախճանւեց աշխարհիս աւագագոյն վեհապետ Քրիստիան Թ. թագաւոր Դանիմարքի, որ եւրոպական համարեա բոլոր թագաւորական տների հետ շաղկապուած է ամենամօտ ազգականական կապերով: Հանգուցեալը իր անբիծ կենցաղով, անձնական վեհ յատկութիւններով սիրելի էր իր ժողովրդին, իսկ օտարերկրի թագաւորազունք իրանց հարսնացուներն այս անբիծ ընտանիքից էին առնում:

Հանգուցեալն ունէր 9 զաւակ. անդրանիկը, որ այժմ ժառանգեց գահը՝ Ֆրիդրիխ Ը, 2) Ալեքսանդրա՝ թագուհի Անգլիայի և կայսրուհի մեծ Բրիտանիայի, 3) Վիլհելմ՝ այժմս Յունաստանի թագաւոր Գէորգ Ա. 4) Դագմարա՝ ռուսաստանի Մայր կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա, 5) Տիրա՝ Կումբերլանդի դքսուհի, 6) Վոլդեմար: Վերջապէս Նորերս Նորվեգիայի Նորընտիր թագաւոր-Կարլը, Նրա թոռն է, իր գահաժառանգ Փրիդրիխի որդին: Քրիստիան IX ծնւեց 1818 թւին. 13 տարեկան էր, որ Հոլշտէյն—Սոնդերբուրգ—Գլիւկսբուրգի դուքսը, մեռաւ: Քրիստիանը մտաւ Բոննի համալսարանը և 24 տարեկան՝ ամուսնացաւ Դանիմարքի թագաւոր Քրիստիան VIII-ի եղբօր դուստր Լուիզի հետ, և երբ թագաւորը մեռաւ առանց արու ժառանգի և իշխանուհի Լուիզայի եղբայրը հրաժարւեց գահից, Նա ստացաւ իրաւունք Դանիմարքի գահի վրայ: Այս հարցում Քրիստիանին շատ օգնեց ռուսաց Նիկոլայ I կայսրը: Նա գահ բարձրացաւ 1863 թ. Նոյեմբերի 13 ին: Դժբախտաբար, այդ ժամանակ Դանիմարքը ճգնաժամի մէջ էր. բարձրացել էր Շլեզվիգի և Հոլշտէյնի հարցը. այդ երկիրները Դանիմարք համարում էր իր սեպհականութիւնը, բայց Պրուսիան և Աւստրիան միացեալ ոյժերով գրաւեցին Նրանց, որից առաջացաւ պատերազմը: Այդ պատերազմը անյաջող վերջացաւ և Դանիմարքը կորցրեց Շլեզվիգը, Հոլշտէյնը և Լաուէնբուրգը:

Մեր թղթակիցները

Շուշի 14 յունուարի

—

Հանգուցեալ Վօզրօժդ. լրագիրը միտք էր յայտնել, որ եկեղեցական-վանքական կալուածքներն առնելն հոգեւորականութեան ձեռքից և յանձնելն ժողովրդին-աշխարհականներին:

Թէպէտ մեր հոգեւորականութիւն և ժողովուրդ թէօրիայով մի են համարւում և հոգեւորականութիւն կաստա չէ համարւում առանձին շահերով, բայց իրօք բոլորովին էլ այդպէս չէ, ուստի յիշեալ լրագրի միտքը համակրելի է և ցանկալի իրագործել: Ահա այս երկուադով յիշեցնում ենք ընթերցողներին, որ այդ լաւ միտքը շատ վաղուց, անյայտ ժամանակներից, իրագործուած են կեանքի մէջ մեր խելքագոյն հայեր-Զօկերը, որոնք հայկական, ազգային, ինքնուրոյն քաղաքակրթութեան միակ նմուշներն են:

Հոգեւորականութիւնն է ժողովրդի համար և ոչ թէ ընդհակառակը, հոգեւորականութիւնն է պատկանում ժողովրդին և ոչ ընդհակառակն, հոգեւորականութիւնը չէ տէրը ժողովրդի, այլ ժողովուրդն է հոգեւորականութեան տէրը, ժողովուրդն է պահպանում հոգեւորականներին, որոնք Նրա պաշտօնեաներն են, հոգւոր ուսուցիչներն են. ինչպէս որ կան և մտաւոր, դպրոցական ուսուցիչներ. որոնք կախում ունեն ժողովրդից, կաստա չեն և ոչ սեպհականատէր: Ուրեմն որ հայ հոգեւորականութիւնը կաստա չէ, այլ ժողովրդի պաշտօնեայ-մշակ, ուստի և Նա սեպհականատէր չէ: Եկեղեցի, դպրոց, որոնք դրամագլուխներ են և կալուածքը պատկանում են ժողովրդին, ժողովուրդն է սեպհականատէր, Նրա ձեռքում պիտի լինեն կալքերը, Նա պէտք է Նրանց կառավարէ և արդիւնքից վարձատրէ իր հոգւոր և մտաւոր պաշտօնեաներին-մշակներին՝ հոգեւորականներին, ուսուցիչներին և պէտք է պահպանէ հաստատութիւնները, եկեղեցիները, դպրոցները, Մամուլը, Գրականութիւնը, Թատրոնը և այլն և այլն:

Այդ վերջերեալները գլխովին ու շատ յաջողութեամբ՝ իրագործուած է Ագուլիսում: Այնտեղ հռչակաւոր Ս. Թովմայի վանքի և միւս հրաշալի եկեղեցիների կալքերը բացարձակ գտնւում են ժողովրդից ընտրուած հոգաբարձութեան ձեռքին, հոգաբարձութեան կազմի մէջ կարող է լինել մի հոգեւորական ներկայացուցիչ: Հոգաբարձութիւնն է կառավարում կալուածները, և շահագործում դրամագլուխները, հոգեւորականներին և ուսուցիչներին ռոճիկ տալիս, ծաղկած դրութեան մէջ է պահպանում եկեղեցիները, վանքը, դպրոցները և շէնքերը. այդ բոլորը օրինակելի և նախանձելի դրութեան մէջ են: Տեսնողը բացականչում է, երանի այս սարք ու կարգի կէսի կէսը տիրապետէր—էջմիածնում և այլ տեղեր..

Դրա համար շատ ցանկալի էր լաւ ուսումնասիրելու Ագուլիսի ազգային կալուածների կառավարելու եղանակը, որ հրահանգ դառնար բոլոր ազգին. շատ անհրաժեշտ է մի մեծ, պատկերազարդ

ԵՐԿՈՒ ԿԻՍԱԳՆԴԵՐԻ ԱԳԱՐԱԿԱՏԻՐՈՋ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐԸ

(Ռուսեր. նից)

—

Սեպտեմբերի 17-ն է: Արեգակի տակ 18°ց է: Զգում եմ աշնանային սքանչելի բուրմունքը և տեսնում եմ, որ բնութիւնը պատրաստւում է փոխուել: Երկինքը միշտ կապուտակ է: Տաքուկ է, չոր է... բայց չկարծէք ընթերցողը թէ ես գտնւում եմ Կալիֆորնիայում, ոչ... իմ նկարագրած օրհնութիւնը Խարկով նահանգումն է: Կալիֆորնիայում այժմ 50° է բաւ Ցելսիուսի և այնտեղ արեգակի տակ երեք օրուայ ընթացքում են դեղձը ու ֆրանսիական սալորը, որպէս թէ չորացուցիչ գործիքի կրակի ազդեցութեան ենթարկուէին: Ան տեղ այժմ շոգ ու տապ է: Ով որ Կալիֆորնիայ չի եղել, նա կարծում է, թէ այն աւետաց երկիր է, բայց ես աւելի հաւանում եմ Խարկովի կլիման: Ճշմարիտ է, այստեղ ձմեռը խիստ է, և ձմեռուայ կարճ օրերին մարդս ստիպւում է այնպէս քնել, ինչպէս և մկնարջը. դեռ միայն իրա հագ՛ն մուշտակ—պօլուշուբօկը—մի փութ ծանրութիւն կը լինի, իսկ ոտնամանները... բայց այժմ սքանչելի է: Առաւօտեան արշալուսին դուրս կը գաս, ականջ կը դնես, և ահա չինականի սայլ է ճռընչում ու այդ բարձած ճակնդեղ՝ է որ ձիերը քաշում են նախա-պատմական ճանապարհով դէպի շաքարի գործարանը ... Թերևս մեր կլիման հազար անգամ էլ լաւ լինի Կալիֆորնիայից, սակայն ճանապարհները, մեր ճանապարհները... Ասում են թէ հաղորդակցութեան ճանապարհները մի ազգի քաղաքակրթութեան չափն են ցոյց տալիս... Ոչ, մի ուրիշ չափով չափեցէք, ապա թէ ոչ, մենք մեր գիւղական արհեստներով դարերի խորքերում պիտի կորչենք—զօրօր. 19-դ դարում Կալիֆորնիայում ինքս երկու ձիով քաշել եմ 120 փութ, իսկ այստեղի չափը 25 փութ է մի ձիու վրայ... Գրեթէ երկու և կէս անգամ պակաս է անում: Դէ, հիմի խօսեցէք ազգային հարստութեան գանձման մասին...

Սատամը հիմի պէտք է պարզ լինի, թէ ինչու Միացեալ Նահանգներում մշակը օրական ստանում է 3 րուբլի 10 ժամուայ համար, իսկ այստեղ Նա 12—15 ժամուայ համար՝ 30 կոպէկ: Եւ երկու ազգերի հարստութեան լուսաւորութիւն կարող է լինել ամերիկական և ռուս ագարակատիրոջ կահույքի ցուցակը: Ամերիկայի ագարակատէրն ունի և՝ խոտահունձ մեքենայ, և արօր, և երկաթէ ցաքան, և սերմնացան..., Իսկ ռուս երկրագործը—էհ, աւելի լաւ է, էլ չխօսենք Նորա մասին—Նա այդէն ամենայն բան ունի, որովհետեւ Նորա համար հոգս է քաշում իրա ինտելիգենցիան, որ բիւրոկրատիայի ահագին բանակ է ստեղծել: Ամերիկայի ագարակատէրը մշակում է 30—50 դեսետին, իսկ ռուս երկրագործը 3—10: Ահա և բացատրութիւն, թէ ինչու ռուսաց հացը միջազգային շուկայում չի կարողանում մրցել ամերիկականի հետ, թէպէտ մշակի վարձը և ցորենի բնական յատկութիւնները ռուսաց հացի կողմն է:

Արդարև, մեծ տարբերութիւն կայ այս երկու ագարակատէրերի մէջ: Ամերիկական ագարակատէրը օրէնք անուշ է անում, այո, անուշ է անում, ճաշակում, վայելում և ոչ թէ ստում է, որովհետև սեղանին ունի և՝ դանակ, և՝ պատառաքաղ, և՝ անձեռոց, և մաքուր ափսէ,—անուշ է անում մեն երկու անգամ, իսկ ռուս ագարակատէրը... Մինչև իսկ չեմ էլ լսել, որ Նա տարէնը աւելի քան երկու անգամ միս տեսնելիս լինի... Եւ նոյն իսկ Զատկին, Ծննդեան տօնին, երբ որ մսին հանդիպում է երես առ երես, քանի որ իւր ստամոքսը անվարժ է այդպիսի կերակրին, Նա ու կերամոլութեան հիւանդութիւններով մեծամեծ հոգսեր է պատճառում հեքիմներին: Ամերիկական ագարակատէրը հաւ է պահում, որպէս զի զաւակների համար ուտելու ձու ունենայ իսկ ռուս երկրագործը հաւեր ունի, որպէս զի կինը ձու տանի քաղաք ծախելու, իսկ

հասար Նէկրուի Ազուլիսին, ուր արձանագրւին Նրա զարմանալի և օրհնակելի բարքերը, սովորութիւնները, սարք ու կարգերը, Նիստ ու կացը, ուտել-խմելը, տարազը, հասարակական կեանքը, կազմակերպութիւնը և հանրական հաստատութիւնները, մշակութիւնը: Մի խօսքով ամբողջ Նրանց ինքնուրոյն կուլտուրան: Այդ շատ կարևոր է, մանաւանդ, Նրա համար, որ ամենածախ ժամանակը շատ բան ջնջում է, թող ուսեալ, հաւաստ զօկերն այդ անեն:

Ա.

Մամուլի շուրջը

—

Չը նայած, որ հինաւուրց պաշտօնական Կաւկազ լրագիրը հնութեան փոշին թափ էր տւել և նորից կարդալով հին բիւրօկրատական գաւառնանքին սահմանադրական-ռամկավարի պատմուճան հագել, այնու ամենայնիւ. *երևի դեռ իներցիայի ուժից*, չի կարողանում ազատւել բիւրօկրատական հարստահարութիւններից, թէ հարտութիւնից: Ձեզ հաւաստում. ձեռք բերէք Կաւկազ, յունուարի 15-ի № 11-ը իր յաւելւածով՝

Տեղեկագիր մերժների եւ ռուսաստանի ուսուցիչների, ազրանիկների տեղափոխութեան եւ այլն, հաստատուած դեկտեմբեր ամսւոյ համար թիֆ. նահանգապետից:

Ո՛ւմ համար է յայտարարւում դեկտեմբերի Տեղեկատւուն յունուարի կիսին: Անշուշտ կառավարութիւնների և ինտենդանտների համար, որոնք այնքան փառաւոր ապացուցեցին Մանջուրիայում իրանց *անշահասէր* կանոնաւոր ծառայութիւնը հայրենիքին·

Պաշտօնական նոյն Կաւկազը նոյն համարում չբաւեց ձեռնոլով մեր երկրում կատարւող դժոխային ոճրագործութիւնները, հարցնում է՝

„Փոխարքայի մօտ կազմւող խորհրդակցութիւնը ինչ միջոցներ պէտք է ձեռք առնի: Բաւականանալու է նա միայնտեսական միջոցներով, ինչպէս դժբաղդաբար մինչև օրս, յանձնաժողովներ կազմելով, թէ դրական, գործնական միջոցների է դիմելու:"

Որովհետև այդ խորհրդակցութիւնը յետաձգւեց Թուրքերի պատգամաւոր չուղարկելու պատճառով ուստի աւելորդ չենք համարում ապագա փաստերներով ցցնուած Կաւկազին ասել, և ասել ամենայն անկեղծութեամբ. բաւական է, որքան կոտորեցին հայերին, աւերեցին Նրա ինչքն ու գոյքը:

Մենք սկզբից գուշակում էինք եղբայրական (Յուդայի) համբոյրները, եկեղեցական թափորները, Աւետարանի և Ղուրանի եղբայրակցութիւնը:

Այժմ՝ էլ պահանջում ենք, որ կամ կառավարութիւնը ինքը պաշտպանէ իր հայ հպատակներին և կամ թէ թոյլ տայ, որ Նրանք իրանց պաշտպանեն:

Աչքակապուկ երեխաները են միայն խաղում...

Հայերին կոտորել, հայ գիւղերն աւերել և մոխիր դարձնել ու ապա հայերի անմեղութիւնը հաստատել և չարաթը մի գեներալ-նահանգապետ փոխել, նորից կրկնել ոճրագործութիւնը և կրկին փոխել գեներալ նահանգապետին, այդ ինչ դժոխային ծաղր է, որ սարքւել է մեր հայրենիքում:

* *

Լոյս տեսաւ Յառաջ օրաթերթը յունուարի 17-ին, որն իր պարտքն է համարում ստանձնել հայի պաշտպանութեան դատն առելով

Ամեն տեղ հայ, տառապում և դժոխք է դառել Նրա կեանքը. շարունակել ապրել այդպէս՝ այլ ևս անկարելի է:

Բաւական է, պէտք է կտրել հայի տառապանքի հանգոյցը և լուծում տալ այն հիմնական խնդիրներին, որոնք բղխում են ներկայ լուրջ դրութիւնից:

Հայ ժողովրդի գոյութեան ապահովութեան խնդրում «Յառաջը» համարձակ կանգնի պաշտպան հանդիսանալու հայութեան, իսկ քաղաքական և տնտեսական խնդիրներում՝ պաշտպան և բերան ժողովրդի աշխատաւոր մասայի:

Մռայլ է և դաժան հայի դառն իրականութիւնը, բայց ոչ յուսահատական:

«Յառաջը» խորին հաւատով և համոզմունքով դէպի քո արդար դատի վերջնական յաղթանակը, կոչում է քեզ աշխատաւոր ժողովուրդ—յառա՛ջ առա՛ջ...

Յառաջը թողնում է տպաւորութիւն և կազմւած է դրական լաւ ուժերից: Յանկանում ենք, որ կուսակցութիւնը խմաստութեամբ ղեկավարի իր օրգանը և փաստօրէն ապացուցանէ, որ հայը ռուս պետութեան և ժողովրդին բարեկամ է եղել, է և կը մնայ յաւիտեան, եթէ միայն չը յօշոտեն հային թէ բարոյապէս և թէ ֆիզիքապէս:

**

Ընկերի №2-ը նոյնպէս կարդացւում է հետաքրքրութեամբ: Այս համարից աւելի որոշ երեւում է Ընկերի բռնելիք ուղղութիւնը: Աւետարանից բերելով Յիսուսի առածը...

«Եթէ ուղտը ասեղի ծակով անցնի, հարուստն էլ երկինք կը գնայ.

Աղւէսները որջ ունեն, թռչունները բոյն, իսկ Որդին Մարդոյ գլուխը դնելու տեղ չունի:

Այդ երկու նախադասութիւնը, գոնէ մեզ համար, բաւական են համոզելու, որ Ընկերը լինելու է մի անշահասէր գրական բանւոր, Յիսուսի աւետարանը ընդունելով հիմք իր տարբերութեան:

Յառաջի № 2 կարդում ենք՝

—

„Ընթերցողների ուշադրութիւնն ենք դարձնում **Մշակում** *տպւող Պատճառներ և հետևանքներ խորագրով յօդւածի վրայ, որն արտատպութիւն է* **Դրօշակից**:"

Բրաւօ. ճարպիկ կերպով է գցում Յառաջը ձեռնոցը Մշակին... միևնոյն ժամանակ աջող յանձնարարութիւն ռուսահայ ընթերցողներին Դրօշակում տպւած յօդւածների մասին:

Նոյն Յառաջի № 4ում մատնացոյց է արւած թէ Մշակն ինչպէս է այժմս իր ազգանքը զովում և ասում է:

«Անցյ փառաց անցաւորի»...Երմատական «էւօլիւնիստ» պ. Ջահրյար **Մշակը** *շատ է ուշացել և, այժմ իզուր կլինեն Նրա ջանքերը «թափ տալ հնութեան փոշին». Նախկին «***Լրօապկանների***» մէջ էլ էւօլիւցիա կատարեց, պարոն էւլիւցիօնիստ, և Նրանցից շատերին բաժանում է ձեզնից այնպիսի վիհ, որը չէ կարելի լցնել նոյն իսկ ամենակատաղի մատական փրակցիաների ծրագրներով:*

Այ քան չաւ. գեւ. Խաժակի, Ահարոնեանի, Թովչեանի կոչիկների փոշին չը սրբւած Մշակի օջաղի յառակներից (չասենք Համլէտի խօսքերը հողաթերը մաշած) այդպէս երես են դարձնում Նրանից: Ո՛ւր էրուբեմն պարոններ, ձեր համախոհ լինելը· էլ ինչու էիք մեզ տարիներով հալածում. որովհետև երբէք արդարութեանն ու ճշմարտութեանը մենք դաւ չը բերինք, և ոչ մի կողմ, ամիս չարինք: Սպասենք դեռ, մինչև ձեր բերանով ամեն ինչ խոստովանէք:

— —

Թոյլատրւած են Թիֆլիսում հրատարակելու Տ. Գիտ ա. ք. Աղանեանցի դստեր օր. Նւարդին ամենօրեայ լրագիր հայերէն լեզւով, շաբաթական յաւելւածով Հորիզոն անունով: Եւ Աղէքսանդր Երիցեանի որդի Նկարիչ Գարեգինին՝ երգիծաբանական թերթ Կուկարեկու անունով: Բացի սրանց մի շարք նոր պարբերական թերթերի թոյլատւութիւն են ուզում մարդիկ, որոնցից շատ շատերի անունն իսկ ծանօթ չէ մեզ: Եւ մինչդեռ նորերը փափագում են ձեռք բերել լրագրների իրաւունքներ, եղածները չը գիտեն թէ ինչ հնարով և միջոցներով պիտի շարունակեն: Շատ անվստահ հանգամանքներում մեծացրին Մշակը և Նոր—Դարը իրանց գները: Ոյժերը ջլատւում են, բաժան-բաժան լինում և եղածներին սպառնում է վտանգ: Այս հանգամանքները նկատի առնելով մենք ձեռնպահ ենք մնում, թէև ունենք ամեն պատրաստութիւն, սկսել այս տարւան օրերում Դեղափնջիկը, Աւտոմոբիլը, Իլլուստրացիան:

Դադարել Է ռուսերէն լեզւով պ. Ալէքսանդր Քալանթարի խմբագրութեամբ լոյս տեսնող Գիւղատնտեսական Թերթը, որ Կովկ. գիւղատն. ընկ. օրգանն էր:

Դադարել է և հինաւուրց Իվէրիա վրաց լրագիրը, որ վերջին ամիսներս շատ մեծացրել էր գները:

Խմբագրութիւնից

—

Այբիւրի յունուարի №—ը և Տարազ փետրուարից կուղարկւին բացառապէս Նրանց, որոնք վերանորոգել են իրանց բաժանորդագրութիւնը:

եթէ քաղաքը հեռու է, բարեխիղճ վաճառականներն անձամբ գիւղ են գալիս առնելու Գերմանիա, Անգլիա ուղարկելու համար... Անշուշտ շատ պատուաւոր և հրաշալի բան է երբ որ առևտրական հաշւեկշիռը ցոյց է տալիս 300 մլ. րուբլ էլ ինչ երկարացնենք, բայց այն էլ աւելորդ բան չէ, երբեմն երբեմն գիւղացու երեխան էլ ձու ուտի ոչ միայն կարմիր ներկուած ժամանակ: Տարեկան արտահանման է գնում ինը միլիոն փութ ձու: Միացեալ Նահանգներում խոշոր ագարակներ կան, ուր որ հաւ են պահում ձու ածելու համար, իսկ Ռուսաստանում այդպիսի ագարակների մասին ձայն չի լսւում, ապա ուրեմն պարզ յայտնի է, որ այնքան ձու տանտիկիններն իրանց զաւակների բերանից են կտրում—և ձուի արտահանութիւնից գոյացած 35 մլ. րուբլի փաստը—մանուկների դրամն է: Ռուսաստանում դպրոցական հասակի մանուկները 30 մլ. մարդուց աւելի են, իսկ դպրոց յաճախողների թիւը 4 միլիոնի չափ է: Այն ինչ Միացեալ Նահանգներում 73 միլիոն ժողովուրդը 16 միլիոն մանուկ է ուղարկում դպրոց, այսինքն—23 առ հարիւր: Ուրեմն, Ռուսաստանում 30 միլիոնից աւելի մանուկ կայ, և ձուի արտահանութիւնը փաստակ է տալիս 35 մլ. րուբլի, այսինքն՝ ամեն մի մանուկի վրայ նիւթական հարկ է ծանրացած 1 րուբլի արժած արժողութեամբ յօգուտ գերմանական և անգլիական մանուկների: Եթէ այդքան ձու փոր տեղը մնար, ռուս մանուկը չորս ամբողջ ամիս օրենը մի մի ձու նախաճաշին կուտէր:

—Սակայն, որպէս զի ձեզ ամէնուեն ուտում արտի, պէտք է ծախք աւելացնել ոչ թէ 35 մլ. րուբլի, մեր այժմեան ծախսած 32 միլիոնի վրայ, այլ անհամեմատ աւելի, այն է՝ 700 մլ., այսինքն աւելի քան 20 անգամ: Միացեալ Նահանգներում մարդագլուխ 4 ր.50 կ. է գալիս ազգային կրթութեան համար, իսկ Ռուսաստանում 20 կ. է, այնպէս որ ձեր սովի յանձնառութիւնն էլ չի օգնի, այ մանուկներ:

Նոյն է ասւում Նաև կովի համար. կաթ, մածուն, պանիր, եղ, բոլորը դուրս է գնում գիւղից, իսկ գիւղի համար մնում է դատարկ կերակրող կովի խնամատարութեան պօէզիան և... աղբը: Գիւղական տնտեսութեան հայեցակէտն այս բանի մէջ էլ յառաջադիմութիւն է գտնում—ի՛նչ ապաքէն աղբը հող պարարտացնող է: Հարկաւ, գեղեցիկ բան է ընկերի հետ կիսել քրտինքի պտուղները, և քրիստոնէական բարոյականութիւնն ամենամեծ սիրով նշան է տեսնում, որ մեր գիւղացին ստարին տալիս է իւր բոլոր ունեցածը: Բայց, այլ հայեցակէտ էլ կայ, որ այդ բանում տեսնում է գերութիւն. հաստատում է, թէ այդ գիւղացիական-վիպասանական ժողովրդից այլասերութեամբ գոյացել է վերտիտ գեղջուկ. որի երեւակայութիւնն այն աստիճան ցամաքել է, որ պապական գերանդին ու գութանը, որոնց 1000-ամեայ արձան կանգնեցրին Նովգորոդում, —այսօր էս իւր տնտեսութեան հիմքն է կազմում, և աւելի բան չի ստեղծագործում: Բայց աւաղ, այս ժողովուրդն անպայման հզօր, կարող, ստեղծող ժողովուրդ է:

Ցաւն այն է, որ Նորա ստեղծողական շնորհքը հիւանդական ձևեր է ստանում: Որովհետև Նախաճաշին ոչ ձու ունի, ոչ կաթ և ոչ իւղ, նա սկսեց հարւում գործ ածել հացը շաքարի աւազով կամ օշարակով: Երմշկական գիտութիւնով ապացուցանել է շաքարի շատ սննդարարութիւնը: Գիտութեան արդիւնքները ստակւին գիւղացուն չին հասել և ոչ էլ շուտ կը հասնեն, որովհետև շատ քիչ է գրագէտների թիւը աւելի ևս կրթուածների թիւը: Մինչդեռ ամերիկացիք պնդում են, թէ յոկ միայն գրագիտութիւնը ազգի բարեկեցութիւնը 25 տոկոսով բարձրացնում է: Ռուսաստանում ժողովրդեան 83,5 առ հարիւր գաղափար անգամ չունեն այբբենի գոյութեան մասին: Միացեալ Նահանգների թւերը այս են—Նոցա մէջ 99 առ հարիւր լուսաւորւած են, այսինքն գիտեն ընթերցանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն և այլ ուսմունքներ, որ մեր համաքաղաքացիներից շատ շատերին անունն անգամ յայտնի չէ: Այս հանգամանքի շնորհով, մի դեսատին հողը ռուս երկրագործին տալիս է ընդամէնը 38,8 փութ, մինչդեռ Նորա պաշտօնակիցն Անգլիայում ստանում է 123,4 փութ, Բելգիայում 128,5 փութ, նոյն իսկ Ճապոնիայում 115,7 փութ, Միացեալ Նահանգներում 83,2 փութ: Եւ ռուսը այս բանից չի էլ շփոթւում. հաճնձի պակասը նա լրացնում է իւր քաղցած փորով, իսկ սննդեան այդպիսի վատթարանալը նուազում է ժողովրդեան աշխատելու կարողութիւնը:

Ուրեմն, գիտութեան հետևանքները շուտ չին հասնի ռուս երկրագործին, բայց կեանքը շատ չի սպասում և երկրագործն էլ այնու ամենայնիւ մի մարդ է. նա վճռեց եզրակացութիւնները ստանալ փորձառութեամբ, եթէ ներելի է ասել, իւր սեփական ստամոքսի գործածութեամբ, և ահա Նորա փորձի իմաստութիւնը—«շաքար ցանած հացը *ղուավմով* է. լաւին որ *գախրաւմ* անես, մինչև ճաշը կուշտ փորով կը լինես» Ս. Մ.

Գր. շարունակի



Մինաս Չերազ

Ազգային-քաղաքական գործիչ, խմբագիր Արմէնի լրագրի և հայ ազգի կողմից պատգամաւոր. անդամ Բեռլինի վեհաժողովի:

Կեանքի սարը

Ահա մեր առաջ կանգնած Գողգոթան
Հսկայ գագաթով երկինք է հասնում.
Ծանր է մեր խաչը, մութ մեր ապագան,
Աւա՜ղ, մեր ուղին վաղուց չենք տեսնում:
Մռայլ գագաթից այստեղ, լանջի մօտ
Թափւում են շանթեր, լսւում է որոտ
Սեւամած երկնի կնճռոտ ճակատով
Կայծակն է թռչում բոցավառ լուսով
Եւ նման է այդ չարախինդ ժպտին,
Որով հեգնում են անարգ վախկոտին:

Ընկերնե՛ր, անվախ. միայն անվեհեր
Հոգին է կարող թռչել դէպի վեր.
Իսկ նա, որ չունի զօրավիգ հաւատ,
Կըմնայ անշարժ, լքւած, յուսահատ:
Շարժումն է կեանքի նշանն ու դրդիչ
Ով որ շարժւում է, նա քաջ է, կտրիճ:
Ելնենք միասին, շարժւենք անվեհեր,
Մեր խաչը վերցրած՝ գնանք դէպի վեր:
Ամօ՛թ այն մարդուն, որ կը թուլանայ
Նզովքը նրան բաժին կըմնայ:

Մեծ-մեծ հարուածներ կեանքում ստացանք.
Երբ չթափենք վերջին ճիգ ու ջանք,
Կորած ենք աւա՜ղ, կորած յաւիտեան.
Ամօ՛թ, նախատինք բոլորիս անուան:
Բայց նորոգ կեանքի շողին հաւատանք,
Թէ ո՛չ. յուսացէ՛ք, կըգտնենք փրկանք,
Շարժուենք. հա՜, շարժուենք, լերան գագաթում
Ամպերի յետեւ արեւն է ժպտում:
Անէ՛ծք այն մարդուն, որ կըթուլանայ,
Նզովքը նրան բաժին կըմնայ:

Դուք չվախենաք կայծակից, շանթից,
Ահարկու լերան ահեղ գագաթից.
Միտքը թռիչքով տիեզերքն է չափում.
Ով վեհ է հոգով, նա չի սարսափում.
Հաւատի ուժով շարժւում են սարեր,
Սրտի ջերմութեամբ հալւում են քարեր.
Սիրով է յաղթւում նենգաւոր հոգին,
Սէրն է ներշնչում եռանդը կեանքին:
Ելնե՛նք միասին, շարժուե՛նք անվեհեր,
Ճեղքե՛նք ամպերը, թռչենք դէպի վեր...

Յարութիւն Պետրոսեան

Կեանքի առաջ

(Մակ. Գորկի.)

Խոժոռ դէմքով ճակատի կնճիռները կուտակած կեանքի դէմ կանգնած էին երկու մարդ, երկուսն էլ հիւծւած, երկուսն էլ դժգոհ նրանից: Եւ կեանքի այն հարցին, թէ ի՞նչ էք սպասում ինձնից, նոցանից մէկը խռպոտ ձայնով պատասխանեց.—Ես սաստիկ վրդովւած եմ քո հակասութիւնների խըստութեամբ, իմ բանականութիւնը տենչում է հասկանալ մեր գոյութեան էութիւնը և իմ հոգին պատած անհասկացողութեան թանձր թուխպով կանգնած է այս բոլորի առաջին: Իմ ինքնագիտակցութիւնը ասում է ինձ, որ մարդ բոլոր արարածներից ամենաընտիրն է, այն ինչ ես անբաղդ եմ. ինչի՞ց է սա:

— Ի՞նչ ես ուզում դու ինձանից, սառնութեամբ հարցրեց կեանքը:

— Բաղդաւորութիւն, ինձ բաղդաւորացնելու համար անհրաժեշտ է, որ դու հաշտեցնես իմ հոգու երկու հիմնական հակասութիւնները՝ «ուզում եմ» քո «պարտականեմ»-ի հետ:

—Ուզի՛ր այն, ինչ որ պարտական ես ինձ համար անելու, պատասխանեց խիստ ձայնով կեանքը: — Ես չեմ ուզում քո զոհը լինել, գոռաց մարդը, ես ուզում եմ կեանքի լիազօրը լինել, այն ինչ պարտական եմ խոնարհել իմ գլուխը նրա օրէնքների լծան առաջ, ինչու է սա:

—Պարզ խօսեցէք, ասաց ընկերոջը, միւսը, որ կեանքին աւելի մօտ էր կանգնած: —Ես ուզում եմ ազատութիւն, ուզում եմ ապրել իմ ցանկութիւնների ողջ ներդաշնակութեամբ. ինձ մօտիկի հետ ես չեմ ուզում պարտքի զգացմունքով լինել ո՛չ եղբայր, ո՛չ էլ ծառայ, այլ կըլինեմ այն, ինչ որ ազատ ցանկանումեմ՝ կամ ստրուկ կամ եղբայր: Ես չեմ ուզում ապրել որպէս քար, որին հասարակութիւնը դնում է այնտեղ, որտեղ իր կամքն է թելադրում, կազմելով իր բարեկեցութեան բանտերը: Ես մարդ եմ, ոգի և կեանքի բանականութիւնը. ուստի անհրաժեշտ է, որ ազատ լինեմ:

— Կանգնի՛ր,—ասաց կեանքը հեգնական ծիծաղով,—դու շատ խօսեցիր և այն ամենը, ինչ որ դու սրանից այն կողմ ասելու ես, յայտնի է ինձ: Դու շատ բան ասացիր մեզ, բայց ինչ, եղի՛ր ուժեղ. կռուի՛ր ինձ հետ, յաղթի՛ր և դարձի՛ր իմ տէրը, իսկ ես կըլինեմ քո ստրուկը: Քեզ յայտնի է արդէն, որ ես սաստիկ անձիրք եմ և հեշտութեամբ անձնատուր եմ լինում յաղթողներին. բայց միմիայն պէտք է յաղթել: Դու ընդունա՞կ ես յանուն քո ազատութեան ինձ հետ կռուելու, այո՞. քո ուժը բաւակա՞ն է յաղթելու համար, համոզւա՞ծ ես...

Մարդը պատասխանեց տրտմաձայն.

— Դու ինձ մաքառել, կռուել տուիր իմ անձնաւորութեան հետ, դու սրելով իմ բանականութիւնը, դարձրիր սուր դանակ, որ մտաւ իմ հոգու խորքը և սուզւելով խոր խոցեց ու կտրատեց նրան:

— Դուք նրա հետ զգոյշ խօսեցէք, վրաբերեց միւսը խօսողին:

Իսկ առաջինը շարունակեց.—Ես ուզում եմ ազատւել քո ճնշումից, ո՛, թոյլ տո՛ւր ինձ ճաշակել բաղդաւորութիւնից:

Կեանքը էլի ծիծաղեց և այդ ծիծաղը նման էր սառոյցի փայլի:

—Այժմ ասա ինձ, դո՛ւ, որ ինձ հետ խօսում ես, խնդրո՞ւմ ես, թէ՞ պահանջում:

—Խնդրում եմ, արձագանքի նման լսւեց մարդու ձայնը:

—Դու սովորութիւն դարձրած աղքատի նման բարձրաձայն խնդրում ես, բայց, թշւառական իմ, պարտական եմ քեզ ասել, որ կեանքը ողորմութիւն չի տալիս: Եւ գիտե՞ս դու ինչ. ազատ

Մոսկւա. Պետրոս մեծի պալատ, Խոդինի դաշտից նկարւած.

Շինութիւնը սկսւած է 1776 թ. գոթիկական ճարտարապետութիւն, միջնադարեան ասպետական ամրոցների նման գմբեթներով: 270 տարի առաջ միացած է եղել Խոդինի դաշտի հետ անտառով, ուր ինքնակոչ Թուշինի աւազակից ռուսները պաշտպանւել են: 1812 թ. երբ Մոսկւան հրդեհեցին, Նապոլէոնը այստեղ ապաստանեց: Ապա նա հեռանալով այստեղից, քարուքանդ արաւ և կրակին լափ տւաւ: Նիկոլայ Ա. վերանորոգեց հիմնովին Պետրոսեան պալատը, որն այժմ Նիկոլայ Բ. Կայսեր օրով ժողովրդական ապստամբութեանը ծառայեց:

Լուիզ Թագուհի Դանմարքի

Վախճանուել է 1898 թ. սեպտեմբ. 29-ին: Ծնուել է 1817 թ. սեպտ. 7-ին

ՄԱՆՐՈՒՆՔ

Առաջ ես կարող էի մտքմունքի մէջ ընկնել, աղօթել. կարող էի բաղդաւորութեան ձգտել, կեանքը ինձ մոռացնել տալ այդ ամէնը, սակայն տանջել սովորեցրեց: Ես տանջանքի և տխրութեան հետ հարազատ եմ դարձել. Նրանք իմ մշտական ընկերներն են. Նրանք իմ ամբողջ կեանքը թունաւորել են, սակայն սիրել են սովորեցրել...

Եւ թող վերջը իմ կուրծքը պատռէ, թող արցունքները խեղդեն ինձ, սակայն ոչ մի բան և ոչ ոք չի կարող հանգցնել իմ մէջ սուրբ կրակի կայծը...

Ոգևորութեան ուժեղ հրեղհով կը բռնկւեն իմ ոյժերը... Ես կայրեմ այդ ոյժերը մարդկային վշտի համար, Սիրոյ մեծ գործի համար...

Այսօր գեռ կոկոն է, իսկ ամուսնացած երիտասարդ կինը՝ բացուած վարդ: Իրաւ, օրիորդի բուրմունքը ծածկուած է թերթիկների տակ, նրա գեղեցկութիւնները ջերմ չնչի են կարօտ փայլելու համար: Իսկ երիտասարդ կինը փայլուն ծաղիկ է, որ բացւում է իր ամուսնու քնքոյշ փայփայանքների ու փաղաքշանքների տակ, ամուսնու, որը իրանից արձակում է սիրոյ ղքանչելի բուրմունք և երջանկութեան հրաշալի ճառագայթներ: Դեռ օրիորդ ժամանակ նա զգում էր, թէ ինչ պէտք է լինի. նա զգում էր, որ պէտք է փայլէ իր գեղեցկութեան ամբողջ փայլով:

Սէրը մարդկային գոյութեան սկիզբը ու վերջը կազմող էական տարրը է, այն անշէջ կրակը, առանց որի ամէն բան մեռած է: Կինը նոյն սէրն է, բայց ամենարնդարձակ մտքով: Անսահման է, մանաւանդ իր դուռը, նրա սէրը դէպի այդ փոքրիկ էակը, Ամուրի այդ պատճէնը, այն փոքրիկ, չարաճճի աստծու պատճէնը, որի նետերը և միշտ են, և՝ թունաւոր—չէ՞ որ այդ քնքուշիկ ռուսրկան է մայրահաս մօր ոսկէ երազների առարկան: Ամուրի գեռափթիթ օրիորդներին արձակում է իր սիրոյ նետերը, իսկ մատղաշ, երջանիկ ու սիրող մօր շրթունքներին միայն իր մանկական համբոյրն է դրոշմում:

մարդը ողորմութիւն չի խնդրի, այլ նա ինքը կըխլէ իմ բարիքները... Իսկ դու... Դու քո ցանկութիւնների ստրուկն ես միմիայն, ուրիշ-ոչինչ: Ազատ է միմիայն նա, որ յանուն իր ապագայի յաղթութեան պատրաստ է իրան հրաժարել ամէն բանից: Այժմ հասկացա՞ր, գէհ հեռացիր:

Մարդը հասկացաւ և չան նման ընկաւ անկիրք կեանքի ոտները, որպէսզի կամացուկ հաւաքէ նրա սեղանի փշրանքը և ճաշի մնացորդները:

Ապա կեանքը իր գժգոյն և խստահայեաց աչքերը յառեց միւս մարդու վրայ որի դէմքի արտայայտութիւնը աւելի կոպիտ և չար էր:

— Իսկ դու ինչ ես խնդրում ինձանից:

— Ես չեմ խնդրում, այլ պահանջում եմ:

— Ի՞նչ:

— Ո՞րտեղ է արդարութիւնը, տո՛ւր ինձ, մնացա՛ծը բոլորը յետոյ ես ինքս կառնեմ, իսկ առ այժմ ինձ պէտք է միմիայն Արդարութիւնը: Երկար սպասեցի ու համբերեցի ես, այժմ էլ ապրում եմ էլի հանդստութիւնս մոռացած, քարշ եմ տալիս մի չարքաշ կեանք, կարօտ լուսոյ. համբերեցի, բայց կարելի՞ է այդպէս շարունակել, ժամանակ է վերջապէս ինձ է ապրելու, չէ՞. ո՞ւր է արդարութիւնը:

Եւ կեանքը սառնութեամբ պատասխանեց.

Առ...

Խ. Փափազեան

Վիէնն. Սոցեալ դէմօկրատները պարլամենտի առաջ
պահանջում են հաւասարել դասակարգային իրաւունքները:

Լ. ՏՕԼՍՏՈՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Սեռական կեանքի, ամուսնութեան եւ կանանց մասին.

Ընտանիք ունեցող մարդիկ կամ պէտք է ձգեն իրանց կանանց ու երեխաներին, իսկ դա չի կարելի անել, կամ ապրեն հաստատարնակ. քանի որ այդ թափառումը պէտքէ շատ ծանր լինի կանանց համար, որոնք, մեծ մասամբ (թող ներեն նրանք ինձ), ամենալաւ դէպքում, վարելով քրիստոնէական կեանք ապրում են ոչ թէ Աստուծոյ, այլ ամուսինների համար: Եւ այդ խեղճերի համար դա դժուար է: Այդ պատճառով էլ ինձ թւում է, որ նրանց պէտքէ պաշտպանել և խղճալ: Հազիւ հազ մարդ ու կին մի տեսակ հաւասարակշռութիւն են ստեղծում, մի կերպ նրանք ոտքի են կանգնում, իսկ ահա սկսւում են դաստիարակութեան և նոր կարգաւորման դժուարութիւնները: Եւ դա նրանց ուժից վեր է լինում և դժուարութեամբ կանգնեցրած ամբողջ շէնքը քանդւում է: Ես գիտեմ. դուք կասէք, որ չը պէտք է ապրել ընտանիքի հետ. թող կնոջդ ու երեխաներիդ—ինչպէս ասել է Քրիստոսը. բայց ես մտածում եմ, որ դա կարելի է անել միայն փոխադարձ համաձայնութեամբ, և կայ Քրիստոսի միւս խօսքը և աւելի պարտաւորեցուցիչը.—մարդը և կինը ոչ թէ երկու, այլ մի մարմին են ինչ որ Աստուած միացրել է, մարդը չէ կարող բաժանել: Ըսպէտքէ ամուսնանալ, նս դունիք, է միւս բաղդաւորներն ուժեղները, բայց ամուսնանալուց և երեխաներ ունենալուց յետոյ, չէ կարելի քանդել այն, ինչ որ արւած է, չէ կարելի ջնջել մեղքը, այլ պէտքէ կրել նրա հետևանքները: Եւ ես մտածում եմ, որ մեծ մեղք է պահանջել մարդկանցից կամ խորհուրդ տալ նրանց ձգել կանանց: Ճիշտ է, թւում է, թէ Աստուծոյ գործը աւելի շահւում է դրանից, թէ առանց կնոջս ես աւելի շատ բան կանեմ քան թէ այժմ, սակայն չէ՞ որ յաճախ դա միայն թւում է այդպէս: Եթէ ես կարողանայի բոլորովին մաքուր. բոլորովին անմեղ լինել, այն ժամանակ այդպէս էր: Ըսպէտքէ այդ պահանջել և խորհուրդ տալ և այն պատճառով, որ այդ հայեացքը ունենալով հասունացած մարդիկ, այսինքն ամուսնացածները, երեւում են իրանք իրանց և միւսների համար թաղուած, և այդ բանը լաւ չէ. Ես մտածում եմ, որ մեղաւոր և թոյլ մարդիկ էլ կարող են ծառայել Աստծուն:

Մի անգամ ամուսնութեամբ մեղանչելուց յետոյ, պէտք է կրել իր մեղքի հե-

Խրիստիան Թագաւոր Դանմարքի

Ծնաւ 1818 թ. ապրիլի 8-ին և 16 յունուարի 1906 թ. ցերեկւայ ժամը 3-ին 88 ամեայ հասակում խաղաղ կնքեց իր մահկանացուն:

տեանքներն ամենալաւ, ամենաքրիստոնէական ձևով, այլ ոչ թէ բաժանւելով նրանից, գործելով նոր մեղք, և պէտք է այդ դրութեան մէջ բոլոր ոյժերով ծառայել Աստծուն:

Կնոջ նշանակութիւնն ամենից առաջ և գլխաւորապէս մարդու նշանակութիւն է. հէնց նոյնը, որի մասին էլ ես ասել եմ: Ամուսնութիւնը և երեխաները համեմատած ամուրի կեանքի հետ-դա նոյնն է, ինչ որ գիւղական կեանքի պայմանները համեմատած քաղաքային ճոխ կեանքի հետ. կեանքի պայմանները—ամուրի կեանքը կամ ընտանիքը-ինքնըստինքեան չեն կարող ազդել մարդու վրայ:

Թիֆլիս Գալատի (Դարցովանա) փողոցը.

Կարող է լինել սուրբ և մեղաւոր ամուրի կեանք, կարող է լինել մեղաւոր և սուրբ ընտանիք:

Դուք չափազանց մեակողմանի էք հասկանում աւետարանի խօսքերը.—Թող հօրդ, մօրդ, կնոջդ երեխաներիդ եւ արի իմ յետեւից: Այդ խօսքերի նշանակութեան մասին,—գլխաւորապէս այն մասին, թէ ինչպէս պէտք է վճռել այն ընդհարումներն ու հակառակութիւնները, որոնք առաջ են գալիս ընտանեկան կապերի և Քրիստոսի պահանջների այսինքն ճշմարտութեան մէջ,—ես մտածում եմ, որ այդ հարցերի վճռումը չէ կարող լինել արտաքուստ, կանոնների կամ հրամանի միջոցով, այլ իւրաքանչիւրը վճռում է դրանք իր ոյժերի համեմատ: Իդէալը, ի հարկէ, միշտ մէկ է մնում և ասած է աւետարանում.—Թող կնոջդ և արի իմ յետեւից: Իսկ թէ մարդ մինչև որ աստիճանի կարող է այդ անել, դա գիտէ միայն նա ինքը և Աստուած

Դուք հարցնում էք, թէ ինչ է նշա-

նակում «Թող կնոջը». նշանակում է ավելորդ դա հեռանալ նրանից և դադարել նրա հետ քնելուց ու դադարել երեխաներ արտադրելուց: Ի հարկէ, *Թողնել* նշանակում է այնպէս անել, որ կինը լինէր ոչ թէ նրա կինը, այլ ինչպէս ամեն մի ուրիշ կին—քոյրը: Դրա մէջ է խղճալը: Եւ դա պէտք է անել այնպէս, որ չը գրգռէ կնոջը, չը հրապուրէ նրան, չը ձգէ նրան չարիքի և հրապուրանքի մէջ: Եւ դա սարսափելի դժւար է: Ամուսնացած մարդն էլ, որը ձգտում է քրիստոնէական կեանքի, զգում է սրտով այդ իրան արած վէրքի բժշկութեան ամբողջ դժւարութիւնը: Մի բան եմ մտածում և ասում... Այդ այն է, որ ամուսնացած լինելով, պէտք է իր ամբողջ կեանքը և իր բոլոր ուժերը մարդ լարէ նրա համար, որ ամուսնաթող լինի, առանց մեղքը մեծացնելու:

Նօտար

— —

Երէկ, Այսօր, Վաղը

—

Վրաստանը ծանր օրերի մէջ է. այրւում են քաղաքները, աւաններն ու գիւղերը: Ընդահարւում, կախաղան են բարձրացնւում գաւառները, չըթայակապւում են նրանցից շատ շատերը և բանտերը լցնւում:

—Տաժան օրերը շարունակւում են և հայերի համար. Շուշու շրջակայ հայ գիւղերը ամբոխւել են և աւերակ դարձել:

—Սպանութիւններն ու օր ցերեկով թալան-թալանը կատարւում է ոստիկանութեան պաշտօնեաների ներկայութեամբ:

—Թիֆլիսումն էլ անցեալ երկուշաբթի փորձ փորձեցին վերսկսելու հայ-թիւրքական ընդհարում, սակայն աջողութիւն չունեցան: Սպանւած և վիրաւորւած են 4-5 հոգի միայն:

—Նոյն օրը Թիֆլիսում, կէսօրին Բարեատինսկայա փողոցի վրայ արքունի անկիւնից և իր բնակարանից մի քանի քայլ հեռաւորութեան վրայ ռումբ գցեց մի վրացի երիտասարդ բանւոր շտաբի պետ գեներալ Գրեազնովի վրայ: Սա կառք նստած գնում էր, կառապանի կողքին ունենալով իրան թիկնապահ մի կազակի: Ռումբը կառքի կողքին ընկնելով, փշրանքներով վիրաւորեց կառապանին, կազակին, փողոցով անցնող մի կնոջ, իսկ գեներալ Գրեազնովի վէրքերն այնքան ծանր էին, որ նա կառքումն էլ հոգին տւաւ:

Հոգեհանգստեան ներկայ էր փոխարքան. այդ ժամանակ պալատից մինչև հանգուցեալի բնակարանը բռնած էր փողոցները գինւորներով և երթևեկութիւնը դադարեցրած:

Ռմբարձը բռնւած է, սակայն նա թոյն էր ընդունել, ժամանակ չէր ունեցել դնդակահար անել ինքն իրան: Չեն կարողանում նրան ուշքի բերել, որ դատեն զինւորական դատարանով:

—Թիֆլիսում յունւարի 17-ին էլ Թուրքերը կամեցան կոտորած սարքել, բայց դարձեալ անաջող: Այժմս թնդանօթներ են դրած, բերաններն ուղղած Թուրքաց թաղերին:

— —

Այստեղ, Այնտեղ Ամենտեղ

—

Երբե պատասխան յամառօրէն տարածւած այն լուրերի, թէ հայ Հնչակեան կուսակցութիւնը ձուլւել է Ռուս. Սոց. Դեմոկրատների հետ, —Պարիզից մեզ գրում են.

«Հնչակեան կուսակցութեան Ե-րդ պատգամաւորական արտակարգ ընդհանուր ժողովը շուրջ երեք ամիս շարունակելով իր նիստերը, մի շարք կենսական հարցեր ցանկալի կերպով լուծելուց յետոյ, դեկտեմբերի սկզբներին ցրւել է: Ի միջի այլոց, հակառակ մի քանի անհատների ջանքերի, մի անգամ ընդ միշտ լուծել է և այն հարցը, որ Հնչակեան կուսակցութիւնն սկսելով իր գործունէութիւնը տաճկահայ դատով, որը ապա սրբագործւեց երեք հարիւր հազար անմեղ արիւններով, այսուհետև էլ շարունակելու է վարել նոյն դատը: Ընդունելով նաև կովկասեան գործունէութիւնը, որպէս անհրաժեշտութիւն, որոշել է շարունակել իր կովկասեան գործունէութիւնը աւելի բուռն ուժերով: Կենդրոնական վարչութեան անդամները ընտրւած են իրենց գործունէութեամբ յայտնի և ոչ միայն Հնչակեան, այլ և միւս կուսակցութեանց և ամբողջ ազգի կողմից համակրելի և յայտնի գործիչներ:

Արտասահմանեան թերթերը գովասանքով են խօսում Հնչակեան Ե-րդ պատգամաւորական ժողովի այդ խելացի որոշումների մասին:

—

Բաւական տարուց աւելի հայ ազգի քաղաքական գործիչ պ. Մինաս Չերազին Պարիզում բժ. Լորիս-Մելիքեանը մենամարտութեան է կանչել: Պ. Չերազ բացասել է բժ. Լորիս-Մելիքեանի կոչը, որովհետև նա համոզմունքով հակառակ է մենամարտութեան, որովհետև նա ոչ մի զէնք իր կեանքում ոչ բանեցրել է և ոչ էլ գիտէ բանացնել: Բժ. Լորիս-Մելիքեանը Պարիզի լրագրներում նախատել է պ. Չերազին, անւանելով վախկոտ և մենամարտութիւնից փախչող:

Լորիս-Մելիքեանի այդ կոպիտ վարմունքը ստիպել է պ. Չերազին Պարիզում լոյս ածել իր լ՚Arménie թերթի մէջ վշտացած զգացմունքները արտայայտել: Զգացմունքներ, որոնց իսկական անունն է զզւանք:..

Ցաւելով մեր համակրանքն ու յարգանքը հայ ազգի վաստակաւոր գործիչին, մենք յոյս ունենք, որ երիտասարդ գործիչ բժ. Լորիս-Մելիքեանը չի յապաղել հրապարակաւ ներողութիւն խնդրել պատկառելի գործչից և գաղափարական թիւրիմացութիւնը կռւելու այն ճանապարհով, որ վայել է քաղաքակիրթ ինքնաճանաչ գործիչին և ոչ միջնադարեան վայրենի ասպետներին:

—

Մահմեդականները օրերս Պետերբուրգում պիտի ունենային մի համաժողով տարադայ սահմանադրական Ռուսիայ-ում իրանց դերն ու դիրքը պարզաբանելու նպատակաւ: Ժողովւել էին ամեն տեղից. բայց Պետերբուրգի քաղաքապետն արգելեց այդ ժողովը:

Համարեա միաժամանակ և Թիֆլիսում փոխարքայի մօտ պիտի լինէր հայ և թիւրք պատգամաւորների խորհրդակցութիւն, պարզելու այս արիւնհեղութիւնների պատճառը և միջոցներ ընտրելու ընդ միշտ խաղաղ պահելու երկու հարևան ազգութիւններին:

Այս խորհրդակցութիւնն էլ չը կայացաւ, որովհետև Բագւէյ Հաջի Զէյնալ Աբդին Թաղիեւը, Թիւրքերի Ռօթշիլդը, հեռագրել է յետաձգել այս խորհրդակցութիւնը, Թիւրք առաջաւոր գործիչների, Թոփչի-Բաշիևի և ընկ. Պետերբուրգ լինելը պատճառաբանելով: Խորհրդակցութիւնն ի հարկէ յետաձգւեց:

Սակայն մի հարց, մի՞թէ չորս միլիոն Կովկասի թիւրքերը միայն երկու մարդ ունեն, որ կարող են լինել իրանց ներկայացուցիչ: Հաջի Զէյնալ Աբդին Թաղիեւը պատւաւոր պատճառաբանութիւն չէ արել և իր ազգին շատ նսեմացրել է այդ հեռագրով:

— —

Դպրոցական

—

Ռուսաստանի համալսարաններում վճռւած է անօրինակ ընդունել թէ իգական ուսանողուհիներ և թէ ազատ ունկնդրուհիներ: Այս մեծ բարօրութիւնը շնորհիւ մեր ապրած օրերին, անցաւ համարեա աննկատ: Սակայն որքան մեծ բարիք է սպասւում դրանից:

— Համալսարանների վերատեսուչները դիմել էին ժողովրդ. լուս. մինիստրին, որ թոյլտայ ուսանողներին համազգեստ չը հագնել: Մինիստրը մերժել է այս խնդիրը, առարկելով որ օրէնքով է սահմանւած համազգեստ, օրէնքն էլ պէտք է վերցնի. Հետաքրքրական է, թէ քանի—քանի օրէնքներ ջնջւել են *ժամանակաւոր կանոններով* և այնպէս այլանդակել, որ կմախքն անգամ չէ մնացել:

— Պետերբուրգի լեռնային, տեխնոլոգիական և բազմարւեստեան ճեմարաններում պարապմունքները յետաձգւած են մինչև աշուն և ուսանողներին արւում է արձակուրդ:

— Կիևում ադմինիստրացիան փակեց *առաջին մանկավարժական ընկ.* և արգելեց փողոցներում, հրապարակներում լրագիր և գրքեր վաճառելը:

Նորագոյն հրատարակութիւններ

—

Նորատպոյ օրը արժիական պատկառանօք ստացանք Վենետիկի Հայրիկից օրացոյց 1906 թ. ու Էջմիածնայ փառակազմ:

Ս.Վ. Եղիազարեան—Երկայնաբազկի ց՝

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅՈՒՄ ԵՒ ԱՊԱԳԱՅՈՒՄ

(Ա. Բեբել)

—

(Սկիզբը Տարազ №2)

Տղամարդի բռնակալութիւնը կնոջ վրայ նման է բուրժուայի բռնակալութիւնը պրոլետարի վրայ. շատ դէպքերում առաջինն արտայայտւում է նոյն իսկ աւելի խիստ կերպով: Պրոլետարը ծախում է իր բանւորական ուժը գործատիրոջ միայն *ժամանակաւորապէս*. եթէ նա անբաւական է մնում, ապա նա, մեծ մասամբ, կարող է գտնել իր համար ուրիշը, աւելի լաւը: Իսկ կինը կապւած է մարդի հետ *ընդմիշտ*: Նոյնիսկ այն դէպքում, եթէ նրանց մէջ ամեն օր և ամեն ժամ խռովութիւն է լինում, նա ստիպւած է կրել իր շղթաները մինչև գերեզման: Պրոլետարեան աւելի անկախ է կանգնած բուրժուայի դէմ, ինչպէս տղամարդը տղամարդի. նա հեշտութեամբ կարող է ձեռք բերել իր համար յարգանք և իրաւունքներ, և, հարկաւոր դէպքում, ուժով խլել այդ բաները, միանալով իր նմանների հետ: Ուրիշ բան է կնոջ գործը: Նա պարտաւոր է համբերութեամբ տանել ամեն տեսակ անարգանք, օրէնքը նրան աւելի քիչ է պաշտպանում քան թէ պրոլետարին, և այն էլ միայն ծայրահեղ դէպքերում: Իսկ երբ օրէնքը միջամտում է, նա ապահարզան է որոշում. սակայն այդ ապահարզանը մղում է կնոջը դէպի աղքատութիւն և դնում է նրան անօգնական դրութեան մէջ. այն ինչ մարդին նա հաճելի հնարաւորութիւն է տալիս կրկին ամուսնանալու:

Պրոլետարները, ինչպէս տղամարդ, չափահաս լինելով, անտարբեր կերպով ինքն իր անձի տէրն է, նա օգտւում է քաղաքական ու սոցիալական իրաւունքներով (թէկուզ նրանք չնչին լինեն), որոնց նա կարող է ինչպէս զէնք գործ ածել իր հարստահարողների դէմ կռւելու ժամանակ: Իսկ կնոջ վրայ, որը կապւած է մարդի հետ, նայում են ինչպէս երեխայի վրայ, ինչպէս մի անօգնական արարածի վրայ. նա գտնւում է մարդի խնամակալութեան տակ, նա զուրկ է իրաւունքից, քանի որ նրան քաղաքացիօրէն և քաղաքական կերպով անչափահաս են հաշւում: Քաղաքացիական բոլոր օրէնսդրութիւնները նայում են կնոջ վրայ ինչպէս մարդի խնամակալութեան տակ գտնւածի վրայ, իրաւունք չեն տալիս նրան ազատ կերպով վարւել ինքն իր հետ ինչպէս ուզում է, ցուցմունքներ տալ դատարանում առանց մարդի թոյլտւութեան: Ինքը քաղաքականապէս զուրկ լինելով իրաւունքից, նա իր օժիտով մարդին քաղաքական իրաւունքներ է բերում, որքան որ այս վերջինները կախւած են լինում կայքի ցենզից: Գերմանիայում սաքսոնական և ուրիշ, բաւարական, համայնական կանոնադրութիւնները տալիս են կնոջը, եթէ նա կալւածատիրուհի է և չամուսնացած, ընտրողական ներգործական իրաւունք, իսկ կրաւորական դեր կատարելն, ընդհակառակն, օրէնքները նրան արգելում են: Բայց հէնց որ նա մարդի է գնում, զրկւում է այդ իրաւունքից, որն անցնում է մարդին նոյն իսկ և այն ժամանակ, երբ մարդն իր սեփական ոչինչ չէ ունենում: Մարդը—նրա տէրն է, կնոջ «ես»ը ձուլւում է մարդի «եսի» հետ: Ամուսնանալու ժամանակ մարդը երդւում է հաւատարիմ լինել, իսկ կինը երդւում է ոչ միայն հաւատարիմ լինել, այլ և *հնազանդել*: Կնոջ այդ ստրկական դրութիւնն արտայայտւում է ոչ միայն եկեղեցական պսակադրութեան ժամանակ, այլ քաղաքացիական ամուսնութիւնը ևս պահանջում հնազանդութեան երդում:

Տղամարդի դրութիւնը բոլորովին այլ է: Ամուսնական հաւատարմութեան դէմ կնոջ կատարած յանցանքը նկատւում է ինչպէս մի մեծ եղեռնագործութիւն, իսկ մարդի վերաբերմամբ դա համարւում է մի աննշան մեղք: Նոյն իսկ կինը, սովորաբար, ընդունում է, որ տղամարդն ազատ է խանգարելու ամուսնական հաւատարմութիւնը. այսպէս, օրինակ, նրանք ընդունում են, որ տղամարդը կարող է սեռական յարաբերութիւն ունենալ մինչ ամուսնանալը, ինչպէս ինքն ըստ ինքեան մի հասկանալի բան, երբեմն նոյն իսկ գովանքի արժանի: Կան կանայք, որոնք հպարտանում են նրանով, որ իրանց յաջողել է «բռնել» վերջապէս մի անառակ տղամարդի. և մեր «բարձր շրջանների» տղամարդն էլ յաճախ նոյն իսկ օրէնք է դնում իր համար ամուսնանալ միայն «*կեանքի բոլոր բաղցրութիւնները ճաշակելուց*» յետոյ, ուրիշ խօսքերով սեռական բաւականութեան ծայրայեղ յագեցումից յետոյ, երբ նա—կիսով չափ կամ բոլորովին ուժասպառ եղած—կարիք է զգում կնոջ, որն ինչպէս հիւանդապահ պէտք է խնամէ նրան: Շատ կանայք յօժարութեամբ թոյլ են տալիս, որ իրանց մարդիկ ամուսնութեան մէջ էլ սեռական յանցանք գործեն և գոհ են, եթէ այդ բանը կատարւում է միայն որոշեալ սահմաններում, արտաքին պատշաճ ձևերը պահպանելով և ամուսնական պարտաւորութիւնները բոլորովին —չարհամարհելով:

իր կազմած Մանկական Պարտեզ (ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար, նոտերով և նկարներով) օգտակար շրջ հրատարակութիւն 230 մեծադիր եր. և 66 եր. էլ նոտեր ու բացի այդ մի շարք երեխեր նուիրած տրամադրութեան, թղթից հիւսածք, յոլունք շարել, թղթից տարբեր կառուցանելը են. են. մէկը միւսից, մանուկներին հետաքրքրող աշխատութիւններ:

Հրաւիրում ենք ծնողներին օգտուել այս օգտակար ձեռնարկից, որի չափաւոր գինը 3ր. մատչելի է ամեն ընտանիքի:

Ե. Թափչեան՝ Օրացոյց 1906 թ. պատկ. ռուսահայ խմբագիրների պատկերներով, յաւելուածով և փոքրագիր լիակատար օրացոյց:

Հ. Արսէն Վ. Ղլտճեանից՝ 1) Կանոնք Ներսէս Բ. կաթողիկոսի եւ Ներսէսի Մամիկոնեից եպիսկոպոսի, 28 եր. 2) Կանոնք Խորսւոյ ազգ ժողովի. 25 եր. Ս. Էջմիածին. *Հ. Արսէն ու. բ. Բագրատունի*՝ Բարի մայր Մարիամ (թարգմանուած տեսիլ 1874—1877 թ. յիշողութիւններից). գինը 20 կ.,

Ռուսական սուրհանդակ

—

Պետերբուրգում երկաթուղիների կայարաններում շարունակւել է երթեւեկին խուզարկութիւնը: Յուն. 9-ին խուզարկութիւնից յետոյ ձերբակալել են, մի գիւղացու, որ կրում էր մի մեծ ծրար նամակներ և երկու բերան Միութիւն-Միութեան բիւրոյին յանձնելու համար: Նոյն օրը մանաւանդ սաստիկի խստութեամբ է կատարել մայրաքաղաքում խուզարկութիւնը, որին զոհ են գնացել շատ կանայք գաւառական հաստատութիւններում ծառայող անձիք:

Ռուսաստանի բոլոր անկիւններում հրաժարւում են պետական հարկերը վճարել:

—Թագաւոր Կայսրը Վիլհելմի տօնախմբութեան օրը բաժակ է առաջարկել, *իմ սիրելի եղբօրս եւ սիրելի բարեկամիս*, բայց հետաքրքրական է թէ Ռուսիայի Կայսեր այդ սիրելի բարեկամն ու եղբայրը ինչ կերպ է իր բարեկամութիւնն ու եղբայրութիւնը ցոյց տալիս պատր Ռուսիային:

—Սեւաստոպօլում գոյներով է նկարագրում Կովկասի այժմեան վիճակը և դատապարտում է փոխարքայի անգործնէութիւնը: Տպագրւում է պետական պարտական ծրագիր, որով Միութեան անդամների իրաւունքները ջնջւում են համաձայն հոկտ-17 հրովարտակի: Պահանջւում է միանձնեան տիրապետ, որ բացատրւում է միջազգային անկախութեան մտքով: Թագաւոր Կայսրը սահմանադրութեանը չէ երդւելու, այլ իր մի հրովարտակով առաջարկվելու է սահմանադրութեան մնայուն լինելը և պարտաւորացուցիչ իր ժառանգի և սերնդի համար:

Գեղարուեստական քրոնիկոն

—

Հայեւ սկսած օպերային ներկայացումները կրկին կանգ առնել ուին, սակայն այժմս ոչ յեղափոխականների, գործադուլների պատճառով, այլ 'ի նշան սգոյ՝ գինեբալ Գրեազնովի: Երեք օր ընդհատած ներկայացումները սկսւեց համակրելի երգչուհի Դուբրովսկայի յաջող բենեֆիսով: Երգեցին Լեոնկովալլո-ի Զազան: Դուբրովսկայա-Զազան յաջողութիւն ունեցաւ. ստացաւ ծաղիկներ և ընծաներ:

—

Արտասահմանեան քրոնիկոն

Անգլիան ամրացնում է իր ծովային ափերը: Անգլիայում կատարւում է այժմս մեծ յեղափոխութիւն, սակայն առանց ամբոխի, հրդեհների, գործադուլների:

Կոպիտալի ձայնը խեղդւում է և աբեռն—քրտինքի, մաքի կողմնակիցները են այժմս հրճւում: Մանչեստրը դառնանալուց Չեմբերլէն բնկ., նոյնպես Բալֆուրին և ընտրեց Ջօն Բերնսին՝ որ ռամիկ (գեռոկրատ) է հոգով, սրտով և արծաթասէր չէ:

—Պարսից Շահն էլ է փորձել իր հարևանից և սահմանադրական կառավարութեան հրովարտակ է տուել ժողովրդին, որ հաւաքեն իրանց միջից պատգամաւորներ ընտրեն և երկրի խէրն ու չարն խմանան:

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Տիգրան Նազարեան

ՇԱՊԿԻ ԵՐԳԸ
(Անգլիերէն բնագրից)

—

Մատները թմրած, յոգնած են սաստիկ,
Արտեւանունքը և խոնջ, և կարմիր—
Թերմաշ շորերով նստած է մին կին,
Նստած՝ կարում է եռանդոտ ու ժիր.
Կարիր ու կարիր...
Սովատանջ, Հալ ու մաշ, վշտակիր...
Հեծում է, երգում տխուր ու վհատ
«Մի շապկի մասին» այդ կինը աղքատ։
Աքլորի կանչին զարթնում է քնից՝
Աշխատիր, աշխատիր, աշխատիր
Աստղեր փայլում են յարկի ճեղքերից՝
Դէհ, աշխատիր, աշխատիր, աշխատիր...
Եւ տանջւիր ուղղէս քրիստոնեայ մի կին՝
Բարբարոս թուրքի ձեռքին միշտ գերի.
Աւա՜ղ, մի գերի յուսահատ ու խեղճ,
Նրա ճանկերից փրկութիւն չունի։
Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Մինչեւ չէ յաղթել քեզ քունը յամառ.
Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Քանի աչերդ չեն մարած խաւար.
Ձուլակիր, վրձկարիր,
Խրծրկիր, պտտկարիր՝
Մինչ շապկի վրայ ընկնես քնահար,
Եւ երազիդ մէջ կարես անդադար։
Ո՛հ, մարդիկ, դուք որ ձեր շուրջը ունիք
Քաղցրիկ մայր ու քոյր, կին ու սրդակինք,
Ա՜խ, գա՞ կտաւ չէ, որ դուք մաշում էք,
Այլ չորքաշ ու խեղճ մարդկային մի կեանք.
Կարիր ու կարիր...
Կարում եմ սովատանջ, վշտակիր
Միաժամանակ շապիկ ու պատան
Եւ ամեն րոպէ բոլորում մահւան։
Բայց, սա՛, ինչո՞ւ մահից վախենամ,
Թէկուզ այդ հիւրը գայ ինձ մօտ այսօր.
Չէ՞ որ ես մահու հրեշտակի նման
Մի չոր կմախք եմ—լոկ մորթ ու ոսկոր...
Հիւծուած մի մարմին, չարատանջ մի կեանք,
Կտոր հացից զուրկ ծոմ օրն իրուն.
Ա՜խ, ա՜յ Տէր, ինչո՞ւ այդպէս թանգ..
Իսկ այդպէս էժան՝ իմ միսն ու արիւն.
Աշխատիր, աշխատիր, աշխատիր.
Այս ծանր ժամերը, աւա՜ղ, վերջ չունին.
Իսկ ինչ է վարձքս—չոր Հացի փշրանք,
Անպէտք ցնցոտիք, յարդէ անկողին.
Վերը խախուտ յարկ, ցածր մերկ յատակ,
Սեղան ու աթոռ թողլ ու Հատարակ.
Լաւ է որ գոնէ
Մերկ պատի վրայ
Յաճախ տեսնում եմ ստուերն իմ միակ:
Աշխատիր անխոնջ, աքնիր ժամ է ժամ
Եւ միշտ նստակեաց գործիր օրավարձ,
Ինչպէս յանցաւոր միատաժանակիր՝
Աքսոր ուղարկուած անյոյս ու անդարձ.
Շուլալիր, վրձկարիր,
Խրծրկիր, պտտկարիր,
Թափիր վերջին ճիգ, գործիր անձանձիր
Մինչեւ գլուխդ թեքւի ուժասպառ
Եւ սիրտ ու ձեռքդ թուլանան խաւար:
Կարիր ու կարիր և ցուրտ ձմեռը,
Նոյնպէս գարնանը—օրեր գովարար,
Երբ ծիծեռնակը գալիս է նորից՝
Գարնան վերադարձ տօնելու Համար.
Իսկ ձագուկները խուցիս ցեքին տակ
Միշտ ճռւողում են իրանց մօրը Հետ—
Կարծես իրար մէջ պայման են դրած
Ինձ կենակ ցոյց տալ և ծաղրել յաւէտ։
Ա՜խ, մէկ գոյս գայի թարմ շունչ քաշելու.—
Ի՞նչպէս բուրում են վարդերն անուշակ...
Միայն երկինքը լինէր իմ վերայ,
Միայն գալար խոտ իմ ոտքերիս տակ.
Ո՞ւր էր դէթ մի ժամ ըզգայի այնպէս,
Երբ դեռ փոքր էի՝ գոհ ու բերկրալից—
Հիմիկւայ նրման երկիւղ չունէի,
Թէ մէկ ճեմելով կը զրկւեմ ճաշից։
Ո՛հ, թէկուզ մի ժամ, միայն մի վայրկեան
Հօգիս չը տքնէր ճնշող բեռան տակ.
Բայց սա չը կայ մի վայրկեան անգամ,
Հօգսը խլւում է ողջ իմ ժամանակ.
Գոնէ արցունքով սիրտըս ամոքեմ,
Բայց՝ ոչ...շուտ պէտք է վերջանայ այս կար.
Արցունք, կանգ առէք—ինձ մի խանգարէք
Թէ չէ չի լինիլ կարը միաշար:
Մատները թմրած, յոգնած են սաստիկ,
Արտեւանունքը և խոնջ, և կարմիր—
Հնամաշ շորերով նստած մի կին,
Նստած՝ կարում է եռանդոտ ու ժիր.
Կարիր ու կարիր...
Սովատանջ, Հալումաշ, վշտակիր՝—
Հեծում է, երգում Հեգ ու լալագին.
Ա՜խ, թէ դէթ Հասնէր վէս Հարուստներին
Այս կնոջ երգը «մի շապկի» մասին:

Աւ. Մ.-Զհանեանց

Ներկայ №-ի հետ ստացւում է
[illegible]

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(34-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ 1906 ԹՈՒԱԿԱՆԻՆ

«Մշակը» կը հրատարակւի նոյն պրոգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից։

Բաժանորդագինը «Մշակի». տարեկան գինը 10 ռուբլի է, տասնմէկ ամսուանը նոյնպէս 10 ռ., տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը 1 ռուբլի։

Արտասահմանեան բաժանորդագրութիւնը. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը՝ (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրուելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս՝ պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունւում են բոլոր լեզուներով։

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

Արեան եւ դեռների վայրերը
Բ
Հայ գիւղացիք փախչում են Նուխի

ԸՆԿԵՐ

Զարաթաթ՚երթի տարեկան բաժանորդագինն է 3 ռուբլի:
հատը 6 կոպ.

Բաժանորդ կարել է գրուել խմբագրատանը ու գործակալների մօտ: Խմբագրատունը գտնւում է Գոլովինսկի պրօսպեկտի վրայ, Արտիստիկական ընկերութեան թատրօնի շարքում, Արիանցի տանը (մուտքը հարցնել նոյն տեղի գրավաճառանոցում):

Խմբագիր-հրատարակիչ՝
Դր. Փիլոս. Սեդրակ Թառայեան



Յեղափոխութեամբ բռնկւած վայրերը

Կիեւի շրջակայքը տարւայ վերջը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ

Նպատակը՝ Հայ հրապարակախօսներից, հայ մամուլի մէջ աշխատող գրականագէտներից և գեղագէտներից, առանց խտրութեան ուղղութիւնների եւ քաղաքական դաւանանքների, կազմել մի ընտանիք, ներշնչւած քաղաքակիրթ ազգերին յատուկ երկիւղով:

Շաղկապը նպատակ չունի զբաղւելու քաղաքական հարցերով և չէ հետաքրքրւում ու հետամուտ չէ լինում թէ իր անդամն ինչ կուսակցութեան է պատկանում, քաղաքական ինչ հանգանակ է դաւանում: Այլ խստիւ պահանջում է իր անդամից գրական վարք ու բարքի մաքրութիւն: Պահանջում է, որ իր անդամը ճշմարտութիւնը երբէք չարատաւորի իր գրչով, նոյն իսկ ամենասուրբ իղձեր ի կատար ածելու նպատակաւ:

Շաղկապը օգնութեան է հասնում իր անդամին և նեցուկ լինում նրան բարոյապէս և նիւթապէս: Առաջ է մղում մատաղ գրական ոյժերը:

Միջոցները՝ Տարեկան և միանւագ անդամավճար: Խրախուսողների աջակցութիւն: Գրական-գեղարւեստական հանդէսներից, զանազան հրատարակութիւններից գոյացած գումարներ:

Շաղկապը միաժամանակ հիմնում է և Գրական-Գեղարւեստական Ակումբ, գրադարան-ընթերցարանով իր անդամների և նրանց ընտանիքների համար:

Ակումբում արգելւում է թղթախաղը և ալկոհոլային խմիչքներ բանեցնելը:

Կովկասահայ Մամուլի Շաղկապը կը կազմէ Միջազգային Մամուլի դաշնակցութեան մասնիկը:

Կովկասահայ մամուլի ներկայացուցիչները, պարբերական Հայ մամուլի յատուկ թղթակիցներն ու գրականագէտ աշխատակիցները, որոնք ընդունում են վերոյիշեալ սկզբունքներն անփոփոխելի եւ խնկական նպատակ, հրաւիրւում են: Տարազի խմբագրատունը վաղը երկուշաբթի, յունւարի 23-ին, կէսօրից յետոյ ժամ 5-ին առաջին ընդհ. ժողովին որն օրինաւոր կը համարւի, ինչ թւով էլ ներկայ լինեն նրա անդամները:

Ոչ ոքի առանձին հրաւէր եւ առաջարկ չի ուղարկւի:

Տրեղ մաքուր չափաւոր գներով ճիւրանոց Բերլինում
HOTÊL NEW IORK
Fuider Wilh Schulze
Friedrich Str 136, հակառակ բուն Bahnhof. Friedr. Str. կենդրոնական կայարանից, կամուրջի վրայ:
Աւելի քան 60 սենեակ 80 մահճակալով ընտանիքների համար առանձին սալօններ, սեղանատներ: Մի մարկով ԱՌԱՒՕՏԵԱՆ ՆԱԽՃԱՇ (սուրճ, շոկոլադ, թէյ կարագ, մեղր, պանիր, մուրաբաներ եղանակի բերած): Սենեակներ 2—15 մարկ օրը, չարթով գինչումն: 12—3

ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ

Փոխադրութեամբ լոյս տեսան
պատկերազարդ մանկական գրոյցներ — Գին
ԱՌԱՋԻՆ ԿԱՍՏԱԿ 60
ՆԱՊԱՍՏԱԿ ԽՈՋԱՆԻ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ Ի՞ՆՉԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ . . 75 կ.
ՓՈՔՐԻԿ ՑՈԼԱԿՆ ու ԽԵԼՕՏԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ . 1 ռ.
Թարգմանութեամբ՝
ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ (Spiritisme), Թատերգ. 3 արարւածով . . . . . 50 կ.
Դիմել ուղղակի ինձ՝ Тифлисъ, Орбеліановская №4 Левону ВарданиМеликъ-Адамянъ. 2—1

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 r. (արտասահմանի 5 r.) Տարազ—6 r. (արտասահմանի 10 r.) Աղբիւր-Տարազ, պրէմիաներով 10 r. (արտասահմանի 18 r.) Տարազ ամիսը 50 կ. առանձին №-ը եւկու բերրից 30 կ., մի բերրից 20 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզուով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ վերջին երես 25 կ. մանրատառ (պըտիտ) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չընդունելիքը (երեք թերթից պակաս) չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր, (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10¼ ժ. մինչև 2¼-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ Rédaction du Journal TARAZ Caucase Tiflis

Գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, ճեմադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 4 Կիրակի, յունւար 29 Տասնեւեօթներորդ տարի 1906

Օրիորդ Յուսիկ Համբարձումեան Պապայեան

Թիֆլիս եկաւ 1893 թ. Նաղէժդա Ամբրոսովնա Պապովա անունով մի երիտասարդ երգչուհի դիւթական ձայնով, լի զգացումներով, սակայն դեռ ոչ բոլորովին կազմ, պատրաստ: Երիտասարդութիւնը, սև հողին արդէն պատանդ տուած հայազն՝ ֆէնօմինալ ձայնի տէր տենոր Ներսէս Շահլամեանի ղեկավարութեամբ, մանաւանդ մեր Անոնս Թատրոնական լրագրի աջակցութեամբ, Պապովան Պապայեան անունով Թիֆլիսում առաջին անամդ բեմ բարձրացաւ ազգօգուտ բարի նպատակաւ:

Այդ օրւանից օր. Պապայեան սիրելի դարձաւ հայութեան, իսկ Սօլօլակը նոյն իսկ երիտասարդ երգչուհուն իր հովանու տակ առաւ.

Այդ ժամանակից օր. Պապայեան մեռաւ հայերի, հայժողովրդի համար և ծնեց նրանից մի ուրիշ Պապայեան, որ պատկանում էր ընդհանուրին, նամանաւանդ բուրժուազիային և բիւրոկրատիային:

Սակայն այս հանգամանքը խոչընդոտ չեղաւ նրա բնածին տաղանդի զարգացման. հայի տոկունութիւնը նրա մէջ մնացել էր: Եւ մի քանի տարի չարունակ Թիֆլիսում երգելուց յետոյ նա գնաց Պարիզ, կատարելագործւեց և վերադարձաւ իբրև մի դիցուհի: Տրախտայի մէջ նա պրանչելի էր, Յարսկաեա Նեւստա, Իօլանտա օպերներում աւել գտնելու տեղ չէր լինում: Ռիգոլետում նա սիրասուն Ջիլդա էր, Օնեգինում—բուռն զգացումներով Տատիանա: Փառքը հասաւ գագաթնակէտին: Նոյն իսկ հայատեաց իշխ. Գոլիցին ընկճւեց նրա դայլայլիկի տակ. օր. Պապայեան սիրելի դարձաւ և այս շրջանին ու կարճ ժամանակից յետոյ նա արդէն Պետերբուրգի կայսերական թատրոնի վրայ է երգում տարեկան 12,000 ր. ռոճիկով: Խարդաւանանքները զզւեցրին օր. Պապայեանին, որովհետև նրան առատ ռոճիկ էին տալիս, բայց իր ձիրքերը հանդէս հանելու ոչ լայն ասպարէզ, և նա թողեց կայսերական բեմը, թափառեց մի քանի ժամանակ այստեղ, այնտեղ, վերջը եկաւ Թիֆլիս: Բայց այս ժամանակ ծանր օրեր էին. հայութիւնը թատրոն չէր յաճախում, ապա սկսւեց պատերազմը, Սոլոլակի հզօր պաշտպանները լքել էին. Օր. Պապայեանի Թիֆլիսից հրաժեշտի կոնցերտն իսկ մի քանի անգամ յետաձգւելով, տոմսակ չը վաճառւելու պատճառով, վերջը մի կերպ կիսադատարկ դահլիճում երգեց իր հրաժեշտը:

Յուշարձան երկինք սաւառնող դիցուհի Յուսիկ Պապաեանին

Խոստովանելով դիցուհու ձիրքերը և միշտ գրւատելով նրա արհեստի նրբութիւնը, սակայն մենք միշտ և կշտամբել ենք նրան, որ չատ հեռացաւ հայութիւնից, ժողովրդից, որով և իրան ինքը տապալեց:

Վերջերս օր. Պապայանը մօրը հիւանդութեան պատճառով եկել էր ծննդավայրը ծնողների մօտ. մայրը վախճանւեց և նա պատրաստւում էր Միլան գնալու, անյայտ չարագործներ մտան նրա տունը, ծանր վիրաւորեցին հօրը և դստերը, վախճանւեց նախ հայրը, ապա դիւցուհին ինքը, օր. Յուսիկ Պապայեանը:

Հոգին աւանդեց ծանր տանջանքների մէջ, անկարող լինելով գէթ իր դիւթական դայլայլիկներով մորմոքւած սիրտը խաղաղացնելու:

Օր. Պապաեան թաղւեց անցեալ կիրակի, յունւարի 22-ին Աստրախանում:

Հարկ չը կայ մի գրական-երաժշտական հանդէսով արտայայտելու մեր վիշտը ևասելու Աստուած ողորմին:

Tigo

Այսօր, կիրակի, յունւարի 29-ին ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին կատարւելու է Մողնու ս. Գէորգ եկեղեցում հոգեհանգիստ ի յիշատակ վաղաբառամ ՅՈՒՍԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ՊԱՊԱՅԵԱՆԻ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ.

Անցած անգամ դէպք եղաւ յիշատակելու, որ մարդկային գոյութիւնը միայն նիւթական—բուսական կացութեամբ չի վերջանում այլ շղթայակցւում է մի ուրիշ կենսական կուանի հետ, որի ամբողջ էութիւնը բաղկացած է բարոյական հրատութիւնից: Վերջինիս հիմնական տարրերը հոտ ու գոյն են տալիս մարդկային կենցաղին, բովանդակալից ու նպատակաւոր են դարձնում նրան: Այդ հիմքերից մէկը իրաւունքն է: Ասացինք, որ ներկայ եղեւնը հարւածել է հայի բարոյական նեցուկը՝ իրաւունքը. ու այսպիսի մի հարց դրինք՝ լոն՞լ թէ չ՞ընել, մեր իրաւունքը, պատժելով յանցաւորներին, ոճրագործներին, թէ թողնել կամայականութեան, քմահաճոյքին գործելու անիրաւօրէն:

Հայի լռութիւնը երկու պատճառով անկարելի է:

Մէկ պատճառն արդէն բացատրել ենք. հայի պատմական անցեալն ունենալով միշտ մի հարւածւած իրաւունք՝ այսօրւայ համար ունի նրբագգաց իրաւական զգացողութիւն, որ ամեն կերպ հակառակ է անտարբերութեան նինջին: Եթէ ընդունենք և այն, որ իւրաքանչիւր իրաւական հարւած աղբիւր է դառնում բարոյական ցաւի և որ ամեն մի ցաւ հարկադրաբար բժշկելու հոգատարութիւն է պահանջում,—այն ժամանակ աւելի քան պարզ պիտի լինի, որ հակահարւածըն անհրաժեշտ է առհասարակ թէ բարոյական և թէ ֆիզիքական աշխարհում:

Միւս պատճառը աւելի ծանրակշիռ է: Կայ մի իմպերատիւ, որ ճշմարիտ է ըստ ինքեան.—«Անիրաւութեան դիմադրելը պարտականութիւն է»: Երբ որ ժողովուրդը եկել և հասունութեան, զարգացման որոշ աստիճանի վրայ է կանգնել ու երես դարձրել նախնական ցեղերի կենցաղավարութեան կործանիչ պայման-

ներից, այն ժամանակ իրաւունքի պաշտպանութիւնը դառնում է նրա համար քաղաքակրթութեան միջոցներից մէկը:

Մեզ թւում է, որ թուրք տարրը միշտ իրաւունքի դէմ ըմբոստացող չար ոյժ է հանդիսացել: Ինչպէս ասում է մի անգլիացի «*թուրքի համար արդար լինելը անկարելի է այնպէս, որպէս վագրի համար կաշին փոխելը*»: Այդտեղ մեղաւորը, ի հարկէ, նրա կուլտուրական խակութիւնն է: Իսկ կուլտուրական հասունութիւնը միշտ ենթադրում է իրաւունքի պաշտպանութիւն և հովանաւորութիւն: Վերջինիս կարիքը աւելի քան անհրաժեշտ է, եթէ չենք ուզում, որ մարդ արարածը իջնի իրեն անվայել ստոր աստիճանի վրա, ու մասնւի անասնանալու երկիւղին:

Ա. Տէրտէրեան.

—



Հայ-Թուրքական խաղաղասիրական

Բաւականին ժամանակ է ի վեր պտտւում է այն զրպարտիչ լուրը, թէ կայանալու է համաժողով հայերից և թաթարներից, փոխարքայի կանցելիարիայում. դրա համար ամբողջ Անդրկովկասեան քաղաքներից ընտրւում են պատգամաւորներ 30—35 հոգի երկու կողմից ևս, որոնք պէտք է խորհրդակցեն, խորհեն, դաշինք կապեն, չըգիտեմ ինչ ու ինչ բաներ անեն. որպէս զի դրանով վերջ դընեն հայ թաթարական կռուածին: Ինչպէս մեզ թւում է կանցելիարիայի ներկայացուցիչը պէտք է նոյն հաշտարար դերը կատարի, ինչ որ կատարում են, օրինակ, նահանգապետները գաւառներում: Շատ ընդեցիկ, եթէ «երազն ի բարին կատարի»: Բայց ինչպէս որ Տարազի անցեալ համարի իմ յօդուածումն ասեցի թէ Ռուզւէլտի աշխատութիւնը ոտ չունի, այդպէս էլ այս համաժողովը ոտ չի ունենայ:

Ինչ և լինէ այս անգամ էլ չարժեցին հայի ընտրողական բիւրոները եկեղեցիներում ընտրեցին ընտրել ցանկացողներին, որոնք աղեցին մաղեցին և ընտրեցին երեք Աղէքսանդրի և մի Կարապետի:

Բայց ասացէք, խնդրեմ, ինչ միտք ունեն այդ ժողովները, այդ խորհրդակցութիւնները. մենք միանգամայն հաւատում ենք փոխարքայի կանցելիարիայի բարի ձգտումներին և տրամադրութիւններին, բայց մեր խելքը չի հասնում այդ բանին և մեր մտածածը, առանց յետին մտքերի արտայայտում ենք այստեղ:

Եթէ կամենում էք, մենք մինչև անգամ և խոլ ենք անում մեզ մտնել ապագայումը գտնել «ծակ մարգարէի» դերում, ուրեմն մի շատ էլ շնորհակալ դեր չենք առնում մեզ վրայ:

Բայց բնականութեան հրամանի ամեն բանից վեր դասելով, մենք չենք վարանում մեր կարծիքն յայտնել:

Ի՞նչ տեսակի միջոցն՚ է պէտք է հնարեն թաթար և հայ խորհրդակցողները, մենք մեզ հարց ենք տալիս: 1) Որպէս զի դեղ անել: Պէտք է որոշել հիւանդութիւնը և նրան յառաջացնող պատճառները, կասի այնտեղ բժիշկ Կարապետը կամ Ալէքսանդր-խորանարդը և կամ Մաշադի Ալիւը Մուսա Թաղա Դուլի օղլին:

Բայց ո՞վ պէտք է վճռի թէ առաջարկածքան մէկ դիագնօզից և 42 պատճառներից ո՞րն է իսկականը:

2) Եթէ այդ յարգելի պատգամաւորները վճռեն, թէ իրանք խոստանում են խրատացնել իրանց ազգայիններին, արդեօ՞ք դա չի նշանակել, թէ՝ ուրեմն և կռուացնողն էլ իրանք են:

3) Իսկ եթէ առաջարկեն մի այլ միջոց: Բայց ինչ միջոց, չէ՞ որ այդպիսի խաւն ժողովներ արդէն այնքան անգամ են կազմել, որ էլ ոչ թուրքն է հաւատում,- եթէ երբ և է հաւատացել է, ոչ հայը, որին մնացել է բաժին միայն կարմրել ամաչել իր անօգնականութեան պատճառ: Տանջանք տալ. զինենք, արդէն լսել ենք: Երդւել, երդւեցնել խմբովին, խաչով, ղուրանով, աւետարանով. փեղամբարի ձեռքով՝ արդէն տեսել ենք, կերել ենք, դրժել—դաւաճանել ենք հազար անգամ: Քարոզել. գայլի գլխին աւետարան, քուրքի գլխին էլ ղուրան:

Ոչ, պարոններ, թէկուզ սպանեցէք, խելքս ոչինչ չի կտրում: Կտրում է մի բան միայն, որ այդ խորհրդակցութիւնները շատ լաւ միջոց է որ գործը, այսինքն տաք ու ծեծը, արինհեղութիւնը, ըլլկումը, ամօթալի գ'րռութիւնը, գերիների ամօթալիագոյն վաճառականութիւնը մարմանդ չարունակվի և միւս կողմից էլ, մանաւանդ որ ցուրտ ձմեռ է, զէնքի պատրաստութիւններ տեսնել, հրացան ու փամփուշտ ձեռք բերել, թուր ու խանչալ սրել:

Մի թէ ընթերցողը ինձ կը հարցնի

ապա, վերջը ինչ պէտք է լինի:

Եթէ նա այդքան դաժան չինի, ես *կմարգարէութիւնս* կանխատեսում, որ այդ հանդոյցը արձակելն անկարելի է, դա նման Գորդեան հանգոյցի պէտք է Ալէքսանդրի սրովը կտրել, բայց ոչ խորանարդի, այլ Մակեդոնէացու: Այդ սուրը փակած—կողպած է մի արկղի մէջ, որի բանալին երկրորդ արկղի մէջն է և որի, երկրորդի բանալին երրորդ արկղի և այսպէս եօթը փականքով կողպած և եօթներորդին սև ծովն է գցած:

Թագաւոր կայսեր աւետած ազատագրութիւնների լոյսով, է այնկախարգը, որ ծովի յատակից, մատի մի շարժումով, պէտք է կախ անել տալ այդ խորհրդաւոր բանալին Կովկասու գանձիցը: Ահա մեր կարծիքը:

Բայց մեր օգոստոս հողի մահանսի Կլեպակոսը կաւելացնէր և մի խօսք՝ թէ այդ բանը դադարելը չէ և շատաջ յայտնի է այն օրլրեգունց, որոնքպէտք է ժողովին փոխարքայիկանցելարիայումը...

Հին Դիպլոմատ

—

ԱՄԱՐԱՍ

Տեղական գիւղացիք ասում են «Մարաս», թուրքերը «Աղ-Օղլան» գանւում է Մուղան դաշտավայրի լեռնաբերանում մի գեղեցիկ երկար նեղ հովտում համանուն գետակով, որի երկու կողմը մինչև քըսան վերստ թթենիներ են և քիչ խաղողի այգիք: Չուչուց Ամարաս, դէպի հարաւ, 40 վերստ է. ճանապարհը ձիի, լեռնոտ: Խորենացին յիշում է, որ Վանդեան դաշտում, Դերբենդի մօտ, Լուսաւորչի թոռն ս. Գրիգորիս նահատակւելով՝ իր աշակերտները նրա նշխարները բերին Արցախ և ամփոփեցին Ամարաս աւանում: Նախնական հայ քրիստոնեայ բնակիչների ընդարձակ գերեզմանատունը և անեղի հետքերն երևում են վանքի մօտ Խաղաղ բլուրի վրայ: Կանճչգլխ պատմագրական ցուցմունքներ- սա արդարև ս. Գրիգորիսի դամբարանն է, ինչպէս որ յիսուն թւականներին պարսկացին կազանկաւացի պատմաբան, յիշած նշանները շիրիմի վրայ, որ բացել էին վրան նոր տաճար կառուցանելու ատթիւ: Վարանդայի Ջահնազարեան մելիքները այս վանքը բերդ շինեցին լեռների հայերին պաշտպանելու համար դաշտի թուրքերի յարձակումներից. բերդը դեռ գրև թէ ողջ կանգուն կայ, կէսդեսեանին տարածութեամբ, ամրակուռ, պատկառելի, քար ու կիր, երկար քառակուսի, չորս անկիւնում բուրգեր, պարսպի բարձրութիւնը 10 արշին. ներսը կամարակապ շատ սենեակներ, կիսով չափ խաղաւած: Եկեղեցին նոր, 50 տարւայ շէնք, հասարակ քառակուսի, սրբատաշ չորս սիւնի վրայ: Անցեալ դարու երեսուն թւականից մինչև յիսունը Ռուսաց մաքսատունը տեղաւորւում էր այս ամրոցում: Նոյն դարու մինչև ութսուն թւականները վանքում կար համեմատ միաբանութիւն մինչև երեսուն հոգի. աբեղաների վարժատնով, Վարանդու այժմու լաւ քահանաներն այս վանքի սաներն են: Միաբանները վերջացան, վարժատունը փակւեց, դադարեցան ալելուք, վանքը դարձաւ *օջախ*—միայն ուխտատեղ, պահում էին մղդեսիներ, երբեմն աչքից գցած մի սևագլուխ: Վարանդու ժողովուրդը շատ սիրում է ուխտի գալ այս վանքը. սրա թեմի գիւղերը են՝ Սօս, Մաւաս, Մաճնա, Քէրը, Հէրէր, Բառաճուճ, Աւէտարանց, Ճարտար, Մէկպոլա, Հայորտի, Աշան, Ճեխեր, Թաղաւարդ, Բլբլակ, Տողասեղ, Սխտորաշէն, Խերխան, Դիշի, Խնուշինակ: Բայց ինքը վանքը չորս կողմից թուրքերի գիւղերով է շրջապատւած 2-5 վերստ, *Դիւանլար*—50 տ... *Ղաջար* 300 տ, *Վերալլու* 400 տ, *Եղլանլու* 300 տ, *Դէլաղարլա* 300 տ, Վանքից 8 վերստի վրայ կայ *Կարաբուլաղ* մալականի աւանը, ուր կայ 200 խանութ, շաբաթական բազար չորեքշաբթի օրը, փոստ—հեռագիր, հիւանդանոց, դեղատուն, երկդասեան դպրոց, հաշտարար, սահմանապահ թուրքիկ պահակ և խիտ առ խիտ թիւրքական բնակչութիւն մինչև Արաքս. որ այստեղից 50 վերստ է: Վանքն իրեն կից ունի 150 դեսեատին հող. 50-ը այգիք, մնացեալը վարուցանի. բոլոր բերքից ստանում է, տասանորդ. սեպհական ունի 5 դեսեատին վարելահող, երեք կտոր թթենիք, մի խաղողի այգի փչացած. յաջող տարին բոլոր բերքը փող հաշւած կը լինի 600ր. խաչահամբոյր, մոմածախ, մարթի՝ տարին 400ր. գումարն 1000ր. այլ և վանքն ունէր ութ կով, մի ձի, մի էշ և մի ջրաղաց, այժմ աւերակ: Վանքին կից կայ մի մեծ պետական ազատ հող, որ ամեն տարի կապալով տրւում է շատ լեռնական հայ գիւղերի վարուցանք անելու. հողը շատ բերրի է. յունիսի վերջին կալը այդտեղ վերջանում է. այդտեղ հայերը ունէին մինչև 500 կով ու մարագ, անբաւ խոտի դէզեր, ձմերոց էր: Վանքին մօտ կար չորս հայ բէզերի տներ և 8 տուն մշտական հայ բնակիչ: Վերոյի

Երկու կիսագնդերի ագարակատիրոջ մտածմունքները

սկիզբը (Տարազ № 3)

Ես այսպէս սկսեց մեր երկրագործն ընդհանրապէս չըդտուած շաքարին, զաւակներին էլ նոյնը սովորեցրեց, մայրն էլ գտնում էր, որ մի գրուանքա շաքարն աւելի անհրաժեշտ է, քան տասը ձուն—իր տեսակէտից—իսկ տեսակէտը միշտ այն է, թէ ինչպէս անէ, որ նորա բան ստանի: Բայց ինչ և լինի, շաքարի գործածութիւնն աճում և աճում է: Տասը տարի առաջ մարդագլուխ 8 գրուանքին էր հասել, նոյնիսկ վերջերը գործածութիւնը հասնում էր 14 գրուանքին: Ամերիկական ագարակատիրոջ համեմատական թիւն է 100 գր.: Ուրեմն ռուս ագարակատէրը գործ է ածում 149 գր., նորա ամերիկական վիճակակիցը 1000 գր. Տէր Աստուած, ինչ ահագին զանազանութիւն է: Դեռ այն էլ չմոռանաք, որ Միացեալ Նահանգներում պտուղ և խաղող անհամեմատ աւելի է շատ գործածւում, քան Ռուսաստանում: ամերիկական մշակը սեղանին չի նստի առանց մրգի:

Ուրեմն, Ռուսաստանում շաքարի գործածութիւնը աճում է: Պէտք է ուրախանալ, որ ժողովրդեան սննդեան շրջանակի մէջ մի տարր էլ աւելանում է, երբ որ ժողովրդեան կառուցւածքն առաջն է առնում: Էլ ինչ ծածկելու բան է, եթէ ասենք, որ ռուս երկրագործը քաղցած փորով կեանք է վարում: Միւս կողմից, պէտք է դարձեալ ուրախանալ, որ սննդեան տարրն ամբողջովին Ռուսաստանի բերք է և օտարից դրամով գնելու կարիք չունենք: Բացի սորանից, երկրագործութեան մէջ ճակնդեղը, որից որ շաքար է պատրաստւում, որ փոխցանի կամ փոխանակաւ սերմանելու ժամանակ այնչափ կարևոր գործօն է դառնում, որ միայնխոյրերում ռուսաց երկրագործութիւնը բարձր մշակութեան է հասել, ուր որ ճակնդեղ է մշակւում: Ես ռուս երկրագործն արդէն մոցրել է իւր փոխցանի մէջ նոյն ճակնդեղը. կան այնպիսի շաքարի գործարաններ, ուր որ ճակնդեղ է մշակւում: Ես ռուս երկրագործն արդէն մոցրել է իւր փոխցանի մէջ նոյն ճակնդեղը. կան այնպիսի շաքարի գործարաններ, ուր որ ճակնդեղ բուսցնողների մէջ 50%-ը գիւղացիներն են և նորա արդէն փորձեր են անում իրանցից թօթափել պայմանական խամ հոգից, ճակնդեղի շնորհով: Շաքարի գործածութեան աճմանից օգուտ է ստանում և նոյն գանձարանը—ակցիզն էչստանում: Օգուտ է ստանում և արդիւնագործութիւնը—խեղճ ռուս երկրագործի փայփայած դաւակը. ինչ ասել, որ չարից, որպէս զի գորան կշտացնէ և աճեցնէ—և՝ երկաթէ ցաքանը փայտեղենով փոխանակել և թեթև արօրի փոխանակ, որ շատ երկաթ է պահանջում, գործածեց գութանը. օտարերկրեայ գործիքները թանկ են ծախւում—նա էլ վճռեց եօլլա գնալ առանց մէկի և միւսի, մինչև որ ոյժ ստանայ և զօրանայ իւր փայփայած զաւակը և նրանից յետ թէ բատանայ, գնէ իր զաւակը աւելի էժանագին գործիքներ: Օգուտ է ստանում նաև ռուս երկրագործը—հնար ունենալով գործ գնել իւր և իւր զաւակների ազատ ձեռքերը. մի ով բանիւ, կարծես թէ ամենայն ինչ կարգին է, բայց...

Քանի որ նշմարւում է շաքարի առաւելագործութիւնը, պէտք է ուրեմն եկող տարւայ արդիւնագործութիւնը քչացնել—վճռեցին գործարանատէրերը: Հետևապէս դարձեալ նոր նոր թումբ հասանքի դէմ... Զարմանալի հարուստ է մեր երկիրը... Երբեմն արանջացին, թէ ինտելինդենցիայի առաւելագործութիւն է առաջ գալիստոսը համալսարաններում և 19,800 ուսանողներով մեր 140 միլիոն ազգաբնակութեան համեմատ, այն ինչ Միացեալ Նահանգներում 73 միլ. ազգաբնակութիւնն ունի 41 համալսարան 65,500 ուսանողներով: Այնտեղ առաւելագործութիւն չկայ, այլ ընդհակառակը աւելի և աւելի աճում են ազգային լուսաւորութեան ծախքերը: Իսկ այժմ նոյն երգն են երգում շաքարի մա-

չեալները անցեալ տարի Օգոստոսի 18, ժամը 11-ին բոլորը քանդւեցան, այրւեցան, ցրւեցան, փչացան վանքի հետ շրջակայ թուրք գիւղերի խուժանի ձեռքով և ցաւալին այն է, որ յոյսի տեղիք չըկայ թէ կարելի լինի, որ այդտեղ դարձեալ հայը կարողանայ մշակութիւն անել կամ վանքը նորոգել։ Այդ պարզ է նրանց համար, որոնք պատմութիւնը չը կարդացին թղթի վրայ լինել։ Վանքի հասած աղէտին թուրքերը տարան ամէն ինչ, ազատւել է միայն սեղանի մեծ խաչը, մասնատուփը, ս. Աջը։ Բոլոր գրքերն ածել են վանքի ջրհորը. տարել են տաւարը, ցորենը, գիւղացիների վանքում պահ դրած սերմացու 100 փութ ցորեն. 14 արծաթ խաչ, 2 արծաթ սկիհ, մի արծաթ բուրվառ, մի արծաթ ոսկէզօծ շաքարաման, կիսարծաթ և պղինձ 120 շամադան, 20 փութ պղնձեղէն, եկեղեցու զգեստներ և վանքի բազմանուն տնային իրեր և կեցողների կայք։ Մինչև աղէտի օրւայ ժամը 10 շրջակայ հայերը մի բան վերցնելով փախչում էին. շատ և շատ բան թողնելով։ Երբ թուրքերի շարժումը զգալի եղաւ, տեղական տասը հրացանաւորներ ձի նստան գնացին հայ գիւղերը օգնութեան, չը վերցրին իրենց հետ վանքի արծաթեղէն կամ տաւար, հաւատացած գոլով թէ աղէտն այնքան մօտ չէ, նրանց մեկնելը թուրքերը նկատելով, կէս ժամից յետոյ վայրենի աղաղակներով դուռ ուին վանքի վրայ, փշրեցին դռները և սկսեցին դժոխային աննկարագրելի թալանը, որից յետոյ թողին միայն հեռանայ վանահայրը բոբիկ, անինչ։ Թալանեցին վանքի կից եկեղեցի հայ բէգերի երկյարկանի հոյակապ տները և ամբարները։ Թալանեցին, կրակեցին ութ հայ տները և 500 հայի կալ մարագները, վնասը հարիւր հազարից անց է։

Վանքի սենեակները քանդել, փայտեղէն տարել, պատուհանները կրակել, տաճարի քարերից փշրել, պատկերներ, ջահեր փշրել. միւս օրերը հայերի թթի, խաղողի այգիներ կտորել սկսած են։

Եթէ վանքի մօտի պետական ազատ հողի վրայ մի յիսուն տուն հայ գաղթական բնակի, եթէ պրիստաւը Դուշար Թուրք գիւղից փոխադրի Աղօղլան, եթէ Ջիւանլար գիւղի Թուրքերը փոխադրւեն Դաշար, որ շատ հեշտ է հողի առատութեան պատճառով, եթէ փախած հայեր կարողանան վերադառնալ իրենց տեղերը, որ մօտիկ չեն, այն ժամանակ միայն կարելի կը լինի և Ամարաս վանքը շէնցնել, նորոգելով նրան, որ գոնէ սկզբում անշուշտ հարկաւոր է երեք հազար րուբլի, որովհետև պէտք է նոր տուն շինել և նոր սարք ձեռք բերել։

Ն. Տ.—Ա.—եան.

—

Մամուլի շուրջը

—

Հանգեան 'ի Տէր Առաքելոյսի խմբագրութեան ոսկրէն լուսով պ. Դորգանեանից մի քանի հազար ռուբլու փոխանակութեամբ ձեռք բերած Կովկաս. Վեստնիկ ամսագիրը, Բագւում Սունդուկեան ամուսինների նորերս սկսած Կովկ. Սլովո լրագիրը և Լիտարգիական ընի մասնեց Թիֆ. ընդհ. նահանգապետը Նով. Օբոզր. հասուն և բեղմնաւոր լրագիրը, մինչև որ Թիֆլիսը զինւորական դրութեան մէջ է։

Վրաց լրագիրներից էլ լոյս է տեսնում այժմս միայն Ցնոբ. Փուրցելին։

Իսկ հայոց մամուլը բարգաւաճում է շատանում ոչ թէ ամիսներով, շաբաթներով, այլ օրերով։ Իսկապէս Նով. Վր. իրաւունք ունի մեղադրելու երկրիս փոխարքային, որ նա հայերին շատ է երես տալիս, այն հայերին, որոնց երէկ մի գաւառապետ, մի սոսրին ոստիկան անգամ արժան չէին համարում նրանց երեսներին նայելու։ Ցիրաւի ինչու փոխարքան այդպէս է անում. հայերի երեսներին ոչ միայն նայում է այլ ենթբանց լսում, հեռները խորհրդակցում, ուզած լրագրների իրաւունքն իսկոյն տալիս, բայց և թողնում, որ հայերին կոտորեն, ոչնչացնեն։ Ո՞ր ժամանակն էր լաւ. իշխ. Գալիցինի, որ հայերին խնայում էր, կոտորել չէր տալիս, այլ նրանց գոյքը խլում էր, հոգիները հանում, թէ այժմ։

Ըստ Նով. Վր. այն ժամանակն էր լաւ, և որովհետև մենք Նով. Վր.-ի առածի հակառակը պիտի ասենք անպատճառ, ուստի և պէտք է ընդգենք, որ հայերիս համար այժմս է լաւ։

— —

Գ. Ա. Աթանեսեանի խմբագրութեամբ անցեալ շաբաթւանից սկսեց լոյս տեսնել Աշխատանք ժողովրդական, անտեսական, գիւղացիական շաբաթաթերթը, որի գլուխի վրայ ծածանում են՝ իրաւունք, պտուղ, հող։

Իր ծրագիրն ու նպատակը Աշխատանքն այսպէս է որոշում։

«Նա գալիս է աշխատելու մի դասակարգի համար, որը մինչև օրս գիտաւորեալ կերպով չըթոյլատրւեց բանտարկւած էր քաղաքացիական բանտարգելութեամբ և կառավարութեան շղթաներով։ Դա աշխատաւոր դասակարգն էր և ամենից առաջ գիւղացիութիւնը իր անթիւ ցաւերով, գիւղացիութիւնը՝ բազմատեսակ կարիքների ծանրութեան տակ ընկճւած, անյետաձգելի պահանջներով»։

Ի՞նչպէս իսկ այնքան տարի հրատարակող ոսկրէն լեզւով Կայսեր. Գիւղատնտես. օրգան և մասնաւոր կալթնատնտես-գիւղատնտես հրապարակախօսի խմբագրութեամբ լոյս տեսնող հանգուցեալ Գիւղատնտես. բերքը ուրեմն տեղութիւն չէ արել անտէրութեան մատնւած գիւղացիներին։ Սրա պատասխանն էլ կայ նոյն թերթի մէջ՝

«Կովկաս Գիւղատն. շաբաթաթերթ խմբագրական մասնաժողովը որոշել է ժամանակաւորապէս դադարեցնել թերթի հրատարակութիւնը նիւթական միջոցների պակասութեան պատճառով։ Նոյնպիսի բնական մահով մեռնում է իւրաքանչիւր մի ծառ, որի արմատները աւազի մէջ են ամրացած, և որը բիւրօկրատական ենցւկներով ու «նպաստներով» էր պահպանւում»։

Իսկ ինքը Աշխատանքը իր արմատները դնում է ժողովրդի խաւերի մէջ, ասելով՝

«Ուսուցիչները, քահանաները և ինտելիգենցիան գիւղերում և գաւառական քաղաքներում հրաւիրւում են «Աշխատանքի» գործակցութեան՝ թէ գրով և թէ՝ տարածելով ժողովրդի լայն խաւերում «Աշխատանքը», որպէս մեր գիւղացիութեան շահերին եւ ցաւերին մօտիկ միակ թերթ»։

Այդ յոյսը ունենալով մեզ քաջալեր՝ Յուսացէք՝ յուսացէք անսնինք...

«Մենք երկրի և ազգաբնակութեան կուլտուրական կեանքի ներկայիս ամենաաննպաստ պայմաններում—ուղարկում ենք «Աշխատանքի» համարները մեր գործակալներին և բարեկամներին 'ի զուր և շատ ի զուր, խնայեցէք գոնէ փոստի ծախսը և թուղթը։

Աշխատանքի մէջն են Մշակի Ստրակեսր և Առաքելոյսի Վ. Փ. Բամանեա չի տիրեսցէս. ովքեր բաժանում են իսկ կարդացողները, որոնց համար հրատարակւում են թերթերը փայտ չունին սենեակները տաքացնելու. գրամ չունին հաց ու պանիր առնելու։

Անցեալ կիրակի Թիֆլիսի առաջնորդարանում բոլոր եկեղեցիներից հաւաքւած պատգամաւորներն ընտրեցին 4 հոգի՝ Բժ. Ալ. Խատիսեան, պ. Ալ. Մելիք-Ազարեանց և պ. Ալ. Բալանթար, բժ. Կ. Ստեփանեան, որ գնան մասնակցեն փոխարքայի սարքած հայ-թրքական կոմիսիային։

Այս առիթով Յառաջը հարցնում է՝

«Դուք պ. պ. ընտրւածներ, ունէք այնքան քաղաքացիական քաջութիւն, որ ձեզ հրաւիրողներին ասէք. դուք թոյլատրեցիք, դուք ստեղծեցիք այս դժոխքը,- դուք էլ մաքրեցէք»։

«Մենք հայ ժողովրդի ներկայացուցիչներ չենք. մեզ ընտրել է նրա միայն մի չնչին մասը»։

Ահա այսպէս. երբեք էլ չեն եղել դըրանք ներկայացուցիչներ հայ ժողովրդի, իրանք իրանց ընտրել են և հաստատել։

—

Նոր-Դարը վերջերս գրաշարային սադնալի պատճառով մի փոքր անկանոն էր լոյս տեսնում, որ անշուշտ շատ և շատ է վնասում գործին։ Համբերութիւնը հատած պ. խմբագիրը շատ իրաւացի հրաւիրում է ում վերաբերում է ուշադիր լինելու, ասելով՝

«Ամեն օր գալիս են մեր տպարանի դռան մօտ կանգնում գրաշարներ փախցնելու նպատակով։ Նախորդ օրը մէկին տարան, երեկ երեքին փորձեցին միանգամից տանելու։ Այդ անում են մի ուրիշ թերթի համար։ Ում որ այս վերաբերում է, զգուշացնում ենք համբերութեանն էլ չափ կայ։ Վերջապէս ամօթ է»։

Գ. Սպանդարեանի բողոքը շատ արդարացի. մենք կ'առաջարկէինք, որ տեղական ոչ մի խմբագրութիւն, որքան է ճնշւած լինէր և գրաշարի պէտք ունենար երբեք նոր գրաշար ոչ ոքի չընդունէր, մինչև նա՝ այդ գրաշարը գրաւոր համաձայնութիւն չը ներկայացնէր այն խմբագրութիւնից, որտեղից նա դուրս է գալիս և մտնում մի ուրիշ խմբագրութիւն։

—

ԱԶԴ

Մեր կազմած և հրատարակած 1906 թ. օրացոյցներ „Մոցի", „Պատի", „Սեղանի", և Ռուսերէն լեզւով նախազուշակութիւններով. թէև արդէն լոյս են տեսել, բայց ժամանակիս հաղորդակցութեանց անկանոնութեան և թէ ուշանալու պատճառով, շատ պատւէրներ՝ անկատար ենք թողել, ուստի ցանկացողները թող բարեհաճեն նորից կարգադրել, այնպէս, որ միայն Թիֆլիսում անձամբ մեզանից ստանան։ Հասցէս՝ Թիֆլիս՝ Գարաեսկի փողոց սեփ. տուն № 5.

Մակար Զմշկեան

ոին. Ռուսաստանը տարեկան 63 մլ. փութ է արտադրում, Գերմանիան 93 մլ., Աւստրիան 58 մլ., Ֆրանսիան 44, իսկ երբ որ համեմատեն այս երկիրների ազգաբնակութեան թիւը Ռուսաստանի հետ, աւելի եւս կը պարզւի, թէ ինչ բան է այդ առաւելագործութիւնը հէնց միայն Գերմանիայի համեմատութեամբ—մենք պէտք է շաքար արտադրէինք տարէնը 200 մլ. փութ։

Իսկ այնտեղ 63 միլիոն է — և ասում են, թէ առաւելագործութիւն է։ Հէնց միայն մեր ռուսական թմրած անշարժութիւն է, Դրամատէրերը ստեղծագործող չեն։ Փոխանակ արդիւնքի արտադրութեան քանակն աւելացնելու և այնու արդիւնքի ծախքը պակասեցնելու, և այդ եղանակով ժողովրդական մասսայի կացուցանելու, —մղղանչում քչացնում են։ Ինչ աւելորդ, ուր է աւելի որդը։ Ամենայն արդիւնագործութիւն կարող է չունենալ կը գանել, քան մեր սաւինը—սխալ մենք մարդակերական սպառում ենք 14 դրւանքա այն ինչ միւս ազգերը գործ են ածում 100 գր.։ Այս եօթն անգամ պակաս է։ Էժանացրէք շաքարի գինը և արտադրեցէք նոյն իսկ հարիւր միլիոն—և ժողովուրդը բոլորն էլ կառնէ։ Չէ որ շաքարի ակցիզ վերացնելը—մօտալուտ ժամանակի խնդիր է։ Միացեալ Նահանգներում ակցիզ չկայ և այն տեղ շաքարի դրւանքան 5 կոպէկ է։ Իսկ թէ հնարաւորութիւն կայ շաքարի գինը իջեցնելու, այդ երեւում է գործարանատէրերի ստացած դիւիդենտներից. նոքա ստանում են 15, 20 և 30 տոկոս նայելով մեքենաների կատարելագործութեան։ Եթէ կայ աւելորդ» քան սպառումն, այն դէպքումն էլ չեն պակասեցնում արդիւնագործութիւնը, այլ աշխատում են նոր շուկաներ գտնել։ Փոքր Ասիան, Պարսկաստանը, Տաճկաստանը մեր գրացիներ են, և ոչ Գերմանիան, ոչ Աւստրիան մեզ արդելք չպէտք է դառնային։ Իսկ եթէ նոքա մեզանից աւելի յաջողութեամբ են գործում, այդ բանի պատճառը մեր դրամատէրերի ստեղծագործութեան բացակայութիւնն է, ակունութեան, ձեռներէցութեան բացակայութիւնը... Եթէ այս բաները չպարզացնենք մեր մէջ, մեր ինտելիգենցիան կը մնայ պարապից դուրս, և ժողովուրդը կը սովալուի դարձեալ նեմցին գլուխ տալու» թէ «ձեզ, իմաստուն մեզ վերայ մեծ էլ մեր ինտելիգենցիան էլ բանի պէտք չեն»... Նոքա էլ կը գան և կիշխեն։ Եթէ որ աստիճան շաքարի մեծ պահանջ կայ շուկայի մէջ և թէ ինչպէս են հասկանում այդ, կարելի է գտնել շաքարի բնութիւնը փոխելուց։

Բա չէք ասում, դարման, կորեկ, ալիւր կը խառնեն շաքարի հետ անասուններին կերակրելու համար, իսկ եթէ ռուս երկրագործը մեր առնէ և այն խորամանկ հնարագիտութեամբ կերակրէ իւր դաւակներին, այդ բանը նորան թոյլ չեն տայ. իսկի չհամարձակւես երեխաներդ—այ, թէ ուզես խոզերին. ինչ՞ չէ, միայն թէ երեխաներդ—ենչ օրմազ։ Ե, ընթերցող, մնացածն ինքդ մտածիր։

Ռուս մշակը ինչպէս և ամերիկական մշակը, ինչպէս և ամենայն մշակ, աշխատում է, բայց իւրաքանչիւր մշակ գոնէ մարդավարի է ապրում, միայն ռուսի համար նոյնը չենք կարող ասել. նա բացված է կատարւում։ Եթէ ռուս երկրագործն օրէնն աշխատելով ոչ թէ 9—10 ժամ, իւր ամերիկական վիճակակցի պէս, այլ 14—12 այն եւ եղիպտական եղանակներով, այնպէս որ ամերիկական մշակի 9 ժամեայ աշխատութիւնն, ասենք, հաւասար է 15 ակր հնձած հացի, իսկ ռուս մշակի 12—14 ժ. աշխատութիւնը հաւասար է մէկ և կէս ակրի (կէս դեսեատինի),—այս բանի մեղաւորը երկրի ինտելիգենցիան է, այսինքն երկրի պակասաւոր լուսաւորութիւնը։ Եւ եթէ, եգիպտական չարչարանքներով 12—14 ժ. աշխատելուց յետոյ, ռուս երկրագործը տուն է դառնում գիւահարած, վասն զի այժմեան մարդաւորեմն և ռսի նեարդային դրութիւնը չի տանում անդրադառնալ դիզերանքները— և այս պատճառով նա ըմպում է, արբեցնում է, նոյն իսկ գազանանում է, ովի արդիւնքն են «մինչի մահ ծեծւած կինն ու զաւակները», այս բանի մեղքը ինտելիգենցիայինն է —այն մասով, ինչպէս որ վերը բացատրեցի։

Ս. Մ.

Ս. Ընտանիքը

Իւղաներկը գտնւում է Դրեզդէնի պատկերասրահում, ուր դրւածէ է յատուկ սենեակում. Աշխարհի նկարիչները գալիս են այստեղ երկրպագելու Ռաֆայէլի այս ստեղծագործութիւնը ու ընդօրինակելու։

—

ՏԻՐԱՄՕՐ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ

(Ամարասայ Վանքը, օգոստոսի 18-ին Թաթարներն աւերելով, հետերնեըը տարան Տիրամօր հրաշալի պատկերը։)

Երբէք չեմ մոռնալ մենաւոր կայան
Մախուր լեռների դիւթական հովտում.
Տաճար պանծալի, սրբազան տապան
Պասկեր Տիրամօր՝ մանուկը գրկում

Հրաշալի կոյսի երկնային աչեր,
Նրմանը չեղած գեղադէմ տիպար՝
խանդավառ սիրոյ ջերմեռանդ խոհեր
Պարարող էին իմ սրտիս համար։

Ամէն օր ես էլ, ուխտաւոր էլ շատ
Կառնէինք շնորհք աշխարհի Մօրէն
Ըսփոփուած սրտով եւ հոգով ազատ
Ըղձային մենք միշտ պագնել Քեզ նորէն։

Երբէք չեմ մոռնալ խուժանը Վայրագ՝
Մեր մեղաց համար առաւ քեզ տարաւ.
Տենչալի տեսքիդ անհուն մեր փափագ՝
Եղաւ մեր սրտին անդարման խոր ցաւ

Վանահայր.

Փ Շ Ր Ա Ն Ք Ն Ե Ր.

Ուզեցի քեզ մոռանալ...

Ուզեցի քեզ մոռանա՛լ, հանե՛լ մտքիցս քո անունը, ջնջե՛լ քո բոլոր յիշատակները... Վառեցի վառարանը և այն բոլոր թղթերն ու նամակները, որոնց մէջ ես քո սէրն էի նկարագրել, դառն հառաչ արձակելո՜վ, արցունք թափելով կրակի մէջ նետեցի... արցունք թափելով բաժանեցի նրանցից, ինչպէս բաժանւում է մայրը իր մի հատիկ որդուց, սիրասուն ու փայփայած զաւակից...

Կրակը բոցավառեց ուղիղ այնպէս՝ ինչպէս իմ, յոյսերս մի ժամանակ, երբ դու դեռ սիրում էիր ինձ և սալս փլշփլշալով հանգաւ՝ ինչպէս իմ յոյսերս այժմ, երբ դու դաւաճանեցիր ինձ... Բոլորն այրւեց և մոխիր դարձաւ... Ու ես կարծեցի, թէ ո՛չ մի բան չը մնաց որը այլ ես յիշեցնէր քեզ.... Ես կարծեցի թէ արգէն պիտի դ..

Բայց օրե՛ր անցան, յաջորդեցին ուրիշները, և-. գա՛ւ, և քո պատկե՛րը, և քո վաղեմի վսեմ յիշատակները դեռ մնում էին մի անկիւնում, դեռ յիշում էին և դեռ աւերմունք էին առաջ բերում այնտեղ.,. Այդ ան, կիւնը, այդ խղճուկ ու մոռացւած խորշը սիրտս էր...,

Ու ինձ մնում էր սիրտս էլ այրե՛լ կրակի բոցերի մէջ, խորովե՛լ նրան, որպէս զի ես կարողանայի քեզ մոռանալ... Բայց սիրտս այրել չըկարողացայ... և դու՜ անգո՜ւթ, դեռ ապրում ես այն տեղ...

—

ԱՉԵՐ ԿՈՒՐԱՑԷՔ

Աչե՛ր կուրացէ՛ք... Դուք նայեցիք ծաղկող գարնանը, որ խնդալիք, ուրախալիք նրա հետ...Բայց փայլուն զարդերով պճնւած գարունը այրւե՛ց ու խարկւե՛ց... Զքացան ծաղիկները կասես խանձւելով արևի կիզիչ ճառագայթներից...ինչ այրող զօրութիւն էիք դուք թագցնում ձեր հայացքի մէջ, որ այդպէս եղաւ..-

Գարունը փոխւե՛ց
Աչքե՛ր կուրացէ՛ք

Հանդարտ հոսող գետի խորքը թափանցեցիք, մաքուր ջրերի հետ խաղալու, բայց գետն անզգալ, գետը համր ու պարզ պղտորւեցաւ, փրփուր թքեց և ոռնալով առաջ ան-

ԽԱՉԻ՛Ն ԴԱՐԻ ԿՈ ՀԱՅ ԴԵՂՋՈՒԿ։

Մոխիր դարցրին Թաթարերը հայաշատ, պատմական Խոշէնու գիւղերը և պակասն էլ այս ամսւայ մէջ լրացրին։

ցաւ, կարծես մի խորհրդաւոր զաղանիք ձեր հայացքից սուզւեց նրա վճիտ կուրծքը և վրդովմունք առաջ բերեց...ինչ սոսկալի բոթ հաղորդեցիք որ գնել այդպէս եղաւ...

Գետն էլ փոխւե՛ց,
Աչե՛ր, կուրացէ՛ք...

Դուք նայեցիք ջինջ եթերին որ գոնէ այն տեղ Ձեզ ընկեր գտնէք, բայց երկինքն անգամ խոժոռեց դէմքը, ամպերը գոռացին կայծակը փայլեց և վերևից՝ երկնքի ահարկու խորշ-աչքերից արցունքներ ցած, թափւեցին...Դուք ինչ, ինչ ասացիք ծեր Երկնքին, ինչ հասկացրիք խեղճ ծերունուն, որ նրա պաղ կուրծքը յուզւեց..

Երկինք փոխւե՛ց,
Աչե՛ր կուրացէ՛ք..

Զքնաղ աղջիկը, բնութեան ամենահրաշալի ստեղծագործ չնչող արձանը իր նազելի հասակով, իր փարթամ կրծքով, անմեղ ու գրաւիչ աչքերով, մանկական անբիծ ու անարատ սրտով գրեց ծեզ... Դուք մտածեցիք սիրել նրան... Թողիք ամեն ինչ հանդիսա՛ւ գարուն և գետ,և երկինք զմայլեցիք նրանով, մոռացաք ողջ բնութիւնը և ծեր աւերիչ հայացքի ամբողջ թափը կենդրոնացրիք նրա պայծառ աչիկների մէջ...

Կասես մի ամեհի ցաւ, դառը կսկիծ, մի թունաւոր օձ բուն դրեց նրա կուսական կրծքում..-Ալ-վառ այտերը թուշեցին, սիրուն աչիկները կորցրին իրանց գերող փայլը, հրւող սրտից ախ ու վախ-եր դուրս թռան և օրէցօր կիրմ՛ն, մաշեցի՛ն այդ չքեղ հրաշալիքը... անլաց աչերից յորդ արցունքներ հոսեցին...

Օ, անիծւէք դուք, աչեր... ինչ հաղորդեցէք դուք այդ հրեշտակին, արդեօք թո՞յն կաթեցրիք նրա սրտի մէջ, կամ թէ խո՞րը, չա՞տ խորը մխեցիք այնտեղ սիրոյ նետը, որ այդ անհո՞գ, անբիծ, չարաճճի էակին սիրոյ չաստուածուհի դարձրիք .. խլեցիք կենսատու, պայծառ արևը, սևացրիք նրա երջանիկ օրը



Ռ Ա Ֆ Ա Յ Է Լ

Ս. Կուսի պատկերի անզուգական նկարիչ։

ինչպէս դուք էիք սև, անտակ քարայրի, խաւար գիշերի պէս---և նա էլ փոխւեց...

Կուրացէ՛ք, աչե՛ր,
Ս իթէ մեղքը չէր...

Օ, ինչո՞ւ, ինչո՞ւ դուք գոյութիւն առաք, ինչո՞ւ եկաք աշխարհ, երբ դուք խորթ էք այնտեղ, երբ ուրիշներին պիտի վըր դովէիք, խլէիք նրանից երջանիկ, քաղցր րոպէները, երբ ձեր չուր պիտի միայն վշտի թունոտ շանթեր ցրւէիք--- Դուք զուր էքը ապրում---

Աչե՛ր կուրացէ՛ք
Դուք հէչ մեղքը չէ՛ք...

—

ՀՐԱՇԱԼԻ ՊԱՏԿԵՐԸ.

Երբ գիշերները օրւայ մանր հոգսերից, կեանքի ժխորից յոգնած, թուլացած պառկում եմ անկողնուս վրայ, վշտերից հանգիստ գտնելու, սենեակումս՝ խաւարի թագաւորութեան մէջ, բաց աչքերիս առաջ կենդանանում մի հի՜ն, շա՜տ հին սիրելի ու պաշտելի պատկեր---

Ո՛չ մի աշխարհահռչակ նկարիչ իր ճարտար վրձինով, իր հազար տեսակ գոյնզգոյն ամենաթանկագին ներկերով դեռ չէ կարողացել նկարել այդ պատկերի պէս մէկը՛ որ նրա պէս կենդանի, նրա պէս կաշկանդայ, հրաշալի ու պաշտելի լինէր...

ԼՈՒԻԶ ԹԱԳՈՒՀԻ ԴԱՆՄԱՐՔԻ

Բայց աչքերս այդ հրաշալի պատկերը նկարեցին միմիայն մի գոյնի ներկով..

Հազիւ թէ թեթեւ քունը փակում է թերթերունքներս, և ահա, պաշտելի պատկերը երազներիս առանցքն է կազմում... առաւօտեան վաղ երազներս օդն են ցնդում, չքանում է ամեն ինչ, բացի այն պատկերից՝ որ գեղեցիկ, սեւ ու սիրուն աչիկներ էր կրում չուշանի պէս զուրեկան դէմքի վրայ--երազներիս հետ միայն նա՛ չէ չքանում...

Նա ինձ մօտ է մնում ամբողջ օր ու գիշեր, շրջում է հետս ամեն օր, ամեն տեղ... այդ պատկերը սիրուհուս ամենաթանկագին պատկերն է, որ աչքերս նկարեցին--.

Սիրտս կտաւն էր, սէրը վրձինը ու վիշտը՝ ներկը-,- և այդ հրաշագեղ պատկերը այնքան խնամքով ու դաւն աշխատանքով է նկարուած, որ երբէ՛ք երբէ՛ք չի փչանալու և մաշուելու...

Եւ ես սիրուհուս այդ գեղանի վշտանկարչ պատկերը, կենդանագիր լուսանկարը պահպանում եմ խորուկ ծոցումս, կրծքիս տակ, սրտիս գաղտնի ծալքերի մէջ, որ ո՛չ ոք չը տեսնէ նրան .

Ս. Դարբինեանց

Տ Ա Թ Ե Ւ

Հարիւր անգամ նկարագրես Տաթեւը, դարձեալ չես կարող ամբողջ Տաթեւը իւր իսկական գրութեամբ նկարագրել: Նրան տեսնելիս մտքի և խօսքերի ահագին քաոսը գերում է քեզ և դու չգիտես ինչ անել. բնութիւնը միացած է հազար տարուայ պատմութեան հետ:Այս երկու ահագին գրքերը ծայրէ ի ծայր կարդալը հեշտ չէ:

Պէտք տեսնել իսկական Տաթեւը:Տաթեւը ահռելի ձորերի վրայ բարձրացած, Տաթեւը ճակատ տուած հսկայական լեռներին, ամեն կողմից սեղմած կիրճում, Տաթեւը իր դարաւոր լռութեան մէջ, իր փլատակների, իր անթիւ գերեզմանաքարերի հետ:Պէտք է տեսնել Տաթեւը իր աղմկաշատ ջրերի մօտ, պէտք է նոյնել Որոտանայ գետի փրփուրներով զուարթ մայլ-կապոյտ մէջքին, որ օր ու գիշեր քսւում է վիթխարի ժայռերին և խուլ աղմուկով լցնում է նեղ, ահարկու ձորը: Պէտք է նոյնել Տաթեւի գետակին, որ սպիտակ փրփուր դառած չուչռում է սարի գագաթից խոր խոռոչների միջով- վերջապէս, պէտք տեսնել Սիւնեաց աշխարհի այն կտորը, ուր Տաթեւն է գտնւում և այն ժամանակ միայն կարելի է ասել, թէ Տաթեւը ճանաչում ենք: Պատկերը, որքան ճարտար և հրաշալի գոյներով նկարուած լինի, չի տալ իսկականի թոյլ հասկացողութիւնն անգամ:

Ի՞նչ է այդ Տաթեւը, որ այդպէս գերում է ուղեւորին:

Մի վանք, որ շինուած է բարձր սարի գագաթին և ներկայացնում է Հայաստանի ամենահին սրբավայրերից մէկը: Նա շրջապատուած է խարխուլ շինութիւններով ,որոնք բռնել են ահագին ձորի ծայրը: Դուք մտնում էք հիւսիսայէն մեծ և հին դռնով,որի վրայ մի փոքրիկ և գեղեցիկ եկեղեցի կայ շինած: Ձեր առաջն է Տաթեւի տաճարը,որի վրայ բարձրացած է մեծ կոնաձև գմբէթը: Այդ գմբէթի մօտ կայ մի փոքրիկ գմբէթ, որի տակ Տաթեւի զանգակներն են կախած: Զանգակատան կողքին մի ուրիշ դուռը մտցնում է ձեզ փոքրիկ բակը,որի մի կողմում պատշգամբաւոր երկար շինութիւնն է շրջան տալիս, իսկ միւս կողմում վանքի գաւիթն է գտնւում: Այդ գաւթում կայ մի փոքրիկ քարեայ մատուռ, որ շինած է Գրիգոր Տաթեւացու գերեզմանի վրայ.իսկ մատուռից քիչ դէնը, դէպի արեւելք, խոր քարանձաւներում սնուած ժողովրդի կեանքից: Ո՞ւր է այն ոսկին և արծաթը, որ մի ժամանակ զարդարել է այս խեղճ տաճարը ուր է, ինչու այժմ Սիւնեաց աթոռի տեղը տկլոր է, աղքատ և ապրում է լոկ իր քարէրի անդուլթեան շնորհիւ: Պատմութիւնը պարզ վկայում է, թէ որքան մեծ և անսպառ հարստութիւններ է ունեցել Տաթեւի վանքը:Նրան սիրել, զարդարել են հայոց աշխարհի իշխաններն ու թագաւորները, բայց այդքան սէրը, այդքան զարդարանքը վանքի թշւառութիւնն են շատացրել: Մոնղոլ ու թաթար, պարսիկ ու թուրք մատ են գիպցրել վանքին, քաղցած գայլերի նման շուռ են եկել նրա շուրջը՝ատամ ատամի զարկելով, դարքի, հարստութեան հոտից խրճղուելով. և կարողացել են մի քանի անգամ կողոպտել, պլոկել,կոտորելով հարստահարել և ոսկի ու արծաթ դուրս տանել: Անցել է վանքը այդ բռնութիւնների երկաթէ դարերի միջով,պահել է իր մարմինը և այսօրնա կանգնած է մեր առաջ և ամբողջապէս լռութիւն է դարձել: Նա այժմ էլ չէն է, այժմ էլ նրա սեղանի վրայ մատուցանում է պատարագ, հին քանդակագործ նշանաւոր դուռը ձեզ մտցնում է մի փոքրիկ եկեղեցի, որ շինուած է յանուն Գրիգոր Լուսաւորչի: Շատ հին ժամանակներում մի, այն այս եկեղեցին է եղել այստեղ.մի քանի անգամ նա կործանւել է զանազան բռնակալների ձեռքով և մի քանի անգամ նորոգւել է:

Տաթեւի տաճարի մուտքը զանգակատան կողքին է: Մտնում էք այդ մեծ և գեղեցիկ տաճարը, որի բարձր կամարների տակ թագաւորում է խորհրդաւոր կիսամթութիւնը և յաւիտենական լռութիւնը: Ձեզ նայում են խնկի ծխից սեւացած պատերն ու նրանց վրայ կախուած պատկերները. դուք մոռանում էք ճարտարապետութիւնը, մոռանում էք ներկայ աշխարհը և լուռ, մտքով խորասուզւում էք տաճարի լռութեան և կիսամթութեան մէջ. սպասում էք, թէ ահա մի որ և է անկիւնից այդ լռութիւնը խանգարելով կլսուէ մի ձայն, պարեր ձայնը և ձեզ կըհասկացնէ շատ բան Սիւնեաց աշխարհի լեռներում և բայց ամժեան ժամանակի համար ոչինչ չի ասում. նրա միակ լեզուն հէնց այդ լռութիւնն է, որ անցեալ դարերի լեզուն է. .

ՏԱԹԵՒԻ ՎԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱՐԱՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիւնեաց աշխարհը, Դաւիթ-բէկի հայրենիքը արեան և կրակի վայր է դարձել վերստին:

ՓՐԻԴՐԻԽ ԹԱԳԱՒՈՐ ԴԱՆՄԱՐՔԻ

Թագուհի՛ իմ ամենախորին ցաւակցութիւնս և աղօթումս Ամենաբարձրեալն, հանգուցանել փախճանեալի հոգին երկնային օթեւաններում և պարգեւել Ձեզ կարողութիւն համբերութեամբ տանելու Ձեր ծանր կորուստը:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Նորին Մեծութիւն Մայր Թագուհի-Կայսերուհին ներեւեալ հեռագիրն է ուղարկել

Կոպէնհագէն 24-յուն.

Մկրտիչ Կաթողիկոս. ամենայն Հայոց

Անկեղծ շնորհակալութիւն ինձ նւաած խոր վշտի առիթով Ձերդ Սրբութեան հովապետական մաղթանքների եւ կարեկցական զգացումների համար, որոնք արտայայտած են Ձեր հեռագրի միջոցով եւ որոնցով խիստ զգացւած եմ զգում ինձ:

ՄԱՐԻԱ.



Մայր թագուհի Մարիա Ֆէօդորովնային, իր հանգուցեալ հայրՔրիստիան Թ. մահուան առիթով, Վեհափառ Կաթուղիկոսի մխիթարանքը.

Թիֆլիս 22 յունուարի

Ստացայ Ձեր ծնող՝ Նորին Մեծութեան Քրիստիան թագաւորի մահուան բոթ. Արտայայտում եմ Ձեզ ամենաջերմ

ՏԱՐԱԶ հետեւեալ №-ից կուղարկվի միայն նրանց, որոնք արդէն նորոգած կը լինեն իրանց բաժանորդագրութիւնը հետեւեալ № ի հետ կուղարկի և Ադրիւր № 1.

Կնոջ դրութիւնը ներկայումս եւ ապագայում

(Ա. Բեբել)

—

(Սկիզբը Տարազ № 3)

Վարեւր երիտասարդներից ոմանք կը հրաժարեն այն աղջկանից, որն առաջուց յարաբերութիւն ունեցած լինի ուրիշ տղամարդի հետ։ Իսկ իրանց վերաբերմամբ նրանք այդ բանն այնքան բնական են համարում, որ ծաղրի առարկայ է դառնում, ինչպէս յիմար, այն երիտասարդը, որ ամուսնանալու ժամանակ յայտնում է, որ ինքը մինչեւ բոլէն հեռու է մնացել սեռական յարաբերութիւններից։

Չկայ մի աւելի վատ բան, քան թէ մերժել բնութեան իրաւունքներն ու պահանջները։ Կատարեալ հասունութեան շրջանում սեռական մերձաւորութիւնն է. նոյնպէս անհրաժեշտ է, ինչպէս խմելիքն ու ուտելիքը հանգստութիւնն, քունը. եթէ ճնշումին սեռական հակումը, ապա նա, իր ելքի համար անբնական ճանապարհ որոնելով, խորտակում է մարդու առողջութիւնը։ Սակայն բնութիւնը միայն տղամարդից՞ է այդպիսի պահանջ անում։ Ո՞րտեղից են առաջ գալիս այն անհագին թւով հիւանդ ու ցաւագար կանայք հասունացած ժամանակ, եթէ ոչ այն բանից, որ նրանք ճնշել են ու բաւականութիւն չեն տւել սեռական հակմանը։ 1.)

Տղամարդը, եթէ նա ամօթխած չէ, գաստիարակւածի միջոց է որոնում իր սեռական հակմանը բաւականութիւն տալու եւ հեշտութեամբ էլ գտնում է այդ միջոցը, իսկ կնոջից նա պահանջում է ծանր արհամարհանք, սպառնալիքով, որ նա ուժով ճնշէ իր հակումը, մինչեւ որ դէպքի բերմունքով կը գտնէ ամուսին։ Եթէ ամուսին չէ ճարւում, եթէ նա դառնում է «պառաւած աղջիկ»—որ աշխարհում ամենադժբաղդ արարածն է, որ անխիղճ ծաղրածութեան է ենթարկւում թէ իր աւելի բաղդաւոր ընկերուհիների եւ թէ տղամարդկանց կողմից,—ապա նրանից աւելի շատ են պահանջում առաքինութիւն ու ժուժկալութիւն։ Նրան համարումն հին կարասիք, հասարակութեան համար բոլորովին անպէտք առարկայ։

Իսկապէս, այժմեան աննորմալ պայմաններում, կնոջ զգայնութեան քօղից զուրկ սեռական ժուժկալութիւնը միայն հետեւանք է այն այն ստիպմունքի, որ գնում է նրա վրայ տղամարդի իրաւականութիւնը։ Նա պահանջում է կնոջից սեռական մաքրութիւն ոչ միայն նրա համար, որ այդ բանը դուր է գալիս նրա եսասիրութեանը, այլ եւ նրա համար, որ ապահովութիւն ունենայ այն բանում, որ ինքն ստիպւած չըլինի լինի իր ժառանգական արտադրութիւն համարել ուրիշի սիրոյ պտուղը եւ այդ պատճառով էլ իր վրայ վերցնելու դրանից ծագող քաղաքացիական պարտականութիւնը։ Իսկ ինքն, ընդհակառակն, մեծ մասամբ, իր արժանապատւութեան անվայել է համարում իր կողմից եւս նոյնպիսի զոհաբերութիւն անելու կնոջը։ Նա իր իշխող դիրքի ուժով մեղանչում է անպատիժ կերպով, իսկ կինը, իր կախում ունենալու եւ ընդհանրապէս եղած նախապաշարմունքների պատճառով, հակադրւած է եւ սովորել է յանցաւորի հետ ամուսնանալու։

Այդպիսի հետեւանք են ունենում ներկայ հասարակական յարաբերութիւնները։ Հասարակական կարծիքը, որի արտայայտիչներն են, գլխաւորապէս, տղամարդիկ, այնպէս ուժեղ է որ կանայք ակամայ հնազանդւում են նրան եւ նոյն իսկ ձայնակցումեն երգախմբին «ընծաներին» դատապարտելու ժամանակ։ Չո՞ւն պատրաստ են քարկոծելու, իսկ *ոճրագործը* փայլուն գէմքով վերադարձում է հասարակութեան մէջ եւ տղամարդկանց ստեղծած օրէնքները քաջալերումեն նրան շարունակելու յանցաւոր գործերը։ Եւ դա կոչւում է քաղաքացիական բարոյականութիւն։

Սեռական հակման բնի ճնշումը առաջ է բերում մի ամբողջ շարք վնասակար հետեւանքեր, որոնցից ծագում է հիստերիկան (ուշաթափութիւն), որն անհոգին քանակութեան մարդիկ է տալիս մեր գժատներին։ 2.

Լիւտերը, որը, իր քահանայական բթամտութեամբ շատ թիւրաբութիւններ է պատճառել, հասկացաւ, շնորհիւ իր սեռական ժուժկալութեան, որ գրել էր այդ ուժեղ եւ կատարեալ առողջ մարդու վրայ մենաստանի կեանքը, չամուսնացած եւ սեռական մերձաւորութիւնից զուրկ մնալու ամբողջ անբնականութիւնը։ Այն ինչ որ նա ասել է սրա վերաբերմամբ, կարելի է համարել ամենաճիշտը եւ լաւագոյնը այս մասին նրա ասածին։ Նա ասում է. «կինը չէ կարող մնալ առանց տղամարդի, ինչպէս, որ չէ կարող մնալ առանց ուտելու, քնելու, խմելու եւ լն։ Միւս կողմից տղամարդն էլ կնոջ կարիք է զգում։ Դրա պատճառն այն է, որ մարդու բնութեան մէջ նոյն չափ խորին է որդեծնութեան հակումը, ինչպէս եւ խմելու եւ ուտելու ձգտումը։ Այդ պատճառով էլ Աստուած տւել է մարմնին զանազան անդամներ, անօթներ, նեարդներ եւ այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է կեանքի համար։ Նա, ով ուզում է դրա հակառակը գործել, անխոհեմ է վարւում, քանի որ այդ միեւնոյն բանն է նշանակում, թէ ստիպեն բնութեանը, որ նա չը լինի բնութիւն, որ կրակը չայրէ, որ մարդը չըխմէ, չուտէ, չը քնէ»։

Սակայն հասարակական պայմաններն այնպէս են, որ նրանք, մեծ մասամբ, արգելք են լինում կնոջը բաւականութիւն տալու սեռական հակումներին։ Ոչ միայն կնոջ սոցիալական դրութիւնն է ստիպում նրան անհանգիստ կերպով սպասել թէ կը գտնէ՞ արդեօք ամուսին, որին նա գուցէ չի էլ սիրել, այլ ինքը հասարակութիւնը պատերազմում ու դաղթականութեանը աշխատումէ այն մասին, որ սեռերի յարաբերութիւնը կնոջ համար անյաջող ուղղութիւն ստանայ։ Բնութեան մէջ այդպիսի անհամաչափութիւն (իմնաս իգական սեռին) չը կայ, քանի որ ստատիստիկայով ապացուցւած է որ 100 աղջկայ վրայ գալիս է 105 տղայ, այսինքն նոյն իսկ աւելցուկ կայ արական սեռի մարդկանց։ Միւս կողմից Գերմանիայի 1872 թւի ժողովրդագրութիւնը մեզ ցոյց է տալիս իգական սեռի նշանաւոր գերակշիռ արականի վրայ, այսինքն, իգական սեռի անձնաւորութիւններ 20,906,739 էին, իսկ արականը —20,151,902։

Իգական սեռն, այսպիսով, ունենում է աւելի, միջին թւով, 750,000 հոգի, որը բացառապէս ընկնում է չափահասների վրայ, քանի որ ապացուցւած է, որ ծննդեան ժամանակ արական սեռն իր թւով գերազանցում է իգականին։ 1890 թւի դեկտեմբերի 1 ին Գերմանիան բնակիչներ ունէր 24,230,832 տղամարդ եւ 25,197,637 կին, իգական սեռը գերազանցում էր արականին 966,806 հոգով։ Ինչպէս որ արդէն ասել, այդպիսի երեւոյթի գլխաւոր պատճառներն են պատերազմն ու գաղթականութիւնը։ Ինչպէս մենք տեսնում ենք այդ թւերից, գերմանուհի կանանց մի ահագին թիւ դատապարտւած է այն բանով, որ շատ երիտասարդներ տնտեսական կամ ուրիշ պատճառներից դրդւած հրաժարւում են ամուսնութիւնից։

Այդ ամենի հետեւանքը լինում են զանազան տեսակ անբնական դրութիւններ. այժմեան պայմաններում տարեցտարի աճում է կնոջ համար ամուրի մնալու վտանգը եւ չէ կարելի դատապարտել շատ աղջիկերք ունեցող ընտանիքին, թէ ինչու նա երկիւղով է նայում ապագային։ Միւս կողմից, այդ պայմանները զարգացնում են կնոջ մէջ բնաւորութեան այնպիսի գծեր, ինչպէս ջերմ ցանկութիւն դէպի զարդարանքները, սնափառութիւն, տղամարդիկ որսալը, սաստիկ խանդոտութիւն, որը յաճախ ծաղրի է ենթարկւում ու դատապարտւում, բայց որը, միեւնոյն ժամանակ, այդ պայմանների բնական հետեւանքն է։ Դրա շնորհիւ անտակութիւնն առատ հունձ է ունենում։

Կնոջ բնաւորութեան այդ վատ գծերը, որոնք այնպէս յաճախ դատապարտութեան են ենթարկւում հասարակութեան կողմից եւ դարձել են յատկանիշ, դիւրըմբռնելի են, եթէ նրանց վրայ կը նայեն ինչպէս *բնական անհրաժեշտութեամբ բղխող* կնոջ կեանքի պայմաններից։

Բուրժուա հասարակութիւնը կարող է պախարակել ու ծաղրել այդ գծերը—եւ նա այդ բաւականաչափ անում է—բայց նա *անզօր է փոխել նրանց կամ վերացնել*, որովհետեւ նա ինքն է առաջ բերել դրանց. կնոջ բնաւորութեան այդ գծերը այն ժամանակ միայն կանհետանան, երբ բուրժուա հասարակութեան տեղ կը լինի հասարակութեան առողջ եւ բնական տեսակը։

Հասարակական միեւնոյն պայմանները, որոնք այնպէս վատ ներգործութիւն են անում կնոջ ազատ զարգացման վրայ, նպաստումեն տղամարդին, մանաւանդ, երբ նա նիւթապէս բաւականաչափ ապահոված է։ Ամուսնութիւնը, ինչպէս յայտնի է ամենքին, արգելք չէ հանդիսանում եւ այդ էլ մեծ մասամբ միայն այն պատճառով, որ այդ ամուսնութեան շարժառիթը չէ եղել անկեղծ սէրը։ Ցիշեմ, բացի դրանից, թէ ինչպիսի ստոր ու անբարոյական միջոցներ են գործադրւում, սովորաբար, բարձր դասի «ծերուկ պարոնների» մեծամասնութիւնը, իրանց բթացած զգացմունքները գրգռելու համար։

Կնոջ նիւթապէս կախումն ունենալը եւ այն մասւոր խակութիւնը, որի մէջ գիտակցաբար պահումեն նրան տղամարդիկ, միացնելով դրանց հետ փաստը, որ անվստահութիւնն ու գոյութեան կռիւն ստիպումեն տղամարդին, այժմեան սոցիալական պայմաններում, նայել ամուսնութեան վրայ, ամենից առաջ, դրամական տեսակէտից, այդ ամենը դարձնումեն կնոջը մի ապրանք, իսկ ամուսնութիւնը մի անարգ առեւտուր։ Բնական, այսինքն, իսկապէս, բարոյական տեսակէտը յետին տեղ է բռնում։ Կինն ամբողջապէս կախւած է լինում տղամարդուց։

Այսպիսով, այժմեան հասարակութեան մէջ սեռերի մէջ եղած յարաբերութիւնները նոյնպէս անառողջ են, ինչպէս եւ բուրժուազիայի եւ պրօլետարիատի մէջ եղած յարաբերութիւնները։ Տղմարդն ունի իրաւունքներ, իսկ կինը միայն պարտականութիւններ։

Բայց որքան էլ վնասակար, նոյնիսկ անբնական, լինէր մարդկայնութեան բարձր տեսակէտից, այդ դրութիւնը, դարձեալ նա համարւում է բնականը եւ միակ հնարաւորը այժմեան հասարակութեան տեսակէտից կանանց կախումը տղամարդկանցից բղխում է նոյն պայմաններից, ինչպէս որ պրօլետարի կախումը բուրժուայից։ Մասնաւոր սեփականութեան աշխարհը պրօլետարի կարիք ունի, որպէս զի սեփականութիւն արտադրի, սակայն նա նոյնպէս պահանջում է «օրինաւոր զաւակներ», որոնք կարողանային նրան ժառանգել։ Սեփականութիւն դիզելը բուրժուայի համար ոչ միայն նպատակին հասնելու միջոց է, այլ նրա համար իսկական նպատակն է, եւ նրան հարկաւոր է ժառանգ, ոչ թէ նրա վերջին կամքը կատարող, ինչպէս որ հռոմայեցոց մէջ էր, այլ ինչպէս նրա սեփականութեան յաջորդ տէր։ Դա սեփականութեան վրայ ունեցած իրաւունքի պաշտպանութիւնն է մահից յետոյ էլ, դա սեփականատիրոջ կեանքի շարունակութիւնն է գերեզմանից այն կողմը. ժառանգ ծնելով, կինը նրա համար մի արդիւնաբերող գործիքի դեր է կատարում։

(Կը շարունակւի)

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել եւ զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը եւ ատելութիւն դէպի չարն ու վնասակարը։

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր։

Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան եւ վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացմունքների թարգմանը։

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտւած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքւած հայ անդամներ սնուցանել։

ՏԱՐԱԶ

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV եւ XVII պատկերազարդ շաբաթաթերթի XVII

ԸՆԿԵՐ

Շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինն է 3 ռուբլի:
Հատը 6 կոպ.

Բաժանորդ կարել է գրուել խմբագրատանը ու գործակալների մօտ: Խմբագրատունը գտնւում է Գոլովինսկի պրօսպեկտի վրայ, Արտիստիկական ընկերութեան թատրօնի շարքում, Արխանցի տանը (մուտքը հարցնել նոյն տեղի դրամատանոցում):

Խմբագիր-հրատարակիչ
Դր. Փիլոս. Սեդրակ Թառայեան

ՀՈՎԻՒ

ՀՈԳԵՒՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ 1906 Թ. յունուարից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ:

1. Պետական կարգադրութիւններ: Հայոց եկեղեցու և դպրոցների վերաբերեալ:

2. Հոգեւոր իշխանութեան կարգադրութիւններ: Վանքերի, եկեղեցիների, եկեղեցականների, դպրոցների և ծխական համայնքների ամեն տեսակ հոգևոր գործերի վերաբերեալ:

3. Համառօտ տեղեկութիւններ այլազգեան եկեղեցիների հոգևոր իշխանութեան կարգադրութիւնների մասին: (Վերաբերեալ իրանց եկեղեցիների և ժողովրդի:)

4. Համառօտ կենսագրութիւններ: Քրիստոնէական եկեղեցու արժանաւոր և ճշմարիտ հովիւների և ուսուցչական ասպարէզում գործողների:

5. Առաջնորդողներ: Կրօնական, բարոյական—խրատական և ծխական—եկեղեցական զանազան խնդիրների վերաբերեալ):

6. Պատմական տեսութիւն անցեալ և ներկայ Հայոց եկեղեցու և ժողովրդի մասին: Քննական, ուսումնասիրական, տեղագրական և ճանապարհորդական:

7. Եկեղեցական խրատաբանութիւն: Յօդուածներ եկեղեցական խրատական խնդիրների վերաբերեալ:

8. Եկեղեցական բարեկարգութիւն: Եկեղեցական կարգապահութեան, խրատունքի և պարտականութեան, պարգևաբաշխութեան և պատժի. այլև կանոնաւոր և ներդաշնակ երգեցողութեան վերաբերեալ յօդուածներ:

9. Մամուլի տեսութիւն: Կրօնական, եկեղեցական և դպրոցական խնդիրների վերաբերեալ:

10. Մանկավարժական: Դպրոցական կեանքի, ծրագրների և դասաւանդութեան եղանակի վերաբերեալ:

11. Հաղորդումներ: Վանական, եկեղեցական և դպրոցական կալուածների, հաստատութիւնների մասին և ծխական կառավարիչների գործունէութեան մասին.

12. Այլևայլ: Մանր լուրեր, եկեղեցական և դպրոցական տօների և հանդէսների համառօտ նկարագրութիւններ և խմբագրութեան պատասխաններ և այլն:

13. Նկարներ, վանքերի, եկեղեցիների, ուսումնարանների և պատկերներ նշանաւոր գործիչ եկեղեցականների և մանկավարժների:

14. Յայտարարութիւններ:

ԾԱՆՕԹ: Իւրաքանչիւր №ը կը հրատարակուի ութ մեծադիր թերթից 16 երեսից բաղկացած: Բաժանորդագինը 4 րուբլի, կէս տարուանը 2 ր,—50 կոպէկ: Արտասահմանի համար 15 ֆրանկ:

Խմբագիր—հրատարակիչ՝

ԵԶՆԻԿ Ա. Ք. ԵՐԶՆԿԵԱՆ:

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 ГОДЪ
НА ГАЗЕТУ

Тифлисскій Листокъ.

XXIX годъ изданія.

Въ 1906 году газета «ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ» будетъ выходить, какъ и раньше, ежедневно, кромѣ дней послѣпраздничныхъ и понедѣльниковъ, по прежней полной программѣ газеты политико-общественной и литературной, но безъ **предварительной цензуры.**

ПОДЪ НОВОЙ РЕДАКЦІЕЙ

и при усиленномъ и обновленномъ составѣ постоянныхъ сотрудниковъ

Выступая на защиту общенародныхъ идеаловъ гражданской свободы, новая редакція будетъ проводить на страницахъ «Тифлисскаго Листка» идею наиболѣе широкаго осуществленія въ политико-государственной жизни всей Россіи демократическаго, представительнаго образа правленія. По своей ближайшей задачей новая редакція ставитъ служеніе интересамъ Закавказья и всѣхъ его народностей. Признавая за каждой изъ нихъ неотъемлемое право на всестороннее культурно-національное самоопредѣленіе, „Т. Л." будетъ настаивать на организаціи общекавказскаго самоуправленія съ представительнымъ всенароднымъ сеймомъ въ составѣ выборныхъ делегатовъ отъ разноплеменнаго населенія края, неразрывно связаннаго съ Россіей общегосударственными установленіями и законами.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

Съ доставкой въ Тифлисѣ:	Съ перес. въ другіе города:	Съ пересылкой заграницу:
На 12 м.—5 р., на 11 м.—4 р. 75 к., на 10 м.—4 р. 50 к., на 9 м.—4 р. 25 к., на 8 м.—4 р., на 7 м.—3 р. 50 к., на 6 м.—3 р., на 5 м.—2 р. 50 к., на 4 м.—2 р. 25 к., на 3 м.—1 р. 75 к., на 2 м.—1 р. 50 к., на 1 м.—75 к.	На 12 м.—7 р., на 11 м.—6 р. 50 к., на 10 м.—6 р., на 9 м.—5 р. 50 к., на 8 м.—5 р., на 7 м.—4 р. 50 к., на 6 м.—4 р., на 5 м.—3 р. 50 к., на 4 м.—3 р., на 3 м.—2 р. 50 к., на 2 м.—2 р., на 1 м.—1 р.	На 12 м.—12 р., на 11 м.—11 р., на 10 м.—10 р., на 9 м.—9 р., на 8 м.—8 р., на 7 м.—7 р., на 6 м.—6 р., на 5 м.—5 р., на 4 м.—4 р., на 3 м.—3 руб. 50 коп., на 2 м.—2 р. 50 к., на 1 м.—1 р. 50 коп.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ на любой срокъ, но только съ 1 числа каждаго мѣсяца, исключительно въ конторѣ изданія, Головинскій проспектъ, № 15.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ: Для Закавказья за мѣсто, занимаемое строкой петита, передъ текстомъ—10 коп. и послѣ текста—5 коп. Извѣщеніе о зрѣлищахъ печатаются на первой страницѣ по 20 коп. за строку и на 4—по 10 коп. За объявленія въ справачномъ отдѣлѣ взимается по 8 коп. за строку. Объявленія внѣ предѣловъ Закавказья принимаются исключительно въ центральной конторѣ торговаго дома Л. и Э. Метцль и К-° въ Москвѣ, Мясницкая, д. Сигова и въ отдѣленіяхъ его—въ С.-Петербургѣ, Большая-Морская, № 11; въ Варшавѣ, Краковское предмѣстье, № 53, по 24 к.—передъ текстомъ и 12 коп. послѣ текста. 1—3

ՆՈՐ-ԴԱՐ

Քաղաքական գրական հասարակական ամենօրեայ մեծադիր լրագիր

(Քառասնեւչորսերորդ տարի)

Տարեկան բաժանորդագինը 10 ր. Արտասահման 40 ֆրանկ:

Խմբագիր-հրատարակիչ՝ Սպանդար Սպանդարեան

ԱՐՇԱԼՈՅՍ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿ. ՔԱՂԱՔ. ՏՆՏԵՍԱԳԻՏ.

Օրաթերթ

24 պատկերազարդ յաւելուածներով, որ կանոնաւորապէս լոյս կը տեսնեն ամիսը երկու անգամ:

Բաժանորդագր. պայմանները

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Տարեկան	7 ռ. — —
Վեց ամիսը	4 » — —
Երեք ամիսը	2 » 25 կ.
Մի ամիսը	— 75 կ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

32 ֆր.	28 մարկ.	28 շիլ.	7 դոլ.
20 »	16 »	16 »	4 »
12 »	10 »	10 »	2 »
4 »	3 »	3 »	1 »

Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս: Յունուար. 4 ռ. և յունիս 3 ռ, Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունւում.

Կարելի է գրուել խմբագրատանը (Թիֆլիս, Գանովսկայա № 11) կամ գործակալների մօտ:

Խմբագիր Հրատարակիչ՝
Գ. Մելիք- Կարագեօզեանց

11 տարի **ԼՈՒՄԱՅ** 11 տարի

Գրական, Հանրային, քաղաքական և պատմական ամսագիր 1906 թուին կը հրատարակուի հետևեալ լրացրած ծրագրով.

1. Ինքնուրոյն և թարգմանական վէպեր, պատմուածքներ ու ոտանաւորներ, այլ և կենսագրութիւններ:
2. Գովկասագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ պատմական վաւերագիր և յօդուածներ:
3. Ճանապարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագրութիւն:
4. Բարոյագիտական յօդուածներ:
5. Մատենախօսութիւն և կրիտիկա:
6. Ներքին տեսութիւն:
7. Արտաքին տեսութիւն:
8. Այլ և այլք, Գիտութիւն և արուեստ
9. Յայտարարութիւններ:
10. Խմբագրութեան պատասխաններ:
11. Յօդուածներ:

„Լումայի" կաշխատակցեն բոլոր աչքի ընկնող հայ գրական ույժերը:

Տարեկան բաժնեգինն է ռուսաստանում 8 ռ., իսկ արտասահմանում 27 Ֆրանկ:

Խմբագիր-հրատարակիչ՝
Գիւտ ա. ք. Աղանեանց

Երեք մաքուր յարմար գիներով ճիշդ Բերլինում
HOTÊL NEW-IORK
Frider Wilh. Schulze
Friedrich Str 136, Հացի-երկու բաղէ Bahnhof. Fridr. Str. երկաթուղային կայարանից, կամուրջի վրայ:

Աւելի քան 60 սենեակ 80 մահճակալով ընտանիքների համար առանձին սալոններ, սեղանատներ: Մի մարկով ԱՌԱՏ ՆԱԽԱՃԱՇ (սուրճ, շոկոլադ, թէյ, կարագ, մեղր, պանիր, մուրաբաներ եզակազան բլուլեր): Սենեակներ 2—15 մարկ օրը, շաբթով զիջումն: 12—3

ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ

Փոխադրութեամբ լոյս տեսան
պատկերազարդ մանկական գրքոյկներ — Գին

ԱՌԱՋԻՆ ՎԱՅՐԿ	60
ՆԱՊԱՍՏԱԿ ԽԵՂՃԻ ՎԵՐԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԽՆԱՅԻ ՔԵԶ ՕՁՆԻՐ	75 կ.
ՓՈՔՐԻԿ ՑՈՒԼԻԿ ու ԽԵԼՕՔԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ	1 ռ.

Թարգմանութեամբ՝

ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ (Spiritisme), Թատերգ. 3 արարուածով	50

Դիմել ուղղակի ինձ՝ Тифлисъ. Орбеліановская №4
Левону Вардани Меликъ-Адамянъ. 2—2

ՃԱՂԿԱՑ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ

Յունուարի 23-ին Տարազի խմբագրատանը երեկոյեան 5 ժամին Տարազի միջոցաւ հրաւիրուածների ընդհանուր ժողովը Լումայի խմբագիր Տէր Գիւտ աւագ-քահանայ Աղանեանցի նախագահութեամբ միաձայն ընդունեց մեր առաջարկը, հիմնել հայ գրականագէտների միութիւն, որի նպատակն է հայ գրականագէտներից առանց խտրութեան ուղղութիւնների և խաղախական դաւանանքների կազմել մի գերդաստան։ Այդ խնդիրը քննելուց և լուսաբանելուց յետոյ որոշեց կանոնադրութիւնը կազմելու համար հրաւիրել մի նոր էլ աւելի բազմամարդ ընդհանուր ժողով, որ նշանակուած է հինգշաբթի փետրուարի 2-ին, երեկոյեան 5 ժամին Տարազի խմբագրատանը։

ՏՕԳՕ

Յուն. 26-ին 1904թ. գիշերը ճապոնական նաւատորմը Տօգօի հրամանատարութեամբ արձակւում է ռուսաց նաւատորմի վրայ Պորտ—Արտուր և Չիմուլպօ նաւահանգստներում և մեծ վնասներ հասցնում։ Այս օրւանից ճապոնիան տիեզերքում հռչակւեց իբրև առաջնակարգ, քաղաքակիրթ հզօր մի պետութիւն, որին ամենից առաջ ճանաչել էր Անգլիան և վաղօրօք հետը դաշինք կապել։ Այսօր Ճապոնիան Անգլիայի հետ միատեղ ծրագիրներ է կազմում աշխարհին կրկին զարմացնելու...

Ի գիտութիւն համայն ազգին

Ամարասայ վանքի վանահայր, յոգնավաստակ գրագէտ, ս. Էջմիածնայ ճեմարանի Ա. շրջանաւարտ սան հ. Նիկողայոս վարդապետ Տէր-Աւետիքեանի մասին Տարազի №2 ում տպագրուած է՝ *Փաստերը վերցրել ենք Վեհափառ Կաթուղիկոսի դիւանից*, իսկ պէտք է լինէր, թէ՝ այդ փաստերը, քալանեած վանահայրը մեզ էր ուղարկել Նորին Վեհափառութեանը անձամբ մատուցանելու, որի աղերսագիր գեկուցումից և քաղուած են։ *Ուրիշ խօսքերով.* փոխանակ Տարազում տպագրելու, թէ իսկական դօկումենտը մինչև Նորին Վեհափառութեան դիւանատուն մտնելը, մտել է մեր խմբագրատունը և մեր խմբագիրն ինքն անձամբ է մատուցել այդ լքեալ և թշւառ գրականագէտ վարդապետի աղերսալից զեկուցումը Նորին Վեհափառութեան ամենայն հայոց Կաթուղիկոսի դիւանապետին, այն Կաթուղիկոսի, որն անձամբ ճանաչելով հ. Նիկողայոս վարդապետ Տէր-Աւետիքեանին և նրա գրական գործերը, մի քանի տարի առաջ, երբ սա Թիֆլիսում հայոց Կաթուղիկոսին ներկայացաւ, Նորին Օծութեան հոգին խռովից, տեսնելով իր արժանաւոր վարդապետը ցնցոտիների մէջ և հանելով իր հագից փարաջան, ինքը, ամենայն հայոց Վեհափառ Կաթուղիկոսը հագցրաւ հ. Նիկողայոս վ. Տէր-Աւետիքեանին, հէնց նրան որ այսօր Ամարասում թալանուած համարեա մերկ, ոտաբոբիկ Շուշի քաղաքն է գալիս և թեմական սրբազան առաջնորդը, ոչ թէ հոգևոր գանձարանից, այլ նոյն իսկ յատուկ հայ-թաթարական աղէտներից վնասուածների օգտին ժողոված գումարից էլ սնունդ ու զգեստ չէ եղել տուած նրան։

Ինչո՞ւ։

Անձի եւ գոյքի անձռնմխելիութեան առիթով ռուս (Վարօնէժ) գիւղացիների խորհրդակցութիւնը։

Տիեզերքի մէջ

Հ. Զաւէն վարդապետին։

Մեր անթիւ ձեզ ուղարկած նամակների պատասխանը մինչև օրս չը կարողացանք ստանալ, բարեհաճեցէք յայտնել ինչ ճանապարհով և ինչ միջոցով կարող ենք ձեզանից պատասխան ստանալ։

Ժամանակագրութիւն

Թիֆլիսի քաղաք. վարչութեան անդամներ են ընտրուած հռետոր (անշուշտ և մի քանի տարուց յետոյ Թիֆ. քաղաքագլուխ) եռանդուն բժշ. Ալ. Խատիսեան և Ն. Գօգչայեան։

---Սենատոր Կուզմինսկու քննութեան համաձայն քրէական դատի են ենթարկւում Բագւի, Բալախանու և շրջակայքի ոստիկանապետները, ոստիկանները և մեղադրւում են նրանք որ ոչ մի օգնութիւն չեն արել իրանց դիմողներին։ Զինաթափ չեն արել զինուած թուրք խմբերին եւ Սակայն ինչ շահ այդ բոլորից երբ այդ ոճրագործները մինչև օրս էլ իրանց պաշտօնի մէջն են։

Համխալամութիւն քառզող պատւիրակների խորհրդակցութիւնը։

Ցանկանում եմ գնել
հին ՁԵՌԱԳԻՐՆԵՐ
դիմել ՏԱՐԱԶի խմբագրատունը։

Հայ գրականագէտների ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ հինգշաբթի, փետրուարի 2-ին, երեկոյեան 5 ժամին ՏԱՐԱԶի խմբագրատանը ընդհանուր ժողով ՄԻՈՒԹԵԱՆ կանոնադրութեան նախագիծը քննելու համար։

ՅԱՌԱՋ

Հասարակ. քաղաք. գրա. օրաթերթ.

Խմբագրութեան անդամներն են. Ահարոնեան Աւետիս, Դաւթեան Յոնան, Թովչեան Եղիշէ, Խաժակ Գ. Նազարեան Լիպարիտ, բժ. Օհանջանեան Համ., Իւսուֆեան Յովհաննէս։

Մօտիկ աշխատակիցներն են. բժ. Ալթարէկեան Լէօն, Ա—Դօ, Զարդարեան Ռուբէն, Զօրեան Ստեփան, Ղազարեան Յովհաննէս, Իսահակեան Աւետիք, Լէօ, Լիսիցեան Ստեփան, Մալումեան Խաչատուր, Յարութիւնեան Մար. Յովհաննիսեան Միքայէլ, Յովհաննիսեան Տիգրան, Շահրիկեան Յար., Շխեան Սիմէօն, Պապօվեան Ալեք. Ռաշմաճեան Տ. Սամուէլեան Խաչ., Տիգրանեան Սիրական, բժ. Օհանեան Քրիստ. և ուրիշները։

ԲԱԺԱՆԵԳԻՆՆ է

Թիֆլիսում տարեկան 6 ր., ամսական 50 կօպ.։ Թիֆլիսից դուրս տարեկան 7 ր., ամսական 60 կօպ.։ Արտասահմանում՝ տարեկան 32 ֆր., ամսական 3 ֆր.։

Խմբագրատունը գտնւում է Թիֆլիսում, Ֆրէյլինսկայա փողոց№ 6.

Կրաչարունց կանանց «Զքնաղ» տպարան-դպրոցի։

Արտադատիպ «Հերմէս» ընկ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահման 10 ր.) Աղբիւր - Տարազ, պրեմիաներով 10 ր. (արտասահման 18 ր.) Տարազ ամիսը 50 կ. առանձին №-ը եւ կու թերթից 30 կ., մի թերթից 20 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին էջ՝ես 40 կոպ վերջին երես 25 կ. մանրատառ (պըտիտ) Արտասահմանից կրկնակի: Ձատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չընդունելիները երբեմն երբեմն պահպանել չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութեան խմբագրի՝ ամեն երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

Թիֆլիս, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10½ ժ. մինչև 2½-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ ред. ТАРАЗЪ Rédaction du Journal TARAZ Caucse Tiflis

դեղարւեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 5 Կիրակի, փետրւարի 12 Տասնեւեօթներորդ տարի 1906

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

ՏԱՐԱԶ

Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել:

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV և XVII պատկերազարդ շաբաթաթերթ XVII

ՀՐԱՒԷՐ

(Մի հատուած Աւարայր անտիպ պօէմից)

Առա՜ջ, զինուոր, Հայաստանի կանաչազեղ դաշտերով.
Գնա՛, գուժէ՛ քաջերդ եկան դու թշնամու վաշտերով.
Անզուսպ մրրիկ կայծեր վառէ հայոց անգորր սրտերում,
Որ պատրաստին սանջարաններ իրենց ամուր բերդերում.
Սրերն առած ելնեն առաջ ինչպէս պարիսպ անկործան,
Որ չլինի Հայոց աշխարհն այրացուեր ու կործան։
Չար թշնամու դաժան ոհմակն ահա մտաւ հայրենիք.
Նոցա մէջ կան անթիւ դեւեր ու գիշատող վայրենիք։
Նոքա վերջին լափող հուրը Որմզդական մեհեանում,
Կայրեն անտէր Հայաստանը կորստաբեր գեհենում։
Ասա՛ նոցա, թէ ձգուած է բախտի վիճակն արդէն վաղ.
Կամ պիտ ապրեն ազատ ոգով, կամ պիտ մեռնեն սև դաղաղ։
Օ՜ն, պայծի՛ր, քաջարիկ զինուոր, կայծակի պէս սրընթաց.
Հայոց երկնում ամպրոպների ահեղ շանթը որոտաց.
Շուտով կը գայ դու փոթորիկ գազանային աղմուկով.
Վազի՛ր առաջ և պատրաստի՛ր հայ սրտերում դու կռիւ։

Առա՜ջ, քաջեր, ժամը հասաւ ձեր դիմակը պատռելու
Եւ պարսկական բռնակալի ամուր շղթայք փշրելու.
Ուրացութեան տխուր դոյժը գնաց, հասաւ Հայաստան,
Ձեր սիրելիք բարձրացրին մինչև երկինք լաց կական։
Արարքներիդ սև կնիքը դրոշմուած է ձեր ճակտին,
Բայց սրտներիդ գաղտնիքները դեռ յայտնի չեն ոչ ոքին.
Ժամանակ է ամօթաբեր այդ սև քօղը պատռելու,
Բռնակալի սուրն ու նիզակ հուժկու բազկով ջարդելու։
Շունչ ունեցող ամեն էակ սրտի խորքում միշտ ունի
Ընդմիշտ ժայթքող մի աղբերակ ազատութեան արիւնի.
Մղում է նա երակներում, մարմնի միջով ամեն կողմ՝
Անվախութեան աւիւն, հոսանք, ազատութեան մրրիկ, հողմ...
Մի՛ վհատէք. քոյր ու եղբայր զէնքեր առած ձեռքերում՝
Հայրենիքի սիրոյ համար զոհուելու են պատրաստւում.
Դուք մենակ չէք. վա՜յ թշնամուն, ոտքի կելնէ Հայաստան,
Ծայրէ ի ծայր, հարաւ, հիւսիս՝ ձեզ կը լինին քաջ պաշտպան։
Առա՜ջ, մօգեր, դէ՛հ, շտապէ՛ք, ձեր գործելու հասաւ ժամ.
Փրկէք հային չար դևերի որոգայթից յարաժամ...
Ողորմելի՛ք, մի բաց արէք ձեր կուրացած աչքերը,
Տեսէք հեռւում՝ եկեղեցու գլխին փայլող խաչերը.
Նրանք ոգի, շունչ են տալիս մեր սուրբ հողից սնւողին
Եւ կրթում են ազատ ոգով հայրենիքում ծնւողին.
Հալածւում են այդ խաչերից խեղճ դևերը չարաչար.
Բայց միթէ դուք չար դևեր չէք. մի փորձեցէք մօտ գնալ...

Նորին Կայսերական Մեծութիւն
Թագուհի Կայսերուհի
ԱԼԷՔՍԱՆԴՐԱ ՓԷՕԴՈՐՕՎՆԱ
Հուսարական իր գնդի համազգեստում

Որ՞տ էր այդ, որ պայթեցաւ Հայաստանի սահմանում.
Դիւաղադար խեղճ մոգերը ո՞ւր են այդպէս չտապւում.
Օ՜, թշուառներ, դուք ձեռք տուէք դիւահալած խաչերին,
Վրդովեցէ՛ք Հայաստանի առիւծասիրտ քաջերին
Եւ ցանկացաք պիղծ ձեռքերով ոկեղեցին կործանել,
Ողջ հայերին ձեր կրօնով կաչկանդելու փո՛րձ անել.
Սթափուեցէ՛ք. այդ խաչերը ձեզ կը փշրեն, թշուառներ,
Եւ մահաբեր սրերի տեղ՝ մեր սրբազան խաչւառներ...
Տեսէ՛ք, տեսէ՛ք, ձեզ մի խղճուկ հայ երէց է հալածում.
Պատերազմի զէնքեր չունի, խաչ է բռնել իւր ձեռքում...
Դէ՛հ, գնացէք, աչերն յառած՝ սպասում է ձեր արքան.
Շո՛ւտ գնացէք, մինչ չեն բացել բոլորիդ մութ գերեզման:

Հայո՛ց աշխարհ, հրաշքների աստղերէգ է քեզ բացուել,
Ահն ու սարսափ քո լեռներից չքացել են, վերացել.
Դէ՛հ դու կանչէ՛ ազգդ ձայնով, հրաւէր կարդա՛ քո որդոց՝
Միշտ վառ մնայ նոցա սրտում ոգեւորող հուրն ու բոց:
Անհաւասար կռուի նշան արդէն տուեր որոտով.
Շուտով կըգայ գու փոթորիկ սրտընդոստ ամպրոպով.
Գարսիկների անթիւ զօրքով քո դաշտերը կը ծածկուեն,
Նոցա զէնքի ահեղ փայլից սարեր, ձորեր կը սարսեն:

Հայո՛ց քաջեր, պատրաստ պահէք կտրուկ-մաչող սուր ու թուր,
Առէք վահան, նետ ու աղեղ և նիզակներ ամրակուռ.
Ազատութեան ծնող սիրտը ձեր կրծքում է թագնուած.
Կացէ՛ք անվախ, և կըփրկէք Հայաստանը վտանգուած.
Թող մռնչայ գու փոթորիկ, թափուեն կայծեր, չանթ, որոտ,
Դուք կանգնեցէք սուրը բռնած՝ կռուի դաշտում արիւնոտ
Հա՛յ պատանիք, զէնքեր առած փորձիր արէք վարժւելու,
Արա՛գ, ինչպէս կայծակ, մրրիկ այս ու այն կողմ շարժւելու.
Հայաստանը ձայն է տալիս մեծին, փոքրին զէնք առնել,
Մեր սուրբ կրօն և ազգութիւն թշնամու դէմ պաշտպանել:
Իսկ դո՛ւք, հայոց քնքո՛յշ մայրեր, հրաժեշտ տուէք ձեր որդոց.
Զւարթ պահէք ձեր սրտերը, հեռու ձեզնից լացն ու կոծ.
Ազատութեան վառ յոյսերով լաւ է տանջւել ու խոցւել,
Քան թշնամու դաժան լծով միշտ տառապել ու տքալ:
Հայո՛ց հարսներ, ողի տուէք ձեր սիրելի քաջերին,
Թողէք երթան գու պարսկի դէմ՝ սէրը տալով ձեզ բաժին:
Մնա՛ք բարո՛վ՝ քոյր ու եղբայր և հարազատ հայր ու մայր.
Նոքա ելան թշնամու դէմ՝ արիւն թափեն ձեզ համար:
Մնա՛ք բարով՝ հայոց լեռնե՛ր, կարկաչահոս գետակնե՛ր,
Վերջին բարև հովիտ, արօտ, անուշաբո՛յր ծաղիկներ...

Յարութիւն Պետրոսեան

ՓԵՏՐՈՒԱՐԻ 9-ԻՆ.

—

Այսօր հայ ազգը տօնում է Վարդանանց պատերազմի յիշատակը:

Դարն եւ հինգ դար առաջ Աւարայրի դաշտը ներկւեց հայի արիւնով, նա ծածկւեց հայ դիակներով: Այն ժամանակ կրակապաշտ պարսիկն էր խողխողում հային յանուն քրիստոնէական եկեղեցու եւ դրա պաշտպանութեան համար ոտքի կանգնած հա մայն հայութիւնը պարտութիւն էր կրում Տաւարշանում, կորցնելով նոյն իսկ իր զօրավարին-քաջն Վարդանին.

Դա մի յաղթական պարտութիւն էր հայութեան համար, քանի որ դրա տակ կոփւեց ապագայ անյաղթ հայութիւնն ու քրիստոնէութիւնը:

Վարդանանք ընկան, նրանք յաղթւեցին, բայց նրանց ոգեւորող գաղափարը անմահ մնաց, նա ապագայում յաղթանակեց յարատէւ մնալով...

—

Մի տարի առաջ ուղիղ այս փետրւարի 9 ին Բագւի փողոցները ներկւած էին հայի արիւնով, սփռւած հայ դիակներով: Դարձեալ հայի դարևոր ոսխերիմն էր նրան նահատակողը, դարձեալ նրա կրօնի ու ազգութեան թշնամի թուրքն էր դաւաճան յարձակումով թափում հայի արիւնը...

Եւ յուսահատ, գլխակոր հայութիւնը յանկարծակի եկած չէր իմանում ինչպէս բացատրել այդ անլուր չարագործութիւնը և մենք լըքւած էինք ու ապշած...

Դա մի պարտութիւն էր, որ ի դէմս հայութեան Բագւի փողոցներում կրում էր եւրոպական քաղաքակրթութիւնը, կրում էր քրտնաթոր աշխատանքը, լուսաւորութիւնը... Սակայն այդ պատմութիւնը եւ մըշտական չէր կարող լինել. նա կարող էր ծաւալւել ահռելի չափեր ընդունել, հեղեղել մեր ամբողջ աշխարհը, բայց և վերջապէս տեղի տւեց ուշքի եկած ու դիմադրութեան ոգով համակւած հայութեան կողմից: Եւ մենք իրօք տեսնում ենք նոյն բանը:

Փետրւարի 9-ին Բագւում պարտութիւն կրած, Նախիջևանում, Շուշիում ու Գանձակում ծանր կորուստներ ունեցած հայը հետզհետէ ընում է իր ռազմական դիրքը և յաղթութեան աստւածը, որ միշտ քաջերի ու մարտնչողների կողմն է, սկսում է ժպտալ նրան...

Երկու տարեդարձ է տօնում այսօր հայութիւնը, մէկը 15 դար առաջ արիւնանեկ Աւարայրի դաշտն է, միւսը մի տարի առաջ Բագւի փողոցները: Երկուսն էլ թանգ են հայերի համար, երկուսն էլ խրատական...

Աւարայրի պարտութիւնը հայն իր տոկունութեամբ փոխեց յաւիտենական յաղթանակի. Բագւի պարտութիւնը եւ պարտաւոր ենք յաղթանակի փոխել, այդ է պահանջում մեր կենսական ամենամեծ շահը, մեր կեանքը մեր ապագան...

Խան

ԶՕՐԱԿԱՆԻ ՈՐԴԻՆ

Ա.

Թշնամու զօրքը մօտենում է. ահա երկրորդ օրն է որ անցել է սահմանը իսկ մեր իշխանները կարծես աւելի մեծ գործերով են զբաղւած: Չըգիտես թէ ի՞նչ են մտածում... գո՛ւցէ համաձայնւել են թշնամու սրի առջև գլուխ խոնարհեցնել... անպիտաննե՜ր, վախկոտներ՜, դաւաճաննե՜ր.—ասաց ծերունի Բաբկէնը, բարկութիւնից ընկնելով տախտի վրայ:

—«Ի՞նչ փոքր բան է,՚ թշնամին մօտենում է, իսկ մենք ձեռքերս ծալած սպասում ենք հիւրասիրել նրան: Կեցցեն հայրենիքի պաշտպանները, կեցցեն անաւակ դաղարկախօսները...»:

Զօրականը լռեց. Նա իր կոշտացած ձեռքերով մի քանի անգամ շոյեց իր կնճռոտ ճակատը և ապա կոխքի վրայ բարձրանալով մի ծանր «ա՜խ» քաշեց:

—«Իսկ քաղաքացի՜ք, քաղաքացի՜ք, շարայարեց զօրականը բարկութիւնից վեր ցատկելով, բոլորովին անտարբեր են: Վաճառականը փողի համար այն իսկ րոպէին հայրենիքը կը ծախէ. վաշխառուն ոչ միայն հայրենիքը այլ և իր գերդաստանն էլ կը տայ, միայն թէ նը գիպչէին իր քսակին: Փողոցներում մեծ-մեծ բըդող դադարկախօսներն այնպէս են կորել, որ հետքերն անգամ չի երևում: Հայրենիքի փառքի համար աղաղակ բարձրացնողները չը գիտես թէ ու՞ր են աներևացել: Ամօ՜թ, հազա՜ր ամօթ... մենախօսներ... գըպարտիչներ... ապերախտներ...

Ծերունին լռեց. Վերջին խօսքերը նա արտասանեց խորին՝՝ատելութեամբ: Նրա շրթունքները բարկութիւնից շարժւում էին, իսկ աչքերը փայլում էին մի արտասովոր՝՝փայլով: Նա աջ ձեռքով անընդհատ ոլորում էր իր հաստ ընչացքը, որը մի առանձին կոյտառութիւն և աշխոյժ էր տալիս իր անմեղ դէմքին:

—«Ուղիղ Տիգրանակերտի մօտ եղած պատերազմի ժամանակ պատահած անցքն է, նկատեց ծերունին: Բայց մեզ ամեն անգամ կաջողւի՞ վեց ժամւայ մէջ 65,000 հոգուց բաղկացած թշնամու զօրութիւնը ջախջախել: Չէ, այդ էլ մի բան էր»:

Վերջին խօսքերը ծերունին արտասանեց մի ուրախ և անկեղծ ոգևորութեամբ: Տիգրանակերտի մօտ եղած պատերազմով ծերունին ակնարկում էր հայերի և յոյների մէջ եղած մի զարհուրելի պատերազմ: Զարհուրելի էր. թշնամու համար երբ նքանք կարծելով թէ հայերը չըպէտքէ կարողանան իրանց դիմադրել և առանց մի արգելքի պէտքէ տիրապետեն Հայաստանին, ցիր ու ցան ոյժերով հասել էին մինչև Տիգրանակերտի պարիսպներին, երբ յանկարծ նրանց առջև դուրս եկաւ հայերի ահեղ բանակը և ուղեղ վեց ժամւայ ընթացքում զառող թշնամուն հիմնայատակ կործանեց: Ահա այդ կռւին էր ակնարկում ծերունի Բաբկէնը: Այն ժամանակ ինքը 21 տարեկան մի յաղթանդամ և առողջ երիտասարդ էր, հայրենիքի համար մարտնչող սուրբ Աւետարանի և խաչի հաւատարիմ զինւոր: Բացի այս պատերազմից ծերունի Բաբկէնը ուրիշ շատ ճակատամարտների մէջ էլ է եղել, բայց ոչ՝ մի դէպք նա այնքան հպարտութեամբ և ուրախութեամբ չէր յիշում, որքան այս հիւսւուրց յաղթութիւնը: Ծերունու կեանքի համար ուղեղ որ սա մի մեծ տարեգլուխ էր:

—«Քառասուն տարւայ մէջ ինչե՜ր պատահեցան, շարայարեց ծերունին, հիմայ ոչ առաջւայ քաջութիւնն է մնացել, ո՛չ էլ անձնանւիրութիւնը: Մեր երիտասարդ ժամանակ ո՛վ էր տեսել թէ նախարարները մարդ ուղարկէին զօրքը կանչելու համար: Հէնց որ պատերազմի և թշնամու երևալու լուրը հասնում էր մեր ականջին նոյն րոպէին իսկ, տուն, տեղ, գերդաստան ձգած՝ շտապում էինք մտնել այն դրօշակի տակ, որը մեր կեանքի և հայրենիքի փրկութեան միակ գրաւականն էր: Այդպէս էլ չեղաւ՚ Տիգրանակերտի պատերազմի ժամանակ: Զօրքը շրջապատեց իշխանի ապրանքը և յանդգնաբար աղաղակեց—«պատերա՜զմ, պատերա՜զմ»: Իշխանը մեզ հանդարտեցնելու համար յայտնեց, որ ինքն էլ շտապում է դիմադրել թշնամուն, բայց առ այժմ սպասում է սպարապետի հրամանին»:

—«Ծերունին լռեց: Նա թիկն տւեց տախտի վերայի բարձերից մէկին և սկսեց մտածել: Նրա խոշոր և փայլուն աչքերը երբեմն-երբեմն լցւում էին արտասունքով, նա երբեմն կլորում էր իր հաստ և սպիտակ յօնքերը, երբեմն դուրս էր թողնում մի ուրախ ժպիտ և երբեմն-երբեմն աչքերը տարածելով պատից կախւած զէնքերին, անթարթ աչքերով զննում էր իր անբաժան բարեկամներին, որոնք այնքան խոր և անհամար յիշողութիւններ էին արթնեցնում նրա սրտի մէջ: Այդ ժամանակ, սենեակի մի անկիւնում, գետնի վրայ նստած էր մի տասնեչորս ամեայ գեղեցիկ և սևահեր պատանի: Նա ձեռքում բռնած դանակով մի ինչ որ բան էր շինում: Զօրականի խօսքերի ժամին նա թողնում էր իր գործը և անթարթ աչքերով նայում էր նրա երեսին: Պատանին ծերունի զինւորի կրտսեր որդին էր: Նրա անունն էր Վահէ, որ փաղաքշօրէն կանչում էին Վահունիկ: Հօր պատմութիւնից նա այնքան զգացւեց, որ դանակը ձեռքից թողնելով, մի ծանր «ա՜խ» քաշեց:

—«Իսկ դո՛ւ ինչ ես մտածում, Վահունիկ, հարցրեց հայրը դառնալով դէպի որդին:

—«Դէ ես էլ դրա մասին եմ մտածում, հայրիկ:

—«Ինչի՛ մասին:

—«Պատերազմի մասին. ասաց պատանին, վեր կենալով տեղից:

—«Պատերազմի մասին ի՞նչ ես մտածում սիրելի Վահունիկս»:

—«Այն, որ դու մեծ ես, այլ ես չես կարող պատերազմել, կանայք մեզանում ուշ-ուշ են խառնւում պատերազմի գործերում, ուրեմն մայրիկն էլ չի կարող, դրա համար հարկաւոր է կամ ինձ գնալ կռւելու կամ փոքրիկ իշխանուհուն»:

—«Վերջին խօսքերով նա ակնարկում էր իր քրօջը, Հռիփսիկին, որին իր չափազանց կամայականութեան համար կոչում էին «իշխանուհի»: Հայրը որդու խօսքերից այնքան զգացւեց,որ արագ վեր թռ.

ՄԵՐ ՊԱՐՏՔՆ ՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Ինչո՞ւ պաշտպանել իրաւունքը. ինչ օգուտ դրանից:

Մեր դատողութիւնների մէջից հանենք հայկական տեսակէտը և եղեռնի վրայ նայենք զուտ պետական հայեցակէտից: Պետութիւնը մի իրաւական համախմբութիւն է, որի անդամները անխտրաբար պէտք է հնազանդուեն որոշ օրէնքի կամ իրաւական կարգի, հակառակ դէպքում կիշխեն ապօրինութիւնը, քմահաճոյքն ու կամայականութիւն, որոնք հիմնապէս աւելի մերժելի են, քան նոյն իսկ վատ օրէնքը: Պետական կարգապահութեան մէջ շահագրգռւած են բոլոր անդամակցողները, որովհետև ամէն մի խանգարմունք պետական կեանքում առաջացնում է համատարած անհանգիստ շփոթութեան, ինչպէս որ լճի մէջ ձգւած քարը յուզում է նրա մէջ պարունակւած համակ ջրի մակերևոյթը: Եթէ պետութեան հպատակ մի փոքր հատւածի իրաւունքը անիրաւութեան ձեռքով ոտնակոխ է լինում, եթէ ապօրինութեան հեղեղը աւերածի ընկերներ է փռում իր ճանապարհին՝ հասարակական անդորրութեան անարգւած հողի վրայ,—այդտեղ տուժողը օրէնքն է, որի հեղինակութիւնը անպատւում է քմահաճոյքը. իսկ մեր նկատմամբ Թուրքական կամայականութիւնը, դարերի պատմութիւն ունեցող քաղաքակրթութեան այդ կացինը: Պետական կեանքի խելացի կարգապահութիւնը պահանջում է կռիւ ընդդէմ կամայականութեան, որպէս զի զերծ մնան անմաքուր ձեռքերի կեղտոտումներից իրաւունք ու օրէնքը, հասարակութիւնն ու կարգը, որոնց զարգացումից միայն կախւած է քաղաքակրթական յառաջադիմութիւնը, պետական հեղինակութեան հմայքի ոյժը և առհասարակ իրաւական զգացողութեան կանոնաւոր բարգաւաճումը:

Մենք կողմնակից ենք ազգերի համերաշխութեան, միմեանց վերաբերմամբ հանդուրժող, լայն սիրտ տրամադրութեան. ուստի և ոչ մէկին չար մտքով ամբաստանելու մտադրութիւն չունենք:

Մենք միայն արդարացի ենք գտնում պահանջելու, որ հանգիստ թողնէ մեր դարերով հալածւած իրաւունքը, պաշտպանէ օրէնքը, կարգապահութիւնը և դրա հետ միասին հասարակական կեանքը ապահովէ միջնադարեան հրոսակախմբերի կամայական մարդակեր ախորժակներից:

Ինչպէս յայտնի է, մահմեդականութիւն ընդունած ցեղերի մէջ ամենից անհանգիստ տարրը Թուրքն է, որի կուլտուրական ահասութիւնը վնասաբեր է եղել միշտ ամեն տեսակ խմբակցական շահերի: Թող տալ, որ այդ անհանգիստ ցեղը իր վայրագ բնազդներով շահագործի դարերից ժառանգութիւն մնացած յատուկ բիրտ, անմարդասէր սովորութիւնները՝ կընշանակի մատնել իրաւունքը և օրէնքը մի խիստ վտանգաւոր խաղի, որի վերջաբանը չըգիտենք, թէ ինչով կաւարտուի: Ո՛չ: *«Իւրաքանչիւրի վրայ պարտականութիւն կայ խեղդել քմահաճոյքի եւ ապօրինութեան հեղքան, ուր որ նա երեւայ»*—ահա՛ մեր օրերի պահանջը:

Ա. Տէրտէրեան.

ԽԱՉԷՆ.

Անդրկովկասում Խաչէն գետի վրայ գտնւող Գանձասար վանքից մեծ ու նշանաւոր կալւածք չըկայ. մօտ 70,000 դեսեատին է հանում նրա և իր շրջակայ աւերակ վանքերի կալւածքների, տարածութիւնը, որից 45,000 դեսեատին հսկայ անտառներ են. մնացեալը հրաշալի արօտատեղեր և վարելահողեր: Կալւածքի մեծ մասը Թուրքերի ձեռին է, քիչը հայերի, վանքի ձորում բացւած է նշանաւոր պղնձահանք, մեծաբազմազան մշակութիւնների, ձեռնարկութիւնների ասպարէզ կայ, մանաւանդ հռչակաւոր է այսվանքի ջրաղացի քար հանքը: Այդ վիթխարի ու անսահման հարուստ կալւածների գրաւումը այժմ կատարեալ անտիրական է: Երրորդ տարին է Գանձասար վանքն էլ միւսների նման ամայի է, երբ կալւածների գրաւումը տեղի ունեցաւ, վերջին վանահայր Անտօնը ծախեց բոլոր անասնեղենը, տնային կահ-կարասիները և գնաց էջմիածին. այդ հրէշը անթիւ անգամ եկած է խոշոր կոնդակներով Գանձասար, որ չէնցնէ ու մինչև մահը մնայ, բայց միշտ գրպանը լցնելուց, թըռել է էջմիածին: Վանքի անտառներում դրա արած սխրագործութիւնների համար տարիներով զբաղւած են լրագիրները, Սինոդը, կոնսիստորը, բայց փողը ամեն ինչ յարդարել է... Արդեօք գոնէ այսուհետև մի խելքը գլխին տնօրէնութիւն կլինի այդ նշանաւոր հայկական կալւածքների մասին... Գանձասարի կալւածքին կից է Նուշեցի պ. Մարկոս Գօլուխանեանի մօտ 30,000 դեսեատին կալւածքը, որի մէջ կայ երկու մեծ հայ գիւղ՝ Առաջաձոր 300 տուն և Ծմակահող 100 տուն: Այդ երկու գիւղերը իրար շատ մօտ են. սրանց մէջ տեղը գըտնւում է «Վանաւէ» անունով վաղեմի հայ աւերակ քաղաքատեղը, որ եղել է Խաչէնի և Ջրաբերդ գաւառների մեծ ու բազմամարդ շուկան, ինչպէս է հիմա Աղդամը: «Վանաւէ» քաղաքի տեղին Թուրքեր մինչև հիմա էլ անւանում են *«Բազար շհար,»* նրա երկար՝ խանութների ու տների աւերակ շարքերը պարզ ու որոշ երևում են. եկեղեցին թէպէտ կիսաւէր՝ ծառայում է տակաւին Ծմակահող գիւղին: Գանձասարի և Գօլուխանեանի կալւածքին կից է Ջալալեանների կալւածքը 15,000 դեսեատին. ուրեմն այստեղ կայ մի ամբողջ խոշոր տարածութիւն հայերին պատկանող՝ 120,000 դեսեատին՝ սքանչելի արօտատեղեր, ջրաղացի քարհանք, պղնձահանք և այլն: Շատ լաւ կըլինէր ձեր Ֆանտազիան իրագործելու համար այդ երեք մեծ հայ կալւածատէրերը միանային մի սօլիդ ընկերութեամբ, և վերածնէին հին հայոց Խաչէնի «Վանաւէ» քաղաքը. հիմնէին ատաղձի, ճկուն կարասիքի, թղթի, ջրաղացքարի և պղնձի գործարաններ, տպարան, տեխնիքական դպրոց, լրագիր, ընդարձակ առևտրապահութիւն, մեղուապահութիւն: Դրանց բոլորի համար կան փարթամ, անսպառ բնական նիւթ և ամեն յարմարութիւն, հաշալի մեղմ կլիմայ, առանց քամիների, սակաւ ամպոտ օրեր, շատ հարիւր տարեկան մարդիկ, առողջ, գեղեցիկ, նահապետական վարք ու բարքով ազգաբնակութիւն, անմահական, ամենասառը ջրեր, Թիւթերեան աղբիւր շատ մօտ, պատուական, առատ ձուկ Խաչէն գետում, սայլի ու կառքի յարմար ճանապարհ մինչև Եւլախի խճուղին և այլն և այլն: Ժամը զարկած է. արթնացէք, միացէք, սկսէք, վերանորոգէք «Վանաւէ» քաղաքը, որ թող լինի անդրանիկ զաւակը Հայկազեան քաղաքակրթական ընկերութեան:

Ն. վ. Տէր Աւետիքեան

Վաղուց, շատ վաղուց է որ մտորում ենք հիմնել Հայկական մի քաղաք: Այս մասին դիմել էինք ձեռնհաս տեղեկագրողների մեզ անհրաժեշտ հարցերով, առայժմ տպագրում ենք Խաչէնը, մանրամասնութիւնները ժամանակին:

ու տեղից, գրկեց նրան և ջերմ համբոյրներով ծածկեց նրա գլուխը:

—«Իսկ դու կարո՞ղ ես կռուել, Վահանիկս, աւելացրեց խանդաղատ հայրը:

—«Ինչի՞ չէ, մի՞թէ դու ինքդ մի քանի անգամ չես գովել ինձ ու ասել, «Վահանիկս տղերս, դու շատ ուժեղ ես» մոռացե՞լ ես հայրիկ»:

—«Ո՛չ, զաւակս չեմ մոռացել. բայց պատերազմի դաշտի թշնամու հետ խօսելու համար ուրի՞շ ոյժ է հարկաւոր»:

—«Ի՞նչ ոյժ, հայրիկ»:

—«Անվախ լինելու ոյժը, ոչինչից չը վախենալու ոյժը, միշտ առաջ վազելու ոյժը»:

—«Ես ամենապատրաստակամ եղնիկի չափ կարող եմ վազել և ոչ ոքից էլ չեմ վախենայ»:

—«Իսկ ի՞նչպէս և ի՞նչով պէտք է կռուես թշնամուդ հետ»:

«Քանի հեռու ենք նետերով. իսկ երբ խառնւեցանք իրերաց: Չէ՛ որ այնտեղ սպարապետը կառաջնորդէ մեզ»:

«Բայց սպարապետից ձեզ կառաջնորդէ նաև Աստւած, նա, որ այնքան ջերմ սիրով սիրում է այն մարդկանց, որոնք կռւում են հայրենիքի համար, իսկ դու նետ, աղեղ, սուր, սապատ ունի՞ս»:

«Իմ շինածներս չի լինի, հայրիկ, մի քիչ փոքր են, դրա համար մտածել եմ խնդրել քո սուրն ու աղեղը»

«Կըտա՜մ, կըտա՛մ, զաւակս, բարձրաձայն կըկնեց հայրը, կրկին ու կրկին համբուրելով իր միակ որդուն: «Բայց 'ի հարկէ լաւ կըպահպանես, որովհետև իմ այդ սիրուն և ոսկեզօծ սուրը, առաջ մի յոյն իշխանի էր պատկանում և ես Տիգրանակերտի պատերազմում սպանելով յոյն իշխանին, խլեցի այդ սուրը: Այս բանը քեզ պատմե՞լ եմ»:

«Այո՛ պատմել ես, յունարէն մի ինչ որ գրութիւն կայ մեր սրի վերայ, հայրիկ, այդ էլ ցոյց ես տուել ինձ»:

«Ուղիղ է: Տիգրանակերտի պատերազմից ինձ մնացած միակ յիշատակ է. Վահանիկ քեզ պատմե՞լ եմ մեր այդ յաջող պատերազմը»:

«Քառասո՞ւն տարի առաջ, գիտե՛ս, բայց ի՞նչ յաղթութիւն»:

«Տիրուհին իր մտքերին անձնատուր լինելով, սկսեց անց ու դարձ անել սենեակի երկարութեամբ: Որդին յուռ ու մունջ կանգնած էր միևնոյն անկիւնում և գլուխը քարշ գցած նայում էր մերթ արագ և մերթ հանդարտ ման եկող ծերունի զօրականին:

Եր Սարուխանի

Կիսալուսնի ներքոյ

Բալկանեան թերակղզում հրդեհ է բռնկել: Կոստանդնուպոլսից մեր ստացած վերջին նամակը խիստ պարզ կերպով ցոյց է տալիս այնտեղի գործերի սարսափելի դրութիւնը.

«Ամեն օր այստեղ ստացւում են միշտ աւելի ու աւելի տխուր տեղեկութիւններ Մակեդոնիայից: Թուրքաց ոստիկանութիւնն ու զօրքը անտարբեր կերպով են նայում ալբանացի աւազակների և յունական հրոսակախմբերի սխրագործութիւնների վրայ: Բոլգարական գիւղերի ժողովուրդը չէ համարձակւում դաշտային աշխատանքի դուրս գալ, երկիւղ կրելով յունական աւազակախմբերից, որոնք յաճախ ապաստանում են այնտեղ, ուր գտնւում են Թուրքաց զօրքերը, որոնց հետ նրանք շատ անգամ բաժանում են իրանց աւարը: Վերջին ժամանակ Սերեսի մօտակայքում սպանել էին 17 մարդ, կողոպտել էր բոլգարացոց եկեղեցին և յափշտակել մօտ 30 գլուխ տաւար:

Իտալացի սպան, որն իսկոյն այդ աղմուկի վրայ եկել է արիւնահեղութեան վայրը, անձամբ կարողացաւ համոզւել, որ նահանջող աւազակների մէջ եղել են միքանի Թուրք զինւորներ... Բոլգարիայի ներկայացուցիչը վճռական քայլեր արեց բոլգար ժողովրդին պաշտպանելու համար, իսկ բոլգարական հրոսակախմբերի գլխաւորներից մի քանիսը բացարձակ մարտահրաւէր ուղարկեցին Թուրքաց բարձր սպաներին, որոնցից մէկ ալբանացի—մայոր գնաց նշանակւած տեղը, ուր նա պատահեց իրեն խմբապետի մի գեղեցիկ ջահել աղջկայ, որն սպառազինւած էր ոտից մինչև գլուխ:

Մայորի ընկերները, որոնք թաքնւել էին անտառի եզերքում, տեսան, թէ ինչպէս սպան և խմբապետը տեսակցութեան տեղում միմեանց պատահելուց և մի քանի խօսք փոխանակելուց յետոյ, այս վերջինը ճարպիկ կերպով դուրս քաշեց իր գօտուց ատրճանակ կրակեց ուղիղ սպայի վրայ և տեղն ու տեղը սպանեց այն երիտասարդ, կեանքով լի ալբանացուն, որը սարսափ էր տարածում ամբողջ գաւառի վրայ իր անողոք խստութեամբ, անկաշառ ազնւութեամբ և քաջութեամբ: Կատարելով այդ արիւնահեղ գործը, հրոսակը, որը մի աղջիկ էր, արագ ցատկեց իր զոհի ձիու վրայ և սկսեց փախչել: Անտառի եզերքում թփերի մէջ նստած ալբանացին իր անշեղ գնդակով խփեց ձիուն և քաջ փախստականը սաստիկ յօշոտւած բերւեցաւ սպանւած մայորի օգնականի վրանը: Դերուհու հետ միասին զինւորները բերել էին ճանապարհին պատահած մի քանի բոլգարներ ևս, որոնցից և սկսեց իր խիստ հարց ու փորձը ընկերի սպանումից վրդոված սպան: Չը դիմանալով այն տանջանքներին, որին դիմում են Թուրքաց իշխանութիւնները ամեն մի այսպէս կոչւած «քաղաքական յանցաւորի» հարցուփորձի ժամանակ և ուզելով վերջ տալ իրանց տանջանքներին, ձերբակալւած բոլգարները, սպայի տւած հարցերին պատասխանի տեղ, սկսեցին հայհոյել Թուրքիայի ինքնակալին և Մահամեդի հաւատը:

(Շարունակութիւնը Տարազ Երես 38)



Մ. ԲԷՐՏՕ

Օրերս հայոց թշւառ վիճակի մասին ֆրանսիական նշանաւոր մատենագիրների հետ Բուզէէլ-տին խնդրողը, որպէս զի սա հրաւէր կարդայ եւրոպական սֆինքս-մետաղ պետութիւններին փրկել բազմաչարչար Հայաստանը և հայը արիւնար քունքրից:



ՍԱՓՕ

Ինչպէս երազ մի գարնանի
Գիշերւան մեղմ, զովաշունչ,
Նրման երկրի իր հայրենի
Մի դիցուհու ոգեշունչ,
Թեթևաքայլ, ինչպէս վայրի
Լեռնային վիթն սևաչեայ,
Իրանն նազիկ ու չինարի,
Ոգևորւած, հըրաչեայ—
Նա թափառում էր մոլորած
Անտառներումը թաքուն,
Արևասփիւռ, համատարած
Դաշտերի մէջ կիսաքուն:
Ափին՝ գըւարթ ու մշտախօս
Գետակների էր նստում,
Ափին՝ ծովի մըրրկայոյզ
Մոլորաքայլ պըտտում:
Դա՞ նա էր, այն չքնաղ Սափօն
Որին ժամին հիացման
Տըւեց պարգև մեծն Ապոլոն՝
Անմահ քընար սքանչացման:

Աւ. Լեռնեց

ԼՈՒՍԻՆ

Երկնքի վրայ մի անխօս վկայ
Ամեն իրիկուն անում է շրջան.
Նա անբարբառ է, համր անզգայ,
Երբէք ոչ մի բան չէ շարժել նրան:

—

Բիւր տեսարաններ նա ամեն վայրկեան
Տեսնում է անցնում առանց կանգնելու
Ծիծաղ, խնդութիւն ու վիշտ անսահման
Նա լուռ տեսնում է առանց զգալու:

—

Մէկը մերկացրած սուրը մահաբեր
Ցոլացնում է իր զոհին անողոք.
Միւսը մութ բանտում ոտքին շղթաներ,
Որին տեսութեան չէ գալիս ոչոք:

—

Մէկը ծնկաչոք արցունքն աչքերին
Սէր է աղերսում սիրած էակից.
Միւսը իր ձեռքով վերջ տալիս կեանքին,
Զզւած աշխարհից ու չար մարդկանցից.

—

Մէկը պինդ նստած խեղճերի վզին,
Ծծում է նրանց հիւթը կենսական.
Միւսը յուսահատ նայում երկնքին,
Ցաւաչ ու անիծ ուղղելով նրան:

—

Մի տեղ հոսում է արիւն յորդառատ
Շաղախած աղի արցունքների հետ.
Միւս տեղ քաղաքների շէն ու հոյակապ
Ծխի ու մոխրի մէջ եղած անհետ:

—

Մի տեղ... բայց բա՞ւ է, քանի տեսարան՝
Ուրախ թէ տխուր, տեսնում է անցնում.
Ոչ բաղդաւորի անհոգ խնդութեան,
Ոչ թշւառի վշտին մասնակցում:

Լէոնիդ.



ՎՐԷԺ, ՎՐԷ՞Ժ:

Մի չար ոգի է, թէ օձ մահաբոյն,
Որ իմ սրտիս մէջ դրել է իր բոյն.
Գիշեր ու ցերեկ սիրտս է կրծում,
Քունը աչքերիցս հեռու փախցնում.

—

Սիրոյ զգացմունք մոռացած բնաւին,
Ատելութեամբ լցել է իմ հոգին.
Վրէժ, վրէժ եմ ես միայն ուզում,
Դա է, որ կը տայ ինձ հանգստութիւն

Լէոնիդ

Ես տեսայ անտառի ոգուն ... Նրա շուրջը բոլորած պարում էին փոքրիկ այծեմարդերը.

Հայրենասէր փախստականը

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ

Երկու աշխարհների մասին

Իմացէք, որ կայ երկու աշխարհ: Մէկն այն է որը գոյութիւն ունի առանց խօսքով նրան ստեղծելու. նրան անւանում են իրական աշխարհ, որովհետև նրա մասին խօսելու կարիք չկայ—նա այնպէս էլ ակներև է: Միւսը—դա արւեստի աշխարհն է. ահա նրա մասին պէտք է խօսել, որովհետև առանց դրան նա չի էլ կարող գոյութիւն ունենալ:

Կար չէր կար մի գիւղացի, որին շատ սիրում էին իրանց գիւղում, որովհետև նա կարողանում էր առակներ ասել, բոլոր գիւղացիք, որոնք աշխատում էին ամբողջ օրը նստոտում էին նրա շուրջը և ասում.—Դէհ պատմիր, թէ այսօր ինչ ես տեսել:

Գիւղացին պատմում էր.

—Ես տեսայ անտառի ոգուն: Նա փչում էր թութակը, իսկ նրա շուրջը բոլորած պարում էին փոքրիկ սատիրները (այծեմարդ):

—Էլի պատմիր: Էլ՞ ինչ ես տեսել.—պահանջում էին մարդիկ:

—Ծովի ափին ես տեսայ երեք յաւերժահարսների, սարծուրեր ալիքների մէջ նրանք սանրում էին իրանց կանաչ մազերը ոսկէ սանրով:

Եւ գիւղացիք շատ սիրում էին այդ մարդուն, որովհետև նա առակներ էր պատմում նրանց:

Ահա մի օր տեսնում է նա երեք յաւերժահարսներ, որոնք օրօրւումէին յուզւող ալիքների մէջ և սանրում իրանց կանաչ մազերը՝ ոսկէ սանրով: Իսկ երբ գիւղացին իր ճանապարհն աւելի հեռու շարունակեց, նա կրկին ահա տեսաւ որ անտառի եզրին նստած էր անտառի ոգին, ածում էր թութակը և նրա շուրջը բոլորած պարում էին փոքրիկ այծեմարդերը...

Այդ երեկոյ,-երբ գիւղացին վերադարձաւ գիւղը և, ըստ սովորականին, սկսեցին նրան միւս գիւղացիք խնդրել.-դէհ, պատմիր թէ ինչ՞ ես տեսել դու:

Այդ երեկոյ գիւղացին պատասխանեց.

—Ես ոչինչ չեմ տեսել:

Չքնաղ Սաֆօն, որին Ապոլոն տւեց պարգեւ քնար սքանչացման

ԿԻՍԱԼՈՒՍՆԻ ՆԵՐՔՈՅ

(Սկիզբը Տարազ հմր 35)

Այդ բաւական էր, որ հրացան պլանիւպի աւանդութիւններով դաստիարակուած սպան հանէր սուրճամանը և հէնց այնտեղ իր սենեակում գնդակահար անէր իր առաջ կանգնած կապուած բօշղարներին: Սենեակում դեռ չէր չորացել թշուառների արիւնը, որ նրա բերին ազատարարի չոր հոգցրած գեղեցկադէմ բաշղաբաշուն, մայոր Սուֆի բէյին սպանողին: Իր արտաքին գեղեցկութեամբ հիրաւունքն կարողացաւ կաշկանդել հարցափորձ անող սպային, որը կարդացած բանալ նրա ձեռքի կապանքները և արձակելով պահապան զինուորներին, առանձին գիրաւոն սեղանակցել իր հետ համապարհորդական ընթրիքին: Երիտասարդ կապիտանի սպասաւորը, որը ծառայում էր նրանց, զինէ միայն, որ «գնաւուրաուհին» չատ գեղեցիկ էր, ուրախ և չատախօս. Նա ամբողջ ժամանակը ծիծաղում էր հիւրանէր աանաւիրոյ «զուգիկայով» (խաղողի արաղ), խմում էր ինքն էլ և կնոջ գինիի մօտ սպասաւորը, նկատելով, որ բէյի սենեակում ճրագը հանգցրած է, գնաց իր սենեակը և ամբողջ գիշերի նման ինքն էլ խոր քուն մտաւ… Առաւօտեան, նա յանկացաւ մտնել բէյին և ուզեց մանել նրա սենեակը. և նկատելով բաց դուռը մօտեցաւ մահճակալին, որից նա սարսափած յետ թռաւ: Կապիտանն ընկած էր արեան լճի մէջ, վզից բոլորովին կտրուած գլուխն ընկած էր այն սեղանի տակ, որի վրայ մնում էին ընթրիքի մնացորդները… գեղեցիկ կապիտանի սենեակում մնացած ջահել բոլղարուհին անյայտացել էր: Այդ նոր Յուդիթի հետ միասին անհետացել էին սպայի հրացանն ու փամփշտակալը…

Այդ դէպքը սարսափելի տպաւորութիւն է թողել ոչ միայն կիսալուսնի սպրանդենների վրայ, որոնց մէջ արեան վրէժխնդրութիւնը զարգացած է մինչև ծայրայեղ աստիճանի, այլ և սուլթանի մայրաքաղաքում, ուր յաճախակի ձերբակալութիւններ են լինում բոլղար ժողովրդից:

Լ. Մարկոսեան

При каждомъ № „НИВЫ“, независимо отъ другихъ приложеній, подписчики получатъ по одной книгѣ, а новые подписчики, выписывающіе также (за 1 р. 50 к., съ перес. 2 р.) первыя 10 книгъ Салтыкова-Щедрина за 1905 г., получатъ ихъ при первомъ № „Нивы“ 1906 г.

ОТКРЫТА ПОДПИСКА на 1906 годъ (37-й годъ изданія) на еженедѣльн. иллюстриров. ЖУРНАЛЪ со многими приложеніями

НИВА

Гг. подписчики „НИВЫ“ получатъ въ теченіе 1906 года:

52 №№ художеств.-литературнаго журнала „НИВА“, заключающаго въ себѣ романы, повѣсти, разсказы; гравюры, рисунки и иллюстраціи современ. событій.

40 КНИГЪ „Сборника Нивы“, отпечатанныхъ четкимъ шрифтомъ, на хорошо глазированной бумагѣ и содержащихъ:

ОСТАЛЬНЫЯ ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ 30 КНИГЪ М. Е. САЛТЫКОВА-ЩЕДРИНА

(„Сказки“, „Мелочи жизни“, „Благонамѣренныя рѣчи“, „Господа Ташкентцы“, „Въ средѣ умѣренности и аккуратности“, „Письма къ тетенькѣ“ и мн. друг. Войдутъ также не помѣщенныя въ прежнихъ изданіяхъ три сказки и комедія „Смерть Пазухина“). (Цѣна полн. собр. въ отдѣльной продажѣ съ перес. 21 руб.).

ПЕРВЫЯ ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ 10 КНИГЪ К. М. СТАНЮКОВИЧА

(въ который войдутъ „Морскіе разсказы“, романы: „Безъ исхода“, „Два брата“ и рядъ разсказовъ), подъ редакціей и съ біографич. очеркомъ П. В. Быкова. (Цѣна полн. собр. въ отдѣльной продажѣ съ перес. 21 руб.).

12 КНИГЪ „Ежемѣсячныхъ литературныхъ и популярно-научныхъ Приложеній“, содержащихъ романы, повѣсти, разсказы, популярно-научныя и критическія статьи современныхъ авторовъ съ иллюстраціями и отдѣлы библіографіи, смѣси, шахматовъ и шашекъ, задачъ и разныхъ игръ.

12 №№ „Парижскихъ модъ“. До 200 столбцовъ текста и 300 модныхъ гравюръ. Съ почтовымъ ящикомъ для отвѣтовъ на разнообразные вопросы подписчиковъ.

12 ЛИСТОВЪ рисунковъ (около 300) для рукодѣльныхъ, выпильныхъ работъ и для выжиганія и до 300 чертежей выкроекъ въ натуральную величину.

1 „СТѢННОЙ КАЛЕНДАРЬ“ на 1906 годъ, отпечатанный красками.

ПОДПИСНАЯ ЦѢНА „НИВЫ“ со всѣми приложеніями на годъ:

въ С.-Петербургѣ: безъ доставки 6 р. 50 к., съ доставкой — 7 р. 50 к. Безъ доставки: 1) въ Москвѣ, въ конторѣ Н. Печковской — 7 р. 25 к.; 2) въ Одессѣ, въ книжн. магаз. „Образованіе“ — 7 р. 50 к.

Съ пересылкою во всѣ мѣста Россіи . . . . 8 р. За границу — 12 р.

ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА ПЛАТЕЖА ВЪ 2, 3 и 4 СРОКА.

Новые подписчики, желающіе получить, кромѣ „Нивы“ 1906 г. со всѣми ея приложеніями, еще ПЕРВЫЯ 10 книгъ соч. САЛТЫКОВА-ЩЕДРИНА за 1905 г., доплачиваютъ одновременно при подпискѣ: безъ доставки въ СПБ. — 1 р. 50 к., съ дост. въ СПБ. и съ пересылкой иногороднымъ — 2 р. и за границу 2 руб.

Иллюстрированное объявленіе о подпискѣ высылается безплатно.

Адресъ: С.-Петербургъ, въ Контору журнала „НИВА“, улица Гоголя, № 22.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 ГОДЪ

XXX ГОДЪ ИЗДАНІЯ

ЗАДУШЕВНОЕ СЛОВО

ДВА ЕЖЕНЕДѢЛЬНЫЕ иллюстрированные журнала для дѣтей и юношества, основанные С. М. МАКАРОВОЙ и издаваемые подъ редакціей П. М. ОЛЬХИНА.

ПОДПИСНОЙ ГОДЪ НАЧАЛСЯ 1-го НОЯБРЯ 1905 г. — ПЕРВЫЕ №№ ВЫСЫЛАЮТСЯ НЕМЕДЛЕННО.

Гг. годовые подписчики журнала „З. Сл.“ для дѣтей МЛАДШАГО ВОЗРАСТА (отъ 5 до 9 лѣтъ) получатъ 52 №№ и 43 ПРЕМІИ. Въ числѣ послѣднихъ: БОЛЬШУЮ КАРТИНУ въ 24 краски „МОЛОДАЯ БАБУШКА“; 12 ИГРЪ И ЗАНЯТІЙ на большихъ, раскрашенныхъ и черныхъ листахъ; МАЛЕНЬКІЙ РУССКІЙ ИСТОРИКЪ; 6 книгъ „БИБЛІОТЕЧКИ-МАЛЮТКИ“ и мн. др.

Гг. годовые подписчики журнала „З. Сл.“ для дѣтей СТАРШАГО ВОЗРАСТА (отъ 9 до 14 лѣтъ) получатъ 52 №№ и 38 ПРЕМІЙ. Въ числѣ послѣднихъ: богато иллюстриров. „ИСТОРІЮ НАПОЛЕОНА“ въ 12 вып.; 12 иллюстр. вып. СОЧИНЕНІЙ РУССКИХЪ И ИНОСТР. ПИСАТЕЛЕЙ; роск. худож. изд. „ПУШКИНЪ ВЪ ИЛЛЮСТРАЦІЯХЪ“; АЛЬБОМЪ СТИХОТВОР. въ 12 иллюстр. и мн. др.

Кромѣ того, при каждомъ изданіи будутъ высылаться: „ПЕДАГОГИЧЕСКАЯ БИБЛІОТЕЧКА“ и „ДѢТСКІЯ МОДЫ“.

Подписная цѣна каждаго изданія „Задушевнаго Слова“, со всѣми объявленными преміями и приложеніями, съ доставкой и пересылкой на годъ 6 рублей. Допускается разсрочка на 3 срока: 1) при подпискѣ, 2) къ 1 февраля и 3) къ 1 мая — по 2 р.

Съ требованіями, съ обозначеніемъ изданія (возраста), обращаться: въ контору журнала „ЗАДУШЕВНОЕ СЛОВО“, при книжномъ магазинѣ ТОВАРИЩЕСТВА М. О. ВОЛЬФЪ — С.-Петербургъ, Гостиный Дворъ, 18.

НА ГОДЪ — 6 рублей, НА 4 МѢСЯЦА — 2 рубля.

ՆՈՐ-ԴԱՐ

Քաղաքական գրական հասարակական ամենօրեայ մեծադիր լրագիր

տարեկան բաժանորդագինը 10 ր. Արտասահման 40 ֆրանկ: (Քսաներեքերորդ դարի)

Խմբագիր-հրատարակիչ՝ Սպանդար Սպանդարեան

Լոյս տեսաւ ՀԱՈՒՊՏՄԱՆԻ «ՋՈՒԼՀԱԿՆԵՐԻ»-ի հայերէն թարգմանութիւնը, 106 երես, գինը 40 կ.: Դիմել՝ Մոսկւա, Ժամհարեան եղբայրների բանկային տուն, Սաքենիկ Արտեմեանին:

11 տարի ԼՈՒՄԱՅ 11 տարի

Գրական, հանրային, քաղաքական և պատմական ամսագիր 1906 թուին կըհրատարակուի հետևեալ լրացրած ծրագրով.

1. Ինքնուրոյն և թարգմանական վէպեր, պատմուածքներ ու ոտանաւորներ, այլ և կենսագրութիւններ:
2. Ավկատագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ պատմական վաւերագիր և յօդուածներ:
3. Ճանապարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագրութիւն:
4. Բարոյագիտական յօդուածներ:
5. Մատենախօսութիւն և կրիտիկա:
6. Ներքին տեսութիւն:
7. Արտաքին տեսութիւն:
8. Այլ և այլք, Գիտութիւն և արուեստ
9. Յայտարարութիւններ:
10. Խմբագրութեան պատասխաններ:
11. Յօդուածներ:

„Լումային կաշխատակցեն բոլոր աչքի ընկնող հայ գրական ույժերը:

Տարեկան բաժնեգինն է ռուսաստանում 8 ռ. իսկ արտասահմանում 27 ֆրանկ:

Խմբագիր-հրատարակիչ՝ Գիւտ ա. ք. Աղանեանց

Լոյս տեսաւ Աղբիւրի յունուարի համարը եւ ուղարկուեց բացառապէս նրանց, որոնք վերանորոգել են իրանց բաժանորդագրութիւնը եւ անցեալ տարուայ միայն Աղբիւր ստացողներին:

Աղբիւրի առանձին համարը՝ 40 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

Մայրական կարը	Յար. Թումանեան.
Մանուկն օրօրոցում	(պատկեր)
Նորածին Յիսուսը իր ծնողների եւ հրեշտակ մանուկների հետ	(պատկեր)
Բարի սուրը եւ փոքրիկ որբ սագը	Լեւոն Վարդանի
Ս. Էջմիածին, Գէորգեան Ճեմարան, Գէորգ դ.	(պատկերներ)
Մեր ազգային-եկեղեցական կալուածները	Բենիկ վարդապետ
Վերածնութիւն	Կ. Ս եկբ Շահնազարեան
Հողի գանգատը	Ղազ. Աղայեան.
Կաղանդ (ոտանաւոր)	Սէյրի
Մայրիկի համար	Զարուհի
Փողի տոպրակը	Քամալեանց Ս.
Բախտի ճանապարհը նոր տարուայ նախօրեկին	Սօվասիլնա
Գուրգենը լճի ափին	(պատկեր)
Հայոց Հայրիկը (ոտանաւոր)	Յար. Պետրոսեան
Վեհափառ Հայրիկ (պատկեր)	Բենիկ վարդապետ
Հայրիկեան թանգարան	
Փողի տոպրակը	Քամալեանց Ս.
Կ. Մելիք-Շահնազարեան (կենսագր. պատկերով)	Պատրիկ
Մրրիկ (ոտանաւոր)	Հասօ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Որքան սոսդ կայ երկնքում: Անգլիացին եւ չինացին: Կիրակնօրեայ հանգիստ ուսանողների համար: Մրջիւնների այգիները:

ԶՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ: Թուաբանական խնդիր: Շուտասելուկ: Մի առաջարկ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Նամակներ՝ Զարեհից, Սիրանոյշից, Արուսեակից:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Մամուլի շուրջը

«Որոշ դաւանանք»

Այսպիսի մի վերնագրով է, որ Մշակի № 21-ի մէջ, նրա խմբագիր Ա. Քալանթարը մտրակում է աջ ու ձախ, սրանց, ով որ միանգամայն իրան գործիչ է անուանում և որը ըստ Ա. Քալանթարի, իբրև թէ չէ կազմել իրա համար մի կայուն աշխարհահայեացողութիւն, մի որոշ ինչպէս ինքն է ասում՝ դաւանանք։

Պ. Քալանթարը այդ իր յօդուածի մէջ հիմնաւորապէս ձեռք է զարկել քննելու գործիչների դաւանանքի հարցը և խօսքերը քաշքշելով, ա՛յնա Մշակի հիմնաքեր, առնելով ու կրկնելով խօսքերը յետոյ առաջ դնելով, կարողանում է ձգել յօդուած մի խոշոր տարածութեան վրայ և այդ յօդուածի իմաստը այն է, ինչ որ վերևը առաջ բերինք, այն է՝ թէ, գործիչները չունեն դաւանանք։

Խոստովանում ենք, որ այդ բնաբանը շնորհակալ բնաբան է և պ. Քալանթարը կարող էր մի աւելի լաւ բան գրել դրա մասին, քան գրել է. բայց, աւա՜ղ,բացի բացասական վերաբերմունքը, ուրիշ ոչինչ չէ տալիս յօդուածի հեղինակը և, թէև նա սպառնացել է միւս անգամ աւելի պարզել իր ասելիքը, սակայն ցʼայսօր մենք ոչինչ չըգտանք այդ մասին Մշակի էջերում և յուսով ենք, որ երբէք էլ չենք գտնի։ Հարցը փափուկ տեղն է բռնել յօդուածագիրը և նա ոչ մի դրական խօսք չի կարող ասել նրա մասին։ Հարցրէք ասում է, Ա. Քալանթարը մեր գործողներին, թէ ինչ է նրանց քաղաքական և հասարակական դաւանանքը և նրանք ձեզ կըտան շատ կտրական պատասխան, դասելով իրանց, օրինակ, սահմանադրական—ռամկավարական, սոցիալ—դեմօկրատական, սոցիալիստ յեղափոխական եւ ուրիշ կազմակերպութիւնների մէջ։

Սակայն ի՜նչ անէ նա, ով չէ մշակել իր համար որոշ աշխարհայացք...

Նրան մնում է արտասանել անորոշ բառեր,...թեթեւսօլիկ կերպով ծաղրել ուրիշներին եւ վերջ 'ի վերջոյ ոչինչ չասել պարզ, որոշ, դրական, եւ էական։

Այժմ մենք հարցնենք Ա. Քալանթարին, թէ ինչպէս պէտք է վերաբերւի ընթերցողը իրան պ. Քալանթարին դաւանանքի հարցին վերաբերեալ խնդրում։ Գոնէ այդ իր յօդուածում բացի անորոշ բառերը, բացի թեթեւսօլիկ կերպով ծաղրելը ուրիշներին և ոչինչ չասելը պարզ, որոշ, դրական և էական,—Ա. Քալանթարը ուրիշ ոչինչ չէ ասում։

Բայց գուցէ նա պ. Քալանթարը առաջ, վաղուց է որոշել իր դաւանանքը... այդպիսի բան էլ չէ եղել նրա անցեալում։ Այո́, նա խօսել է, գրել է, գուցէ և քարոզներ է խօսել մի օր առաքինութեան, միւս օր ողորմածասիրութեան, երրորդ օր ազատութեան, ընկերսիրութեան, արդարութեան, կըրթութեան, լուսաւորութեան մասին եւ այլն եւ այլն։

Բայց չէ՞ որ այդ տիրադայից յետոյ, Ա. Քալանթարը շարունակում է այսպէս՝ ընդհանուր բարոյական քարոզները լսում են Ատլանդեան ովկիանոսից սկսած մինչեւ Մ'եծ ովկիանոսի ափերը...

Մենք աչ հեգնում ենք պ. Քալանթարին, ոչ ծաղրում և ոչ հակառակորդ հանդիսանում. մենք իրան, պ. Քալանթարի ուշադրութիւնն ենք դարձնում այն կարևոր հանգամանքի վրայ, որ ինքըն էլ աննկատելի կերպիւ, իրան իսկ համար աննկատելի,- նոյն բառախաղերըն է անում, նոյն քարոզները խօսում և՝ և ոչ մի դրական և էական խօսք չէ արտասանում, այնպէս որ ընթերցողը մնում է մոլորած, թէ ինչո՞վ է զանազանւում քննադատը (այս դէպքում Ա. Քալանթարը), իր քննադատելի անձինքներից։

Այնպէս որ՝ ինչպէս որ մինչև այդ յօդուածը մենք չըգիտէինք Ա. Քալանթարի քաղաքական եւ հասարակական դաւանանքը,— այնպէս էլ այդ յօդածից յետոյ մենք չըգիտենք. չըգիտենք և այն, թէ Մշակն է տանում Ա. Քալանթարին, թէ հակառակը, մանաւանդ որ եթէ մի հրաշքով մենք այդ իմանայինք, դարձեալ ոչ մի կրիտերիում չէինք ունենալ պարզապէս որոշելու պ. Քալանթարի քաղաքական եւ հասարակական դաւանանքը։

Դուք փորողը, ինքը գուբը կʼընկնի։

Մ.—ա.—ա.

Շրջաբերական

Հայ—ոչ—յեղափոխական բնկերութեանց վարչական ժողովներուն։

Բոլոր ոչ—յեղափոխական ընկերութեանց մէջ յարաբերութիւն հաստատելու և ապագային նոյն իսկ պատգամաւորական ժողով գումարելու դիւրութիւն ընծայելու համար, Բարիզի հայ Աշխատ. Միութեան վարչական ժողովս կը խնդրէ բոլոր ոչ—յեղափոխական ազգային ընկերութեանց վարչական ժողովներէն որ, եթէ կարելի է, մինչև երկու ամիս, բարեհաճեն իրեն ղրկել իրենց պաշտօնական հասցէն և մէկ օրինակ կանոնագիր։ Վարչական ժողովս հրատարակութեան պիտի տայ իրեն հասած ընկերութեանց անուններն ու հասցէներն 'ի գիտութիւն բոլոր միւս ընկերութեանց և պիտի ղրկէ ամենուն մէկ օրինակ իրեն կանոնագրէն։ Բարիզի հայ Աշխատ. Միութեան վարչական ժողով, 26 Յունուար 1906.

ՉՔՆԱՂ

ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ խբագրատան կից Կանանց Ձևաղ դպրոց գրաշարանոցում փետրւարի 15-ից երկրորդ դասաշրջանի աշակերտուհիների ընդունելութիւն է, որ տեւում է չորս ամիս։

Վճարը 30 ռուբլի

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԵՒ ԱՊԱԳԱՅՈՒՄ

(Ա. Բեբել)

(Սկիզբը Տարազ № 4)

Այդ պատճառով էլ տղամարդը միայն այն ժամանակ է սիրոյ ամուսնութիւն հաստատում, երբ հրապուրւելով կնոջ գեղեցկութեամբ, նա միևնոյն ժամանակ կնոջ օժիտի մէջ բաւականութիւն է գտնում սեփականութիւն դիզելու իր ագահութեան համար։ Ուրիշ խօսքով,—ամուսնութիւնը նրա համար դառնում է մի առևտրական ձեռնարկութիւն, որին նա դիտում է նոյնպիսի հաչւով, ինչպէս և ուրիշ ամեն մի ձեռնարկութիւն։

Նա կին է առնում տգեղին, առանց սիրոյ, եթէ սա բերում է իր հետ հարուստ օժիտ և յոյս է տալիս նըրան արտադրելու նրա համար օրինական ժառանգներ։

Նիւթական յարաբերութիւնների վրայ հիմնւած ամուսնութեան այդ բուրժուական բնաւորութիւնը թափանցել է հասարակութեան բոլոր խաւերի մէջ։ Միայն ամենաստորին խաւերում, ուր սեփականութեան հարցը մեծ մասամբ դեր չէ խաղում, ամուսնութիւնը պահպանւել է ինչպէս հակման մաքուր գործողութիւն։

Այստեղ մարդի և կնոջ յարաբերութիւնների մէջ եղած հաւասարութիւնը, եթէ ոչ իրաւաբանօրէն—քանի որ այստեղ էլ իրանց ուժի մէջ են մնում բոլոր քաղաքացիական բուրժուական ձևերը,—բայց դարձեալ փաստօրէն, շատ աւելի մեծ չափով է արտայայտւում, քան թէ բարձր դասակարգերում։ Այդ պատճառով էլ ամուսնական յարաբերութիւնների խախտումը հասարակութեան ստորին խաւերում սեռական անհաւատարմութիւնից աւելի հազւագիւտ է լինում, իսկ աւելի յաճախ լինում է նիւթական կարիքից և նրանից բղխող չարիքներից. վատ դաստիրակութիւնից, կոպտութիւնից և արբեցողութիւնից։ Այդ դէպքերում կին—պրօլետարը կրկնակի է տանջւում, ինչպէս կին և ինչպէս պրօլետար։

Սրանից ակներև է, որ կնոջը ամուսնական պայմանի մասնաւոր բնաւորութիւնը քիչ օգուտ կը բերի, ճիշտ այնպէս, ինչպէս որ պրօլետարին—տնտեսական ազատութիւն յայտնելը։ Այդ վերջին հանգամանքն օգտակար է միայն դրամատէրին. ճիշտ այդպէս էլ ամուսնութիւնը ինչպէս մասնաւոր պայման, տղամարդին աւելի մեծ իշխանութիւն կը տայ կնոջ վրայ։ Այդ դէպքում մենք բոլորովին աչքաթող ենք անում այն հանգամանքը, որ բ ւրժուա հասարակութիւնը, հաշւի առնելով մասնաւոր սեփականութիւնը և նրա հետ կապւած ժառանգական իրաւունքը, չէ կարող համաձայնել ամուսնութեան այդպիսի ձևի հետ։ Կինը միայն այն ժամանակ կարող է իսկապէս հաւասար լինել տղամարդին, ոչ միայն իրաւաբանօրէն, այլ և տնտեսապէս իրաւունքներով կը հաւասարւի նրան, երբ կունենայ նոյն մարդկային իրաւունքներն, ինչ ունի տղամարդը, երբ հասարակական յարաբերութիւնները անհնարին կը դարձնեն մարդի համար, որ նա պարոնի դեր խաղայ իր կնոջ վերաբերմամբ, ինչպէս որ այդ տեղի ունի այժմ, երբ նա ներկայանում է ինչպէս կնոջ կերակրողը։

Հասարակական այն կազմը, որը չէ ճանաչում ոչ հաբստահարող ոչ էլ հարստահարւած, ոչ միան քաղաքական, տնտեսական և կրօնական յարաբերութիւնների մէջ, այլ նոյնպէս և սեռերի յարաբերութիւնների մէջ, դա սոցիալական (ընկերավարական) կազմն է։

Միայն սոցիալական կազմի ժամանակ կինը, ինչպէս և ամեն մի հարստահարւած, կարող է ունենալ մարդկային կատարեալ իրաւունքներ. սոցեալիզմի նըպատակն է ամենաբարձր զարգացման հասցնել հասարակութեան բոլոր անդամների, հետևապէս, և կանանց, ոյժերն ու ընդունակութիւնները. նա պահանջում է հասարակութեան բոլոր անդամներից, կը նշանակէ և կանանցից, որ նրանք գործ դնեն իրանց ոյժերն ու ընդունակութիւնները ընդհանուրի օգտին. նա հաւասար բաժին է հանում ընդհանուր օգտից և ամեն մի գործունէութեան արդիւնքից բոլոր անդամներին, հետևապէս, և կանանց։ Միայն սոցիալական կազմի ժամանակ սէրը, մարդկային.այդ ամենաազնիւ հակումը, կարող է կատարեալ և ամբողջովին զարգանալ. բոլոր ծուռ նախապաշարմունքները, բացառապէս ընտանեկան կեանքի բոլոր խոչընդոտները կը վերանան, կինն ու տղամարդը իսկապէս հաւասար իրաւունքներ կունենան, միայն նրանց դէպի միմեանց ունեցած հակումն ու ցանկութիւնը կը լինի ամուսնութիւն հաստատելու վճռող պայմանները։ Ինչպէ՞ս այժմ ամեն ինչ նման չէ դրան։ Ինչպէ՞ս յաճախադէպ են այժմեան ամուսնութեան մէջ մշտական տարաձայնութիւններն ու վէճերը ամուսինների մէջ, որոնք յաճախ հասնում են մինչև կռուի բռնութեան և նոյնիսկ եղեռնագործութիւնների։ Ուր չը կայ սէր (քանի որ ամուսնութիւնն ամենասկզբից ստիպողական ամուսնութիւն է եղել, այսինքն այնպիսի, որ հաստատել են միայն նիւթական կամ դասակարգային հաչւով), այնտեղ չուտով ատում են միմեանցից ամուսինները, մանաւանդ այն դէպքում, երբ մի կողմն ստիպւած է լինում իր վրայ առնելու միւս կողմի վերաբերմամբ զանազան պարտականութիւններ, որոնք խանգարում են կամքի ազատ ինքնագործութեանը և ուրիշ հակումների բաւարարութեանը։ Երբեմն պարապութիւնը կամ չափազանց ճոխ կեանքը պատճառ է լինում ամուսինների միմեանցից կշտանալուն և առաջ է բերում ձգտում զանազանակերպութիւն մտցնելու սիրոյ մէջ. իսկ երբեմն ամուսնութիւնը խախտւում է այն պատճառով, որ նրա մէջ երևան են գալիս բնաւորութիւնների անհաչտ և անդուրեկան յատկութիւններ. շատ անգամ էլ այն դէպքում, երբ կրքի սկզբնական սաստկութիւնից յետոյ յայտնւում է, որ չափազանց մեծ տարբերութիւն և խիստ հակասութիւն կայ ամուսինների հայացքների և կրթութեան մէջ. կամ թէ նիւթական չափազանց ծանր հանգամանքներ յանկարծ բոլորովին փոխում են նրանց կեանքի սովորական եղանակը։

(Կը շարունակւի)

Մաւքիզ Իտօ
(ճապոնիայի Բիսմարկը)

ՃԱՊՈՆԱՑԻՆԵՐԸ
(Ցաղրուբեան տարեդարձի առիթով)

Ամբողջ ռուս-ճապոնական պատերազմի ընթացքում, «Թանը» ժամանակ առ ժամանակ տպում էր Շառլ Պտի'ի թղթակցութիւնները Տօկիոյից: Ֆրանսիացի այդ շնորհալի և խորամիտ թղթակիցն գրաղւում էր —բացառապէս ճապոն ժողովրդի հոգեբանութեան նկարագրով, իսկ պատերազմի յաջողութիւններըհաքբեցրելէին այդ ժողովրդին, որն իր զգացմունքներն արտայայտելու մէջ համարեա մոլեգնութեան էր հասնում: Իր դիտողութիւններից Շառլ Պտին՝ այն եզրակացութեան եկաւ, որ ճապոնացիք դէպի եւրոպացիք ունեցած իրանց ատելութիւնը կարող են թագցնել, բայց որ դա միշտ կարող է նրանց մէջ զարթել նոր կատաղութեամբ:

Ճապոնացիք բարձրացրին իրանց և ցեխը կոխեցին ռուսներին: Նրանք փողոցներով շրջեցնում էին ձեռքի փոքրիկ սայլակներ, որոնց վրայ բարձր ամրացրած էին ռուսաց նաւերի փոքրը օրինակները, կիտէյից ու եղեգից շինած: Այդ բոլոր նաւերը ծակծկւած, կայմերը ջարդւած, դրօշակները փալաս դարձրած: Արեւստական կերպով կարմիր բոցով լուսաւորւած այդ նաւերը ներկայացնում էին հրդեհ: Ժամանակ առ ժամանակ բռնկող փամփուշտները պէտք է ներկայացնէին արտիլլերիական գործիքների պայթումն'րը:

Դիշերը գալիս, բոլոր ճապոնացիք, տղամարդիկ, կանայք և երեխաները ադմկայոյց ամբոխով հետեւում են այդ սայլակներին, ճոճելով իրանց դրօշակները և վառած լապտերները: Քիչ քիչ այդ ամբոխը խիստ գրգռման մէջ է ընկնում և սկսում է վէլ ա՛ղաղակներ ու վայրենի ոռնոց բարձրացնել:

Գոյնզգոյն լապտերների փայլով տարօրինակ կերպով լուսաւորւած այդ պատկերները ամենևին նման չեն մարդկայինի. նրանց դէմքերը ջղայնաբար ձգւում են, հրէշաւոր դիմակների տեսք տալով նրանց:

Այստեղի եւրոպացիք, մեծ մասամբ ճապոնասէրները, կամ նրանք՝ որոնք աշխատում են այդպէս ձեւանալ, որ չը փչացնէին իրանց գործերը, ենթադրում են, երբ թէ այդ ամբոխը վտանգաւոր չէ. սակայն ամեն կերպ աշխատում են խոյս տալ նրանից: Բայց իսկապէս, ամբոխըն անցնում է փողոցներով ինչպէսմի մրրկածուփ հեղեղ, սրբելով ամեն ինչ իր ճանապարհի վրայ:

Կարելի է երեւակայել, ասում է վերջում Պտին, թէ ինչ կը լինի այդ ամբոխը,եթէ Ճապոնիայում շարժումներ ու խռովութիւններ լինեն:

Հաշտութիւն կնքելուց յետոյ, Ճապոնիայում իրօք եղան խռովութիւններ: Եւ ահա թէ ինչ է գրում այդ մասին Շառլ Պտին:

Ամենից առաջ, ասում է նա, ես պէտք է խոստովանեմ, որ եւրոպացու համար խիստ դժւար է պատել Ճապոնիային, քանի որ նրա ժողովրդի հայեացքը բոլորովին նման չէ մերին. Երբեմն, մտադիր լինելով հաճելի խօսք ասել ճապոնացուն, նրան վիրաւորանք ես հասցնում և ընդհակառակն: Միևնոյն ժամանակ ես նկատել եմ, որ ճապոնացին գերադասում է յարձակումը անտակտ դովեստից: Ցամենայն դէպս նրա համար բացարձակ հակառակորդն աւելի հաճելի է, քան թէ նրան անշնորհք ծառայութիւն անող բարեկամը:



Մաւշալ Օյամա
(Անյաղթ զօրավար)

Կոմս Կաճուրի Ինուա
(Միկադօի մտքը. ճապոնիայի խելքը)

Իր բնաւորութեամբ այդ ժողովուրդը խիստ նման է իր երկրի հրաբխային բնութեանը:

Նոյն իսկ Ճապոնիայում երկար ապրելուց յետոյ կարելի է նրա մասին սխալւել ճիշտ այնպէս, ինչպէս որ կարելի է սխալւել, քաղաք շինելով ներգործող հրաբուխի ստորոտում, համարելով նրան հանգած:

Պտիի խօսքով, Միկադօն—դա մի աստուածութիւն է, որը նոյնչափ յարգւած է, որչափ և անզօր, քանի որ նրա փոխարէն խօսում և գործում են բարձր աստիճանաւորները,որոնցից առանձնապէս յայտնի են հինգը, որոնք յաճախ ժողովւում են կարեւոր հարցերի մասին խորհրդակցելու: Դրանք են՝ *մարկիզ Իտօն, Եամագատա* և *Օյեամա* մարաջախտները և *Ինույա ու Մացիքատա* կոմսերը: Այս վերջին երկուսը նշանաւոր ֆինանսիստներ են, որոնք վերջին խորհրդակցութեան ժամանակ հաշտութիւն կապելու կողմն էին: Մարկիզ Իտօն նշանաւոր խելքի տէր մարդ է, որը միշտ ձգտում է բարձրացնել իր երկիրը մինչև աշխարհի առաջնակարգ ազգերի բարձրութեան: Նա մտածում է Ճապոնիան դարձնել երկրորդ Անգլիա, նրա նման առևտրական, նրա պէս արդիւնաբերող և նրա նման էլ ազատամիտ:



Ֆէլդմարշալ Եամագատա
ճապոնակ. գլխաւոր շտաբի նախագահ.

Խորհրդի ժամանակ նա բոլորովին իրաւացի կերպով կարծիք յայտնեց, որ պատերազմական վարձատրութիւնից հրաժարւելն այնուամենայնիւ աւելի լաւ է, քան թէ պատերազմը շարունակելը, քանի որ Ռուսաստանի. ստորացնելը վտանգաւոր կարող էր լինել ապագայի համար:

Մարկիզ Իտօն կողմնակից է Ռուսաստանի, Ճապոնիայի և Անգլիայի մեր ձեցման:

Լ.

Բուն բարիկենդան բուն Ռուսաստանում.

Խմբագիր-հրատարակ.
Տիգրան Նազարեան

ՃԱՂԿԱՊ ԿՈՎԿԱՍԱՀԱՑ ՄԱՄՈՒԼԻ

Հայ գրականագէտների փետրուարի 2-ին ՏԱՐԱԶԻ խմբագրատանը կայացած ընդհանուր ժողովի շարունակութիւնը նշանակւած է երեքշաբթի, փետրուարի 14-ին, երեկոյեան 5 ժամին: Փետրուարի 2-ին հրաւիրւածներին խնդրում են շնորհ բերել:

Գրաշարանոց կանանց «Զքնաղ» տպարան-դպրոցի: Արագատիպ «Հերմէս» ընկ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ռ. (արտասահմանի 5 ռ.) Տարազ—6 ռ. (արտասահմանի 10 ռ.) Աղբիւր-Տարազ, պրեմիաներով 10 ռ. (արտասահմանի 18 ռ.) Տարազ ամիսը 50 կ. առանձին №-ը եւկու թերթից 30 կ., մի թերթից 20 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երեսին 40 կոպ վերջին երեսին 25 կ. մանրատառ (պետիտ) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չտպուելիքը (երեքթերթից պակաս) չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութեան խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից). առ. 10¼ ժ. մինչև 2 ժ-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ Rédaction du Journal „TARAZ" Caucase Tiflis

գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 6 Կիրակի, փետրուարի 19 — Տասնեւեօթներորդ տարի 1906

Շարունակւում է 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւր և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV

և

Տարազը Աղբիւրի հասունացած սանների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել:

ՏԱՐԱԶ

XVII պատկերազարդ շաբաթաթերթ XVII

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

(Պուշկինից)

Բարբարոս նկարիչն քնոտ վրձինով
Հանճարի ստեղծած պատկերն է սեւցնում,
Եւ իր անկանոն, անմիտ նկարով
Նորա երեսը մրոտում, ծածկում:

Բայց ներկըն օտար ծիգ տարիներից
Փշրւում է, թափւում հին թեփի նման.
Հանճարի ստեղծած պատկերը նորից
Դառնում է շքեղ առաջուայ նման:

Այսպէս էլ անցնում, կորչում են անհետ
Իմ տանջուած հոգուց մոլորութիւններ,
Եւ նորոգւում են, վերադառնում յետ
Նախկին օրերի մաքուր պատկերներ:

Յարութիւն Թումանեան

—

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ

Երբ մեռաւ Նարգիզը, տխրեցին դաշտի ծաղիկները և սկսեցին խնդրել գետից փոխ տալ իրանց մի քանի կաթիլ ջուր, նրան ողբալու համար:

—Օ՛,—պատասխանեց գետը—եթէ իմ ջրի բոլոր կաթիլները փոխուէին արցունքների, այն ժամանակ էլ նրանք չէին բաւականացնիլ, որ ես ինքս ողբամ Նարգիզին. չէ՞ որ սիրո՛ւմ էի նրան:

—Այդ էր պակաս, որ դու չսիրէիր Նարգիզին,—պատասխանեցին դաշտի ծաղիկները:—Չէ՞ որ նա այնպէս գեղեցիկ էր:

—Մի՞թէ նա գեղեցիկ էր.- հարցրեց գետը:

—Բայց քեզնից աւելի լաւ ո՞վ գիտէ նրա գեղեցկութիւնը: Ամեն օր, ափից ցած կախուած, նա հրճւում էր տեսնելով, թէ ինչպէս քո ջրերը արտացոլում էին նրա պատկերը…

Ուայլդը լռեց մի վայրկեան, խօսքն ամփոփելու համար:

—Դէհ, եսկ ես,—պատասխանեց գետը,—եթէ սիրում էի նրան, բոլորովին դրա համար չէր. ես սիրում էի նայել, թէ ինչպէս—մինչդեռ նա կախուած էր ջրի վրայ.—նրա աչքերում արտացոլում էին իմ պարզ ջրերը:

Լէօնիդ

Այդ էր պակաս, որ չը սիրէիր Նարգիզին. չէ՞ որ նա այնպէս գեղեցիկ էր…

Նամակ խմբագրութեան

Թիֆլիս, 4 փետրւարի

Արգոյ պ. խմբագրապետ,

Յանուն ճշմարտութեան և խօսքի ազատութեան խնդրում եմ ձեզ տպագրել ձեր թերթի մօտակայ համարներից մէկում այս հակիրճ նամակս: Մօտ մէկ տարի յառաջ աքսորավայրից յետ դարձայ Տփխիս:

Աքսորւած էի Գանձակից, որ առաջնորդական փոխանորդի պաշտօն էի վարում: Սիրով կ՚երթայի այնտեղ նոյն պաշտօնս շարունակելու, ուր սիրով էին սպասում նւաստիս:

Բայց այդպէս չեղաւ: Թեմիս առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը Տփխիսի Մայր եկեղեցու երէցփոխան պ. Արշակ Բաբեանի հետ մէկ տեղ Վեհափառի հաճութիւնն առել էին, որ ես Տփխիսում քարոզչութեան պաշտօնով մնամ. Վանքի միաբաններն էլ միաձայն դիմումն էին արել պ. Աղեքսանդր Մանթաշեանին, որ իմ ռոճիկս հոգայ: Նա 3 տարով նշանակած էր իր կողմից 1800 րուբլի: Պաշտօնը սրտիս մօտ էր, ես էլ իմ հաճութիւնը տւի Վեհին, առաջնորդին առանձին առանձին:

Իմ նախկին պաշտօնս յանձնւեցաւ ուրիշի:

Ամիսներ անցան և ես պաշտօնի հրաւիրող պաշտօնական գիր չստացայ. բացւեցաւ, որ առաջնորդը փոխել է իր միտքը կամ աւելի ճիշտ կը լինի ասել մի դիւանագիտական խաղ է խաղացել:

Ես դիմեցի իրերի դրութիւնը Վեհափառ Կաթուղիկոսին, մնալով Տփխիսում գրեթէ մի ամբողջ տարի հիւանդ, դունէ դուռ... քաղցած: Ստիպւած էի մասնաւոր պարապմունքներով ապրել:

Վեհը Տփխիս ժամանեց, դժգոհ մնաց գործի ելքից, բայց և այնպէս ինձ ուրիշ պաշտօններ առաջարկեց: Առածն ասում է «*Լաւ է շուն լինել, քան տան պստիկը*»: Ես այս դէպքում տան պստիկն էի. ես դատ խնդրեցի, բայց ի զուր, Սամթունեան սրբազանը արքեպիսկոպոս էր... Մանրամասնութիւնները չեմ ասում:

Այնուհետև Բեսարաբիոյ սրբազան առաջնորդի ցանկութեամբ Վեհափառը նշանակեց ինձ պաշտօնեայ այն թեմի:

Ամիսներով այս առթիւ շարունակ թէր և դէմ լուրեր են հասնում ականջիս թէ ինչո՞ւ ես Տփխիսումն եմ և սպասում, թէ ինչո՞ւ չեմ քարոզում են:

Նկարագրածս իմ կեանքի հետ կապւած խրողութիւնն է, թէ «*ինչո՞ւ էլ*» Սամթունեան սրբազանը կարող է բացատրել. որքան շնորհակալ կը լինէի սրբազանից, եթէ այդ բացատրութիւնը տար և իմ լեզւիս կապանքներն արձակէր դրանով:

Մի այլ դիւանագիտութիւն էլ արքեպիսկոպոսի կողմից հետևեալն է:

Մօտ օրերս Էջմիածնի ս. Սինոդը միաձայն վճռով ինձ քննիչ է նշանակել Տփխիսի ապականւած կոնսիստորի գործերը քննելու: Ապականւած եմ ասում, որովհետև կոնսիստորի անդամը հրապարակով դող, ավէտ, կաշառակեր է անւանում բոլոր ծառայողներին, որոնք նոյնն են ասում անդամների համար: Տ. Գարեգին արքեպիսկոպոսը մի աւարինակ պատճառաբանութեամբ աղերսել է Վեհին, որ սինոդի վճիռը փոխէ և ազատէ իրենց Բենիկ վարդապետի քննութիւնից:

Մի ուրիշ սուտ լուր էլ այժմ է պտտում, որ ծնունդ է առել նոյնպէս առաջնորդարանի մթնոլորտից. իբր թէ սուտ է որ Սինոդը ինձ քննիչ է նշանակել, որ ես լրագրերին մոլորեցրել եմ անուղղակի ճանապարհով:

Այդ վարմունքի անունը ընթերցողներին թողնելով, ես միայն դնում եմ այստեղ Սինոդի հրամանի թիւն ու համարը ,,*'ի 23 Յունւարի* 1906 *ամի* №95‘‘, որի պատասխանը ցեկուցել եմ Սինոդին:

Բենիկ վարդապետ.

—

Տպագրելով Տէր. հ. Բենիկ վարդապետի նամակը մի քանի կրճատումներով, մենք խորապէս վշտացած ենք, որ երէկւայ երկու լաւ բարեկամների և եղբայրակիցների մէջ (Սրբազան Տ. Գարեգին արքեպիսկոպոսի և հ. Բենիկ վարդապետի) տարաձայնութիւնները հասնում են լրագրական էջերին: Յանուն *ճշմարտութեան և խօսքի ազատութեան*, որով պահանջում է հ. Բենիկ վարդապետը տպագրել իր նամակը,—տպագրում ենք, վերապահելով մեզ *անկողմնապահութիւնը, անաչառութիւնը և էթիքան*, կրճատելով նամակը և չտպագրելով նրա մի քանի մասերը: *Միաժամանակ* հարցնում ենք Վանքի տաճարի երէցփոխ պ. Արշակ Բաբեանին և Վանքի միաբանութեանը՝ *Ի՞նչու հ. Բենիկ վարդապետը չի քարոզեց: Ի՞նչու նրա անել մինակը դուռ.—դուռն ընկնելը թոյլատրեց թեմիս սրբազան առաջնորդը եւ իր պերճախօս քարոզիչ վարդապետին չը հրաւիրեց պաշտօնին ստանձնելու:*

Պարտք ենք համարում յայտնել և այն, որ կոնսիստորի քննելու գործերը չեն վերաբերում թեմիս այժմեան սրբազան առաջնորդի օրերին, այլ նրա նախորդների:

Խմբ.

ԽՈՐ ՔՈՒՆ

Ռուսաստանի սթափեցնող շարժումները քնից զարթեցրին անծայրածիր կայսրութեան բոլոր դասակարգերը, ամենքը բաց արին աչքերը, դիտեցին իրենց թերութիւնները, կազմեցին ժողովներ, ծրագիրներ իրենց վիճակը բարւոքելու, համաձայն ժամանակի ստիպողական պահանջների: Միայն հայ հոգևորականութիւնը չարթնացաւ խոր քնից. մինչդեռ հայ եկեղեցու և հոգևորականների դարևոր անշարժութիւնը շատ կարօտ է վերանորոգութեան և անյետաձգելի բարեփոխութեան:

Այս ծննդական ժամանակ նոյն իսկ ռուսաց վերին աստիճանի պահպանողական հոգևորականութիւնն էլ զգուխ բարձրացրաւ և շուտով տեղի կունենայ նրա ընդհանրական ժողովը Ռուսաստանի սրտում—Մոսկւայում, նւիրւած եկեղեցու անհրաժեշտ բարեփոխութիւններին:

Թիֆլիսի հայ քահանաները մի քանի ժողովներ արին և լրագիրները յայտնեցին, որ Ճեմարանի առնեն մի հանրագիր են շարադրել իրենց կարիքների համար. մինչև ցարդ կենդանութեան այլ նշաններ չերևացին. դրա մի պատճառն էլ անշուշտ Ռուսաստանի հայերի չփոթւած և տանճւած դրութիւնն է: Ի վերայ այսր ամենայնի հարկ է և կեանքի ու մահու խնդիր է հայերի համար եկեղեցական բարեփոխութիւնները—րեֆորմները, վասն զի եկեղեցու շուրջն է դեռ միայն պայմանաւորւած հայի ազգային գոյութեան սռանցքը:

Երկտողովս չենք ուզում նշանակել բոլոր բարեփոխութեան կարօտ կէտերը, միայն ընդհանուր խօքով կասենք, որ ծեսականութիւնը, ձեականութիւնը և արարողութիւնները խեղդել են եկեղեցու աքանչելի, քրիստոնէական հոգին. նախապաշարմունքները կռապաշտական և քրմական ձևերով խճողել են նրան. եկեղեցին այլ ևս չունի գրեթէ քրիստոնէական կրթիչ և դաստիարակող ներգործութիւն հայ ժողովրդի վրայ. վասն զի դադարել է խոսլու քարոզչութիւնը սուրբ Աւետարանի, իսկ հոգևորականները

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԵՒ ԱՊԱԳԱՅՈՒՄ

(Ա. Բեբել)

—

(Սկիզբը Տարազ № 5)

Մի խօսքով, շատ ու շատ պատճառներ, որոնք առաջ են գալիս կամ նիւթական պայմաններից, կամ բոլորովին տարբեր, շատ անգամ արւեստական կերպով առաջ բերւած, մտաւոր պահանջներից ու հայեացքներից, ստեղծում են այժմեան ամուսնութեան մէջ այնպիսի դրութիւն, որը յաճախ անտանելի տանջանք է դառնում երկու կողմի համար, որը խորտակիչ ներգործութիւն է ունենում ընտանեկան կեանքի և զաւակների դաստիարակութեան վրայ, որը, սակայն, միևնոյն ժամանակ, անհնարին է դարձնում գործադրելու միակ խելացի միջոցը—փոխադարձ համաձայնութեամբ ապահարզանը, քանի որ դրան արգելք են հանդիսանում զանազան նախապաշարմունքներ: Բարեբաղդաբար սոցիալական հասարակութիւնը չէ կարող ճանաչել ամուսնութեան մէջ այդպիսի տխուր դէպքեր ու արգելքներ. որտեղ էլ նրանք, իբրև բացառութիւն պատահեն, հեշտութեամբ կը վերացւեն: Ամուսնութիւնն, այդ խօսքի իսկական մտքով, մի մասնաւոր պայման է, որ կապում են երկու բոլորովին հաւասար իրաւունքներ ունեցող կողմերը, որը կարող է քանդւել առանց որև է արտաքին արգելքի, հէնց որ մասնակցողների յարաբերութիւններն այդ բանն անհրաժեշտ կը դարձնեն:

Չէ կարելի երևակայել մի աւելի մեծ անբարոյականութիւն, քան թէ այն, երբ երկու մարդիկ, որոնք չեն կարող տանել միմեանց հետ ամբողջ կեանքում:

Դրանից տուժում է ոչ միայն նրանց սեփական բնաւորութիւնը, որն այդ ստիպողական դրութեան մէջ ստանում է ամենավատ յատկութիւններ, այլ և տուժում են բոլոր նրանց շրջապատողները և, մանաւանդ, երեխաները: Ոչ մի բան այնպէս վնասիչ և անբարոյականացուցիչ ներգործութիւն չէ անում երեխաների վրայ, ինչպէս ծնողների ամենօրեայ օրինակը, որոնք լաւ չեն ապրում միմեանց հետ շարունակ, երեխաների ներկայութեամբ դիմաւորում են միմեանց յանդիմանութիւններով, տանելութեամբ, կամ թէ մի աւելի վատ կերպով. այդ բանը խախտում է երեխաների յարգանքն ու սէրը դէպի ծնողները և յաճախ դառն երկպառակ դրութիւն է ստեղծում մանկական հոգու մէջ:

Ոչ մի բան աւելի խիստ չէ դատապարտում այն բուրժուական ամուսնութեան ստիպողական բնաւորութիւնը, որը պայմանաւորւած է լինում տնտեսական յարաբերութիւններով, քան թէ այդպիսի կամ նման փաստերը, որոնք (դա չէ կարելի ուրանալ) տեղի են ունենում շատ ամուսնութիւնների մէջ:

Բուրժուա հասարակութիւնը միջոց չը գիտէ և չէ կարող ունենալ իրերի այդպիսի դրութեանն արգելք լինելու համար: Այդ դէպքում էլ բուրժուական իմաստութեան ամենամեծ չափը՝ *թողնել որ կատարեն* է:

Սոցիալական հասարակութեան մէջ ամուսնութիւնն ամենամաքուր յարաբերութիւնն է, որը հաստատւում է միայն փոխադարձ հակման հիման վրայ. դա հաւասար իրաւունք ունեցող այն մարդկանց յարաբերութիւնն է, որոնք դաստիարակւած են միմեանց յարգելու ուղղութեամբ: Այդպիսի ամուսնութիւնն անհամեմատ աւելի բարոյական հիմք ունի, քան թէ այժմեան ամուսնութիւնների մեծ մասը, քանի որ նրա մէջ մտնում են երկու կողմերը միմեանց պատկանելու դիտաւորութեամբ: Սոցիալական հասարակութեան մէջ չեն կարող լինել,—ինչպէս որ վերագրում են սոցիալիզմին նրա *չարամիտ եւ անխոհեմ* հակառակորդները—այսպէս կոչւած «կանանց ընդհանուրին պատկանելու» դրութիւն, որի անունն անգամ ցոյց է տալիս *կնոջ ամօթալի ստորացումը*. սակայն այդպիսի դրութիւն այժմ գոյութիւն ունի մի քանի դասակարգերի համար: Ընդհակառակն, աւելի մեծ իրաւունքով, ինչպէս որ դա հեշտ ապացուցւում է, այժմեան ստիպողական ամուսնութիւնը կարելի է անւանել *անբարոյական* յարաբերութիւն: Ինչքան աննշան է այն ամուսնութիւնների թիւը, որոնց հաստատելու ժամանակ, ներկայումս, հաշւի են առնւում կարողութիւնն ու դասակարգը: Ինչքան բազմաթիւ են այն դէպքերը, երբ կինն ամուսնանում է ոչ թէ սիրոյ պատճառով, այլ որովհետև կենսական պայմանները ստիպում են նրան մտնելու ամուսնութեան մէջ մի *աղքատախնամ տուն*: Ինչպէ՞ս յաճախադէպ են այնպիսի ամուսնութիւնները, որոնց մէջ թագաւորում է այնպէս մեծ տարաձայնութիւն, որ բանը հասնում է մինչև ապահարզանի, որքան էլ դա անբարեյաջող լինէր կնոջ համար:

Աւելի ևս յաճախադէպ են այն ամուսնութիւնները, որոնց մէջ երկու կողմերն էլ համաձայնւում են բանը չը հասցնելու մինչև «հրապարակային սկանդալի», ի նկատի ունենալով այլ և այլ գործնական շահեր:

Եւ, վերջապէս, ինչքա՞ն են լինում այնպիսի ամուսնութիւններ, որոնց մէջ թագաւորում են եթէ ոչ վէճերն ու խռովութիւնները, այլ գոնէ սառն, սովորական կեանքը «*մէկ մէկու կողքի*», որի հետ հաշտւում են, որովհետև այլ կերպ չէ կարելի: Ընտանեկան կեանքի մի լաւ ճանաչողը կարող է այդ բանը հերքել: Եւ այնու ամենայնիւ դեռ գտնւում են մարդիկ, որոնք պնդում են թէ ամուսնութեան այժմեան ձևը մի ամենալաւ և նպատակայարմար «*ատբաստ*» հաստատում է: Գերմանիայում 1873 թւին պրուսիայի ութ դատարաններում այն դատապարտաւոր ամուսինների թիւը, որոնց գործերը հասել էին մինչև քահանային, հաւասարւում էր 7325-ի, որոնցից 2829-ը հաշտւեցան, շնորհիւ քահանայի «վարդապետական խրատի» 1377-ը մնացին անհաշտ, իսկ 1119 գործեր չէին հասել մինչև վերջ:

Այդ թւերը վերաբերում են միայն մի տարւան և միայն բողոքական ժողովրդին, քանոր կաթոլիկ եկեղեցին, որը բռնում է ժողովրդի ամբողջ մի երրորդ մասը, խստօրէն մերժում է ապահարզանը և յամառ կերպով պահանջում է պահպանել արդէն մի անգամ կապւած ամուսնութիւնը: Բացի դրանից ոչ ոք չի հաւատալ, որ քահանայի ձեռքով հաշտւած ամուսիններն իսկապէս հաշտւել են: Վերոյիշեալ տարում տարաձայնութիւնները կրկնւել էին 463 դէպքերում, որոնցից 267-ը այսինքն աւելի քան 4/7-ը, ամուսինները մնացել էին անհաշտ և միւս 3377-ի նման, անցել էին դէպի ապահարզանի ճանապարհը: Դա ցոյց է տալիս այժմեան ամուսնութեան բարոյականութիւնը, իսկ քանի հազարաւորներն են խոյս տալիս այդ վերջին քայլից:

(կը շարունակւի)

գարձել են լոկ ծեսակատար ատրիճանաւորներ և նրանց հոգևորական լինելու միակ նշանը մնացել է նրանց հագուստը և գլխատը- գործ չըկայ. Աւետարանի գործը մեռած է: Վանքերը իրենց դերը կատարել, պրծել են, այժմ նրանց համար այլ նպատակայարմար կարգադրութիւն պիտի լինի: Վանականութիւնն անդարձ մեռած է,այլևս վերանորոգել չի լինիլ:

Պէտք է դառնանք առաքելական, չորրորդ դարու լուսաւորչական մաքրութեան, վասն զի քրիստոնէութեան գլխաւոր յատկանիշն է պարզութիւն, որ վայել է ճշմարտութեան և լոյսին: Պէտք է վերացնել կուսակրօնութիւնը, որ այժմ խայտառակ անախրօնիզմ է, գայթակղութիւն, խղճահարութիւն և վարքուբարքի ապականութիւն ժողովրդի համար: Պէտք է վերջացնել այրի քահանաների ամուրի մնալը, որպէս մեծ չարիք և կուսակրօնութեան պէս բնական օրէնքին հակառակ և քրիստոնէութիւնն այլանդակող. քրիստոնէութիւնը ու հակառակ չէ բնական, աստւածաստեղծ գործերին և օրէնքներին: Պէտք է պըտել, սրբագրել ծիսակատարութեան մաշտոցը և ժամատօնութիւնը:Պէտք է Աւետարանի յարատև քարոզչութիւնը եկեղեցու, հոգևորականութեան գոյութեան միակ բացարձակ պայմանը դաձնել: Եպիսկոպոս, կաթողիկոս և կամ վարդապետ անելու համար պէտք չեն ծէսեր, կրկնակի ձեռնադրութիւններ, այլ այդ պաշտօնների համար արդէն ձեռնադրւած և գործ կատարող քահանաներից կընտրւին արժանաւորները ուսումով, վարքով և գործունէութեամբ. Նրանք բաւական է, որ ընտրւին, առանց վկայագիր. մեռոնը ծէս է և աւանդութիւն. նա էական չէ. ինչպէս և ամեն ծէս, տարազ, հագուստ, գլխատ, դրանցով ոչ ոք եպիսկոպոս չի դառնալ երբէք, եթէ չունի ուսում, վարք, գործունէութիւն: Ծէսերի չափազանցութիւնից և իչարն գործ գնելուց հոգին, գործը մեռնում է և յառաջ է գալիս խարերայութիւն ու նախապաշարմունքների թանձր խաւար իր գառ և աւերիչ հետևանքներով: Պէտք է վերջացնել հոգևորականներին զապելը զանազան բռնադատական պաշտօնական հագուստի ձևերով և վայելուչ ներկայացումներ, կոնցերտներ յաճախելու արգելքները: Պատկերների երկրպագութիւնը, օծելը, նրանց մոմ վառելը պիտի վերջացնել, պատկերները կարող են լինել առանց շրջանակի և մետաղի զարդարանքի, որպէս տաճարների քրիստոնէական-պատմական-կրթիչ- գեղարւեստական զարդեր և՛ դրանք ամենևին պաշտաւօրական չեն. գիտակցութիւն քրիստոնէական գիտակցութիւն պէտք է մացնել, եկեղեցու մէջ և մաքրել նրան աւելորդ, անօգուտ բթացնող ծէսերից . . . .

Պահանջ կայ պասերի կանոնները վերաքննել, պակի խորհուրդը միշտ կատարելու խնդիրը գնել, վերացնել «հայր ուրդ» խօսքը. վերցնել վեղարը, որ ժողովուրդը փուշտի ու պոպոզ է կոչում և որ իր նախնական միտքն արդէն կորցրել է: Եպիսկոպոսը ընտրւի արժանաւոր ծառայած քահանաներից, անպատճառ նա լինի բնտանիքաւոր, որովհետև միայն կարող է լինել հոգով, մարմնով առողջ, խղճմտանքով, կարեկից, անոսխ, ողորմած:

Ազգային-եկեղեցական միակ բարձրագոյն դպրոցի՝ ճեմարանի վրայ՝ խստիւ ուշադրութիւն պիտի դարձնել և արմատական կերպով բարեփոխել նրան:

Անպատճառ պէտք է սուրբ գիրքը ամբողջ, մաս-մաս, գրաբար և աշխարհաբար տպել, տարածել և սովրեցնել, վարժեցնել աշակերտներին և ժողովրդին միշտ և յարատև կարդալ յաւիտենական, գրքերի գիրքը-Աստուածաշունչը, հին և նոր կտակարանը, որ լուսաւոր և յառաջադէմ կեանքի մեծ և հզօր աղբիւրն է:

Ն. վ. Տ.-Աւետիքեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ ՀԱՈՒՊՏՄԱՆԻ

«ՋՈՒԼՀԱԿՆԵՐԻ»-ի

հայերէն թարգմանութիւնը, 106 երես, գինը 40 կ. : Դիմել՝ Մ'ոսկւա, Ժամհարեան եղբայրների բանկային տուն, Սարգիսին Արտեմեանին: 2—5

Տարագի №—5 ու տպագրւած կիսալուսնի ներքոյ հետաքրքրաշարժ յօդւածը Բագուեցից է թարգմանւած և խրոզութիւն է:

ԱՐՇԱԼՈՅՍ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿ. ՔԱՂԱՔ. ՏՆՏԵՍԱԿԱՆ.

Օրաթերթ

24 պատկերազարդ յաւելուածներով, որ կանոնաւորապէս լոյս կը տեսնեն ամիսը երկու անգամ:

Բաժանորդագր. պայմանները

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Տարեկան	7 ռ. — —
Վեց ամիսը	4 » — —
Երեք ամիսը	2 » 25 կ.
Մի ամիսը	— — 75 կ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

32 ֆր.	28 մարկ.	28 շիլ.	7 դոլ.
20 »	16 »	16 »	4 »
12 »	10 »	10 »	2 »
4 »	3 »	3 »	1 »

Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս: Յունւար. 4 ռ. և յունիս 3 ռ. Աոպառիկ բաժանորդագրութիւն չի ընդունւում.

Կարելի է գրւել խմբագրատանը (Թիֆլիս, Գանովսկայա № 11) կամ գործակալների մօտ:

Խմբագիր հրատարակիչ՝
Գ. Մելիք-Կարագեօզեանց

ԸՆԿԵՐ

Ձարաթաթ՚րթի տարեկան բաժանորդագինն է 3 ռուբլի:

հատը 6 կոպ.

Բաժանորդ կարել է գրւել խմբագրատանը ու՝ գործակալների մօտ: Խմբագրատունը գտնւում է Գոլովինսկի պրօսպեկտի վրայ, Արտիստիկական ընկերութեան թատրոնի շարքում, Արխանգի տանը (մուտքը հարցնել նոյն տեղի գրախանութում):

Խմբագիր-հրատարակիչ
Դր. Փիլոս. Սեդրակ Թառայեան

Պրոգիմնազիան աւարտած և հաշւապա-լաւ սովորած, սէմինարիոնի վրայ գրող մի հայ օրիորդ Թիֆլիսում որոնում է պաշտօն վաճառատներում կամ առևտր. գրասենեակում: Հասցէն՝ Օր. Փ. Տարագի խմբագրատուն. 3—1

При каждомъ № „НИВЫ", независимо отъ другихъ приложеній, **подписчики получатъ по одной книгѣ**, а новые подписчики, выписывающіе также (за 1 р. 50 к., съ перес. 2 р.) первые 10 книгъ Салтыкова-Щедрина за 1905 г., получатъ ихъ при первомъ № „Нивы" 1906 г.

ОТКРЫТА ПОДПИСКА на 1906 годъ (37-й годъ изданія) на еженедѣльн. иллюстриров. ЖУРНАЛЪ со многими приложеніями

НИВА

Гг. подписчики „НИВЫ" получатъ въ теченіе 1906 года:

52 №№ художеств.-литературнаго журнала „НИВА", заключающаго въ себѣ романы, повѣсти, разсказы; гравюры, рисунки и иллюстраціи современ. событій.

40 КНИГЪ „Сборника Нивы", отпечатанныхъ четкимъ шрифтомъ, на хорошо глазированной бумагѣ и содержащихъ:

ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ

ОСТАЛЬНЫЯ 30 КНИГЪ М. Е. САЛТЫКОВА-ЩЕДРИНА

(„Сказки", „Мелочи жизни", „Благонамѣренныя рѣчи", „Господа Ташкентцы", „Въ средѣ умѣренности и аккуратности", „Письма къ тетенькѣ" и мн. друг. Войдутъ также не помѣщенныя въ прежнихъ изданіяхъ три сказки и комедія „Смерть Пазухина").
(Цѣна полн. собр. въ отдѣльной продажѣ съ перес. 21 руб.).

ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ

ПЕРВЫЯ 10 КНИГЪ К. М. СТАНЮКОВИЧА

(въ которыя войдутъ „Морскіе разсказы", романы: „Безъ исхода", „Два брата" и рядъ разсказовъ), подъ редакціей и съ біографич. очеркомъ П. В. Быкова.
(Цѣна полн. собр. въ отдѣльной продажѣ съ перес. 21 руб.).

12 КНИГЪ „Ежемѣсячныхъ литературныхъ и популярно-научныхъ Приложеній", содержащихъ романы, повѣсти, разсказы, популярно-научныя и критическія статьи современныхъ авторовъ съ иллюстраціями и отделы библіографіи, смѣси, шахматовъ и шашекъ, задачъ и разныхъ игръ.

12 №№ „Парижскихъ модъ". До 400 столбцовъ текста и 300 модныхъ гравюръ. Съ почтовымъ ящикомъ для отвѣтовъ на разнообразные вопросы подписчиковъ.

12 ЛИСТОВЪ рисунковъ (около 300) для рукодѣльныхъ, выпильныхъ работъ и для выжиганія и до 300 чертежей выкроекъ въ натуральную величину.

1 „СТѢННОЙ КАЛЕНДАРЬ" на 1906 годъ, отпечатанный красками.

ПОДПИСНАЯ ЦѢНА „НИВЫ" со всѣми приложеніями на годъ:

въ С.-Пе-тербургѣ: безъ доставки 6 р. 50 к. съ доставкой 7 р. 50 к. Безъ доставки: 1) въ Москвѣ, въ конторѣ Н. Печковской — 7 р. 25 к.; 2) въ Одессѣ, въ книжн. магаз. „Образованіе" — 7 р. 50 к.	Съ пересылкою во всѣ мѣста Россіи . . . . 8 р. За границу — 12 р.

ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА ПЛАТЕЖА ВЪ 2, 3 и 4 СРОКА.

Новые подписчики, желающіе получить, кромѣ „Нивы" 1906 г. со всѣми ея приложеніями, еще ПЕРВЫЯ 10 книгъ соч. САЛТЫКОВА-ЩЕДРИНА за 1905 г., должны внести одновременно при подпискѣ безъ доставки въ СПБ. — 1 р. 50 к., съ дост. въ СПБ. и съ пересылкой иногороднимъ и за границу 2 руб.

Иллюстрированное объявленіе о подпискѣ высылается безплатно.

Адресъ: С.-Петербургъ, въ Контору журнала „НИВА", улица Гоголя, № 22.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 ГОДЪ

ЗАДУШЕВНОЕ СЛОВО·

XXX ГОДЪ ИЗДАНІЯ

ДВА ЕЖЕНЕДѢЛЬНЫЕ иллюстрированные журнала для дѣтей и юношества, основанные С. М. МАКАРОВОЙ и издаваемые подъ редакціей П. М. ОЛЬХЕНА.

ПОДПИСНОЙ ГОДЪ НАЧАЛСЯ 1-го НОЯБРЯ 1905 г. — ПЕРВЫЕ №№ ВЫСЫЛАЮТСЯ НЕМЕДЛЕННО.

Гг. годовые подписчики журнала „З. Сл." для дѣтей МЛАДШАГО ВОЗРАСТА (отъ 5 до 9 лѣтъ) получатъ 52 №№ и 43 ПРЕМІИ. Въ числѣ послѣднихъ: БОЛЬШУЮ КАРТИНУ въ 24 краски „МОЛОДАЯ БАБУШКА"; 12 ИГРЪ И ЗАНЯТІЙ на большихъ, раскрашенныхъ и черныхъ листахъ; МАЛЕНЬКІЙ РУССКІЙ ИСТОРИКЪ; 6 книгъ „БИБЛІОТЕЧКИ-МАЛЮТКИ" и мн. др.

Гг. годовые подписчики журнала „З. Сл." для дѣтей СТАРШАГО ВОЗРАСТА (отъ 9 до 14 лѣтъ) получатъ 52 №№ и 38 ПРЕМІЙ. Въ числѣ послѣднихъ: богато иллюстриров. „ИСТОРІЮ НАПОЛЕОНА"; 12 иллюстр. кн. СОЧИНЕНІЙ РУССКИХЪ и ИНОСТР. ПИСАТЕЛЕЙ: роск. худож. изд. „ПУШКИНЪ ВЪ ИЛЛЮСТРАЦІЯХЪ"; АЛЬБОМЪ СТИХОТВОР. на 12 иллюстр. отр. писыв. мн. др.

Кромѣ того, при каждомъ изданіи будутъ высылаться: „ПЕДАГОГИЧЕСКАЯ БИБЛІОТЕКА" и „ДѢТСКІЯ МОДЫ".

Подписная цѣна каждаго изданія „Задушевнаго Слова", со всѣми объявленными преміями и приложеніями, съ доставкой и пересылкой на годъ 6 рублей.

Допускается разсрочка на 3 срока: 1) при подпискѣ, 2) къ 1 февраля и 3) къ 1 мая—по 2 р.

Съ требованіями, съ обозначеніемъ изданія (возраста), обращаться: въ контору журнала „ЗАДУШЕВНОЕ СЛОВО", при книжномъ магазинѣ ТОВАРИЩЕСТВА М. О. ВОЛЬФЪ—С.-Петербургъ, Гостиный Дворъ, 18.

НА ГОДЪ — 6 рублей, НА 4 МѢСЯЦА — 2 рубля.

Զգեղ՚մաքուր չափաւոր գներով հիւրանոց Բերլինում

Աւելի քան 60 սենեակ 80 մահճակալ ընտանիքների համար առանձին սալօններ, սեղանատներ: 12—4

ՆՈՐ-ԴԱՐ

Քաղաքական գրական հասարակական ամենօրեայ մեծադիր լրագիր

տարեկան բաժանորդագինը 10 ր. Արտասահման 40 ֆրանկ: (Քաղաքական դարի)

Խմբագիր-հրատարակիչ՝ Սպանդար Սպանդարեան

Մամիկոնեան առիւծը

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Վ. Տէր Եղիշէ:

> «Եւ գնայր զօրավարն հայոց Վահան Մամիկոնեան... յամուր տեղիս սահմանացն Խաղտեաց, ագի առնուլ և հանգչել առ վայր մի·
>
> **Փարպեցի.**

Ա.

Փէտատ լերան լանջի վերայ
Մի ամրոց կար բարձրացած,
Որի ներքև ծովն էր շաչում
Բերնին փրփուր, կատաղած:

Եւ խփում էր ծով անընդհատ
Մշտագալար եզերքին,
Չեմծ, ընկած ափի վերայ
Որոտ հանում զառնազին:

Խոր հառաչով արմըկում էր
Շաչող քամին հարաւի,
Ծովի ափին կանգ առնելով
Լսում էր երգն ամեհի:

Իսկ այն զալար ափի վերայ
Բարձրանում էր ծեր մայրին,
Խրոխտ ու լուռ, կանգնած մենակ
Դիտում հսկայ տարերքին:

Եւ մայիսեան մի չքնաղ օր
Մի ծեր գուսան տխրադին
Նստեց տխուր այն ծառի տակ
Դէմքը դարձրած ամրոցին:

Տանջւած սրտի հառաչանքով
Նա յարդարեց իր քընար
Եւ լուռ զարկեց անուշ լարին
Ցաւած սրտով վշտահար:

Ալիքների որոտի հետ
Մեղմ քընարը հառաչեց
Եւ լարերի քաղցր ձայնին
Անուշ երգը ձայնակցեց.—

«Դո՛ւրս եկ Վահան, դո՛ւրս եկ դիւցազն
Քո անառիկ ամրոցից,
Տես ի՞նչ լուրեր քեզ բերել եմ
Մեր արնաներկ աշխարհից:

«Ես գալիս եմ այն դաշտերից,
Ուր սար ու ձոր թխածաղին
Վկայ եղան կարիչ մարդու
Սրտի վերջին հառաչին:

«Ես անց կացայ հովիտներից.
Կարմիր արիւնով ողողւած,
Տեսայ վարդի թերթը դալուկ
Արեամբ ներկւած ու ցօղւած:

«Ո՜, այն դաշտերում միայն հողմն է
Ո՛ր հառաչում է ուժգին,
Ծմակն է մութ ականջ դնում
Գիշակերի պառանչին:

«Եւ երկնքից շողքը լուսնի
Դալուկ դէմքերն է շոյում
Մեղմիկ քամին դաշտի միջին
Նրանց սև օրն է ողբում:

«Դուրս եկ դիւցա՛զն, դուրս եկ, լսիր –
Խոր են սրտիս վերքերը,
Երգչի սիրտը խիստ է տրխրում
Երբ չեն լսում երգերը»...

Ծեր գուսանը երգը կտրեց
Կտրեց ձայնը բամբիւռի,
Բայց շրխինչով չ՛բացւեցան
Լայն դռները ամրոցի:

Ձատ սպասեց մեր երգիչը
Նայեց ծովին փոթորկած,
Ապա ելաւ. քնարն առաւ
Եւ հեռացաւ վշտացած»...

Բ

Մինչ ծովն ահեղ ափերի մէջ
Մերթ շաչում էր, հառաչում,
Կամ թէ նորից ծափեր տալով՝
Խաղոտ ձայնով շառաչում:

Եւ մինչ հովը զալար հովտում
Ցօղն էր լսում բոյսերից,
Բնած մայրին նոր էր զարթել
Արշալոյսի շողքերից:

Մեծ ծառի տակ նորից նստեց
Այն գուսանը քաղցրաձայն,
Նորից նայեց լուռ ամրոցին
Նորից երգեց բարձրաձայն:—



Մեր անտառները

Վիլհելմ Բ. Կայսր Գերմանիայի

Փետրուարի 12—ին արծաթէ պսակի առիթով Թիֆլիսում գերմ. հիւպատոսարանն ընդունեց պետական և հասարակական գործիչների շնորհաւորութիւնները Վիլհելմ Բ. կայսեր ամուս. 25 ամեակի առիթով։

—«Դուրս եկ, Վահա՜ն, դուրս եկ դիւցազն
Դուրս եկ անեղ ամրոցից.
Խեղճ գուսանիս սիրտն է այրւում
Հայրենիքի ցաւերից։

«Էլ ի՞նչ հանգիստ, էլ ի՞նչ խնդում
Երբ ծեր գուսանն է լալիս,
Լսիր նրան, անյաղթ իշխա՛ն,
Թէ ուսկի՞ց է նա գալիս։

«Աւերակ է հայ աշխարհը.
Չէն աւաններ էլ չկա՛ն,
Քարքանդ երկրի խարոյկների
Ծուխն ու հուրն էլ մարեցան։

«Այն ամայի դաշտերի մէջ
Մարդ արարած էլ չկայ,
Սրգւոր քամին տխուր ձայնով,
Մեր սև օրը լոկ կուլայ։

«Անցած փառքի յիշատակը
Հաւասարւեց հողի հետ,
Բերդ ու ամրոց և սուրբ խորան
Էլ չենք տեսնի այսուհետ։

«Աւեր դարձրեց անգութ ձեռքը
Սիրուն աշխարհն հայրենի,
Եւ կտրիչի ձեռքերն անյաղթ
Փաթթեց շղթան օտարի։

«Էլ չի լսւում զէնքի շաչիւն
Քարանձաւի մութ կերճից,
Չի որոտում հայ ռազմիկը
Սև ժայռերի բարձրունքից։

«Իսկ ծերունի անբաղդ հայը
Սրտում շիրիմն է փորում,
Սրտի վերջին ցաւն ու հառաչ
Աւեր երկրին աւանդում։

«Իսկ դու դարձեալ լուռ ես իշխա՛ն,
Առանձնացած ամրոցում,
Հայրենիքի վիշտն ու արցունք
Քո վեհ սիրտը չեն տանջում»

Գ.

Նորից լռեց ծեր գուսանը
Հոգոց հանեց դառնագին,
Արտասուալից իր աչքերը
Դարձրած հսկայ ամրոցին։

Բայց գոները անեղ բերդի
Չբացւեցան շառաչով,
Հին ամրոցը քուն էր մտել
Քունն էր խորո՜ւնկ, անվրդո՜վ։

Ապա յոգնած այն գուսանը
Մի կողմ դրեց իր քնար,
Աչքը գցած կապոյտ ծովին
Սկսեց նայել միալար։

Հանդարտ հովը ծովի խորքից
Յիշատակներ էր բերում,
Եւ հանգիստը տանջւած սրտի
Նորից յուզում, ու դմկում։

Իսկ ծփանքներ իրար խառնւած
Մեղմիկ ձայնով դիւթական,
Խոր ու հանդարտ հառաչում էր
Անեղ ծովը Պոնտական։

Եւ ծերունին լուռ ու երկար
Ականջ դրեց այդ ձայնին,
Որ նման էր իր յուսահատ
Այրւած սրտի յոյզերին։

Շատ տարիներ նրա սիրտն էլ
Այդպէս մեղմ էր ազմկում,



Մարտին Լութեր

բողոքական և հիմնադիր աւետարանական եկեղեցւոյ

Աւգուստինա-Վիկտորիա

Կայսրուհի Գերմանիայի։

Վիլհէլմ Բ. կայսրն ընդունելով իր ամուսնութեան 25-ամեակի առիթով, շնորհաւորութիւններ. ճառախօսեց՝ «Ցամաքի և ծովի վրայ պատերազմական ույժը իմ առաջին և վերջին իղձերը են։ Իսկ Կայսերուհին միշտ լի է ձգտումներով թեթևացնելու վիշտը, կարիքն ու տառապանքը։

Նրա վիշտը խոր էր, անծայր,
Ինչպէս ծփանքն այն անհուն։

Եւ այս անգամ ծեր գուսանը
Ուղեց հանգչիլ ծառի տակ
Յոգնած մարմնով տարածւեցաւ
Երկնքի տակ կապուտակ։

Զեփիւռն էր լոկ, որ անցնում էր
Նրա յոգնած ճակատից,
Ծերուկ ծառն էր օրօր երգում
Օրօր երգում թախծալից։

Իսկ մեղմ ծովը բիւր ծփանքով
Անվերջ աղմուկ էր հանում,
Կարծես ծերուկ հայ գուսանի
Անուշ երգերն էր կրկնում։

Խորհրդաւոր լռութեան մէջ
Խաղաղ քնեց ծերունին,
Խոպոպները ուսին թափած
Քնարն ընկած իր կրծքին։

(Կը շարունակւի)

Պետ. Մոձոռեանց



Առջաձոր, Խաչէն գաւառում։

Եկեղեցում ձեռագիր աւետարանից երեւում է, որ եկեղեցին գիւղում կառուցած է Աղւանից Պետրոս կաթողիկոսի հայրապետութեան ժամանակ հայոց Ռ. Ճ. Ծ. Է. թուականին։ Գանձասարից մի ժամեայ ճանապարհ, շրջապատուած անտառով և անմատչելի ժայռերով։

«Արշալոյսի» գրաշարները յայտնում են տպագրական գործի աշխատաւորներին, որ ուրբաթ փետրուարի 17—ին, երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանուեց իրանց անմոռանալի ընկեր

Հայրապետ Բաբուրեանցը

Թաղումը տեղի կունենայ, այսօր կիրակի, փետրուարի 19—ին, յուղարկաւորութիւնը առաւօտեան ժամը 10—ից, Դոնդուկովյա փողոց № 17 Զգրաշէնի Ս. Աւետեանց եկեղեցին, իսկ այնտեղից Վերայի գերեզմանատուն:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Զըգիտենք ուրիշներն ինչպէս, բայց մենք բոլոր տօների մէջ առանձին սիրով ենք հանդիպում Վարդանանց օրին: Մի անարդար վերաբերմունք չէ այդ: Կայ որոշ պատճառ. այդ այն է, որ Վարդանանց գործը մեր պատմական անցեալի բացառիկ երեւոյթներից մէկն է. նա համահայկական գործունէութեան դրոշմ ունի իր վրայ, ուստի և նրա զօրեղ հըմայքը հասկանալի է և բնական: Բոլոր պատմագիրները միահամուռ համաձայնութեամբ պնդում են, որ Վարդանանց պատերազմը հայութեան ամբողջ կեանքում մի չըկրկնուած, եզական և մի-միակ պատերազմ է: Մենք թոյլ ենք տալիս մեզ առարկել այդ կարծիքի դէմ՝ Վարդանանց իմաստը, բովանդակութիւնը մի քանի խօսքով շեշտելուց յետոյ: Վարդանեանների կռիւը ըստ էութեան տանջւող, մաքառող և հալածուած հայի պատմական ճակատագրի բնորոշ խտացումն է ներկայացնում. հայի բողոքն է դա բռնութեան և կաշկանդիչ կապանքների դէմ. այդ բողոքը երէկ չի սկսել, այսօր չի վերջանալու և անհրաժեշտաբէն կրկնուելու է ապագայում: Եթէ այդպէս է, ապա թոյլ տուէք ենթադրել, որ հայ ժողովրդի կեանքը կազմում է իրենից մի մշտատեւ Վարդանանց պատերազմ, որ անթիւ, անհամար ռազմադաշտեր ունի. ու ահա դրանցից մէկն է միայն Աւարայրի ճակատամարտը, որի մասին խօսք է լինելու այս էջերում: Աւարայրի կռիւը՝ մի նշանակալից պատմական երեւոյթ լինելով, ունի դրդիչ որոշ պատճառներ, որոնց վերածել կարելի է երկուսի.—տնտեսական և իրաւական: Բացատրենք:

Պարսկաստանը՝ ամենատիպիկ բռնապետութիւն անցեալում՝ հայութիւնը ոչնչացնելու, կլանելու դիտաւորութեամբ, մտադրել էր նրա տնտեսական—նիւթական ոյժը հիմնովին քայքայել՝ բարոյական նուաճման, ստրկացման համար ճանապարհ հարթելու նպատակով, ի հարկէ: Եւ ահա նա որոշ հետեւողականութեամբ, սիստեմատիկաբար հայ ժողովրդի կենսական աղբիւրներն է աշխատում ցամաքեցնել. Հայաստան է ուղարկում անխիղճ, անողորմ ստրապներ, որոնք խիստ դաժան ծրագրով հարկերն են ծանրացնում անվերջօրէն, ձգտում են հայ ժողովուրդը տնտեսապէս իսպառ աղքատացնել, խեղճացնել անհնարին չափերով: Հայութիւնը բաց աչքով տեսնում էր, թէ ինչպէս ինքը դատապարտուած է յամրաքայլ կերպով, դանդաղօրէն արիւնաքամ լինելու սարսափելի վտանգին:

Բայց դրանով ստրապները դեռ չէին բաւականանում: Բարձրագոյն կառավարութիւնից հրահանգներ ստանալով՝ ձեռնամուխ են լինում հայի իրաւունքի, բարոյական շահերի շրջանը: Եւ ահա յօրինւում է՝ սկզբնապէս խուլ, անշշուկ, բայց յետոյ բացարձակ մի հալածանք, մի մարտ այն բոլորի դէմ, ինչ որ հայկական է: Պարսկական արքունիքը հրաման է արձակում՝ փակել հայ դպրոցները, վռնդել այդ նուիրական հաստատութիւններից հայազգի ուսուցիչներին՝ փոխանակելով նրանց պարսիկներով,—փակել եկեղեցիները և հիմնել տգիտութիւն և խաւար տարածող ատրուշաններ, որոնց նման հիմնարկութիւններին հայերը վաղուց հետէ, դարեր առաջ էին հրաժեշտ տուել, — հրամայում է գոցել հայ բերանը հայերէն չըխօսելու համար և բանալ մօգերինը՝ պարսկական ոգով դաստիարակելու միտումով…

Այս և սրա նման անսիրտ պահանջներ էին անում մեզանից:

Հայութիւնը չէր կարող հանդուրժել այդ բոլորին, նրա համբերութեան բաժակը լցուեց. ու պայքարի կոչնակը զարկեց ի լուր պարսից կառավարութեան:

Հրապարակ իջան մարտիկները: Եւ զարմանալի տեսարան: Ամեն մի դասակարգ, իւրաքանչիւր մի սեռ և հասակ այդտեղ էր բերել իր ներկայացուցիչներին: Զինուորուել էին և՛ հոգեւորականներ, և՛ իշխաններ, և՛ շինականներ, և՛ կանայք, և՛ երեխաներ: Ի՞նչ էր պատահել. այդ ինչպէս է, որ տարբեր շահերի, հակամարտ յարաբերութիւնների կողմնակից տարրերը մի դրօշակի տակ, մի զօրավարի հրամանատարութեամբ և միակերպ ոգեւորութեամբ լցուած՝ թիկունք—թիկունքի, ձեռք—ձեռքի տուած՝ ելել էին ասպարէզ դուրս բերելու և՛ կեանք, և՛ երջանկութիւն, և հանգիստ: Ըստ երեւոյթին ապշելի, բայց իրօք մի բնական մոմենտ էր այդ՝ ահա թէ ինչու. երբ որ անիրաւութիւնը բիրտ, ջախջախիչ իր բռունցքն է բարձրացնում իրաւունքի դէմ, սպառնալով ոչնչացնում ամենքի բարեկեցիկ վիճակին, մարդկային արժանաւորութեան և պատուին, այն ժամանակ իրաւունքի ներկայացուցիչները առանց դասակարգի, սեռի և հասակի խտրութեան՝ առժամապէս պայմանաւորւելով և հակընթաց շահերի կռիւը դադարեցնելով՝ ռազմադաշտ են ելնում պաշտպանելու մարդկային գերագոյն հասկացողութիւնը — ազատութիւն և բարոյական անկախութիւն:

Բուռն,կրակոտ և ուժեղ եղաւ հայերի հակահարուածը: Եւ դա հասկանալի է, եթէ նկատի առնենք, որ հայերը դեռ նոր էին մկրտել քաղաքակրթութեան աւազանում, տակաւին նոր էր նրանց կուլտուրական ժառանգութեան ստանձնումը, որպէս զի կարելի լինէր մեզ, թոյլ և անտարբեր վերաբերուել դրան: Նոր էր ստեղծել ժողովուրդը քաղաքակրթելու միակ նշանակալից միջոցը — գիրն ու գրականութիւնը: Այնպէս որ հայերը դեռ ևս կուլտուրական պատանեկութեան շրջանն էին ապրում, իսկ իւրաքանչիւր քաղաքակրթական պատանեկութիւն միշտ և ամեն տեղ եղել է իր գաղափարական շահերին գիտակ, անչափ խիզախ և ոգեւորուած չշմեւելու աստիճան:

Բարձր էր ոգեւորութիւնը, նոյնքան բարձր էր և պաշտպանելիք գաղափարը: Խղճի, համոզմունքի և ներքին աշխարհի բռնաբարութեան դէմ ըմբոստացող մի համարձակ ոգու հոգեմայլ թռիչքն էր այդ: Մի թռիչք, որ պատրաստուած էր, վարժ և անխախտ: Դպրոցական, դաստիարակչական մի ամբողջ սիստեմ երկար տարիներ նպատակ էր դրել իրեն հայի ներշնչելու իր ազգայնութեան փըրկարար գիտակցութիւնը, համոզելու նրան, որ երջանկութիւնը կուլտուրականութեան մէջ է և ամենամեծ առաքինութիւնը խաւարի, տգիտութեան և բռնապետութեան դէմ յայտարարուած սրբազան կռիւն է:

Բայց ահա բոլորովին անպատկառ յաւակնոտութեամբ պարսկական հրէշաւոր ռեժիմը իր ճնշիչ, հոգեսպառ պահանջքն է դնում հայութեան ինքնագիտակցութեան առաջ, —Զգի՛ր քո ամբողջ լուսաւորութիւնը, կրկին ուղեգրէ՛ր խաւարին և մոռացիր դէպի վեր, դէպի առաջ ձգտելու անձնդ. իրաւունքիդ ձայնը խեղդի՛ր կրծքիդ տակ չարտայայտելու պայմանով…

Հայութիւնը չէր կարող համակերպուել այդ անիրաւ պահանջին. նա կանգնած էր բարձր լեռան երկնահուպ կատարին և ահա նրան հրաւիրում են դէպի խոր, դէպի ճախճախուտների հեղձուկ, դարշ մթնոլորտը: Ու հայ ժողովուրդը պատմութեան մէջ հազուագիւտ մի վստահութեամբ դուրս եկաւ Աւարայրի ճակատամարտի բեմը ցուցնելու համար, թէ կամայականութեան, քմահաճոյքի դէմ պայքարելու պարտքը գիտակցում է:

Նա մենակ էր, խսպառ մենակ: Իր կուլտուրական գաղափարակից Եւրոպայից հայութիւնը օգնութեան խրախոյս և ոյժ էր խնդրել. բայց Եւրոպան, աւելի ճիշտ նրա պաշտօնական բերանը՝ հայութեան դարերի ակնկալութեանը բանի տեղ չըդնող այդ կեղծ և խարդախ բարեկամը, երես թեքեց հայ դատի պաշտպանութեան գործից ու հայ ժողովուրդը փիզիկապէս ջախջախուեց հինգ անգամ աւելի կռւողներ ունեցող պարսկական զօրքից: Սակայն պարսիկները բառի բուն իմաստով չը յաղթեցին հային, և չէին էլ կարող. ահա թէ ինչու.—Լիակատար յաղթութիւնն այն է, որ յաղթողը յաղթուածին՝ բանի թէ մեղմիւ՝ ընդունել է տալիս իր պահանջը, անց է կացնում իր ցանկացածը, առաջադրածը: Պարսից կառավարութիւնն ուզում էր հայ ժողովրդը սպանել ազգայնապէս պարսկացնել: Եւ դրա համար տեղի ունեցաւ Վարդանանց պատերազմը. բայց վերջինըս ո՞չ այլ ինչ էր, եթէ ոչ հայերի ազգայնական գիտակցութեան աւելի որոշապէս շեշտումն և պարսկական բռնակալութեան խուսափումն իր անհեթեթ ծրագրից: Եւ դա բնական է. այդպէս էլ պիտի լինէր, եթէ նկատի առնենք այն հասարակական-քաղաքական պայմանները, որոնց մէջ ապրում էին պարսիկները. հայութիւնը բարձր էր կանգնած իր կեանքով դրանցից:

Այդպէս է եղել և այսպէս էլ կը լինի. խաւարը չի կարող երբէք վերջնականապէս յաղթել լոյսին: Եւ այս ճշմարտութիւնը՝ ամեն տեղ և ամեն ժամանակ շեշտուած՝ կրկնւեց և մեր պատմութեան մէջ, յատկապէս Վարդանանց շրջանում, որ մեր պատմական հերոսների ծննդարանն է հանդիսանում. հերոսներ, որոնց մէջ բարձրագլուխ կանգնած է Մամիկոնեան գիւցազնը, անձնուրաց հերոս Վարդանը:

Պատմութիւնը ընդհանրապէս երկու տիպի հերոսներ է ծնել.—աւերիչ և ստեղծագործող: Վարդանը՝ գլուխներից և դիակներից սարեր կանգնեցնող, արեան գետերի և արցունքների ծովի մէջ լողացող արիւնոտ «հերոսներից» չէ, որոնց վրայ անաչառ սերունդները կանգնեցնում են նզովքի և անէծքների արձանը, այլ այն անզուգական, ալտրուիստ և անձնազոհ հերոսներից, որոնցով պարծենալ կարող են երախտագէտ սերունդները՝ դարերի հնութիւնը միշտ թարմացնելով անմոռանալի յիշողութեամբ: Վարդանների յիշատակի վրայ է խարսխւում ազգերի փառքի կոթողները, միշտ վսեմ, միշտ ոգեւորիչ և յաւիտեան պանծալի…

Ա. Տ.

ԼԵԶՈՒ

Եւրոպական առածն ասում է՝ ով քանի լեզու գիտէ, այնքան էլ մարդ է: Քաղաքակրթական յառաջադիմութեան համար անպայման անհրաժեշտ է տիրապետել որ և է բարձր լուսաւոր ազգի լեզուն. այդպիսի մի լեզու քաջ իմանալը որչափ կարեւոր է գիտնականի, վաճառականի, քաղաքագէտի համար. որչափ կենսական-հարկաւորական է պետական լեզուն վարժ իմանալ անհատական և հասարակական շահերի համար. տիրող լեզուն չիմանալը, արհամարհելը յաւուկ—որոշ պարագաներում՝ յանցանք է սեպհական օգտի և շահերի վերաբերմամբ:

Հայերը ի բնէ յայտնի են իրենց սուր ընդունակութիւնով շատ օտար լեզուներ սովորելու. դրան շատ օգնում է այն հանգամանքը, որ հայ լեզւի մէջ կայ աշխարհիս բոլոր լեզուների տառերը—ձայնահնչիւնները, մեր 36 գրի շնորհիւ կարողանում ենք այնպէս տիրապետել մի լեզու, որ զարմացնում է ազգերին: Վենետիկի Մխիթարեան վանքի փոքրիկ միաբանութիւնը հազարաւոր, զանազան ազգերի այցելուների իւրաքանչիւրի հետ խօսում են իր լեզւով, վերջապէս աշխարհիս երեսին հայ չը կայ՝ որ միերկրորդ լեզու էլ չիմանայ, մանաւանդ որ հայն ամեն օտարազգի դրացի ունի:

Ռուսաստան, Տաճկաստան, Պարսկաստան հայն անհրաժեշտաբար պիտի սովորի պետական լեզուն, այդ երեքից՝ ռուսերէնը բացի քաղաքական կարեւորութիւնից՝ նաև լուսաւորութեան միջոց է մեզ համար: Տաճկաստան չի կարելի երեւակայել մի հասարակական մարդ հայ—առաջնորդ, յաջորդ, խմբագիր, ուսուցիչ, քահանայ և այլն, որ կարդին տաճկերէն չիմանայ: Բայց ընդհակառակն մենք տեսնում ենք Անդրկովկասում դեռ մինչև հիմայ էլ առաջնորդներ, գործակալներ, շատ ուսուցիչներ,որ պետական լեզուն չեն իմանում,որից է հարկէ մեր ազգային շահերը կարող են շատ վնասուել: Այս այնպիսի մի կարեւոր և աչքի ընկնող խնդիր է, որ դրա անհրաժեշտութիւնը փաստարանելու հարկ չըկայ: Այս յիշենք, որ ռուսահայ տասնուվեց առաջնորդ, յաջորդ, վեղարաւորներից միայն երեքը գիտեն ռուսերէն խօսել առանց թարգմանի… Սեանայ վանքում 60 հոգի են, մի հատ ռուսերէն իմացող չըկայ, Ճեմարանի, Երեւանի, Շուշւայ թեմական դպրոցներն աւարտողները ռուսերէն խօսել չըգիտեն, բայց որանք դառնում են քահանայ, յաջորդ, առաջնորդ….

Սա մեծ պակասութիւն և մեծ վնաս է մեզ համար, ուստի շատ լաւ կըլինէր Մոսկուայի և Պետերբուրգի հայոց հարուստ եկեղեցիների հաշւով մի պանսիոն պահէր մայրաքաղաքում միամեայ կուրսով, ուր գործնական կերպով ուսումնաւարտ ուսանողներ, սարկաւագներ, ուսուցիչներ, վարդապետներ, քահանաներ վարժէին պետական լեզւի մէջ և ի հարկէ կըզարգանային, կըկրթւէին, կաչքաբացւէին էլ ամեն կերպ, մի տարի կենալով մայրաքաղաքում: Ամեն տարի քսան հոգի անվճար

պահելով այդ պանսիոնում՝ մեր հասարակական գլխաւոր գործիչների այդ աչքի ընկնող, անպատշաճ թերութեանը կարելի էր բաւական դարման տանել: Հայի համար լեզու սովորելը խաղալիք է, միայն ի հարկէ դրա համար հարկաւոր է յարմարաւոր միջավայր:

Ն. Վ. Տ. Ա-եան:

ՄՈՒՂԱՆ.

Այդ խորհրդաւոր, անծայրածիր տափաստանները, դարևոր լեռնադիական ներհից յետոյ՝ կենդանանալու, կամ ինչպէս ներկայիս յարմար է ասել, վերածնելու դանդաղ նշաններ են ցոյց տալիս: Զարաբասարի Ազդում աւագակաբարոյ աւանից լայն ու հաստատուն խճուղի է շինւում Մուղանի վերին ծայրով մինչև նրա վերջը, որտեղ է ռուսաց սահմանի հռչակաւոր Խուդափերին հնադարեան կամուրջը, որ մի զարմանալի կերտուածք է համարեա մի ամբողջ տխանական դանդուած, որի բոլոր սարերը հաստատուած են մեծ և սնուանի գետի միջից եկած ժայռերի վրայ: Մուղանի հարաւային ծայրով հոսում է Արաքսը, որի ափերին բուսնում է խիտ, անտառի պէս, չատ բարձր ու դէլ եղեգնուտ, որ կոչւում է չամբ, դառաւում այդ եղեգները չատ գործածական են խրճիթների, և հիւղերի համար:

Եղեգնուտ չամբի մէջ դտնւում են նշանաւոր թէտվ վայրի խոզեր, որոնց որսը եկամուտի աղբիւր է տեղացիների համար: Նոր խճուղու երկարութեամբ բաւական եռանդագին կեանք է սկսել մի քանի տարիներից իվեր. հիմնւում են այդ տեղ Ռուսաստանի ներքին նահանգների գաղթականների գիւղերի չարքեր, որ քիչ կանգ առաւ Փաստ ճակատագրական պատերազմի պատճառով: Գաղթականներն անչափ գոհ են և ուրախ իրենց նոր տեղերից, այստեղի հողը ոսկի է, ասում են նրանք, ձմեռ չը կայ, առանց ջրելու բուսնում են հարաւային ռուսիոյ սեխ, ձմերուկ, և այլն. հրաշալի հացհատիկներ են բսնում: Եկւորների համար լեռների կողմից դուրս են բերուած քանքաններով ընտիր և առատ ջրեր, շինուած է ճերմակ քարից կոփածոյ փառաւոր եկեղեցի, հիւանդանոց, դպրոց. կայ ուսուցիչ և ճեմարանական քահանայ: Կլիման որովհետև ամենևին ճահճային նշոյլ չունի, այլ չոր տաք է, ուստի ամառը ոչ վնասակար է և ոչ անտանելի: Շինուած են սիրուն, դողարիկ տներ, կանոնաւոր փողոցներով, բոլորը ծառադարդ: Օրթոդոքս են, Նորեկները, որոնք մտերմանում են հայերի հետ, միասին վարուցանք և հրախաշ՝ ընկերովի, գործեր են անում, Նոր գիւղերի խանութպանները հայեր են, բոլոր ռուսները զինուած են, թէպէտ խմիչք գործ են ածում, բայց առայժմ չափազանցութիւն դեռ չի նկատւում, խնլացի և աշխատասէր մարդկանց տպաւորութիւն են գործում:

Մի հայ պիոներ եւ փորձեց իր բախտը այս զքանչելի բերրի տափաստաններում. Նա պաշտօնաթող, պենսիոներ ծառայող էր, լաւ հողեր էր ձեռք բերել այստեղ, սկսել էր շինել քարւանսարայ, տներ, խանութներ, գիւղատնտեսութիւն բայց աւաղ, եկան թրքական աղետներ, Նա ամեն բան ձգեց ռուսներին, ինքը փախաւ Շուշի: Այս ռուս գիւղերի շարքում առ այժմ նշանաւոր է ամենից հին Ղարաբուլաղ՝ 100 տուն ռուս, 200 տուն թուրք, 25 տուն հայ, պօստ-հեռագրատուն, դեղատուն, հիւանդանոց 4 անմճակալով, երկդասեան դպրոց, սահմանի պահակներ, հիւրանոց, քարւանսարաներ, 400 խանութ, լաւ տներ: Ամեն չորեք չաբթի բազմամբոխ վաճառք բազար է լինում, մի օրում տասնեակ հազարների շրջանառութիւն, ծրագրուած է չուտով այս աւանը քաղաք դարձնել, առաջինը Մուղանում: Խճուղին այստեղից մինչև պարսից սահմանը բոլորովին պատրաստ է. հայերի ուշադրութիւնից թող չը խուսափէ Մուղանը:

Յ.

ՇԱԴԿԱԳ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ

Փետրուարի 2-ին և 14-ին Տարազի խմբագրատանը կայացան ընդհ. ժողովներ հիմնելու Թիֆլիսում, համաձայն մեր հրաւէրի, գրագէտների Միութիւն *առանց խտրութեան ուղղութիւնների և քաղաքական դաւանանքների*: Առաջին ժողովին ներկայ էին 33, իսկ վերջին-25 հոգի: Մինչև ընդհ. ժողովները, մեծմասն Տարազի միջոցով հրաւէրին, եկել էին մի խումբ մասնագէտներ և հրապարակախօսներ խորհրդակցութեանը մասնակցելու և Միութեան Նպատակի թէզիսներն որոշելու: Այս ընկ. խորհրդակցութեան նախագահ էր ընտրուած գրական եռանդուն գործիչ, Լումայ ամսագրի խմբագիր հ. տ. Գիւտ-աւագ-քահանայ Աղանեանց, և քարտուղար պ. Յարութիւն Թումանեանց: Փետր. 2-ի ընդհ. ժողովը սրանց ընտրեց նոյն պաշտօնների համար, հրաւիրելով ղեկավարել ժողովը. շարունակութիւնն էր անցեալ հինգշաբթի, փետրուարի 14-ին, որ ադմկալից էր:

Ահա այս մասին է և մեր դիտողութիւնները:

Կազմւում է Մասնագէտների Միութիւն, Նպատակը-*համերաշխութիւն առանց ուղղութիւնների և քաղաքական դաւանանքների խտրութեան կազմել մի ընտանիք*,-և գործի հիմքը դեռ չը դրած, համակրելով գաղափարին. չը գալ, չը մասնակցել նրա իրագործման, որովհետև հրաւէրի տակ ստորագրել է Տէր-Գիւտը, որովհետև ընդհ. ժողովների նախագահը Տէր-Գիւտն է, այդ մեզ հասկանալի չէ: Մտքերի այս ինչ չփոթութիւն է, նեղսրտութեան այս ինչ փաստեր են: Եւ այս այն հանգամանքում, երբ գրագէտները պիտի կազմեն մի ընտանիք: Ուրեմն մի ընտանիքի անդամներ՝ զինւորական, քահանայ, ինժինէր, բնագէտ արտիստ, վաճառական, բոլորն էլ եղբայրներ, երբեք չը՞ պէտք է համարւեն մի օջախ, նստեն մի սեղանի չուրջ և իրանց ընտանիքի, օջախի բարօրութեան, պատւի և բարգաւաճման մասին խօսեն, խորհրդակցեն, որովհետև տարբեր ուղղութեան են պատկանում:

Ընտրուած է մասնաժողով 12 հոգուց Միութեան կանոնադրութիւնը կազմելու համար

Ժամանակագրութիւն

Խուզարկութիւնները Թիֆլիսում և թէ գաւառներում շարունակւում են չատ եռանդով, բանտերը լիքը են կալանաւորներով, որոնք կասկածելի անձնաւորութիւններ են համարւում, կամ զէնքեր են ունեցել: Զինւորական շտաբի չուրջը, Արծրունու քարւանսարան խուզարկեցին նոյնպէս, սակայն ոչինչ չը գտնեց:

—Գեներալ նահանգապետները ամեն տեղ ծանր պատասխանատուութեան են ենթարկում նրանց, որոնց մօտ զէնքեր են գտնւում:

—Թէ Թիֆլիսում, թէ գաւառներում, մանաւանդ հիւղէն քաղաքում, Բաքւում աւազակները մեծ գործ են տեսնում. աւփօշկարայ տներ են մտնում թալանում և անպատիժ հեռանում:

—Վրաստանն ու Գուրիան արեան հեղեղներով միրուելուց յետոյ հնազանդւել են գեներալ-նահանգապետին, ընկճւելով նրա խիստ միջոցներից:

—Կովկասի հայոց բարեգործ. ընկ. կանոնադրութիւնը վերականգնելու նպատակաւ, համաձայն այդ ընկ. հիմնադիր բժշկապետ պ. Բ. Նաւասարդեանի առաջարկութեան, այսօր լինելու է ընդհ. ժողով:

—Պետական խորհրդակցութիւնը թագաւոր- Կայսեր հրովարտակով նշանակւած է ապրիլի 27-ին:

—Վրաստանի էքզարխութիւնը վերացնելու և միայն արքեպիսկոպոսութիւններ հաստատելու մտադրութիւն կայ: Սակայն վրացիների պահանջը, անկախ, ազատ եկեղեցի ունենալը դեռ վերջնական որոշում չէ ստացել:

—Մամուլի ղեկավարներին ազատում են կապանքներից և պատասխանատւութիւնից, որն անցնում է տպարանատէրերին. Ուրիշ խօսքերով տպարանատէրն այսուհետև պէտք է լինի և գրաքննիչ, միայն առանց ռոճկի, կամ աւելի ճիշտը՝ ռոճիկ պիտի ստանայ խմբագիրներից և միշտ էլ աւանս 3000 ր., որպէսզի տուգանք վճարէ և ազատւի բանտից:

Մամուլի չուրջը

Անձրևի, յետոյ գարնանային սունկի պէս բազմանում են հայ թերթերը, կը մաղթենք աստուածային խօսքերով, որ նրանք բացի *բազմանալուց* և աճեն: Սակայն Աստուած մարդուն օրհնելով նախ ասաց՝ *աճեցէք* և ապա *բազմացէք*, իսկ մեր օրերում դեռ միայն բազմանում են: Աստուածային պատգամներ քարոզող նոր, կիսամսեայ Բարի լուր Բաքւում նոր տարուց լոյս տեսնող հանդէսն է, որ տրամադրում է մեզ Ադամից սկսել և Ամերիկանեանի վրայ կանգ առնել:

Բարի լուր հանդէսի էպիգրաֆն է՝

Աստուած լոյս է, Աստուած սէր է:

Նոր հանդէսն ասում է, Ա. Տիմոթեոսի բերանով՝

Ով կամենում է փրկել բոլ ճշմարտութեան ու գիտութեան գալ:

Այս ցխատտի ատկ հետևեալ առաջնորդողն է հրապարակ գալիս Բարի լուրը:

«Մէկ երեելի գեներալ երեկոյեան պատերազմական խորհուրդ ունէր իր օֆիցերների հետ: Երբ ժողովքը ցրւեց զինւորները հարցրին՝ «մեր գեներալն ի՞նչ է կամենում» և պատասխան ստացան, որ նա կամենում է այս գիշեր բերդն առնել: Այդ վճարին զինւորները պատասխանեցին եթէ որ մեր գեներալն այդ է կամենում, մենք էլ կամենում ենք նրա կամքը կատարել և բերդն առին:

Մեր Աստուծոյ կամքն է տարածել ճշմարտութեան գիտութիւնը, որ մեղաւորները փրկւեն: Բարի լուրը պէտք է լինի այդ միջոցներից մէկը և մենք պիտի անենք այն, որ Աստուած կամենում է: Ուրեմն Բարի լուրը բացի Աստուծոյ կամքը իրագործելուց ուրիշ բան չի որոնում:

Նպատակն, ինչպէս տեսնում էք, այնքան պարզ է, որ կոմենտարիաների էլ պէտք չը կայ:

Հանդէսը լոյս է տեսնում մեծադիր տետրներով 16 երես, խմբագիր հրատարակիչն է պ. Պ. Թառայեանց: Ուրեմն Թառայեանց ֆիրման միաժամանակ երկու թերթ է հրատարակում տարբեր ուղղութեամբ և ծրագրով, Թիֆլիսում մեր Ս. Թառայեանցի Ընկեր շաբաթաթերթը և Բաքւում աւետարանականների օրգան Բարի լուրը: Որովհետև մենք կողմնակից ենք ամեն բարի գործի, ուստի ցանկանում ենք, որ Բարի լուրն էլ բարի բերի հայ ընթերցողին:

—

Փետրուարի 5-ից սկսել է լոյս տեսնել պ. Հայկ Տէր-Աստուածատրեանցի խմբագրութեամբ Դիտակ ժողովրդական չաբաթաթերթը, որի նպատակն է՝

կրթել հայ պակասաւոր դասակարգին, տալով նրան գնով մատչելի մի հրատարակութիւն: Առայժմ այդ հրատարակութիւնը լինելու է շաբաթական և հասարակութեան քաջալերութիւնը նրան կարող է դարձնել նոյն իսկ ամենօրեայ:

Նկատի ունենալով, որ խոստացւած ամսաթերթ Մասնագէտը լոյս աշխարհ եկաւ իբրև շաբաթաթերթ-Դիտակ, հաւատում ենք, որ շաբաթներ չանցած, Դիտակն էլ կը վերափոխւի օրագրի... Միայն թէ պէտք է ճշտապահել, ապա թէ ոչ, այսօր թէ վաղը Ալիքը կըսկսէ ողողել հայ աշխարհը:

Ալիք ամենօրեայ լրագիր օրերս սկսելու է Թիֆլիսում հրատարակել բժ. պ. Թադէոսեան:

—

Փետրուարի 14-ից վերսկսեց Նոյ. Օբօզր. լրագիրը, իսկ այսօրւանից և Վօզրօժդենիէն ու մի քանի օրից յետոյ էլ Ն. Թամամշեւի հրատարակութեամբ պէտք է լոյս տեսնէ և Վլայբեօս (*Յառաջ*) լրագիրը ռուսերէն լեզւով: Բացի այդ մի չարք նորանոր *սունկեր* կերևան Թիֆլիսում տեղական բոլոր լեզուներով, որոնց թւում Արգօնիք, Յոյս են:

—

Լումայ ամսագրի տասնամեակը լրացաւ այս յունւարին, վերջին, դեկտեմբերի համարը կազմւած է բազմակողմանի: Լումայի տասնամեակով կըսկսէ շուտով լոյս տեսնել նոյն խմբագրութեամբ և օր. Նուարդ Աղանեանցի հրատարակութեամբ Հայրենիք ամենօրեայ լրագիրը, երբ որա տպարանը կը բացւի:

Գեղարւեստական քրօնիկոն

Օպերային արտիստների միացեալ ընկերակցութեան ներկայացումները ձմեռային սեզոնի վերջին այնքան յաջող էր, որ նրանք շարունակում են և այս մեծպասին ու հրաւիրել են գաստրօլների մի քանի յայտնի երգիչներ՝ տ. Ն. Ս. Երմօլենկօ—Իւժինա, (դրամ. սոպրանօ), Դ. Խ. Իւժին (դրամ. տենօր): Ներկայացնելու են՝ *Հուգենոտներ*, *Աիդա*, *Վերտէր* եւն: Վաղը երկուշաբթի երգւելու է Իշխան Իգոր:

—Վաղուց չը ներկայացրւած Շուշանիկ ողբերգութիւնը արտիստիկ. ընկ. թատրոնում հայ դերասանական ընկ. ներկայացրեց երկու անգամ:

—Արտիստիկ ընկ. թատրոնում նոր բէպերտուարով Մէյերխօլդի ղեկավարութեամբ ռուս դրամատ. խումբն սկսում է վաղուանից իր ներկայացումները:

—Երաժշտական գործիչների մի նոր ընկերութիւն է հիմնւել Թիֆլիսում. ընկերութիւնն ունենալու է իր դպրոցն ու ակումբը: Ընկերութեան նախաձեռնողները են պպ. Մասկովսկի Պաւլիկ, եւն:

—

Հայ օրիորդ

ուսուցչուհու վկայականով պատրաստում է բոլոր առարկաներից աշակերտներ գիմնազիաների և այլ ուսումնարանների համար մինչև 6—րդ դասարանը:

Հասցէն՝ Տարազի խմբագրութիւն, օր. Զ. 5—1

Գեներալ Ռէտէգեր

Ռուսաց զինուորական այս մինիստրի պաշտօնից հեռանալու մտադրութեան լուրերը են բերում հեռագիրները։

Հրամանատարն ու կատարողը
(Խուզարկութեան ալբոմից)

ՊՕՍՏԱՐԿՂ

Թիֆլիս. Արշալոյսի պ. Խմբագրին.
Հէնց այն օրը, երբ երեկոյեան մեր խմբագրատանը պիտի հաւաքւէին հայ մատենագիրներն ու հրապարակախօսները կազմելու մեր Շաղկապի կանոնադրութիւնը, նոյն օրը ձեր Արշալոյսում լոյս է տեսնում Մամուլի բաժնում Ախալցխաում Նոր չաբաթաթերթի հասցէին մի պատուաղած նախադասութիւն Տարազից և եզրակացութիւն՝ չարչի Նազարեանի։

Որովհետև ամբողջ ազգին աւելի քան յայտնի է, որ ոչ թէ մենք չարչի չենք, այլ դրամն անարգող և մինչև արհամարհող, մի՝ մինչև խելագարութեան հասնող անձնուրաց գրականական գործիչ, ուստի և լուռ արհամարհանքից զատ ոչ մի հետք չէր կարող թողնել մեզ վրայ Արշալոյսի մեզ տուած այդ վկայականը։ Բայց որովհետև ձեր լրագրի №-ը լոյս տեսնելուց յետոյ նոյն օրը ձեր աւագ սրբագրիչ պ. Լեւոն Մելիք-Ադամեան եկաւ մեզ մօտ և յայտնեց իր և ձեր՝ խմբագիր պ. Գէորգ Մելիք-Կարագոզեանից ցաւակցութիւնը, որ դա մի մեծ սխալմունք է, ջնջնւած է եղել այլն, և նոյն օրը երեկոյեան դուք, պ. Մելիք-Կարագոզեանդ, չը բաւականանալով մեզ մօտ ուղարկած պ. Լեւոն Մելիք-Ադամեանով, ինքներդ էլ գրաւոր ներողութիւն էիք խնդրում մեզանից և սրանով էլ չը բաւականանալով Արշալոյսի մէջ էլ տպագրեցիք այս մասին բացատրութիւն,—ուստի ակամայ մենք հարկադրւած ենք այս առիթով երկու խօսք ասել ձեզ՝ 1) Մենք մնալով հաւատում ենք որ այդ մեր հասցէին՝ «Չարչի Նազարեան» տպագրւել է Արշալոյսում խմբագրիդ՝ Մելիք-Կարագոզեանից կամքի հակառակ։ Ուստի և հրապարակաւ յայտնում ենք մեր ոչ միայն ցաւակցութիւնը, այլ և զայրոյթը, որ Արշալոյսի խմբագրութեան մէջ նստած են մարդիկ, որոնք ամենատարրական քաղաքավարութիւն և յարգանք չեն տածում դէպի իրանց թերթի խմբագիրը և զարմանում ենք, որ ոչ միայն առանց կանխաւ ձեռագիրները ձեր նայելուց յետոյ է տպարան ուղարկւում, այլ և տարելուց յետոյ իսկ, երբ դուք մինչև թերթի լոյս տեսնելը հանում էք յօդւածներ, կամ փոփոխում, ձեր աշխատակիցներն իսկ արհամարհում են իրանց խմբագրի կարգադրութիւնը, և իրանց կամեցածը տպագրում։ Մենք այս հանգամանքը չէինք շօշափել, եթէ բացատրութիւնը միայն մեզ վերաբերէր։ Բայց տարաբաղդաբար նման փաստեր դարձեալ ուրիշների վերաբերմամբ եղել են Արշալոյսում և ամեն անգամ նախատել էք դուք պ. Գ. Մելիք-Կարագոզեանդ, նսեմացել է ձեր խմբագրական արժանապատուութիւնը։ 2) Մենք ամենաընդարձակ ազատ մամուլի կողմնակից ենք, ուստի չենք ընդունում և ձեր ոչ ցաւակցութիւնը, ոչ բացատրութիւնը և ոչ էլ ներողութիւնը, այլ պահանջում ենք, որ ձեր այն աշխատակիցը, որ անւանել է մեզ «չարչի», բաց ճակատով հրապարակ գայ և իր ասածը փաստաբանէ հրապարակաւ, միայն անպայման բաց ճակատով, իր իսկական անունով։

Իսկ եթէ պ. Գէորգ Մելիք-Կարագոզեանդ, այդ քաղաքացիական տարրական ձեր իրաւունք էլ չը կարողանաք պաշտպանել,—այն ժամանակ իսկապէս մեզ կը մնայ ցաւել, որ Արշալոյսում կարելի է տպագրել տալ ով ինչ կամենում է...

Խմբագիր հրատարակիչ
Տիգրան Նազարեան

ԶԳՕՆԱ

ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ *խմբագրատան կից կանտնից*
Ջենդ րդրդ գրադարանում փետրուարի 15-ից երեկոյեան ժամերին *աշակերտներին ընդունելութիւն*
է, *որ տեւում է չորս ամիս։*

Վճար 30 ռուբլի

Աքսորավայր Օրէնբուրգ քաղաքը

Վերջին տարիներս մանաւանդ հայերս շատ են լսում այս անունը, այստեղ են աքսորւում քաղաքական յանցաւորները, որոնց մէջ Թիւրիմացութեամբ շատ հայեր էլ են լինում.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահման 10 ր.) Աղբիւր-Տարազ, պրէմիաներով 10 ր. (արտասահման 18 ր.) Տարազ ամիսը 50 կ. առանձին №-ը երկու թերթից 30 կ., մի թերթից 20 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ վերջին երես 25 կ. մանրատառ (պրտիտ) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնւող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդւածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չտպւելիքը (երեքթերթից պակաս) չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10¼ ժ. մինչև 2¼-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ
Rédaction du Journal
TARAZ
Cau cse Tiflis

ժողովրդական, գրական, գիտական, հասարակական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 7 Կիրակի, փետրուարի 26 — Տասնեւօթներորդ տարի 1906

Շարունակւում է 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու մնասակարը:

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գիտութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV

և

ՏԱՐԱԶ

Տարազը Աղբիւրի հասունացած սանների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտւած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքւած հայ անդամներ սնուցանել:

XVII պատկերազարդ շաբաթաթերթ XVII

ԲԱՑԱՐՁԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

XXVI

Օրէնքը Թոյլ մահրիմն է
Ծիլէր.

—

Երկուշաբթի, ամսոյս 20-ից փոխարքայի շուրջը ժողոված հայ-թաթարական ազգերի ներկայացուցիչները խելք-խելքի են տալիս, որ դադարեցնեն մեր երկրում հոսող անմեղների արեան հեղեղները, որ հանգցնեն՝ քաղաքների և գիւղերի, կրակին լափ գնացած, բոցերից շառագունած երկինքը: Թափօրներն ու համբոյրները, Սեւտարանի և Ղուրանի սինդիկատը, Վերայի այգիներում քէլէխները նպատակին չհասցրին գործադրուած խաղաղասէրներին և այսօր վերջին միջոցն է գործ դրւում:

Այս ինչ խորհրդակցութիւն է, որ սարքել է մեղաւորներից. յանցաւորներին պէտք է պատժել, սրաբել անել և ոչ թէ նրանց, հետ քննչութիւններ բանեցնել: Ի՞նչի մասին պիտի խորհրդակցեն այդ՝ երկու ազգի ընտրեալները: Ի՞նչ պատճառներ պիտի լուսաբանւին, որ արեւի նման արդէն պարզ չեն ամենքին: Չէ՞ որ սենատոր Կուզմինսկույ աւելի ընդարձակ հետազօտութիւններ չէ անելու այդ ժողովը: Ի՞նչ հետեւանք տւաւ սենատորի քննութիւնը: Պատժւեցան նրանք.—՝ի հարկէ ոչ: Եւ պատժելն էլ անկարելի է, որովհետեւ իսկական յանցաւորը մահապարտ կովկասեան նախկին կառավարութիւնն է, նախկին տխմար քաղաքականութիւնը:

Մենք փոխարքայից, մեր սիրելի Թագակիր Թագաւորի Տեղակալից ոչ թէ կատարւածների քրոնիկոնն ենք ուզում, որ նա արձանագրի, այլ որպէս զի հրապարակաւ յանցաւորները անարգ սիւնին բեւեռւին:

Մեզ համար միենոյն է, ով էլ լինի յանցաւորը, թէկուզ ամբողջ Կովկասի պետական գործիչները:

Այնուհետեւ հարցը պէտք է դնել շատ որոշ. Ռուսաց Կայսեր և հայոց Թագաւոր Նիկոլայ Բ.-ի Տեղակալ կոմս մեր փոխարքան ստորագրում է մի վաւերագիր, որ հայերը սերտ կապւած են մեծ Ռուսաստանի հետ, և նրա բարգաւաճման նախանձախնդիր են եղել և անձնուրացութեամբ ծառայել են նրանք (հայերը) Ռուսիային ամենայն հարազատութեամբ, թէ զարձեալ կասկածների տեղիք կան: Մասի փաթաթան յեղափոխականներին մի կողմ թողէք. սրանք Ռուսաստանի ներքին քաղաքականութեան հետ գործ չունեն և չըպիտի էլ ունենան, քանի որ նրանք աւելի վեհ և սրբազան պարտականութիւն ունեն ստանձնած,

ԿՈՄՍ Ի. Ի. ԴԱՇԿՈՎ-ՎՈՐՈՆՑՈՎ
Նորին Կայսերական Մեծութեան
Փոխարքայ Կովկասի

այն է՝ Տաճկահայաստանի բարենորոգումը: Խոստանում և երաշխաւորում է փոխարքան, որ Կովկասում այլ եւս հայի անմեղ արիւն չի թափւիլ, նրա ինչքը կրակին լափ չի գնալ, հարսն ու կոյսերը չեն յօշոտւիլ: Դաղստանի Շամիլից առնող Ռուսիային ընծայող Գրամեանի, անառիկ Ղարսը Արդիլ-Համիդից առնող Ռուսիայի Կայսեր Գահի պատւանդանի տակ դնող Լազարեանի, Ղարաբաղի խաներից հայ մելիքների հետ Մադաթեանի Ռուսիային կցորդ արած Արցախն իր Շուշի քաղաքով թողնելու է անծուխ կորած, թէ հնարաւորութիւն է տալու, որ Կովկասի այդ սրտերակը կազդուրւի:

Ցետ նահանջեցէք մի երկու երեք տարի և տեսէք ինչ աղէտներ բերաւ Ռուսիայի հայրենակործան քաղաքականութիւնը:

Հերոս Գրամեանի որդին չոփկներով ուղարկւում է իր ծննդավայր Շուշին, որպէս զի նա իր գրացի մի ուրիշ հերոսի՝ Լազարեանի տունն ու տեղը խուզարկէ, քար-քարի վրայ չըթողնէ, իբր թէ յեղափոխականների ապաստարան է Շուշին: Գիտէք արդեօք այն գեներալը, որ երէկ ռմբակոծեց Շօշի գիւղը, թէ ինչ էր անում, ինչ բաշարի, ռուս պետութեան ամենամեծ ծառայութիւններ մատուցած, գիւղացիների ծնողարանը մոխիր չինում:

Պարսկաստանը Ռուսիայի հետ կապող, անգլիացիներին այնտեղից քշող հայ, ռուս պետութեան անձնուրաց վաճառականների ծննդավայրն այսօր ահա թէ ինչպէս է պահպանւում մեծն Ռուսիայից: Գնաց անհետացաւ Գալիցինը, մասի մի ուրիշ փաթաթանը, բայց մնաց անսասան յոռի քաղաքականութիւնը…

Մենք չենք սպասում այդ խորհրդակցութիւնից մի բարի հետեւանք, ինչպէս չէինք սպասում և միշտ էլ կշտամբում էինք համբոյրներն ու թափօրները:

Մենք պահանջում ենք արդարութիւն, մենք պահանջում ենք մեր Թագաւոր Կայսեր մեզ պարգեւած անձի եւ գոյքի անձեռնմխելիութիւնը: Այս պահանջից դատ մենք հայերս ոչ մի ակնկալութիւն չունենք. այն ամենը ինչ հոկտեմբերի 17-ի հրովարտակով մեզ տրւել է, լիուլի յագեցրւած են մեր պահանջները:

Ակնկալութիւն չունենք և Պետական Խորհրդակցութիւնից. թող լինի միայն օրէնք և այդ օրէնքը չըպղծւի: Ապա տւէք մեզ ազատ լոյս, մնացեալն ինքը իրան կը հասունանայ և բեղմնաւոր արդիւնք կըտայ…

Մահագոյժ

Բժ. Լեւոն Տիգրանեան

Երեւան 20-ը փետրուարի

Ամսոյս լոյս 16-ի գիշերը սրտի հիւանդութիւնից յանկարծամահ եղաւ բժ. Լ. Տիգրանեանը: Նրա մահուան լուրը շատերին համակեց տխրութեամբ, որովհետեւ նա անյայտ անձնաւորութիւն չէր: Ամբողջ 30—35 տարի նա եռանդով գործել է մեր հասարակական-գրական համարեա ամեն ասպարիզում իբրեւ բժիշկ, քաղաքագլուխ, հոգաբարձու, ուսուցիչ, իբրեւ խմբագիր, թարգմանիչ, գրող եւ ամեն տեղ էլ միշտ բարձր ու անարատ բռնած չիտակութեան, անկեղծութեան, պարզութեան դրօշակը: Նա մի ինքնուրոյն մարդ էր, որ միշտ առանց թաքցնելու եւ քաշւելու կասէր այն, ինչ որ մտածում էր, ինչ որ իր կարծիքով ճիշտ էր, իրաւացի: Լինելով Դորպատեան համալսարանի ուսանող եօթանասնական թւականների շրջանում աւարտած, նա ներկայացնում էր մեզ իբրեւ վերջին կոճղերից մէկն այն փառաւոր սերնդի, որ մեր գրականութեանը տւել է Աբովեան, Նազարեան, Պատկանեան, Դօդոխեան, Ասկարեան եւ այլն: Դա մի անմոռանալի շրջան էր, երբ մեր ուսանողութիւնը համալսարան էր գնում միայն մի գիտակցութեամբ ու վճռով—ուսում ու գիտութիւն ամբարել հայրենիքում տգիտութեան մէջ տանջւող թշւառ ազգայիններին օգտակար լինելու համար: Որքա՜ն մեծ տարբերութիւն այն ժամանակւայ գաղափարապաշտ ուսանողների եւ այժմեան փողապաշտ կարիերիստների մէջ... Եւ բժ. Լ. Տիգրանեանը արդարացրեց իր վեհ կոչումը, նա հայրենասիրութիւնը մինչեւ ֆանատիկոսութեան հասցրած շատերի համար դարձաւ մի լաւ օրինակ, մի ուսուցիչ... Իսկ այսօր բժ. Լ. Տիգրանեանի մահը կրկնակի վիշտ է պատճառում մեզ մանաւանդ հէնց այն պատճառով, որ նրան փոխարինողներ շատ քիչ ենք տեսնում մեր շուրջը...

Հանգուցեալի դիակը ամսոյս 18-ին կէս օրից յետոյ իր տանից փոխադրեց ս. Լուսաւորիչ եկեղեցին. իսկ հետեւեալ օրը-կիրակի ժողովրդի ահագին բազմութեամբ տարեց նոր գերեզմանատունը, որի հիմնողը եղել էր ինքը բժ. Լ. Տիգրանեանը: Եկեղեցում ընդարձակ դամբանական խօսեց տեղիս առաջնորդը, իսկ Բակում մի գեղեցիկ ճառով հանգուցեալի կենսագրութիւնը կարդաց մի ուսուցիչ:

Հանգիստ ոսկորներիդ շիտակ մարդ, եռանդուն գործիչ, ազնիւ հայ:

—եան.

Սահմանադրութիւնն ու ռուս Գրականութիւնը.

Լայնածաւալ երկրի յուզվելից սահմանադրութեան ահաւոր կերպարանքը հոկտեմբերին ծնեց իր ակնկալած նորոգչական մեծ աւետիքը: Դարեր շարունակ խեղդւած ձայնը, վերջապէս, լսելի եղաւ: Կատարւեց արդարութեան պահանջը. ու համայն Ռուսաստանը սրտագին ցնծութիւններով ողջունեց իր ձգտումների առարկան — Սահմանադրութեան հաստատութիւնը: Թւում էր, թէ ճնշիչ արտօնութիւնների վիրաւորական գործունէութիւնը մասամբ սահմանափակւում է, թէ ժողովուրդը իր բոլոր խաւերով ստանում է քաղաքացութեան, պետութեան մի անհրաժեշտ մասնիկը լինելու, օրինական իրաւունքը, գործօն, գերիշխան տարր եւ ազդող ոյժ հանդիսանալու պարտականութիւնը, իր բախտը, վիճակը կամովին, անձամբ որոշելու ունակութեան ընձեռումն: Հլու, անխօս հպատակի կաշկանդւած, բռնադատւած խիղճը, կարկամած լեզուն եւ շղթայւած ոտքերը կապերից ազատ էին յայտարարւում: «Ռուս ժողովուրդն» յորջորջումի փոխարէն ստեղծւում էր ռուս քաղաքացութեան գաղափարը.

Դա մի պատմական մեծ ակտ էր: Նոյնանման իւրաքանչիւր նշանակալից երեւոյթ, հասարակական ամեն մի զօրաւոր շարժում կամ ժողովրդային խլրտում ենթադրում է ինքնեան որոշ նախապատրաստութիւն, յայտնի կանխապատրաստողներ:

Արդ՝ ինչպէս պատրաստւեց սահմանադրութեան գոյութեան իրաւունքը եւ ովքե՞ր էին պատրաստողները:—Դարեր դարերի յետեւից սարկական մաշիչ լծի տակ տեւելով ռուսական խաւերի այլեւ անկարող հանդուրժելու բանակայութեան ճնշումներին՝ գլուխ բարձրացրեց ահռելի թափով. ու ընդարձակածաւալ երկիրը ցնցւեց անօրինակ, ռուս պատմութեան անծանօթ, հզօրութեամբ: Ժողովուրդների կեանքում կայ մի աննախանձելի դրութիւն, որ իրաւամբ ստրկացման կէտ, անշարժ-ինեռտ կացութիւն կարող է յորջորջւել: Բռնութեան սուր ճանկերի մէջ խեղդւած՝ հասարակութիւնը շշմում, ուշաթափւում է առ վայր մի, գիտակցութիւնը, ինքնազգացութիւնը տեղի են տալիս մի բութ, անորոշ, տարտամ բնազդումի—բարոյական եսի կորստի գնով փրկել անասնական գոյութիւնը: Յառաջադիմական քայլերը յոգնած, դադրած կանգ են առնում, փայլուն նպատակներն աղօտանում եւ անհրապոյր դառնում. ու ժողովուրդը մատնւում է բորբոսնած ռէակցիայի սպանիչ ճիրաններին: Գաղափարական հպարտ պայքարը՝ կռիւը յանուն իրաւունքի դառնում է միայն էնտուզիաստ մարդկանց բաժին. փաստ, ձանձրացած մեծամասնութեան հանդէպ ստեղծւում է թարմ, գիտակից եւ խանդավառ փոքրամասնութիւնը, որ նախապէս չընտրւած՝ հռչակւում է բնօրէն առաջնից:

Ռուսաստանի դարաւոր իրականութիւնը պահած ունի իր գոգում մի սրխուր անցեալ, մարդկային իրաւական—բարոյական եսի կաշկանդման մութ գործունէութեան մի ամբողջ պատմութիւն: Ընդարձակագոյն մի երկրի համար ըստեղծւեց-դարերնւեց լեթարգիական ինքնատիպ մի շրջան, երկարատեւ ժամանակամիջոց, որի ընթացքում ռուս ժողովրդի բնաւորութիւն ստացաւ ուրոյն կերպարանք.—Եւրոպայի կողքին կանգնած հասարակութիւնը համակւեց յետադիմական ոգով, դարձաւ ռէակցիոն մի տիպար:

Ռուս բնաւորութեան այդ առանձնայատկութիւնը երբեմն ներբողների, փառաբանական գովեստների առարկան էր դարձած որոշ կուսակցութեան կողմից: Սլաւոնասէրների մասին է մեր խօսքը: Ի՞նչ էին ասում սրանք:—Ռուսաստանին մի երջանիկ ապագայ է սպասում, մի հիանալի, հրաշալի կեցութիւն, որի ստեղծողն ու յայտնագործողը պէտք է հանդիսանայ ինքը ռուս ժողովուրդը իր բնատուր ձիրքերի շնորհիւ, առանց դէս ու դէն ընկնելու եւ փնտրելու օրինակներ իր կլիմայից դուրս. ռուս հանճարը կըփայլի եւ փայլ կըտայ ուրիշներին. նա մի մեծութիւն է, որ կարիք եւ ակնկալութիւն չըպիտի ունենայ ուրիշ երկիրներից. վերջապէս, Ռուսաստանը ըստ ինքեան կատարելութիւնների մի վայր է, եւ այդպէս էլ պիտի մնայ . . .

Ինքնավստահ, յաւակնոտ մի վարդապետութիւն էր դա, որի ղեկավարները իրենց ամբողջ ուշադրութիւնը դարձրել էին դէպի ռուսական հին անցեալը, որտեղից քաղում էին փքուն, պարծենկոտ յաւակնութիւնների խրախոյս: Սլաւոնասէրներն ունեցան մի հակադրեցիկ ոյժ—արեւմտականների կուսակցութիւնը: Վերջինս աւելի լայն սկզբունքների, աւելի համակրելի գաղափարների անունից էր խօսում: Լուսաւորութեան, քաղաքակրթութեան վեհ գործը եւ այդ գործի յաղթանակը արեւմտականների գործունէութեան ուղն ու ծուծն էր կազմում: Նրանք գոհ չէին տիրող կարգերից, ճնշիչ իրականութիւնից, եւ իրենց փոքր խմբի

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԵՒ ԱՊԱԳԱՅՈՒՄ

(Ա. Բեբել)

(Սկիզբը Տարազ № 6)

Սոցիալական հասարակութեան մէջ ամուսնութեան պտուղ—երեխաները, որոնք այժմ ձգւում են ապաստարաններն ու որբանոցները, կամ մեծանում են աղքատների խղճուկ խրճիթներում, չը պէտք է կորստեան դուռն ընկնեն, ինչպէս որ այժմ յաճախ պատահում է. միւս կողմից, նրանք երբեք չեն առնիլ մանկանոցներում կամ պանսիօններում. նրանց հետ կը վարւեն ինչպէս թանգագին բոյսերի հետ, որոնց զօրանալը պահանջում է լաւ հոգատարութիւն. սոցիալական հասարակութիւնը հոգ կը տանի երեխաների յաջող ու խելացի զարգացման վրայ, խուչընդոտ չը լինելով, միեւնոյն ժամանակ, ծնողական սիրոյն. ընդհանուր պարտադիր ուսումը ընդարձակւելով կը հասնի մինչեւ ընդհանուր պարտադիր դաստիարակութեան:

Հէնց որ սոցիալական հասարակութեան մէջ կը վերանան ամուսնութեան այժմեան պակասութիւններն ու ոճիրները, դրանց հետ կը վերանայ նոյնպէս որդէսպանութիւնը, որ կատարում են այժմ ամենաողորմելի եւ թշւառ արարածները—կանայք, որոնք խարւած են հասարակութեան արհամարանքից, կամ թէ միջոցներ չեն ունենում իրանց ծնած խեղճ զաւակի կեանքը պահպանելու համար:

Կը վերանայ երեխաների վիժումը, նրանցից ազատւելու այդ անարգ հակաբնական միջոցը, որը խիստ տարածւած է, այսպէս կոչւած, ուսեալ կանանց մէջ այն նպատակով, որ թագցնեն իրանց մեղքը կամ չ'ունենան որդիք, որոնց անհնարին պիտի լինի դաստիարակել «նրանց կոչման համապատասխան»:

Կը վերջանայ, վերջապէս, պոռնկութիւնը, որն օրէցօր աւելի է զօրանում, քանի որ ընտանիքի գոյութիւնը պահպանելը, միջոցներ գտնելն աւելի է դժւարանում, քանի որ կնոջ բանւորական ուժի գնահատութիւնն ընկնում է, եւ քանի որ երիտասարդ տղամարդիկ, զանազան պատճառներով, միշտ աւելի ու աւելի են խոյս տալիս ամուսնական կեանքից, բայց միեւնոյն ժամանակ աւելի մեծ ուժով են աշխատում իրանց սեռական պահանջներին բաւականութիւն տալու ամուսնութիւնից դուրս:

Դրանք են այն գլխաւոր պակասութիւնները, որոնք միշտ աւելի ու աւելի զարհուրելի կերպով պաշարում են մեր հասարակութեանը, անպատմելի թըշւառութիւնների մէջ են ձգում շատ ընտանիքների եւ վարակում են ամբողջ հասարակութիւնը:

Ճնշւած մարդկային բնութիւնը, որը խիստ ցանկանում է ազատել այն պինդ կապանքներից, որոնք դրւած են նրա վրայ հասարակական կարգերով եւ պահպանւում են քաղաքական ու եկեղեցական հաստատութիւնների միջոցով, ստիպւած է լինում դիմել եղեռնագործութեան, որը նրա համար միակ ելքն է կազմում: Բռնի կերպով ծուռ ճանապարհի վրայ դրւած այդ հզօր ապստամբութիւնը, մեր պայմանների անարգարութեան շնորհիւ, ծնում է եղեռնագործութիւն, որին խիստ եւ անգութ կերպով պատժում է մեր հասարակութիւնը, չը նայած այն բանին, որ նա ինքն է դրա մեղաւորը:

Ոճրագործների թիւն աւելի եւս մեծանում է, քանի որ առաջ են գալիս իրաւունքների ու աւելի ստիպողական պահանջներ մարդու բնական գոյութեան համար եւ երբ տեսնում են, որ անհնար է բաւարարութիւն տալ նրանց հասարակութեան ներկայ կազմակերպութեան օրով. հասարակութիւնը չի հանգստանալ այնքան ժամանակ, մինչեւ որ չի ստեղծիլ մի նոր կազմակերպութիւն, որը միջոց տար ամեն մարդու զարգացնել իր շնորքներն ու ընդունակութիւնները, սովորեցնէր, դաստիարակութեան ընդլայնած խելացի եղանակի օգնութեամբ, գործ դնելու իր ոյժերը, թոյլ տար, ամենքի կատարեալ հաւասար իրաւունքների վրայ հիմնւած, ազատութեամբ գործադրելու իր ոյժերն ընդունակութիւնները սիրած գործի վրայ եւ ամեն մէկին իրաւունք տար, ինչպէս ինքըստինքեան մի հասկանալի բան, վայելելու հասարակութեան ձեռք բերած բոլոր բարիքները:

Այդ նպատակին հասնելու համար առանձնապէս շահագրգռւած են այժմեան հասարակութեան երկու դասակարգերը. *պրօլետարիատը եւ կանայք:*

Վաղուց հասել է այն ժամանակը, երբ սոցիալիզմը պէտք է հասկանար, թէ ինչքան մեծ է իր ձգտումների նշանակութիւնը կանանց համար, եւ գործէր դրա համեմատ: Կինը, իր նուրբ, խորաթափանց զգացողութեամբ, որը նա ինչպէս ճնշւած զգում է միւս ճնշւածների վերաբերմամբ, եւ որը հնազանդաբար նրան յոյս է տալիս, թէ միւս ճնշւածների ազատութեամբ կը վերջանայ կամ կը թեթեւանայ եւ նրա սեփական տանջանքը, նա ամեն մի մեծ շարժման մէջ աչքի ընկնող դեր է խաղում, անձնատուր լինելով այդ գործին իր բնաւորութեան բոլոր ջերմութեամբ: Այդ բանն են հաստատում քրիստոնէութեան սկզբն ու տարածումը, միջին դարերի կրօնա—սոցիալական շարժումները, գիւղացիների կռիւը, ֆրանսիական յեղափոխութիւնը, յուլիսեան կռուածը եւ կոմմունիստական շարժումը: Ներկայ ժամանակում մենք պատահում ենք կանանց անդրալեռնական (ուլտրամօնտանական) եւ սոցիալիստական բանակներում: Ուլտրամօնտանական շարժման մէջ նրանց մասնակցելը բացատրւում է այն հանգամանքով, տղամարդիկ *զգիտութեամբ* նրանց մտքի զարգացումն աւելի *խիստ* չափով են արհամարհել, քան թէ պրօլետարինը: Զէ որ, բռնահարողների առաջին եւ գլխաւոր կարգն է—տգի-

տակաւին անզօր ձայնն էին բարձրացնել միջնադարի բարբարոսական ռեժիմի դէմ։ Նրանք յարմար դիպուածներից ձեռնարկելով վայրկեան էին սպասում իրենց համակրելի ուղղութեան յաջողութիւնը հաստատ հողի վրայ դնելու։ Արեւմտականների առաջ բացուած էին լայն հորիզոններ. առաջադիմական մի շարք իդէալներ ունէին նրանք, որոնց իրագործման համար գործելով՝ յանձն էին առել ամեն տեսակ զրկանք, նեղութիւն, բանտ ու աքսոր։

Չնայած յայտնի ծանրատար արգելքներին՝ նրանք ոչ մի անջրպետի առաջ կանգ չէին առնում և անխոնջ եռանդով նախապատրաստում էին ռուս ժողովրդին լաւագոյն ապագայի համար։ Ռուսական ժողովուրդը ներկայացնում էր կանգնած ջրի մի հեղեղատ, որի մէջ հոսեցնում էին արեւմտականները եւրոպական մտքերի թարմ հոսանքը՝ յուզելով, եռացնելով հեղեղատի ըղտոր մակերևոյթից սկսած մինչ խորքն ու յատակը։ Նրանց անսպառ եռանդը հասաւ փայլուն հետևանքների։ Գործունէութեան ցանկալի յաջողութիւնը գեղեցիկ կերպով պաշտպանելու դիտումով՝ արեւմտականները կարողացան գրականութիւնը իրենց հովանաւորութեան տակ առնել և մի գործիք շինել այն իրենց ծրագրի իրագործման ուղին շրջակելու։

Քառասնական թւականներից ռուս գրականութիւնը մտնում է նոր շրջանի մէջ։ Արդէն այն ժամանակից յետոյ երբ պատմական ճնշումից դէպի Եւրոպա՝ ռուս մտքի հոսանքները դրեցին, հիմնովին յառաջխաղացում ունէին արեւմտեան գրական շարժումների հետ, թէպէտև Ռուսաստանում արդէն գրական ուղղութիւն գործունէութեան մէջ էր մտնում մինչև այն վայրկեանից, երբ նա հասնում, այժմ ընկնում էր արեւմտապաշտ (*նոյնն է կատարել ռուսական քաղաքակրթեան բոլոր ճիւղերում*)։ Ռուս հողի վրայ գրականութիւնը որոշ գոյն ստացաւ և սկսեց առաջ գնալ՝ յատուկ դրոշմ կրելով իր վրայ։ Գրականութիւնը դարձաւ մի ամբիոն, որտեղից սկսեցին հնչել որոշ գաղափարների ջատագովական ագիտացիա։ Իւրաքանչիւր գրական գործիչ միևնոյն ժամանակ և հասարակական ղեկավար էր, յայտնի ուղղութեան առաջնորդ, պարագլուխ կամ գործակցող։ Սկսեց մի տենդային շարժում, որ նպատակ էր դրել տիրող կեանքի կեղտերը մաքրել գրական անողոք խարազանով և Ֆրանսիական ժանտախտով յեղափոխելով վարակել համայն Ռուսաստանի վատառողջ օրգանիզմը։ Պէտք է խոստովանել, որ առհասարակ ռուս գրականութիւնը չիղեկավարւել գեղարւեստական չափերով, այլ գլխաւորապէս զարկ է տւել հասարակական հոսանքների լայն արտայայտութիւն բոլորովին խուսափելով անտարբեր ստեղծագործութեան պօւեստական բարձունքներից։ Իւրաքանչիւր երկ ռուս գրականութեան մէջ լոկ իրականութեան հասարակ, ճշգրիտ վերարտադրութիւն չէր, այլ իր մէջ ցոլացնում էր ժամանակի ոգին, որոշ շրջանի պահանջներ այս կամ այն չափով։ Գրականութեան վրայ աւելի տիրապէս իշխող ոյժ ունէին հասարակական տեսակէտները, քան գեղարւեստական—էսթեթիքական պահանջները։ Ամեն մի գրական փաստ ձեռք առնելիս՝ քննադատը նախապէս աշխատում էր պատասխանել այս հարցին, —*երկը յառաջադէմի թէ յետադէմի գործն է ներկայացնում*։

Այսպիսով գրականութիւնը ծաղկում, զարգանում էր որոշ ոգով։ Գրական ասպարէզի հսկաները անգամ անզօր եղան արմատախիլ անելու այն կենսունակ սերմերը, որ գրողները սերմանում էին երբեմն գաղտնի, առակէջ և հնատար ակնարկներով, իսկ հաղւադէպ պարագայում՝ բացարձակ։

Գրականների ուշքն ու միտքը դարձած էր դէպի աւետեաց երկիրը—Եւրոպան, որի լուսաւոր, առողջ գաղափարների քարոզութիւնը մանաւանդ վերջերս, հրապարակական ծաւալ էր ստացել։ *Արտասահմանեան իդէալները* պաշտամունքի առարկայ դարձան ամեն մի գիտակից ռուս քաղաքացու համար։ Տիրող ռեժիմի հիմքերը օրէ օր նւազելով, նւազում էր, այն ինչ հասարակական աշխարհայեացքը յայտնի ուղղութեամբ զարգանում էր անընդհատ արշաւանքով։ Որքա՜ն ջանքեր եղան այդ աշխարհայեացքի մշակման համար. քանի՜ քանի՜ պանծալի գործիչներ նահատակւեցին, մինչև որ արեւմտքին նմանելու ձգտումը դարձաւ անհրաժեշտութիւն, կարիք, առիպողական պահանջ։ Պէտք էր գրականութիւնը մօտեցնել ժողովրդին և վերջինիս առաջ քաշել, բարձրացնել գրականութեան բարձունքները՝ մատչելի դարձնելով նրան ժամանակակից հասարակական հոսանքները, մտքերն ու ձգտումները։ Դիւրին գործ չէր դա, բայց ծանր, պատասխանատու և դժուարին առաքելութիւն յանձն առաւ ռուս գրականութիւնը, հանդէս բերելով խելքի և գործունէութեան գոհարներ։

Այսօր—համեմատական ազատութեան այս երկունքի ժամերին—իրաւունք ունի՝ բաց ճակատով և անխնայ հայեացքով՝ պարծենալու ռուս գրականութիւնը։ Ներկայ խոստմնալից իրականութիւնը մեծ մասամբ պարտական ենք նրան, որի մի հսկայ գործիչը՝ Տոլստոյ աշխարհ զարմացնող արոշումով իրեն անզուգականօրէն նետեց ժողովրդի գիրկը՝ նրան ծառայելու նպատակով, մի կողմ վանելով այն դափնիները, որ վաստակում էր գեղագիտական հրաշալիքներ ստեղծագործելով։ Ռուս գրականութիւնը շատ ունի նւիրական այդպիսի գրական գոհեր, յառաջ բերուած հասարակական սեղանի վրայ։

Ո՛չ մի երկրում գրականութեան այդքան վսեմ, միաժամանակ հսկայական գործունէութիւն չի տրւած եղել երբէք, ինչպէս Ռուսաստանում. և ոչ մի տեղ էլ ճնշիչ ռեժիմը իր գեհենական միջոցներով, քանի հարւածներով հասարակական կարող ոյժերը այնքան չի կենտրոնացրել միայն նեթ գրականութեան շուրջը, ինչպէս ռուսական հողի վրայ։ Ռուս գրականութիւնը համակրելի կերպով կատարեց իր գեղեցիկ առաքելութիւնն խպառ խեղդուկ պայմանների մէջ։ Սակայն նա չխեղդւեց, այլ խեղդեց—ուզում ենք հաւատալ—մահացրեց իրեն, ոչնչացնել ձգտողներին. ու յաղթանակը վեհօրէն տարաւ՝ մարմնացնելով իր երազած սկզբունքները իր դաստիարակած սաների միջոցով՝ յատուկ գրչով մշակւած ռուս աշխարհում, ռուս համայն պետութեան մէջ։ Հետևապէս սահմանադրութիւնը՝ մի կողմ թողած միւս գործիչները՝ մասամբ արդիւնք է ռուս գրականութեան հսկայական գործունէութեան. որոշ չափով նա ներշնչեց բողոքի, ըմբոստութեան ոգին անչարժ, իր չահերին անգիտակ մութ խաւերի մէջ, և գործակցեց, նպաստեց ներկայիս շարժման առաջ գալուն և ընդհանրանալուն։

Ար. Տէրտէրեան

ԶՔՆԱՂ

ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ խմբագրատան կից Կանանց Ձեռագործ դպրոց գրասենեակում *փետրուարի 15-ից Երկրորդ դասընթացի աշակերտուհիների ընդունելութիւնն է, որ տեւում է չորս ամիս։*

Վճարը 30 ռուբլի

ութեան մէջ պահել ճնշողներին, և այդպէս են վարւել համարեա բոլոր դասակարգերի բոլոր կանանց հետ։ Պրոլետար—կինը շատ աւելի մօտ է կանգնած բուրժուա կամ արիստոկրատ դասակարգի կնոջը, քան թէ պրոլետար—տղամարդը նոյն դասակարգերի տղամարդկանց։

Որտեղ *թոյլ է խելքը*, կրթութեան ու վարժութեան պակասութեան պատճառով, այնտեղ *խիստ զարգացած է զգայուն ընդունակութիւնը*։ Այդ չափազանց զարգացած զգացողութիւնը, որը լինում է ի վնաս խելքի, շահագործւել է մանաւանդ եկեղեցու, միջոցով, որը յոյս է դրել միայն զգացողութեան վերայ։ Կինը հաւատարիմ է եկեղեցուն, որովհետև նա հաւատում է թէ եկեղեցին կը մխիթարէ նրան վշտից, կը փրկէ ամեն վտանգներից, որոնց դէմ նա իրան բոլորովին անօգնական է գտնում։ Սոցիալիզմի կոչումն է—փրկել կնոջն այդ մոլորութիւնից, նոյնպէս և դուրս կորզել նրան եկեղեցու գրկից։ Նա մեղ է պատկանում, մենք ենք կռւում նրա իսկական ազատութեան համար, միայն մեր նպատակների իրագործման մէջ նա կը գտնէ իսկական ազատութիւն ու անկախութիւն. ուստի և թող նա մեր կողմը լինի, ինչպէս մեր դաշնակից։ Նրա ազատութեան ժամանակ ի նկատի կառնւան ոչ միայն նրա դրութիւնը ինչպէս ամուսին, այլ և նրա դրութիւնն, ինչպէս քաղաքացու և բանւորի, և առհասարակ հասարակական էակի։

Այդ բանը կհասկացուցի, եթէ կը թւեն համառօտ կերպով նրա յարաբերութիւնները դէպի հասարակական ամենակարևոր հարցերը։

Միթէ կին—ամուսինը չէ շահագրգռւած այն բանում, որ հասարակութեան կեանքը *խաղաղ* զարգանայ։ Պատերազմը յափշտակում է գրկել նրան *մարդից*, նրա զաւակների հօրից և կերակրողից. ամենաբարեյաջող դէպքում նրա տնտեսութիւնը երկար ժամանակով խանգարւում է կամ բոլորովին քանդւում։

Պատերազմն սպառնում է մահացնել կամ հաշմանդամ դարձնել նրա *որդուն*, որին նա հոգս ու ցաւով ծընել է, աւելի քան երկու տասնեակ տարի պահպանել է իր մայրական սրտի բոլոր խնամքով, որի մասին մտածել է օր ու գիշեր և որի վրայ նա յոյս է դրել, որ իր ծերութեան ժամանակ նա պիտի լինի իր մխիթարիչն ու նեցուկը։ Եւ եթէ նրա որդուն փորձանք էլ չի պատահում, այնուամենայնիւ քանի ամիսներ նա պէտք է անցկացնի մահւան երկիւղի մէջ։ Թէ որքան խիստ շահագրգռւած պէտք է լինեն ամուրի կանայք այն բանում, որ կեանքը լինի խաղաղ և հանգիստ զարգացող պայմանների մէջ, դա ցոյց են տալիս վերևը բերուած թւանշանները։ Պատերազմը և նըրանից առաջ եկած խիստ զայթակղութիւնը դժւարութիւն են ստեղծում աղջկայ համար կատարելու իր ամուսնական ու մայրական վսեմ կոչումը, որը նրա կեանքի նպատակի ամենագեղեցիկ և կարևոր կողմն է կազմում։

Կեանքեր յափող պատերազմը շատ չարիքներ է պատճառում կնոջը, որն ոյժ չունի ազդելու իրերի ընթացքի վրայ, քանի որ նրա ձայնը բանի տեղ չեն դնում։ Սահմանափակ տղամարդիկ հայհոյում ու ծաղրում են նրան, երբ նա համարձակւում է պահանջներ դնել ընտրութիւններին մասնակցելու, որ կարողանայ պաշտպանել իր մարդկային ու կանացի իրաւունքները։

Եւ ինչպէս այդ դէպքերում, նոյնպէս էլ լինում է և պետական ու հասարակական կեանքում։ Կինն առաւելապէս տուժում է կողմնակի տուրքերի ծանրութիւնից, ապրուստի միջոցների թանգանալուց ու վատանալուց, որոնք առաջ են գալիս շահագիտութիւնից (սպեկուլացիա) և խաբեբայութիւնից և նրան միջոց չեն տալիս իրան յանձնւած փոքր գումարով ձեռք բերել գործածութեան սովորական ու անհրաժեշտ իրերը։

Հենց որ կինը կը հասկանայ հարկերի մասին եղած օրէնքների նշանակութիւնը, նա կը դառնայ մի այնպիսի ագիտատոր, որն իր եռանդով ու ջանքերով յետ չի մնայ ամենահամարձակ տղամարդից։

Եւ միթէ նրա բարձրագոյն շահը չէ կազմում դաստիարակութեան կանոնաւորումն, ոչ միայն ընդհանրապէս, այլ և մասնաւորապէս կանանց համար։

Ճիշտ ինչպէս որ պետական ու հասարակական հիմնարկութիւնների մէջ ժողովների մասնակցող տղամարդկանց տիրող դասակարգն այն կարծիքն է պաշտպանում, ադքատի որդին չը պէտքէ բարձրագոյն կըրթութիւն ստանայ, չափազանց խելք չը լինի և այդպիսով հակաւակէ իր շահագործմանը, նոյնպէս էլ նա հարւում է, որ աղջիկը պէտք է տղաներից աւելի քիչ կրթութիւն ստանան, քանի որ այդ է պահանջում մարդի կամքին հնազանդող, ապագայ տանտիկնոջ կոչումը. խելօք կինը—փորձանք է։ Դաստ արդերի տիրապետութիւնը և սեռերի տիրապետութիւնը տալիս են միևնոյն արդիւնքները։

Միևնոյն՝ արդիւնքները։ Ոչ, կնոջ համար յայտնի պարագաներում այդ արդիւնքները դառնւում են աւելի եւ աննպաստ կերպով։ Ինչպէս բանւոր նա իր արհեստի մէջ յաջող է լինում նոյնպէս, ինչպէս և տղամարդը. իսկ աւելի նուրբ գործերում, որոնց նա առաւելապէս ընդունակ է, նա աւելի յաջող է լինում, քան թէ տղամարդը։ Բայց, այնուամենայնիւ, նրա աշխատանքը վատ է վարձատրւում, դա միատեսակ վերաբերւում է թէ բուրժուա գործատէրին և թէ պետութեանը։ Այս վերջինը կանանց պաշտօն է տալիս փոստում, երկաթուղիներում, հեռագրատներում։ Ինչո՞ւ։

Մարդասիրութիւնի՞ց արդեօք Ամենեին ոչ. պետութիւնն այդ անում է այն պատճառով, որովհետև կինն աւելի էժան է բանում է աւելի խոնարհ գործիք է լինում, քան թէ տղամարդը։

(Կը շարունակւի)

Փառոնի դուստրը Ամենարիս

Մամիկոնեան առիւծը

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ:

Գիւեր:

Չկք ումէք քաղցրագոյն քան զծնողս և ոչ քան զզաւառ իւր»:

Եղիշէ.

Ա.

Աստղերն անթիւ, անհուն երկնից,
Վար են նայում թախծադէն,

Խաղ է անում անուշ նազով՝
Աչքը գցած դէպ երկինք:

Քունդ անո՜ւշ, յոգնած երկի՛ր,
Աչքդ փակի՛ր մինչև լոյս,
Երբ կը բացէ նոր առաւօտ
Եւ՝ ոսկէվառ արշալոյս:

Խաղա՛ անուշ մեղմ ժպտի հետ
Առաւօտեան զեփիւռի,
Ուրախ, անդորր ականջ դի՛ր դու
Մեղմիկ ձայնին հովերի:

Քեզ չեն խափում քո յոյսերը
Դու կը տեսնես փառք ու լոյս,
Քնի՛ր հանդարտ, յոգնած երկի՛ր
Մինչև ծագէ արշալոյս:

Եւ վեհ սրտով ուրախացի՛ր
Ո՜վ հայրենիք սրբազան,
Եղթայակապ որդիներդ
Միշտ ձգտել են փրկութեան:

Կապանքները չեն կաշկանդել
Ազատասէր այն ոգին,
Որ դարերով անկախ պահեց
Մեր աշխարհը թանգագին:

Եւ դու գիտես ո՜քա՛ն ծանր են
Ստրկութեան շղթաները,
Դրա համար ազատ ոգուդ
Չը փաթթեցիր կապանքներ:

Եւ թող քնեն Մասեաց սարեր
Քնեն Նրպատ ու Սիփան,
Քանի այդպէս զէնքը ձեռին
Պաշտպան ունի յաղթական...

Բ.

Սև ժայռի կատարներից
Ելա՛ւ լուսինն դողդոջուն
Եւ լոյս սփռեց սարին, ձորին
Եւ գետերին կարկաչուն:

Հանդարտ նազով կտրեց, անցաւ
Լայն կապոյտը երկնքի,
Դալուկ լուսով նա ողողեց
Կատարն հպարտ Քարքէյի:

Կտրեց, անցաւ անթիւ ամպեր
Իր երկնային նրհանդից,
Եւ Դըշխուհու չքնաղ ծովում
Կարօտն առաւ հայ երկրից:

Խաղաց, ճալտաց ու ողողեց
Արծաթափայլ ջրերը,
Անուշ սիրոյ վառ կարօտով
Լսեց ծովի երգերը:

Ապա նա լուռ, հեզիկ քայլով
Սիրտը անվախ ու անդորր
Սկսեց անցնել կամաց կամաց
Մութ անտառը դիմաւոր:

Կայսերական թատրոնների արտիստուհի դրամատիկական սոպրանօ
Ն. Ս. Իւժինա-Երմօլենկօ
Թիֆ. արք. թատրոնի վրայ. դատրօլների առիթով:

Եւ, դողդոջուն դիտում լուսին
Խոր քուն մոած աշխարհին:

Ջինջ կապոյտը ցօղ է մաղում
Արևատապ բոյսերին,
Յոգնած ամպը քարշ թևերով
Չոքում ժայռի լանջերին:

Խոր քնած են Հայոց երկրի
Հսկայ ժայռերն ահաւոր.
Հովերն անգամ չեն վրդովում
Նրանց քունը դարաւոր:

Քունն հանդիստ է յոգնած երկրի
Հերը կտրած է նիրհում,
Իսկ զեփիւռը անուշ սիրով
Իր ժպտի հետ է խաղում:

Հէն Արտազի խոր կիրճերով
Գետն հոսում է հանդարտիկ,

Կայսերական թատրոնների արտիստ դրամատիկ—լիրիկ տենօր
Դ. Խ. Իւժին
Թիֆ. արք. թատրոնի վրայ. դատրօլների առիթով

Հայոց երկրի լուսինն ուրախ
Ձորերը ցօղեց այն վայրում,
Ուր որ անթիւ տարիներ
Հայ ոսպմիկն էր խոսխոտում:

Տակայն երկնից հեզիկ լոյսը
Արագ անցաւ այն բարձրից,
Որ չը փախցնէ անհոգ քունը
Հայ քաջերի աչքերից:

Առաջ անցաւ դէպ Այրարատ
Ողջոյն տալու ծեր լերան,
Որ կանգնած էր հպարտ ու վեհ,
Որպէս աւանդ սրբազան:

(Կը շարունակուի)

Պետ. Մուծուեանց

ԹԹՈՒ ՋՈՒՐԸ
Ծուցուց դէպի Զանգեզուր
Կենտարար այս վայրը, իր հանքային ջրերով, այսօր թողուած է երեսի վրայ, և աւաղակ, արիւնարբու թաթարներին ծառայում է իբրև ժողովատեղի, նրանց գժոխային խորհրդակցութիւններին:

Մեր թղթակիցները

—

Շուշի. 17 փետրւար

ՑՈՒՑԱԿ.

Ղարաբաղի Խաչէն գաւառի փչացած հայ գիւղերը տեղի ունեցող աղէտների ժամանակ, Խաչէն գաւառում Ուլուպապ 30 տուն..2. կիզան 70 տուն.3. Ղազանչի 60 տուն. 4. Ջափար 40 տուն. դրանց տներ քանդւած, հրդեհւած են. Ղազանչին բացի դրանից խալաւ թալանւած է, այդ գիւղերի թչւառ ժողովուրդ ցրւած են այլ և այլ հայ գիւղեր, դեռ ոչ մի տեղից օգնութիւն, սփոփանք ստացած չեն, վարուցանքից, անասնեղէնից զրկւած, դրանց սպասում է դառն ապագայ:

Աւերւած հայ գոմատեղերից յիշենք. Քիլեսոս 20տ. Խաչէնում և Աւետարանոցի, Սառուշէնի, Մաշտաշէնի գոմերը, մօտ400 գոմ Վարանդայում. բոլոր խոտերի դէզեր, յարդանոցներ, գոմերի փայտեղէն կամ յափշտակւած կամ հրդեհւած են. այս տեղ էլ 700 տուն վարուցանք արած չեն, գոնէ յոյս լինէր գարնանացանի . . . ինչ՛ կլինի սրանց վիճակը գալ տարի:

Թաղլար 800 տուն մեծ գիւղը դաշտի ուկի տափերում վար արած չէ . . .

Թանթառի Սօվլալան, Սաւոլ և այլ մի քանի դաշտային փարթամ հարուստ հայ գիւղեր փախուստ աւել են լեռնային գիւղերը, նախօրէն իրենք իսկ հրդեհելով իրենց գեղաշեն գիւղերը. սրանք էլ վար արած չեն...

Հայ կալւածատէրերի սիրուն ագարակներից այրւել, թալանւել են երեքը *Ամարասի* շրջանում:

Հայ վանքերից աղէտների պատճառով ամայացել են երեքը՝ Գանձասար, Մանկունք, Պտկի սուրբ Գէորգ, Ղոնղիկ, աւերւել թալանւել է մէկը՝ Ամարասայ վանքը: Վնասւած հայաբնակ տեղերի մէջ աչքի է ընկնում Արցախի Վարանդայ գաւառակը, որ շատ քիչ վնաս է տեսել գեղովին ոչ մինը դեռ և ասպատակութեան չի ենթարկել. դրա գլխաւոր պատճառն է գաւառի զուտ հայաբնակ լինելը և լեռնոտ ամուր դիրքերը. բայց դրանց դաշտում թուրքերի մօտ ունեցած գոմերը բանալ ուին, տափերը վարելուց զրկւեցին, չկարողացան Ամարասը պաշտպանել, իրենց բոլոր ոյժը գործ դրին բնագաւառի գիւղերը պահպանելու անփորձ, որ և յաջողեցան:

Վերջերս նրանք մի արշաւանք արին դաշտային թուրք Ղաջար գիւղը պատժելու, ուր գողեր էին պահում. բայց այդ յարձակում ցանկալի յաջողութիւնը չունեցաւ, որովհետև նահանջ տալիս հանդիպեցին թագստի մտած թուրք հրացանաւորների. Ասում են որ Ղաջարի արշաւանքը սխալմունք էր, եթէ դա չլինէր, գուցէ հիմա հայերը գնացած լինէին Ամարասայ դաշտերը վար անելու և բացւած կլինէր ճանապարհը հայերի համար դէպի անւանի կենտրոնական գաւառական շաբաթական շուկան — Կարաբուլաղ, ուր խափանմամբ մեծամեծ վնասներ են կրում հաւասարապէս թէ հայերը և թէ թուրքերը: Յ.

ԱՒԵՏԱՐԱՆՈՑ

Արցախ փոքրիկ երկիրն ունի չորս գաւառակներ՝ Դիզակ, Վարանդա, Ջրաբերդ և Գիւլիստան. դրանցից ամենից նշանաւորն է Վարանդան իր տեղագրութեան յարմարութիւններով, շատ արգաւանդ հողերով, սքանչելի, մեղմ, առողջարար կլիմայով և նրա գրեթէ ամբողջ բնակչութիւնը, վաթսուն գիւղ, զուտ հայաբնակ են: Վարանդայի բոլոր գիւղերը զարդարւած են թթի, խաղողի, զանազան մրգերի այգեստաններով. ամեն գիւղ մի փոքրիկ, գողտրիկ քաղաքիկի տպաւորութիւն է անում իր քարաշէն, երկյարկանի տներով, թիթեղեայ գոյնզգոյն տանիքներով: Այդ շինութիւնները մեծ մասամբ կառուցւած են Բաքու աշխատած փողերով, վասն զի իւրաքանչիւր գիւղից պանդուխտների ստւար թիւ կայ օտարութեան մէջ՝ Բաքու, Բաթում, Անդրկասպեան երկիր և այլն: Վարանդայի գլխաւոր աւանը, պատմական մաքրով՝ տիրող Աւետարանոցն է, որ այժմ սովորական մեծ գիւղերից մինն է, բայց նշանաւոր է իր պատմական անցեալով, վասն զի այս էր բնդիրինցեան Վարանդայ գաւառի տիրող և կառավարիչ ինքնավար, կիսանկախ իշխանների կամ մելիքների՝ Շահնազարեան տոհմից, որ գաղթել էր այստեղ Գեղարքունի գաւառից, երբ սա աւերւեց լեզգի լեռնականների ձեռքով տասնեւօթ դարու սկզբում: Աւետարանոցի մէջ և մօտերը կան մինչև հիմայ նրա անցեալ փառքի մասամբ այգ, եկեղեցի, վանք,—մասամբ կիսակործան՝ բերդ. ապարանք և այլ յիշատակներ:

Աւետարանոց, ինչպէս և ամեն սարական գիւղ և քաղաք, քիչ հեռւից շատ գեղեցիկ և բանաստեղծական է երեւում. նրա մի կողմը սփռւած են այգիներ, միւս կողմը թաւ անտառ. գետակ, ձորակներ, թեթև ժայռեր, աւերակներ, սիրուն տներ, մօտ 400, ամբողջ գիւղը ծառերի մէջ թաղւած... Բայց, երբ մտնում էք գիւղը, տներն անկարգ, խառնիխուռն շինւած, փողոցները նեղ ծուռ ու մուռ, աննկարագրելի կեղտոտ, արտաքնոցներ չկան, անձրևին անանցանելի ցեխ... Գիւղում կան երեք ազնւական (բէկական) տոհմեր՝ Մելիք—Շահնազարեան, Մազաթեան, Դօլուխանեան. նրանք կալւածատէրեր են և կան դրանցից կրթւած առաջադէմ մարդիկ զանազան ասպարէզներում: Գիւղի գետակի վրայ կայ շուշեցիների մետաքս մանելու երկու գործարան, որոնց հարիւրաւոր բանւորները շատ չնչին վարձ են ստանում, զրկւում, անխիղճ կեղեքւում իրենց ծանր առողջութիւն ծիւրող աշխատութեամբ:

Աւետարանոցն ունի մի դասեան տղայոց դպրոց, որ այժմ յանձնւած է թեմական իշխանութեան. դպրոցի շէնքը և դիրքը շատ յարմար են: Գիւղի եկեղեցին տպաւորիչ է, մելիքների կառուցած. պատերը և թաղերը ճեղքւածք չունին, բայց չորս սիւները վերից վար ճարճատւած, սոսկալի տեսք ունեն. անշուշտ անհրաժեշտ է շատ շուտով ճարտարապետի ցոյց տալ: Եկեղեցում կան բաւական նշանաւոր եկեղեցական հնութիւններ. սուրբ Նշան հռչակաւոր մասունք և մի հրաշալի ձեռագիր Աւետարան, որից գիւղն ստացել է իր անունը: Գիւղին կից մի քարափի վրայ կայ փոքրիկ սուրբ Նշան վանքը, որ մելիքների ժամանակ կուսանոց է եղել. վանքի մօտի գիւղի մի թաղը կոչւում է *Խաչամղակ*. այդտեղ կայ մի շատ ընդարձակ գերեզմանատուն: Ս. Նշան վանքը մտադրութիւն կայ վերանորոգել, մօտը բանալով օրիորդաց դպրոց և գրատուն ընթերցարան:

Ն. վ. Տ. Ա.

Այստեղ, այնտեղ, ամենտեղ

Գարնանային եղանակը Թիֆլիսում յանկարծ փոխւեց, համակերպւելով ժամանակին. պարզ, պայծառ օրեր են, բայց փչում է դառնաշունչ քամին և սաստիկ ցուրտ է:

Փոխարքայի պալատի սպիտակ դահլիճը նոյնպէս պարզ է, բայց պայտաձև սեղանի վրայ գցած կարմիր մահուդը և այդ սեղանի շուրջը հայ-թաթարների պատգամաւորների ճառերը զգացնում են չէզոք ունկնդիրներին, սարսուռ բերում: Ժողովականներն են երկրիս փոխարքայի օգնականները դիւանի կառավարիչը, նահանգապետը և երկու կուսի կողմի պատգամաւորները: Վերջիններս եկել են առանց ծրագրի, առանց կանխաւ իմանալու թէ ինչ խնդիրներ պիտի լուսաբանեն, որպէս զի որոշ եզրակացութիւնների գան:

Հանդէսը բացաւ փոխարքան, յանձնելով ժողովի դեկը իր օգնական գեներալ Մալամային:

Հայերը պահանջում են ընդհարումների պատճառները քննելու և ուրեմն դրդիչներին որոնելու: Թաթարներն այդ աւելորդ են համարում: Գեներալ Մալամին հակառակ չէ պատճառները երևան հանելու, մեղաւորների ով լինելը նրան չէ հետաքրքրում: Փոխարքայի դիւանապետ և խորհրդի անդամ պ. Պետերսոն յիշեցնում է ժողովականներին, որ հէնց ինքը փոխարքան, բանալով ժողովը, ընդգծել է և նրա ծրագիրն ու նպատակը: ,,*Կոմսն ասել է, որ մեղաւորների հարցը եւ նրանց պատճառները (ճիշտ կը լինէր ասելու պատճառներին) աւելի լաւ է չը շօշափել*:

Պատգամաւորներն ընդհակառակ գտնում են, որ եկել են ժողովի առանց ծրագրի և որոշում են, հետևեալ օրը ժողովել քաղաք. խորհրդարանը իրանց նիստերի ծրագիրը կազմելու համար:

Ուրեմն երեք նախատութիւն. 1)*Նախագահ գեներալ Մալամին համաձայն է պատճառները քննելու*, 2)*Փոխարքայի դիւանապետը շեշտում է, որ փոխարքան ընդգծել է ծրագիրը եւ աւելորդ համարել պատճառների քննադատութիւնը եւ* 3) *իրանք պատգամաւորները խոստովանում են, որ ծրագիր չունեն:* Միայն էլ տարաձայնութիւն երկու կողմի մէջ: Հայը կամենում է պատճառները քննել, թաթարը չի ուզում, բայց վերջը համաձայնում: Տեսնենք ինչպէս:

—

Ուշագրաւ էր մի ուրիշ ժողով՝ Թիֆ. Հայոց Բարեգործ. ընկ. արտակարգ ժողովն անցեալ կիրակի ընկ. հիմնադիր և պատւաւոր անդամ բժշկապետ պ. Բ. Նաւասարդեանի նախագահութեամբ: Այս ժողովի բուն նպատակն էր վերականգնելու *Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկ.* ընդարձակ կանոնադրութիւնն իր ճիւղերով: Միաձայն ժողովը վճռեց վերականգնել ընկ. կանոնադրութիւնը և ընտրեց մի պատգամաւորութիւն այս մասին բանակցելու կառավարութեան հետ: Խօսք կար ընկ. կալւածքներն աւելի օգտաւէտ շահագործելու մասին, անդամների թիւն աւելացնելու, բայց այս հարցերը մնացին անորոշ և յետաձգւեցին մինչև նախկին ընկերութեան վերհաստատւելը:

—

Մեր բեղմնաւոր մատենագիր և մասնագէտ գիտնական գիւղատնտես պ. Կ. Կ. *Մելիք-Շահնազարեան* Վեհափառի կոնդակով և սինոդի պայմանագրով հինգ տարով ստանձնել է ս. Էջմիածնայ կալւածների կառավարութեան ղեկը:

Ինչպէս մեզ հաղորդում են պ. Կ. Մելիք-Շահնազարեան մի ընդարձակ ծրագիր է ներկայացնում Վեհափառ Կաթուղիկոսին, որով թէ ճեմարանում և թէ հոգևոր ազգ. դպրոցներում պիտի մտցնեն գիւղատնտեսութեան վերաբերեալ դասեր: Ապա պ. Մելիք-Շահնազարեանը մտադիր է հիմնել օրինակելի ագարակներ մեր վանքերին կից, տեղերին յարմար՝ շերամապահութիւն, այգիներ, բանջարանոցներ, բամբակ են. են. Ողջունելով ս. Էջմիածնայ այդ յաջող ընտրութիւնը, ցանկանում ենք, որ գէթ հինգ տարի վանքական կառավարութիւնը խոչընդոտ չլինէ իր մասնագէտ և հայրենասէր կառավարչին կատար ածելու իր ծրագիրները:

Մամուլի շուրջը։

Փոխարքայի հայ—թաթարական ընդհարումների առիթով կազմած հանդիսին Թիֆ.Լիստ. առելով հրաւիրւած են Կավկազ, Նով. Օբոզ. և Թիֆ. Լիստ. լրագրների խմբագիրները իբրև լրատուներ: Իսկ Արշալոյսն ասում է, որ ներկայ էին հանդիսի բացմանը և Մշակի, Յառաջի, Արշալոյսի ու Աշխատանքի ներկայացուցիչները: Ուրեմն տեղական ռուս մամուլը պաշտօնապէս հրաւէր է ստացել ժողովի նիստերին ունենալու իր ներկայացուցիչները, իսկ հայոցը գնացել է, թէև հրաւիրւած չէ եղել:

Ուշագրութեան արժանի երկու կէտ կայ այստեղ, մէկ որ փոխարքայի դիւանը արհամարում է տեղական լեզուներով հրատարակւող լրագրներին և նրանց հրաւէր չէ ուղարկում, մէկն էլ, որ Արշալոյսը ընդգծում է, թէ որ թերթերն են երջանկացել իրանց լրատուներն այնտեղ ունենալով:

Չը գիտենք ինչպէս են վերաբերւել ուրիշները, իսկ մենք ամենահեռաւոր անգամ ցանկութիւն չենք ունեցել այդ նիստերին ուղարկելու մեր ռեպօրտեօրներին: Սակայն, չենք կարող չը կշտամբել և փոխարքայի դիւանատան կողմից այդ տեսակ անտակտ վերաբերմունքը՝ այն է, որ հրաւիրւում են ռուս մամուլի ներկայացուցիչները, իսկ վրաց և հայոցը ոչ, սակայն և չէ արգելւում վերջիններիս ունենալ իրանց ռեպօրտեօրներին այնտեղ:

Գոլիցինի օրերում պալատում պարահանդէսներին նոյնպէս չէին հրաւիրւում մամուլի ներկայացուցիչները, սակայն նրանց ներկայութիւնը և չէր արգելւում: Իհարկէ այնտեղ բացի Կաւկազի խմբագիր տխրահռչակ Վելիչկօից, ոչք էլ չէր գնում: Բայց մի գիշեր, երբ ընթրիքը նստած պիտի անէին հանդիսականները, բանից դուրս եկաւ, որ Կաւկազի խմբագրի, Վելիչկօի համար տեղ չը կար սեղանի վրայ, իսկ *մազութի հերոս Մանթաշեանի* համար որոշած տեղ կար: Այս ֆինալը Կաւկազում հետևեալ օրը այն նշանաւոր յօդւածն էր, որ պատճառ եղաւ Վելիչկօին 24 ժամւայ ընթացքում Կովկասից քշելուն . . .

Բայց մեր փոխարքան Գոլիցինը չէ, այլ ժողովրդասէր մի արիստոկրատ, որը երկար տարիներ արքունիքում կատարել է պալատական մինստրի նուրբ պաշտօնը և անշուշտ կայսեր կամքի համաձայն, աւելի վեհաշուք օրերում կայսերական պալատներում և խնճոյքներում իմացել է ըստ արժանւոյն վայելուչ ընդունելութիւն ցոյց տալ մամուլի ներկայացուցիչներին անխտիր՝ թէ մայրաքաղաքների, թէ արտասահմանեան և թէ գաւառականի:

Յառաջը բողոքում է, որ ռուս դրամատիկական ընկեր. տեղական լեզուներով հրատարակւող թերթերին աթոռներ չէ տալիս չը նայած, որ ռուսաց թատրոնը պահւում է հայ և վրացի հանդիսականներով։

—

Մեր նախազգուշակութիւններն ընկաւում են իրականանալ. առայժմ տեղական ռուս լրագրները բարձրացրել են իրանց հատավաճառի գինը 3 կոպ.-ից 5 կ.։ Կաւկազը, հագիւ մի քանի չարաթ լինի, որ 5-ից 3 կոպ. էր դարձրել իր թերթի №-ը, այժմ յայտարարում է, որ այդ բարեփոխութիւն սարք չի անում։ Չը գիտենք ինչպէս է անելու Ցնօրիս Փոր-ցելլին, բայց մենք կարծում ենք, որ Արշալոյսն էլ հարկադրուած կը լինի իր թերթի №-ը նշանակելու այնքան, որքան է Մշակինը և Նոր Դարինը։

—

Այս տարի առհասարակ տեղական լրագրները համարեա բաժանորդ չունեն և վաճառւում են հատով։ Ուղիղ 16 տարի սրանից առաջ երբ մեր Աճճճ լրագիրը հրատարակում էինք և օրական հատով Թիֆլիսում սպառւում էր 12,000 օրինակ, տեղական ռուս թերթերից ծաղրողներ եղան և հայհոյեցին մեզ այդ նորաձեւութեան համար, որ լրագիրը փողոցներում մանկլաւիկների ձեռքով վաճառւում են։ Իսկ այսօր նայեցէք, փողոցներում մայթերի վրայ փռւած լրագրներին և երեկոները երեխաները թէ ինչպէս են հինգ կոպէկանոցը երկու կոպէկով առաջարկում, սակայն ա՜ւաղ, այլեւս չատ հազարներ չեն սպառւում լրագրները։

—

Նօվ. Աբօզ. լրագիրը անցել է սահմանադրական- ռամկավարական կուսակցութեան ձեռքը, որի պարագլուխն է այդ թերթի նախկին խմբագիր իշխան Գէորգի Թումանեանց։ Խմբագիր հրաւիրւած է նշանաւոր մատենագիր Նէմերովիչ-Դանչէնկօի եղբօր որդին երիտասարդ հրապարակախօս պ. Նէմերովիչ-Դանչէնկօ։ Թերթը ղեկավարելու է որոշ խմբագրութիւն, որի անդամները են իշխ. եղբ. Գէորգի, Վասիլ, Կոնստանտին Թումանեանները, ոչ եղբայրներ՝ պ. Քալանթար և Ալեքսանդր Քալանթարներ, եղբ. Պօղոս և Ւսայի Դօլուխանեաններ, Սամսոն Յարութիւնեան, բժ.Ալեքսանդր Խատիսեան, Համբարձում Առաքելեան։ Տնտեսական մասի ղեկը պ. Շահրուզադեանի ձեռքին է տրւում և անշուշտ պ. Ալեքսանդր Մելիք-Ազարեանի էլ գրպանում։

Գեղարւեստական բռնիկոն

Օպերային խմբի բոլոր անդամների միացեալ ընկերակցութիւնը իր համակրելի ընկերական սկզբունքների չնորհիւ ձմեռային վերջին սեզոնին սկսել էր թատրոն գրաւել չատ հանդիսականներ, իսկ մամզէլ Սիտոււշներին, Սարնավ իլիանի զանգակներին թատրոնում նստեղ գտնելու տեղ չէր լինում։ Ամբոխն ամեն տեղ էլ ամբոխ է, բաղադմն ու գինետունն է սրանց հոգեկան հաճոյքի ապաստարանը։ Բայց արտիստներին չեն կարող յագեցնել միայն անարդ գրոշները, մի պատառ հացը, նրանք հանդիսականներից աւելի իրանք են կամենում հոգեպէս էլ հրճւանք ու հաճոյք պատճառել իրանց այցելուներին, և ահա հէնց այդ պատճառով սրանք հրաւիրել են կայսերական թատրոնների արտիստներ Իւժին ամուսիններին, որոնք անցեալ երեքշաբթի օրւանից սկսել են արք. թատրոնում երգել։ Տ. Իւժինա դրամատիկական սօպրանօ, երեք տարի առաջ էլ եղել Թիֆլիսում, բայց այսօր նա բաւականաչափ կրթւած երգչուհի է։ Հիանալի են նրա ելևէջները, չատ քնքոյշ է ձայնը՝ թախծալից և միաժամանակ պօէտիկ։ Այդ ձայնը կարող է ապագայում աւելի ուժեղանալ և արտիստուհին այն ժամանակ մեծ աստղերի չարքը կը դասւի։ Պ. Իւժին՝ տենոր, բայց թէ դրամատիկ և թէ կարծէք իր ամուսնու նման և լիրիկ, կրթւած, մուզիկալ, բեմական վայելուչ արտաքին, սակայն առանց բեմական (միմիկի) մեծ ձիրքի։ Երգում է Թիֆլիսում առաջին անգամ։ Առայժմ երգել են Հուգենոտներ, Աիդայի փախարէն, որ երրորդ անգամն է գնացած խոչընդոտների պատճառով, այս անգամ էլ յետաձգւեց, Դուբրովսկի են։ Հասարակութիւնը չատ սիրալիր ցոյցեր է անում հիւր արտիստներին, բայց և չէ լցնում թատրոնն անպէս, ինչպէս Մամզէլ Նիտուշներին... Պասի հինգերորդ և վեցերորդ չաբաթներին արք. թատրոնում կոյսեր թատր. արտիստ Վարլամովի մասնակցութեամբ ներկայացումներ է տալու դրամատիկական մի խումբ։

Ժամանակագրութիւն

Մենք սխալից էլ ձեռնպահ մնացինք և չը հաղորդեցինք տեղեկութիւններ Պետական խորհրդակցութեան մասին և սրա չուրջն ընտրութիւնների, իրաւունքի և պարտականութեան, նկատի առնելով, որ այդ խմբը դեռ չատ է ջուր տանելու մինչև թոնիր մտնի և պատրաստի հաց ստացւի, Բարձրագոյն հրովարտակով Պետական խորհուրդն էլ փոփոխութիւնների է ենթարկւում և կը լինի իբրև Վերին Պալատ։ Անդամների կէսն ընտրովի, կէսն էլ նշանակւած։ Պիտի ներկայացուցիչներ ունենան համալսարանները, գիտութեան, գեղարւեստի ճեմարանները, առևտրականները, հողատէրերը ևն. ևն. պատրաստւում է Գահական ճառը, որ պէտք է արտասանւի պետական խորհրդակցութեան բացմանը։ Եւրոպական մամուլը, մանաւանդ Գերմանականը, չատ յուսատես է դէպի երկու պալատներն էլ։

—Հ. Գապոնը մեղադրւում է իբրև ագենտ Միտտէի և քարոզիչ նրա այժմեան բռնած ուղղութեան։

—Խարկովի քահանաները յանդգնութիւն էին ունեցել ստորագրել մի հանրագիր. որպէսզի մոհւան պատիժն ոչնչացնէի, այս քահանաները դատի են կոչւելու։

—Սպասւում է, որ դատկին քաղաքական յանցաւորները բանտերից պիտի արձակւին, որոնց թիւը 70,000-ից անց է։ Մինչև այդ անշուշտ վերջացած կը լինի և Պետական խորհրդակցութեան պատգամաւորների ընտրութիւնը։

—Կովկ. գլխաւոր նախագահ Մ. Պ. Հակկել նշանակւած է փոխարքայի խորհրդի անդամ։

—Վրաստանի էքզարխը Թիֆլիս չէ վերադառնալու այլևս։

—Բացւում է վրաց հոգևոր դպրոցը, բոլոր առարկաներն աւանդւելու են վրացերէն լեզւով։

—Թիֆլիսը Բագւի հետ միացնելու հեռախօսով հարցը հիրթական է դարձել։

ՆՈՐԱՅՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագրութեանս մէջ ստացւել են հետևեալ գրքերը՝ Վարդան Քամալեան՝ Վոէժ, Բ. գպ. Վ.առնա, 64 եր. գինը 60 կ., Հ. Առաքելեան՝ (հանրամատչելի Մեսրոպեան գրադարան Թ.) Մի ամիս արևելքում, 249 եր. 40 կ., բժ. Ա. Բուդուղեան՝ Ներ հայ զինւորներին (առաջին օգնութիւնը մինչև բժշկի գալը 20 պատկերով) 108 եր. 20 կ. Հաուպտման՝ Ջուլհակներ, թարգմ. Ս. Արտեմեան. Ս.Պ.Բ. 106 եր. 40 կ. Փոքրը քարոզգիրք պետս ժողովոյեան, տպագր. Վ. և Հ. Տէր—Ներսէսեան, Կ. Պոլիս. 345 եր., 3 ղրուշ. Նշտար՝ Ժանրոտ Վէրքեր, (Պատկերներ արտատպած Տարազից) հրատ. եղբ. Բաբուրեանների, զուտ արդիւնքի կէսը վերջին աղէտից վնասւածների օգտին, 32 եր., 15 կ., Ն. Կարբիշեւ՝ Տնտեսագիտական զրոյցներ, թարգ. Կ. Ջալալեան, հրատ. Գ. Գալստեանի 135 եր. 40 կ. Նիկողայոս Լալայեանց՝ Արդարութեան նշանակութիւնը կեանքի մէջ, Ընդհանուր դատողութիւններ, 15 եր. 10 կ. Մեծ մարդասպանի դէմ, դատավարութիւն կատարւած Կ. Պոլսում 1905 թ. նոյեմբերին, Ժընև Հ. Յ. դաշնակցութեան տպ. 109 եր. գինը 50 սանթ. հայ երկրում ձրի. Մեր էժանագին գրադարանը 1) Մարթէօ Ֆալկօնէ, 2) Մատնիչը, 3) Լրտես, մի գրքի մէջ 62 եր. Ս.Պ.Բ. 7 կ. Բէբէլ՝ Անոյշ ներկայ եւ ապագայ դրութիւնը, ռուսերէնից թարգմ. Օր. Սոփիա Ճահնազարեան, 32 եր. 10 կ. Ա. Կրիմսկի՝ Մահմեդական աշխարհն ու նրա ապագան թարգ. Բաբկէն վարդապետի, (վաճառումից գոյացած ամբողջ գումարը յատկացւում է Բաքւից գաղթած հայ աշակերտների և աշակերտուհիների օգտին.) 170 եր. տպ. ս. Էջմիածնի, 60 կ. Արսէն վարդապետ Ղլտճեան Նախագիծ Հայաստանեայց եկեղեցու սահմանադրութեան, հրատ. Վենետիկի Հայրապետի. 40 եր. 7. Կանոնագիր Հայ աշխատասիրաց Միութեան Պարիզի, Կանոնադրութիւն Երաժշտական գործիչների ընկ. և ընկ. երաժշտական ուսումնարանի վիճակը։ Մ. Զմշկեան՝ Տարեցոյց 1906թ. սեղանի պատկերազարդ, 86 եր. 30 կ. Ս. Բարխուդարեան՝ Հայրիկ—Հայրիկ Հայկական ժողովրդ. ռոմանս, Զայանագրեց Ն. Նիկոլաև, 30 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Ժամացործ եւ ոսկեգործ

ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ

(Շուշից տեղափոխւած, Սոլոլակեան փողոց, Նադէժդա ընկ. գրասենեակի տակ)

Ընդունում է իր արհեստին վերաբերեալ պատուէրներ, որ կատարում է անյապաղ, ճշտութեամբ և մատչելի գներով։ 0—1

Լոյս տեսաւ ՀԱՈՒՊՏՄԱՆԻ

«ՋՈՒԼՀԱԿՆԵՐԻ»-ի

հայերէն թարգմանութիւնը, 106 երես, գինը 40 կ.։ Դիմել՝ Մոսկւա, Ժամհարեան եղբայրների բանկային տուն, Սեճիկ Արտեմճին։ 2—3

11 տարի ԼՈՒՄԱՅ 11 տարի

Գրական, Հանրային, քաղաքական և պատմական ամսագիր 1906 թուին կըհրատարակուի հետևեալ լրացրած ծրագրով.

1. Ինքնուրոյն և թարգմանական վէպեր, պատմուածքներ ու ոտանաւորներ, այլ և կենսագրութիւններ։
2. Ովկասագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ պատմական վաւերագիր և յօդուածներ։
3. Ժամանարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագրութիւն։
4. Բարոյագիտական յօդուածներ։
5. Մատենախօսութիւն և կրիտիկա։
6. Ներքին տեսութիւն։
7. Արտաքին տեսութիւն։
8. Այլ և այլք, Գիտութիւն և արուեստ
9. Յայտարարութիւններ։
10. Խմբագրութեան պատասխաններ։
11. Յօդուածներ։

,, Լումայի կաչխատակցեն բոլոր աչքի ընկնող հայ գրական ույժերը։

Տարեկան բաժնեգինն է ռուսաստանում 8 ռ. իսկ արտասահմանում 27 ֆրանկ։

Խմբագիր-հրատարակիչ՝ Գիւտ ա. ք. Աղանեանց

Վաճառումից գոյացած ամբողջ գումարը յատկացւում է Բագուից Թիֆլիս գաղթած չքաւոր հայ գիմնազիստ աշակերտների և աշակերտուհիների օգտին։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՒՈՒՄ Է
ՊՐՈՖ. Ա. ԿՐԻՄՍԿԻ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ
ՈՒ
ՆՐԱ ԱՊԱԳԱՆ

Հեղինակից յատուկ թոյլտրւած թարգմանութեամբ
Բաբկէն վարդապետի
(ժզ—170 երես, գինը 60 կոպ.)
Դիմել Թիֆլիսի Գրավաճառներին և թարգմանչին՝
Ս. Էջմիածին
Բաբկէն Վարդապետին
1—6

Առաջին մասնաւոր հիւանդանոց

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնւած 1880 թ.
(Կուկիա, Վարանցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ հ.։
Ն. Մ. Զիկովանի—9 և կէս—10 ժ. աչքի, ներքին և ներքդային հ.։
Մ. Դ. Աւետիսեան—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժ.։
Զ. Ի. Բարսեղեանց —10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Ի. Գրիգորով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.։
Ա. Դ. Նարսպետեանց—1—1 և կէս ժ. ներքին և երեխ. հ.
Կին բժիշկ Շչերբինինա —1 և կէս—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Դ. Յ. Գուրգէնով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. Փուղինով—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Դ. Արեանց—6—7 ժ. ներքին հիւանդութեան։
Բ. Ա. Նաւասարդեան—7—7 և կէս ժ.

Վճարը 50 կ., չքաւորները ձրի։ Համախորհրդի—կոնսիլիումի և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան



ԲԱՐԻ ԿԱՄՔ

(Առակ Մոլդավացուց)

—

Ես ծանօթ էի մի դեր-ձակուհու հետ, որ ունէր մի *անբնական* երեխայ: Ես դիտմամբ ընդգծում եմ, որ զաւակը *բնական* չէր, որպէսզի դուք մի անգամից իմանայիք, որ նա ամուսնացած էր: Շուտով ես ձեզ կը յայտնեմ նրա ամուսնի անունը:

Այդ համակրելի կինը խիստ սիրում էր իր երեխային եւ աշխատում էր իր ոյժի ներածին չափ. եւ որքան հնարաւոր էր նոխ ու նաշակով հագցնել նրան, ամեն կողմից զարդարել ժապաւէններով: Մի օր հագցնում էր նրան պարզ, միւս օրը գոյնզգոյն: Երեխային զարդարելը ամենամեծ վայելչութիւն էր պատճառում մօրը:

Եւ թւում է յաճախ կարելի էր նկատել, որ այս գոյնը չափազանց կարմիր է, կամ շատ դեղին է, կամ, վերջապէս, խիստ զուգաս... որ այս գլխարկը չափազանց մեծ է, այս երեսքողը շատ խիտ է, իսկ այս շղարշը հաստատուն... Թէպէտ եւ երբեմն կարելի էր յանդիմանել մօրը, որ նա նաշակ չունի եւ չէ կարողածում... սակայն յանցանք կը լինէր կասկածել, թէ նա քիչ էր սիրում իր երեխային:

Մօր անունն էր «*Առակ*»:

Հօրը—«*Բանաստեղծութիւն*»:

Իսկ զաւակինը—«*Ճշմարտութիւն*»:

—

Մի անգամ նա մեկին ցոյց տւեց երեխային, եւ նրա աչքերն այդ ժամանակ կարծես հարցնում էին.

—Ո՞ւր է գալիս իմ զաւակս, իմ հարստութիւնս, իմ երջանկութիւնս: Դու միայն տես, թէ ինչպէս քնքոյշ են այս գոյները:

—Այո՛, այս դեղին գոյնը վատ չէ:

Ի՞նչ... դեղինը... այս փոքրիկ այտերը քո կարծիքով դեղի՞ն են: Բայ չէ՞ որ նրանք վարդագո՞յն են: Իսկ նա ասում է *դեղին*:

—Ես ի նկատի ունեմ զգեստը:

Եւ կրկին նա ցոյց տւեց մեկին իր երեխանչեւ նրա աչքերը կարծես հարցնում էին.

—Ո՞ւր է գալիս քեզ իմ զաւակս, իմ մի հատիկս: Նայիր միայն այս ձեւերին, այս փափուկ կլորակ դէմքին, այս գծերին:

Մէջքը չափազանց կարճ է:

—Ինչպէ՞ս: Իմ երեխայի մէջքը չափազանց կա՞րճ է:

—Ես ի նկատի ունէի միայն հագուստը:

Այն ժամանակ... մայրը բարկացաւ: Նրան ցաւ է պատճառում, որ ոչ ոք չէ տեսնում նրա երեխային, այլ նայում են միայն զարդարանքին:

Նա, ի հարկէ, շատ էր սիրում զարդարել թանգագին զաւակին, սակայն միեւնոյն րոպէին բարկացնում էր այն, որ ամենքն էլ ուշադրութիւն են դարձնում միայն հագուստի վրայ, ուստի եւ ամենեւին չեն տեսնում նրա զաւակին:

—

Տանջանքը մարդուն դարձնում է անարդար: Առակը բարկացաւ իր մ... րդու վրայ. ո...

Այդ համակրելի կինը
խիստ սիրում էր իր երեխային:

Իշխան Ոգուր աստծած կրեմոլ իշխան Վլադիմիրը եւ ազատարար փնչուկ ծերունին

րը, իսկապէս, անմեղ էր, բաժանւեց նրանից եւ սկսեց կոչել կուսական անունով *Ամելիա**):

Նա հանեց իր երեխայի վրայից բոլոր շորերը, որոնք ի վնաս նրա գրաւում էին ամենքի ուշադրութիւնը, եւ յետոյ սկսեց ցոյց տալ նրան զանազան մարդկանց, իսկ նրա աչքերը կարծես հարցնում էին ամենքին.

—Ո՞ւր է գալիս ձեզ իմ զաւակը, իմ գանձս. իմ մի հատիկս:

Մի մարդ պատասխանեց նրան.

—Նա անվայել է:

Իսկ միւսները ոչինչ չը պատասխանեցին. նրանք նոյն իսկ չը հասկացան մօր հարցմունքը, որովհետեւ չէին նկատել երեխային:

Այդ բանը վշտացրեց Ամելիին: Նա նորից կապւեց մարդի հետ, որն ուրախութեամբ հաշտութեան ձեռք մեկնեց նրան: Նա կրկին սկսեց կոչւել *Առակ* եւ նորից բռնեց զարդարել իր երեխային:

—Թող, զոնէ, նրանք տեսնեն շորերը եւ այս հրաշալի երիզներն ու ժապաւէնները—թող տեսնե՛ն: Գուցէ մի ժամանակ նրանք, վերջապէս, կը տեսնեմ իմ երեխային եւ կը համոզւեն, որ նա շատ աւելի գեղեցիկ է, քան թէ իր բոլոր զարդարանքները:

Լէոնիդ

ՄՏՔԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Կնութեան առէ՛ք ձեզ բարի նոյն աղջկան: Ֆուլլեր:

—

Կինը անորոշ, կիսամաշ ձեռաիր է: Պօլ Հայզէ:

—

Ռուս դերասանուհու դրութիւնը շատ հեռու չէ հասարակաց նոյն դրութիւնից: Մ. Սալտիկով:

*) **Ամելիա—նշանակում է անտարբերութիւն, անհոգութիւն:**

Խմբագիր հրատարակիչ
Տիգրան Նազարեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահման 10 ր.) Աղբիւր-Տարազ, պրէմիաներով 10 ր. (արտասահման 18 ր.) Տարազ ամիսը 50 կ. առանձին №-ը երկու թերթից 30 կ., մի թերթից 20 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ. վերջին երես 25 կ. մանրատառ (պըտիտ) Արտասահմանից կրկնակի։ Հատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ։

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդւածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չընդունւելիքը (երերթերթից պակաս) չէ վերադարձնում։

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12։

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10¼ ժ. մինչև 2 ¼-ը կէսօրից յետոյ։ Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ Rédaction du Journal TARAZ Caucase Tiflis

դեղարւեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 8 Կիրակի, մարտի 5 — Տասնեւեօթերորդ տարի 1906

Շարունակւում է 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը։
Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գիտութեան, ինքնաճանաչութեան, անձնուիրութեան սերմեր։

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV

և

ՏԱՐԱԶ

Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը։
Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտւած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքւած հայ անդամներ սնուցանել։

XVII պատկերազարդ շաբաթաթերթ XVII

ԱՍՏՈՒԱԾՈՒՀՈՒՆ

Ո՞ւր են ձեր զէնքեր, ո՞ւր ձեր զրահներ,
Ո՞ւր ձեր ամրակուռ ժանգոտ շղթաներ,
Ո՞ւր են տանջանքի ձեր ժանտ գործիքներ,
Ո՞ւր ձեր ահեղ ոյժ, ո՞ւր են ձեր շանթեր։

Դրանք չեն երեւում. բայց դուք արքային
Դուք կաշկանդել էք իր ապարանքում.
Մոռացած բոլոր փառք աշխարհային,
Նա ձեզանից է կեանք ու սէր հայցում։

Ահեղ զօրավարն այն անպարտելի,
Բիւրաւոր ոսոխ ոտքի տակ տւած,
Այժմ կանգնած է նա ողորմելի
Դէմքով ձեր առաջ, գլուխը ծռած։

Ահա մեծատունն այն ինքնահաւան,
Որ կեանքի խաղալ ու կին էր ընտրել,
Տալիս է բոլոր իր գանձն ինքնակամ,
Միայն թէ հաճէք դուք այդ ընդունել։

Բանաստեղծն իր կրակոտ երգերով
Ձեր հրապոյրն է երգում անդադար.
Հմուտ նկարիչն իր վարժ վրձինով
Ձեզ նկարելու չէ գտնում հնար։

Հաւասարապէս դուք կաշկանդել էք
Առոյգ պատանուն, զառամեալ ծերին,
Իսկ Երիտասա՞րդը, որին նայել էք,
Օ՜, նա վաղուց է դարձել ձեր գերին։

Հալածական է դառնում ձեզանից
Բիրտ բռնութիւնը եւ չարութիւնը,
Ինչպէս արեւի ճառագայթներից
Փախչում է խաւարն, հալւում ձիւնը։

Դուք հեզ բեւեռին կեանք էք խոստանում,
Յուսահատւածին ոգի ներշնչում,
Բայց եւ շատերին ձեր վառ բոցերում
Անողոք տանջում, այրում խորովում։

Դուք մի հայացքով փշրում էք շղթան,
Ձեր գութն է հայցում խիզախն անվեհեր.
Ձեր ոյժն է ահեղ, նա չունի սահման,
Ամենազօ՜ր էք անհաս աչե՜ր…

Լէօնիդ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Տարազն այսօրուանից յոյս է տեսնում աւելի նոր մեծացրած դիրքով: Նկատի առնելով, որ թէ օրագիրները եւ թէ շաբաթաթերթերը շատացան ու զբաղւում են առօրեայ կեանքով, մենք *Տարազը* դարձնում ենք զուտ *գեղարուեստական, գրական, գիտական* երևակայական հանդէս, վերապահելով նրա միւս մասնագիտների՝ *Առողջապահի, Գեղարվեստի, Դաստիարակի* յոյս ընծայելն աւելի բարեհաջող ժամանակների: Իսկ մինչեւ այդ, *Տարազում* յատուկ էջեր կը յատկացնէն *Առողջապահի* եւ *Դաստիարակի* համար:

Աղբիւրի բաժանորդներին խրախանչիւր ամսու *մի* կ'ուղարկեն *Տարազի* այն №№-ը, որոնց մէջ կը լինենի տպագրուած *Դաստիարակ*:

Աղբիւր եւ *Տարազ* միեւնոյն հասցէով բաժանորդներին կուղարկուեն այդ հանդէսներն տպագրուած հաստ թղթի վրայ:

ԲԱՑԱՐՁԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

XXVII

Հայ-թաթարական խորհրդակցութիւնները փոխարքայի պալատում շարունակւում են: Հայերը պահում են օրինակելի տակտ, խօսում են իմաստալից: Թաթարները ասիական քաղցրալեզուով հաշտուել են կամենում, սակայն հաշտութիւնը յարատեւ չի կարող լինել, եթէ զրկեն հային ինքնապաշտպանութիւնից:

Ոչ Մառղէր, որ Բերդանի և ոչ իսկ Գրուպպի թնդանօթներով պէտք է պաշտպանել, այլ միմիայն իրաւունքով:

Իրաւունքը՝ մարդուս ազատութիւնն է ա'ձի եւ գոյքի անձեռնմխելութիւնը:

Հայ պատգամաւորները հայի պատիւն ու փառքը աշխարհիս առաջ ոտի տակ տուած կը լինեն, եթէ դաւաճանեն մարդկային իրաւունքը, խլեն նրանից ինքնապաշտպանութեան իրաւունքը:

Ոճրագործները պէտք է երեւան հանուեն, պատժուեն և հայի նիւթական վնասները մինչև վերջին կոպէկները, կառավարութեան երաշխաւորութեամբ, պիտի յանցաւորներն անյապաղ վճարեն:

Այս շրջանակից դուրս հաշտութիւնը խաբուսիկ է և նոյնը, ինչ արել են մինչև օրս համբոյրներն ու թափորները:

Անսպառ աղբիւրներ.

Պարբերական հրատարակութիւնները բազմանում են հայոց մէջ: Գրասէրների համար մեծ ասպարէզ է բացւում. հին գրողները նոր եռանդ են զգում. նրանց գրելու նիւթ է հարկաւոր: Այսուհետև գրիչը պէտք է ընդլայնէ, իր շրջանը, պէտք է դուրս գայ ընդհանուր հասարակական մօտիւների սահմանից և մտնէ, թեակոխէ, աւելի մօտենայ կեանքին, մտերմանայ ընտանեկան կեանքի կենցաղավարութեան շրջաններին, մանրամասն ծանօթանայ նրանց չար ու բարիին, վշտին, ուրախութեան. օրինակելի և պարսաւելի կողմերին և աւելի փոքրիկ շրջաններում—ընտանիքներում, թաղերում, գիւղերում. ինչ և իցէ կերպով նշանաւոր դարձած գործիչ անձնաւորութիւնների կենսագրութիւնները արձանագրէ:

Այդպիսով պէտք է ուսումնասիրել և գրի անցկացնել նշանաւոր վաճառականական տոհմերի ընտանեկան կամ տոհմային քրոնիկները. որչափ ազգային պատմութեան, վէպի, դրամայի նիւթեր կան դրանց անցեալների նկարագրութեան մէջ... Մեր հայոց պատմութիւնը չատ անհաս և աննշան է նրա համար, որ միայն գրում է թագաւորների կռիւները, բայց մենք չըգիտենք բուն հայ ժողովրդի պատմութիւնը, անցեալ կեանքը, որովհետև նախնի մատենագիրներն այդ նկարագրութիւններ չեն արել:

Այս մէկ: Երկրորդ՝ գրի պէտք է առնել հին, մեծ, գիւղական օջախների պատմութիւնը և նրանց նշանաւոր անձնաւորութիւնների կենսագրութիւնը:

Երրորդ՝ պէտք է հետաքրքրուել և արձանագրել գիւղական և քաղաքային նշանաւոր քահանաների, տիրացուների, վարժապետների, ուսուցիչների և վարժուհիների կենսագրութիւնը՝ թէ հանգուցեալների և թէ կենդանիների, ինչ գրի առնելու, ի՛նչ սրտաշարժ, օրինակելի և դրամատիկ ու պատմական նիւթեր կան դրանց կենսագրութեան մէջ... Գրեցէք առաջնորդ եպիսկոպոսների, յարդ վարդապետների, վանահայրերի կենսագրութիւնները, ինչ որ էլ լինեն, գործերով, արկածներով, էպիզոդներով, իրենց պատկերներով: Նկարագրեցէք ներկայ կեանքի տեղի ունեցող մասնաւոր մարդկանց նշանդրէքները, պսակները, մկրտութիւնները, պիկնիկները, թաղումները և այլն... Փոխանակ ֆանտազիային զօռ տալու, գրեցէք իրականը, ճշտօրէն, մանրամասն, վայելուչի սահմանից չանցնելով:

Այդպիսով թերթերը իրենց բուն կոչումին կը ծառայեն, տալով կեանքի իսկական և կատարեալ պատկերը:

Իսկ գրասէրները կը վարժուեն հետազօտութեան, դիտողականութեան, տոկունութեան. գրիչները կը դառնան սօլիդ, լուրջ, վասն զի զինուած կը լինին փաստօրէն ուսումնասիրած հարուստ պաշարով և գրելու նիւթի անսպառ աղբիւրներով:

Դպրոցական

Գէորգեան ճեմարանը խաղաղ չէ, վրդովւած է դպրոցական կեանքը և Երեւանայ թեմական ուսումնարանում: Աշակերտական կապրիզներ չեն սրանք և ոչ ըմբոստութիւններ, այլ ժամանակի պահանջները, որ հասունացել են և անկարելի է զանց առնել կամ ճնշել հնացած զէնքերով:

Գէորգեան ճեմարանը աւել է ազգին օգտաւէտ, բարձր ուսում առած և և աշխարհն ու ժամանակը ճանաչող հոգևորականներ: Սրանք իբրև Գէորգեան ճեմարանի սաներ, մեզանից աւելի լաւ են իմանում այդ ազգային բարձր հաստատութեան կարծքները և գիտեն նրա թերի կողմերը,—ահա սրանք ի սէր իրանց մայր կրթարանի պարտաւոր են ժողովել ս. Էջմիածին, խորհրդակցել, հրաւիրել դրսից ձեռնահաս մասնագէտ մանկավարժների և կազմել թէ Գէորգեան ճեմարանի և թէ մեր թեմական դպրոցների համար ժամանակի պահանջներին համապատասխանող ծրագիրներ:

Գեղարուեստական քրոնիկոն

Անցած շաբաթ Թիֆլ. սի թատրոնները գրաւեցին մեծ ժողովուրդ. արք. թատրոնում Իւժին սմբուսիննների պատրօնները սկսեցին արժանանալ երաժշտասէր Թիֆլիսի ուշադրութեան: Յաջող էին մանաւանդ Տոսկա, Աիդա, Կարմեն: Տ. Իւժինա-Երմոլենկօ համեմատաբար նոր երգչուհի է, բայց ձայնն այնքան ընդարձակ, զօրեղ, քնքոյշ, որ սպասում է նրան մեծ ապագայ, եթէ միայն ի չարը չը գործադրէ աստուածային այդ պարգևը: Համարեա ամբողջ շաբաթ երպատասխանատու դերեր, որ չափազանցութիւն է:

Տենոր Բոյխուգարեանի դերւտը Լէօնկովալու Միմոսներում բերել էր մեծ բազմութիւն հայերից, որ բռնել էին օթեակները և թատրոնական դահլիճը:

Արտիստիկ. ընկ. թատրոնում էլ Մէյերխօլդի դրամատիկական խումբն է ուշադրաւ: Չերիկովի Հրեայ պիէսը սարսափեցնում է հանդիսականներին, զայրացնում, հեկեկալ տալիս և...

Ո՜րքան զառն է կեանքը, ո՜րքան մեծ է մարդկային վիշտը:



Մամիկոնեան առիւծը

Եւ կարօտի անուշ նազով
Ողջոյն տուեց ծեր սարին,
Ձորքը քցած օլոր—մոլոր
Ախուրեանի ջրերին...

Ապա անցաւ ժէստ Տայքի
Հսկայական լեռները,
Որոնց վերայ հանգչում էին
Հայոց անյաղթ բերդերը:

Ուր Պոնտոսի ծովի ափին
Տեսաւ ամրոցն Երախան
Ժանիքները երկինք ուղղած՝
Որպէս վիշապ անսասան:

Տեսաւ այնտեղ մենակ նստած
Հայոց Բաբգէն զուսանին,
Որ խփում էր սիրտը կրակ
Բամբուռի անուշ լարերին:

Որ թողնելով մենակ տխուր
Իր սիրուհուն ողբալու,
Դուրս էր եկել Գողթան եզերքից
Ազգի ցաւը երգելու:

Եւ լուսինը լսեց վերից
Երգը մաքուր զուսանի,
Ուղղած հզօր ու միշտ անյաղթ
Հայոց քաջին ամենի:

ԳՈՒՍԱՆԻ ԵՐԳԸ.

Գ.

—«Դո՛ւրս եկ, Վահա՛ն, դո՛ւրս եկ, դիւցա՛զն,
Եւ կրակի դաշտ շտապի՛ր,
Քեզ է կանչում հայրենիքը
Դէպ Զարեհանդ սըլացի՛ր:

«Հայոց քաջին մեծ ամօթ է
Տանը նստել միայնակ,
Երբ հայրենիքն հառաչում է
Բռնակալի լծի տակ:

«Զէնքը ձեռին քեզ են սպասում
Հայրենիքի քաջերը.
Հառաչում են հայոց Մասիս,
Արտագ, Սիփան լեռները

«Հայ կտրիճը վայր չի՛ դնիլ
Անեղ զէնքը իր ձեռքից,
Քանի աւեր հայրենիքը
Հառաչում է խոր ցաւից:

«Քարանձաւի անանց կրճում
Զէնք են սրում ու զինւում,
Նրանց ձայնի դոռ որոտը
Սար ու ձորէ գղրդում:

«Առիւծն այնտեղ փախս է տալիս
Հայ քաջերի մռունչից,
Վախից արծիւն էլ չի՛ անցնում
Հայոց լերանց վերայից:

«Աւեր երկրի սար ու ձորեր
Կրակ դարձած քեզ կուզեն,
Հասի՛ր դիւցազն, հասի՛ր շուտով՝
Նըպատ, Սիփան քեզ կուզեն»...

Բարցր էր հնչում երգչի ձայնը
Գիշերային մըթի մէջ,
Մեղմը էր հնչում այն բամբիռը
Նրա ցաւն էլ էր անվերջ:

Եւ լուսինը պայծառ երկնից
Լսեց երգը գիւթական,
Որ զովում էր Հայոց երկրի
Կտրիճներին յաղթական:

Տեսաւ վերից բերդն Երախան
Պարիսպներով թեւաւոր,
Որ ծաղրում էր հպարտ ծովին
Եւ ժայռերին ահաւոր...

Մեր թղթակիցները

—

Երևան 26 փետրուարի.

ԵՐԵՒԱՆԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐ-

Երևանի գործակատարների ընկճուած ու անբարեկարգ դրութիւնը բարելաւելու, նրանց թէ տնտեսական և թէ մտաւոր—բարոյական մակերևոյթը բարձրացնելու համար, անցեալ տարուայ վերջերին պ. Սիրեկան տէր Մարտիրոսեանի նախաձեռնութեամբ և տեղիս մի խումբ բանիմաց երիտասարդների աջակցութեամբ կազմւեց վերոյիշեալ անունը կրող ընկերութեան կանոնադրութիւնը, որը և շուտով հաստատւեց տեղիս նահանգապետի կողմից։

Ուրիշ անգամի թողնելով, այդ համակրելի և օգտակար ընկերութեան նպատակի, անհրաժեշտութեան ու արժանիքների մասին մանրամասն տեղեկութիւն տալը, մենք այժմ միայն յիշում ենք նրա մի գեղեցիկ ձեռնարկութեան մասին։

Հազիւ երկու ամիս է, որ այդ ընկերութիւնն այս տարուայ սկզբից սկսել է իր գործնէութիւնը և ահա նա բաց արեց իր անդամների և Երևանի հասարակութեան համար «ընթերցարան».

Թէ որքան անհրաժեշտ էր դա Երևանի գործակատարների համար, այդ պարզ նկատւում էր ամեն անգամ, երբ հարց էր տրւում Երևանում գործակատարներին աւելի ազատութիւն տալու և խանութների բացման ու փակման գործը կանոնաւորելու համար։ Բաւական էր որ հին ադաթի սովորած վաճառականին ասէիք, թէ երեկոները խանութը պէտք է փակել ժամի 7 ին և նա իսկոյն ընդհատում էր ձեզ ծանր ու անդիմադրելի խօսքով. «իսկ այդ ժամանակ ուր պիտի գնայ հանգստանալու համար գործակատարը, որտեղ պիտի անցկացնի նա երկար գիշերը—գինետներում թէ զարեջրատներում, կանաչ սեղանի շուրջը թէ՞ անառականոցում...» Որքան էլ անարդար լինեն այդ մեղադրանքները այդ իրաւազուրկ ու տանջւած դասակարգի հասցէին, այնուամենայնիւ չը կար մի տեղ, ուր կարելի լինէր համախմբել գործակատարներին հնարաւորութիւն տալու համար նրանց արտայայտելու իրանց վշտերն ու խղձերը, մտաւոր սնունդ տալու նրանց և այդ կողմից ընթերցարանի պակասութիւնը զգալի էր։

Գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութիւնն ահա աշխատեց ամենից առաջ բաւարարութիւն տալ այդ անյետաձգելի պահանջին։

Փետրուարի 19 ին կիրակի օրը կատարւեց ընթերցարանի հանդիսաւոր բացումը։

Գովելի է վարչութեան եռանդը. շնորհակալութեան արժանի են այն երիտասարդները, որոնք նիւթերն են յանձն առնում այդ գործին ծառայելու մէջ։

Ցանկանումենք կատարեալ յաջողութիւն։

Նոյնն ենք ցանկանում և վարչութեան միւս օգտակար որոշմանը-յաջողեցնել մինչև այս սեպտեմբեր բանալ Երևանում առևտրական դպրոց։

-եան.

Մամուլի շուրջը

—

Անցեալ կիրակի լոյս տեսաւ պ. Գարեգին Երեցեանի ռուսերէն Կուկրուկու երգիծաբանական շաբաթաթերթը, որը զրկեց իշխանութիւնը, դադարեցրեց նրա հրատարակութիւնը և խմբագրին էլ դատի ենթարկեց։

Լոյս տեսած Վօզրօժդ. լրագրի №№-ը նոյնպէս զրկեց իշխանութիւնը և թերթի հրատարակութիւնը կանգնացրեց, սրա փոխարէն սկսեց հրատարակել Կավկազ. Ուտրօ (Կովկասեան առաւօտ), բայց սա էլ իր նախորդի վիճակին ունեցաւ, այժմս էլ այդ երկու թերթին պէտք է փոխարինէ Սովրեմեննիկ մի ուրիշ նոր լրագիր. պ. Կանչելու խմբագրութեամբ։

—Երգեցեալ հաւատարմատար պ. Եսայի Դօլուխանեանն էլ ձեռք է բերում Կավկազ. միսըլ (Կովկասեան միտք) անունով ռուսերէն մի օրագրի իրաւունք։

Պ. Բ. Իշխանեանի Կեանք օրագիրը լոյս չէ տեսնելու քաղաքական հանգամանքները նկատի առնելով և փոխարէնը հրատարակելու Կեանք շաբաթաթերթը, որի բաժանորդագինը Թիֆլիսում ամսական 20 կ. է լինելու, իսկ դուրսը 30 կ։

—Արշալոյս օրագիրը, ինչպէս նախազուշակել էինք, այնպէս էլ արաւ, հատավճարը 3 կ.—ից բարձրացրեց 5 կ., այժմս մնում է, որ բաժանորդագինն էլ նշանակէ նոյնքան, որքան Մշակինը և Նոր-դարինն է։ Անփորձութեամբ Արշալոյսը սկսելով մեծ հարայհրոցով, նիւթական վնաս հասցրեց թէ Մշակին և թէ Նոր-Դարին. սակայն սրանք փորձւած լինելով աւելի ծանր պատահարների քան նիւթականը, դիմացան, բայց Արշալոյսը ընկճւեց։ Ցանկանք, որ ապագայումն էլ այդ թերթը չըհամարէ դրամը ոյժ և աշխատակիցների անպայման վարձատրութիւնը թերթի բարգաւաճման իսկական հիմք։ Եւ թող իր ձեռքի մէջ փչրի այն գրիչը, որը ստեղծագործութեան, ճշմարտութեան թէ գաղափարի համար աշխատելիս անարգ կոպէկներով պիտի գեկավարւի,

—

Նօվօստի լրագրի խմբագիր Պ. Նատովիչ թողել է այդ թերթը և ձեռնարկում է ինքը մի նոր օրագրի հրատարակութեան, իսկ Նօվօստի-ի խմբագիրներ հրաւիրւած են պպ. Պ. Ն. Սիլինկով և Ց. Վ. Հէսէն։ Լրագիրը փոփոխութիւնների է ենթարկւում և այդ պատճառով № 43-ից մի քանի օր համարները չեն լոյս տեսնում։

—

Զառամեալ Սուվօրինի Նով. Վրեմիայի օրերը կարծէք համրւած են. հարւած, հարւածի վրայ է ստանում նա։ Պաշտոնական, ֆինանսական յայտարարութիւններ, որ տպագրւում էին այդ լրագրում և պետական գանձարանը տարեկան հարիւր հազար ռուբլի էր տալիս այս պատրւակով Սուվօրինին, այլես դադարել է նպաստ տալուց, որովհետև այդ գումարը յատկացնելու է մինստրական նոր օրգան Գօլօս գօսուդարստվա (Պետութեան ձայն) լրագրին, որ պետական գանձարանից եօթհարիւր հազար ռուբլի տարեկան նպաստ պիտի ստանայ։

—

Բանաստեղծ պ. Գրիգոր Բալասանեան մտադիր է Թիֆլիսում Մուսա բանաստեղծական անունով մի շաբաթաթերթ հրատարակելու։ Եւ մինչդեռ Թիֆլիսում իւրաքանչիւր շաբաթ մի նոր թերթ է հրապարակ գալիս, գաւառը մնում է լուռ և անտարբեր։ Շուշին, Երևանը, Ալեքսանդրօպօլը պէտք է որ ունենան իրանց ամենօրեայ թերթերը։ Հրատարակիչները կունենան իրանց սեփական տպարանները և օրւայ պօստն ստանալուն պէս մայրաքաղաքների և Թիֆլիսի լրագրներից իսկոյն քաղւածք կանեն, կը մտցնեն տեղական օրւայ եղած չեղածը ու լրագիրը փոքր դիրքով հրապարակ կը հանեն և կը տարածեն քաղաք եկած գիւղացիների ձեռքով հատը մի կոպէկով շրջակայ գիւղերում։ Հրաւիրում ենք մեր գաւառական ոյժերին հիմնելու իրանց քաղաքների և գիւղերի օրգանը։

ՆՈՐ-ԴԱՐ

Քաղաքական գրական հասարակական ամենօրեայ մեծադիր լրագիր

Տարեկան բաժանորդագինը 10 ր. Արտասահման 40 ֆրանկ։ ([illegible])

Խմբագիր հրատարակիչ՝ Սպանդար-Սպանդարեան

Եւ թողնելով հայ գուսանին
Խոհերի հետ առանձին,
Լուսինն անցաւ ողջոյն տալու
Համատարած մեծ ծովին։

Նորից երգեց հայ գուսանը
Բամբռին խփեց նա նորից,
Բայց գիշերւան խաղաղ ժամին
Մարդ դուրս չեկաւ ամրոցից։

Եւ վշտացած հայ երգիչը
Տխուր սրտով վեր կացաւ,
Փոշոտ բամբիռն ուսին գցած
Արագ—արագ հեռացաւ...

(Դը շարունակի)

Պետ. Մոճոռեանց

—

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԵՒ ԱՊԱԳԱՅՈՒՄ

(Ա. Բեբել)

—

(Սկիզբը Տարազ № 7)

Երեք բանւոր, նա խիստ շահագրգռւած է ընդհանուր սոցիալական օրէնսդրութեան մէջ. բանւոր-դասակարգին վերաբերեալ բոլոր հարցերը հաւասարապէս վերաբերում են և նրան. ապրում ենք մենք գործերի դրդապատում առողջ կամ թէ այսպիսի պայմաններում երբ աւելի ճգնաժամերին փոխարինում են արդիւնաբերութեան ծաղկեալ շրջանները, այդ ամենը չեն կարող կնոջ համար միևնոյնը լինել։ Մի խօսքով, ոչ մի հասարակական երևոյթ չէ կարող կնոջ համար էլ չունենալ նոյնպիսի հետաքրքրութիւն, ինչպէս և տղամարդի համար, և եթէ նա ամուսնացած է, ապա այդ հետաքրքրութիւնն աւելի ես մեծանում է։

Կինն, իր անօգնական դրութեան պատճառով, աւելի շատ կախումն ունի շահագործողից, քան թէ վերջին պրոլետարը. նա յաճախ ստիպւած է լինում նրա և նրա ծառայողների անարգանքին մատնել իր պատիւը։ Մեծ քանակութեամբ կանայք, որոնք պարապում են մեր գործարաններում, մեր մօդային խանութներում, կանանց ձեռագործի խանութներում, գրասենեակներում, բիւրօներում եւն. ծառայում են իրանց իշխանաւորների վաւաշոտ կրքին։ Այդ հիմնարկութիւններից շատերն ըստ ինքեան ներկայացնում են իսկական հարեմներ։ Թէ այն կանայք, որոնք սիրով ու յօժարակամ անձնատուր են լինում այդ անարգում ծառայութեանը և թէ նրանք, որոնք այդ անում են ստիպւած, ամենքն էլ կանանց սոցիալական դրութեան զոհերն են։ Սակայն բաւական չէ, որ չամուսնացած կինը պէտք է յաճախ զոհէ իրան «հայց տւողի» կրքին ծառայելու համար, հազւադէպ չեն և այնպիսի դէպքերը, երբ հարուստ և բարձր դիրք ունեցող անառակ տղամարդը ներս է մտնում ուրիշ ընտանիքի մէջ և իր ձեռքում գտնւած մարդի օգնութեամբ ստիպում նրա կնոջն անձնատուր լինել իրան։ Բանւորների ու աստիճանաւորների շրջանում ես պակաս չեն այդպիսի օրինակները։ Այդ ամենի պատճառները, կրկնում ենք, գտնւում են միայն մեր սոցիալական պայմանների մէջ։

Իսկ ներկայ հասարակութիւնը պարծենում է իր բարոյականութեամբ, նա ամուսնութեան սրբութիւն է քարոզում և գովաբանում իր բարեկներն ու իր կրթութիւնը։ Սակայն ով քննում է նրան անաչառ կերպով, նա բոլորովին հակառակ եզրակացութեան է գալիս։ Ուստի և միակ միջոցն է առողջ պայմանների վերականգնումը սոցիալիզմի հիմունքների վրայ։

Լ. Մարկոսեան.

—

Մեր պատկերները

ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ ԲԱՆՏԻ ԱՌԱՋ

Նկար Ռ. Ռէնգամորի

Բանւոր էր նա, արիւն քրտինքով հալալ հաց աշխատող։ Տուն ու տեղ էր սարքել, կին, երեխաներ ունէր։ Բայց ընկերոջը նեղ օրին նա նեցուկ եղաւ, նրա արդար բողոքին ինքն էլ մասնակցեց։ Եւ ահա ութ ծիգ տարիներ սա շղթայւած բանտի խորքերում իր անմեղ մեղքն է քաւում։ Իսկ այսօր նրան թոյլ են տւել իր երեխային մի քանի ժամ գրկել, առնել եւ մօրմոքել։ Վաղը սա երկար ճանապարհ է գնում, գնում է տաժանակիր աշխատանք անելու։ Հարուստին ոսկի է պէտք, նրա փարթամ դստերը ադամանդներ։ Ահա եւ գնում է բանւորը զետնի տակի մայրերի անդունդներից ոսկիներ հանելու ադամանդներ կտրելու։

ԹԻՖԼԻՍ ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿ. ԹԱՏՐՈՆ

Առաջին իգական գիմնազիայի ծնող. շրջանը

Մարտի 13—ին յօգուտ նոյն գիմնազիայի ուսմանավճարն անելու անկարող աշակերտուհիների սարքում է ներկայացում։ Խաղալու է Մէյիրխօլդի դրամատիկական խումբն առաջին անգամ,

Բ ո ւ ր ի Ի ւ լ ի ա

Տոմսակները կարելի է ստանալ նոյն գիմնազիայում եւ ընկ. գանձապահուհի իշխանուհի Բեհբութեան։

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ԺԸ ԴԱՐՈՒՄ

Պրօֆեսսօր Վիլհէլմ Օստւալդ

Արուեստ եւ գիտութիւն

Գիտութեան և արուեստի մէջ եղած կապը՝ միշտ միակողմանի է եղել: Գիտութիւնը, կամ գոնեա, նրա յայտնի մասը, որ անւանւում է *էսթետիկ* (գեղեցկագիտութիւն) ժամանակ առ ժամանակ քիչ թէ շատ եռանդով իր խնամակալութեան տակ էր առնում արուեստին և փորձում էր նրան կրթել, իրաւ է, ոչ որպէս չափազանց սրբտակից, այլ խստապահանջ մօրաքոյր. Արուեստը իր կողմից երբեմն արտայայտում էր լի ու լի հնազանդութիւն դէպի այդ կրթական փորձերը: Բայց այդ փորձերը նրան օգուտ չէին բերում և վերջ ի վերջոյ նա էսթետիքական քաղաքավարութիւնից իրան վատ զգաց: Այն ժամանակ նա սկսեց դէպի մի այլ ծայրայեղութիւն, սկսեց իր մօրաքրոջը լիովին արհամարհանք ցոյց տալ, ատելով ատեց նրան և բաւեց, որքան կարելի է, նրա ցանկութիւններին հակառակ գնալ: Որովհետև ներկայումս մենք գործ չունենք այլևս դաստիարակչութեան կարօտ երեխաների հետ, ուրեմն կարելի է ենթադրել, որ մօրաքրոջ դէմ բարձրացած ապստամբութիւնը արուեստի համար շատ օգտաւէտ էր: Այն ինչ՝ վայելուչ յարաբերութեան ժամանակ մօրաքրոջ հսկողութեան տակ նա մաքուր հագնուած և մազերը կոկած մի էակ էր, որին սպառնում էր նեխածութիւն և սակաւարիւնութիւն. ապստամբուած օրերում նա չափազանց առողջ և առոյգ դարձաւ, թէպէտ քաղաքավարութեան կողմից նրան շատ բան է պակասում: Վերջ ի վերջոյ՝ մի կողմից մենք տեսնում ենք մօրաքրոջ մէջ հաստատապէս ամրացած համոզմունք թէ առանց նրա օգնութեան և ղեկավարութեան արուեստը ապրելու հնար չունի, միւս կողմից արուեստի հայեացքը, թէ լաւ է, որքան կարելի է մօրաքրոջից հեռու մնալ և թէ իսկական կեանքը այնտեղ է սկսւում, ուր մօրաքոյրը երբէք ոտք չէ դնում:

Կեանքի մէջ այդպիսի ընդհարումները ողբալի պատահառով են վերջանում և միաժամանակ խնամակալութեան տակ գտնւող երեխան վերջ ի վերջոյ փախչում է նրանից, եթէ միայն մօրաքոյրը չէ մեռնում: Այդ նրանից էր առաջանում, որ երկու կողմն էլ աւելի և աւելի հասակ են առնում, հետևապար, նրանց հակառակութիւնը քանի գնում սաստկանում է: Սակայն, գիտութեան և արուեստի ընդհարման մէջ այդպիսի ելք չէ կարող լինել: Առաջինը այն պատճառով, որ գիտութիւնը և արուեստը անմահ են, երկրորդը, որովհետև նրանք չեն կարող իրարուց անջատուել: Իրաւի, ուր էլ որ արուեստը փախչի, նա ամեն տեղ կը հանդիպի գիտութեանը: Իսկ գիտութիւնը, չընդունելով մինչև այժմ արուեստի կողմից տեսած ապերախտութեանը, չէ կարող այնուամենայնիւ նրանից ձեռք վեր առնել: Այս պատճառով հարց է ծագում՝ արդեօք չէ կարելի նրանց մէջ համաձայնութիւն հաստատել:

Ես կարծում եմ, որ այդ հարցին կարելի է դրական պատասխան տալ, գոնեա, պայմանաւոր ձևով: Եղել են վայրկեաններ, երբ նրանք խաղաղ ապրում էին կողք կողքի, ի խնդութիւն իրանց բոլոր բարեկամների. առաջ բերենք միայն *Լեոնարդօ-դ Վինչիի* եւ *Ալբրէխտ Դիւրերի* անունները: Այդ մարդկանց կրծքի և գլխի մէջ ոչ միայն ոչինչ հակառակութիւն չկար գիտութեան և արուեստի վերաբերմամբ, այլ և նրանք փոխադարձաբար օգնում էին իրար: Առանց իրանց ունեցած գիտական տեղեկութիւնների այդ մարդիկը չէին կարող այնպիսի երևելի արուեստագէտներ լինել, իսկ առանց իրանց արուեստին նրանք զրկուած կը լինէին իրանց գիտական ձգտումների և գիտական հայեացքների ամենալաւ մասից:

Դուք կարող էք ասել, որ դրանք եզական, բացառիկ երևոյթներ են, որ հաստատում են միայն կանոնը: Առաջինի հետ ես համաձայն եմ, երկրորդը ես ինձ թոյլ եմ տալիս հերքել: Ինձ յայտնի չէ աւելի անմիտ դարձուածք, քան թէ այն, որպէս թէ բացառութիւնները հաստատում են կանոնը. իմ լոգիկան, որքան ես տիրում եմ նրանով, ասում է ինձ ընդհակառակը, որ բացառութիւնները կամ բոլորովին ոչնչացնում են կանոնը, կամ առնուազն նրան կարծիքաւոր են դարձնում: Ուրեմն, երբ մենք յանձին վերևը յիշած գիտական արուեստագէտների, հանդիպում ենք այդպիսի երևոյթների, որ մեր մէջ հրճւանք են յարուցանում, մենք չպէտք է աշխատենք ազատուել նրանցից վերևը առաջ բերած դարձուածքով, այլ քննել, թէ արդեօք կարելի եղաւ այդպիսի գեղեցիկ և անգին երևոյթ, որ մենք յետոյ հնար ունենանք նրան, որտեղ կարելի է նորէն վերստեղծել, կամ գոնեա, նպաստել նրան այնտեղ, ուր նա յուսալի է, որ կարող է ծնել:

(*Կը շարունակի*)

Լէօնկօվալլօ
Երաժշտապետ *Միմոսներ*, *Զազա* եւ այլ օպերաների հեղինակ

Հաուփման
Դրամատուրգ

Մուրացան
Մատենագիր եւ հեղինակ *Ռուզան* ողբերգութեան

Պրօֆեսսօր Յակոբեան
Հայկական հարցը Լոնդոնում արծարծող: Օրերս այնտեղ հայկական երեկոյթը ղեկավարեց եւ ճառախօսեց:

Ջրօսանք Իտալիայի ափերով

Բանւորի վերջին հրաժեշտը զաւակին եւ կնոջը բանտի առաջ

ԶՕՐԱԿԱՆԻ ՈՐԴԻՆ

Բ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ.

(Տե՛ս «Տարազ» N 5)

Անչափ ուրախ էր ծերունի Բարկէնը. նա այժմ պարծանքով կարող էր ասել, որ իր որդին հայրենիքի արժանաւոր զաւակ է: Իր փոքրիկ Վահունիկին զինուորների շարքում պէտք է տեսնի... այս դէպքն էլ ծերունու համար այնքան ուրախալի էր, որքան իր հինաւուրց յաղթութեան յիշատակը: Նա դուրս եկաւ փողոց, որ լսէ ժողովրդի կարծիքը, իմանայ, թէ ի՛նչ է մտածում անտարբեր իշխանը անփոյթ ժողովրդի հետ միասին: Տեղեկանայ՝ թէ սպարապետի հրամանը դեռ չէ՞ ստացւած. կամ թէ թշնամին երկրի մինչև ո՛ր մասն է հասել. կամ նա աւերում է, ջարդում ամեն հանդիպածին, թէ խաղաղ մտնում է երկրի սրտին:

Մեծ հրապարակի վրայ կանգնած էր ամեն հասակի և դասակարգի մարդկանց մի խուռն բազմութիւն: Նրանք տաք—տաք վիճում էին գալիք պատահարների մասին և զանազան ենթադրութիւններով գուշակում էին ցաւ, որ իշխանն արդէն ստացել է սպարապետի հրամանը, որով հրամայւում է 10,000 հետևակ զօրքով վաղը առաւօտեան իսկ շտապել դէպի Կարմիր գետի ափը, Գողթըն գաւառում:

—Մի՞թէ թշնամին մինչև Գողըն է հասել, մի՞թէ արդէն անցել է Արցախի ձորերը, հարցրեց զարմացած ծերունին իր հետ խօսողներից մէկին:

—Ո՛չ, Գողթան գաւառում միայն պէտք է լինի ընդհանուր զօրաժողովը, իսկ այնտեղից հետևեալ օրը պէտք է առաջ խաղալ դէպի թշնամին, որը դեռ նոր է մտել Վասպուրականի սահմանները:

Ծերունին յօնքերը կիտեց. նա չէր սարսափում այդ պատերազմից, բայց մի ինչ որ ներքին ոյժ նրան ստիպում էր աւելի և աւելի մեծ նշանակութիւն տալ գալիք պատահարներին: Նրա սրտում Հայաստանի ամեն մի աւանի, ամեն մի գիւղի, ամեն մի նահանգի և գաւառի անունը կրկնում էր մի մի յիշատակ: Բաւասուն տարի նիզակը ձեռին, սուրն ու ասպատը կողքից կախ արած, հետևում էր ծերունի զօրականը իր հայրենիքի դառն բաղդին: Մի տարի նա կանչւում էր դրօշակի տակ սպարսից դէմ պատերազմելու, մի ուրիշ տարի—յունաց. երորդին—մի ինչ որ լեռնաբնակ հրոսակների աւերումների առաջն առնելու համար, մի այլ անգամ մի ներքին կռիւ կամ ապստամբութիւն խաղաղացնելու համար և ծերունի Բարկէնը առանց տրտունջի, սիրով և համբերութեամբ տանում էր այս ամեն նեղութիւնները, հանդարտ համոզւած լինելով, որ ճշմարիտ փառքը անընկճելի ոյժի մէջն է; կամ միակ անդորրութիւնն ու հանգստութիւնը պէտք է որոնել ազատութեան մէջ: Նա զինւոր էր, նա անբաղդ հայրենիքի զինւոր էր բառի բուն նշանակութեամբ: Հայաստանի բոլոր իշխանները ճանաչում էին ծերունի զօրականին: Նա համարեայ բոլորի հետ էլ եղել էր ճակատամարտերի մէջ: Զօրականը մի ընդհանրացած մարդ էր. Նրա անունը լսւում էր բոլոր շրջաններում, նրան ճանաչում էր Հայաստանի ամբողջ զինւորական ոյժը: Մէկ խօսքով ծերունի Բարկէնը այն մարդկանցից էր, որոնց համար չը կայ մի աւելի մեծ սրբութիւն, քան հայրենիքը. չը կայ մի աւելի մեծ ուրախութիւն՝ քան թշնամու արիւնով յագենալը և չը կայ մի աւելի մեծ ցանկութիւն ու փափագ՝ քան իր հայրենիքը միշտ յաղթող տեսնելը: Ահա թէ ով էր ծերունի Բարկէնը, որի հետ խօսողներն այնքան պատկառանքով էին վերաբերւում դէպի ինքը:

Ո՞վ տեղեկութիւն բերեց, հարցրեց ծերունին:

Սպարապետի մանկլաւիկ Յուսիկը, լի պատկառանքով պատասխանեց մի միջահասակ մարդ,

Իսկ ընդհանուր զօրքի թիւը որքա՞ն պէտք է հասնի, այս մասին ոչի՞նչ չասեց:

Այո՛, երկար խօսեց. նա ասեց, որ զօրքի թիւը մինչև 70,000 պէտք է հասնի և պատերազմին պէտք է մասնակցեն բոլոր նախարարները:

Բարի է, շշնջեց ծերունին, մի աննշմարելի ժպիտով: Այս մասին քաղաքացոց յայտնեցի՞ն»:

Ո՛չ, դեռ ևս ոչ մի հրաման չէ դուրս տւած, և մենք այժմ սպասում ենք իշխանի մունետիկին:

Հ՛՛, ըմ այժմ ամեն բան հասկացայ. ասեց զօրականը ընկնելով մի խոր մտածմունքի մէջ,

Ամբոխը դեռ ևս շարունակում էր իր վիճաբանութիւնը, երբ ընդհանուրի ուշադրութիւնը գրաւեց իշխանի մունետիկի բարձր ձայնը:

Վաղն առաւօտեան, արեծագին, բոլոր զինուորները պարտաւոր են պատրաստութեամբ հանդերձ ներկայանալ ասպարանքը: Պատերազմն անխուսափելի է: Պատրա՛ստ ենք, պատրա՛ստ ենք, կրկնեցին մի խումբ քաղաքացիներ, ուրախ-ուրախ դիմաւորելով մունետիկին:

Ժողովուրդն իր անելիքը հասկացաւ: Մի խուլ շշուկ, մի ուրախ դղրդացրեց ամբողջ Դւինը:

Երիտասարդ վաճառականն իր կրպակը կողպեց, հողագործն սրօրն ու գութանը դաշտում թողնելով՝ դէպի զէնքը վազեց: Գողթան երգիչը բամբիռը վերցնելով՝ հին դիւցազնների գործքերը երգեց: Վաշխառուն հագցնում էր աղքատ զինուորին: Թշնամութիւնը մոռացւեց: Վաղը առաւօտեան նրանք ամենքն էլ մի սուրբ դրօշակի տակ պէտք է միաւորւէին մի սուրբ նպատակի համար...

ՔՈՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ

Հօր հեռանալուց յետոյ Վահունիկը վազեց մօր մօտ և յայտնեց թէ հայրիկն ընդդէմ չէ իր պատերազմ գնալուն:

«Ա՛խ, գիտե՛ս թէ որքան գեղեցիկ բան է պատերազմը, մայրիկ, բացի այն որ պարտքդ կը կատարես, ինչքա՛ն էլ կը սիրւես և յարգւես ուրիշներից»:

Մայրը պատասխանի փոխարէն մի թեթև ժպիտով նայեց որդուն և հեռացաւ իր գործին: Վահունիկի ուրախութեանը չափ չը կար. նա սկսեց վազվզել սենեակի երկարութեամբ, երգել, աղաղակել, ցուցանել պատերազմ պէտք է գնամ աղաղակում էր նա: Ուրեմն, մտածում էր երեխան, մի օր էլ ինքը կարող էր մի այնպիսի յարգւած զինուոր լինել, ինչպէս այսօր իր հայրն է. և գուցէ մի օր էլ իրան աջողւի զինուորականի պատւի հետ միասին թշնամու ձեռքից սուրը փախցնել: Մինչ, դեռ երեխան ուրախանում էր այս մտքերով, ներս մտաւ նրա փոքրիկ քոյր Հռիփսիկը: Վերջինս տեսնելով իր եղբօր արտասովոր աղաղակը մի բարկացկոտ հայացքով դարձաւ դէպի եղբայրը—

«Մի՛ աղաղակէ, Վահունիկ»:

«Թեզ ինչ. մի՞թէ այս էլ ես. ուզում արգելել, իշխանուհի. բայց Աստւած տեսել է որ դու, հայրիկի ասածի նման, իշխում ես միայն մեր երեքիս վրայ, իսկ Աստւած ոչ անէ, ինչ կը լինէր քո դրութիւնը եթէ մի երկրի իշխանուհի լինէիր»:

Քոյրը, եղբօր խօսքերի կշտամբանքը հասկանալով կիտեց իր գեղեցիկ յօնքերը:

Մայրիկի գլուխը կը ցաւի մի աղաղակիր ասում եմ, կրկնեց քոյրը:

Լսի՛ր, այդ քո գործը չէ. բղաւեց Վահունիկը 15 տարի ծառայող քաջ զինուորի անվախութեամբ: Կամակոր քոյրը բարկութիւնից քիչ էր մնացել որ լաց լինէր:

Միթէ դու չը գիտես, սիրելի Հռիփսիկ, աւելացրեց եղբայրը փաղաքշօրէն, որ հայրիկը ինձ չի արգելում այս պատերազմին մասնակցելու:

Նա քեզ չի թողնիլ, ինքը կը գնայ:

Մի կէս ժամ առաջ նա իր համաձայնութիւնն արդէն յայտնել է և բացի դրանից նա խոստացաւ ինձ տալու իր սուրն ու ասպարը:

Չի՛ տայ, վրայ բերեց կամակոր քոյրը:

Աստւած վկայ կը տայ, սիրելի Հռիփսիկ:

Չի՛ տայ, չի՛ տայ ասում եմ, աղաղակեց կամակոր քոյրը և բարկութիւնից լաց եղաւ.

Ես սխալւեցի, չի՛ տայ, այո՛, չի՛ տայ մի լաց լինիլ Հռիփսիմէ, վրայ բերեց եղբայրը քրոջ ձայնը կտրելու համար:

Էլ ինչի՞ էիր ասում թէ կը տայ, հեկեկալով ասաց քոյրը, ես չէ՞ի ասում թէ չի տայ:

Սխալւեցայ Հռիփսիկ:

Իսկ դու կարո՞ղ ես կռւել Վահունիկ, հարցրեց հանդարտւած քոյրը, չէ՞ որ դու դեռ փոքր ես

Փոքրերի համար էլ գործ կայ սիրելի Հռիփսիկ:

Ի՞նչ գործ:

Փոքրիկ պարտականութիւններ, որոնց ճշտիւ կատարելն էլ դարձեալ գործ է չը՞ նայելով որ ես ուզում եմ անպատճառ տեղաւորւել զօրքի շարքերում:

Բայց քեզ կը՞ թողնեն:

Ինչի՞ չը պէտքէ թողնեն այս մասին առաջուց կը խնդրեմ զօրավարի թոյլտւութիւնը:

Քեզ չեն թողնիլ չէ՛ն, ասում եմ:

Ես կը խնդրեմ, կաղաչեմ:

Չե՛ն թողնիլ դարձեալ բղաւեց կամակոր քոյրը:

Թող քո խօսքը լինի Հռիփսիկ, ասաց եղբայրը: Վահունիկը իր քրոջ կամակորութիւնը լաւ գիտեր, եւ ինքն էլ շատ անգամ սիրում էր քրօջը հակաճառել, բայց այս անգամ, աչքի առաջ ունենալով քրօջից շուտով բաժանւելը, մի բաժանում, որ կարող էր յաւիտենական լինել, նա այս անգամ քրոջ կամքի առջև գլխոց եղաւ: Նա գլուխը քարշ սկսեց ման գալ սենեակի երկարութեամբ, Նրա անմեղ, գեղեցիկ ու խոհուն կերպարանքը այդ րոպէին կարծես պատկերացնում էր հզօր կամքի առջև ընկճւած մի ոգի:

Բայց դու ինձ այն ասա՛, Հռիփսիկ, դու որ ինձ վշտացնում ես, չե՞ս մտածում թէ մեր այս խօսակցութիւնը կարող է վերջինը լինել:

Եւ ինչի՞ վերջինը:

Նրա համար, որ ես գուցէ պատերազմի դաշտից այլ ևս չվերադառնամ:

Քոյրը, աչքերը տրորելով, հեռացաւ եղբօր մօտից, իսկ Վահունիկը իր նոյն ուրախ մտքերով ժամերն էր համրում: Նա կարօտով փափակում էր այն ժամին, երբ զինուորների շարքում, յաղթական երգերով, պէտք է հեռանային քաղաքից:

(Կը շարունակւի)

Առաջին մասնաւոր հիւանդանոց

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

հիմնւած 1880 թ.

(Կուկիա, Վարանցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.:

Ն. Մ. Զիկովսկի—9 և կէս—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.:

Մ. Դ. Աւետիսեան—11—12 ժ. մարթու, վեներակ. և վիրաբուժ.:

Զ. Ի. Բարանեանեանց—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Ն. Ի. Դգեյլեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.:

Ա. Գ. Կարապետեանց—1—1 և կէս ժ. ներքին և երեխ. հ.

Կին բժիշկ Տչերբինինա—1 և կէս—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:

Գ. Յ. Գուրգէնով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. Փուղինով—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.

Խ. Դ. Արեանց—6—7 ժ. ներքին հիւանդութեան:

Բ. Ա. Նաւասարդեան—7—7 և կէս ժ.

Վճարը 50 կ., չքաւորները ձրի: Համախորհրդի—կոնսիլիումի և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Վաճառւմիցգոյացած ամբողջ գումարը յատկացւում է Բագուից Թիֆլիս գաղթած չքաւոր հայ գիմնազիստ աշակերտների և աշակերտուհիների օգտին:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՒՈՒՄ Է

ՊՐՕՖ. Ա. ԿՐԻՄՍԿԻ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՆՐԱ ԱՊԱԳԱՆ

Հեղինակից յատուկ թոյլտւած թարգմանութեամբ

Բարկէն վարդապետի

(ժզ—170 երես, գինը 60 կոպ.)

Դիմել Թիֆլիսի Դրավաճառներին և թարգմանչին՝

Ս. Էջմիածին

Բարկէն Վարդապետին

☛ При каждомъ № „НИВЫ", независимо отъ другихъ приложеній, подписчики получатъ по одной книгѣ, а новые подписчики, выписывающіе также (за 1 р. 50 к., съ перес. 2 р.) первыя 10 книгъ Салтыкова-Щедрина за 1905 г., получатъ ихъ при первомъ № „Нивы" 1906 г. ☚

ОТКРЫТА ПОДПИСКА на 1906 годъ (37-й годъ изданія) на еженедѣльн. иллюстриров. ЖУРНАЛЪ со многими приложеніями

НИВА

Гг. подписчики „НИВЫ" получатъ въ теченіе 1906 года:

52 №№ художеств.-литературнаго журнала „НИВА", заключающаго въ себѣ романы, повѣсти, разсказы; гравюры, рисунки и иллюстраціи современ. событій.

40 КНИГЪ „Сборника Нивы", отпечатанныхъ четкимъ шрифтомъ, на хорошо глазированной бумагѣ и содержащихъ:

ОСТАЛЬНЫЯ 30 КНИГЪ ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ М. Е. САЛТЫКОВА-ЩЕДРИНА

(…, „Мелочи жизни", „Благонамѣренныя рѣчи", „Господа Ташкентцы", „Въ средѣ умѣренности и аккуратности", „Письма къ тетенькѣ" и мн. друг. Войдутъ также не помѣщенныя въ прежнихъ изданіяхъ три сказки и комедія „Смерть Пазухина"). (Цѣна полн. собр. въ отдѣльной продажѣ съ перес. 21 руб.).

ПЕРВЫЯ 10 КНИГЪ ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ К. М. СТАНЮКОВИЧА

(въ которыя войдутъ „Морскіе разсказы", романы: „Безъ исхода", „Два брата" и рядъ разсказовъ), подъ редакціей и съ біографич. очеркомъ П. В. Быкова. (Цѣна полн. собр. въ отдѣльной продажѣ съ перес. 21 руб.).

12 КНИГЪ „Ежемѣсячныхъ литературныхъ и популярно-научныхъ Приложеній", содержащихъ романы, повѣсти, разсказы, популярно-научныя и критическія статьи современныхъ авторовъ съ иллюстраціями и отдѣлы библіографіи, смѣси, шахматовъ и шашекъ, задачъ и разныхъ игръ.

12 №№ „Парижскихъ модъ". До 300 столбцовъ текста и 300 модныхъ гравюръ. Съ почтовымъ ящикомъ для отвѣтовъ на разнообразные вопросы подписчиковъ.

12 ЛИСТОВЪ рисунковъ (около 300) для рукодѣльныхъ, выпильныхъ работъ и для выжиганія и до 300 чертежей выкроекъ въ натуральную величину.

1 „СТѢННОЙ КАЛЕНДАРЬ" на 1906 годъ, отпечатанный красками.

ПОДПИСНАЯ ЦѢНА „НИВЫ" со всѣми приложеніями на годъ:

въ С.-Петербургѣ: безъ доставки 6 р. 50 к., съ доставкой — 7 р. 50 к. Безъ доставки: 1) въ Москвѣ, въ конторѣ Н. Печковской — 7 р. 25 к.; 2) въ Одессѣ, въ книжн. магаз. „Образованіе" — 7 р. 50 к.

Съ пересылкою во всѣ мѣста Россіи . . . 8 р. За границу — 12 р.

ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА ПЛАТЕЖА ВЪ 2, 3 и 4 СРОКА

☛ Новые подписчики, желающіе получить, кромѣ „Нивы" 1906 г. со всѣми ея приложеніями, еще ПЕРВЫЯ 10 книгъ соч. САЛТЫКОВА-ЩЕДРИНА за 1905 г., доплачиваютъ единовременно при подпискѣ: безъ доставки въ СПБ. — 1 р. 50 к.; съ дост. въ СПБ. и съ пересылкой иногороднымъ и за границу 2 руб. ☚

Иллюстрированное объявленіе о подпискѣ высылается безплатно.

Адресъ: С.-Петербургъ, въ Контору журнала „НИВА", улица Гоголя, № 22.

Լոյս տեսաւ ՀԱՈՒՊՏՄԱՆԻ «ԶՈՒԼՀԱԿՆԵՐԻ»-ի հայերէն թարգմանութիւնը, 106 երես, գինը 40 կ.: Դիմել՝ Մոսկւա, Ժամհարեան եղբայրների բանկային տուն, Սաթենիկ Արտեմենին: 3—3

Պրոգիմնազիան աւարտած և հաշւապահ լաւ սովորած, րէմինգտոնի վրայ գրումի հայ օրիորդ Թիֆլիսում որոնում է պաշտօն վաճառատներում կամ առևտր. գրասենեակում: Հասցէն՝ Օր. Փ. Տարազի խմբագրատուն. 3—2

ԱՌՈՂՋԱՊԱՀ

ՍԵՌԱԿԱՆ ՀԱԿՈՒՄԸ

Տալով հայ ընթերցողին, Բեբելի կնոջ գրուքինը ներկայումս ու ապագայում աշխատութեան անփոփոխ թարգմանութիւնը (ռուսերէն բրօշիւրից), անհրաժեշտ ենք համարում բերել այն ծանրակշիռ առարկութիւնները, որ անում են շատ հեղինակաւոր անձնաւորութիւններ սեռական հակման վերաբերեալ նրա յայտնած մտքի դէմ: Դա հետեւեալն է.

Հեղինակի կարծիքով, տղամարդի, ինչպէս և կնոջ սեռական հասունութեան՝ արբունքի շրջանում պէտք է անպայման բաւարարութիւն տալ սեռական հակմանը մերձաւորութեան ճանապարհով և դա նոյնքան անհրաժեշտ բան է, ինչպէս որ քաղցին, ծարաւին ու յոգնածութեանը բաւարարութիւն պէտք է տալ անպատճառ՝ ուտելով, խմելով ու քնելով: Իսկ եթէ մարդիք (կին թէ տղամարդ—միևնոյն է) աշխատում են ճնշել բնութեան այդ խրատներին ու պահանջները, դրանից որպէս թէ անխուսափելի կերպով առաջ են գալիս զանազան հիւանդութիւններ—ֆիզիքական կամ հոգեկան: Իր ասածն ապացուցանելու համար նա բերում է և Լիւտերի հաստատութիւնը:

Պէտք է ասած, որ այս խնդրում Բեբելն ունի և կողմնակիցներ, որոնք աւելի կամ պակաս չափով համակարծիք են նրա հետ: Այսպէս օրինակ, *Բուղան* ասում է. *սեռական հակումն աւելի սուր է, քան թէ այն կարծը, որով սանձահարում են վայրի փղերին. նա կրակի բոցից աւելի այրող է. նա նման է մարդու հոգու մէջ ցցւող նետի»: Շոպէնհաուերն այդ հակումն անւանում է «ապրելու ցանկութեան բարձրագոյն արտայայտութիւն, հետեւապէս ամբողջ ցանկութեան կենդրոնացում»: Մարս Նորդաուն գտնում է, որ «մարդն իրօք միակին կենդանի չէ» որ հազիւ թէ բազար տղամարդից մէկը հազիւ լինի, որ մահւան ժամանակ կարողանայ երդւել որ նա իր ամբողջ կեանքի ընթացքում միայն մի կին է ճանաչել»:* Գեյերստամն, իր պատմւածքների մէջ ակնարկում է, որ սեռական յարաբերութիւնն ամուրիների համար կարող է անհրաժեշտ լինել: Վերջապէս, Աւգուստ Ստրինդբերգը իր նորագոյն աշխատութիւնների համարեա ամեն մի տողում հակառակում է ժուժկալութեան պահանջներին և աշխատում է ապացուցանել, որ ապօրինի սեռական յարաբերութիւնները պահպանում են պատանու առողջութիւնը, հոգու աշխոյժը և կենսունակութիւնը: Մի երիտասարդ գրող նոյնիսկ այն ծայրայեղութեան է հասնում, որ ասում է թէ «հազիւ լինի մի տղամարդ, որը 20-30 տարեկան հասակում *ապրել այնպէս (կոյս), ինչպէս ապրում է աղջիկը, որ չը կորցնէ հասարակութեան աչքում ազնիւ կնոջ համբաւը. իսկ եթէ այդպիսի տղամարդ գտնւի, նա անկասկած անբնական դրութեան մէջ պէտք է լինի՝ ֆիզիքապէս կամ մտաւորապէս:*

Վերոյիշեալ համակարծիքներին առաջ բերելուց յետոյ, այժմ տեսնենք թէ ինչ են ասում հակառակ բանակի մարդիկ, որոնց ձայնը, իբրև բժիշկների, անշուշտ աւելի հեղինակաւոր ու ծանրակշիռ է մարդու ֆիզիօլոգիային ու առողջութեանը վերաբերեալ հարցերում:

Հոգեկան հիւանդութիւնների բժիշկ Կրաֆտ-Էբինգն ասում է «*կանոնաւոր կազմւածք ունեցող շատ ու շատ տղամարդիկ կարող են զսպել իրանց հակումն, ամենեւին վնաս չը կրելով այդ* ակամայ ժուժկալութիւնից»:

Ակտօնը ևս իր հեղինակութեան մէջ համոզմունք է յայտնում, որ ամուրի երիտասարդները կարող են և պարտաւոր են բոլորովին հեռու մնալ սեռական յարաբերութիւններից, առանց որևէ վնաս պատճառելու իրանց առողջութեանը:

Պրոֆ. Լիոնել Բիլլը, Լոնդոնում, ասում է. «այն համոզմունքը, որպէս թէ տղամարդիկ մինչև ամուսնութիւնը, բնախօսական պատճառներն ի նկատի առնելով, պէտք է բաւականութիւն տան իրանց հակմանը—անհիմն է ու սուտ»:

Պրոֆ. Սիւեդ Ռիբբինգը, բացի վերոյիշեալներից, բերելով մի շարք վկայութիւններ ևս իր հռչակաւոր «Սեռական առողջապահութիւն և նրա բարոյական հետեւանքները»-գրքում, ջերմ կերպով պնդում է այն համոզմունքը, որ մարդիկ ամուրի ժամանակ կարող են և պարտաւոր են անպայման զսպել իրանց սեռական հակումը և հեռու մնալ ապօրինի սեռական մերձաւորութիւններից և որ այդպիսի ժուժկալութիւնից ամենեւին չի տուժիլ նրանց առողջութիւնը:

Սակայն Դ—ր Ալֆրէդ Հեգարն իր «Սեռական Հակում» գրքում աւելի մանրամասն կանգ է առնում Բեբելի վերոյիշեալ կասծների վրայ և մի առ մի հերքում նրանց: Բերենք մի քանի փոքրիկ հատւածներ նրա այդ աշխատութիւնից:

Յիշելով Բուղայի և Շոպէնհաուերի յայտնած մտքերը սեռական հակման ոյժի մասին, նա խորհուրդ է տալիս ընթերցողին առանձին նշանակութիւն չը տալ այդպիսի աֆօրիզմների, քանի որ սեռական հակման սաստկութիւնը խիստ տարբեր է լինում առանձին ցեղերի, ժողովուրդների, դասակարգերի և անհատների մէջ:

Խօսելով Լիւտերի ասածին, նար պատասխանում է՝. «ուտելը, խմելը և քնելը թէև վերաբերում են կենդանի արարածների կենսական գործողութիւններին, սակայն այդ ամենը մարմնի համար բոլորովին այլ նշանակութիւն ունին: Առանց կերակուր ընդունելու և առանց քնի մարդ շուտով մեռնում է, այնինչ սեռական ժուժկալութեան ժամանակ նա կարող է մինչև զառամեալ հասակն ապրել»:

«Հնումն բժիշկներն ստիպւած էին լինում հրաժարւել սիրոյ վայելքից, իսկ գինուորականները կուսի էին պատրաստւում ժուժկալ մնալով: Վեց դար շարունակ Պարիզի ֆակուլտետը չէր ընդունում ամուսնացածներին» (Մանտեգացցա:)

«*Սեռական հակման բաւարարութիւն տալը* նշանաւոր չափով մեծացնում է կանանց մահացութիւնը»:

Այնուհետև անցնելով իստերիային, նիմֆօմանիային և սատիրիազիսին, որոնք Բեբելի և դր. Դէբէի կարծիքով զսպւած սեռական հակման արդիւնք են, նա միառ մի ընդարձակօրէն հերքում է այդ բանը և նոյնիսկ պնդում, որ այդ հիւանդութիւններն առաջ են գալիս ընդհակառակն սեռական չափազանց շատ մերձաւորութիւնից և այլ ժառանգական ու ներքին տրամադրութիւններից:

Ամուսնացածներն աւելի շատ են ինքնասպանութիւններ գործում, քան թէ ամուրիք:

Ինքնասպանութեանը ևս սեռական հակման զսպումն առանձին զարկ չէ տալիս. մարդիկ ծեր հասակում, երբ սեռական հակումը շատ թոյլ է լինում, աւելի շատ են ինքնասպանութիւն գործում, քան թէ սեռական ոյժերի ծաղկած ժամանակ:

Մի քանի հիւանդութիւններ էլ, ընդհակառակն, կանայք ստանում են ամուսնութիւնից յետոյ սեռական յաճախակի յարաբերութիւններին ու ծննդաբերութիւններից:

Այս ամենից յետոյ մեզ մնում է ուշադրութիւն հրաւիրել նոյնպէս և այն հանգամանքի վրայ, որ սեռական հիւանդութիւններն իրանց սարսափելի ու կործանիչ հետեւանքներով, ինչպէս և մարդկութեան այժմեան ամենամեծ պատուհաս—պոռնկութիւնը, առաջ են գալիս ու զարգանում գլխաւորապէս սեռական հակմանը բաւականութիւն տալու համար կատարւող ապօրինի սեռական մերձաւորութիւնների շնորհիւ:

Իսկ այդ չարիքից ազատւելու համար անհրաժեշտ է *լուսաւորութիւն, չափաւորութիւն ու ժուժկալութիւն:*

Լ. Մ.

Ծխախոտի գործածութիւնը

Մ. Պլաւնեի

Ծխախոտն էլ, սուրճի եւ թէյի նման, պատկանում է թմրեցուցիչ, այսինքն խլացնող նիւթերի կարգին:

Դա մի առաջնակարգ գրգռիչ և համ աւող միջոց է, որ գործ են ածում ինչպէս կուլտուրական, այնպէս և ոչ-կուլտուրական ժողովուրդները: Ամենքին էլ յայտնի է, թէ ինչպիսի ուժեղ թոյն, այսինքն նիկոտին է պարունակում իր մէջ ծխախոտը: Բաւական է սենեակի յատակի վրայ ընկած նիկոտինի մի կաթիլը, որ դա ամբողջ օդը շնչելու համար անպէտք դարձնի: «Ծխախոտի ծխի մէջ, բացի կապտաբեր թթւուտից, կան նոյնպէս ծծմբաջրածին, ծծմբաթթւուտ, ծծմբային կապար, ածխածնի օքսիդ ածխաթթու են: Կիւվին ապացուցւած է, որ այդ բոլոր թոյները որոշեալ պայմաններում օդի միջոցով ընկնում են արեան մէջ»: (Դր. Մունդե) Սակայն դժբաղդաբար մարդիկ և մանաւանդ տղամարդիկ այն աստիճան անձնատուր են լինում դէպի ծխախոտը եղած կրքին, որ չը ծխող մարդ խիստ հազւագիւտ է լինում,—դա սարսափելի վնաս է մարդկութեանը, քանի որ ծխախոտն առաջ է բերում ամենատեսակ խանգարումների մի ամբողջ շարք և պատճառ է դառնում շատ ու շատ հիւանդութիւնների: Ախորժակի կորուստը, ստամոքսի կատարը, ստամոքսային մարսողութեան խանգարումներ, գլխի պտոյտներ, գլխացաւեր, նիհարում, ընդհանուր թուլութիւն, բերանի և կոկորդի բորբոքում եւն եւն—ահա սրանք են նիկոտինով թունաւորման հետեւանքները, որոնք առաջ են գալիս ծխախոտի գործածութիւնից:

Ամենքին էլ յայտնի է, որ ծխելը խիստ վնասակար է, քանի որ նրանից կանգ է առնում հասակը: Ծնողներն ու դաստիարակները շատ լաւ գիտեն այդ և ոչ մի ջանք չը պիտի խնայեն այդ ամենավնասակար սովորութիւնը վերջացնելու համար: Ի հարկէ ամենից լաւ կը լինէր, եթէ չափահասներն իրանք բարի օրինակ տային դեռահաս սերնդին: Ամենալաւ դաստիարակութիւնը օրինակ տալու մէջ է. բայց, հէնց այդտեղ էլ գտնւում է ամենադժւար լուծելու խնդիրը: Ինչպէս կարող է ծխելուց ազատել որդուն հայրը, սանին—դաստիարակը, եթէ նրանք իրենք պատկանում են վարպետ ծխողների կարգին: Չ՞ որ դա ուղղակի տարօրինակ բան կը լինէր—արգիլել ուրիշներին, առողջութիւնը պահպանելու տեսակէտից, այն, ինչ որ ինքդ չես կարողանում ձգել: «Վատ օրինակներր փչացնում են լաւ բարքերը» եւ «ինչպէս հայրն է նոյնպէս եւ որդիք»—ասում են երկու յայտնի առածները: Ի՞նչ վատ դրութիւն են զգում սովորաբար նոր սկսնակ ծխողները, ինչպէ՞ս յաճախ ծխելու ժամանակ առաջ են գալիս սրտի խառնոց, փսխում, գլխի պտոյտ, աչքերի մթնում, սառն քրտինք եւն: Ծխելն այնուամենայնիւ չ՞ թողնում:

Այդ պատճառով էլ դոկտոր *Մունդէն* բոլորովին իրաւացի է, ասելով. «Այսպէս ուրեմն, մարդը որոշեալ տանջանքների գնով դառնում է սարուկ մի սովորութեան, որի շնորհիւ նա փչացնում է ինչպէս, իր այնպէս և ուրիշների շնչելու անհրաժեշտ օդը և որից նա չէ բաժանւում իր ամբողջ կեանքում»:

Ծխելը ևս նոյն բանն է, ինչ և մորֆիոի գործածութիւնը: Ափիոնի և մորֆիոի սարսափելի ի չարն գործադրելը հիմնւած է այն սովորութեան վրայ, որով շարունակ «*հանգստացնում*» ենք մեր նեարդերը, որոնք գրգռւած ու լարւած են լինում ամեն տեսակ գրգռումից ու լարումից: Սակայն այդ հանգստացնող միջոցն աւելի վտանգաւոր է քան նոյնիսկ այն տանջանքը, որի դէմ նա գործադրւում է, և նա, եթէ միայն ժամանակին վերջ չէ գրւում, աստիճանաբար տանում է դէպի ամբողջ օրգանիզմի կատարեալ և հաստատ խախտում և վերջ ի վերջոյ, դէպի մահ: Ծխելու ժամանակ նիկոտինի թունաւոր ներգործութիւնը, ճիշտ է անմիջապէս մահացու ելք չէ ունենում, բայց պակասեցնում է աշխատելու ցանկութիւնն ու ընդունակութիւնը, մտածողութեան ոյժը և կենսական էներգիան: Ճիշտ է, ոմանք պնդում են, իբր թէ ծխելու ժամանակ նրանք աւելի լաւ են գործում ու մտածում:

Սակայն նրանք նիկոտինի առաջ բերած գրգիռն ուղղակի համարում են ուժի արտայայտութիւն և, այսպէս ասած, ոչ թէ աճում են տոկոսի հաշւին, այլ վատնում են իրանց կենսական ուժի դրամագլուխը: Ալկոհոլը, կոֆէյինը և թէյինը գրգռում են բոլորովին նոյն ձևով, ինչպէս և նիկոտինը:

Դր. Վիլլը ասում է.

«Եթէ ծխելը բթացնում է ախորժակը, եթէ նա առաջ է բերում թուքի առատ հոսում, որին պէտք է լինում խկոյն դուրս թքել, ապա անհրաժեշտ է բոլորովին թողնել ծխելը: Թուքը ծառայում է մի ամբողջ շարք սննդարար նիւթերի (օսլայ մարսական դարձնելու համար և հետեւապէս, նրա կորուստը վնասակար է: Ցետոյ, ծխախոտի ծուխը, եթէ միայն նրան կուլ են տալիս, առաջ են բերում ստամոքսի լորձաթաղանթի վտանգաւոր բորբոքում:

Վերջապէս, որոշեալ դէպքերում ծխելուց յետոյ կարող են առաջ գալ և թունաւորման երևոյթներ»:

Ծխախոտը կերակուր չէ, դա—թոյն է. ես այս կրկնում եմ կրկին անգամ, և դու, սիրելի ընթերցող, լաւ կանես, եթէ ոչ ծխես, ոչ քթիդ քաշես և ոչ ծամես ծխախոտը: Նա թափանցում է քո ամբողջ օրգանիզմի մէջ, թունաւորում է ամեն մի նեարդը և առաւել վնասակար կերպով ներգործում է սեռական գործարանների վրայ: Եթէ դու քթիդ ես քաշում կամ ծամում ես ծխախոտը, դու, ճիշտ է, դրանով ուրիշներին չես խանգարում, սակայն քեզ ես թունաւորում նոյնպէս, ինչպէս և ծխելու ժամանակ: Ծամելու ժամանակ դու հաւաքում ես նիկոտինը ուղղակի ստամոքսի մէջ, իսկ քթիդ քաշելու ժամանակ դու պահպանում ես քթիդ լորձաթաղանթի անընդհատ վնասակար բորբոքումը և ապագայում խիստ վնասում ես աչքերդ և գլխիդ նեարդերին:

Ժամանակի ընթացքում ջնջւում է այն երկրի ազգաբնակութիւնը, ուր ծխում են և տղամարդիկ և կանայք: Սիգարի գործարաններում բանող կանայք բիչ անգամ են ունենում ժառանգ:

Սրա հեղինակը, ապրած լինելով մի քանի տարի Լա—Պլատա գետի շուրջ ընկած հարաւ—ամերիկական հանրապետութիւնների մէջ, առիթ է ունեցել մի քանի դիտողութիւններ անելու ծխախոտի վնասակար ներգործութեան վերաբերմամբ ծխող կանանց սերնդի վրայ: Պարագւայ հանրապետութեան մէջ աւելի դժւար է պատահել չը ծխող կնոջ, քան թէ չը ծխող տղամարդի: Հարաւային Ամերիկայում և մանաւանդ Պարագւայում թէ տեղացիք և թէ օտարականները ստիպւած են շարունակ ծխելու, որպէս զի պաշտպանեն իրանց տեղական ախտից—«*մօսկիտներից*», այդ առանձին տեսակ մծակներից: Ինչպէս տղամարդկանց, այնպէս և առանձնապէս կանանց մասամբ անընդհատ ծխելուց բնակիչների թիւն այնքան պակասել է Պարագւայում, որ կառավարութիւնը բոլոր ուժով աշխատում է բարձրացնել ազգաբնակութեան ընկած թիւը, օժանդակելով գաղթականութեանը դէպի Պարագւայ և կազմելով կոլոնիաներ եւրոպացիների համար:

Խօսել ծխախոտի գործածութեան տնտեսագիտական նշանակութեան մասին—դա միևնոյն է, թէ բաղխել բաց դուռը:

Նշաւր

Տուն ու տեղ աւերւած մալօռոսցիների ցամաք հացի բախշումը։

ՀՐԱՇԱԼԻ ՊԱՏԿԵՐԸ

Երբ գիշերները օրւայ մանր հոգսերից, կեանքի ժխորից յոգնած, թուլացած պառկում եմ անկողնուս վրայ, վշտերից հանգիստ գտնելու, սենեակումս՝ խաւարի թագաւորութեան մէջ, բաց աչքերիս առաջ կենդանանում մի հին, շատ հին սիրելի ու պաշտելի պատկեր...

Ո՛չ մի աշխարհահռչակ նկարիչ իր ճարտար վրձինով, իր հազար տեսակ գոյնզգոյն ամենաթանգագին ներկերով դեռ չէ կարողացել նկարել այդ պատկերի պէս մէկը՝ որ նրա պէս գերող, նրա պէս կաշկանդող, հրաշալի ու պաշտելի լինէր ինձ... բայց աչքերս այդ հրաշալի պատկերը նկարեցին միմիայն մի՛ գոյնի ներկով...

Հազիւ թէ թեթեւ քունը փակում է թերթերունքներս, և այն պաշտելի պատկերը երազներիս առանցքն է կազմում... առաւօտեան վաղ երազներս օդն է ցնդւում, չքանում է ամեն ինչ, բացի այն պատկերից՝ որ դեղեցիկ, սեւ ու սիրուն աչիկներն էր կրում շուշանի պէս գուրեկան դէմքի վրա... երազներիս հետ միայն նա չէ չքանում...

Նա ինձ մօտ է մնում ամբողջ օր ու գիշեր, շրջում է հետս ամեն օր, ամեն տեղ... այդ պատկերը սիրուհուս ամենաթանգագին պատկերն է, որ աչքերս նկարեցին...

Սիրտս կտաւն էր, սէրը՝ վրձինը ու վիշտը ներկը... և այդ հրաշագեղ պատկերը այնքան խնամքով ու դառն աշխատանքով է նկարւած, որ երբէք, երբէք չի փչանալու և մաշւելու...

Եւ ես սիրուհուս այդ գեղանի վշտաներկ պատկերը, կենդանագիր լուսանկարը այնպէս պահպանում եմ խորունկ, ծոցումս, կրծքիս տակ, սրտիս դաղտնի ծալքերի մէջ, որ ո՛չ ոք չը տեսնէ նրան...

Ս. Դարբինեան

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ

Անդրիագործի մասին

Ես չեմ կարող այլ կերպ մտածել, բայց միայն առակներով։ Անդրիագործը չէ փոխադրում իր միտքը մարմարի լեզւի վրայ,—նա մտածում է, անմիջապէս մտածում մարմարով։

Կար մի արւեստագէտ, որը չէր կարող այլ կերպ մտածել, բայց միայն արոյրով (բրօնզ)։ Մի անգամ այդ մարդը համակւեց ուրախութեան գաղափարով, ուրախութեան, որը շողաց մի վայրկեան։ Եւ մարդն զգաց, որ պէտք է արտայայտէ այդ գաղափարը։ Սակայն ամբողջ աշխարհում չը գտնւեց ոչ մի կտոր արոյր,—մարդիկ բոլո՛րը գործ էին դրել։ Իսկ մարդն զգում էր, որ կը խելագարւի, եթէ չարտայայտէ իր գաղափարները։

Եւ սկսեց նա մտածել այն մի կտոր բրոնզի մասին, որը գտնւում էր իր կնոջ գերեզմանի վրայ, սկսեց մտածել այն արձանի մասին, որը նա շինել էր կեանքում սիրած միակ կնոջ գերեզմանը զարդարելու համար։ Դա վշտի մի արձան էր, ամբողջ կեանքը թափանցող վշտի։ Նա կոտրեց այդ արձանը։ Նա հալեց նրան և ձուլեց նրանից ուրախութեան արձան.—ուրախութեան,- որը չըկայ կեանքի մէջ, լոյսի միայն մի վայրկեան։

Լ.



Հէլգ-Լանդ կղզին գերմանական ծովում։

Գերմանական ծովի վրայ այս կղզին ժբ. դարից ծովային աւազակների ապաստարան էր. Ձեռքից-ձեռք անցնելով, անցեալ դարու սկզբներում Դանմարքը զիջանեց Անգլիային։ Վերջինս 1855 թ. այստեղի աւազակներից շատերին, իբրև կամաւոր զօրք, հաւաքում ուղարկում է Ղրիմի ափերը ռուսների հետ պատերազմելու։ 1890 թ. Անգլիան զիջանում է այս կղզին Գերմանիային, որն այսօր կարող էր շատ մեծ ծառայութիւն անել Անգլիային, եթէ սրա և Գերմանիայի մէջ պատերազմն անխուսափելի լինի։

Տափակ զրոյց

Մարօկկօյում.—Վախենում եմ, որ բարեացակամ Ֆրանսիան կուլ կը տայ մեզ։

— Ո՛չ. Նա իր հարևանուհու օրինակով համոզւել է, որ դա կարող է հեշտութեամբ փչացնել նրա ստամոքսը...

ՇԷՔՍՊԻՐԻ ՄՏՔԵՐԻՑ

Այն բանի մասին, ինչ որ կորած է և կորած է անդառնալի կերպով—անօգուտ է ցաւել։

Հառաչանքներով դեռ ոչ ոք չէ բուժել իր վիշտը։

Վիշտը փոխում է և ժամանակը, և հանգստեան ժամերըգիշերը առաւօտ է դարձնում, կէս օրը—գիշեր։

Վիշտը վարակիչ է։

Միայն դժբաղդութեանց մէջ է մարդու իսկական փորձառութիւնը։

Բարկութիւնը կարճատև անմտութիւն է։

Կատաղութեան մէջ չեն խնայում և ճշմարիտ բարեկամներին անգամ։

Թագաւորներն անգամ չարհասիրութիւնից դրժում են իրանց երդումները։

Ինքը առաքինութիւնը իսկ չի կարող խուսափել զրպարտութիւններից։

Ժամանակը երևան է հանում ինչ ծածկում են նենգութեան ծալքերը



Զաւեշտ առանց բառերի.

Խմբագիր հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան.

Դրամատանց կանանց «Զինաղ» տպարան-դպրոցի.
Արագատիպ «Հերմէս» ընկ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ր. (արտասահմանի 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահմանի 10 ր.) Աղբիւր-Տարազ, պրեմիաներով 10 ր. (արտասահմանի 18 ր.) Տարազ ամիսը 60 կ. առանձին №-ը Թիֆլիսում 15 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ. վերջին երես 25 կ. մանրատառ (պետիտ) Արտասահմանից կրկնակի: Զատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդւածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չըտպւելիքը (երբեք թերթից պակաս) չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի և ուրբաթ առաւ. ժ. 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

Թիֆլիս, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10¼ ժ. մինչև 2¼-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ

Rédaction du Journal TARAZ Cau cse Tiflis

գեղարւեստական, գրական, գիտական [illegible] շաբաթաթերթ

№ 9 Կիրակի, մարտի 12 — Տասնեւեօթներորդ տարի 1906

ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻ ԱԼԲՈՄԻՑ

Նոյնը երէկ, նոյնն այսօր, ի՞նչ է լինելու վաղը:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԵՄԸ

Մեր քաղաքակրթական հիմնարկութիւնները, մի չափ բոլոր հանգամանքների շնորհիւ, շատ քիչ են։ Նրանցից ամեն մէկին յատկացած է որոշ դեր։ Երբեմն նկատելի է յիշած հիմնարկութիւնների մէջև խիստ սերտ առնչութիւն. մէկի բարգաւաճումը կախուած է լինում միւսի բարւոքումից ու բարելաւումից։ Այդպէս է դպրոցը և բեմը։ Երկուսն էլ կուլտուրական հիմնարկութիւններ են և երկուսի մէջ կան շօշափման շատ կէտեր։ Դպրոցը լուսաւորութեան լամպար է, գիտութեան շտեմարան, բեմն էլ նման դեր ունի կատարելու։ Առաջնի և երկրորդի համար դրուած են կրթական բարձր նպատակներ, միտք ու սիրտ մշակելու վսեմ հոգատարութիւնը։ Ժողովրդի զարգացման խնդիրն աչքի առաջ ունենալով՝ ոչ մէկից պէտք է զրկել և ոչ միւսից։ Բայց այդ բոլորը չէ։ Դպրոցի քաղցումը քայքայում է թատրոնական, բեմական գործը. որովհետև վերջինս իր պայծառութեան մղումը ստանում է նախորդից։ Եթէ դպրոցը չի պատրաստում բնզուն ձկուն լեզու՝ հարուստ գեղարւեստական գործ. եթէ դպրոցը չի տալիս թատրոնական կիրթ հասարակութիւն՝— լեզւին տեղեակ և խորին հետաքրքրութեամբ լիցուն,—այն ժամանակ բեմի ոգին յառաջադիմել չի կարող ու բեմական արւեստը կը կաղի։ Իսկ եթէ դպրոցը բնաւ գոյութիւն չունի, հապա այն դէպքում։—Կը ստանանք բեմական գործի այն վիճակը, որ տիրում է այժմ մեզանում. կուլտուրական տարրերից մէկը կը մնայ կիսակենդան։ Դա արդէն ժողովրդական ոգու, հասարակական մտայացման խափանման ձրգտումի յայտանիշ պէտք է համարել։ Չէ՞ որ կուլտուրան նոյն ինքն ազգի հոգին է. ապա ուրեմն նրա բաղկացուցիչ տարրերից մէկի մահացումը մի հզօրեղ հարուած է այդ հոգու ծաղկմանը և ծաւալմանը։

Չըկան մեզանում գրեթէ կոչումով թատերագիրներ, չը հաշւած մի երկու սիրող գրականներին։ Պատճառն աւելի քան պարզ է. եթէ չըկայ կամ չի եղել դպրոց, եթէ չկայ թատրոնական հասարակութիւն, գրողը՝ թատերգակը որտեղից քաղէ իր ոգևորութեան և նիւթական ապահովութեան աղբիւրը, որտեղից առաջ գայ պահանջ տաղանդներ ծնելու. չէ որ վերջիններս սոսկ երկնքից չեն կաթում, պէտք է լինի նաև անհրաժեշտութիւն, պահանջի զգլու, գոյանալու, առաջանալու բնական հրաւէր։ Այնպէս որ մեր թատրոնական արւեստի բարգաւաճումը ստացել է աննախանձելի կերպարանք. ունենք թատրոն, ներկայացումներ յաճախող հասարակութիւն, պիէսներ յօրինող հեղինակներ, բայց այնուամենայնիւ հայ թատրոնը կաղում է, նա հեռու է զարգացման փարթամ ու հոյակապ նկարագրից։

Բայց, ի հարկէ, այժմեան դրութիւնը խիստ յուսահատական չէ, եթէ նկատի ունենանք մեր թատրոնի անցեալը՝ ուսանող բեմի սկզբնական շրջանն, երբ դեռ նոր էր բողբոջում նորածիլ գործը։ Այն ժամանակ վերջինս միայն մի քանի գաղափարական անձնուրաց գործիչների ուսերի վրայ էր ծանրացած։ Իսկ այժմ երևոյթը փոխուած է և մեր բեմն ունի գործակիցների բաւական ստուար մի բազմութիւն։ Այնպէս որ մի քայլ առաջ ենք գրել նըւիրուած գործիչների տակուն ջանքերով։ Խոչընդոտների անհոգին կոյտերն անհրաժեշտօրէն արգելել են խոշոր քայլեր անել։ Այնուամենայնիւ մանր քայլերն էլ մեր նեղ պայմանների մէջ գըտնւող կենտրոնում իրենց տեսակում պէտք է յառաջխաղացում կոչենք. որին պէտք է վերագրենք այն խիստ մխիթարական պարագան, որ հայ գիւղն անգամ բեմ և ներկայացում տեսաւ։ Այնպէս որ կենտրոններից լոյս սփռւեց գաւառները, իսկ վերջիններից—գիւղերը։ Գաւառական բեմը գաղափարից, ցնորքից դարձաւ իրականութիւն։ Մեր թատրոնական ուժերի գաւառական բեմի ծնողների հաւուն տենչերը մասամբ հող գտան և սիրելի գործը կանգնեց ոտքի։

Գաւառական բեմ.., Ի՞նչ էք պատկերացնում ձեզ, ընթերցող։ Իմաստի բուն առումով մեզանում տակաւին *կազմակերպուած*, կարգին գաւառական բեմ չըկայ։ Գաւառական քաղաքում ունենալ պատրաստի դահլիճ, բեմական քիչ-շատ յարմարութիւններ, տարաբախտաբար չի նշանակում տէր լինել իսկական բեմի։ Մեր բոլոր գաւառներում պակասում է մեզ ամենագլխաւորը—դերասանների կամ թատերասէրների մշտական խումբ։ Մեզ համար այսօր վերջինս իդէալ է դարձել։ Մեր գաւառական բեմերի դահլիճները պարապ-սարապ սպասում են, թէ երբ այս կամ այն դերասանը կը բարեհաճէ այցելել իրենց և տալ մի-երկու պատահական ներկայացումներ, որոնք տեղական բարքերի, արատների, սովորոյթների հետ երբեմն ոչ մի շօշափման կէտ չեն ունենում, ուրեմն և չեն ազդում այն ցանկալի չափով, որ անհրաժեշտ է և շահեկան։ Այն ինչ նկատի առնելով թատրոնական գործի անուրանալի օգուտը և նշանակութիւնը ժողովրդի բարեկրթութեան համար՝ աւելի քան կարևոր է կազմակերպուած մնայուն բեմ ունենալու և արդիւնաշատ ու հանրաշահ հիմնարկութեանը տալ յարմարաւոր ընթացք։

Պէտք է աշխատել գործի մէջ մացնել ապակենտրոնացման սիստեմը։ Որքան որ գաւառը կենտրոնից ազատ լինի այնքան լաւ։

Սակայն անկախութիւնը ըմբռնելու է որոշ տեսակէտից։ Ինչպէս ասացինք վերև, գաւառական բեմը փայլեցնում է իր գոյութիւնը լոկ երբեմնապէս, այն ժամանակ միայն, երբ կայ դերասան, որ համախըմբում է իր շուրջը թատերասէրների որոշ խումբ ու գլուխ է բերում մի քանի պիէսների խաղացումը, որոնց յաջողութիւնը պատահականութեան արդիւնք է երբեմն։ Եթէ լինէր մշտական խումբ, այն ժամանակ գործն այնքան էլ ենթակայ չէր լինել պատահականութեան։ Տեղական բարք ու վարքի, նիստ ու կացի, առաքինութիւնների ու արատների ծանօթութիւնը կը մատակարարէր աւելի բեղմնաւոր գործառնութիւն. առաջ կը գային հեղինակներ, թատերագիրներ, դերասաններ, որոնք կը քաջալերէին բեմական կազմակերպութեան կողմից. մշտական գոյութիւն ունեցող բեմը կը պատրաստէր թատրոնական որոշ հասարակութիւն՝ կրթելով ճաշակ ու զգացմունք, միտք ու կամք։ Եւ դժուար չէ ենթադրել, որ այդ ժամանակ գաւառը նախապատրաստելով և մշակելով որոշ քանքարներ, նրանցից ինչպէս հարկն է օգտւելով՝ երբեմնապէս կը փայլեցնէր նրանց աւելի լայն շրջաններում—կենտրոնական բեմերի վրայ։ Մենք հեշտ գործի մասին չենք խօսում, և ամենևին նպատակ չունենք ընթերցողներին հրապուրել վառվռուն գոյներով ներկած հեռապատկերով. մեր ենթադրութիւնը կարող է իրականանալ միայն յայտնի պըրկանքներով և ամենացանկալի ծաղկման կը հասնի բարւոք պայմաններում, գործի ու ընթացքի անկաշկանդութեան ժամանակ, երբ խոչընդոտներից նեղւիլը մասամբ կը վերանայ մեր խոստմնաշատ երկրում։

Մեր գաւառական բեմը սահմանափակ գործունէութիւն ցոյց է տուել ցարդ։ Անտարակոյս, մխիթարելու բազմաթիւ փաստեր չունենք. մի քանի հատ փայլփլուն գծեր մեր գաւառական բեմի պատմութեան մէջ,—ահա բոլորը, ինչ որ կարող է միտք և ուշադրութիւն գրաւել։ Սակայն ցանկալի էր, որ այդպիսի գծերն աւելի շատ լինէին, աւելի մեծ շառաւիղներ դրոշմէին՝ պարզապէս նկատի առնելով առհասարակ բեմի նշանակալից դերը եւ մասնաւորապէս մեր անլոյս գաւառներում։ Երէկ և այսօր նոյնիսկ բեմը մեր գաւառների միակ դպրոցն էր և է առայժմ։ Ճաշակ և զգացմունք կրթելուց զատ՝ նա հարկադրուած, պարտաւորուած է եւ լեզու սովորեցնել։ Գաւառացին չը գիտէ հայ գրական լեզուն. հարկ է նրա մէջ ներշնչել ջերմ սէր դէպի մայրենի բարբառը։ Սրտի ցաւով պէտք է ասել, որ հէնց այս վերջին կէտում ընդհանրապէս կաղում է հայ թատրոնը, մասնաւորապէս մեր գաւառական բեմը։

Վերջին հանգամանքը բարդ պատճառների ծնունդ է. այդտեղ մեղաւոր են և մեր դերասանները և այն թատերասէրները, որոնք նրանց բացակայութեան ժամանակ գործի մէջ են մտնում՝ չունենալով լուրջ, յարմար պատրաստութիւն։ Պէտք է դժգոհութեամբ խոստովանենք, որ գաւառներում ներկայացումներ տւող մեր դերասաններից ոմանք և մի կարգ թատերամոլներ գաւառական բեմին աններելի թեթևութեամբ վերաբերւելով և յաճախ տխեղցփեղ և յիմարաբանութիւններով լի պիէսներ դնելով որոշ չափով պատճառ են դարձել մեր գաւառական բեմի յառաջադիմութեան տարտամ վիճակին և հայ հասարակութեան սառն վերաբերմունքին. անտարբերութեանը։

Վերև յիշած բոլոր պարագաներն ի մի գումարելով՝ առաջ են բերել այն խեղճ դրութիւնը որի մէջ գտնւում է այժմ մեր գաւառական բեմը։ Սակայն յոյս ունենք, որ գաւառական բեմի թըմբրութիւնը մշտնջենական չի լինի, որ մի քանի ժամանակից յետոյ նա կը դառնայ հայկական զարգացման արժանաւոր գործիքը։ Երբ նորաբաց ուսումնարանների շնորհիւ մայրենի լեզուն կը տիրապետէ հայ կեանքի բոլոր խաւերում, այդ ժամանակ շատ ուրիշ գործոնների հետ միասին և զուգընթաց կը ծաղկի նաև հայ թատրոնը, գաւառական բեմը։

Ա. Տ.

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՖԻՆԱԼԸ

Կառավարչութեան վերջին գործողութիւնը սկսւեց կենդանի, իսկապէս կենդանի պատկերով, որ պալատական լուսանկար Կլարը աջող հանդէս հանեց փոխարքայի սպիտակ դահլիճում մարտի 4-ին։ Ժողովրդասէր փոխարքան ինքը հաճեցաւ մասնակցել այդ պատկերախմբի մէջ, շուրջն ունենալով իր օգնականները, նահանգապետները։ Գեներալ Մալաման բարւոք համարեց որ իրանց խմբի մէջ մտնեն և մամուլի ներկայացուցիչները, որին յօժարակամ համաձայնութիւն տւին հայ-թաթարները, բայց չը յօժարեցին Վոզրոդ. և Յառաջ լրագիրների ներկայացուցիչները։

Կենդանի պատկերից յետոյ նախագահ գեն. Մալաման յայտնեց, որ փոխարքայի ամուսին կոմսուհին հրաւիրում է պատգամաւորներին կիրակի, երեկոյեան մի-մի թաս թէյի, իսկ երկուշաբթի ինքը փոխարքան կը փակի համագումարը։ Ծափահարութիւններով միաձայն ընդունելով այս որոշումները, կիրակի պատգամաւորական մի փոքր խումբ նախաճաշային բերեւ. կրկնութիւն արաւ Թիֆ. նահանգապետի մօտ, իսկ երեկոյեան փառահեղ էր պալատում խրախճանքը։ Ոչ թէ մի մի թաս սուրճի չայ էր, որ ամեն օր խմում էին հայ թաթար ազգերի ընտրեալները պալատում, այլ իսկական սրտաբաց հիւրասիրութիւն, որ Կովկասը սովոր է դեռ նախկին փոխարքայ երջանկայիշատակ Վարանցով-Դաշկովի ժամանակներից։ Պաղ շամպայնը թափւում էր հեղեղի նման։ Ողորմաթասը խմեցին թէ ոչ, այն չը գիտենք, բայց շատ պարպեցին, մանաւանդ կարիչ կաղակները։ Կէս գիշերին մօտ տաք գլխով լաւ կերուխումից յետոյ հայ-թաթար պատգամաւորները յաղթական երգերով պալատից հեռացան և հետևեալ օրը նոյն պալատում փոխարքան սառը ջուր թափելով նրանց գլխին սթափեցրեց հետևեալ ճառով՝

ՓՈԽԱՐՔԱՅԻ ՃԱՌԸ

«Ձեր նիստերում դուք չօշափել էք հարցեր, որոնց մեծամասնութիւնը չէ լուծում ներկայ բոպէի անհետաձգելի պահանջները։ Երբ այրւում է տունը, ժամանակ չէ մտածելու թէ ինչպիսի նիւթից և ինչպիսի յատակագծով պէտք է շինել նոր և կրակի դիմացող շինութիւնը։ Ընդհանրապէս հարկաւոր է որոշել հրդեհի խառնարանը, դէպի այդ կողմն ուղղել հրդեհը հանգցնելու բոլոր միջոցները։ Բայց դուք այդ խառնարանը չէք որոշել, թէև մեզանից իւրաքանչիւրին շատ լաւ յայտնի են պատճառները, որ ներկայումս նպաստում են հրդեհին։

Անկարգութիւններին նպաստում են մի կողմից հակաօրինական զինւած կազմակերպութիւնները, իսկ միւս կողմից՝ աւազակային խմբերը, որոնց շատ անգամ գաղտնի կերպով ղեկավարում են ազդեցիկ անձեր։ Կառավարութիւնը չէ կարող համբերել այդպիսի արտայայտութիւնները և կարգը խանգարողներին հալածելու համար արդէն ձեռք են առնում և ձեռք կառնեն ամենակտրուկ միջոցներ։ Թագաւոր—Կայսրին հաճելի է, որ հայ մուսուլմանական խառնակութիւնը դադարի և նա պէտք է դադարի։

Ձեզ եմ դիմում, պարոններ, որպէսզի դուք գործադրէք ձեր ազդեցութիւնը յարձակումներին ու թալանը դադարեցնելու համար և յայտնեցէք ժողովրդին թէ Թագաւորի կամքը և թէ խըստութեան այն միջոցների մասին, որոնք ձեռք են առնելու մինչև որ չարիքը արմատախիլ լինի։ Գործնական միջոցներից մի քանիսը, որոնց մասին դուք համաձայնութեան էք եկել, ես ընդունելի եմ համարում և այդ մասին ձեզ կը յայտարարեմ»։

Ապա խօսելով զինաթափման մասին, որը գտնում է փաստօրէն անիրագործելի մինչև որ՝

«Իսկական քաղաքակրթութիւնը—հիմնւած մերձաւորին սիրելու և օրէնքը յարգելու գիտակցութեան վրայ, կը թափանցէ Կովկասի բոլոր տեղերը և սեփականութիւնը կը դառնայ բոլորի՝ մեծի և փոքրի»։

«Վերջացնում եմ խօսքս նրանով, որ ես ձեր խորհրդակցութիւնից սպասում էի աւելի իրական միջոցների մըշակումն. բայց և այնպէս ես այն համոզմունքը դուրս բերի, որ դուք բոլորդ էլ ձգտում էք խաղաղութեան։ Ներշընչեցէք նոյն ձգտումը ձեր ցեղակիցներին և խաղաղութիւնը կվերականգնուի»։

Երկու կողմին որոտման ծափահարութիւն

Ընդգծենք փոխարքայի խօսքերը «Ձեր խորհրդակցութիւնից սպասում էի աւելի իրական միջոցների մշակման», ուրիշ խօսքերով... բայց մի՞թէ կարիք կայ լուսաբանելու այդ աւելի քան որոշ խօսքերը։

Փոխարքան չեշտեց, և «Կայսրին հաճելի է, որ հայ-թաթարական խառնակութիւնը դադարի եւ նա պէտք է դադարի»։

Մեր աղերսանքն էլ սկզբից հէնց այդ է եղել, որ Թագաւոր Կայսրը հաճի դադարեցնել տալ մեր երկրի արիւնհեղութիւնը, այժմս միայն կարող ենք հաւատալ, որ իսկապէս կըդադարի արիւնհեղութիւնը։

Համագումարի հանդէսը փակւեց թաթար Հաջիևի հետևեալ առաջարկութեամբ՝

Փոխարքան հեռանում է եւ բաբար պ. Հաջիեւ կնքում է համագումարն հետեւեալ ճառով՝

Մի ամբողջ տարի մեր երկրում թափւած արիւնը սուրբ է և այդ սըրբութիւնը յարգելու համար թող ամեն տեղ բացւեն դպրոցներ՝ լաւ մարդիկ պատրաստելու համար. իսկ այստեղ, Թիֆլիսում թող բացւի բարձրագոյն դըպրոց, համալսարան և թող նա կոչւի կոմս Վօրոնցով Դաշկովի անունով...

Դպրոցական

Վեհափառ Կաթողիկոսի հրամանով Վեհարանում Նորին Օծութեան դիւանապետ տ. Յուսիկ վարդապետի նախագահութեամբ և մասնակցութեամբ միաբանութեան ձեռնհաս անդամների, ճեմարանի տեսչի և ուսուցիչների

կայացաւ խորհրդակցութիւն հայ բոլոր ուսումնարանների բարեփոխման մասին:

Խորհրդակցութիւնը որոշեց առաջիկայ մայիսի սկզբներին կազմել ընդհանրական ժողով մեր դպրոցների ուսուցիչներից, տեսուչներից, հոգաբարձուներից և հայաշատ քաղաքներից էլ ձեռնհաս ներկայացուցիչներից: Իսկ մինչ ընդհ. ժողովը սրանց ուղարկել գրառումների ծրագիրը, վաղօրօք ծանօթանալու համար:

Ողջունելով Վեհափառ Կաթողիկոսի այս նշանաւոր կարգադրութիւնը, լիայոյս ենք, որ ժողովի ղեկավարները կը պատրաստեն ժամանակին և հայրենիքի ոգոյն համապատասխանող ուսումնական ծրագիր, հնարաւորութիւն տալով ժողովին ընդարձակել ծաւալը և մեր դպրոցները դնել իրանց բարձրութեան վրայ:

— Վեհափառ Կաթողիկոսը Վաղարշապատի ‹[illegible]› դպրոցը տեղափոխել է տալիս Շողակաթի վանքը, դպրոցը հրամայել է անուանելու Շողակաթեան ու վանքն էլ յանձնել վաղարշապատցիներին իբրև ծխական եկեղեցի:

Նորին Վեհափառութեան այս կարգադրութիւնը ուշադրաւ է: Ժողովրդական Կաթողիկոսը առնում է Էջմիածնայ միաբանութիւնից վանքը և յանձնում ժողովրդին: Արդեօք սրանով Հայոց Հայրիկը չէ ընդգծում, թէ ժամանակն է, որ պատմական Վաղարշապատ մայրաքաղաքն էլ վերածնուի և կարէ նրա լոյսի շողերը համայն ազգի վրայ:

— Վերջնականապէս վճռւած է ռուսական համալսարաններում և բարձրագոյն դպրոցներում ընդունել հաւասար ազայոց, կանանց եթէ, սրանք աւարտել են գիմնազիան:

Հայ Ուսուցչական Միութեան Մասնաժողովը խնդրում է Թիֆլիսում եղող բոլոր հայ ուսուցիչներին և վարժուհիներին ներկայ լինել այսօր կիրակի օրը ամսոյս 12 ին առաւօտեան ժամը 10 ին Յովնանեան դպրոցում կայանալիք Ուսուցչական ժողովին ծանօթանալու ուսուցչական միութեան համար կազմած կանոնադրութեան նախագծի հետ. ժողովի գումարումը թոյլատրուած է պաշտօնական իշխանութեան կողմից:—

Մեր թղթակիցները

Երևան 7 մարտի

Երևանի թեմական դպրոցի բարձր դասարանների աշակերտների դասադուլը վերջացաւ և նրանք փետրուարի 26-ից արդէն սկսել են յաճախել դպրոցը:

Քանի որ այժմ այդ հարցն այլ ևս իր նախկին սուր բնաւորութիւնը չունի և կրքերը բաւականին հանդարտել են, այժմ կարող ենք աւելի սառնասիրտ նայել այդ կարևոր խնդրին և քննել նրա երկու հանգամանքները.

ա) որքան համակրելի ու ցանկալի է աշակերտների պահանջագիրը, և

բ) որքան հնարաւոր էր դրա իրագործումն այդպէս անյապաղ, իսկոյն—ինչպէս որ պնդում էին աշակերտները:

Առաջինի մասին կասենք որ դա ընդհանրապէս բացառութեամբ մի քանի անէական կէտերի, իր ամենագլխաւոր բաժանմունքների կողմից, որոնք վերաբերում են գրաբարի կրճատման և աշխարհաբարի ընդարձակման, ռուսաց լեզւի աւելի լաւ ուսուցման և կրօնի դասաւանդութեան հիմնական բարեփոխման, վերին աստիճանի համակրելի և անհրաժեշտ պահանջներ են: Այդ առարկաների աւելի լաւ հիմքերի վրայ դնելու կարևորութիւնը շատ վաղուց է զգացւում և ահա այդ կողմից պէտք է ողջունել թեմ. դպր. այժմեան աշակերտներին, որ նրանք վերջապէս նախաձեռնող հանդիսացան այդ խնդրի հրապարակ գալուն և իր լուծումը պահանջելուն: Կրկնում ենք, այդ նախաձեռնութիւնը պատիւ է բերում նրանց:

Սակայն բոլորովին տարբեր է մեր կարծիքը երկրորդ հանգամանքի վերաբերմամբ: Ասել թէ պահանջները համակրելի են, դա դեռ չէ նշանակում, թէ նրանք այնպէս հեշտ էլ իրագործելի են. ահա այդ տեսակէտից այն բարեկամները, որոնք խրախուսում են աշակերտներին թէ սուրբ է նրանց դատը, որ միևնոյն է թէ անվերջ շարունակել դասադուլը, դա մեր կարծիքով ոչ թէ բարերարութիւն էր փողոցում մնացած 40-50 աշակերտներին, այլ միայն... արջի ծառայութիւն:

Չենք կարող շատ էլ գովել և այն թղթակիցներին, որոնք հեղեղեցին Թիֆլիսի թերթերը անթիւ օդւածներով աշակերտների փողոց նետւելու մասին... Չը պէտք է, պարոններ, թէկուզ յանուն ամենարդար պահանջի, թէկուզ ամենադաստիարակական գործի, մոլորեցնել խըմբագրութիւնները, հասարակական կարծիքը...

Բարեփոխումներն անհրաժեշտ են, պահանջներն իրաւացի, բայց միթէ դըրանց իրագործումը կարող էր արդանալ աշակերտների դասադուլի շարունակումով:

Խնդրի այդպիսի արագ կարգաւորում ոչ միայն անկարելի էր, այլ ոչ ցանկալի, նոյն իսկ հոգաբարձութեան և ուսուցիչների իրաւունքից բարձր:

Ի՞նչ իրաւունք ունէր Երևանի թեմ. դպր., հոգաբարձութիւնն ու ուսուցչական խումբը բարեփոխել մի ամբողջ ծրագիր. մի անգամ համաձայն են որ նրանք իրաւունք չունեն արձակել 40-50 աշակերտ, իսկ միւս տեղում նրանց իրաւունք են տալիս և պահանջում որ նրանք այդպիսի հիմնական փոփոխութիւններ կատարեն ծրագրի մէջ:

Դա վեր էր ոչ միայն նրանց իրաւասութեան սահմանից, այլ և ֆիզիքական ու մտաւոր կարողութիւնից:

-եան

Մամուլի շուրջը

Գրաքննական ճիրաններից ազատւած մամուլը օրհասական վիճակի մէջ է, թէև առայժմ շարունակւում է մաքառել. ընկնում են ռուսական ամենալաւ թերթերը, նրանց ղեկավարները:

Պետերբուրգի դատարանական պալատը մեղադրեց Նօվօստի լրագրի խմբագիր Օ. Կ. Նոտովիչին հինգ յանցանքների համար: Սրանցից մէկը՝ Բէբէլի գերմանական ռեյխստագում արտասանած ճառի Նօվօստի-ի մէջ տպագրելը, արդարացրելն, իսկ դատաստանական մամուլից մի քանի արտատպումների Միութիւն միութեանց ի ռուսում, Զօրբ եւ ժողովուրդը, Տեռոր, Մուսուլմանների ժողովը վերնագրով յօդւածների լոյս տեսնելը. դատապարտուեց: Պ. Նոտովիչ մի տարով բանտալէտք է նստի իսկ նրա Նօվօստի լրագիրն ընդմիշտ խափանւում է դատարանական պալատը. սակայն չը զրկելով նրան խմբագիր լինելու իրաւունքից:

Անցեալ կիրակի օրը լոյս տեսաւ պ. Ե. Ալվազեանի խմբագրութեամբ Յոյս պատկերազարդ շաբաթաթերթը:

Մամուլի ազատութիւնը այնքան արագ կատարւեց, որ օրէնքն իսկ հիմնւած է արտուրաքի վրայ: Նայեցէք և դատեցէք ինքներդ. մէկը կամենում է մի բրօշիւր հրատարակել, սրա համար իր գրւածքը պէտք է ներկայացնի գրաքննիչին, իսկ պարբերական թերթ հրատարակելու համար գրաքննիչի հետ վաղօրօք գործ չունի: Ինչու ուրեմն մի 10 երեսանոց բրօշիւր հրատարակել և ոչ 4 կամ 8 երեսանոց մի լրագրի, կամ շաբաթաթերթի համար: Չէ՞ որ նոր լրագրի մասին ամենքն էլ կը խօսեն, կը գրեն և փողոցն էլ լաւ կը սպառի նոր լրագրի առաջին №-ը: Ուրեմն ինչու չը փորձել ճանապար չար սատանին, ով գիտէ գուցէ և աջողութիւն էլ գտնել, հակառակ դէպքում Մօլլա-Նասրադինի ասած՝ բալան երդա իրըմ, ինճի դալերդա եամ...

Գեղարւեստական խրոնիկոն

Վերջապէս Ադելինա Պատտին, հինգամեայ ջանքերից յետոյ [illegible]... Գրամմոֆոնի, համաձայնել է իր արտիստական տուրնէն անելու բոլոր քաղաքներում և նրանցից ոչ շատ հեռու նման հարեւանների անեւում: Ամբողջ [illegible] ընդամէն 10 ր. և դրա հետ էլ իր, երբեմն գիզուհու, ինքնաձեռագիր վաւերականը, որ երգողը իսկ և իսկ ինքը՝ Ադելինա Պատտին է: Անշուշտ առանց այդ վաւերագրի ամենավարժ ականջն էլ կը դժուարանայ հաւատալ թէ այդ ձայնը երբեմն անզուգական սոխակ Ադելինայինն է: Հաւատում ենք, որ յիրաւի առնւազը հինգ տարիներ ջանքեր էին հարկաւոր, որպէսզի գիզուհին համաձայնէր իր յոգնավաստակ և կործանւած ձայնը տալու գրամաֆոնին և անշուշտ այնպիսի պայմաններով, ինչ գնով տալ է իր կոկորդը անգլիական մուղէյին: Մանիկեններին և աւտոմատների սիրահար մեր ինտելիգենտ ընտանիքները դեռ ժամանակ կունենան լսելու Պատտին, իսկ առ այժմ օգտակար գործ արած կը լինէին, եթէ վաղը երկուշաբթի գնային Արտիստիկ. թատրոնը, ուր Մելիքեօլի խումբը ներկայացնելու է Իբսէնի Տեսմէ դրաման և Պօտապենկոյի Գաղտնի խորհրդական բենը վօդեւիլը, առաջին իգական գիմնազիայում իրանց ուսումնավճարն անզօր տալու աշակերտուհիների օգտին:

Այսօրւանից արք. թատրոնում սկսւում է կայսեր. թատր. արտիստների գաստրօլները մասնակցութեամբ նշանաւոր դերասան Վարլամովի: Ռեպերտուարի մէջ առաջին տեղն է բռնում Օստրովսկին:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Մոսկւայի գեղարւեստական թատրոնի դրամատիքական խումբը ներկայացումներ է տալիս այժմս Բեռլինում: Օրերս այդ խումբը ներկայացրել է ռուսական պատմական Թէոդոր թագաւոր դրաման. ներկայ են եղել Վիլհէլմ կայսրը, ռուսական համազգեստով, կայսրուհին, իշխան աւագ-մինիստր Բիւլով և սրանք շատ ոգևորւած ծափահարել են տարագիր, պանդուխտութեան ցուպն առած, դանէ-դուռն ընկած Մոսկւայի գեղարւեստական թատրոնի դրամատիկ. խմբին և միաժամանակ չեն մոռացել գերմանական նշանաւոր բանկիր և ֆինանսիստ Մենդելսոնին Պետերբուրգ ուղարկելու, որը ներկայացել է ոչ միայն իր համքար Վիտտէին, այլ և նրա ուղեկցութեամբ բացել են Մենդելսոնի առաջ և Ցարսկո-սելոյի կայսերական դռները: Մի մոռանաք և Գերմանիայի հետ արդէն ընդունւած հաշտութիւնների մաքսային նոր սակագինը...

Անվրդով չէ կարող Գերմանիայի այսօրինակ յաջողութեանը հանդիսատես լինել հզօր, ինտրիգան Անգլիան: Եւ ահա հայկական խնդիրը նորից հրապարակ է եկել այնտեղ, Բուլղարիայի, Պարսկաստանի սահմանները զօրքեր են ուղարկւում, իսկ արդէն Պետերբուրգ հասած ճապոնական դեսպանը մինչև իր հաւատարմաթղթերի [illegible] այնտեղ Թագաւոր Կայսեր ցանկութեամբ օրերս պիտի ներկայանայ Կայսրին, որի բարեկամական կապերը Ճապոնիայի հետ սկսել են շատ արագ շաղկապւել:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վաճառումից գոյացած ամբողջ գումարը յատկացւում է Բագուից Թիֆլիս գաղթած չքաւոր հայ գիմնազիստ աշակերտների և աշակերտուհիների օգտին:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՒՈՒՄ Է
ՊՐՈՖ. Ա. ԿՐԻՄՍԿԻ
ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
ու
ՆՐԱ ԱՊԱԳԱՆ
Հեղինակից յատուկ թոյլտւած թարգմանութեամբ
Բաբկէն վարդապետի
(ժղ—170 երես, գինը 60 կոպ.)
Դիմել Թիֆլիսի Գրավաճառներին և թարգմանչին՝
Ս. Էջմիածին
Բաբկէն Վարդապետի
3—6

Ցանկանում եմ գնել
հին ձեռագրեր
Հասցէս՝ Տարազի խմբագրութիւն

Շարունակւում է 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:
Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:
Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առողջ նախնեամբ օժտւած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքւած հայ անդամներ սնուցանել:

ՏԱՐԱԶ

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV և XVII պատկերազարդ շաբաթաթերթ XVII

Մեռ տարեդարձ

Կըրմաններում և տարբեր շաւիղներում էին երեքն էլ սլանում, սակայն երեքն էլ մի նպատակ ունէին՝ հային բարձրացնել հոգեպէս։ Տարբեր էին սրանք և բնաւորութեամբ ու հայեացքներով։

Սիմէոնը մարմնացեալ բողոք էր, բողէի ազդեցութեան տակ կրակ, անզուգական հրապարակախօս, հիացքանչ լեզու, բայց ոչ հաստատակամ։ Երկինքը սրան պարգևել էր աստուածային կրակ, տաղանդաւոր էր իբրև ուսուցիչ, իբրև գերասան, հրապարակախօս, հռետոր։ Աշխատակցել է մեր կովկասեան բոլոր պարբերական թերթերին, թէ հայոց և թէ ռուսաց, նոյնպէս և մայրաքաղաքների մի քանի առաջադէմ լրագիրների։ Հիմնել է իր սեպհական ամսագիրները մէկը Շուշում՝ Գործ, միւսը Պարիզում՝ Ժամանակ. երկուսն էլ կարճ կեանք են ունեցել։

Մակար Եկմալեան
վախճ. 6 մարտի 1.05 թ.

Մեռաւ Պարիզում օտար երկնքի տակ, օտարների հիւանդանոցում և թաղեց ժամանակաւորապէս փոխ առած մի մարդաքոյ սև հողում։ Եւ եթէ մինչև մի տարի հայերը այդ հողը չը գնեն, սրա գլխի վրայ Ֆրանսիացիք կը թաղեն մի ուրիշ, նման սնտիրականի, բայց անշուշտ ոչ նման Սիմէոնի, այլ գուցէ հոգեկան մի ուրիշ հիւանդի, որին ալկոհոլը գցած լինի այնտեղ։

Պարիզի կովկասեան նոր գաղութը թող գէթ Սիմէոնի գերեզմանի հողը սեպհականէ և պահպանէ։

ՍԻՄԷՈՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ
վախճ 14 փետր. 1905 թ.

Խրիստափորը հակապատկերն էր Սիմէոնի. նա հեզ էր, լուռ, ըստ երևոյթին խաղաղ հոգին։ Բայց կարող էր անխռով լինել հայրենասէր մարդու մի հոգի, որը կանչւած էր երկնքից մարտնչելու անիրաւութեան դէմ։ Եւ ահա մեր Խրիստափորը թողնում է Կովկասը ու գնում օտար, ազատ երկիր իր տառապեալ սրտում հայրենիքի ազատութեան ծրագիրները մշակելու։ Բայց երևի այդ երկինքն էլ են չատ պէտք Խրիստափորի նման մարդիկ և ահա սա չանթահար է լինում. վայրկենական մահն անմահացնում է սրան։

ԽՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
վախճ. 5 մարտի 1905 թ.

Մ. Եկմալեանը հայի, մինչև աստուածները հասնող, հոգու բարձրութեան, բարքերի մաքրութեան մէջ էր գտնում իսկական բարօրութիւնն ու խաղաղութիւնը։ Եւ նա ինքը խաղաղ էր հոգով, ճշմարիտ ուսուցիչ գեղեցկի և բարւոյ։

Հայը ժողովրդական երգերի ուսուցիչ Կարա-Մուրզային չուտ հասկացաւ, որովհետև խոր ու բարդ չէր նրա ուսուցմունքը, բայց Մ. Եկմալեանի նման, նոյն իսկ Ռուսաստանում, հռչակաւոր երաժշտագէտին չը ճանաչեց և ճանաչողներն էլ հալածեցին նրան մինչև գերեզմանը։

ԶՕՐԱԿԱՆԻ ՈՐԴԻՆ

(Սկիզբը Տարազ N 8)

ՆԱԽՆԱԹԱՑ ՕՐԻԱՑ ԵՐԵԿՈՆ

Դ

Տուն վերադարձաւ ծերունի Բարկէնը սովորականից աւելի ուրախ։ Նրա դէմքի վրայ թագաւորում էր մի խորհրդաւոր ուրախութիւն, մի ուրախութիւն, որ անշուշտ իր ցանկութիւնների և մտքերի իրագործումն էր արտայայտում։ Ծերունին ողջունեց կնոջը և երեխաներին. նրանք ամենքն էլ հօր մտնելուն պէս ոտքի կանգնեցան։ Պատկառելի ծերունին մի թեթև ժպիտով նրանց կրկին նստելու հրա-

Երկնքի թռչունները երկրային դրախտում

ււնքը տւեց։ Հօր ուրախ դէմքը տեսնելով՝ երեխաները բարձր աղաղակով շրջապատեցին նրան։ Հուփսիմիկն սկսեց իր բոլոր արտօնութիւն ստացած ցանկութիւններն իրագործել։ Նա փաթաթւեց հօր վզովը և պահանջեց իրան բարձրացնել ուսերի վրայ։ Հայրը կատարեց փոքրիկ իշխանուհու անմեղ խնդիրքը։

— «Հայրի՛կ ես քանի՞ տարեկան եմ, թոթովեց աղջիկը»։

— «Տիգրանակերտի պատերազմից ուղիղ 30 տարի յետոյ ես ծնւած, ուրեմն տասը տարեկան ես, Հռիփսիկս»։

— Տիգրանակերտի պատերազմից 30 տարի, հա՞ հայրիկ»։

— «Այո՛ իմ գառնիկ»։

— «Իսկ Վահունի՞կը քանի տարեկան է»։

— «Քեզանից չորս տարով մեծ»։

— «Ուրեմն քանի՞ տարեկան եմ ես, Հռփսիկ, մէջ մտաւ եղբայրը։

— «Տասն և երեք, պատասխանեց քոյրը։

— «Ապրե՛ս, նկատեց ծերունին 10 տարի և 4 տարի կանի 14»։

— «Ո՛չ, խաբեցի՛, խաբեցի, աղաղակեց չարաճճի Հռփսիմիկը տասն և չորս կանէ։

— «Դու այդ սկզբում չըգիտէիր Հռփսիմիկ, ասաց եղբայրը։

— «Գիտէի՛»։

— «Չըգիտէի՛ր»։

— «Ա՜խ հայրիկ, Վահունիկին ասա թող լռէ, գիտէի ասում եմ»։

Քիչ էր մնացել որ Հռփսիմիկը լաց լինէր։ Բարի Վահունիկը այս անգամն էլ պարտւեց իր քրօջից։

— «Դէ որ գիտէիր ու չէիր ուզում ասել, ուրեմն հեռացիր իմ մօտից բաւական է սիրելի Հռփսի-

Մեծն Բրիտանիայի զրահ նաւը Ալիսկայի հիւսիսային ծովերը ձմեռելիս

կըս, ասաց ծերունի զօրականը և գրկից վար իջեցրեց իր կայտառ և գեղեցիկ աղջկան։ Աղջիկը հեռացաւ, իսկ Վահունիկը գլխակոր հօր մօտ կանգնած սպասում էր թէ երբ սկսւի խօսակցութիւնը իր ցանկալի առարկայի մասին»։

— «Աչքդ լոյս քաջ որդիս, վերջապէս զօրականն ընդհատեց լռութիւնը, վաղը առաւօտեան կը թողնես մեզ։ Այսօր մինչև երեկոյ շրջակայ գիւղերից կը հաւաքւի բազմութիւնը, քաղաքացիկ համարեայ արդէն պատրաստ են. և վաղը առաւօտեան արեւածագին կըուղղեւորւեն դէպի Գողթան»։

— «Գողթան գաւառում պէ՞տք է պատերազմենք հայրիկ, ուրախ-ուրախ ասաց երեխան»։

— «Ո՛չ, այնտեղ կը լինի ընդհանուր զօրաժողովը, իսկ ապա առաջ կը խաղաք դէպի թշնամին, որը նոր է անել վասպուրականի սահմանները։ Դոնէ այսպէս են մտածում սպարապետն ու նախարարները։ Աւ ուրեմն Վահունիկ իմ սուրն ու նիզակը, մի լաւ մաքրիր, պսպղացրու. արխներդ պատրաստիր, մաքուր են չորերդ պատառոտւած տեղեր չունի՞ն, լաւ նայիր, մէկ խօսքով հազարապետին անպէս պատրաստ յայտնւիր, որ ուրիշներին իբրև օրինակ քեզ մատնացոյց անէ»։

Որդին ուրախ-ուրախ հօր ձեռքից առաւ սուրն ու նիզակը։ Զարաճճի Հռփսիմիկը չէր կարող հաւատալ իր աչքերին։ Վահունիկը մի հայեացք գցեց մօտեցող քրոջ երեսին, կարծես ասելու թէ, տե՛ս, կամակոր քոյր, ես սուտ չեմ խօսում, հայրիկը տալիս է իր սուրն ու նիզակը։ Հռփսիկն այդ րոպէին չէր կարող ուղիղ նայել եղբօր երեսին նա ամաչում էր. նա մօտենալով հօրը հարցրեց.

— «Հայրի՛կ, այս սրի վրայ ի՞նչ է գրած»։

— «Տիգրանակերտի պատերազմից բերած սուրն Հուիփսիկ, սրա վրայ գրուած է ով որ բարի է՝ Աստուած նրան էլ կը տայ. ով որ քաջ է նա կը յաղթէ, ով որ հայրենիքը կը սիրէ՝ Աստուած էլ նրան կը սիրէ. հասկացա՞ր ուրեմն»:

— «Ո՛չ պատասխանեց աղջիկը»:

— «Ոչի՞նչ չը հասկացար, Հուիփսիկ, բարձրաձայն ծիծաղով հարցրեց ծերունի զօրականը»:

— «Ոչինչ չը հասկացայ. ասում եմ, ասաց Հուիփսիկը և հեռացաւ, իսկ հայրն ու Վահունիկը երկար ծիծաղեցին պարզամիտ աղջկայ վրայ»:

— «Իսկ զօրավարը չի՞ արգելիլ ինձ, հայրիկ, ասելով թէ դու փոքր ես»:

— «Ո՛չ Վահունիկս, ո՛չ միայն չի արգելիլ, այլ և շատ կուրախանայ: Բայց դու աշխատիր, որ ինչպէս զօրավարիդ, նոյնպէս և ինձ երբէք չամաչեցնես, մեր երեսին ամօթ և նախատինք չը բերես: Բոլոր հրամանները ճշտութեամբ կատարիր: Պատերազմի խառնուածքում քաջ, անվախ և հանդուգն եղիր, իսկ գինուորների շարքում համեստ, ո՛չ փքյրախօս, այլ հեզաբարոյ: Աշխատիր շատերին օրինակ լինես, պարկեշտ և առաքինի զինուորի անուն ժառանգես: Բաջ եղիր. թշնամու առաջն երբէք մի զիջանիր: Միշտ ճշմարտախօս եղիր: Դէ՛ ուրեմն, Վահունիկս, իբրեւ հաւաքիր...

Զինուորական նուագախմբով քաղաք էին մտնում մօտակայ գիւղերից զէնքի կանչուող զինուորները: Նրանց ազազակն ու երգերի ձայնը թնդացնում էր ամբողջ քաղաքը: Վահունիկի սիրտը կտոր կտոր եղաւ. այդ րոպէին նա մի մ՛ս քաշեց: Արեգակը մայր էր մտել. նրա վերջին ճառագայթները լուսաւորում էին միայն հեռուն երկարաձգուող բարձր լեռների ձիւնապատ գագաթները:

—

Ամբողջքաղաքը դղրդում էր: Ամեն մի տուն պատրաստում էր իր մի կամ երկու զինուորը: Ամեն մի ընտանիք սիրով շրջապատել էր իր անդրանիկին. խօսում էին, երգում, ծիծաղում: Մնացածները բարի աջողութիւն և կրկին տեսութիւն էին բարեմաղթում գնացողներին, իսկ վերջիններս աջող պատերազմ և թշնամու ջարդ: Մինչև կէս գիշերը երթեեկութիւնը փողոցներում դեռ չէր կտրուած: Խումբ-խումբ երիտասարդներ ուրախ զուարթ տնից տուն անցնելով «մնաս բարեաւ» էին ասում իրանց բարեկամներին, ազգականներին և դրացիներին: Բայց ի՞նչ է անում մեր Վահունիկը, մեր անդրանիկ զինուորը, մեր հայրենիքի փառքը. մեր անվախ երեխան. մեր հայրենասէր և հայրասէր տղան, որ ծերունի հօր փոխարէն պատերազմի դաշտ պէտք է իջնի: Փոքրիկ, մաքուր, կահաւորած և գեղեցիկ սենեակի մէջ, մեղ ծանօթ տախտի վրայ նստած է նա:

Նրա չուրջը ցիրուցան թափուած են փայտներ, հագուստեղէն և զէնքեր: Նա գլուխը կախած, լուռ ու մունջ մի մաքուր չորով մաքրում էր սրի պատեանը և երկար նիզակը: Սենեակում տիրում է խորին լռութիւն, ծերունի Բաբկէնը և փոքրիկ իշխանուհին վաղուց քնած են, իսկ տ. Սիրանոյշը տխուր և արտասուալից աչքերով մի ինչ որ բան էր գործում: Նա ծերունի Բաբկէնի երկրորդ ամուսինն էր, Բայց Վահունիկի և Հուիփսիմիկի հարազատ մայրը: Նրա առաջին ամուսնուց ունեցած երկու որդիքը մեռել էին մի ճակատամարտում, և հիմա անբաղդ կինը, լուռ արտասուքով պէտքէ բաժանւի իր միակ յոյսից, իր կեանքի ապաւէն Վահունիկից, ծերունի Բաբկէնի ընաւորութեան խստութեան պատճառաւ, նա երբէք չընդիմացաւ որդու պատերազմ գնալուն, այլ լուռ ու տխուր սկսեց սանել ճակատագրի հարուածը:

— «Մայրիկ, վերքեր կապելու չորեր էլ տուիր, ասաց երեխան, դառնալով դէպի մայրը»:

— «Ահա՛ սրանք են, Վահունիկ բայց դու սպասում ես թշնամու անգութ հարուածին»:

— «Այո՛, եթէ ես որոշել եմ, որ վախկոտ զինուորի նման հեռու չըպէտք է փախչեմ, ուրեմն պէտք է սպասեմ, որ թշնամու սուրը կարող է ինձ էլ հանդիպել»:

Երախան լռեց: Մայրը աչքերից մի զոյգ արտասուքի կաթիլներ գլորեց և հեկեկալով ծածկեց երեսը:

— «Վերջացրի. ամեն բան պատրաստ է, ասաց Վահունիկը վերկենալով տեղից»:

Նա զէնքերը կանգնեցրեց պատի մօտ և կապեց ճանապարհի պաշարը: Մի քանի ժամուայ ծանր աշխատութիւնը յոգնեցրեց երեխային, ուստի նա թարմ օդ ծծելու համար դուրս եկաւ փողոց: Կէս գիշերն անցել էր: Ամբողջ քաղաքը մրափում էր մի խաղաղ և հանգիստ քնի մէջ: Նա նայեց շրջակայքը. նայեց դէպի երկինք արծաթափայլ ամպերի միջից լողացող լուսինն: Նարձրեց երեսը դէպի գիշերային մեղմ զեփիւռը, և նա ուզում էր երկա՛ր, շատ երկա՛ր մնալ այդ զմայլեցնող տեսարանում: Նրան թւում էր թէ այդ վերջին գիշերն էր, որ զմայլւում էր այս աշխարհի վայելքներով. բայց և այնպէս, Վահունիկն այնքան փոքր չէր, որ չըմտածէր ու չըհասկանար, թէ մի աւելի մեծ վայելք ու երջանկութիւն մեզ սպասում է մի այլ կեանքում, որը ձեռք է բերւում այս աշխարհի մէջ, պարտքի ճիշտ կատարումով: Նա երկար նայեց արծաթափայլ հորիզոնին, շրջակայ լեռներին, դաշտերին և քնի մէջ ընկղմուած քաղաքին: Նա գլուխը քարշ գցեց և ներս մտաւ: Անկողինը պատրաստ էր, յոգնած և գազրած նա ընկաւ տեղի վրայ և քունը կաշկանդեց նրան... (Կը շարունակւի)



Պրօֆեսսօր Վիլհելմ Օստւալդ

Արուեստ եւ գիտութիւն

Սկիզբը Տարազ № 8

Այն խնդրի վրայ, մտածենք թէ ինչ պայմանների տակ կարող են լաւ յարաբերութիւններ կազմել մօրաքրոջ և սանուհու մէջ: Մենք գիտենք արդէն, որ որքան նրանք աւելի հասակաւոր են դառնում, այնքան դրութիւնը անյուսալի գիրք է բռնում: Թէ ընդհակառակը աւելի լաւ կը լինէր, եթէ սանուհին աւելի հասակ առնէր, իսկ մօրաքոյրը երիտասարդանար, մենք այդ յիշում ենք միայն սիստեմատիքական լրութեան համար, առանց կանգ առնելու այդպիսի դ..րսողութեան վրայ, գիտնալով նրա անհնարաւորութիւնը: Մտանացոյց լինենք այստեղ և այն հանգամանքի վրայ, որ թէպէտ գիտութիւնը և արուեստը ունեն մի տեսակ նմանութիւն մարդկային սրարածների հետ, սակայն, ինչպէս արդէն նկատուած է, նշանաւոր չափով զանազանւում են նրանցից իրանց անմահութիւնով: Այդ անմահութիւնը այն նշանակութիւնն ունի, որ նրանք ոչ միայն ծերանում են, այլ ժամանակ առ ժամանակ երիտասարդանում են: Այստեղ մեզ մէկէն ի մէկ թւաւորում էյոյսը: Եթէ ուրեմն պատահում է, որ գիտութիւնը դեռ բաւական մանուկ է, երբ նոյն մի ջոցին արուեստը արդէն սատայել է յայտնի չափ հասունութիւն, ուրեմն առձեռն գտնւում են բոլոր անհրաժեշտ պայմանները: Եւ եթէ մենք իմաստասիրենք վերոյիշեալ դէպքերը. կը համոզւենք, որ նրանք իրաւի պատահել են այն ժամանակ, երբ արուեստի հասունացած միջոցին գիտութիւնը, առաւել ևս բնախօսութիւնը, մեծ թռիչք անելու էր պատրաստւում և արտայայտում էր երիտասարդութեան բոլոր նշանները:

Սակայն, ես չեմ հասցնի ծայրայեղութեան այդ նմանօրինակութիւնը. քաղաքավարութիւնը պահանջում է նոյնպէս, որ գիտնականների *համբարին* պատկանող մարդը, կատարէ իր աշխատութիւնը իր արհեստի կանոններով: Այդ պատճառով ես իսկոյն կցում եմ վերևը ասածիս իմ համոզմունքը, որ մեր ժամանակը մասամբ օժտուած է արդէն այնպիսի յարաբերութիւնով գիտութեան և արուեստի մէջ, որ նկատւում էր տասն և վեցերորդ դարու սկզբում, իսկ մասամբ կարող է նա սպասել հիմա էլ այդ դրութեանը հասնելու: Այդ համոզմունքը ես կը ցանկայի պատճառաբանել. դրա համար ինձ հարկաւոր է ամենից առաջ թեթեւակի դիպչել գիտութեան երիտասարդանալու խնդրին:

Այդ երիտասարդանալը արտայայտւում է ամենից առաջ նրանով, որ գիտութիւնը իր առաջւան խստութեան և նեղսրտութեան մեծ մասից ձեռք է վեր առել: Դեռ Գիօթէն, որ ամեն տեղ պատերազմում էր արուեստի համար գիտութեան իրաւունքների դէմ, յայտնում է բնութեան օրէնքների բնաւորութեան վերաբերմամբ իր համոզմունքը, յաճախ կրկնուող խօսքերով՝ յաւիտենական, երկաթի նման կարծր, այն մեծ օրէնքների մասին, որոնցով կատարւում է մեր կեանքի շրջանութիւնը: Բնութեան օրէնքները ներկայանում էին նրան, որպէս և մեզանից շատերի համար այժմս, թշնամի, անողորմ ուժեր, որ ճանկւում են թուլամորթ մարդուն իրանց անիւների մէջ և ջարդւում են նրան առանց որեւէ խղճահարութեան և ողորմածութեան: Բայց երբ մենք ուշի ուշով նայում ենք այդ յարաբերութեան վրայ, որպէս նրանք ներկայանում են մեր առաջ այժմս, երբ մարդ, ինչպէս տեսնում ենք, իր ձեռքն է հաւաքել բնութեան բանդքնդող ուժերը, հարկադրելով նրանց ծառայել իր օգտին և բաւականութիւններին, երբ ծաղիկը և ժանտախտը կորցրել են իրանց սարսափանքի մեծ մասը, երբ ոչ թէ կեանքի դժուարութիւնները, այլ և նրա միջին տեւողութիւնը մեծացել են առողջապահութեան զարգացման շնորհիւ, ակներև է դառնում, որ վերևը առաջ բերած հասկացողութիւնը բնութեան ուժերի վերաբերմամբ իրականութեանը չէ համապատասխանում: Նրանք ներկայանում են մեր առաջ ոչ իբրև թշնամի հսկաներ, այլ աւելի շուտ որպէս ահագին խելամիտ փղեր, որ կարող են մեզ ցոյց տալ մեծամեծ ծառայութիւններ, եթէ միայն նրանց հետ վարւինք ինչպէս պէտք է:

Կամ, եթէ դուք նախադասում էք այլ ձև, ես առաջ կը բերեմ մի այլ համեմատութիւն: Մեր առաջուան հասկացողութիւնը բնութեան զօրութիւնների մասին համապատասխանում էր՝ մի անփոփոխ հրամայուած ճանապարհով երթեեկելուն և որը արգելում է դէպի աջ կամ դէպի ձախ թեքւելու: Այժմս մենք նայում ենք բնութեան ուժերի վրայ, որպէս լայնար ձակ տեղի վրայ մեզ *ուղեկցողների*, այնպիսի տեղի վրայ, ուր պատահում են սարեր և դաշտավայրեր, անտառներ և ճահիճներ: Այդ ուղեկիցները երբէք չեն հարկադրում մեզ մի կամ միւս ճանապարհով ընթանալ, աւելի ևս, ոչ էլ մեզ չէ արգելում ուղղակի ճահճի մէջ խրուել: Բնութեան օրէնքը միայն ասում է մեզ, որ եթէ մենք այդ ճանապարհով գնանք կը խրուենք ճահճի մէջ, որովհետև մեզանից առաջ եղել է այդտեղ վստահելի մի մարդ, որ տեսել է և քննել այդ ճանապարհը և նրա մասին հաշիւ է թողել: Եւ գիտութեան առաջադիմութիւնը համապատասխանում է ուղեկիցների աւելի և աւելի բազմանալուն: Երբեմն առաջին հետազօտը սխալւում է, և այն ճանապարհը, որ առաջ անմատչելի էր համարւում մատչելի է ճանաչւում: Այնուհետև այնպէս էլ է պատահում, որ մի նոր ճանապարհ գտնող մարդը ընտրում է ամենաանյարմար և ամենավտանգաւոր ճանապարհներից մէկը: Այդ բանը, ի հարկէ, հեշտացնում է նրա յաջորդի խնդիրը, որը համոզուած է լինում արդէն, որ նպատակի կարելի է հասնել, միայն թէ հարկաւոր է նրան իր ժամանակը ամբողջապէս նւիրել աւելի լաւ, մի նոր ճանապարհ գտնելուն: Բայց յետագայ սերունդները տածում են դէպի առաջին պիոնները աւելի ևս շնորհապարտութիւն, որ նա կարողացել է անհրաժեշտ արգելքներին յաղթելու հետ ի միասին նոյնպէս և առաջին ճանապարհի պատահական խոչնդոտները յաղթել: Այս աւելի մեղմ հայեացքը բնութեան օրէնքների վրայ ընդհանուր տարածումն ստացաւ նորերս միայն: Վերևը յիշած խիստ հայեացքը ներկայումս էլ դեռ ունի մեծամասնութիւնը, սակայն այդ մեծամասնութիւնը լոկ *որակական* է: Իսկ քանակական գերազանցութիւնը անշուշտ նոր հայեացակէտ ունեցողների կողմն է: Ես բախտաւոր եմ, որ ինձ վիճակւում է այստեղ կից այդ հարցին յիշել այն մարդու անունը, որին գիտութիւնը պարտական է վճռականապէս այդ կողմը դառնալուն: Դա էրնեստ Մախն է, մի մարդ, որ ցոյց տւեց գիտութեանը նոր ճանապարհներ, որոնցով նա աւելի և աւելի սկսում է առաջ գնալ:

(Կը շարունակւի)



ԹԻՖԼԻՍ ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿ. ԹԱՏՐՈՆ

Առաջին իգական գիմնազիայի ծնող. շրջանը *Մարտի 13—ին յօգուտ նոյն գիմնազիայի ուսմանավճարն անելու անկարող աշակերտուհիների* սարքում է ներկայացում: Խաղալու է *Մէլիքխօյեի* դրամատիկական խումբն

ՏԵՍԻԼՔ

դրամա 3 գործ. հեղ. Իբսենի

եւ

Գաղտնի խորհրդականի քոյրը

կատակ. կատակերգ. հեղին. Պօտապենկօ.

Տոմսակներ կարելի է ստանալ նոյն գիմնազիայում

2—2

——

ԲԱՑՒԱԾ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԿԵԱՆՔ“

Քաղաքակ. հասարակական և անտեսական օրաթերթի, որ քաղաքական պայմանների շնորհիւ առ այժմ կը հրատարակւի իբրև ՇԱԲԱԹԱԹԵՐԹ բաժանորդագրութիւնն է Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ. Թիֆլիսից դուրս տարեկան 3 րուբ. Արտասահման տարեկան 4 րուբ. Թիֆլիսում հատով 5 կ. Թիֆլիսից դուրս հատով 7 կ.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Բ. Իշխանեան

3—1

Մամիկոնեան առիւծը

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Ցօլեան Գուսանը

Ա

Ճատ-շատ վշտեր եկան, անցան
Այն տարաբաղդ օրերից,
Երբ հեռացաւ տուն ու տեղից
Մեր գուսանը վշտալից:

Երբ որ թողեց Գողթան եզերք
Վանանդ գիւղը հայրական
Ուսին գցած իր բամբիռը
Գնաց շրջել Հայաստան:

Նա մոռացաւ կին ու զաւակ
Եւ սիրող մօր արցունքներ.
Միակ հոգսը ազգի ցաւն էր
Ու Հայրենիքն իր աւեր:

Հայոց երկրի վիճակն անբաղդ
Արիւն քամեց իր սրտից
Եւ սեւ ցաւի խոր խոցերով
Երգեր հիւսեց վշտալից:

Բայց և ինչեր նա չ'տեսաւ
Դժբաղդ երկրի ծայրերում,
Որ թշնամու ան'արգ ձեռքով
Հայ աշխարհն էր աւերւում:

Տեսաւ Արտաղն աւեր դարձած
Հին Զարեհնդն արնալից
Տեսաւ ծուխը վեր բարձրացող
Որշտ։ւնեաց դաշտերից:

Տեսաւ հայոց քաղաքների
Աւերակներն անհատը,
Որոնց միջին տխար ձայնով
Բուն էր վայում սգաւոր:

Իսկ սգաւոր դաշտերի մէջ
Մի կռռունչ էր նա լըսում,
Որ օդի մէջ միշտ ճախրելով
Արնոտ գիսակ էր փնտրում:

Տեսաւ հողի հետ հաւասար
Բերդ ու պարիսպն հայ երկրի
Տեսաւ վանքերն աւեր ու լուռ՝
Առանց անուշ երգերի:

Որպէս մի բու խեղճ ու ·սգւոր
Այդ լուռ վայրերն այցելեց,
Անմահ նախնեաց փառքն յիշելով՝
Երկար տանջւեց ու երգեց:

Լացեց աւեր Այրարատում
Ախուրեանի ափերին,
Գնաց պատմեց սրտի վիշտը
Վանայ պղտոր ջրերին:

Գնաց տեսաւ արնով ներկած
Ուրմիական մեծ ծովը,
Լսեց այնտեղ-ինչ էր երգում
Զար հարաւի սեւ հովը:

Եւ այդքան վիշտ ցաւ ու տանջանք
Տեսաւ երգիչն հայրենի,
Ապա ընկած գիւղ ու քաղաք
Պատմեց վիճակն հայ երկրի:

Նա անցկացաւ Տարօն ու Մուշ,
Հասաւ մինչև Աշտիշատ,
Գնաց երգել Հեր, Զարեւանդ,
Նորից դարձաւ Արտաշատ:

Գնաց հասաւ Տիգրանակերտ,
Ապա դարձաւ մինչ Դուին
Ժէժոտ Վանայն անց կենալով՝
Հասաւ Տայքի բերդերին:

Եւ ողջ երկրում տեղ չըմնաց
Որ Գուսանը չայցելէր
Ու խփելով իր բամբիռին
Ազգի ցաւը չը երգէր:

Իշխանական պալատներում
Ազգի սուգը նա պատմեց
Անուշ երգի տխուր խօսքով
Լսողների սիրտն այրեց:

Մենաստանի լուռ պատերը
Նրա երգից թնդացին,
Եւ ռազմական երգի ձայնից
Հայ բերդերը խնդացին:

Ողջ աշխարհում մարդ չըմնաց:
Որ չըլսէր իր երգը
Եւ չըխոցեր ու բորբոքէր
Արնոտ սրտի խոր վէրքը:

Բ

Երկար տարեր միշտ անընդհատ
Գողթան երկրի երգիչներ
Ընցնում էին հայ աշխարհը
Եւ հնչեցնում բամբիռներ:

Ուսին գցած մի բամբիռ՝
Թողնում էին տուն ու տեղ
Եւ անընդհատ շրջում էին
Հայ աշխարհը բազմացեղ:

Սև օրերին երգում էին
Սուգը հայոց աշխարհի,
Անվիշտ օրը երգն էր անհոգ
Հնչւում ուրախ, բերկրալի:

Գն՚ւմ էին այցելելու
Հայոց վանքերն աւերւած,
Գնում էին անձամբ տեսնել
Հուրն ու ծուխը բորբոքւած:

Վտանգներից չերկւչելով
Հասնում էին ամեն գիւղ
Ցոյց կը տային խղճճուկ հային
Լինել անվախ, աներկիւղ:

Փոշով ծածկւած կարում էին
Հայոց անանց լեռները,
Հանդիպողին պատմում էին
Հայրենիքի ցաւերը:

Իսկ երբ լինէր հայ աշխարհում
Իշխանական հարսանիք,
Կամ կատարէր շքեղ խնճոյք
Հայոց փարթամ աքրունիք՝

Գուսանները բամբիռներով
Ուրախ վայրը կերթային,
Եւ այդ տօնի կամ հարսանեաց
Գովն ու փառքը կերգէին:

Բայց հայրենի երգիչները
Մի այլ կոչում ունէին,—
Ընկերակցել ռազմի երգով
Հայոց երկրի բանակին:

Ողևորել կռւող քաջին
Պատերազմի դաշտում
Կամ լէ մեռնել կռուիճի հետ
Սուրի ահեղ խառնւածքում:

Գ

Իսկ այն անգամ երգիչն Յովհան
Հայոց աշխարհն անցնելով
Եկաւ հասաւ Տայք գաւառը
Սրտի անհուն ցաւերով:

Ուզեց տեսնել, ցաւը պատմել
Մամիկոնեան Վահանին,
Որ եկել էր բերդն Երախան
Տեսնել իր մայր Զւիկին:

Ուր որ Հայոց իշխանները
Երկար դարեր շարունակ,
Կուղարկէին իրանց կանանց
Պատերազմի ժամանակ:

Ուր կապրէին իշխանուհիք
Ազատ ամեն վտանգից,
Ուր չէր հասնում բիրտ թշնամին
Հայոց լերանց սարսափից:

Բայց թէ ինչի՞ հայոց բերդից
Այս անգամին մարդ չելաւ,
Ինչի՞ էր լուռ հին ամրոցը—
Խեղճ Գուսանը չիմացաւ:

Իսկ հայրենեաց խղճուկ լացը
Չէր թոյլ տալիս մեր երգչին
Թողնել անցնել հին ամրոցը
Դեռ չըտեսած այն քաջին:

Պետ. Մաճառեանց.

(Կը շարունակւի)

Առաջին մասնաւոր հիւանդանոց

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

հիմնւած 1880 Թ.

(Կուկիա, Վարանցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նախասարդեան—11—12ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ հ.:
Ս. Մ. Չիկովանի—9 և կէս—10 ժ. աչքի, ներքին և ներգայրին հ.:
Մ. Դ. Աւետիսեան—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժ.:
Զ. Ի. Բարսեղեանց—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ս. Ի. Դզեկիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.:
Ա. Դ. Խարապետեանց—1—1 և կէս ժ. ներքին և երեխ. հ.
Կին բժիշկ Շչերբինինա—1 և կէս—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:
Դ. Յ. Դուրգէեով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ Փուցինով—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Դ. Աբեանց—6—7 ժ. ներքին հիւանդութեան:
Բ. Ա. Նախասարդեան—7—7 և կէս ժ.
Վճարը 50 կ., չքաւորները ձրի: Համախորհրդի—կօնսիլիումի և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ
Բժշկապետ Բ. Նախասարդեան:

3—3

Պրօգիմնազիական աւարտած և հաշւապահ. լաւ սովորած, բէմինգտօնի վրայ գրող մի հայ օրիորդ Թիֆլիսում որոնում է պաշտօն փաճառատներում կամ առևտր. գրասենեակում:
Հասցէն՝ Օր. Փ. Տաւագի խմբագրատուն.

Լոյս տեսաւ ՀԱՈՒՊՏՄԱՆԻ

«ՋՈՒԼՀԱԿՆԵՐԻ»-ի

հայերէն թարգմանութիւնը, 106 երես, գինը 40 կ.: Դիմել՝ Մոսկւա, Ժամհարեան եղբայրների բանկային տուն, Սարքեսին Արտեմեին:

3—5

ԿԵԱՆՔԸ ԲԱՐՁՐՈՒՄ

(Մուլտատուլից)

Առակ



Բարձր-բարձր օդի մէջ ճախրում էր Թիթեռնիկը։ Նա զւարճանում էր իր ազատութեամբ, իր գեղեցկութեամբ և ամենից աւելի նայելով այն հրաշալի տեսարանին, որ բարձրից երևում էր նրա աչքին։

—Թռէք այստեղ ինձ մօտ... դէպի բա՜րձր,—կարծես ձայն էր տալիս նա իր եղբայրներին, որոնք ներքևում օրօրւում էին կանաչ ծաղիկների վրայ։

—Մենք խմում ենք մեղր, այդ պատճառով էլ մնում ենք այստեղ, ներքևում։

—Օ՜, սիրելի եղբայրներ, եթէ դուք իմանայիք թէ ինչպիսի զւարճութիւն է տեսնել աչքով ամեն ինչ։ Դէ՞հ եկէք այստեղ, այստեղ շուտով։

—Իսկ կա՞ն այդտեղ ծաղիկներ, որոնցից մենք կարողանայինք հաւաքել մեղր, որն անհրաժեշտ հարկաւոր է մեզ, թիթեռնիկներիս, ապրելու համար։

—Այստեղից երևում են բոլոր ծաղիկները,—իսկ դա այնպէս զւարճալի է...

—Իսկ կա՞յ այդտեղ քեզ մօտ բարձրում մեղր։

Մե՞ղր... Իսկ հէնց այդ բանն էլ չըկար բարձրում։

Ցածրի կեանքից զզւող դժբաղդ Թիթեռն սկսում էր ուժասպառ լինել։

Բայց դարձեալ նա աշխատում էր որքան կարելի էր մնալ բարձրում։

Նա զւարճութեան անսպառելի աղբիւր էր գտնում այն բանի մէջ, որ կարողանում էր տեսնել ամեն ինչ, իր հայացքով գրկել ամեն բան...

Իսկ մեղր...մեղր չըկա՜ր այնտեղ։

Եւ խեղճ Թիթեռն աւելի ու աւելի էր թուլանում։ Նրա թևիկները հետզհետէ աւելի դանդաղ ու ծոյլ կերպով էին շարժւում... և նա միշտ աւելի ու աւելի ցած էր իջնում, իսկ նրա աչքի տեսողութեան շրջանը աւելի նեղանում։

Սակայն նա դեռ ճիգ էր թափում վեր ճախրել...

Ոչ, ոյժը չէր զօրում. նա սկսեց ցած գալ...

—Ուրեմն այդպէ՜ս, դու վերադառնո՞ւմ ես,—բացականչեցին եղբայրները։—Եւ ինչ... մենք իրաւացի էինք։

Դու վերադարձար, որ այստեղ ցածրում մեղր խմես մեզ նման։ Մենք գիտէինք, որ դրանով էլ գործը պէտք է վերջանա՜ր։

Այդպէս էին ասում եղբայրներն, ուրախանալով, որ ճշմարտութիւնն իրանց կողմն էր, թէև նրանց կողմը չէր ձգտումը դէպի գեղեցիկը, որը երևում էր միայն բարձրից։

—Արի և խմիր մեղր, ինչպէս որ մենք ենք խմում։

Իսկ Թիթեռը միշտ աւելի ու աւելի էր ցած իջնում... և այնուամենայնիւ դեռ մտածում էր. ահա վարդի թուփը... Գուցէ նա դեռ ոյժ կունենայ կանգնել այդ թփի ոստիկի վրայ...

Նա այլ ևս ցած չէր իջնում... այլ վա՜յր էր ընկնում։ Նա վայր ընկաւ թփի մօտ, մեծ ճանապարհի վրայ...

Եւ էշը տրորեց նրան։

Լ. Լօենի

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ

—

Դրախտ եւ դժոխք

Եւ խորին լռութիւն տիրեց Տիրոջ դատարանի պալատում։ Եւ մեղաւոր հոգին դուրս եկաւ, բոլորովին մերկ, Տիրոջ աչքերի առաջ։

Եւ Տէրը բացեց մեղաւորի կեանքի գիրքը։

— Այո՛, ի հարկէ. շա՜տ տըգեղ է եղել քո կեանքը։ Ինչ, ինչ բաներում չես մեղանչել դու... Եւ քանի որ դու այդքան մեղքեր ես գործել, ապա ուրեմն ես պէտք է քեզ ուղարկեմ դժոխք։

— Դու չը պէտք է ինձ դըժոխք ուղարկես, Տէ՛ր։

— Ինչո՞ւ համար ես չը պէտք է քեզ դժոխք ուղարկեմ։

— Որովհետեւ ես դժոխքումն եմ անցկացրել իմ ամբողջ կեանքըս։

Եւ կրկին խորին լռութիւն տիրեց Տիրոջ դատարանի պալատում։

— Այդպէս էլ թո՜ղ լինի։ Եթէ ես չեմ կարող քեզ ուղարկել դժոխք, ուրեմն կը տեղաւորեմ քեզ դրախտում։

— Դու չես կարող ինձ տեղաւորել դրախտում, Տէ՛ր։

Ինչո՞ւ համար ես չեմ կարող տեղաւորել քեզ դրախտում։

— Որովհետեւ ես երբէք չեմ կարողացել ինձ երեւակայել այդ բանը, Տէ՛ր։

Եւ խորին լռութիւն տիրեց Տիրոջ Դատարանի պալատում։

— Լ.

Տափակ զրոյցներ

— Ինչու համար են կազմւում շներիցուցահանդէսներ։

— Որ ցոյց տան, թէ «շան կեանքը» աւելի լաւ է, քան թէ շատ մարդկանց կեանքը...

—

— Սա գինի չէ, այլ ուղղակի քացախ։

— Ոչ, պարոն, սխալւում էք, դա երկուսն էլ է։

ԱՈՒԵՂԾԻԱԾ

Սֆինքսը, Վայրենին եւ Արիստոկրատուհին

Ի՞նչ տարբերութիւն եւ ի՞նչ համեմատութիւն.



Անխուսափելի փորձից պաշտպանելու առիթով խորհրդակցութիւն Ռուսիայի ներքին նահանգում

ՄՏՔԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Ով կանայք. դուք ստեղծւած էք՞ մեզ միշտ պատճառելու։ Ձեր հայեացքը—թոյն է՝ ձեր շնչառութիւնը՝ խաբերայութիւն, ով տաւիղնը ճաշակից մեղքի խնձորը։ Սադերը փրկեցին Հռոմը, իսկ դուք Տրովադայի կործանման պատճառ դարձաք։ Ո՜հ Տրովադա, Տրովադա, Պլիամոսի սրբազան բերդ։ Ո՞վ խաւարեցրեց Մարկոս Անտոնիոսի կեանքը։ Ով սպանեց Կիկերոնին։ Ով պահանջեց Յովհաննէս Մկրտչի գլուխը։ Ո՞վ եղաւ Արիլեարի խեղանդամութեան պատճառը։ Ո՜վ կանայք, մենք տալիս ենք ձեզ լաւագոյնը, գերագոյնը, տալիս ենք մեր սրտի սուրբ բոցը, մեր սէրը, իսկ դուք մեզ ինչ էք տալիս։ Միս, վատ եղան միս, հոտած հորթի միս և ջըրալի ապուր։

Հ. Հայնէ

—

Կանայք, որպէս թագուհիները, ըստրկութեան և ծանր աշխատանքի գերութեան մէջ են պահում 0,9 մարդկային ազգի։ Իսկ այդ բոլորը նրա համար է, որ նրանց ստորացրել են, զրկել նրանց հաւասար իրաւունքներից տղամարդկանց հետ։

Լ. Տօլստօյ

Խմբագիր հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

Դրաստարանոց կանանց «ԶԻՆԱԴ» տպարան-դպրոցի.

Արտագատիչ «ՀՕՐՄԻՍ» բնի.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 r. (արտասահմանի 5 r.) Տարազ—6 r. (արտասահմանի 10 r.) Աղբիւր-Տարազ, պրէմիաներով 10 r. (արտասահմանի 18 r.) Տարազ ամիսը 60 կ. առանձին №-ը Թիֆլիսում 15 կ. դուրսը 20 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզուով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ. վերջին երես 25 կ. մանրատառ (պըտիտ) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չընդունուածները (երկբերթերթից պակաս)չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր. (բացի կիրակի_և տօն օրերից), առ. $10^1/_4$ ժ. մինչև $2^1/_4$-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ Rédaction du Journal TARAZ Caucse Tiflis

գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, ծիծաղական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 10 Կիրակի, մարտի 19 Տասնեւեօթներորդ տարի 1906

Շարունակւում է 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի լաւն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:
Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV

և

ՏԱՐԱԶ

Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացմունքների թարգմանը:
Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել:

XVII պատկերազարդ շաբաթաթերթ XVII

Մեր Զ.ՐՍԱՂ. գրաշարանոցի աշակերտուհիները բնականաբար անկարող պիտի լինէին հեռու մնալ պահանջների շարժումներից. ուստի սրանք էլ հրապարակի վրայ, նման միւս դպրոցների աշակերտների, պահանջներ դրին: Հետեւանքը այն եղաւ, որ միւս գրաշարներն էլ մի քանի օր չաշխատեցին, այսօր ՏԱՐԱԶԸ լոյս է տեսնում միայն մի թերթ: Ուրախ կը լինէինք եւ պատրաստ աւելի շատ ու աւելի ծանր կերպով տուժելու ապագայում, երբ հայ աշխատաւոր, տոկուն կինը իսկապէս փառօրէն տիրապետէր իր արհեստին եւ իր արհեստով ու աշխատութեամբ տղամարդ բանուորի հաւասար յժ ներկայացնէր ու այն ժամանակ անէր իսկապէս արդար պահանջներ:

Ամեն բանի մէջ անհրաժեշտ է նախ գիտակցութիւն, ինքնաճանաչութիւն, ապա պահանջ: Խարխափ լինելն անվայել է իսկական մարդուն:

Հոսանքի հետ թոյլերը են ընթանում, անդրդուելի կամքով դէպի արդարն ու ճշմարիտն ընթացողն է միայն ուժեղը եւ սրանն է միայն իրաւունքն ու յաղթանակը:

ԱՆԱՐԳՈՒԱԾ ԿՈՅՍԸ

Նա վերջալոյսի շողերով զուգուած
Նստել է մայր ժայռի կատարին
Սիրտը թունաւոր վշտերով յուզուած
Անէծք է կարդում դաւաճան եարին:
Նա մի հիասքանչ պատկեր է կեանքի,
Անմարմին եակ վառ երազանքի,
Ոսկեհուռ լերան կատարին նստած
Անոյշ տենչերի մի անմեղ չաստուած...
Ահա նա կանգնեց ձեռքը ճակատին,
Գլուխը խոնարհած դէպ կանաչ գետին.
Ահա նա ցնցուեց... եւ արձանացաւ...
Կրկի՛ն մի ցնցում... եւ գլորուեցաւ..
Անյատակ ձորը անդունդ անսահման
Անարգուած կոյսին դարձաւ գերեզման...

Յ. Պետրոսեան

ԿՈՐՍՏԱԲԵՐ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

Բնական է, որ ժողովուրդը մի գաղափար արիւն ու մարմին դարձնի, այնուհետեւ դժուար է խլել նրանից: Մեծ ճիգերով է միտքը ժողովրդականում. նոյնքան խոշոր ջանքերով էլ չքանալ կարող է:

Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը բերել ու կապել էր նրան ռուսական պետութեան հետ: Փոխադարձ յարաբերութիւնները ստեղծեցին ժամանակի ընթացքում վստահութիւն ու համակրանք, հովանաւորութիւն և հաւատ:

Հայերը սովորեցին տեսնել Ռուսաստանի մէջ իրենց պաշտպանութեան և աջակցութեան նեցուկը: Արմատացաւ նրանց մէջ այն համոզմունքը, թէ հայկական ազատագրութեան խնձը կարող է գտնել իրականութիւն Հիւսիսի արծուի թեւերի տակ: Մի խիստ զօրեղ համակրութիւն գոյացաւ հայ սրտերում դէպի ռուս գահը, որ մղում էր նրանց կապուելու սերտ կապերով ռուսական հողին՝ տարուելով գեղեցիկ գունագեղ անկեղծութիւններով:

Պատմական հողն էր շերտաւորւում, որի վրայ պիտի դասաւորուէին երկու ազգերի յարաբերութիւնները: Ռուս պետերը՝ Պետրոս մեծից սկսած մինչև Ալէքսանդր III, ոչինչ չէին խնայում հիմնաւոր դարձնելու հայերի հաւատը դէպի ռուս պետութիւնը: Ամեն մի առթից օգտւում էին իրենց հիացմունքն ու սէրը հրապարակով արտայայտելու դէպի պատուական հայ ազգը:

ԱՆՏՈՆ ՍՏԵՓԱՆՈՎԻՉ ԱՐԵՆՍԿԻ
Ծն. 30 յունիսի 1861 թ. վախճ. 12 Փետր. 1905 թ.

Դարի բարձրութիւնից հնչող խրատխօսող չէշտերն էին, որ դարձնում էին հայի համար Ռուսիան աւետեաց երկիր, դէպի ուր նա ձգտում էր։ Ուսանելի և ոգևորութեան թափով, մոռանալով ասիական երկրի ընձեռած հրապոյրները՝ և ձեռքն էր առնում գաղթականի ղաւազանը։ Հայի առաջ դուրս եկող մահմեդական իշխաններին և պաշտօնեաներին, որոնք ուզում էին վանազան խոստումներով խափանել գաղթը՝ նա յամառաբար պատասխանում էր. «Քրիստոսն էլ իջնի չեմ համոզւիլ»։ Գնում էր դէպի մի անյայտ ապագայ, մի երկիր, ուր սպասում էր նրան յուրտ, սով և ամայութիւն...

Սիրում էր ռուս պետութիւնը «պատւական հայ ազգին»։ Այդ սէրը իր դորաւոր պատմութիւնն ունի, ինչպէս և հայերի հաւատը դէպի Ռուսիան։ Հայերի ձգտումները արձագանք էին գտնում առողջ՝ տրամադրութեամբ օժտւած պետերի և կառավարիչների կողմից։ Հայի հակումը դէպի լուսաւորութիւնը, կրթութիւնը և կուլտուրան, նրա ինքնուրոյնութեան տենչը չէր հակապետական, այլ ընդհակառակը, նա քաջալերւում, գործնականապէս խրախուսւում էր։

Անցաւ ժամանակ։ Ռուսական պետերի քաղաքական տենչերը բաւականաչափ յագուրդ ստացան։ Հայը կատարել էր իր սահմանած դերը. նա այլեւս այնքան էլ պիտական չէր սեպւում, որքան հաւատացած էին թագավորդ «նախնիքները. այլեւս նրան հարկ չը կար փաղաքշելու»։

Առաջ է գալիս գետնաքարշ սողոսկելով հայի հին թշնամին,—միջնորդ կառավար ւթիւնը, այն, որ գտնւում է բարձրագոյնի և հպատակ—հայի միջև։ Հայի հին թշնամի սատցինք. և յիրաւի, մեր պատմութիւնը շատ ու շատ փաստեր ունի, որոնք ցոյց են տալիս, թէ միջնորդ կառավարութիւնները՝ լինեն պարսկական. բիւզանդական, պետութիւնների առաջ հային վարկաբեկ անող, խորտակող չար ոյժեր են հանդիսացել միշտ և ամեն տեղ։

Կովկասեան փարչութիւնը բնաւ անտես արաւ այն պատմական հողը, որի վրայ կանգնած էին հայերը։ Տեսողութեան հիւանդութեամբ բռնւեց այդ միջնորդ կառավարութիւնը, և սկսեց տեսնել այնպիսի գոյներ, որոնք իրօք գոյութիւն չունէին և չէին էլ կարող ունենալ։ Ախտացեալ տեսողութիւնը բատեղծեց հրէշաւոր դրութիւններ։ Ոտնատակ աւեց այն հաւատը, դարերի համակրանքը, որ հային կապում էր ռուս պետութեան հետ Մի բնորոշ անհասկացողութեամբ թէ չարախնդացութեամբ հայի դարաւոր համոզմունքը ռուս պետութեան նկատմամբ կեղծ և անհիմն ճանաչւեց։

Հայը հրատարակւեց օրէնքից դուրս հպատակ։ Նրա ձգտումները, որոնք առաջներում խրախուսւում էին նոյն ինքն պետութեան կողմից՝ հակապետական հռչակւեցին ու հոլածանքը հասաւ գագաթնակէտին։ Հայի հին բողոքը բռնութեան դէմ, այն՝ որ ռուս պետութիւնը սկզբնապէս գտել էր արդարացի և քաջալերել, տարօրինակ թւաց, համարւեց ըմբոստային տենջանքների, պատիժների արժանի։

Ու հային ճնշեցին միջնադարեան բռնութեան միջոցներով։

Հայի ձգտումները չըհասկացան։ Զարմանալի չէ.—մեր պետերը, մեզ վերայ իշխողները երբէք մեզ չեն հասկացել։ Մենք միշտ կրատարել թիւրիմացութեան զոհ ենք եղել թէ մեր պատմական կեանքում և թէ այսօր։

Մի հրէշայ բանաստեղծ իր ժողովրդի դժբախտութեան անվերջութիւնը ցուցնելու մտքով յայտնում է, թէ Զրհեղեղից յետոյ Նոյեան խոստացւ այլեւս չըկրկնել աղաղաղում. սակայն լեզւների Բաբելոնեան խառնակումից յետոյ Իսրայէլի աստղ Աստւած ոչ մի խոստում չի տւել։ Եւ ահա հենց որ Սիոնի դաւակները գունատգունտ կըլինեն հայրենիք—աստւածային պատուհասը կը հասնի նրանց. մի նոր լեզւական խառնաշփոթութիւն կը պատակոէ համախմբւող ժողովուրդը և դարձեալ կըցրէ տիեզերքի անծայրածեր ոլորտում...

Հայութեան թշւառ վիճակի անվերջութիւնն այդքան բանաստեղծական չէ։ Մեզ իշխողների կրատարել թիւրիմացութիւնը, սխալ հասկացողութիւնը մեր ձգտումների ու նպատակների նկատմամբ,—ահա ցաւը, մեր մեծ դժբախտութիւնը։

Ա. Տէրտէրեան

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսին գումարւելիք ժողովը ցանկալի է, որ չը լինի միայն դպրոցական, այլ ընդգրկի ռուսահայոց ազգային բոլոր կարիքների խնդիրները։ Դպրոցների կատարելիք դերը դեռ ազգային է վերաբերւում, բայց կայ ազգի մէջ մի մեծ գործօն, եկեղեցին, որ անցեալում ահագին դեր է կատարել մեր ազգի վիճակում և դեռ շատ պաշտօն ունի կատարելու և մշանջենական պիտի լինի, ինչպէս ինքը՝ կենդանի քրիստոնէութիւնը։ Ի նկատի ունենալով եկեղեցու մեծ ներգործութիւնը ազգի վրայ, ի նկատի ունենալով համագումարների միծածախս և դժւար կազմակերպելը, ցանկալի է, որ Մայիսեան ժողովը աւելի ընդարձակէր իր չօշափելիք խնդիրների ծրագիրը, որոնց մէջ նշանաւոր տեղ բռնէր եկեղեցական բարեփոխութիւնների անհրաժեշտութիւնը։ Այս առթիւ մի երկու նկատողութիւն։ Ամբողջ աշխարհում մի է տարրական և միջնակարգ դպրոցների գաղափարը. ժամանակ է մեր հոգեւորական դրութեան վերջ տալ և վերածել նրանց ամբողջ աշխարհում ավելորդ միջնակարգ դպրոցների տիպին, որից յետոյ ցանկացողը կարող է ընտրել մասնաճիւղ՝ հոգեւորական, զինւորական, բժշկական և այլն։ Մեր միջնակարգերը չը պիտի կոչւին հոգեւոր, այլ նայկական գիմնազիա կամ վարժարան Խօրեացոց կուրսով։

Պիտի խակոյն վճռւի և գործադրւի, որ թեմական եպիսկոպոսները կըրթական բարձրագոյն ցենզ ունենան, տիրապետեն պետական լեզուն և լինեն ընտրովի, թեմականները ընտրեն երկու կանդիդատ, ներկայացնեն կաթողիկոսին, սա էլ տէրութեան հաստատութեան. որպէս զի կաթողիկոսը վետօ չի անի, լաւ կը լինի Էջմիածնում հաստատած ցուցակից կատարւի ընտրութիւնը։ Ցըզէտ ու պետական լեզուն չիմացող յաջորդներն խակոյն արձակւեն պաշտօնից։ Միամեայ կուրսով ընծայարաններ լինեն որ այնտեղ միջնակարգ դպրոցներ աւարտածները հոգեւորականներ պատրաստւեն։ Պետական լեզւի մէջ վարժւելու համար միամեայ կուրսեր հիմնւեն Պետերբուրգ կամ Մոսկւա։ Խակոյն արուչի ու գրքը կտոր-կտոր և ամբողջ դըրարաւ և աշխարհաբար տպագրւի։ Զանել ծիսական և ժամատյութեան գրքը։ Հիմնել քարոզչութեան ամբիոն կամ կուրսեր։ Զատ բուական պարբել և թեթևցնել ծէսերը և դգեստները, որոնք մնացնում են քրիստոնէութեան հոգին։ Թոյլ տալ ամուրի քահանաներին ամուսնանալ։ Հնար գտնել վերացնել կուսակրօնութիւնը։ Ընդհանուր պարտադիր լինի ազգային հարկ տալը բստ կարողութեան. որով պահպանւի հոգեւորականութիւն, ուսուցչութիւն և այլն։ Առաջ տանել քահանայից ցենզի խնդիրը և նրանց շատը շատ սահմանափակել։ Միութիւն հաստատւի ազգային եկեղեցական, դպրոցական, կալւածական կառավարչութեան ս Էջմիածնում ծայրագոյն խորհրդի մէջ, կաթողիկոսի գլխաւորութեամբ, հոգեւոր և աշխարհական խրատասւներով։ Բոլոր տնյեստաձգելի խնդիրների համար կազմել յանձնաժողովներ և կըլլին մի համագումարով լուծում տալ հարցերին և վճիռները գործադրել կեանքի մէջ։ Մայիսեան ժողովը որպէս սախողղական չի կարող բոլորը քննել և վճռել, բայց նա կարող է հարցերը դնել՝ այդ մեծ բան է. Յ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Տարօրինակ օրէնքը արգելում է մեծ պասի չորրորդ շաբաթւայ ընթացքում թատրոնական, երաժշտական ներկայացումները։ Մի ամբողջ շաբաթ – արտիստները ծում պահելով, մեզքերները քաւելով, նորից բացին Մելպոմենի տաճարի դռները։ Արքունական թատրոնում Օստրովսկու տիպերի ստեղծագործող համառուսական տաղանդ Վարլամովի զատրեօլներով։ Բայց ինչպէս երեւում է տաղանդը երկրպագուները, նոր հովերով բռնւած, աւելի մեծ հաճոյքով յաճախում են Նոր-դրամա, ուր Մէյերխոլդի խումբն ունի իմաստալից և ժամանակակից ռեպերտուար։

Սիօնի նահապարհին պիէսը, նոր ձևի ստեղծագործութեան մի նմուշ է։ Հրէա ծերունիները գնում են ս. Երկիրը, այնտեղ իրանց ոսկորները թաղելու, իսկ երիտասարդները նոր գաղթավայր ներկելու նպրենի արբավան վայրը։ Նոր տենչանքներ, նոր իղձեր։ Անտարբեր են միայն բարձրագոյն ուսում ստացածները և սրանք չեն հետաքրքրւում իրանց ժողովրդի վիճակով։ Սրանց հայերն ու մայրերը տւել են նրանց կեանք, բայց չեն տւել այդ կեանքին իմաստ, ցոյց չեն տւել կեանքի նպատակը։ Հինն էլ, նորն էլ սրանց համար խորթ են։

Պակաս ուշագրաւ չէին հինգշաբթի օրը ներկայացրւած Ա. Շնիցլէրի Կանաչ թութակ և Հաուպտմանի Հանլէն։

Դիտէք ի՞նչ է Հանլէն,—մի է Հանլէն...

Տեսել էք փոշով ծածկւած մեծ ճանապարհի վրայ ընկած, ճմռւած, կարքի անիւները վրայով անցած, կիսաթառամ քնքոյշ ծաղիկ։

Տեսել էք, անշուշտ շատ էք տեսել, բայց ուշք չէք դարձրել սահել, անցել էք այդ ճանապարհով։ Հանլէն մի քնքոյշ փոքրիկ աղջիկ է, կեանքը լի դառնութիւններով, ծաղկի նման ճմռւած։ Ի՞նչու անդառնամատ այդ մեծ ճանապարհին էր բուսել այդ քնքոյշ ծաղիկը...

Հաուպտման կոնանց վիճակը միշտ դառն է պատկերացնում, իսկ այստեղ Հանլէն կեանքից չըլրւած, մի անմեղ աղջիկ է կոպիտ ճիրաններում։ Հաուպտմանի այս ստեղծագործութիւնը մի հանճարեղ հիքիաթ է, որ խորհրդակցութիւնների, դառն կեանքի քննութեան մեծ պաշար է տալիս։ Մօտ տասնհինգ տարի սրանից առաջ Հանլէն առաջին անգամ ես տեսայ Վիէննի Բուրգ թատրոնում, որն ինձ վրայ մեծ տպաւորութիւն թողեց, մտածում էի, որ այդ պիէսը տեսնէի հայ բեմի վրայ։ Սակայն արգելւած էր Ռուսաստանում։ Մի քանի տարուց յետոյ Սուվորինը հրատարակեց Հանլէն ռուսերէն առանձին բրոշիւրով. իսկոյն մի օրինակը ուղարկեցի մանուկների հոգեբանութիւնը լաւ իմացող մեր Ղ. Աղայեանին, որ թարգմանէ հայերէն։ Բայց մեր Աղայեանը այն ժամանակ խնայեց հայ մայրերի ջղերը և չը թարգմանեց։ Դէթ այժմս գոնէ թարգմանէր Հանլէն բնագրից և մտցնէր մեր ռեպերտուարի մէջ։

Ուշագրաւ էր և նորակազմ երաժշտական գործիչների ընկերութեան կոնցերտը, որ առաջին անգամ, Կրուժոկում, ամսոյս 16-ին տւեց նորերս վախճանւած երաժշտագէտ Ա. Ս. Արենսկու յիշատակին և բացառապէս նրա երկերից կազմւած ծրագրով։ Մասնակցում էին օր. Լիդիա Մաքէր, պպ. Ի. Մ. Մատկովսկի, Մ. Տ. Վասիլև և Լ. Է. Ցէգլէր։ Սրանք յայտնի են իրանց երաժշտական մասնագիտութեամբ, իբրև տաղանդաւոր դասատուներ և փորձւած, հմուտ երաժշտագէտներ։ Երեկոն ուշագրաւ էր մանաւանդ իր նպատակով և իր ծրագրով։

Արենսկին մաքուր երաժշտագէտներից էր, նրա մեղեդիները քնքոյշ են, երգերը յստակ և անպաճոյճ, կարծէք մելամաղձական, սակայն յուզում են մարդկային սիրտը, ցնցում նրա հոգին։ Հանդուցեալ երաժշտագէտի լարերը արեւելի կողմից նման են իր ուսուցիչ Ռիմսկի-Կորսակովին, իսկ զգացումները, կարծէք, Չայկովսկուն նման՝ լի վշտով։ Թախիծ, մրմունջ ահա Արենսկու լարերը։ Շատ պօէտիկ է նրա Երազ Վոլգայի վրայ օպերան, որը ժամանակին մեծ աղմուկ հանեց։

Կոնցերտում նւագեց Արէնսկու տրիօ, որ նա ստեղծագործել էր Չայկովսկու յիշատակին։ Առաջին մասը Չայկովսկու հոգոյ համար մի աղօթք է (տրիօ), երկրորդում յիշւում է հանգուցեալի գործերը՝ Մանուկ Յիսուսը մի պարտէզ ունէր (տպագրւած է Աղբիւրում) և վերջը Փառք երկնքի վրայ բարձր արեգին։

Ունկնդիրն անկարող է պահել իր սրտառուչը այս տրիօ լսելով և շատերը եթէ չարտասւեցին, սակայն հոգով աղօթեցին դէպի Չայկովսկին և նրա ընկերակից վաղամեռ հեղինակը։

Այո, Յիսուսի այգում փշեր կան...

Տրգօ



Պրօֆեսօր Վիլհելմ Օստվալդ

Արուեստ եւ գիտութիւն

Սկիզբը Տարազ № 9

Անշուշտ ձեր մէջ վաղուց արդէն հարց բարձրացաւ թէ այդ դատողութիւնները ինչ յարաբերութիւն ունին արուեստի հետ: Այն է բանը, որ մենք կարող ենք գործադրել նրանց անմիջապէս արուեստի գիտութեան—էսթեթիքի վրայ: Առաջեան էսթեթիքը, էսթետիկը բարձրացրեց, ինչպէս սիրում էր անուանել նրան Գուստաւ Թէօդոր Ֆեխները՝ ճռամանահան գիտութիւն էր: Դեռ այժմ էլ կան նրա ներկայացուցիչները, որ կարծում են, թէ նա ներկայանում է կանոնաւորող գիտութիւն, որ ընդունակ է, ուրեմն և իրա ունք ունի ցոյց տալ արուեստագէտին նրա անելիքը, առաւել եւ այն, թէ նա ինչ պէտք է չանէ: Այդ-պատաւ մօրաքրոջ հայեցակէտն է, որին հնազանդուելուց արուեստը այնքան աւելի չեղուելու է, որքան նա զգայ իրան աւելի մատաղահաս և ստեղծագործութեան ընդունակ:

Սակայն նոյն իսկ ինքը Ֆեխները՝ այդ առողջութեամբ ակար և մի փոքր կեանքի փիլիսոփայական սովորութիւնների տէր գերմանական պրօֆեսորի տիպարը, որ իր գրասեղանի վրայից ուղղում էր աշխարհին մտքեր, որոնցից ապագայում ծաղկում էին մարդկային քննասիրութեան լոյն տարրէզնէր-այդ Ֆեխները ցոյց աւեց մեզ, որ եւ էսթետիք ցածրից, փորձնական էսթետիք, գիտութիւն, որ չէ հրամայում արուեստին, թէ ահա դու ինչ պէտք է անես, այլ որը ընկերաբար հարցնում է նրան՝ չե՞մ կարող արդեօք քեզ օգնել:

Ի հարկէ, արուեստը այդ նրան առաջարկած օգնութիւնը ընդունելուց առաջ, կը հարցնէ՝ ընդունակ ես առհասարակ դու ինձ օգնելու: Արդեօք գիտութեան ամեն մի միջամտութիւնը չէ ներգործում աւելի վնասաբեր, քան թէ օգտաւէտ կերպով, քանի որ նա ձգնում է ձշմարիտ արուեստի ստեղծագործութիւնների տեղը դնել գեղեցկագէմ խելացնութ, ենով ստեղծուած, բանականութեան լրջմիտ և չնչին կերտուածներ: Այդպիսով, արուեստագէտը, դուցէ, համաձայն-թերևս այն պատճառով, որ դրան արդէօք դառնալ չէր կարող—որ էսթեթիքը իր ձեռքն առնի արուեստի դիակները—միևնոյն է մեռել են նրանք բնականով, թէ կորած են մատնուած, այսինքն զուրկ են արուեստական ոգուց, մասնաւորապէս այդ նպատակով—որպէսզի նրանց դիակների վրայ խմաստասիրէ արուեստի անատոմիան: Իսկ արուեստի կենդանի մարմինը այսինքն ստեղծագործութիւնը, նոր արուեստի արտադրութիւններին նա ոչ մի դեպքում չի համաձայնի մօտ թողնել, թէկուզ և այն երկիւղից, «որ պատառ մորաբոյը—խմաստութիւնը—մի կերպ չայլերասրել քնքոյշ ոգին»:

Գեօթէի այս խօսքերը կրկնուել են բազմաթիւ անգամ, այս պատճառով այդպիսի ծանրակշիռ հեղինակութիւններին հակառակ դուրս գալը կարող է անյուսալի թուալ: Սակայն պրօֆեսորը, «այնպիսի մարդ է, որ միշտ տարբեր կարծիքի տէր է», ուստի ես խնդրում եմ համբերութեամբ ականջ դնել, թէ ինչ կը յայտնեմ «միւս կողմից»:

Ամենից առաջ ես մատնանիշ կը լինեմ այն հանգամանքի վրայ, որ գիտութիւնը եւ արուեստը մարդկութեան կուլտուրայի համար իրանց ունեցած նշանակութեան պատճառով, արդէն սկզբնական ժամանակներից նշանակուած են իրար հետ սերտ կապ ունենալ, իսկ երկրորդը՝ իրանց սկզբնական բնաւորութեամբ արուեստը եւ գիտութիւնը մի եւ նոյն ծնողներ՝ զաւակներ են, կեանքի թշուառութեան և երջանկութեան զաւակներ:

(Կը շարունակուի)

Հե՛նրիխ Իբսէն
Նորվեգիական դրամատուրգ
եօթանասուն եւ ութ տարեկան
տարիքով
(ծնաւ 20 մարտի 1828)

Խ ո ր վ ի ր ա պ

Այստեղ մինչեւ այժմ ցոյց է տրւում այն հորը, ուր մեր ս. Գրիգոր Լուսաւորչին երկար տարի գցել էր ճայոց վերջին կռապաշտ եւ առաջին քրիստոնեայ Տրդատ թագաւորը:

ԹԻՖԻԼԶԱՆ ՊԸՐԸԻՍԱԿԻՐ

դարան—դարան ընկած Սիմա-ափօրը Թաշխանը.

Աքէր, միզամ էս գույըմն էլ պիտմա տեսնինք. մեր ալի աւլան զալան մեր լիզր, ալլաքըմ քինճ ու պուճախը ատարտակած, հալամին տարած, մարթինն էլ դարան—դարան ընկած: Բարբաշ ընի Բաքուն, ւէր սօր մեր գեօզալ Ղարաբաղը թարբաշ արաւ: Ըընհարի համփէքը մինը—մինան եննան փէշքեըշնին թափ տւին Ղալան տեւս եկին, սրանց ըըէնակ էլ սաղ չօլըցիք քընացին, մաշրում մազըուն տաւին:

Ամէն գօնըմ բաշեդի Ըրեանի՝ Թափլանեաը անց կենալիս, աչքիս լուսըը եըա տանում: Մեր մէյդանի նման, Անանենց զուքանին բաշին զասաս զասաս կըղնաստած, պատին տակին կոչ եկածըն Թալիշ—բէգը, Թամրենց Ըլիքանը, Հալլաթէնց Կիրրիքօրը, Մուքին, լօխ, լօխ մեր զալցիք, հէօըն բաւեղ, պակասը Մուքէլ խանն ա, նա էլա բաւեղ, խեղճը եօրդան դօշակ ընկած: Բա՛ հինչ անի, որ եօրդան դօշակ չընկնի, տոնը տեղը եըւած, ինքը զարան, դարան ընկած, չըհարի համփանեըն էլ Թիֆլիսու Ըրեանու Թափլանըմը կենաց Սմբաթօվի տանը տակին կոչ եկած: Էլլա զօրմի քու օխտը պօրտին, զօրմի Անանենց Ակօւպ աղօըը, բաըա նամուս բաչ սղան եկալս հէնց էս Թափլանըմն էլ ձոթհու կըասըի զուքանա պացարալ, զուքանին առաջին էլ գերրա գիռը ընկած մեր դալըցիք դալդալամիշ ըն ընըմ: Առըմըմ էս զակիս մաասղի փոըի աւաղ վըհակեւնը, փող հըւաքենը մին եըկու, բուլւարին եըզան սառնեըին, նման, սսօլ, սանենք, բաւեղ եըտնենք, էն փասակ, քօս ու փէշման—մազըօւնները նըստեն արկղունաչի սան: Նանի Սըհակ Թաթոսին էլա բաւեղ, ւէր մին պեըան ըըան սսօղ ընի, ես գիտըմըմ ւէր էլլա մուղաղա չի անիլ: Ամմա դէ, Աքէր, աւակի անխասեյիջա՝ ժամին զուռը պաց, շանն էլ ներս սիտմալըի», էս մարթին անըմ, սսըմըն էլ հալ չըն թօղալ: Ընդհէնց փախչալա, պըռաւալ, ւէր մէկալ օըը պըլակինենց տանը տեսի ճանանճըս սկի եկաւ ւէչ:

Հաւսի բաջուն տալին առին մեծ այանի պատկերիցը կար, ինք աւի, բաեղ պատքիր բաշօըը խըեսը եըկաւ լաւ, մըծըցրաւ, էս մինն էլ քեզ ըմ ղըըկըմ, դալը էր տաւալ քեզ հըմար էտ պատկերի էըւիլը: Բա՛ խեղճ Անըըմանը հինչ անի, ւէր ջուրն ընգնի, որ իըան աղիղ Միչի պատքիըիցը մինն էլ պըըծըցնող չի ըլալ:

Բըխլեանթչի Կարապետն էլա բաեղ, Նալէժնին տակին զուքանա պացարալ, բաըա զուքանըմն էլ ջահիլներըն զալզալամիշ ընըմ: Եարա Աստուած, մին էլ աչքա ընելու քարհարը պէցրանանք, զիփչանի ձիկանքը եօխըշըմը ւէնիը ըլած, մին հանգաւ Ղալան հաստծ:

Ասըմըն վըճըըալ ըն, ւէր Թափլանեան մինչի Արլեցունց ժամը տօն չը պինեն, անատէրեըին Մելիքին գիւզումը, Բաղունց վէըէըի քըշաըն տնատեղեր սան հաւ եըւած անեըի տեղը մին լէն բաւշա չինեն, եըկու զըըազան շինարի անեն, աըխեր քըցեն, հաւ զօըմած հըքի Թաթէասս աղօը պէըած ախպուրի ջրերը մէջը պաց թօղեն հաւ եըկու զըըազան անեն, լաւ պլանին: Հինչ լաւ կընի, ւէր բահենց անեն, նա էտ ւէր ըէմուրադը կընի, որ էս լաւ մըըըհաթին ռազի չի կենալ: Կիըըս էրզանցընըմ չըմ, մին եըկու զալամ Սօնին, եա Վարդիթարին կիր կիրիլ սօ, յուխչու անա աւհալ ըըըկիլ: Ըստ փիա տեղ մթնեց մեր օըը: Էս խալխին շըհարըմը ախը մունք հինչ ունինք, որ զուըջին էլ մեզ խէտ աչքու մըտէկ անի: Մեր կաթըմ կըտրի տակին մին կատը չօր պըօղը փոխիլ չըմ բաեղի ամարաթներին հաւ պըըօծնին նհեաս:

Խնամուն, պըըակնցան չատ չատ պարով:
Մնամ քու ողջմաքուր
Վարդխարօն

Մեծ պապեր իր Շուշի թոռան հետ

Մեր թղթակիցները

—

Շուշի 6 փետրուար

ԱՅՐԻՆՆԵՐ.

Այլև քահանաների ամուսնանալու արծարծուած խնդիրը մեծ աղմուկ է տալիս ամենուրեք. անկրեննե-րում, միայն Ղարաբաղի Թեմում կան ուխտուրից աւելի այրի քահանաներ, որոնք գրեթէ ամենքն էլ կնոջանով են, բա-ցի մի քանիսից: Արդ, այս օրերս այս Թեմի Վարանդայ գաւառի, վերին և ներքին Ատեփ գոյգ փոքրիկ համանուն գիւղերի ժողովուրդը,120 տուն և բրենց այրի քահանան Ներկ. տէր Դանիէլ աղերսագիր ուղարկեցին Վեհափառ Հայրապետին, որ Թոյլ տայ քահանան ամուսնանալ օրինաւոր կերպով և սուրբ սեղանի չզրկել ընտանեաց քահանայական կերպով: Շատ հետաքրքրական է նրանց աղերսագրի պատճառաբանութիւնները: Նրանք ասում են «Օրէնք խնձոր առանձնորդաց է, հարկ զօրէնս լուծանէ. Աստուած արու և է արար զմարդն.» Այլև քահանայի ամուսնութիւն հակառակ չէ ոչ մի Աստուածադիր օրէնքի և ոչ սուրբ Աւետարանի մի տառին: Ընդհակառակն, սուրբ Աւետարանն ասում է, «Մարդ է անկողին ամուսնացեալ ց և Թէ լաւ է ամուսնանալ քան այրիլ:» իսկ միջնադարեան խաւար ժամանակների փթած,անմտական, քրիստոնէութիւնը պղտորող, ժողովրդի վարք ու բարքը փչացնող անկարգ «կանոնները» չեն կարող երբէք գործադրել մեր լուսաւոր դարում, խմբը գլխին մարդու վրայ...

Աղնէքի քահանան միայն երկու տարի է, որ ձեռնադրուել է. և անա մի տարի է, որ մերոնին վախճանուել է և նա մնացել է այրի. նա ունի ալաւոր մայր, մի կոյս եղբայր 20 տարեկան, մի փոքրիկ դեռահաս եղբայր. ունի անասունների, վարուցանք և հին հայրական—պապական մեծ օջախ. ամենքը խնամքի, կառավարչի տանտէր կարօտ:

Քահանան ունի 120 տուն ծուխ երկու գիւղ է բաժանուած. պահում է աղախիններ: Ասացէք, մի՞թէ նա կարող է առանց օրինաւոր օգնականի իր գործերը կանոնաւոր վարել. մի՞թէ այդ թերին կարելի է լրացնել վարձկան սպասուհով, եթէ չլինի սրտացաւ տանտիկին: . .

Վերջապէս այս քահանան դեռ բոլորովին երիտասարդ, 27 տարեկան, քաջառողջ տղամարդ է, նրան հարկաւոր է ժառանգ, որովհետև դեռ զաւակ չունի. նրան հարկաւոր է առողջութիւն պահպանել. նրան հարկաւոր է խելքի, մտքի, սրտի, խղճի, հոգու անդորրութիւն պահպանել. իսկ այդ ամենը չի կարելի առանց օրինաւոր կողակցի—կնոջ, ամուսնու:

Ազնէքի ժողովուրդը աղերսագրում յիշում է, որ ամբողջ ազգի հետ նրանք էլ աղաղակում են վերցնել այս մեծ և վնասակար չարիքը, խաւար դարերի այս փթած ժառանգութիւնը, որ գլխովին փչացնում է Աւետարանի լոյսը: Գիւղացիք խոստովանում են, որ իրենք արդէն չեն լինելու ամեններն, այլ ընդհակառակը քաջալերող, եթէ իրենց երիտասարդ, գիրք, լրագիր կարդացող, վարժապետ և մեծ գիրգասատանի տէր քահանան կին պահէ: Ով ականջ ունի, թող լսի:

Ն. վ. Տ.—Ա.

ԳԵՂԱՐՈՒՆԻ

Ստացանք Բագմալեպի ներկայ Թւականի լոյս տեսած №№-ը և անցեալ տարւոյ Գեղունին, որն այնքան փառահեղ, այնքան հիասքանչ է, որ մենք անկարող ենք չը յայտնել մեր խնդակցութիւնը, հոգեկան հաճոյք ամենաշքեղ հայ այս հանդէսի մասին:

Մենք չենք կամենում համեմատել Գեղունին Եւրոպայում հրատարակւող զանազան իլլիւստրասիոնների հետ, որովհետև պայմանները միևնոյնը չեն, այլ վկայում ենք, որ սա մի սիրուն գործ է և չատ ցանկալի, որ հայերը ունենան այս հրատարակութիւնը:

Շքեղ են Թէ գունաւոր նկարները և Թէ մանաւանդ հէնց ինքը Գեղունին իբրև տպարանական մի գործ: Հիանալի են Գիշերը, Աստղութիւնը, Թրթռացումը, Աւարէֆ ողորմութիւն Բելիսարիոսի եւլն: Ինքնուրոյն կլիչէները Թէև գեղի վրայ սա կայն տպագրուած են չատ խնամքով. ընտիր Թուղթն ու մուրը աւելի փ...մ են դարձնում չքեղ հա դէսը: Ցանկանում ենք Գեղունին այնքան տարածել, որ հնարաւոր լինի հայկական կեանքը այնպէս գունաւորել, ինչպէս Աստղութիւնն ու Գիշերն է,սակայն այդ ստուերութիւնը ծնւած սէր ու համերաշխութիւն, գիշերը լուսացած և պայծառ արեգը բարձրանալիս Վանայ կատարները նկարի մէջ էլ խոխալէս գեղագանց են Թոռնիկիս կատւին:

ժամանակագրութիւն

Ս. Էջմիածնայ գանձարանից 25,000 ր. է յատկացնելու հայկական վերջին աղէտներից վնասուածների օգտին: Նոյն նպատակաւ Նորախեան գպրոցը տալ է 20,000 ր և 5000 էլ Ղարաբաղի Թեմական դպրոցին:

—Վրաց եկեղեցու անկախութեան խնդիրը սինոդն ուղարկել է փոխարքայի վերջնական եզրակացութեան:

—Թիֆլ. արք. Թատրոնում խուզարկութիւն կատարեցին: Շարունակւում են խուզարկութիւններ քաղաքիս զանազան մասերում:

Կիեւում ձերբակալուած են սահմանադրական ռամկավարական կուսակցութեան անդամները, որոնք ընտրութիւնների համար տներում ցուցակներ էին գրում: Նրանք այդ արտօնութիւնը միայն գրագոփյններն ու գոնապաններն ունեին:

—Պետերբուրգի քաղաքապետը դադարեց երգիծաբանական թերթերի համար թոյլտւութիւն տալը:

—Գերմանական բանկիր Մենդելսօնը հրաժարուեց ռուսական պետական բանկին մուրհակով 6 ամիս ժամանակով պարտք տալ: Մեծ խստութեամբ պահանջեց և արդէն պայմանաժամը լրացած 400 միլիօն ր. պարտքը: Հազար ու մի մինաթով Մենդելսօնը համաձայնեց պետական բանկի մուրհակները նոտարին չուղարկել, միայն թէ մասնաւոր բանկիրներն էլ մուրհակների վրայ դրոշմեն իրանց ստորագրութիւնը, որը և կատարւեց:

—Ռուսաց Պարիզում գլոհաւորւած աւտօմոբիլներ է պատւեր տուել չատ բարձր գներով, ներքին պատերազմում (յեղափոխականների դէմ) կռւելու համար: Լաւ միջոց է ժողովրդի կաշին քերթել և այդ կաշւի գնով նրան կոտորելու համար Թնդանօթ, գնդակ գնել:

—Բեռլինից ստոլիկանութիւնը եօթ. հազար ռուսահպատակներ է արտաքսել:

—Ռուսական մի քանի նահանգների գիւղերում երևացել է քաղցածութեան հետևանք փորահարրնք,որ տարափոխիկ է:

—Եւրոպայում սկսեց և չարունակւում է զգալի կերպով ռուսաց դրամի կուրսերի անկումը:

ՊՕՍՏԱՐԿՂ

Շուշի Մ. Ա.Ձեր փաստալից գրութեան նման մենք ստացել ենք տասներեք ուրիշ բողոքներ, սրանցից և ոչ մէկը չենք տպագրում: Մենք յուզւում ենք և կսկծում, երբ մեր անման Շուշին և նրա Թշւառ բնիկներն այդտեղ հալածւում են մի մարդուց, որի կոչումն է հայրական գութ ածելը: Ղարաբաղի այժմեան Թեմական առաջնորդի դէմ բողոքներ չարունակ տպագրում է և Մշակը և Յառաջը՝ Վերջինս հէնց իր № 48 ում տպագրելով այդ Աշոտ եպիսկոպոսի ստորագրութեամբ Նպաստամացոյց յանձնաժողովի ստացած 17076 ր. 67 կ. դրամով և զանազան մթերքներ, ալիւր, պաշարների մասին,—ասում է Թէ «աւ-կարայ խարէութիւն է, իբր նպաստներս յաժանուել են կարօտեալներին կանոնաւոր ստուգութիւնից յետոյ»: Սակայն արտագրենք Յառաջից հէնց այս կտորները:

«Վերոյիշեալ նպաստները, որ պէտք է տրւէին, «կանոնաւոր ստուգութիւնից յետոյ», տրւեց, ընդհակառակը կամ անկանոն կերպով, սխալ ստուգութիւնից յետոյ, կամ Թէ բոլորովին չտրուեց:

Ասածներիս իբրև փաստ կարող է ծառայել այն,որ այսօր էլ Շուշում գտնւում են չատ ընտանիքներ՝ ծայրայեղ աղքատութեան մէջ, կարօտ մի կտոր չոր հացի, մինչև հիմա էլ չըստացած ոչ մի կոպէկ կամ դրամական օժանդակութիւն, կամ գոնէ անհրաժեշտ մթերքների մի չնչին նպաստ:Նպաստները, որոնք տրւած էին եղբ. Ժամհարեանների և ուրիշ բարերարների կողմից Շուշու կարօտեալներին և որոնք որ պէտք է բաժանւէին «կանոնաւոր ստուգութիւնից յետոյ» իրականութիւն չը գտաւ Նպաստամատոյց յանձնաժողովի կողմից Նախ այն պատճառով, որ կարօտեալները «կանոնաւոր» կերպով չը «ստուգեցին» մինչև օրս և չը տրւեց ոչ մի նպաստ նրանց մեծ մասին և երկրորդ՝ որ կենսական մթերքների օրինաւոր վաճառքից ստացած գումարով պէտք էր Նորից գնել անհրաժեշտ մթերքներ չարունակաբար, ժողովուրդը սովի ճանկերից ազատելու համար:

Բայց ստացած մթերքների մեծ մասը վաճառքի հանւեց առաջին ոչ ժամանակին—, ժողովուրդը կողմնակի օգնութիւններ ստանալուց յետոյ միայն և երկրորդ՝ չատ Թանգ գներով, որը մատչելի էր բուրժուաներին միայն: Ահաւասիկ անարդարութեան մի նմուշ ևս, որի հետ Թող ծանօթանայ ընթերցող հասարակութիւնը»:

Յառաջ № 48.

Ցայլչ է համարւած և այդ Թեմական առաջնորդի իբրև Ղարաբաղի գիւղերում արդէն բացարած 23 ուսումնարանները:

Մենք Տարազում չը տպագրեցինք Աշոտ եպիսկոպոսին մեր պատասխանը (Մշակ № 43), սակայն սպասում ենք, որ Ղարաբաղի Թեմի այդ առաջնորդը հասարակական պատասասնի, որին հրապարակաւ կանչել ենք, վճիռն առնելուց յետոյ, ինքը յօժարակամ քաշւի մի վանք իր մեղքերը քաւելու համար և մեր Ղարաբաղին, բեմի ընտրութեամբ, հովւէ արժանաւոր առաջնորդ:

Խմբագիր հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՍԱՓՐԻՉ

Ստացանք հայ առաջին հումոր-սատիրական Սափրիչ ամսաթերթի չքեղ № 1: Բաժանորդագինը ընդամեն 2 ր.



ժամագործ եւ ակնագործ
ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Շուշուց տեղափոխւած, Սոլոլակեան փողոց, Նադէժդա ընկ զրասենեակի տակ, Օտտէնի դեղատան հանդէպ. Ընդունում է իր արհեստին վերաբերեալ պատւէրներ, որ կատարում է անյապաղ, ճշտութեամբ և մատչելի գներով: 0—2

Մարմնակրթական Գործիքների

ՅԱՏՈՒԿ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
բանդաժիստ
Յ. Ս. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
Թիֆլիս. Միխայլ. պրոսպ. 21.
այստեղ գնում են եւ հին դրամներ
0—1

Առաջին մասնաւոր հիւանդանոց
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻՍԱՍԱՐԴԵԱՆԻ
հիմնւած 1880 Թ.
(Կուկիա, Վարանցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ հ.:
Ն. Մ. Զիկովանի—9 և կէս—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.:
Մ. Գ. Աւեախեան—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժ.:
Զ. Ի. Ռաքանասեանց—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Լ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.:
Ա. Գ. Կարապետեանց—1—1 և կէս ժ. ներքին և երեխ. հ.
Տիկին բժիշկ Ճչերբինինա —1 և կէս—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:
Գ. Ե. Գուրգէնով—1—2 ժ. կանանցհ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Մ. փուղինով—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Գ. Աբեանց—6—7 ժ. Ներքին հիւանդութեան:
Բ. Ա. Նաւասարդեան—7—7 և կէս ժ.
Վճարը 50 կ., չքաւորները ձրի: Համախորհրդի—կոնսիլիումի և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ Բ. Նաւասարդեան.

ԱՐԱՐԱՏ
Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռի պաշտօնական ԱՄՍԱԳԻՐ
1906 Թւի
բաժանորդագրութիւնը շարունակւում է
բաժանորդագինն է
ռուսաստանում 4 ր. արտասահ. 5 ր.
դիմել Ս. Էջմիածին Խմբագրութիւն Արարատ: 3—1


ОРУЖІЕ
у А. БИТКОВА
МОСКВА, Бол. Лубянка.
ПРЕЙСЪ КУРАНТЪ ВЫСЫЛАЕТСЯ БЕЗПЛАТНО.

Ցանկանում եմ գնել
հին ձեռագրեր
Հասցէս՝ Տարազի խմբագր.

ԿԵԱՆՔ
լոյս տեսաւ
համար 1.

ՆԻՒ-ԵՈՐՔ ՀՕՏԵԼ, ԲԵՐԼԻՆՈՒՄ
Փրիդրիխ—ստր. 136. Նոյն փող. վրայ կենտրոնական կայարանից 2 րոպէի ճանապարհ, կամրջի վրայ: Սենեակները օրական 2—15 մարկ: Անմոռ և չարքով ընտանիքների համար զեղջ:
12 4
Աւելի քան 80 մահճակալով 60 շքեղ, մաքուր սենեակներ,

Տպարանից կանանց «ՁԻՆԱՂ» տպարան-դպրոցի.
Արագատիպ «ՀԵՐՄԷՍ» ընկ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահման 10 ր.) Աղբիւր-Տարազ, պրէմիաներով 10 ր. (արտասահման 18 ր.) Տարազ ամիսը 60 կ. առանձին №-ը Թիֆլիսում 15 կ. դուրսը 20 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ. վերջին երես 25 կ. մանրատառ (պետիտ) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնւող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդւածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չտպւելիքը (երեքթերթից պակասը) չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից). առ. 10¼ ժ. մինչև 2¼-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ
Rédaction du Journal
TARAZ
Caucse Tiflis

դեղարւեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 11 Կիրակի, ապրիլի 2 — Տասնեւեօթներորդ տարի 1906

Շարունակւում է 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու մնասակարը:
Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV

և

ՏԱՐԱԶ

Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացմունքների թարգմանը:
Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտւած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքւած հայ անդամներ սնուցանել:

XVII պատկերազարդ շաբաթաթերթ XVII

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

փշեայ պսակ դրին նրա ճակատին, փոխանակ վարդերի.

Անարգ խաչի վրայ գամեցին Նրան աւազակների շարքում:

Լեղի ու քացախ խմեցրին Նրան, ծարաւը զովացնելու տեղ:

Ծաղրի, անարգանքի ու տանջանքի մատնեցին Նրան, որի միակ նշանաբանն էր եղել գութ եւ սէր քարոզելու մարդկանց, դէպի ընկերը, դէպի մերձաւորը:

Եւ ճշտութեան ու սիրոյ այդ աստուածային Առաքեալը միայն ատելութիւն ու հալածանք ստացաւ մարդկանցից, նահատակւեց նրանց ձեռքով յանուն սուրբ գաղափարի:

Սակայն նա—անմահ ճշմարտութիւնը չէր կարող յաւիտեան պարտւած մնալ գերեզմանում եւ նա յարութիւն առաւ...

Գերեզմանի կապանքները, ժանր կապարիչը չը կարողացան կաշկանդել նրան եւ Նա ազատ բարձրացաւ իր խորխորատից.

Այդ յարութիւնը Նրա վերջնական յաղթանակն էր...

Ճշմարտութիւնը եւ սէրը—ահա դրանցն էր ապագան. .

—



ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

XX-րդ դարին եւս վիճակւած էր ունենալ իր «անմեղ ողջակէզը»: Դա մի անհատ չէր այլ մի ամբողջ ժողովուրդ...

Այսօր էլ դա է դժոխային տանջանքների մէջ գալարւում. լեղի ու թոյն է դարձել նրա կեանքը, փուշ ու տատասկ է նրա ողջ շրջապատը. արցունքի ու արեան մէջ է լողում նա եւ նա իբրեւ ճշմարտութեան մի նոր առաքեալ անարգանքի սիւնին է գամւում ինչպէս նահատակ....

Եւ աշխարհի բոլոր չար ոյժերը մի համերաշխ միութեամբ ձեռք ձեռքի են տւել նրան տանջելու, սպանելու, թաղելու անհատակ անդունդի մէջ...

Եւ նա այսօր գամւած է իր պաշտած խաչի վրայ..

Նա... այդ տանջւած ժողովուրդը՝ հայը...

Սակայն մօտ է եւ նրա յարութիւնը. արդէն դղրդում են մեր աշխարհի լեռները, սարսափի մէջ են դևերը, պատռւել է դիմակաւորների հաստ վարագոյրը. քնի թաղւածն արդէն բարձրացնում է իր հուժկու բազուկները...Նա արդէն յարութիւն է առնում...

Այո՛, յարութիւն է առնում այդ տանջւած ժողովրդի մեռած գիտակցութիւնը...

Շնորհաւոր լինի այդ սուրբ Յարութիւնը...

Լէօնիդ

Վ. ՇՏԱՐԲԵԿ ՅԻՍՈՒՍ

Գերեզմանատան վերջին րոպէները

Կէս գիշերին մօտ էր, մելամաղձոտ հնչեց գիւղի փոքրիկ զանգը. սարսուռը և երկիւղը տիրեց ամենքին. բայց այս անգամ աղօթքի չէր հրաւիրում զանգը և ոչ էլ ուրախութեան մի տօն կատարելու. ո՛չ, նա անժամանակ էր: Նրա ձայնի զօղանջիւնը լալագին էր և ցաւով լի, կարծես արձագանքն էր այն տանջուած ու տոչորուած գիւղացոց մղկտացող հեկեկանքներին, որոնց կրած վշտերն ու տառապանքները անլսելի են մնում այս աշխարհի քար սրտերին... Բայց նա հնչում էր անընդհատ, հեռո՜ւ միայնութեան մէջ, շրջապատուած լեռներով ու անտառներով, հնչում էր այս անգամ խորհրդաւոր ձայնով: Արտասովոր մի դէպք էր կատարւում գիւղում. ամեն կողմից զինուած խմբեր են հաւաքւում կէս գիշերին եկեղեցու շուրջը. այնտեղ, ուր առաջ մարդիկ խոնարհած գլխով և դողդողալով էին մտնում առ Աստուած աղօթք մրմնջալու, այս անգամ զինուորական մի անզուսպ խումբ առանց քաշուելու համարձակւում է ոտքից ցգլուխ զինուած մտնել Աստծոյ տաճարը և ճանապարհուելուց առաջ մի վերջին ուխտ կատարել: Բարձրաձայն չըպիտի լինէր այդ ուխտը և ոչ ոք չըպիտի լսէր. դոցանից իւրաքանչիւրը իր սրտի խորքում կրում էր վաղուց այդ աւանդը և ամենքին հասկանալի էր. նա շատ համառօտ էր. խումբը մտաւ եկեղեցի, խոնարհուեց սեղանի առաջ և մրմնջաց իր ուխտը, որից յետոյ լսեց խմբական երգի ձայն եկեղեցու կամարների տակ և «Առաւօտ լուսոյ» ինքնաբերաբար հնչւեց շատերի բերանից: Կարծեք այդ եկեղեցին ներկայացնում էր հեռու լեռների ծերպերին հաստատուած մի վանք, որի միաբանները շուտ արթնանալով քնից դիմաւորում են արշալոյսին զւարթ ձայնով «Առաւօտ լուսոյ» գեղգեղելով. բայց այդ խմբի մէջ չըկար ոչ վարդապետ և ոչ էլ տիրացու, բոլորն էլ հասարակ գիւղացիներ էին՝ ժամանակի ոգու հետ համակերպուող և ամենքից բախտի կամքին թողնուած: Լսւում է հրամանատարի ձայնը և բոլորը դուրս գնալով եկեղեցուց՝ բաժանւում են խմբերի: Ճառերի կարիք չըկար և ոչ էլ ոգեւորութեան ու խրախուսանքի, դոցանից իւրաքանչիւրը ու գիտէր իր նպատակն ու անելիքը. հարկաւոր էր միայն առաջ շարժել. և այդ պատերազմական բանակը լո՛ւռ, անձայն ճանապարհ ընկաւ դէպի հեռուն:

Մութ էր գիշերն ու խաւար. մըշուշն ու ամպը, որ մշտական հիւրերն էին շրջապատի անտառիկ լեռներին ու ձորերին, այս անգամ էլ փռել էին իրանց անթափանց թիկերը բոլոր շրջակայքի վրայ և միագոյն տարածւել ամենուրեք, կարծէք ընդ միշտ պիտի շարունակէին դոքա այդպէս խաւար պահել երկիրը, փակել ամեն կողմից և ոչ ոքի, մինչև բուկ երկնքին ցոյց չըտալու արիւնով ներկուած երկիրը, յօշոտուած ու այլանդակուած դիակները և կրակի ու ծխի մէջ մնացող գիւղերը: Ո՛չ, երկինքը ողորմած է, նա կրակ ու շանթ կըթափէ այդ երկրի վրայ, անէծք կը կարդայ գազանացած սրտերին և կամ բոլորին համահաւասար կը պատժէ. իսկ այժմ, այժմ զոհւում են անմեղները, կոտորւում թշւառները, կրակ ու սրի ճարակ դառնում խեղճերի քրտինքի պտուղը. և կարծէք մի աներեւոյթ ոյժ ամուր գըրկած պահում էր այդ խաւարը մոռացուած երկրի այս խորշում, որ ոչ ոք չը կարողանայ տեսնել ու նայել դաժան մարդկանց արիւնոտ ձեռքով կատարուած բոլոր չարագործութիւնների ու արհաւիրքների հետքերը, որ ոչ մի անթափանց ոյժ չը կարողանայ մօտենալ դոցա և այդ երկրի խորշը մնայ, տոչորւի ու միանգամայն անյետանայ աշխարհի երեսից: Իսկ ձայնը մարդկային հուժկու ու անվեհեր ձայնը այլ ևս հեռուն չէր տարածւում. խաւարը, ճիշտ է, այս անգամ չի խանգարում, բայց այդ մղկտացող ձայնը լսող չը կայ, իսկ հնչիւնը գնալով-գնալով մարում է և դառնում մի խուլ անհասկանալի մրմունջ, որ ոչ ոքի ուշադրութիւնը չի դարձնում իր վրայ: Եւ այդ խուլ խաւարի միջով անձայն, լռիկ մնջիկ զինուորական խումբը շարունակում էր առաջ գնալ: Նեղ, զորապատյա լեռնային ճանապարհը իջնում էր զառիվայրի վրայով դէպի խոր ձորը, ապա բարձրանում նորից դէպի անտառներն ու լեռները: Դժւար էր ուղին և ցուրտ եղանակը. խումբը քայլում էր խոր ձիւնի միջով՝ նոր ճանապարհ բանալով իր համար. մէկ մէկ մարդիկ կանգնում, իրար ետևից գնում էին անվերջ և կարծէք ծայրը ընդ միշտ շարունակելու է անվերջ մնալ: Հեռուից լսւում է մի խուլ ձայն. գիշերայ ուշ ժամին, բուք ու բորան պատած ամենուրեք, խաւար մի այնակութեան մէջ ձայնը հնչում էր սարսափելի, մելամաղձոտ, բայց խումբը քանի առաջ էր գնում, այնքան ձայնը սրտմաշուկ, կսկծեցնող էր դառնում. դեռ ոչ ոք չէր լսել այդպիսի ողբի ձայն, ոչ ոք մարդկանցից ընդունակ չէր սարսուռ ազդելու ամբողջ բնութեան վրայ, ոչինչ չէր կարող արցունք թափել տալ այս աշխարհի մարդկանց աչքերից այնպէս ինչպէս այդ ձայնը թափել էր տալի անշունչ առարկաներից: Եւ քանի գնում ձայնը ահարկու էր դառնում, մեծանում, ընդարձակւում ու դղրդեցնում սար ու ձորեր. անշուշտ աշխարհի ամենամեծ ոճիրներից մէկը կատարել կամ կատարւում էր այդ րոպէին և արձագանքները էին տարածւում նեղ կիրճերի մէջ: Զինուորական խումբը կանգ առաւ մի քանի րոպէ, աւելի ուշով լսեց ձայնը և կարծես գուշակեց այն, ինչ որ ողբում էր: Առաջ շարժեց ձայնի ուղղութեամբ, անցաւ ժայռերի վրայով, դարձեալ ընկաւ ձորը, այս անգամ սարսափելի էր ձայնի աղաղակը, նրա հեծկլտոցը, նրա տանջանքը. մարդկային ո՛չ մի սիրտ տանել չէր կարող այդ վիշտը: Քիչ ներքև ձայնը աւելի կամաց կամաց մեղմանում էր, կարծէք ճնշւում կամ վախենում էր և խուլ մրմնջիւն հանում: Խմբի հրամանատարը իսկոյն հասկացաւ, թէ այդ սրտաճմլիկ ձայն հանողը մօտ է և ձորակի երեք կողմից դիրքերը ամրացնելով պահակներով, հրամայեց՝ «*Տղա՛յք, որոնեցէք ողբացող ձայնի շրջակայքը*»: Եւ մի քաջերի փոքրիկ խումբ իջաւ դէպի ձորը. խոր էր և մութ, կարուած ամեն կողմից սեպացած լեռներով: Եւ ահա լեռնային առւակի ափին, ծխի քուլաների մէջ կորած, սևացած ու այլանդակուած ջրաղացի փլատակների առաջ մարդկային մարմնի զանգւածներ են երևում, կըտրատուած ու մասամբ այրուած: Եւ ջրի առւակը գալիս է զարնւում է այդ դիակներին, անցնում սրտերի միջով ու նոցա սրտի մէջ մարած բողոքը հանելով, տանում զարնում է քարերին ու լալահառաչ աղաղակը տարածում ամբողջ շըրջակայքի վրայ: Խումբը հասկացաւ թէ ինչո՛ւ է ողբում առւակը, ինչո՛ւ է հեծկլտում: Հեռո՜ւ մարդկային աչքերից, հեռաւոր սիրելիների և ծնողների ներկայութիւնից այնտեղ վերջ էին տուել իրանց տանջուած կեանքին 13 հոգի քաջ երիտասարդներ: Այս ցաւալի տեսարանը պատկերներն էր այն հասարակական կեանքի, որ կրում էր մի թշուառ ազգ վայրենի ու մոլեգին ամբոխի արիւնռուշտ բնազդից: Պատկերն է մի դժբաղդ ժողովրդի, որ նահատակների թւով մի տարւայ ընթացքում լցրեց իր սիրասուն երկրի ամեն մի խորշն. բաղդն էր հեծւած ու տարակիր մի ազգի, որին վիճակուած է իր գոյութիւնը պահպանելու համար՝ երիտասարդ կեանքերի մի ամբողջ շարք զոհ բերել անարգ, խելակորոյսի դրացուն: Զինուորական խումբը խոնարհեց այդ նահատակների սառած դիակների առաջ. նա մրմնջած՝ մի ուխտ, որ ազդանշան պիտի լինէր բոլորի համար՝ վրէժ հանել քաջերի ընկերների նահատակութեան համար, վրէժ հանել, ինչ գնով էլ լինի: Ո՛չ մի կաթիլ արցունք չը ցայտեց և ոչ մէկի աչքից. ո՛չ, արցունքը կորցրել է իր ոյժը. և ինչո՞ւ պիտի արցունք թափել այն քաջերի համար, որոնք սարսափեցրել էին ամբողջ շրջակայքը, որոնց անունները բաւական էին վատոգի թշնամուն ի փախուստ դարձնելու: Նոքա շատ թանգ էին ծախել իրանց կեանքը և իրանց մահովն անգամ զղջացրել թշնամուն: Եւ տխուր սրբութեամբ հաւաքելով այդ քաջերի դիակների մնացորդները խումբը յետ դարձաւ նախկին ճանապարհով:

Գիւղի դիմաց, փոքրիկ առւակի աջ ափին՝ դաշտի լանջին, մատղաշ ծառերի մերկ ճիւղերի տակ, գերեզմանաքարերին շարւած, այստեղ ժողովել էին մեծ քանակութեամբ ռամարդիկ ու քահանայք. բոլորի դէմքերը տխուր, բոլորն էլ սպասում էին մի ինչ տխուր հանդէսի. մի քանի հոգի փորում էին մի ընդարձակ գերեզման: Հասաւ զինուորական խումբը. թափւեց ամեն կողմից մարդիկ՝ ճանաչելու և գտնելու իրանց սիրելիների դիակները ու վերջին հրաժեշտը տալու: Եւ բաժանեցին իրանց դիակները, կատարեցին լացման արարողութիւն, քահանաները մելամաղձիկ ձայնով որոշեալ աղօթքները կարդացին: Տխուր էր տեսարանը և սրտամաշուկ, ոչ ոք սիրտ չէր անում բարձր

Գաղափարի զոհը

ձայնով վրդովելու այդ վշտալի հանդէսը և ամեն մէկը սպասում էր, թէ ահա հողի մի չեղւա կը ծածկէ իր տակ բոլոր 13 երիտասարդ դիակները՝ թողնելով նոցա մասին լոկ մի յիշատակ: Բայց ով է տրդեօք այն երիտասարդ կինը, որ երեխան գրկին մօտենում է դիակներից մէկին, որ կամենում է փոխել ամբողջ գերեզմանը. ինչպէս է համարձակւում մօտենալ գերեզմանատան և ներկայ լինել թաղման հանդիսին, երբ այդ արգելւում է մի հին սովորութեամբ: Այս անգամ մուայութեան էր տւած ամեն մի սովորութիւն. վիշտն այնքան մեծ էր, ցաւն այնքան կսկծեցնող, որ բոլոր ներկայ եղողները սառել, փետացել էին և ոչ ոք չէր մտաբերում հին սովորութիւնները: Կինը մօտեցաւ, գրրկեց դիակը. արտասուքի ոչ մի կաթիլ չէր երևում նորա աչքերին. նա ցածր ձայնով պատմել սկսեց այն քաջարի գործերը, որ կենդանի ժամանակ ամենայն հերոսութեամբ կատարել էր իր դիակացեալ ամուսինը: Բայց նա չը բաւականացաւ լոկ դրանով, գոյրոյթից պատռեց պատանը, դուրս հանեց այնտեղից նահատակի աջ ձեռքը համբուրեց ինքը, տալ տւաւ իր զաւակին ևս համբուրելու ու վերջին հրաժեշտը տալու. «Համբուրիր այս ձեռը, զաւակս, սա իր կենդանի ժամանակ թշնամու շատ դիակներ է փռել իր շուրջը. համբուրիր և ուխտիր հօրդ շաւղով ընթանալու. նա շատ մայրեր է լացցրել, բայց ես չեմ արտասւում, որովհետև նա ընկել է իբրև քաջ զինւոր՝ իր հայրենիքի պատիւը միշտ բարձր պահելով»:

Այդ հերոսը Բաբան էր, ամբողջ տասներեք հոգու խմբապետը:

Անցաւ մի քանի րոպէ և հողի մի բարձր բլուր կազմեց հերոսների դիակների վրայ: Վերջին անգամ զինւորական խումբը խոնարհեց այդ հողաբլուրի առաջ և ապա ոտքի կանգնելով առաջ արշաւեց...

Աս. Շահնազարեան

Յիսուս մտորմունքի մէջ
«Լինձ-թե չը ջինեղ»

Յիսուս՝ ահա Մարդը

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍԸ

(Յուշարձան մեր նահատակ հերոսներին)

Հսկայ լերանց խոր հովիտում
Կտրիճների երգն է թնդում -
—«Հայո՛ց սարեր, սիրո՜ւն սարեր,
Ձեր սուրբ ջրին մենք մեռնենք.
Հայո՛ց ձորեր, խոր—խոր ձորեր,
Մեր կարօտը երբ կառնենք:
Սուր-թուր վերցրած, սար-ձոր ընկած
Ման ենք գալիս ու երգում.
Գիշեր, ցերեկ քաղցած, սոված՝
Ծառի, քարի տակ չոգում.
Ա՜խ, մեր սարե՛ր,, սէգ սարեր,
Վա՜խ, մեր քարեր, սև՝ քարեր...
Մեր գնտակներ կայծակի պէս
Թև են առնում ու թռչում,
Մեր թշնամուն պիղծ, աներես՝
Նոքա լաւ են ճանաչում:
Հայի սարեր, բարձր սարեր,
Հայի քարեր, կարծր քարեր,
Արնոտ վէրքով եարոտ-փարոտ,
Ուրախ օրին արօտ կարօտ՝
Ման ենք գալիս,
Ջան ենք տալիս:
Ա՜խ, ծաղիկներ, ծառ ու կանանչ,
Մեր դարդերին դուք չէք ճանաչ.
Մեր օրը միշտ սև
Զրտեսանք արև.
Երգեր ենք ասում,
Վէրքեր ենք ուզում:

Մենք ման ենք գալիս սարերի վրայ,
Մենք ջան ենք տալիս քարերի վրայ:
Սարե՛ր, ո՛յ սարեր, մենք ձեզ ենք սիրում,
Քարե՛ր, ո՛յ քարեր, մենք ձեզ ենք սիրում:

Ա՜խ, քուրդ ու տաճիկ մեզ շատ ղադեցին
Մեր խեղճ էրէխանց սաղ—սաղ թաղեցին,
Ամեն ինչ կորաւ՝ մեր բախտ ու մուրազ,
Ամեն ինչ կորաւ՝ ինչպէս սին երազ.
Մեր հոգին մնաց փափակ ու պապակ,
Մեր աչքեր միշտ թաց, որոն մէջ՝ կրակ
Ա՜խ հայի սարեր,
Վա՜խ, հայի քարեր...»:

«Տղէրք, ինձ լսէք, ձայն տւեց մի քաջ.
Մինչև երբ նստենք. յառա՜ջ, ո՜ն, յառա՜ջ»:
Կտրիճներ զինւած խմբով վեր կացան,
Փոթորիկի նման առաջ սլացան...
Փայլուն արևի ոսկեգոյն շողքերից
Հսկայ լեռների յետև սլացան,
Ամպերի չերտերի, լեռների կողքեր
Ոսկու և սաթի վառ փայլ ստացան:
Հասաւ սև գիշեր լերան գագաթին,
Փակեց արևի ուղին ոսկէզարդ
Եւ հաստ, անթափանց ամպերով մթին
Ծածկեց երկնքի դիմակն աստղազարդ:
Գիշեր էր արդէն, և մթին խաւար
Իր հաստ, անթափանց զգեստների տակ
Գոռոզ հրճւանքով ծածկում է աւար,
Որ տարաւ լոյսից իբրև յաղթանակ:
Մի խումբ գեղջուկներ Սասնոյ լեռների
Կանգնած են յոլի խաւարի միջին,
Ուզում են տեսնել զալուստ քաջերի,
Հայրենեաց նեցուկ անմահ հերոսին:
Նա իր խումբն առաւ, գնաց շտապով
Թշնամու առաջ ժանտ ու վայրենի,
Որ չարիքների դառն սարսափով
Եկել էր, մտել երկիրն հայրենի:
Բայց նա ուշացաւ... Ահից, սարսափից՝
Մի դառն զգացում տիրեց բոլորին,
Եւ կասկածների վարար ապրանքից
Նոքա անհամբեր դուրս գալ կուզէին:
Էլ մի՛ վհատիք, դուք, ո՛վ գեղջուկներ,
Ահա թէ ինչպէս «սուրբ ազատութիւն»
Հնչում են ուրախ կտրիճ զինւորներ
Եւ երգում ուժգին «կեցցէ յաղթութիւն»:
Տեսէք, թէ ինչպէս փայլում են մթնում
Հայոց քաջերի զէնքերն աչհարկու,
Եւ քաղցրաբերան ինչպէս են երգում
Վեհ ազատութեան երգերը հուժկու:

«Ահա նոր դրօշ սուրբ ազատութեան
Ու խմբւած քաջեր անվախ, անվեհեր.
Կեցցէ հայրենիք, կեցցէ Հայաստան,
Կեցցեն հայութեան սուրբ նահատակներ:
Ազատ լեռների ազատ հովտում
Սուրբ ազատութեան երգն է որոտում.
Հսկայ սարերի խոր—խոր ձորերով
Առաջ ենք անցնում կրակով, սրով:

Թող երկնքում որոտան
Սև-սև ամպեր կուտակւած,
Սարեր, ձորեր թող թնդան,
Կարկուտ, հեղեղ թափւեն ցած:
Եւ կատաղի հօսանքով
Թող մանչոյ փոթորիկ,
Ոճիր ծնող երկունքով
Թող բռնւեն ծով, ալիք:
Մենք աներկիւղ, անվեհեր՝
Զէնքեր ամուր սեղմելով
Դաշտեր, ձորեր ու լեռներ
Պէտք է ման գանք գիշերով:
Վա՜յ թշնամուն, թէ յանկարծ
Մեր դէմ դուրս գայ այդ ժամին.
Կը տապալէ նորան ցած
Մեր հրացայդ մօսինին...:

Ինչպէս փոթորիկ ամպեր սևամած
Մղւում են հեռու երկնի ճակատից,
Այնպէս գեղջուկի դէմքից տխրամած
Հեռացան անհետ տխրութիւն, թախիծ։
Ուրախ քայլերով նոքա մօտեցան,
Եւ ջերմ ողջոյնի խօսքերն անուշիկ
Նոցա շրթունքից մեղմիկ լսեցան։

Փայլեց վառ լուսին ամպերի տակից
Մանուկ ժպիտով քաջերի դէմքին
Եւ ուրախութեան եղաւ մասնակից.
Նա էլ ողջունեց նոցա ամենքին։

Բ

Երկնի ճակատից ամպերն հեռացան,
Եւ ազատ լուսին հեզիկ սահելով

Առաջ է անցնում մեջիկ և անձայն՝
Նաշխում աստղերին ուրախ պաղնելով։
Փչում է զեփիւռն հեռու դաշտերից
Անթառամ ծաղկանց կենսատու բոյրով,
Թախծալից մարդուն փրկում վշտերից
Զով ալիքների քաղցրիկ համբոյրով։
Ուրախ երգերի բարձրաձայն հնչիւն

ըմպիր բաժակդ եւ աշանանք երկինք

Միացած հովին՝ ձայնով խնդալից,
Սև—մութ ձորերի ուժգին մանչիւն
Բերում են բարև հայոց լեռներից։
Մէգ լերան վերայ, շարքերի մէջտեղ
Նստած է քաջը մտախոհ ահա.
Երբեմն միայն դէմքով փառահեղ

Սևեռում աչքը քաջերի վերայ։
Ինչո՞ւ է յուզւած, ինչն է փոթորկում
Անվեհեր քաջին ուրախ շարքի մէջ...։
Վրէժն է զռում. վրէժ որոտում,
Նրա կրծքի տակ բորբոքւում անշէջ.
Թափւում են կայծեր, շանթեր ահռելի

Նրա ամպամած, հսկայ ճակատից.
Ցործանք է ծնւում խիստ զարհուրելի
Ընդուսպ վրէժի կրծքի յատակից։
Քաջերի ձայներն հսկայի հոգին
Սխուժ հնչիւնով գիւթում են, վառում,
Եւ ազատութեան երգերը ուժգին

Սրտի լարերին զարկի, ընդհարւում։
Երկար տարիներ քաջը անդադար
Կռիւ է մղում անգութ տաճկի դէմ
Իր հայրենիքի փրկութեան համար
Եւ կանգուն է դեռ՝ ինչպէս մի յաղթվէմ։
Նա չէ՛ թուլացել. նորան չէ յուզում
Կռւի զոռ դաշտի պատկերն ահաւոր.
Նա անդորր կեանքի վայելք չէ ուզում,
Ոչ էլ աշխարհի փառքը անցաւոր.
Այլ նրան տանջող և այրող բոցը
Սէրն է հայրենեաց, վրէժը թշնամու.
Եւ նրա կուրծքը, այդ վառ հնոցը
Պատւարն է սիրոյ, անզուսպ վրէժու։
Փայլում է ժպիտ գիւղացոց դէմքին՝
Տեսնելով քաջի վառվռուն տիպար.
Աչքերն ուղղած նոքա երկնքին՝
Աղօթք են անում կտրճի համար։
Փայլուն լուսնի շողքերի տակ լուսավառ
Հայ կտրիճներ չարան—չարան նստեցան,
Եւ խայրոյկներ սարի վրայ բոցավառ
Նոցա չորս կողմ ճաճանչափայլ վառւեցան,
Ուրախ երգի քաղցրիկ հնչիւն
Հով զեփիւռին միացած՝
Առաջ անցաւ դէպի հեռուն՝
Հայոց սարեր սեզապանծ։
Գինով բաժակն ահա վերցրած՝
Ոտքի ելաւ լեռնցին,
Կտրիճների սիրով լցւած՝
–Այսպէս խօսեց սրտագին.
— «Մնաք այսպէս միշտ աննկուն,
Դո՛ւք, լեռների քաջ որդիք.
Դուք չէք թողնի անմեղ արիւն
Թափեն զազրն թշնամիք։
Դուք միասին առած սրեր՝
Հազարների դէմ կելնէք
Եւ կռւելով քա՛ջ, անվեհեր,
Հայրենիքը կը փրկէք։
Հայի բաղուկն հզօր է,
Հայի բազուկը անպարտ է,
Ձեր մտնելիք ամրակուռ,
Կտրուկ, մաշող՝ սուր ու թուր...
Ահա նա լռեց. կարմիր բաժակներ
Քաղցրահամ գինով լցրած լիուլի
Ձեռքերին բռնում ելնում են քաջեր,
Ձայնում են ուրախ, խօսում սրտալի։
Հասաւ կէս գիշեր և յոգնած քաջեր
Լեռների կանաչ խոտերի վրայ
Ձգւելով մօտ—մօտ, փակում են աչեր,
Ննջում են հանգիստ, ընկած անզգայ։
Սառնոյ լեռնցիք զէնքեր ձեռքներին
Հսկում են այնտեղ քնած քաջերին։

Գ.

Թափառկոտ լուսին կապոյտ երկնքում
Հեզիկ սահելով առաջ է անցնում.
Եւ նրա շողքեր փայլուն արծաթի
Ուղղում են կանաչ երեսը դաշտի։
Պահնորդի խումբը ցնծալի երգով
Ձայնակից եղաւ առւի կարկաչին.
Քաղցրիկ զեփիւռը իր զով հոսանքով
Երգում է, սուլում մարդուս ականջին։
Ահա լռեցին. բայց մեռելային
Լուռ, մելամաղձոտ այդ ձորի միջում
Առւակը նորից իր գիշերային
Երգերն է հնչում, հեզիկ խոխոջում։

Տիրամայր, Մարիամ Մագթաղինացի եւ Յիսուսի բարեկամները

Բայց յանկարծ հեռուից լսեցաւ ուժգին
Անթիւ ձայների գոռում ու գոչիւն
Ինչպէս ամպերի խուլ, որոտագին
Պայթիւն կատաղի կամ սուր մռնչիւն...
Պահնորդներն եկան,
Քաջին մօտեցան.
Տագնապի ժամին
Հանում են քաջին.
Քունը աչքերում
Նա վեր է թռչում,
Քաջերին կանչում։
Ոտքի են ելնում,
Աչքերը ճմլում..
Եւ սթափւելով,
Զէնքերը վերցնելով
Եկան, կանգնեցին
Քաջի առաջին։
Բայց ի՜նչ սոսկալի և զոռ փոթորիկ
Զարդեց փոքրաթիւ քաջերի սրտում.
Ի՞նչ անեն, արդեօք, այս խմբով փոքրիկ՝
Արնախում տաճկի անթիւ գնդի դէմ։
Ի՞նչ դառն վայրկեան հերոսի համար.

անմահացեալի մահկանացուն դագաղում

Եկան, կիտուեցան հոկայի գլմբին
Ծալ-ծալ կնճիռներ՝ անթիւ անհամար.
Եւ մի ահռելի վառ հրդեհ ներքին
Տոչորեց քաջի սիրտը և հոգին։
Նա չէ ընկճւում մահուան սարսափից.
Ընկնել կուի մէջ հայրենեաց համար,
Եղբօրը փրկել դաժան կորստից՝
Պատիւ է քաջին և փառք անհամար.
Բայց մահից յետոյ թողնել անտէրունչ
Հայրեր ու մայրեր տաճկի կապանքում...
Այդ վիշտն է տանջում նրան լուռ ու մունջ
Եւ քաջի մտքեր կապում, կաշկանդում։
Ինչպէս որսորդներ ահեղ շանթերի
Հսկայ լեռների-խոր հովիտներում՝
Որոտաց, թնդաց վրէժն ահռելի
Նոցա զայրոյթով լցուած սրտերում։
Անվախ, անվեհեր փոքրաթիւ քաջեր
Ուխտեցին կուել, անձնուէր։

Դ.

Երբ թշնամին հեռուից տեսաւ սակաւաթիւ քաջերին.
Մի հեգնական ժպիտ փայլեց նորա վայրագ դէմքերի
— «Էլ այս անգամ չունէր հնար գտնել կեանքին փրկութիւն,
Մենք կը ստանանք փառք ու պատիւ մեծ Սուլթանի պալատում,
Երբ կը բռնենք ու բոլորին չղթայակապ մենք կանենքն
Իբրև նշան մեր յաղթութեան դէպի Ստամբոլ կը տանենք»։
Ցանկարծ լերան լանջերի վրայ, ժայռերի տակ ահաւոր
Պայթեց որոտ հրացանների, և թնդացին սար ու ձոր.
Հայ կտրիճներ դիրքեր մտած՝ կարմիր գնդակ տեղացին.
Տաճիկները այդ կրակից զարհուրեցին, դողացին։
Ծուխը ելաւ, քուլայ-քուլայ դէպի երկինք բարձրացաւ.
Լուսնի լոյսով պայծառ ձորը թանձր մխից սևացաւ.
Քաջ զինուորի տաք կարմիր փամփուշտները թևաւոր
Մահ են սփռում թշնամու մէջ, գետին փռում արնաթոր։
Խեղճ թշնամին յեղապատառ չի իմանում ուր փախչի.
Ամենուրեք նրան գտնում է փամփուշտը հայ կտրճի.
Ահ ու դողից սարսափահար՝ էլ նրանք միմեանց չեն ջոկում
Եւ աջ ու ձախ՝ պատահողին տապալում են գլորում։
Հրաշք են գործում սակաւաթիւ կարիճները՝ դիրք մտած
Կարկտի նման տեղում են նրանք գնտակները դէպի ցած։
Հայ զինուորի գնտակները աչքեր ունեն սրատես.
Մտածում է խեղճ թշնամին ու չուռ տալիս իր երես։
Ահա նոքա յեղապատառ փախան, սար ու քար,
Արիւններկ այդ ձորերի մէջ զոհեր թողին անհամար։
Ոյժը ապրում է հերոսի սրտում.
Թշուառ զաւակներ այդ լաւ իմանք.
Շատութեան մէջ չէ ոյժը աշխարհում.
Եւ այսուհետև էլ մի մոռանաք՝
Հայն էլ է կարող յաղթութիւն տանել,
Նա էլ է կարող թշնամուն վանել։
Դէհ, սթափուեցէք, խաւարի որդիք,
Դարաւոր փորձով մի՞թէ չիմացաք՝
Որ հայը ունի անձնուէր մարդիկ՝
Իր փառքին զոհող և՛ մարմին, և՛ կեանք։
Ցամառ զաւակներ. մի՞թէ մոռացաք
Մեր Աւարայրի սուրբ երկնային,
Որով նախնիքի ժառանգած պարծանք
Եռանդ է տալիս թուլացած հային։
Դէհ, սթափուեցէք. մինչ հայ երակում
Պիտի հոսէ արիւն իր քաջ նախնիքի,
Քանի դեռ հային սէրն է կրակում,
Ջուրն հովացնում իր սուրբ հայրենիքի,—
Հայը պիտ ապրի շղթայից ազատ
Իր սիրած երկրի ծոցում հարազատ,
Եւ պիտի ծաղկի մասամբ Հայաստան՝
Ինչպէս Եդեմի դալար բուրաստան։
Էլ չենք վախենում դոռ ճակատագրի
Ընդունթ խաղերից. և մենք արնախում,
Դաժան որդեղուրկ կ-ընչող վայրի
Ոսոխներից էլ երբէք չենք դողում,
Երկիւղ, բնազդ ջնջւել յաւիտեան
Տեղի է տուել անվեհերութեան։
Կռիւ ենք ուզում, կռիւ արիւնոտ,
Ամպրոպ ու շանթեր, կայծակ ու որոտ.
Մեզ պէս անվեհեր ո՞րտեղ կը ճարւի
Տւէք ախոյեան՝ զուրս գանք կուի...

Իւղաբեր կանանց հրեշտակն աւետում է Քրիստոսի յարութիւնը

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայո՛ց աշխարհ, հրաշքների սպարէզ է քեզ բացել.
Ահն ու սարսափ քո լեռներից չքացել են, վերացել։
Դէհ քո քաջերիկ, արդու ձայնով քարոզ կարդա քո որդոց,
Միշտ վառ մնայ նրանց սրտերում ազատութեան հուրն ու բոց.
Անհաւասար կուի նշան արդէն տուիր որոտով.
Շուտով կը գայ դոռ փոթորիկ՝ որոտընդոստ ամպրոպով,
Չար թշնամու անթիւ զօրքով քո սարերը կը ծածկեն,
Նրանց զէնքերի ահեղ փայլից սարեր, ձորեր կը սարսեն։
Հա՛յ կտրիճներ, պատրաստ պահէք կտրուկ, մաշող սուր ու թուր.
Էլ ձեռքերից ցած չը դնէք ձեր զէնքերը ամրակուռ.
Ազատութիւն ծնող սիրտը ձեր կրծքում թաղնուած,
Ելէ՛ք անվախ, և կը փրկէք մեր երկիրը վտանգուած։
Հա՛յ պատանիք, զէնքեր առած՝ փորձեր արէք վարժուելու,
Արագ ինչպէս կայծակ, մրրիկ այս և այն կողմ շարժուելու.
Ազատութեան վառ յոյսերով լաւ է տանջուել ու խոկալ,
Քան թշնամու դաժան լծով միշտ հառաչել ու սգալ,
Հայոց մայրե՛ր, վերջին անգամ հրաժեշտ տուէք ձեր որդոց,
Հանդիստ պահէք ձեր սրտերը, հեռու ձիգնից լաց ու կոծ։
Մնաք բարո՛վ քոյր ու եղբայր և հարազատ հայր ու մայր,
Մնաք բարո՛վ կանաչ արօտ, սիրուն գաշտեր ծաղկազարդ,
Մենք դ-էրս կը գանք թշնամու դէմ՝ կեանք արեւից զրկելու,
Ձեզ զազանի ճիրաններից մեր արիւնով փրկելու...

Յարութիւն Պէտրոսեան

ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԳՐՔԻՑ

Զի ասես, Մեծատուն էի եւ մեծացայ,
եւ ոչ ինչ կարօտ եմ. եւ ոչ գիտես՝
եթէ դու ես ողորմելի եւ եղկ եւ
աղքատ, մերկ եւ կոյր...
Գ.Լ. Գ, 17

Հարուստ, մեծատուն մարդ ես անուանի,
Կարիք չ'ես զգում դու ոչ մի բանի.
Ս. կայն չը գիտես, որ մե՛րկ ես իսպառ.
Եա՛յր ես, խղճալի՛, աղքա՛տ ու թշուա՛ռ...
Ա՛ռ Ինձնից ոսկի, որ հարուստ դառնաս—
մ ոսկուց միայն դու կը մեծանաս.
Սպիտակ, մաքուր դու հագուստ հագի՛ր,
Մերկ, անվայելուչ մարմինդ ծածկի՛ր,
Եւ կոյր աչքերիդ դի՛ր դեղ ու դարման,
Որ կարողանաս տեսնել ամեն բան։

Յարութիւն Թումանեան

ՍՈՂՈՄՈՆԻ ՏԱՃԱՐԸ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

ԼՈՐԴ ԲԱՅՐԸՆ

ՀՐԷԱԿԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ

Ա.

Արտասուեցէք,,,

Ա՜խ, լացէք նրանց վրայ, որոնք Բաբիլոնի գետերի ափերին՝ նստած ողբում են: Լացէք նրանց վրայ որոնց տաճարները աւերակ, հայրենիքը երազային են դարձել...

Յուդայի փշրւած տաւիղի վրայ արտասուեցէք.. Ուր բնակւում էր Աստուած, այժմ բնակւում են Աստուած չունեցողները... Լացէք...

Ո՞ր աղբիւրները կը լւանան այլ եւ Իսրայէլի արիւնոտ ոտները. երբ արդեօք Սիօնը կը վերսկսի իր քաղցրաձայն երգերը և երբ Յուդայի մեղեդին դարձեալ ցնծութիւն կը պատճառի այն սրտերին, որոնք բաբախում էին Նրա երկնային ձայնով:

Ազգ թափառական և խոնջած, ո՞ւր պիտի հանգչես դու վերջապէս: Վայրի աղաւնին բոյն ունի, աղւէսն՝ իր որջը, մարդս իր հայրենիքը...

Բայց Իսրայէլին միմիայն գերեզմաններ են մնացել...

Բ.

ՁՈՐԸ

Ձորերի մէջ, գետերի ափերին՝ լացինք մենք այն օրերի մասին, երբ օտարների բանակները աւերեցին Սիօնը, և մեր գլուխները խոնարհ կրծքներիս վրայ, մեր սրտերը լի էին հեռաւոր հայրենիքի կարօտով:

Նրգեր ուզեցին լսել. սակայն նրանք լռած են մեր սրտերում՝ բլուրների վրայ մեռնող քամիների նման... Մեր ձեռքերը չեն ուսուցանիլ մեր գիտցած երգերը, մինչեւ իսկ եթէ մեր աջերն յետին կաթիլը թափի...

Մեր տաւիղները իրենց փշրւած լարերով կախւած են ուռենու տխուր ճիւղերից և մեռած ու համր են նրանք՝ որպէս ծառի մեռած տերեւները:

Մեր ձեռքերը թող ծառայեն շղթաներով... Բայց մեր արցունքը ազատ է եւ կը հոսէ նա միմիայն մեր Աստծոյ, մեր փառքի...և քեզ, Սիօն, միայն քեզ համար...

Գ.

Յորդանանի ափերը.

Ուղտեր են թափառում Յորդանանի նախկին ափերի վրայ, օտար աստուածների պաշտողներ են աղօթում Սիօնի բլուրների գլխին, Բահաղի երկրպագուներ խոնարհւում են Սինայի կատարների ծայրին...

Եւ այնտեղ... այնտեղ իսկ... Ո՛վ Աստուած, ինչու ուրեմն թաքցրած ես պահում քո սուր շանթերը:

Այնտեղ, ուր մատդ գծեց քարեայ տախտակների վրայ, ուր քո ստւերը, շրջապատւած բոցերով՝ եկաւ լալու ժողովրդի առաջ... որովհետեւ քեզ իսկ... ոչ մի ճնշաւոր չէ կարող տեսնել առանց մեռնելու:

Ա՜խ, ցոյց տուր շանթիչ հայացքդ կայծակի կրակների միջով, կործիր ճնշողների դողացող ձեռքերից նիզակը... Մինչեւ ե՞րբ ար քո բռնաւորները պիտի ոտնատակ տան քո բնակութիւնները, մինչեւ ե՞րբ Աստուած, առանց աղօթողների պիտի մնան նւիրական տաճարները...

Վ. Փափազեան

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Զատկական լեգենդ

(Փոխադր. Ֆրուզից)

Մռայլ ու տխուր խարխուլ խրճիթում
Մանկական անհոգ ժպիտը դէմքին
Կանգնած զատկական սեղանի առաջ
Հարցնում է մանուկն իրա հայրիկին.
—«Աամ, հայրիկ ջան, արդեօք ո՞ւմ համար
Այն մեծ բաժակը լցրիր գինով.
—«Մեր հիւրի համար, սիրելի զաւակ,
Որ այցելութեան պիտի գայ գիշերով:
Այս գիշեր հէնց որ սեղան կընստենք
Մեծն Փրկիչը երկնքից կիջնի,
Եւ ամեն հայի տունը մտնելով
Զատկական ուրախ սեղանը կօրհնի.
Ապա ամեն տան մի ումպ-մի կաթիլ
Այս մեծ բաժակից կըմպի Նա գինի:

—

Երուսաղէմի շրջակայքում

Զատկական համեստ թաթախումից յետ
Խեղճ ընտանիքը սեղանը թողեց.
Մինչդեռ զարմացքով անա իր հօրը
Մանուկը տխուր նորից հարց աւեց:
—Բայց ո՞ւր է հայրիկ, մեծն Փրկիչը,
Գիշերն անցաւ, Նա մեզ չայցելեց:
—«Սիրուն իմ զաւակ, Նա արդէն եկաւ
Եւ սուրբ շուրթերով մեծ թասն ըմպեց,

Եկաւ աննկատ, կրկին չքացաւ:
Օ՜, թէ չլինէր Նրա շուրթերի ույժը կենարար,
Մանուկ, մեր սիրտը վաղուց արնալի պիտի մահանար.
Վաղուց մեր հոգին պիտ թունաւորէր
Այն հալածանքի ու վշտի թոյնը,
Որ արիւնոտ մեզ իր ձեռքերով
Վիճակը աւեց ըմպել դարերով»:

Յակոբ Յակոբեան.

Հրէաստան. Դամասկոսի շրջակայքը

ՀԱՅԸ

Երբ առաքեալ քրիստոնէութեան
Հայն աշխարհ եկաւ Ասիայի խորքում.
Նա և տարածող քաղաքակրթութեան,
—Նրան աւեցին այդպիսի կոչում
Եւ նա քարոզեց իր արեան գնով
Այդ վեհ իդեալներն համայն մարդկութեան,
Իսկ դորա համար այնքան տանջանքով
Զարչարւեց, խաչւեց, դրւեց գերեզման:
Բայց վայրագ ազգեր իզուր կարծեցին,
Թէ հայը մեռաւ, էլ չիք փրկութիւն
Ո՛չ, ուր կայ տանջանք, խաչ, մահ և շիրիմ,
Այնտեղ կայ անշուշտ նաև յարութիւն:

Լէօնիդ

ԴԱՐՁԵԱԼ ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԻՒՆ

Մի անգամ էլ այս վերջին ամիսների ընթացքում Թուրքաց հայութեան սիրտը այն լաւատես յուսով թէ անա շուտով մի հզօր ձայն կը բարձրանայ յօգուտ տանջւած թիւրքահայերի, վերջ տալու նրանց անվերջ տանջանքին ...

Այդ ուժեղ ձայնը սպասում էինք լսել ազատ Ամերիկայից, նրա մարդասէր նախագահ Ռուզւելտից:

Մի անգամ էլ թնդաց դիտակից Եւրոպայի ամեն անկիւններից հայասէրների աղաղակը, նրանց միաձայն դիմումը այդ նոր ազատարարին: Իրանց բազմատորագիր խնդրով նրանք յոյս ունէին թերևս հարկադրել անգրատլանտեան կառավարութեանը նախաձեռնող հանդիսանալ հայկական հարցի լուծմանը դիւանագիտական ճանապարհով խաղաղարար կոնֆերանսիայում...

Սակայն իտերև ելան և այդ վերջին յոյսերը:

Գործնական ամերիկան զգուշացաւ խառնւել այդ ծանր խնդրին և նախագահ Ռուզւելտն իր քարտուղար Թաւտի միջոցով յայտնեց ամերիկացի հայասէրների պարագլուխ Ջեմս Թէյնոլդսին, որ ինչքան էլ նա ցաւակից է նրանց հետ միասին տաճկահայերի տուառապանքին, ինչքան էլ նա ամբողջ սրտով ցանկանում է օր առաջ բարելաւած տեսնել այդ նահատակւող ժողովրդի արդի անտանելի վիճակը, այնուամենայնիւ Միացեալ Նահանգների կառավարութիւնն իրան այնքան զօրեղ չէ զգում միայնակ իր ուժով վճռելու այդ հարցը: Միևնոյն ժամանակ նա երկիւղ է յայտնում որ Ամերիկայի միջամտութիւնն այդ խնդրում առաջ կը բերէր մի ուրիշ պետութեան կողմից դիմադրութիւն և այդպիսով նա աւելի մեծ վնաս հասցրած կը լինէր այն մարդկանց, որոնց ուզում է օգնած լինել:

Քաղաքավարի և կտրական մերժում է դա:

Ուրեմն միանգամ էլ յուսախաբւեցին հայերը և նրանց հետ էլ իրանց եւրոպացի բարեկամները:

Մենք փորձել էինք Եւրոպային այժմ էլ փորձեցինք Ամերիկային... էլ ում մնաց որ դիմենք...

Իսկ երկիրն այնտեղ յուսահատ գալարւում է բռնութեան չղթաների տակ. նա օրհասական ճիգ է թափում դուրս գալ իր դժոխային դրութիւնից: Այնտեղ դեռ հոսում է անմեղ արիւնը, աւերւում է հայ ժողովրդի տնտեսական-նիւթական դրութիւնը. այնտեղ միշտ աւելի ու աւելի ահեղ եռանդով առաջ է տարւում հայաջնջման քաղաքականութիւնը: Այնտեղ դատարկւում է հայի երկիրն իր հարազատ ժողովրդից, նա ամայանում է, մեռնում է,..

Լռեց Եւրոպայի ռազմական ձայնը այդ դժբաղդ խնդրի լուծման համար, այժմ էլ լռում է Ամերիկան, էլ ո՞վ պիտի աղաղակի, ով պիտի թնդայ ու պայթի ո՞վ պիտի փշրէ հայի կաշկանդող շղթաները...

Նա խնբր...

«Մեր յոյսը միայն մեզ վրայ լինի...
Աղբաս ու ճարուստ տւած բեւ բեւի,
«Այսպէս թէ միայն կայ ճար փրկութեան...»

Լ. Մարկոսեան

Զատկական շնորհակալութիւն.

Ֆրանսիական ռուս մարդը զգալ գիտէ, բայց արտայայտելու շնորքից զուրկ է: Իսկ եթէ ցանկացաւ անպատճառ արտայայտել իր զգացմունքը, այդ լինում է կոպիտ և տարօրինակ ձևով:

Յիշում եմ, պատանեկական հասակումս Զատկի օրը ընկերոջս հետ միասին դուրս էինք եկել զբօսնելու: Քանի որ եղանակը սքանչելի էր վճռեցինք հեռանալ քաղաքից, անցնել կանաչազարդ դաշտը և զմայլել բնութեան հրաշալիքներով: Երկնքում ամպի նշան չըկար և նախընթաց օրւայ քամուց յետոյ երկնակամարը ներկւել էր թունդ կապուտակ գոյնով: Ծիրանի ու նուշի ծառերը զարդարւել էին քնքոյշ ծաղիկներով, ընկուզնու նախանձը շարժելով: Լեռների շարքերը ալիքաձև կատարներով տարածւել էին ընդարձակ մակերևոյթի վրայ: Ամենաբարձր գագաթները դեռ ևս պահպանել էին ձիւնի կուտակները իրանց ծալքերի ու խորշերի մէջ: Շուրջս բուրում էր անսովոր քնքոյշ հոտ, որ անհասկանալի է, թէ ինչու մարդկանց յիշեցնում է սիրոյ գոյութիւնը:

Դաշտի վրայ բացի մեզանից և արածող դառներից չէին երևում կենդանի էակներ: Վանօի աչքը իմից սուր էր և այս պատճառով նա առաջ նկատեց հեռաւորութեան մէջ շարժւող մի սև կէտ: Սա «զնանք տեսնենք» արտասանելով վազ տւեց այն կողմը: Ես նոյնպէս յետևեցի նրա օրինակին և մի քանի րոպէից յետոյ տեղ հասանք: Մեր աչքի առջև կատարւում էր այսպիսի մի տեսարան. երկու առողջ երիտասարդ բռնել էին կուի, որոնցից մէնը պառկած էր գետնի վրայ և ոտները թափահարում, իսկ միւսը նըստած էր նրա վրայ ու բռնցքի հարւածներ էր թափում գլխին, կրծքին: Ծեծողը հայ կինտօ էր, իսկ ծեծւողը ռուս մի զինւոր: Վերջինը զգալով իրան յաղթւած և ուժասպառ բացել էր ամուր ատամներով լի բերանը ու գլուխը աջ ու ձախ շարժելով, աշխատում էր Դշնամու որևէ տեղից կծել: Երբ նա մեզ նկատեց թևերը տարածեց գետնի վրայ և անօգնական կերպով սկսեց լալ: Թէ ինչ էր կուի պատճառը մեզ համար մնաց անբացատրելի:

Վանօն ինձ նման թուլակազմ չէր. նա լայն թիկունքով առողջակազմ ու վիթխարի ուժի տէր պատանի էր: Մի քանի անգամ ապտակ շուռ քաշելով հանգիստ առաւ, ապա բռնելով կինտօի ձեռքերից քաշ տւեց մի կողմ և մի ծանրակշիռ ապտակ տալով սթափեցրեց նրան: Կինտօն աչքով չափեց Վանօի արտաքինը ու չտալով վերկացաւ փախաւ: Նա լուռ ականատես էր, ինչպէս մի վկայ:

Ընկերս բացի ֆիզիկական յատկութիւնից նաև շատ բարեսիրտ տղայ էր: Ափսոս, նա այժմ մեռած է... Կինտօին փախցնելուց յետոյ զինւորին վերկացրեց, կանգնեցրեց ոտքի: Նրա շորերը թափ տալով ու կարգի բերելուց վերջը մունդիրից պոկւած կոճակները հաւաքեց ու յանձնեց տիրոջը: Գլխարկը նոյնպէս մաքրեց ու ծածկեց նրա չիգահիր գլխին: Զինւորի առանց յոնքերի ճակատի տակ տեղաւորւած մանր աչքերը արցունքով լցւեցին: Դէպի երկինք նայող միամիտ քիթը մի փոքր լայնացաւ, ատամները երևացին ու նրա տափակ դէմքի վրայ փայլեց ժպիտը: Այդ ժպիտը, որ ուղղած

ԶԱՏԿԱԿԱՆ ԱՒԵՂԾԻԱՆ

էր Վանօի աչքերին լի էր երախտագիտական զգացմունքով: Կանգնած էր զինւորը անշարժ ու անձայն, սակայն պարզ նկատւում էր, որ ահա այս րոպէիս փաթաթւելու է իր բարերարի վզին ու համբոյրներով ծածկելու նրա գեղեցիկ այտերը: Զինւորը առանց աչքը հեռացնելու ընկերոջս դէմքից, ձեռքը հանդարտ կոխեց իր գրպանը, հանեց մի կարմիր ձու և ուժգին թափով արձակեց նրա ճակատին:

Գ. Բաշինջաղեան

—

Կեանքի խմբանոյթը

Մայր Հայաստանից բազմատանջ հայը գաղթելով Ամերիկա, կարճ ժամանակամիջոցում ձեռք է բերել անգորրութեան հետ և տնտեսական այնպիսի մի բարօրութիւն, որ այսօր կարողանում է նոյնիսկ նպաստ հասցնել, դեռ երէկ բոլորովին ապահով կովկասահային: Այս դեռ բաւական չէ. նա կամենում է մեր սեւ օրերի յուշարձանն էլ կանգնեցնել, հրատարակելով մի չքեղ ժողովածու Կովկաս անունով. Այս գործը գլուխ բերելու համար մենք ստացանք Ամերիկայից պ. Ալեքսանդր Մելիքից, Տարազի ներկայ №—ում տպւած «Կովկասի» յայտարարութեան հետ մի նամակ, ուր յանձնախմբի կողմից խնդրւում է մեզ, «Զը խնայել, Մեծարգոյ պարոն Նազարեան, ձեր օգնութիւնը՝ Մեզ քաջ յայտնի է, որ դուք չափազանց հմուտ ու տեղեակ էք հայ կեանքին վերաբերեալ գեղարւեստական մեզ հետաքրքրող ճիւղի մէջ և կարող էք անհազին օգուտ տալ մեզ թէ ձեր խորհուրդներով եւ թէ ձեր տրամադրութեան տակ եղած միջոցներով եւն եւն»

Ամբողջ նամակը չենք տպագրում, այս ընդգծած տողերն էլ արձանագրում ենք միայն, որպէսզի ասենք, թէ Ն. Ն. առաջարկներ, աւելի լայն ծրագրով և յարատև հրատարակչական գործի համար մենք քանիցս ստացել ենք եւրոպական մի քանի կենտրոններից: Օտար հրատարակիչներ, ապահովելով մեզ մեր երկրում ստացող նահանգապետներից աւելի ռոճիկով, հրաւիրում են մեզ իրանց երկրներում պատասխանատու գործերի գլուխ անցնել: Բայց մենք Վիլհէլմ Կայսրի հետ համակարծիք ենք՝ Սիրում ենք Հռոմը, Փլօրանսը, Լօնդօնն ու Ամստերդամը, բայց և ձգտում ենք, որ մեր հայրենիքն էլ նմանի նրանց:

Դալով Բօստոնի հայերի հրաւէրին, ուրախութեամբ ընդունում ենք և կուղարկենք նրանց օրերս մեր խորհուրդների հետ նիւթեր ու նկարներ:

Խմբագիր հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

Լոյս տեսաւ
Դ. Աղայեան
Ուսումն մայրենի լեզւի
Բ. տարի, 10 պատկերազարդ ...
մատիտով գունազարդ
Գինը 40 կ. 3—1

Արտիստիկական ընկ. Թատրոն

Լ. Բ. ՆԱԻՈՐՍԿԱՅԻ

Դաստրօլները Պետերբուրգի Նոր թատրոնի արտիստների մասնակցութեամբ սկսւում է վաղւանից, ապրիլի 8-ից հետեւեալ ռեպերտուարով

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 3 ին
Հոգով աղքատներ
Դրամա 5 գործ. հեղ. Ա. Պոտէխին

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 4-ին
Կուչուրգինը գիւղում
Կոմ. 4 գործ. հեղ. իշխան Վ. Վ. Բարեատինսկի

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 5-ին
Կեանքի պարը
Կոմ. 4 գործ. հեղ. իշխան Վ. Վ. Բարեատինսկի

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 6-ին
1) Կոմսուհի Յուլիանէ
Դրամա 2 գործ. Թարգմ. Վենգերովայի
2) Մադմուազել Ֆիֆի
Դրամա 1 գործ. Թարգմ. կոմս, Բոդիշևսկայի
3) Բիւրոկրատական ուղիով
Քաղաքական զաւեշտ 1 գործ հղղ, Դիմով

ՈՒՐԲԱԹ, 7-ին
1) Ա՜, Պեպան պարում է
Պիէս 4 գործ. հեղ. Զուդերման
2) Դոդը
Պիէս 1 գործ. հեղ. Մերրօ.

ՇԱԲԱԹ, 8 ին
Կռիւ երջանկութեան համար
Պիէս 5 գործ. հեղ. Սոֆիա Կովալևսկայի

ԿԻՐԱԿԻ, 9 ին
Զազա
Պիէս 5 գործ. Թարգմ. իշխ. Վ. Վ. Բարեատինսկի

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10-ին
Մենամարտութիւն
Բեմական պատկերացում ըստ վէպի Կուպրինի

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 11-ին
Կուչուրգինը գիւղում
Կոմ. 4 գործ. հեղ. իշխան Վ. Վ, Բարեատինսկի

ՀԻՆԳՇԱԲԹԻ 13-ին
Մենամարտութիւն
Բեմական պատկերացում ըստ վէպի Կուպրինի

ՈՒՐԲԱԹ 14-ին
Կին
Ողբերգ. 5 գործ. հեղ. Վիդեկենտի

ՇԱԲԱԹ, 15-ին
Լ. Բ. Նաւորսկայի բենեֆիսը
Կին ծաղիկների մէջ
Պիէս 4 գործ. հեղ, Զուդերման

ԿԻՐԱԿԻ, 16-ին
Վերջին ներկայացում
Կեանքի զաւակը
Դրամա 5 գործ. հեղ. Ա. Մարկով

Տոմսակները վաճառւում են թատրոնի կասսում. 1—1



Առաջին մասնաւոր հիւանդանոց
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
հիմնւած 1880 թ.
(Կուկիա, Վարանցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ հ.:
Ն. Մ. Չիկովանի—9 և կէս—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ. :
Մ. Ի. Աւեսխեան—11—12 ժ. մարթու, վեներակ. և վիրաբուժ. :
Զ. Ի. Բարանոսեանց —10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Ի. Դգեյիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ. :
Ա. Դ. Նարապետեանց—1—1 և կէս ժ. ներքին և երեխ. հ.
Իրն ըժիշկ Ցչերբինինա —1 և կէս—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ. :
Դ. Ց. Դուրգէնով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. փուդինով—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Դ. Արևեանց—6—7 ժ. ներքին հիւանդութեան:
Բ. Ա. Նաւասարդեան—7—7 և կէս ժ.
Վճարը 50 կ., չքաւորները ձրի: Համախորհրդի—կոնսիլիումի և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան.

«ԿՈՎԿԱՍ»

ՁԵՌՆԱՐԿԵԼՈՎ Բօստոնում գեղարւեստական մի հաւաքածու հրատարակութեան «Կովկաս» վերանագրով, բազմաթիւ չքեղ, գունաւոր պատկերներով՝ խնդրում ենք ձեզ չը զլանալ ձեր աջակցութիւնը որ և է ձեզ մատչելի միջոցներով:

Մեր հաւաքածուի ընդհանուր ծրագիրն ընդգրկելու է.

1. Ռանսաստեղծութիւններ:
2. Վէպիկներ, պատկերներ նորավէպեր:
3. Հայկական եւրգը կովկասում և Տաճկահայաստանում.
4. կովկասեան կոտորածներ.

Գեղարւեստական մասին մէջ մտնելու են պատկերներ և տեսարաններ, հայկական և դըլխաւորապէս կովկասեան կեանքից եւ. եւ:

Հարկաւոր ենք համարում յայտնել, որ հաւաքածուի ողջ արդիւնքը յատկացւելու է կովկասեան աղէտներից վնասւած հայ ազգաբնակութեան:

Աշխատակցելու են մի քանի ականաւոր հայասէր ամերիկացիներ:

Ի դիմաց Յանձնախմբի՝

Ալեքս. Մելիք

Բօստօն 1—3

2—3

Լոյս տեսաւ
Դիւյսանցի
Մէկս վախ չունեմ
գինը 12 կ.
Դուռմարով դնողներին սովորական զեղչ:
Արդիւնքը ճեղինակը յատկացնելու է հայ արկածեալների օգտին: 3—1

Տպարանոց կանանց «ԶԻՆԱԴ» տպարան-դպրոցի.

Արագատիպ «ՀԵՐՄԷՍ» ընկ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահման 10 ր.) Աղբիւր - Տարազ, պրէմիաներով 10 ր. (արտասահման 18 ր.) Տարազ ամիսը 60 կ. առանձին №-ը Թիֆլիսում 10 կ. դուրսը 15 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ. վերջին երես 25 կ. մանրատառ (պըտիտ) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չտպուելիքը (երեքթերթից պակաս) չէ վերադարձնում:

Առանձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի և ուրբաթ առաւ. ժ. 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10¼ ժ. մինչև 2¼-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ
Rédaction du Journal TARAZ Caucase Tiflis

գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 12 Կիրակի, ապրիլի 16 — Տասնեւեօթներորդ տարի 1906

Շարունակւում է 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:
Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV

և

ՏԱՐԱԶ

Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացմունքների թարգմանը:
Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել:

XVII պատկերազարդ շաբաթաթերթ XVII

ԲՌՆԱԲԱՐՈՒԱԾ ԱՐՑԱԽԸ

Ռուս, քրիստոնեայ տէրութեան պաշտօնեաները մարտի 14-ից սկսած մի քանի օր շարունակ կատարել են Արցախի Վարանդայ գաւառում ոճիրներ, որոնց նմանը բարբարոսների օրերում չեն տեսել հայերը: *Շեխեր, Ջանախչի, Աւետարանոց, Սարգիսաշէն Թաղավարդ, Թաղլար, Տող, Տումի, Աղոխ, Սոս, Հղորտի, Գիշէ եւ ղուզէ Ճարտար, Խնածինակ* հայ գիւղերը, մեր հայրենի նախական սուրբ վայրերը պղծել է ռուս պաշտօնեան, ռուս կոզակը, ռուս զինուորը:

Տեսէք ինչ է նկարագրում փոխարքայի քննիչ յանձնաժողովի բժիշկ պ. Պահլաւունին՝

Չկայ մի գիւղ, որտեղ այրած չլինեն ամենալաւ տները, իրենց ամբողջ գոյքով: Տող գիւղում այրած է Մուսայէլեանի երկյարկանի տունն իր ամբողջ կարգ ու սարքով, հացի ամբարներով և մանուֆակտուրային ապրանքների պահեստով: Ամենուրէք կազակներին կատարեալ ազատութիւն էր տրւում. մի քանի գիւղերում նրանք օրերի ընթացքում կողոպտում էին, ծեծում, տանջում, բռնաբարում կանանց և աղջիկներին, խլելով երբեմն նրանց հայրերի, եղբայրների և ամուսինների ձեռքերից, բռնելով նրանց լեռներում, այգիներում և անտառներում. հազիւ էր պատահում, որ մէկն ազատ էր ծեծից, տանջանքից և կողոպտելուց. իսկ կանանցից ազատւում էին այդ անպատուութիւնից միայն նրանք, որոնք փախել ծածկւել էին տների գաղտնի մասերում: Սոս գիւղում ծեծից մեռաւ Յովհաննէս Հայրապետեան, որի եօթանասնամեայ մայրը բռնաբարուած է կազակներից: Ազոխ գիւղում կազակները պահանջել են Խոսրով Կարապետեանից նրա կնոջը, բայց, մերժում ստանալով, վայր են գցել նրան և պղծել բերանը: Ազոխ գիւղում բռնաբարուած է մի կին իր 9 և 3 տարեկան երեխաների աչքի առաջ. յետոյ ստիպել են նրան համբուրել իրենց՝ կազակների սեռական անդամները: Սոս գիւղում բռնաբարուած է մի 12 տարեկան հիւանդ աղջիկ իր ծերունի պապի աչքի առաջ, որին այնքան ծեծել են, որ ստամոքսի մէջ ներքին արիւնահոսութիւն է առաջացել: Աղոխում մի փոքրիկ աղջկայ մօտ վարակման նշաններ են երեւում: Այն, ինչ որ կազակները չեն կարողացել հետները տանել, ոչնչացրել են. կողոպտած իրերը բարձել են ձիերին և տանելով ռուս գաղթականների Սկոբելևս գիւղը, մասամբ վաճառել են: Ճանապարհին տուժել են գլխաւորապէս այն գիւղերը, որոնք ենթարկւել էին Թուրքերի յարձակմանը: Ճարտար գիւղում կազակի սրով վիրաւորուած է քահանան, իսկ միւս քահանայից խլել են սրբութեան սկիհը: Կան մերձիմահ ծեծուածներ, անբուժելի հաշմանդամներ, վաղաժամ ծննդաբերութիւններ, վիժման դէպքեր լեռներում: Կանայք դարձել են հիստերիկ: Սարսափն այնքան ուժեղ է, որ յանձնաժողովը գիւղերին մօտենալիս՝ կանայք թէև զգուշացրած էին հանգիստ լինել, այնուամենայնիւ փախչում էին լեռներն ու անտառները: Կազակները կատարելապէս ամայացրել են յիշեալ գիւղերը զինուորական և վարչական իշխանութիւնների աչքի առաջ: Զօրամասը գործել է գնդապետ Վեվերնի, Բիբիլեկին և Հաջիև սպաների, գաւառապետ Ֆըրէյլիխի, հաշտարար միջնորդ Երմոլայեւի, պրիստաւ Ֆիտինգի ղեկավարութեամբ: Շատերի ցուցմունքով Երմոլայեւը քաջալերելիս է եղել կազակներին, շատ տների վրայ ինքն է նաւթ ածել և այրել:

ՎՃՏԱՀԱՐ ՎԱՐԱՆԴԱՅԻՆ.
Թաթարները հայացած Արցախը մոխրի կոյտեր դարձրին, իսկ քրիստոնեայ ռուսը բռնաբարեց մեր սրբութիւն սրբոցը, պղծեց մեր անաղարտ օջախը:

Այդ բռնութիւնները հասցրել են հայերին կատարեալ յուսահատութեան. վերաւի իրենց կողմից առիթ չի եղել, և զօրքերի գալու լուրը նրանք ընդունել են ուրախութեամբ, կարծելով, որ նրանց միսիան խաղաղ է. ամեն տեղ հայերը պատրաստել էին ճաշ, բնակարան և ձիերի համար ուտելիք. հասարակութիւնը դուրս էր գալիս աղ ու հացով, իսկ հոգեւորականութիւնը խաչ ու աւետարանով, բայց ամեն տեղ հայերին ընդունել են կոպիտ կերպով, անպատուել ու կողոպտել են. իշխանութիւնները հրաժարւում էին հայերի ճաշից և ճաշում էին Մէլիք-Ասլանով բէգի մօտ, որ յայտնի է Մինքենդի կոտորածից: Զօրախումբը Թուրքերին չէր նեղացնում: Բոլոր տուժած գիւղերից մի քանի հազար տուգանք է վերցրած և զէնքը զրաւած: Բնակչութիւնը պատրաստ էր կատարել նրանց պահանջները, բայց դրանով չխուսափեց ջարդ թալանից, որի հոգին համարում է գլխաւորապէս Երմոլաեւը: Ականատեսների ասելով, Երմոլաեւը Մուսայէլեանի տունը յօդս է ցնդեցրել Մելիք-Ասլանովի տնից բերած վառօդով: Ծեծուածների և բռնաբարուածների թիւն այնքան մեծ է. որ Յակոբեան և Պահլաւունի բժիշկները հազիւ են կարողանում տալ տուժածներին վկայականներ:

—

Փոխարքայի օգնական գեներալ Մալաման գնաց Ղարաբաղ տեղն ու տեղը ստուգելու և կարգադրելու համբերութիւնը հատած բազմատանջ հայի վիճակը:

—

Եթէ փոխարքան կամենում է, որ Կովկասը ձեռից չը գնայ, պէտք է անյապաղ պատառ-պատառ անէ Ալիխանից սկսած մինչև վերջին այն կոզակը, որ գտնւել են Վարանդայում:

Ասէ—կօսլէները նսեմացնում են փոխարքայի անունն ու գիրքը: Մենք ինչպէս հաւատանք որ զինուորական բանակը փոխարքայից անկախ հրահանգներ է տալիս զինուորական նահանգապետներին: Երբ պարտաճանաչութիւնն ու կարգապահութիւնը զօրքի մէջ այդ աստիճան ափ աչկարայ խախտուած ընդունի, էլ ինչի և ում վրայ պիտի յենւի իշխանութիւնը: Ինչու իշխանութիւնը յեղափոխականներ ու անիշխանականներ է դարձնում խաղաղ հայ գիւղացուն և նրան զինում ռուս պետութեան դէմ:

Մենք աղերսում ենք փոխարքային, որ նա վերջ դնի մեր երկրում հոսող արեան հեղեղները և ցոյց տայ ազգաբնակչութեանը, որ ինքն է իսկապէս Թագաւոր Կայսեր լիազօրը Կովկասում....

Զայրացած Վեսուվ եւ գեղաչքնաղ Նապոլ

ՍԵՒ ԳԱՐՈՒՆ

Գեղածիծաղ է Նապոլին, երկինքը մեր երկրի նման ջինջ, հսկայ Վեզուվի ստորոտում, Նէապոլիտան ծովի ծոցում, Հռոմից հինգ ժամուայ ճանապարհ։ Իւանք խտալացիք Նապոլու մասին ասում են՝ Տեսնել Նապոլը եւ մեռնել։ Իսկ մենք կասէինք՝ յաւիտեան ապրել այս դրախտում։

Սակայն այդ երկնային դրախտն այսօր հեծում է բնութեան տարրերքի հարուածներից։ Մարտի վերջերում այնտեղ ցնցուեց երկինքը և Վէզուվի հրաբուխը բռնկւեց շատ ուժգին։ Պոմպէ և Հերկուլանումի կործանումն են յիշեցնում հրաբխային ժայթքումի՝ լաւայի, մոխրի, աւազի, աղի գոյնզգոյն շատրուանները։ Աւերւած են մի շարք շքնաղ գիւղաքաղաքներ, աւաններ, փլատակների տակ են մնացել հարիւրաւոր հոգիներ։ Երբեմն ձւի մեծութեամբ քարեր աւազի հետ անձրեւի նման թափւում էին Նապոլու և նրա շուրջը շատ տասնեակ մղոն հեռաւորութեան վրայ։ Թագաւորն ու թագուհին մինստրների հետ աւտոմաբիլներով այցելել են արհաւիրքի վայրերը և ամեն տեղից օգնութիւն է ուղարկւում աղէտեալներին, իսկ կաթոլիկ կղերը խաչ ու խաչվառով, բուրվառով թափօրներ է անում և Աստուծոյ օգնութիւնը հայցում։

Վեսուվի բռնկման արձագանք տըւաւ Կալիֆօրնիայում Ս. Ֆրանցիսկօ բազմամարդ և անուանի, հարուստ քաղաքը։ Երկրաշարժը շարունակւեց 51 րօպէ և հոյակապ քաղաքի աչքի ընկնող մասը կործանեց։ Ելեքտրական, գազային լարերն ու խողովակները կտրւեցին, միմեանց խառնւեցին և սկսւեց հրդեհը. Ջրամբարները պատռւեցին։ Հսկայական շէնքեր՝ համալսարան, պալատ, թատրոն, բօրսա և աւելի քան 5000 միլիոնարի տներ այրւեցին, մոխիր դարձան։ Զոհերի թիւը հազարների է հասնում, կենդանի թաղւածները դեռ համրւած չեն, բաց օդի տակ են մնացել հարիւր հազար հոգուց շատ աւելի, վընասները միլիարդների են հասնում։

Եւրոպան, խայտառակ Եւրոպան աճապարեց իր նպաստներն առաջարկելու աղէտեալներին, բայց կենսունակ Ամերիկան հրաժարւեց եւրոպացուց մի գրօշ անգամ ընդունելու։ Ապահովագրական 80 ամերիկեան ընկերութիւններ վճռեցին լիուլի բաւարարութիւն տալ իրանց կլիենտներին. երկրի բոլոր դասակարգերը բացին իրանց քսակները և կրակը դեռ չը հանգցրած, այժմս ծըրագրներ են կազմում քաղաքն աւելի հոյակապ վերականգնելու։ Ս. Ֆրանցիսկօ կայ և հայ գաղթականութիւն, ունին իրենց լրագիրը, ընթերցարանը ևն։

Երբ աննման Շուշին աւերեցին թաթարները, երդւեալ բարեգործներ գըլուխ-նէ-դուռն ընկան գրօշներ և հին ցնցոտիներ ժողովելու. այն ժամանակ էլ մենք բողոքեցինք անվեհեր Զուշուն այդպէս նսեմացնելու համար։ Ի հարկ է մեզ ականջ չը դրին, շարունակեցին մի կողմից մուրալ, միւս կողմից մուրածը շռայլել տալ ոչ 'ի նպաստ իսկական աղէտեալների։ Ղարաբաղցիք դէթ այժմս իրանց վիրաւոր, վշտաբեկ ծննդավայրը յիշէին և կատարէին իրանց պարտքը։ Մի միլիօն րուբլին կը վերածնէ Ղարաբաղի կենտրոն և կարիչ հայութեան սիրտ Շուշին. միթէ այդքանն էլ դէթ փոխարինաբար կը խնայեն նրա ղաղթական զաւակները։

Մեր բանաբաւած օջաղների անէձքը, հարս ու կոյսերի մրմունջը, մանուկների լացն ու կոծը, աւերակներից մխող ծուխը զարթեցնի հայի վրիժառութեան են կանչում և սփոփանքի ըսպասում։

Մամուլի շուրջը

Մէկը միւսի ետեւից շարունակւում են լոյս տեսնել հայ նորանոր լրագիրներ և շաբաթաթերթեր։ Պ. Բ. Իշխանեանի «Սեանի» քաղաքական հասար. անտես. ռօցիալ դեմօկրատ. օրգանը հանդէս գալուց երեւցաւ և պ. Ա. Երզնկեանի «Կայծ» օրաթերթը, որ առայժմ լոյս է տեսնում շաբաթը երկու անգամ։ Այս երկու հրատարակութիւնները պատկանելով շատ որոշ կուսակցութեան և ունենալով ընդգծւած ուղղութիւն, անշուշտ մեծ ծառայութիւն ունին մատուցանելու մեր բանւորական, հալալ վաստակով աշխատաւոր հայ դասակարգին։ Սրանք պիտի կրթեն և դաստիարակեն աշխատաւորի գիտակցութիւնը, ճանաչացնեն նրան իր իրաւունքն ու պարտականութիւնը։ Ուտնակոխ պիտի անեն ճայ քրիստոնեայ մարդուն և նրանից պիտի ստեղծագործեն ռոսկ մարդ-քաղաքացի։ Լայն և ամենամարդասէր ծրագիր, սակայն դեռ շատ վաղաժամ հայի, վրացու և սրանց նման փոքրիկ նւաղ ազգերի համար։ Թող նախ և առաջ անգլիացին, գերմանացին, ֆրանսիացին լինի մարդ-քաղաքացի և ապա հայը, վրացին. Զը լինի թէ կործանենք մեր բազմադարեան աստւածները և չը կարողանանք նրանց փոխարինել աւելի կատարելագործւածներով։

Մենք այնքան ենք զզւում նեղ, թթու ազգասիրական տենչանքներ ունեցողներից, որքան և զայրանում ենք, երբ մեր նորաբողբոջ երիտասարդութիւնը, մեր այդ դդւանքն ու փայփայանքը անտես են անում հանրական պատմութիւնը, անխուսափելի հանգամանքները և առանց այն էլ շատ նւաղ իրանց արիւնակիցներին աւետեաց երկիրը ուղեկցել են ձգտում անդունդների վրայով, ուր կառուցւած չեն դեռ կամուրջներ և չըկան օդապարիկներ։

Անդունդները դեռ լիքը են վիշապներով և ամեն տեսակ թունաւոր սողուններով. մաքրեցէք նախ հայրենի ապականւած մթնոլորտը գիշատիչներից, թունաւոր սողուններից։ Արեւի ճաճանչները ծածկող, կատարները երկինք հասած ծառերը կտորեցէք, թող համայն ժողովրդի վրայ հաւասար սփռէ կենսունակ լոյսը և ապա խրախոյսի՞ն առանց լապտերի աղօտ լոյսի և ուրիշի ուղեկցութեան՝ ինքն իր ուղին կընտրի և կընթանայ։

—

Աղէտեալներին օգնութիւն հասցնող նպաստամատոյց յանձնաժողովների անփոյթ, անարդար վերաբերմունքները շարունակ շեշտւում են օրագրներում։ Այժմս էլ գանձակեցիք են շըրշում Թիֆլիսի հայուհիների երեսին նրանց Գանձակ ուղարկած մի վագոն աղբը։ Բանից դուրս է գալիս, որ Թիֆլիսում ակիսների նախաձեռնութեամբ գանձակեցիների օգտին երեկոյթից գոյացած գումարով գնած ալիւրը «միանգամայն ղառն, լեղի, որդնած եւ անգործածելի ալիւր է» ընդգծած և չակերտների մէջ խօսքերը արտագրում ենք Մշակ № 75-ից։

Անցեալ անգամ էլ Ցառաջից էինք բազել Շուշու նպաստամատոյց յանձնաժողովի դէմ բողոք։ Նման բողոք և ամեն կողմից։ Արմատը մեր ժամանակակից անբարոյականացնող բարեգործութիւնն է իր սիրողների սնափառական, յաճախ շահասիրական, ֆլիրտային ճիղառութիւններով։ Ե՞րբ վերջապէս մարդկային գիտակցութիւնը պէտք է սթափւի որպէսզի արիւն-արտասուքն իր հաճոյքներին և կրքերին յագուրդ տալուց ձեռք վերցնի։

ՌՈՒՍԱՑ ՎԱՆՔԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ալէքսանդրօ-Նեւսկի և ուրիշ վանքերի գանձարանական մասին լաւ գիտակ մարդու խօսքերից Պետ. Գազէթի աշխատակիցը այսպիսի թւեր է առաջ բերում վանքական հարստութիւնների մասին.

Ալեկսանդրօ-Նեւսկի վանքի եկեղեցական եկամուտները տարեկան հասնում են 200,000 մանէթի։

Միենոյն վանքի ուրիշ եկամուտներ եկեղեցիներ շինելու, աղքատների վիրաւորների համար իւրաքանչիւր տարի 750,000 րուբլուց անցնում է։

Անշարժ կայքերից Ալէքսանդրօ Նեւսկի վանքը տարեկան 500, 000 ր. աւելի է ստանում։

Իւրաքանչիւր տարւայ եկամուտի գումարը մէկ և կէս միլիօն է։

Այդ գումարից վանահայրը, որ տարեկան 18000 ր. ռոճիկ է ստանում, ամեն տարի 65,000 րուբլի եկամուտ է շահում։

Տնտեսն ստանում է 20, 000 մանէթ

Վանքն ունի 70 կրօնաւոր։

Նրանցից իւրաքանչիւրը ընդունւելիս որոշ գումար է ներմուծում վանքի դրամագլխի մէջ, այն է—500 մանէթ, դպրոցական դասընթացն աւարտողների

երկրաշարժի սարսափը և ժողովրդի ինքնապաշտպանութիւնը ամերիկայում

այդ ներմածութիւնը նւազում է մինչև 300 մ., իսկ դասընթացն աւարտելուց յետոյ կուսակրօնութիւն ընդունող ճեմարանականներին մինչև 150 մ.

Այդ եօթանասուն կրօնաւորներին իւրաքանչիւր տարի Իկամտից բաշխւում է 250,000 ր.:

Իւրաքանչիւր տարւայ եկամտի մնացած գումարը մտնում է Ալեկսանդրօ-Նևսկի վանքի դրամագլխի մէջ:

Այդ դրամագլուխը հասնում է 3,000,000 մանէթ ոսկու, չըհաշւելով պետական տոկոսաբեր թղթերի պարունակածը:

Եկամտային բաշխման համեմատ Ալեկսանդրօ-Նևսկի վանքի կանոններին համապատասխանում են Մոսկւայի գաւառական յետև գտնւող Նովօ—Դեւիչի վանքի կանոններին:

Կիեւօպեչօրսկի վանքի դրամագլուխը մէկ ու կէս միլեարդ են հաշւում:

Ռուսաստանում ամենահարուստ վանքը Տրօիցե—Սերգիեւսկի վանքն է՝ Մոսկւայի մօտ:

Նրա դրամագլուխը երեք միլեարդ մանէթ է և եկամուտներն ահագին են:

—

Լրագիրները օրերս տպագրել էին թէ Վիտտէի բնակարանում Պետերբուրգի Մոսկւայի մետրօպօլիտների խորհրդակցութիւնը որոշել էր վանքապատկան վերոյիշեալ գումարներից 200միլիօն րուբլի առանց տոկոսի պարտք տալ պետական գանձարանին,Այժմս Ռուս. Գօսուդ. լրագիրը այս լուրը համարում է անհիմն:

Աւելորդ չենք համարում ասել, որ Ռուսաց վանքերի այս անհուն հարստութիւնն էլ հերքեց իր ժամանակին, անշուշտ մի կերպ խոյս տալու, որ պետական գանձարանի ճիրանները չը բռնեն:

Սակայն մթնոլորտում, ոչ Ռուսի, այլ, արտասահմանի, հոտ է փչում, որ Ռուս վանքական այդ հարստութիւնները, եթէ ոչ դրաւ գոնէ մի տեսակ պատւաւոր պատանտ են նոր միթխարի փոխառութեան, որի չարունակութիւնը դեռ լինելու է:

Խմբագիր հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

Առաջին մասնաւոր հիւանդանոց
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
հիմնւած 1880 թ.
(Կուկիա, Վարանցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս)և միզային հ.:
Ն. Մ. Չիկովանի—9 և կէս—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.:
Մ. Գ. Աւետիսեան—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժ. հ.:
Զ. Ի. Ռաքանաեանց —10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Ի. Դգեպիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.:
Ա. Գ. Նարապետեանց—1—1 և կէս ժ. ներքին և երեխ. հ.
Կին բժիշկ Ծչերբինինա —1 և կէս—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:
Գ. Ց. Գուրգէնով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. Փուղինով—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Դ. Արեանց—6—7 ժ. ներքին հիւանդութեան:
Բ. Ա. Նաւասարդեան—7—7 և կէս ժ.
Վճարը 50 կ., չքաւորները ձրի: Համախորհրդի—կոնսիլիումի և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան.

«Կ Ո Վ Կ Ա Ս»

ԶԵՌՆԱՐԿԵԼՈՎ Բօստոնում գեղարւեստական մի հաւաքածու հրատարակութեան «Կովկաս» վերանուգրով, բազմաթիւ չքեղ, գունաւոր պատկերներով՝ խնդրում ենք ձեզ չը զլանալ ձեր աջակցութիւնը որ և է ձեզ մատչելի միջոցներով:

Մեր հաւաքածուի ընդհանուր ծրագիրն ընդգրկելու է.

1. Ռանկաստիղծութիւններ:
2. Վէպիկներ, պատկերներ Նորավէպեր:
3. Հայկական հարցը կովկասում և Տաճկահայաստանում.
4. կովկասեան կոտորածներ Գեղարւեստական մասին.

մէջ մտնելու են պատկերներ և տեսարաններ, հայկական և գըլխաւորապէս կովկասեան կեանքից են. են:

Հարկաւոր ենք համարում յայտնել, որ հաւաքածուի ողջ արդիւնքը յատկացւելու է կովկասեան աղէտներից վնասւած հայ ազգաբնակութեան:

Աշխատակցելու են մի քանի ականաւոր հայասէր ամերկացիներ:

Ի դիմաց Յանձնախմբի՝
Ալեքս. Մելիք
Բօստոն 2—3

Հայկական տների գեղեցիկ և անհրաժեշտ զարդ Աղբիւր-Տարազի հրատարակած հետևեալ շքեղ պատկերները հրաւիրում են մեր ընթերցողները տարածել իրենց շրջաններում՝

1. Յիսուս Խաչակիր. . . . . . 3 ր. — կ.
3. Ս. Սահակ Պարթև . . . . 1 » 50 »
4. Ս. Մեսրոբ Թարգմանիչ. . . 1 » 50 »
5. Ս. Էջմիածին. . . . . . 1 » 50 »
6. Ս. Ղևոնդ ու Վարդանանք. 1 » 50 »
7. Հայրիկն Հայոց Ծակա յգում 1 » 50 »

Առանց դրամի պատւէրները թողնում են անկատար:

ՎԱՃԱՌՒՈՒՄ ԵՆ
Թիֆլիզի գրախանութներում
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔՍԱԴԱՄԵԱՆԻ
փոխադրած՝
Լաւ թղթի վրայ գեղեցիկ արտաքինով, մաքուր տպագրութեամբ խոշոր տառերով և՝ ըստ մամուլի վկայութեան էլ «բովանդակութիւնը հետաքրքիր, նկարագրութիւնները վերին աստիճանի բնական ու կենդանի, լեզուն պարզ, կոկ, սահուն, գրաւիչ՝ ախորժալուր և բուն հայ լեզուի համ ու հոտով»
Մանկական պատկերազարդ
Հետևեալ գրքոյկները.

ՓՈՔՐԻԿ ՅՈԼԱԿՆՈՒ
ԽԼԸՇԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ
Գինը 55 կոպէկ:
—
ՆԱՊԱՍՏԱԿ ԽԷԶԱՆԻ
ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ
Կամ
ԻՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ
Գինը 40 կոպէկ:
—
ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ
գինը 40 կոպէկ:
—
Եւ թարգմնած՝
ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ
3 արար. պիէսը:
Գինը 50 կոպ:
3—1



3—3

Լոյս տեսաւ
Քամալեանց Ս.
Սասունցի Յովհան
պատմական վէպ
Գինը 30 կ
Դիմել հեղինակին Թիֆլիս
Նեսս դպրոց.

Լոյս տեսաւ
Գիւլասանցի
Մկա վախ չունեմ
գինը 12 կ.
Գումարով գնողներին սովորական զեղչ:
Արդիւնքը հեղինակը յատկացնելու է հայ արկածեալների օգտին: 3—2

Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ
պատկերասրահն ու արհեստանոցը բաց է այցելուների համար կիրակի և տօն օրերը առաւ. ժ. 11-ից մինչև 1 ժ.
Մուտքը ձրի է
Իգմայլովսկայա փ. Վերա, սեպհական տուն № 10

Մարմնակրթական Գործիքների

ՅԱՏՈՒԿ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

բանդաժիստ
Յ Ս. ՏԷՐ-ՍԱՍԱՏՈՒՐԵԱՆ
Թիֆլիս. Միխայիլ. պրոսպ. 21.

այստեղ գնում են



եւ հին դրամներ
0—2

Մամիկոնեան առիւծը

ԵՐԳ ԶՈՐՈՐԴ
Ամրոցում
Ա.

Բարո՜վ եկար, բարի Յովհան,
Անուշ երգիչ հայրենի,
Երախանը ողջունում է
Քո գալուստը յանկալի:

Բարո՜վ եկար, ղողթան երգիչ,
Հայրենիքի խորքերից,
Բարո՜վ եկար, ծերուկ գուսան,
Հայոց աւեր աշխարհից

Մեր աշխարհի սուգն ես լալիս
Անուշ ձայնով միղմագին,
Թող քո ցաւոտ հառաչանքը
Միշտ բորբոքէ մեր հոգին:

Բայց դիւցազնին զուր ես փնտրում
Այս անառիկ ամրոցում,
Նա էլ գնաց զէնքը ձեռին
Ուր հայրենիքն էր կանչում:

Միթէ անգործ տանը նստած
Ընփոյթ աչքով կը դիտէր
Թէ բռնութեան անարգ շղթան,
Ինչպէս պէտք է կապկապէր:

Ո՜ նա գիտէր որչափ ծանր է
Լուծը անարգ օտարի,
Նրա աչքից քունն է փախցրել
Վիճակն հայոց աշխարհի:

Բայց դու, գուսան, գնա նորից,
Անցիր Արտազ ու Դւին

Եւ ժայռերի ահեղ գրկում
Գտիր հայոց քաջերին:

Քո բամբիռի անուշ ձայնով
Ընկերացիր դու նոցա,
Գովէ անվախ, լոյս ներշնչէ,
Երգիր փառքը մեր հարանց:

Եւ այն վայրում վկայ դարձած
Հայ քաջերի գործերին,
Բիւր երգերով, նրանց փառքը
Դու կաւանդես դարերին:

Այս խօսքերով գիմաւորեց
Չւեկ տիկինը նազելի,
Երբ որ լսեց ամրոց գալը
Հայոց ծերուկ գուսանի:

Ապա յայտնեց, որ իր վաշտով
Գնացել էր Թուղարս բերդ,
Որ տեսակցի Արծրունեանց
Քաջ ու անվախ տիկնանց հետ:

Ուր ժողոված ամուր բերդում
Կանայքն հայոց փափկասուն,
Որոշել են խորհուրդ կազմել
Մամիկոնեանց ամրոցում:

Եւ ուր նրանք պիտ որոշեն՝
Ինչպէս օգնել խեղճ ազգին,
Որ արնաքամ մեռնել ընկած
Հառաչում է ցաւագին:

Երբ որ լսեց այս ամենը
Հայ գուսանը քաղցրաձայն,
Անուշ գոգով սիրտը լցւեց
Մտքերն իրար խառնւեցան:

Տիկինն ապա հրամայեց
Նաժիշտներին գեղանի
Գցել փափուկ, տաք անկողին,
Լւալ ոտքերը գուսանի:

Եւ թողնելով երգչին ծերուկ
Խոհերի հետ առանձին
Զգնաց տիկինն ու կուսանքը
Մեծ ամրոցում ցրւեցին:

Բ

Դեռ չէր հանգչել հայոց բերդում
Յոգնած երգիչն ալեհեր,
Երբ ամրոցի ամեն կողմից
Ժողովւեցան զինւորներ:

Կարօտագին համբոյրներով
Ողջունեցին գուսանին
Պատմել տնցած հարանց փառքը
Երգեր երգել խանդագին:

Եւ զգացւած ծերուկն ուրախ
Խփեց բամբռի լարերին,
Գովեց բերդը Երխանի,
Գովեց հայոց քաջերին:

Ժայռի գլխին բարձրանում է
Հայոց բերդը Երխան,
Ծովի ափին ահեղ, հպարտ
Բերդն է կանգնած անսասան:

Հողմ ու քամի զուր են շաչում
Խըփում ամուր պարսպին,
Ջուր է փրփրում ահեղ ծովը
Ու հառաչում սաստկագին:

(կը շարունակւի)
Պետ. Մսճռւեանց.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 ր. (արտասահմանի 5 ր.) **Տարազ**—6 ր. (արտասահման 10 ր.) **Աղբիւր-Տարազ**, պրեմեաներով 10 ր. (արտա...) ... ամիսը 60 կ. առանձին №-ը Թիֆլիսում 10 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունւում են ամեն լեզւով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ. վերջին երես 25 կ. մանրատառ (պրթիտ) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնւող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ՏԱՐԱԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յօդւածները կրճատւում ... անհրաժեշտութեան և չտպւելիքը (նոթերթերից պա-...) ...

Անձնական տեսակցութեան համար խմբագրի հետ երեքշաբթի և ուրբաթ առաւ. ժ. 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍ, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10¼ ժ. մինչև 2¼-ը կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ Rédaction du Journal TARAZ Caucse Tiflis

գեղարւեստական, գրական, գիտական, հասարակական, հնադատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 13 Կիրակի, մայիսի 14 — Տասնևեօթերորդ տարի 1906

Շարունակւում է 1906 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

XXIV մանկական պատկերազարդ ամսագիր XXIV

և

ՏԱՐԱԶ

Տարազը Աղբիւրի հասունացած սաների լնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առողջ նութեամբ օժտւած, գիտութեան անշէջ լոյսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքւած հայ անդամներ սնուցանել:

XVII պատկերազարդ շաբաթաթերթ XVII

ԱԿԱՄԱՅ ԶՐՈՅՑ

Տարազի բաժանորդների թիւն այս տարի հասել է 100-ի և հասել է 1893 թւականից, այսինքն այն օրից, երբ Միրզոյեան և Լիսիցեան Աղբիւր եւ Տարազ հրատարակութեան պայմանով եօթ տարի ժամանակաւ, որոշ պայմանագրութիւններով, վերցրել էին մեր այս թերթերը հրատարակելու և տարին իսկ չլրացրած, հանդէսները երեսի վրայ գցեցին ու հեռացան,—ահա հէնց այդ ժամանակից սկսած Աղբիւրը և Տարազը չկարողացան նախկին տարիների նման ունենալ բաժանորդներ: 1893 թ. մինչև ներկայ տարին երբեք մենք 350 վճարող բաժանորդ անգամ չենք ունեցել: Լաւ լսեցէք, 350 վճարող բաժանորդ տասնհինգ ձիգ տարիներ չարունակ: Այսուհանդերձ մենք չենք փնտռում պատճառները և ոչ էլ արանջում հայից, որ նա բաժանորդ չէ գրւել մեր թերթերին: Այստեղ կարելի է երկու կաւած թէ հրատարակութիւնների մեր չարունակելը, թէ հայի բաժանորդ չը գրւելը: Մենք չը կամեցանք չարաչարվել և մեր արտօնութիւնը՝ Աղբիւրի եւ Տարազի իրաւունքն ուրիշի վաճառելը: Ամենքին յայտնի է (հայ գրական բոլոր շրջաններին) որ մենք 100,000 րուբլու առաջարկը մեր այդ իրաւունքը չը կամեցանք զիջանել, մի գին, որ աւելի քան չափազանց էր և հուսատր նրան, մենք չենք ծախում, պարզ պատասխան, թէ ձեռք վերցրէք մեզանից: Աղբիւրին եւ Տարազին տիրանալ են կամեցել թէ սակ փողատէրեր և թէ մասամբ գրագէտներ: Մինչև 60,000 ր. առաջարկել են մեզ այդ թերթերին, մենք չենք վաճառել: Պատճառը՝ որ մեր համոզմունքով անկարելի է գնել և վաճառել սէրը: Միևնոյն է այդ սիրոյ առարկան լինի կին, զաւակ, սիրուհի, թէ մտքի—արւեստի առեղծագործութիւն, գաղափար են. այսպէս էլ 1901 թ. առ Նաստրիայից, մեր մերձիման օրերում, գրել ենք մեր մահերիմ և լիազօր բժշկապետ պ. Բ. Նաւասարդեանին, որ պատասխանէ մեր թերթերը գնել ցանկացողներին: Եւ իրօք, եթէ զանեւոր լինէր մի խելագար, որ վճարէր 100,000 րուբ. և գնէր Աղբիւրն ու Տարազը, այդ գումարն ամբողջապէս պիտի յատկացնէր մի աղասատյանի գրագէտների և այրիների համար:

Ցաւում էինք, իրև թէ մենք մեր թերթերը լաւ չենք խմբագրում և գեղարւեստ, որոշ զոյն չունին նրանք. ... բովանդակութիւն և պատկերութիւն: Եթէ այդ ճիշտ լինէր, ինչու 1892 թւին, երբ շատ բաժանորդներով Աղբիւրը և Տարազը յանձնեցինք Միրզոյեանին, Լիսիցեանին և նրանք մեծ ապմուկով կազմեցին ժողովներ են. են. ու մի տարի անգամ չը կարողացան սրանք դիմանալ և թողեցին, փախան, կորցրին Անձնի իրաւունքը, որ մեր ձեռքին 12 հազ. օրինակ էր սկզբում օրական տպաւում և Աղբիւրի, Տարազի բաժանորդների թիւը հէնց այն ժամանակն էլ մեր ձեռքին յանձնւած էր, աւելի շատ էր, քան ունէին Մշակը, Նոր-Դարը, Արձագանքը և Մուրճը:

Ինչու սրանից յետոյ մենք լռեցինք եկանք և սրանց բաժանորդներից (1903 թ. 128 բաժանորդով) տասը անընդհատ տարիներ չարունակեցինք թէ Աղբիւրը և թէ Տարազը: Եւ երբ ամառային մենք ֆինլանդիա ընկանք, 1901 թ. սկզբին մերձիմահ Թիֆլիսից ճանապարհ ընկանք, Նոյապա, մենք ոչ թէ չը խափանեցինք մեր թերթերը, զանէ ժամանակաւորապէս ոչ թէ կանգնեցրինք, այլ կազմեցինք մի խնամակալութիւն: Ամբողջ տարւայ ծախսը մեր թերթերի հոգացինք, գրաւ դնելով Բիբի Հեյբար ընկ. նամակին մեր 3 եւ կէս բաժ, մօտաւորապէս 40000 ր. (այնժամանակւայ կուրսով) մի բիւրի մօտ ու ապահովելով մեր թերթերի մի տարւայ ծախսը, ընդհ. լիազոր հրաւիրեցինք բժշկապ. պ. Բ. Նաւասարդեանին, խմբագիր բժշկ. պ. Արտ. Շխեանին, հրաւիրեցինք մեր քարտուղար սրբագրիչին օգնական մի ուրիշ աշխատակից ևս, ամսական որոշ ռոճիկով, ու մեր շատ ընդարձակ խմբագրատունը իր կարասիներով, ծառաներով, կահկարասիքով, վառելիքով են. գրինք հայ գրագէտների տրամադրութեան տակ,—ինչու սրանք գէթ մի 10—20 աւելի բաժանորդ չը կարողացան ունենալ:

Եւ ինչ, մինչև այդ ժամանակ Աղբիւր-ը և Տարազ-ն աւելի իմաստալից էին լոյս տեսնում, քան մեր ժամանակ: Անկարող էին ուրիշ կերպ էլ լոյս տեսնել, որովհետև կամ կատարեալութիւնը կրկնափոխել և կամ թէ թերթերը կը կորցնէին իրանց իմաստը՝ ծառայել հայրենիքին և նրա ժողովրդին, կանգնած ճշմարտութեան, բարւոյ և գեղեցիկի վրայ: Եւ ինչ արաւ այդ ժամանակ հայ գրագէտների խմբագրական ժողովը.—նա որոշեց և մրցանակ ճշտեց 25 ր. նրանց, ով մի լաւ ստանաւոր կգրէ: Մի առեղծագործութեան խնդիր հայ բանաստեղծի համար 25 ր., որոնից խոստացաւ վկայագիր իրանց սար չէր կարող հայ գրագէտը...

Երբ Տարազի այն №-ը, որի մէջ տպւած էր այդ կոչը, ստացաւ մեր ձեռն առանք, կարծէք եկի աւած ջուր ածեցին մեր գլխին, մեր տարութեան սասիճանը բարձրացաւ, մեր կրծքի ցաւը շատացաւ և երկու շաբաթ շարունակ մեր յուզմունքը չէր անցնում:

Մեղաւոր չէին այս բանում ի հարկէ բժշկ. պ. պ. Բ. Նաւասարդեան և Արտ. Շխեան, որոնց նոյն իսկ ժողովը յաճախ զառամեցնելիս է եղել, որովհետև չընդհանրացում էին լինում և թոյլ չէին տալիս թերթերի գոյութիւնը վտանգի ենթարկել:

Մահը խոյս տւաւ մեզանից. մենք կիսատառողջ վերադարձանք և տասնհնգ-

Կովկաս. գաւառական. առեւտրական ակադեմիաների եւ ռուս ու հայ պարբերական հրատարակութիւնների խմբագիրները, կովկասեան ժամուլի եւ ... նահանգականից ազատելու առթիւ 1905 թ. նոյեմբերի 22-ի, նշանաւոր օրը նկարւած:

1 Եղիշէ Տ. Վ. Մալխասեան, խմբագիր **Արարատ** ամսագրի: 2 Գէորգ Մելիք-Կարագէօզեան, խմբագիր **Արձագանք** օրագրի: 3 Նիկողայոս Դրիգորեան, խմբագիր **Տիգրիս** օրագրի: 4 Քալանթար Քալանթարեան, խմբագիր **Новое Обозрѣніе** օրագրի: 5 Սպանդար Սպանդարեան, խմբագիր **Նոր Դար** օրագրի: 6 Միխայիլ Պաւլովիչ Հակկել, նախագահ կոմիտ. գրաքն. տեսանի: 7 Ալէքսանդր Ֆէօդորովիչ Բեյնեկե, խմբագիր **Кавказ** պաշտ. օրագրի. 8 Գրիգոր Ղարախանեան, անդամ կոմիտ. գրաքն. տեսանի: 9 Սիմէօն Կիրիլեվիչ Միխայլով, երկրորդ խմբագիր **Тифлисский Листок** օրագրի: 10 Ալէքսանդր Քալանթար, խմբագիր **Մշակ** օրագրի: 11 Գիտ. ա. ք. Եզնունեանց, խմբագիր **Լումայ** ամսագրի: 12 Դմիտրի Նիկոլաեվիչ Միխայլով, անդամ կոմիտ. գրաքն. տեսանի: 13 Լևոն Սարգսեան, խմբագիր **Մուրճ** ամսագրի: 14 Աղեքսանդր Քիշմիշեան, անդամ կոմիտ. գրաքն. տեսանի: 15 Տիգրան Նազարեան, խմբագիր **Աղբիւր** ամսագրի և **Տարազ** շաբաթաթերթի: 16 Խաչատուր Խաչատրեան, խմբագիր **Тифлисский Листок** օրագրի:



Ս. Ա. Մուրոմցեւ

Նախագահ առ Պետ. Դումայի.

ցինք մեր թերթերի դիկը. հակառակ բոլոր բժիշկների, պատւէրների և յորդորների, որովհետև մեր հիւանդութիւնը հիմնովին բուժւած չէր: Մենք ապրել կամեցանք մեր ուզածի պէս և մահից չը սարսափեցանք, մեռեալ կեանք չը կամեցանք ունենալ—և տարեցինք լիուլի. մեր այսքան տարիների տանջանքներն ու կսկիծները գերադասեցինք աշխարհային սին հաճոյքներից:

—

Մեր աշխարհում այժմս կեանքը փոխել է իր ընթացքը, փոխւել են և կեանքի բոլոր պայմանները: Ինքնակալ միապետութեան տեղը բռնում է հասարակական կամքը. փողը,նիւթը չէ այլևս ոյժ համարւում, այլ աշխատութիւնը: Մենք էլ սրտատրոփ այս օրին էինք սպասում: Վաղուց մեզ համար արիւն և մարմին էր դարձած այն ճշմարտութիւնը, որ կապիտալը, ինչ ձևով էլ արտայայտենք (դրամ, Փիզիկական կամ ժառանգական ոյժ, բռնութիւն, իրաւունք, բռնի կամքը) ոյժ չէ: Քսաներորդ դար այդ գաղափարն ենք փայփայել և գործով ապացուցել, որ անկեղծ աշխատանքն է ոյժը, սակայն մեզ չէին հաւատում և մարդիկ հարցնում էին՝ թէ ախր այդ ինչ միջոցներով ենք մենք բազմածախս և դժւան գործ չարունակում: Գրիգոր Արծրունու նման մարդը խակ, մինչև դերեզմանն էլ մեր բարեկամը, դարձեալ հանելուկ էր համարում և չը բացատրւած գաղտնիք մեր գործերի այնքան յաջող չարունակւելը առանց բաժանորդների անհրաժեշտ թւի:

—

Հայոց դարերը սորկացրել են. նա այժմ համարւում է կամ խարազանը, կամ անարգ ոսկինը և սրանց առաջ է միայն նա մինչև այժմս խոնարհել: Մենք չունէինք ոչ մէկը և ոչ միւսը, չէինք պատկանում և ոչ մի կուսակցութեան. մենք այնտեղ էինք լինում միշտ, ուր մեր հասկացողութեամբ և խղճով պէտք է որ լինէինք: Մենք միշտ Թոյլի, Թշւառի և Ճշմարտութեան կողմն ենք եղել, միշտ ասել ենք, որ մեր կուսակիցները աստւածները են երկնքի վրայ, և երբէք մեր խղճի հետ սակարկութիւն չենք արել. հաւատացել ենք մեր գործին, սիրել մինչև ինքնամոռացութիւն և սպասաւորել նրան ամենայն անձնուրացութեամբ: Այժմս պայմանները փոխւել են: Գաղափարականին յաջորդել է նիւթապաշտականը: Ժամանակակից իմաստունները գտնում են, որ նախ մարդուս ստամոքսը պէտք է լիքը լինի, հանգիստ քունը երբէք չը պիտի խանգարւի ու մարմինը պիտի պարարտ լինի և իշխէ սրտին, հոգուն: Ժամանակակից վարդապետութիւնը կարծէք արդարացնում է՝ առողջ մարմնու մէջն է եւ առողջ հոգին: Բայց մենք այդ վարդապետութիւնը չենք ընդունում և պնդում ենք, որ առողջ հոգու մէջն է եւ առողջ մարմինը:

Ստամոքսով մտածողը չարքիչ է տարբերւում անբան անասունից, իսկ մարով, սրտով գործիչը աստծուն է նմանում: Եւ եթէ ընդունում ենք, որ աստւածները են միայն անմահ, ուրեմն պէտք է ձգտենք նրանց նմանել և ոչ թէ անասուններին:

—

Տարազը ծառայում է գեղեցկին և բարոյին. մենք կամք չունէինք փոխել նրա հիմնական նպատակը: Ուստի այժմս, երբ հրապարակ են եկել արդէն շատ թերթեր, մենք մեզ իրաւունք ենք համարում Տարազը ծառայեցնել իր իսկական կոչմանը և դարձնել նրան մի չքնաղ իլլիւստրասիօն:

Մեր այս մտադրութիւնն իրագործելու համար մեզ անհրաժեշտ են տեխնիկական մի շարք նորանոր պատրաստութիւններ, որոնց արդէն ձեռնարկել ենք

Այս վերջին ամիսների ընթացքում մասամբ մենք տւինք Տարազի մի քանի №№—իլլիւստրասիօն, իբրև նմուշ: Եւ մինչդեռ ամեն կողմից հիացմունք, գարմանք արտայայտող շնորհաւորականներ և խրախուսագրեր ենք ստանում Տարազն այնքան փառահեղ լոյս տեսնելուն համար, մենք չարունակ վրդովւում ենք և անբաւարար համարում նրա տպագրութիւնը:

Սակայն հէնց ներկայ պայմաններում իսկ մենք ուրախ կը լինենք, որ բծախնդիրները ցոյց տային մեզ մի պատկերազարդ չաբաթաթերթ, որ հրատարակւելիս լինէր Ռուսաստանում (թէկուզ Պետերբուրգում Մոսկւայում) աւելի չքեղ քան Տարազ-ն էր այս վերջին ամիսներում: Մի մոռանաք, կրկնում ենք, որ այս տարի մեր բաժանորդների թիւը 100—ի էլ չէ հասնում, իսկ Պետերբուրգում նման ռուս թերթերը հարիւրհազարներով են համարում իրանց բաժանորդներին:

Մաքսային նոր տարիֆն էլ անհաւատալի բարձրացրւած է, այն է 42 անգամ: Այսինքն մինչև 1906 թւականը դիցուք վճարում էինք Տարազի մի երեսաչափ կլիշէի համար մաքս 1 րուբլի, այժմս միևնոյն կլիշէի համար վճարում ենք 42 րուբլուց աւելի, չը հաշւած մաքսային վերադիր վճարները, պօստատնից մաքսատուն ուղարկելու, այնտեղ նայելու, կնիք (պլօմբ) դնելու, մշակի են. ծախսերը:

Անշուշտ մեր ասածը մաքսային տարիֆի մասին անհաւատալի կը համարեն շատերը, սակայն ցանկալի էր, որ հետաքրքրւողները նեղութիւն քաշէին դընալ Թիֆլիսի. Բաքւի են մաքսատները ստուգէին մեր այս հաշիւը: Սկզբում, երբ մենք այս տարի պօստից ստացանք կոչնագիր վճարելու մի քանի ֆունտ կլիշէի համար մաքս, սխալ համարեցինք կոչնագրի մէջ պահանջւող մաքսի գումարը, սակայն գնացինք մաքսատուն և մեր առաջը դրին նոր տարիֆը:

Բարձրացրւած է և տպարանական պարագաների մաքսը. փութին 60 կ.—ի տեղ, այժմս առնում են 9 ր:

—

Նոր օրէնքով պատկերների տպագրութիւնը ազատւից ենթարկւում է նորից գրաքննութեան և եթէ իւրաքանչուր №—ի մէջ հէնց մի պատկեր ջնջւի, որ ասել է ամենահետաքրքրականը, այն ժամանակ նիւթական մեծ զոհողութիւններ հետ մենք կորցնում ենք և հանդէսի հետաքրքրութիւնը: Աւելացրէք սրա վրայ մեր խառնուշփոթ ժամանակը, ընդհ. —նահանդապետի խստապահանջ նախազգուշութիւնները, բանւորների իրարանցումը, մեր հայրենիքում չարունակւող հառաչն ու թշւառութիւնը, որպէզի համաձայնէք մեզ հետ, թէ ապարդիւն ջանքեր են մեր օրերում մաքառել ժամանակի հետ: Ուստի մենք որոշեցինք

1.) Մինչեւ սեպտեմբեր ընդհատել Տարազի հրատարակութիւնը և սեպտեմբերից Տարազը դարձնել զուտ մի շքեղ իլլիւստրասիօն, ենթարկելով Տարազի լոյս տեսնելու ժամանակը բաժանորդագինն ու համարաքնակը փոփոխութեան:

2.) Ունենալով աշխատակիցների և թղթակիցների մի շատ ստւար թիւ թէ կայսրութեան բոլոր անկիւններում և թէ Եւրոպայի մտաւոր կենտրոններում ու գիջանելով նրանց յաւետ ցանկութեան,--ձեռնարկել Աղբիւրից եւ Տարազից անկախ ամենօրեայ մի լրագրի, որի մասին մանրամասնութիւններ տալը դեռ վաղաժամ ենք համարում...

Վահան վարդապետ

Ս. Էջմիածնայ դանձապահ Վահան վարդապետը Գալիցինի օրով աքսորւեց Թոտովի մօտ ս. Խաչ, ուր ամփոփւած են Մ. Նալբանդեանի, Ց. Ալամդարեանի աճիւնները. Ինչեալ շաբթ. ապրիլի 27—ին մի ռուս ծխողուիչ մըտնում է Վահան վարդապետի սենեակը և դրամ մանրացնելու պատրւակով կռչկի ճիթկից հանում է տոտը և հարւածում վարդապետի բաց գլուխը: Վիրաւորեալին ուղարկում են Թոտովի հիւանդանոցը, վէրքերը վտանգաւոր լինելու պատճառով, իսկ ոճրագործին կալանաւորում, որը խոստովանել է յանցանքը, թէ վանքի դրամարկղը կամենում էր յափշտակել:

Վահան վարդապետը երկար տարիներ աշխատակցել է աշխարհական ժամանակ Բագւից Մոսկւին Կաասլիեցի ստորագրութեամբ և Ղարաբաղում թեմական տեսուչ ժամանակ, անդամ էր մեր Խրատարակչ. գրասենեակին ունի մի քանի թարգմանութիւն, որ հրատարակել ենք մենք: Վահան վարդապետը ս. Էջմիածնի ամենաշիթ անձնուրաց, միաբաններից է և համբաւած հոգևորական: Սրա օրով Ղարաբաղի գիւղորայքը ունեցան շատ դպրոցներ:



Գրաֆ Վիտտէ

ամենավերջին լուսանկարից, հանւած եւրոպայում Պորտամուտ գնալիս:

Վիտտէ Պետական Խորհրդում այժմս ըէակցիայի հակառակ ընթացք է բռնել: Ամնախտիս պահանջողներից ամենաեռանդունն էր:

Ինչ էլ որ լինի Վիտտէն, այնուամե. նայնիւ սա հանճարեղ պետական գործիչ է և աւելի չատ գնահատւած օտարներից քան իւրայիններից:

„ԱԼԱԲԱՇԸ“

Ցա՛ռում Լիզա դու նստի լաց,
Ալաբաշը սատկաւ գնաց.
Բաղ ու բախչէն անտեր մնաց,
Փայտօնով եկաւ, ֆուրգօնով գնաց:
Սատկեցուցին Ալաբաշին,
Խ...ար տարան գուբերնատորին
Թել քաշեցին նամեանիկին,
Ղարբան էլաւ Անդրանիկին:
Միկը չը հասած տունը,
Պ...ներին սատկաւ շունը.
Ջանցոյն դրա անունը,
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Սուռմայու գցեց վրան,
Թերի մնաց նպատակը.
Շուտ կտրեցին յիշատակը.
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Գիշերւայ ժամի երկուսին
Ալաբաշին սատկեցուցին.
Ութը հազար տւզանք տւին
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Այդ գիշեր քիչ լուսնեակ էր,
Հրացանը երկու կրակ էր,
Ցերբոլիստը հրեշտակ էր,
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Քուրդերն եկան շրջապատին
Նրանց ուշունցն էր հոգեբաժին,
Թուրքեր քուրդեր նստան ճաշին
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Քուրդեր տոլած նեխած չորւին
Վայրենու պէս զօռ տւեցին,
Ներան խման հայհոյեցին.
Էս ի՞նչ արդար դատաստան, էր:
Նազոն, Ահմադն ու Սեղրակը
Իր որդի փաշայ Եզւակը.
Համզաւ բոլորի ճրագը,
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Եղօն, Սադօն նստան լացին,
Հայդուկներին անիծեցին,
Շուն Սէթօին սատկեցուցին.
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Սատկեցուցին Ալաբաշը
Իգդիրից հանեցին նաշը.
Շները քաշեցին լաշը.
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Իգդիր թափեցին արինը,
Թիֆլիս գերեզմանատունը
Կարեցին նրա անունը.
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Ալաբաշին դրին հողը,
Ախիցերին քցին կողը,
Գիւղայից առան փողը.
Էս ի՞նչ արդար դատաստան էր:
Հայք դիմեցին փաստաբանին,
Բանտարկեալներին դուրս հանին,
Ազատեց մեր ջանն ու հոգին.
Էս ի՞նչ արդար դատաստան էր:

—

Ահա այս երգը նւիրեց Սուրմալւի տանջւած հայ ժողովուրդն իր չար հրեշտակ Բօգուսլաւսկու—այդ Ալաբաշի (բորենու) յիշատակին և այդ ռամկական անշուք երգն էլ ամեն նկարագրութիւնից աւելի լաւ է պատկերացնում այն հոգեկան թեթևութիւնը, որ զգաց այդ ժողովուրդը, նրա կրած պատժի «ար դար դատաստանով»: -ԵաՆ

Ս. Խաչ վանքը և Մ. Նալբանդեանի շիրիմը:

ԳԵՂԱՐՒԵՍՏԸ ԺԸ ԴԱՐՈՒՄ

Պրօֆեսօր Վիլհելմ Օստւալդ

Արւեստ եւ գիտութիւն

(Սկիզբը Տարազ № 10)

Ամենահին դարերի կուլտուրայի մնացորդները մեզ ցոյց են տալիս, որ արւեստը և գիտութիւնը այն ժամանակները անխախտելի կերպով մի կապ էին կազմում: Արդեօք այն պատճառով, որ կեանքը կանոնաւորող և հեշտացնող անդրանիկ օրէնքները պօէտիքական կերպով էին զգեստաւորւած կամ թէ այն պատճառով, որ ամենօրեայ պիտոյքները չէին գործադրւում առաջ, քան թէ չը զարդարւէին գեղարւեստական դըրւակներով-սակայն մենք նրանց որպէս մարդկութեան բնութեան վրայ տիրապետելու իբրև սկզբնաշրջան միշտ միասին ենք գտնում: Յունական հնութեան ամենաականաւոր փիլիսոփայ Պլատոնը իր համարձակ, թէպէտ և սխալ կարծիքները, չարժում է որպէս ճշմարիտ գեղարւեստագէտ և մինչև անգամ գիտնական մեքենայաւ կազմութեան նախահայր Լեւկրեցան իր բնախօսական ենթադրութիւններին պօէտիքական ձև էր տալիս:

Այսպիսով մենք այն հարցը չըպէտք է դնենք, թէ ինչպէս մտերմացնել արւեստը և գիտութիւնը, այլ մենք պէտք է դեռ առաջ պատասխանենք այն հարցին, թէ ի՞նչպէս են նրանք իրարուց բաժանւել: Ես ուզում եմ պանծալ պատասխանելով և այդ հարցին. Նրանք հեռացել են իրարուց, որովհետև հաւասար քայլերով չեն առաջընթանում: Գեղարւեստը միշտ առաջ է ընկնում. երբ տասն և վեցերորդ դարի մէջ իտալական նկարչութեան սքանչելի ժամանակամիջոցը իր վերջնակէտին էր մօտենում, սկսեց անզուգակից ուսուցչի՝ Հալիլէի նախաձեռնած իտալական գիտութեան ժամանակամիջոցը, իսկ տասն և իննը դարի գերմանական գիտութեան ծաղիկը կարողացաւ բացւել միայն այն ժամանակ, երբ տասն և ութը դարի երկրորդ կէսին հանգաւ գերմանական պօեզիայի մեծասքանչ ակկորդը: Մարդկային ոգու նորանոր ասպարէզներ տիրապետելու գործում արւեստը միշտ նախադնաց է եղել: Գիտութիւնը միշտ միայն յետոյ է երևում, այս պատճառով երբ նա իրաւունք է յայտնում արւեստին ղեկավարելու դասեր տալ, վերջինս անուշադիր է թողնում այդ ձգտումները, որպէս ծաղրելի և անպարկեշտ:

Եթէ գիտութեան ներկայացուցիչը երկիւղ չէ կրում այդ յարաբերութիւնը խոստովանել բաց արձակ ուրեմն դուք պէտք է համոզւէք, որ նա չափազանց ակներև է: Եւ իրաւի, եթէ մենք փորձենք ամենաընդհանուր ձևով ներկայացնել այն շարժման ուղղութիւնը, որով զարգանում է մարդկային կեանքը, մենք պէտք է ասենք. որ նա ուղղւած է դէպի բնութեան վրայ մարդու լայն արձակ իշխողութիւնը հաստատելու և մարդկանց մէջ աւելի և աւելի լաւ յարաբերութիւններ մտցնելու: Իսկ բնութեան վրայ իշխելու և մարդկանց հետ ապրելու միակ միջոցն է մօտաւորապէս նրանց ուղղութիւնների և յատկութիւնների հետ ծանօթանալը, այնպէս որ կարելի լինի նախագուշակել նրանց արտայայտութիւնը և դրա համաձայն յարմարւել իսկ, ուր կարելի է, և ցոյց տալ մեր ազդեցութիւնը:

Մեր տաղանդաւոր դերասան Աբելեանը անցեալ շաբաթ փորձանքի ենթարկւեց Բագւում: Գլխին կացնով 2 տեղից ծանր վիրաւորեց նրան Կրկէսում պարողուհիների ամուսինը: Վէրքերը թէև վտանգաւոր էին, բայց շնորհիւ Աբելեանի ամուր կազմւածքին, նա այժմս առողջանալու վրայ է: Սրանից մի փոքր ժամանակ էլ առաջ Թիֆլիսում, Վարդանանց պատերազմի ներկայացմանը քիչ էր մնացել մի հայրենասէրի աթոռը նրա գլուխը ջախջախէր:

Արտիստ Յ. ԱԲԵԼԵԱՆ

Ամենաընդհանուր մտքով իւրաքանչիւր ոք յօժարութեամբ կընդունէ այդ խնդիրը, որպէս գիտութեան բաժին, իսկ արւեստի վերաբերմամբ մի կերպ երկմտութիւն կը ծագի: Եւ իրաւի, կարելի է իսկոյն համաձայնել որ մարդուն և բնութիւնը իմաստաւորելը արւեստի խնդիրը չէ, այլ նրա միջոցը: Բայց որովհետև արւեստը առանց միջոցի ոչինչ է, ուստի նա և մարդկութեան էութիւնն ու բնութիւնը ճանաչելու ոչինչ է:

Սակայն ի՞նչ է ուրեմն արւեստի խնդիրը: Ես շատ լաւ գիտեմ, որ այդ հարցին այնքան պատասխան կայ, որքան պատասխանող: Այստեղ իմ բռնած ճանապարհը շատ փշալից է, սակայն այլ կերպ ես չեմ կարող վարւել, ինձ հարկաւոր է հաստատուն հող գտնել, եթէ ոչ ես հնար չեմ ունենալ առաջ գնալու: Երջանիկ բնախօսից դուք երբէք չէք կարող սպասել, որ նա առաջ կը բերէ արւեստի վերաբերմամբ այն ոգևորւած, որպէս և անհասկանալի մեկնութիւններից մէկը, որ այնքան շատ կան: Բայց կշռելով այն ամենը, որ ինձ վիճակւեցաւ փորձել անձամբ արւեստի ասպարէզում, ես կարող եմ նրա մասին հետևեալ մեկնութիւնը տալ՝ արւեստը պէտք է մեզ միջոց տայ մեր կամքով ցանկալի զգացմունքներ զարթեցնելու:

Ես լաւ գիտեմ, որ ձեզանից շատ շատերը մտածում են իրենց մտքի խորքում, որ այդքան անյուսադիր չոր ու ցամաք կարծիք չէին սպասում մինչև անգամ նախընթաց չարչարութիւնից: Դուք մտաբերում էք Բեթհովենի իններորդ սիմֆոնիայի նւագածութեան և Բեօկլինի պատկերների առաջ անցկացրած ժամերը, դուք լաւ գիտէք ինչպէս էր արւեստը ձեզ բարձրացնում, երբ ծանր միայնութիւնը, թախիծը կամ մարդկային հասարակութիւնը սպանում էր ձեր մէջ կեանքի բերկրանքը և շրջապատում էր մռայլ վարագոյրով ձեր տրամադրութիւնը: Եւ միթէ մտածում էք դուք, այդ բոլորը պէտք է ամփոփւի վերևը առաջ բերած հասարակ խօսքերի մէջ:

Ես յոյս ունեմ պարոններ, որ բոլոր իմ վերև ասածս համոզեց ձեզ, որ ես էլ անձնական յարաբերութիւն եմ ունեցել արւեստի հետ և թէ իմ սիրտս անզգայ չէ դէպի նա: Երբ ես աչքիս առաջ եմ բերում անցկացրած տարիներս, երբ ես մտածում եմ, թէ գիտութեան մեծագոյն խնդիրներ, որոնց վրայ ես բախտ ունէի աշխատելու, կարող էի լուծել նրանով միայն, որ յանձն առայ մի կողմից միաձև մանր աշխատանք, այդ խօսքը լայն արձակ մտքով, իսկ միւս կողմից ստեղծեցի ինձ թշնամիներ, որոնց յարաբերութիւնը դէպի ինձ մի քանի հանգամանքներում կատաղի ատելութեան էր հասնում, այն ժամանակ ես հասկանում եմ, թէ որքան յաճախ արւեստը պարգևում էր ինձ աշխոյժ և թարմութիւն և թէ ինչպէս իմ ամենածանր հոգեկան վէրքերը յաջողում էր արագապէս և հաստատապէս բուժել միայն նրա շնորհիւ, որ ես շրջագայում էի մի որ և է հրաշալի վայրում նկարչատախտակը ձեռքիս և ճանապարհի ծալովի աթոռը կռանս տակ: Ուրեմն եթէ կան մարդիկ, որ փորձել են իրանց վրայ արւեստի բարեշնորհ ազդեցութիւնը, ահա հէնց ես էլ այդ մարդկանց կարգին եմ պատկանում և անշնորհապարտ զգալ ինձ դէպի այդ բարեյաջող ազդեցութիւնը, ինձ երբէք չէ կարելի:

Այնու ամենայնիւ, որպէս ազնիւ բնախօս կամ փիլիսոփայ, ես պէտք է ասեմ, որ չընայելով իմ բոլոր խուզարկութիւններին, ես դրանից լաւ մեկնութիւն չըգտայ

Գարուն—Իօղանտա

(Իշխանադնուհու կոյր աչքերը բացւում են վերածնւած՝ նա նայում է ազատութեան կերպը)



(Նւէր Հ-ին)

Վաղվի նման դարդի նման

Դառնան կարմիր վարդի նման
Դու յաղթէիր ծաղկըցում.
Մասաղ արմի դարդի նման
Սրտկ զգլր իմ սրտում:

Իմ վարդ,
Իմ դարդ,
Սիրտս եւրոս
Քեզ է կարօտ:

Եղ դարդ այս, եւ դարդի պես
Սիրս ու էց, զօրացաւ,
Սիրտ ու ահից, սիրող դաղից
Սեա մաշւեց չորացաւ:

Իմ վարդ,
Իմ դարդ,
Սիրտս եւրոս
Քեզ է կարօտ:

Շուշանիկ Պետրոսեան

և յոյս ունիմ համոզել ձեզ խմբին, որ նա զոլ ծաղրելի և նպատակայարմար է:

Բոլորից առաջ ես պէտք է դարձնեմ ձեր ուշադրութիւնը արւեստի վրայ կատարած նորագոյն քննասիրութեան, ամբողջ հաստատուած, հետեւանքի վրայ, որի հետ միանում են աւելի և աւելի ձայներ. այդ այն է, որ արւեստը գործ ունի զգացմունքներ արթնացնելու հետ: Հարցրէք ձեզ ինքներդ, ինչու էք ձգտում դէպի արւեստը և սիրում էք նրան: Ներկայացրէք ձեզ այն, ինչ ես էլ փորձում էի արթնացնել ձեր յիշողութեան մէջ ձեր կեանքում անցկացած արւեստագիտական տպաւորութիւնների վերարերմամբ և դուք կը համաձայնէք խմբին, որ արւեստը ամենից առաջ [illegible] և թէ այդ զգացմունքների մէջ է թաղնւում արւեստագիտական տպաւորութիւնների զլխաւոր կողմը: Բայց դուք կը ընդդիմախօսէք — թէ զգանք ոչ թէ ամբողջական, այլ բոլորովին առանձին բարձր և մեծամասնութեան զգացմունքներ են:

Եւ ես ինքս նոյն կարծիքի եմ, այդ խօսքով միայն ես ուզում էի արտայայտել, խօսելով պարզ արւեստի խնդիր՝ ցանկացած զգացմունքներ արթնացնելու մասին: Միթէ այդ բարձր և մեծահանդիսաւոր զգացմունքները ցանկալիներ չեն: Իհարկէ, կասէք դուք. սակայն „ցանկալի“ խօսքը շատ հասարակ և անյարմար է մեր ունեցած խնդրի զգացմունքների համար: Այսպէս մենք հասանք էական կէտին: Արւեստի էութիւնը մեկնելու, այսինքն գեղարւեստական ուշադրութիւն, դուք գեղարւեստականութեան գործ էք պահանջում, պահանջում էք, որ նա արթնացնէ ձեր մէջ զգացմունքներ ձեր արւեստագիտական զգացմունքների մասին, բայց [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible]:

[illegible]

(Կը շարունակուի)

Վեհափառ Կաթողիկոս՝ Պետական Դումայի նախագահին հետեւեալ հեռագիրն է ուղարկել:

Մեծ Ռուսաստանի սահմանադրական պետութիւնների շնորհիւ մէջ մտնելու մեծ նշանակալից օրն ողջունում եմ Պետական Դումային իմ, Հայ Եկեղեցու և ամբողջ Հայ ժողովրդի անունից, որոնք անխախտելի կապերով շաղկապուել են բոլոր ձակատագրով ռուս մեծ ազգի հետ: Թող օրհնէ Տէրն առաջին Դումայի անդամներին գործերը նոր կեանքի համար վերածնող ռուսաց կայսրութեան բոլոր խաղաղացիների բարօրութեան և բարգաւաճութեան համար, եւ թող կատարուի մարգարէի խօսքը՝ Թող չի նման հոսի դատաստանը եւ արդարութիւնը, ինչպէս սաստիկ հեղեղ:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ամենայն հայոց:

—

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Ս. Ա. Մուրոմցեւը 56 տարեկան է: Աւարտեց ուսումը Մոսկուայի համալսարանում իրաւագիտական բաժնում, որտեղ և ստացաւ հռոմէական իրաւունքի ամբիոնը Ալեքսանդր III—ի թագաւորութեան ժամանակ. Մուրոմցեւի պէս ազատամիտ և առաջադէմ գործիչները չէին կարող չէ նեղութիւն հալածանքի, ուստի և նա ստիպուած թողեց (1884—ից) պրոֆեսորական պաշտօնը և լծուեց երդուեալ հաւատարմատարի կոչումը, միայն նախագահ [illegible] ընկերութեան և խմբագիր [illegible] հանդէսի, որ իր լոյսի, գիտական և գեղեցիկ բովանդակութեամբ մեծ հեղինակութիւն էր վայելում և հէնց դրա համար էլ փակուեց: Մուրոմցեւ գործունեայ, ժիր, տակուն, կամքի ամր մարդ է: Նրան գործունէութիւնն է ցոյց տուել Մոսկուայի քաղաքային խորհրդի ու նահանգական զեմստւոյին կեանքի մէջ: Նշանաւոր դեր խաղաց և վերջին շարժման մէջ և եղաւ սահմանադրական—ռամկավարական կուսակցութեան առաջնորդ զլխաւոր պարագլուխներից մէկը: Յառաջ իրաւաբանական խորհրդի հիմնադրութեան, բազմաբնական ատեան, ընտրուեց Պետական Դումայի նախագահ: Մուրոմցեւը ունի բազմաթիւ ուսումնական աշխատութիւններ, որոնց մէջ նշանաւոր են «Ին Հռոմի քաղաքացիական իրաւունքը», Ինչ է իրաւունքը, զօրման և այլն:

Ամրագիր հաւատարելիւ՝
Տիգրան Նազարեան

Բարթուղիմէոս արքեպիս. Զամչեան
մահանալուց առաջ Բարթողիմէոս

Գ Ա Պ Ո Ն
(Որը շնորհւում է ամու դաւաճ:)

Բարթողիմէոսի միակ հետամտութիւնը Պատրիարքական աթոռն էր. և անոր համար մեռաւ: Կենդանագոյն էր, Թիֆլիսի համար կը վայելէր: 25 տարի Պոլսոյի առաջնորդութիւնը վարած էր ու Երկրորդ [illegible] այ մահմեդական յաբարերութեան մէջ... առա հայ եկեղեցականի մը 68 տարիներուն ամբողջ կեանքը: Թաղեցին



Հայկական տեսքի գեղեցիկ և անհրաժեշտ գաղզ Ալբիր-Տարազի հրատարակած հեռանկար շքեղ պատկերները հրատիրում են մեր ընթերցողները տարածել իրենց շրջաններում՝

1. Սիօրու Խաչակի . . . . . . 3 ռ. — կ.
3. Ս. Ամեալ Պարեւ . . . . . 1 » 50 »
4. Ս. Մեսրոպ Մաշտոցը . . . 1 » 50 »
5. Ս. Էջմիածին . . . . 1 » 50 »
6. Ս. Հեսրիք ու Վարդանեան . 1 » 50 »
7. Հարսին Հարսանեաց արդում 1 » 50 »

Ամէնը զրուելի պատկերները բարեում են անյապաղ:

Մարմնակրթական Գործիքների

ԳԱՏՐԻԿ ԱՍՂԻՆՁԱՑԱՆ

խանութում

Ց. Ա. ՏԷՐ-ԱՍԱՏՐԵԱՆ

Թիֆլիս. Միխայիլ. պրոսպ. 21.

պատանեկ գին մ եւ ձրի ուղարկելիս

0—3

Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ

պատկերասրահն ու արհեստանոցը բաց է այցելուների համար կիրակի և տօն օրերը առաւ. ժ. 11-ից մինչեւ 1 ժ.

Մուտքը ձրի է

Իգմայլովսկայա փ. Վերա, սեպհական տուն № 16

Արտադրեց Ե. Թառումեան Ն. Մահդեսիեանց